ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՅՈԹԵՐՈՐԴ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

Գյումրի
2007

Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ՇՀՀԿ)

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԵՐԹ

Շիրակի հայագիտական ուսումնասիրության պատմության վերջին ժամանակների փոքր հատվածը՝ ընդամենը տասը տարին, անխզելիորեն կապված է նաև Գյումրիում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ:

Հանրապետության երկրորդ քաղաքում Գիտությունների ակադեմիայի արդեն գոյություն ունեցող Գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի կողքին նաև հումանիտար ակադեմիական կառույցի ստեղծումը հասունացած խնդիր էր արդեն անցյալ դարի 70-80-ական թվականներին: Քաղաքային իշխանությունները գիտության այդ երկու թևերի առկայության մեջ իրավացիորեն տեսնում էին Լենինականում Գիտությունների ակադեմիայի Հյուսիսային մասնաճյուղի հիմնադրման ամենահիրական հնարավորությունը: Ավելին, խնդիրն արդեն գործնականորեն քննարկվում էր Ակադեմիայի նախագահությունում, ընթացք էին ստացել Բաժանմունքի շենքի որոշման, նրա ղեկավարության ընտրության ու այլ հարցեր, այդ մասին սկսել էին խոսել նաև իշխանության ամենավերին օղակներում: Սակայն շուտով՝ 80-ական թթ. կեսերից հարցը միանգամից գոցվեց, իսկ այդ մասին խոսակցությունները իսպառ դադարեցին: Ապա մեր երկիրն հայտնվեց Աղետի հորձանուտում, նրա հյուսիսը՝ արհավիրքի էպիկենտրոնում՝ բյուրավոր անմեղ զոհերով, ավերակված բնակավայրերով, հարյուր հազարավոր անօթևաններով: Դժնդակ և միաժամանակ հերոսական ժամանակներ եկան, ծանրագույն քաղաքական որոշումների, տնտեսական կատակլիզմների, բարդ ու մինչ այդ չտեսնված հասարակական խմորումների ժամանակներ, ապա պարտադրված պատերազմ եղավ՝ Արցախյան հերոսամարտը մեր ինքնության ու մեր տեսակի պահպանման և գոյատևման համար: Դժվար է իրարից զատել այդ օրերի ողբերգականն ու հերոսականը, նահանջի տագնապն ու հաղթանակի բերկրանքը: Այդպես ապրեցինք, ինչպես սովորել ենք ապրել դարեր անընդհատ՝ կուլ չգնալով ոչ՛ բնության անսանձ տարերքին և ոչ՛ էլ օտարի կամքին:

Որքան էլ տարօրինակ էր, սակայն կիսավերակ Գյումրիում այդ օրերին նաև հայագիտությունից սկսեցին խոսել և ամենևին ոչ պատահաբար: Ուղղակի Երկրագիտական թանգարանի մի փոքր խումբ երիտասարդ գիտնականներ 1994-ի աշնանը,ի հեռուկս բոլոր դժվարությունների, մթի ու ցրտի, արհամարհելով բարդություններն ու ամեն տեսակի անհարմարությունները, Գյումրի հրավիրեցին հանրապետության մի քանի տասնյակ հայտի հայագետների՝ քննարկելու Շիրակի պատմամշակութային

ժառանգության գիտական ուսումնասիրության վիճակը: Ի մեծագույն պատիվ ու հարգանք հայրենական գիտության մերօրյա մշակների՝ շեշտեմ, որ հանրապետական հայագիտական միտքը կարոտով ու ջերմորեն արձագանքեց դրան: Գիտաժողովի հաջողությունն աներկբա էր, Գյումրին էլ առաջին հերթին ինքն իրեն ու ապա նաև բոլորին ապացուցեց, որ չի մարել այստեղ ոչ՛ գիտության լույսը, ոչ՛ վաղվա օրվա հավատը: 1996-ին գումարված երկրորդ գիտաժողովն ավելի ներկայացուցչական էր. գիտական գնահատանքի ներկայացվեցին առաջին գիտաժողովից հետո հանրապետությունում Շիրակի նյութական ու հոգևոր մասունքների ուսումնասիրության ուղղությամբ նոր ձեռքբերումները: Պակաս կարևոր չէր նաև այն, որ բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների մակարդակը, տեղի գիտական մեծ ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովները էապես նպաստեցին Գյումրիում Ակադեմիայի հումանիտար կառույց ունենալու հարցի վերանայմանը: Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունն ըմբռնումով ընդառաջ գնաց հանրապետության մի շարք անվանի գիտնականների (Վ. Բարխուդարյան, Ս. Համբարձումյան, Ա.Քալանթարյան, Լ.Հախվերդյան, Ս.Հարությունյան, Գ.Ջահուկյան, Ա.Մելքոնյան և ուրիշներ) խնդրանքին՝ Կառավարության քննարկմանը ներկայացնելով Գյումրիում Ակադեմիայի հայագիտական հետազոտությունների կենտրոն հիմնելու առաջարկը: Հատկանշական է, որ այն իրականություն դարձավ 1997-ի աշնանը, երբ իշխանությունների կարճամիտ ու այսրոպեական քաղաքականությունը լրջորեն վտանգել էր Հայոց գիտությունների ակադեմիայի վաղվա օրը՝ կասկածի տակ առնելով նրա հետագա գոյության նպատակահարմարությունը: Այնուամենայնիվ, Ակադեմիան դիմագրավեց այդ քամիներին ու կորուստներով հանդերձ պահպանվեց՝ ստեղծելով նաև առաջին տարիներին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ հանդիսացող, իսկ 2002-ից ինքնուրույն Շիրակի հայագիտականը, որ մեր երկրում առայսօր միակ ակադեմիական հումանիտար կառույցն է մայրաքաղաքից դուրս: Ավելի ուշ մեկ-երկու մարզում նմանատիպ գիտական կառույց ստեղծելու փորձերը հաջողություն չունեցան:

Շիրակի Հայագիտականի գոյության տասը տարիները, իրոք, եղան ինքնահաստատման ու ձեռքբերումների տարիներ: Նախ հստակեցվեցին պատմական գավառի հնագիտության, ճարտարապետության, հին ու նոր պատմության, ազգագրության և բանահյուսության գիտական հետազոտման մեջ կենտրոնի առաջնահերթությունները, նրա գիտական ներուժի իրատեսական հնարավորությունները, պատվի գործ համարվեց հետազոտական աշխատանքի բարձր որակի ապահովումը պետական ֆինանսավորմամբ իրականացվող թեմատիկ ծրագրերում, որոնք այս տարիների ընթացքում հասան տասներեքի և կատարվում են ամենայն բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ: Դրանք արժեքավոր հետազո-

տություններ են՝ նվիրված Բենիամինի անտիկ դամբարանադաշտի ու բնակավայրի, Հայկաձորի և Մեծ Սեպասարի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություններին, գիտականորեն հիմնավորված համարձակ հարցադրումներ են մ. թ. ա. առաջին հազարամյակում Ախուրյանի ավազանի հնագույն բնակչության էթնիկ խմբերի, նրանց պաշտամունքի, առասպելական պատկերացումների, հավատալիքների, հնդեվրոպական հոգևոր ժառանգության, ցեղային երկրների տեղադրման խնդիրների շուրջ, նաև հանգամանալից ուսումնասիրություն Ալեքսանդրապոլի գավառի նորագույն շրջանի՝ XIXդ. պատմաժողովրդական դրության մասին: Դրանք ուշագրավ ու մանրակրկիտ ուսումնաքննություններ են Շիրակի ավանդական բանահյուսության, ծիսատոնական համակարգի ու դրանց նորօրյա փոխակերպումների վերաբերյալ, աղետի հոգեբանության արդիական խնդիրների, աղետյալ ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացի մեխանիզմների մշակման շուրջ, XIX-XXդդ. Շիրակի տնայնագործության, արհեստների, տնտեսական զբաղմունքների ու տնտեսության օժանդակ ճյուղերի մասին, Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու պատմազգագրական ուսումնասիրության ծիրում ազգագրական հարուստ նյութ ունեցող քաղաքի էթնիկ կազմի, կենցաղի, կենսապահովման, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում էթնոժողովրդագրական ու մշակութային զարգացումների մասին, Շիրակի ժողովրդական ու մասնագիտացված երաժշտարվեստի պատմության, նրա ժանրային, լեզվական ու տաղաչափական հիմնախնդիրների, ժողովրդական երգի քաղաքային ավանդույթների ու զարգացման արդի միտումների վերաբերյալ և այլն:

Կենտրոնում սկզբից ևեթ կարևորվեց սեփական տպագիր խոսք ունենալու անհրաժեշտությունը: Որոշվեց տարին մեկ անգամ հրատարակել կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուն՝ 14 հրատարակչական մամուլ ծավալով, բարձր որակով ու գիտական պատշաճ մակարդակով: Այսօր հրապարակի վրա են հանրապետության գիտական շրջանակներում արդեն բարի համբավ վայելող և սպասված այդ հանդեսի ինը հատորներ՝ հարյուր քառասուն հրատարակչական մամուլ ընդհանուր ծավալով: Իհարկե, կենտրոնն այլ հրապարակումներ ևս ունի: Դրանք ամենատարբեր գիտաժողովների, գիտական սեմինարների ու միջոցառումների նյութերն են, թեմատիկ հաշվետվությունները: Թեև դեռևս դանդաղ տեմպերով, սակայն սկիզբ է առել նաև այս տարիների ընթացքում ավարտված հիմնարար ուսումնասիրությունների հրատարակումը:

1998-ից մինչ օրս Շիրակի Հայագիտականը նաև Գյումրիում ավանդաբար գումարվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական խոշորամասշտաբ և հեղինակավոր գիտական նստաշրջանների կազմակերպիչն ու պատասխանատուն է, գիտաժողովներ, որոնք ակնառու երևույթ են ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական ու մշակութային կյանքում:

Կենտրոնի հիմնադրման առաջին օրերից ամենալուրջ ուշադրություն դարձվեց կադրերի խնդրին, և ընդամենը գիտության երեք թեկնածուների դիմաց այսօր կենտրոնի տասնվեց գիտաշխատողներից գիտթեկնածուներ են ինը, գիտության դոկտորներ՝ երկուսը, իսկ մոտ ապագայում պաշտպանության են պատրաստվում ևս երեք թեկնածուական ատենախոսություններ: Ասպիրանտների պատրաստումը կենտրոնում տարվում է գերազանցապես Գյումրու բուհերի, մասնավորաբար Մանկավարժականի լավագույն շրջանավարտների ներգրավմամբ:

Այս տարիներն արդյունավետ եղան նաև հանրապետության ու արտասահմանյան բազմաթիվ գիտական ու մշակութային կազմակերպությունների հետ գիտական կապերի խորացման ու ընդլայնման, միջազգային համագործակցության ակտիվացման առումով: Արդյունավետ աշխատանք տարվեց նաև տեխնիկական վերազինման ուղղությամբ՝ ապահովելով արդիական համակարգչային տեխնիկայով ու սարքավորումներով, կապի ժամանակակից միջոցներով կենտրոնը զինելու կարևոր խնդրի իրականացումը:

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը թևակոխում է գոյության երկրորդ տասնամյակը՝ իմաստնացած իր այս տարիների փորձով, ձեռքբերումների ու կորուստների, արածի ու չարածի հանրագումարով, գիտական ու մշակութային այլ կազմակերպությունների հետ մեկտեղ Շիրակի նյութական ու հոգևոր ծովածավալ հարստության ուսումնասիրությունը շարունակելու իր երթին հավատարիմ:

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՇՀՀԿ, ՇԵԹ)

ՇԻՐԱԿԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Հայաստանի, այդ թվում և Շիրակի հնագիտական ուսումնասիրության պատմությունն սկսվում է XIX դ. վերջին, երբ Ժան Ժակ Մարի դը Մորգանը 1887-1888թթ. Դեբեդի ավազանում՝ Ալավերդու և Այրումի շրջակայքում, պեղեց մ.թ.ա. X-VII դարերին վերաբերող 956 դամբարաններ: Շուտով Ռուսաստանի կայսերական հնագիտական հանձնաժողովը Նիկողայոս Մառի առաջարկությամբ որոշում է ընդունում հնագիտական պեղումներ սկսել Անդրկովկասում և հատկապես Անիում՝ Բագրատունյաց Անի-Շիրակի թագավորության մայրաքաղաքում: 1892թ. Ն. Մառի ղեկավարությամբ սկսվում են Անիի պեղումները: Դրանց զուգահեռ՝ Ն. Մառը ուսումնասիրություններ է կատարում նաև Շիրակի այլ մասերում: Արագածի լանջերին Լեռնակերտ (Շիրվանջուղ), Պեմզաշեն (Մահումուդջուղ), Մառնաղբյուր (Սոգութլի), Աղիաման գյուղերի տարածքներում պեղվում են դամբարաններ:

Մինչ այս արշավախմբի աշխատանքները Շիրակում հնագիտական հուշարձանների և առանձին նյութերի պատահական գյուտեր եղել էին: Դրանցից ամենավաղը 1875թ. Գյումրու Սև բերդի տարածքում շինարարական աշխատանքների ժամանակ բացված և ուրարտական շրջանին վերաբերող «մարտիկի դամբարանն» էր:

XX դ. սկզբներին Շիրակի տարածքում հնագիտական ուսումնասիրությունների նյութը հիմնականում քարիդարյան և բրոնզիդարյան հուշարձաններն էր: Աշխատանքներն իրականացվում էին հիմնականում այն տարածքներում, որտեղից արդեն կային նկարագրված հուշարձաններ կամ հնագիտական նյութեր: Այսպես, 1908 թ. Բ. Խալաթյանցը շարունակում է Գյումրու Սև բերդի, Հոռոմի և Գետափի պեղումները: Ժակ դը Մորգանը քարիդարյան արտեֆակտեր է հավաքում Արտին լեռան և Արագածի լանջերից: Հայ մեծանուն ճարտարապետ, հնագետ Թորոս Թորամանյանը 1914 թ. Շիրակում ուսումնասիրում, նկարագրում և լուսանկարում է բազմաթիվ հնագիտական հուշարձաններ՝ հատուկ տեղ հատկացնելով Արագածի լանջերին գտնվող կիկլոպյան ամրոցներին (Հոռոմ, Աղիաման, Շիրվանջուղ, Ղուլիջան, Ղափլի, Հնաբերդ, Գառնահովիտ):

917-1920թթ. իրադարձությունները՝ հեղափոխությունը Ռուսաստանում, 1918թ. Հայաստանի նորաստեղծ անկախ հանրապետության անասելի ծանր վիճակը, 1918-1920թթ. թուրքական ինտերվենցիան, երբ դրված էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը, անհնար էին դարձրել բոլոր տեսակի ուսումնասիրությունները: Դրությունն առավել ծանր էր Շիրակում, ուր, չնայած 1920թ. խորհրդային իշխանության հռչակմանը, թուրքական օկուպացիոն զորքերը մնացին մինչև 1921 թ. գարունը և շարունակեցին թալանի ու ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը:

Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաստատված նոր պետական սահմանով Շիրակի արևմտյան մասը և մայրաքաղաք Անին անցնում են Թուրքիային: Այսպիսով, ավարտվում են Ն. Մառի 1904-1917 թվականներին Անիի արշավախմբի և ընդհանրապես Անիի հնագիտական ուսումնասիրությունները:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո կառավարությանը կից ստեղծվում է Հնությունների պահպանության կոմիտե, որը և պատմական հուշարձանների պահպանությանը զուգահեռ՝ իրականացնելու էր հնագիտական ուսումնասիրություններ:

1926թ. վերսկսվում են պեղումները Շիրակում: Մ. Ղուկասյանը վերսկսում է քարի դարի ուսումնասիրությունը Պեմզաշենում, 1927թ. Թ. Թորամանյանը ուսումնասիրություններ է կատարում Գուսանագյուղի ամրոցում և դամբարանադաշտում: 1929թ. սկսվում են պեղումները Լենինականում (Ե. Բայբուրդյան, 1937-ից՝ Ա. Քալանթար):

1937թ. հայկական հնագիտությանը սատարելու նպատակով Լենինգրադից Հայաստան են գործուղվում հնագետներ Ա. Հաջյանը, Լ. Գյու-

զալյանը և Բ. Պիոտրովսկին: Նրանք Ե. Բայբուրդյանի հետ հնագիտական պեղումներ են իրականացնում Արթիկում, Արևշատում, Սպանդարյանում, Հոռոմում, իսկ հնությունների պահպանության կոմիտեի կողմից 1937-1940թթ. շարունակվում են ուսումնասիրությունները Կառնուտում, Պեմզաշենում, Հառիճում և Սառնաղբյուրում: Հետաքրքրական է, որ հնագիտական բոլոր աշխատանքներն ուղղված էին քարի, բրոնզի և երկաթի դարերի հուշարձանների և նյութական մշակույթի ուսումնասիրությանը: Շիրակի տարածքում եղած բազմաթիվ միջնադարյան մեծարժեք պատմաճարտարապետական հուշարձաններից, որոնց գերակշիռ մասը վանքեր և եկեղեցիներ է, այս շրջանում ոչ մեկի տարածքը չի պեղվել: Միակ բացառությունը Մարմաշենի վանքային համալիրի 1932-1935թթ. մասնակի պեղումներն են (Հ. Եղիազարյան), որոնց արդյունքում բացվում է համալիրի 4-րդ՝ կլոր եկեղեցին:

1946թ. Շիրակի հնագիտական պեղումները վերսկսվում և նոր թափ են ստանում: Արդեն 1946թ. Ս. Ջամյատինը և Մ. Պանոչկինան վերսկսում են քարի դարի ուսումնասիրությունները Արտին լեռան և Անի-Պեմզայի տարածքներում: 1952թ. Հ.Մարտիրոսյանն սկսում է Լենինականի Մսի կոմբինատի ավազահանքի բնակավայրի և դամբարանադաշտի պեղումները: 1959-1967թթ. Թ. Խաչատրյանը պեղում է Վարդաքարի, Արթիկի, Հառիճի և Հոռոմի բրոնզի և երկաթի ժամանակաշրջանների հնավայրերը: 1963-1964թթ. ճարտարապետ-հնագետ Կ. Ղաֆադարյանն ուսումնասիրում և չափագրում է Շիրակի բազմաթիվ կիկլոպյան ամրոցները, այդ թվում՝ Սառնաղբյուրը, Տուֆաշենը, Լեռնակերտը, Ծաղկահովիտը:

70-ական թթ. զուգահեռաբար սկսվում են Շիրակի դաշտավայրային մասի, այդ թվում նաև միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությունները: ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրակի երկրագիտական թանգարանի և Գյումրու Կումայրի արգելոց-թանգարանի հնագիտական արշավախումբը (ղեկ.՝ Ս. Հարությունյան) որոշ ընդհատումներով մինչև 1988թ.ավերիչ երկրաշարժը պեղումներ է իրականացնում քաղաքի պատմական միջուկը հանդիսացող Կումայրի բազմաշերտ հնավայրում: Այստեղ բացվում են վաղ բրոնզի դարից մինչև զարգացած միջնադարով թվագրվող բնակավայրի տարբեր կառույցներ, վաղմիջնադարյան և X-XIII դարերի եկեղեցիներ, ուշ բրոնզ-երկաթի դարով թվագրվող դամբարանադաշտեր: Այս պեղումներով հաստատվեց, որ Սև բերդ հնավայրը Կումայրու բաղկացուցիչ մասն է:

Նույն արշավախումբը 1972թ. սկսում է Մարմաշենի վանքի և հարակից տարածքների հնագիտական պեղումները: Ուսումնասիրվում են վանքի հիմնադիր Վահրամ Պահլավունու Տիրաշենի և Վահրամաբերդի ամրոցները և բնակավայրերը: Ախուրյանի կիրճում հայտնաբերվում են ուրարտական ժամանակաշրջանի դամբարանադաշտ, VII-XIII դդ. 5 եկեղեցիներ, հնագիտական հետազոտություն է կատարվում Երազգավորսի

ամրոցի և եկեղեցու տարածքում: 1973թ. Լ. Պետրոսյանի կողմից սկսվում են բրոնզի դարի բոլոր փուլերն ընդգրկող Քեթիի Սղնախ կիկլոպյան ամրոց-բնակատեղիի, Ոսկեհասկի վաղ երկաթի ու երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի դամբարանադաշտերի պեղումները:

Հնագիտական պեղումները Շիրակում նոր թափ են սատանում 70-ական թթ. վերջերին, երբ Ախուրյանի ջրամբարի շինարարության կապակցությամբ պեղվում են ջրի տակ մնալու ենթակա և տեղափոխվող բնակավայրերի նոր տարածքները: 1977թ. անտիկ Շիրակավանի բնակավայրի և դամբարանադաշտի հետախուզական պեղումներով (Գ.Կարախանյան և Ֆ.Տեր-Մարտիրոսով), որոնք շարունակվել են նաև մինչև 1983թ., սկսվում է Շիրակի անտիկ հուշարձանների ուսումնասիրությունը:

Զուգահեռ ընթանում են Շիրակավանի բրոնզ-երկաթ ժամանակաշրջանների ամրոցի, բնակավայրի և դամբարանադաշտերի պեղումները (Լ. Պետրոսյան, Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան): Հարևանությամբ՝ Ջրափիում 1980-81թթ. Ա. Կանեցյանի կողմից իրականացվում են անտիկ բնակավայրի և դամբարանադաշտի պեղումներ:

1980թ. Ֆ. Բաբայանը պեղումներ է իրականացնում Հառիճի վանքի տարածքում, ուր Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան կողմում հայտնաբերվում է XII-XIV դդ. արհեստավորական թաղամաս: 1983-1984թթ. Ռ. Բաղալյանը վերսկսում է Կառնուտի վաղբրոնզիդարյան բնակավայրի պեղումները:1986-ին պեղումներ են իրականացվում Բարձրաշենի անտիկ բնակավայրում (Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան): 1987թ. շինարարական աշխատանքների ժամանակ անտիկ դամբարաններ են բացվում Կարմրաքարում, որի պեղումներն իրականացնում է Ս. Հարությունյանի արշավախումբը: Այս դամբարանադաշտի պեղումները 1994թ. շարունակվում են Հ. Հակոբյանի և Լ. Եգանյանի կողմից:

1987թ. սկսվում են Հողմիկի անտիկ բնակավայրի պեղումները (Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Տ. Հովհաննիսյան), որոնք ընդհատումներով շարունակվեցին մինչ 2006թ.: 1987-ին Լ. Պետրոսյանն իրականացնում է Սարապատի, իսկ Ռ. Բաղալյանը և Հ. Աղեկյանը՝ 1987-1989թթ. Հոռոմի դամբարանադաշտերի պեղումները: 1988-89թթ. անտիկ բնակավայրի պեղումներ են իրականացվում Անուշավան գյուղում (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ս. Տեր-Մարգարյան):

1988թ. ավերիչ երկրաշարժի հիմնական հարվածն իր վրա կրեց Շիրակը: Ավերվեցին նրա կենտրոն Լենինականը, տասնյակ գյուղեր և ավաններ, զոհվեցին հազարավոր մարդիկ: Աղետի հետևանքների վերացման նպատակով Շիրակում սկիզբ են առնում աննախադեպ ծավալի հողային և շինարարական աշխատանքներ: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ Շիրակի երկրագիտական թանգարանի հնագիտական արշավախումբը 1989-ից սկսում է հնագիտական հետախուզություն իրականացնել նորակառույցների տարածքներում: Դրանց արդյունքում հայտնաբերվում

են տարբեր ժամանակաշրջանների բազմաթիվ հուշարձաններ, որոնց մի մասում պահպանական նպատակներով իրականացվում են պեղումներ: Դրանցից են Բենիամինի անտիկ բնակավայրն ու դամբարանադաշտը (Հ.Խաչատրյան, Լ.Եգանյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով), Առափիի, Վարդբաղի, Հայակերտի անտիկ դամբարանադաշտերը և Սարատակի անտիկ բնակավայրն ու դամբարանադաշտը (Հ. Խաչատրյան, Լ.Եգանյան):

Չնայած սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին 90-ական թթ. Շիրակում հնագիտական ուսումնասիրությունները շարունակվում են: Դրանք չեն դադարում նաև Գյումրու տարածքում: 1990թ. Գյումրու Կումայրի արգելոց-թանգարանի հնագիտական արշավախումբը (Ս. Տեր-Մարգարյան) շարունակում է Վարդբաղի անտիկ դամբարանադաշտի, իսկ 1993-ից Սև բերդ ամրոցի տարածքում գտնվող վաղբրոնզիդարյան բնակավայրի և վաղ երկաթի դամբարանադաշտի պեղումները, որոնք ընդհատումներով շարունակվում են մինչ օրս: 1992թ. Լ. Պետրոսյանի կողմից պեղումներ են իրականացվում Լանջիկի վաղբրոնզիդարյան բնակավայրում և դամբարանադաշտում:1995-1996թթ. Շիրակի երկրագիտական թանգարանի հնագիտական արշավախումբը պեղում է Ազատան գյուղի տարածքում գտնվող Բենիամին-2 կիկլոպյան ամրոցը մ.թ.ա. VII-VI դդ. բնակավայրը և ուշբրոնզիդարյան դամբարանադաշտը (Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան): 1998-ից ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների նորաստեղծ կենտրոնի կազմում, պետբյուջեից ֆինանսավորվող երկու թեմաների շրջանակներում նույն արշավախումբը XXI դարասկզբին շարունակում է Շիրակի տարածքի ինտենսիվ հնագիտական հետախուզությունը և հետազոտությունները: 2001թ. հայտնաբերվում և պեղվում է Սարատակի մ.թ.ա. VIII-VI դդ. դամբարանադաշտը (Լ. Եգանյան): 2003-2005-ին՝ Հայկաձորի անտիկ բնակատեղին ու դամբարանադաշտը, միջնադարյան քարանձավային բնակավայրի մի խումբ քարանձավներ (Հ.Խաչատրյան, Լ.Եգանյան), 2003-2006թթ.՝ Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան բնակավայրը (Լ.Եգանյան),2003թ. Աղվորիկի կիկլոպյան ամրոցն ու վաղմիջնադարյան բնակատեղին (Լ.Եգանյան), 2004թ. Կարմրաքարի X-XIII դդ. մի եկեղեցի (Ս. Հարությունյան), 2005-ին Կարմրաքարի երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի դամբարանադաշտը (Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան): Սրանցից առավել կարևորվում են Հայաստանի միջնադարյան Անի մայրաքաղաքի՝ ՀՀ տարածքում գտնվող քարանձավային արվարձանի և Մեծ Սեպասարի վաղ բրոնզիդարյան բնակավայրի ուսումնասիրությունները:

1991թ. Հայաստանի անկախության հաստատումը հայկական հնագիտությանն ընձեռում է միջազգային համագործակցության լայն հնարավորություններ: ՀՀ տարածքում, այդ թվում և Շիրակում, սկսում են աշխատել միջազգային հնագիտական արշավախմբեր: Հայ-ամերիկյան համատեղ արշավախումբը վերսկսում է Հոռոմի պեղումները (Ռ. Բադալ-

յան, Ֆ.Կոլ)՝ աշխատելով մինչ 1993թ.: Ծրագիրը 1995-1997թթ. շարունակվում է հայ-ամերիկա-գերմանական համատեղ արշավախմբի կողմից (Ռ. Բաղալյան, Փ. Կոլ, Ս. Կրոլ): 2000թ. Շիրակի երկրագիտական թանգարանի և Լիոնի Արևելքի ուսումնասիրման կենտրոնի համատեղ արշավախումբը (Ք. Շատենյե, Ք. Ֆուրլուբե, Գ. Արթին, Հ. Խաչատրյան, Լ.Եգանյան) իրականացնում է Շիրակի քարիդարյան հուշարձանների և հումքի (օբսիդիան, կայծքար, դացիտ) աղբյուրների լայնածավալ հետախուզություն: 1998թ. մինչ օրս Բենիամինի անտիկ բնակավայրի ուսումնասիրություններն իրականացվում են հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ս. Դեշամպ):

2007թ. Շիրակի միջնադարյան հուշարձանների ուսումնասիրության ուղղությամբ միջազգային համագործակցության նոր ծրագիր է սկսվում Անիի թուրք-ֆրանսիական համատեղ արշավախմբի ֆրանսիական կողմի հետ: Մասնակի վերապեղվում և չափագրվում են Երազգավորսի, Ախուրիկի VII-X դդ. ամրոց-եկեղեցիները, Գուսանա գյուղի, Տիրաշենի ամրոցները, Ախուրյանի կիրճի՝ Մարմաշենի վանք-Տիրաշեն միջանկյալ տարածքում դեռևս 70-ական թթ. պեղված և չհրատարակված 3 եկեղեցիներ (Ժան Պիեռ Մահե, Ա.Թոթոյան-Բալաղյան,Հ.Խաչատրյան,Լ. Եգանյան):

2007թ. Շիրակի միջնադարյան հուշարձանների համատեղ ուսումնասիրության նպատակով պեղման ենթակա հուշարձանների ընտրություն և պայմանավորվածություններ են ձեռք բերվում Հռոմի և Կիետիի համալսարանների հետ (Վ. Լա Սալվա, Ս.Անտոնելլի, Մ.Տորնեզե, Ջ.Անոնշիա, Լ.Եգանյան, Հ. Խաչատրյան): Ծրագիրը հնագիտական ուսումնասիրություններին հաղորդում է նոր որակ, քանի որ նախատեսում է ուսումնասիրվող հուշարձանի վերականգնում: Հայ-իտալական համանման մեկ այլ ծրագիր արդեն իսկ իրականացվում է Երերույքի տաճարի վերականգնման ուղղությամբ: Նման ծրագրերի իրագործումը ոչ միայն կօգնի Շիրակի պատմամշակութային ժառանգության պահպանմանը, այլև կխթանի մարզում զբոսաշրջության զարգացումը՝ դրանից բխող սոցիալ-տնտեսական դրական հետևանքներով:

Ցավոք, ՀՀ-ում հնագիտական հետազոտություններն առայժմ կատարվում են հիմնականում օտարերկրյա տարբեր կենտրոնների հատկացրած միջոցներով կամ դրամաշնորհներով, ինչը ենթադրում է միայն ֆինանսավորող կողմին հետաքրքրող ժամանակաշրջաններին կամ մշակույթներին վերաբերող հուշարձանների ուսումնասիրություն, և պատահական չէ, որ հիմնականում շեշտը դրվում է նախապատմական ժամանակաշրջանների հուշարձանների ուսումնասիրության վրա: Նույն իրավիճակն է նաև Շիրակում: Թերևս հասունացել է ժամանակը, որպեսզի հայ ժողովրդի պատմության հազարավոր տարիների խորքից եկած նյութական մշակույթի հնագիտական ուսումնասիրություններն արժանանան ոչ

միայն պետական պատշաճ օժանդակության, այլև համակարգված ծրագրային մոտեցման:

Հնագիտական ուսումնասիրությունների համակարգված ծրագրերի ստեղծումն ու իրականացումը կնպաստեն ոչ միայն հայ ժողովրդի պատմության, նյութական և հոգևոր մշակույթի հարստացմանը, այլև ուսումնասիրվող հուշարձան-հնագիտական բազա-համալիրները կարող են դառնալ պատմություն, հնագիտություն, ճարտարապետություն, մշակույթ և արվեստ ուսումնասիրող հայ և օտարազգի ուսանողների համար գիտական, ուսումնական և զբոսաշրջության կենտրոններ:

Ներկայումս Շիրակի տարածքում հաշվառվել և պետության կողմից պահպանվում են շուրջ 2400 պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններ, և դրանց մեջ կան բոլոր ժամանակաշրջանների (վաղ քարի դարից մինչև ուշ միջնադար) ու բոլոր տիպերի հարյուրավոր հնագիտական հուշարձաններ, որոնք սպասում են հնագետի բրիչին:

Анаит ХУДАВЕРДЯН (ИАЭ)

ОДОНТОЛОГИЧЕСКАЯ И КРАНИОСКОПИЧРСКАЯ ХАРАКТЕРИСТИКА АНТИЧНОГО НАСЕЛЕНИЯ ВАРДБАХА

Разностороннее антропологическое изучение античных популяций с территории Армении интересно как в связи с географическим положением этого этноса, так и в связи с широкими историческими контактами с окружающей этнической средой. Черепа из могильника Вардбаха характеризуются высокой частотой дополнительных костей лямбдовидного шва (66.67%); умеренными частотами чешуйчатого шва (33.33%). Из группы дополнительных отверстий очень часто встречаются малые небные (86.36%); подглазничные (66.67%). Встречаемость метопического шва у населения Вардбаха 30%. Характерной особенностью в строении затылочной кости исследованных нами черепов является сохранение двустороннего мендозного шва. Встречаемость мендозного шва у населения Вардбаха 14.29%. Явно выроженную предрасположенность к неполному зарастанию мендозного шва В.Бунак (1927) относил к особенностям признаков арменоидного типа. Такой же этнической особенностью, по мнению В. Бунака, является метопический шов. Важным расодиагностическим признаком является разделенная швом скуловая кость os japonicum. Частота встречаемости этого признака в Вардбахской серии составляет 16.67%.

Таким образом, отмеченная в изучаемой популяции частота этого признака выходит из европеидного размаха вариаций. Согласно данным А. Козинцева, минимальная встречаемость (до 10%) этого шва характерна в основном для европеоидных групп. В этой связи весьма интересны результаты сравнения показателей наиболее близких к Вардбаху (в территориальном отношении) характеристик серий черепов из Бениаминского могильника, из объединенного могильника Ширакавана и Карчахпюра, а также Артика. Сопоставление серий позволяет обнаружить, что всречаемость этого признака в Бениаминской серии составляет 27.07%[1], Ширакаванской и Карчахпюрской сериях -5.6%, а в Артикской - 2.9%. Таким образом, население эпохи античности с территории Ширакской равнины не укладываются по частоте встречаемости этого признака в пределы величин, характерных для современных европеоидов.

Результаты краниоскопического анализа Вардбахской популяции в работе были дополнены одонтологическими наблюдениями. Изучение Вардбахской серии показало, что преобладающей формой прикуса является здесь лабидодонтия. Исследование лингвальной поверхности верхних резцов позволяет констатировать, что полулопатообразные и лопатообразные формы этих зубов для вардбахской популяции не являются типичными. На латеральных резцах эти формы выявлены с низкой частотой, на медиальных резцах также отмечена меньшая его частота. Интересно, что большинство вогнутых форм лингвальной поверхности верхних резцов обнаружено на детских черепах. Расодиагностическая ценность этого признака заключается в дифференциации надрасовых подразделений, так их как восточный (монголоидный) и западный (евро-негроидный) стволы.[2] Наибольшие частоты отмечены в Китае, в Дагестане, у американских индейцев, у эвенов Камчатки.[3] Низкие частоты отмечены на Кавказе (исключая Дагестан), у русских, украинцев.

---

[1] *А. Худавердян, Антропологические и медицинские аспекты проблемы адаптации и стресс в свете данных палеоантропологии. Новые методы – новые подходы в антропологии. Вестник. Международный научно-практический журнал 7(31), Санкт-Петербург, 2000, стр. 96-100.*

[2] *А. Зубов, Этническая одонтология, М., 1973.*

[3] *А. Зубов, Заключение. В кн. Этническая одонтология СССР, М., 1979; Н.Дубова, Л.Тагако, Одонтологическая характеристика населения северо-восточной Азии. В книге.: На стыке Чукотки и Аляски. М., 1983; Ю.Гаджиев, Народы Кавказа. Дагестан. В кн.; Этническая одонтология СССР, М., 1979.*

Вардбахская популяция характеризуется высокими показателями редукции переднего отдела верхней челюсти. Диастема между верхними медиальными резцами отмечена только у одного субъекта. Общая частота встречаемости краудинга у античного населения достоверно высока. Следует сразу подчеркнуть нетипичное соотношение диастем и краудинга на верхней челюсти у вардбахской популяции, где краудинг по своей встречаемости превосходит частоту диастем. Наиболее высокие частоты краудинга прослеживаются на Дальном Востоке, повышена на европеоидный масштаб частота фена в некоторых финноязычных группах.[1]Сильно редуцированных верхних латеральных резцов отмечено только у одного субъекта. Отмечена лишь тенденция (балл 1) к редукции в группе, что указывает на налиие некоторых специфических черт грациального типа. Высокие частоты редукции верхних латеральных резцов фиксируются у южных европеоидов, в Индии, в некоторых сибирских этносах, у горных сокотрийцев, у населения Мали (где отмечен мировой максимум 12.3).[2]

Вардбахская краниологическая серия обладает повышенной редукцией нижних больших коренных зубов. Шестибугорковые формы первого нижнего моляра чрезвычайно редки. Пятибугорковые первые моляры здесь зафиксированы в подавляющем числе, а пятибугорковые вторые моляры обнаруживаются с низкой частотой. В серии четырехбугорковые первые моляры зафиксированы у одного субъекта. Второй нижний моляр сильно редуцирован, в основном это четырехбугорковый зуб, шестибугорковые не зафиксированы. Четырехбугорковые формы вторых нижних моляров маркирует уровень грацилизации зубной системы. Его диагностическая роль проявляется на уровне больших рас, т.к. высокие частоты М24 свойственны группам большой европеоидной расы (66-97.8%). В смешанных группах размах признака изменяется от 40-80%. В серии шестибугорковые и четырехбугорковые М3 отмечены с равной частотой. На первом нижнем моляре встречается Y тип узора. Особо следует указать на полное отсутствие в серии другие формы узора на первом нижнем моляре. Второй нижний моляр харак-

---

[1] *Н. Халдеева, Вариации строения зубов: теоретические и практические аспекты одонтологии. В кн.: Новое в методике и методологии антропологических исследований. Материалы к серии "Народы и культуры". Вып. X. Антропологические исследования, М., 1992, стр. 147-182.*

[2] *В. Шинкоренко, В. Науман, В. Хить, А. Зубов, Антропологические исследования на о. Сокотра. Советская этнография, вып. 4, М., 1984; Б. Кейта, Антропология населения республики Мали. Автореф. дисс... канд. ист. наук, М., 1977.*

теризуется высоким процентом Y-узора. Одинаково соотношение + и X-узоров на втором нижнем моляре. Межбугорковые борозды на М3 имеют форму Y.

Важными расодиагностическими признаками на нижних молярах являются дистальный гребень тригонида и коленчатая складка метаконида. Неожиданной явилась повышенная встречаемость в этой серии этих признаков. Японские одонтологи коленчатую складку метаконида считают одной из характерных черт зубной системы монголоидных групп. Признак маркирует монголоидность в группах, относящихся к центрально-азиаткой, дальневосточной, арктической расам. Высокие частоты дистального гребня свойственны веддо-австралоидам. Мировой максимум частот признака (46.3%) отмечен в племенных группах Индии (ораоны) и связан с веддоидным расовым типом, что привело А. Зубова[1] к решению рассматривать некоторые черты монголоидного расового комплекса, в том числе дистальный гребень тригонида, как восточный:. Для некоторых популяций Сибири, у индейцев Америки характерны довольно низкие частоты признака.[2] В европеоидных группах дисперсия частот признака невысока-от 0 до 12%-у грузин, в группах Дагестана.[3] Высокие частоты коленчатой складки метаконида зафиксированы у селькупов (50%), у монголов,[4] у популяций Сибири. Высокие частоты признака характерны для групп в различной степени связанных с урало-лапоноидной общностью и объединенных лингвистически, и для восточного одонтологического ствола в целом, включая индейцев и австралийцев. Минимальные частоты зарегистрированы на Украине, в Дагестане -21.1%.[5] Большую расодиагностическую ценность на нижних молярах является и характеристика варианта "2" второй борозды метаконида, прочно вошедшей в одонтологические программы как признак дифференцирующий западный и восточный расовые стволы, а в пределах западного ствола-северный и южный варианты.[6] Обращает на себя внимание низ-

---

[1] *А. Зубов, Одонтология: Методика антропологических исследований, М., 1968; А. Зубов, Заключение. В кн.; Этническая одонтология СССР, М., 1979.*

[2] *Н. Халдеева, ук. соч., стр. 147-182.*

[3] *Р. Кочиев, Закавказье и Северный Кавказ; Ю. Гаджиев, Народы Кавказа. Дагестан. В кн.: Этническая одонтология СССР, М., 1979.*

[4] *А. Зубов, И. Золотарева, Монголы в мировой систематике одонтологических типов. Вопросы антропологии. Вып. 64, М., 1980.*

[5] *С. Сегеда, Украинцы; Ю. Гаджиев, Народы Кавказа. Дагестан. В кн. Этническая одонтология СССР, М., 1979.*

[6] *А. Зубов, И.Золотарева, ук. соч.*

кая встречаемость в вардбахском одонтологическом материале второй борозды метаконида на первом моляре. Повышенные частоты второй борозды метаконида на первом нижнем моляре характерны для популяции большой европеоидной расы. Наибольший процент признака зафиксирован у литовцев.[1] Среди популяций западного одонтологического ствола признак варъирует, образуя очаги пониженной концентрации на Кавказе и в гриппах с чертами североеврепейского реликтового типа. Низкие концентрации фена наблюдается в некоторых популяциях Средней Азии. Встречаемость варианта "3" второй борозды метаконида в вардбахской популяции на первом нижнем моляре составляет 50% случаев.

Выявленную в вардбахской популяции высокую частоту дистального гребня тригонида, что в сочетании с низким процентом варианта 2 med (II) является характерной особенностью южного грациального одонтологического типа. На первом нижнем моляре не был обнаружен внутренний средний дополнительный бугорок (TAMI), на втором нижнем моляре его частота невысока. Высокие частоты бугорка характерны у тувинцев, Сибири, в китайских и въетнамских выборках,[2] в популяциях о. Сокотра (ХДРИ)[3] и у полинезийских групп.[4] Гигодонтия М3 обнаруживается в группе с низкой частотой. На М2 и М^2 частота эмалевого затека в серии незначительна.

При анализе степени редукции верхних больших коренных зубов выявляется следующая картина. Отметим высокий общий уровень редукции гипоконуса в изученной серии. Относительно четко выделяются четырехбугорковые первые моляры (тип 4) в Вардбахской серии. Четырехбугорковые вторые моляры (тип 4-) обнаруживается с высокой частотой. Средние баллы редукции метаконуса на верхних молярах оказались в Вардбахской серии 2, т.е. серия характеризуется средним уровнем редукции метаконуса. На верхних молярах Вардбахской краниологической серии присутствует дополнительный бугорок (бугорок Карабелли) сравнительно низким показателем. Настоящий бугарок Карабелли имеющий обособленную вершину, встречается в Вардбахской серии на первом верхнем мо-

---

[1] *И. Бальчунене, Одонтология древнего и современного населения Литвы: Автореф. дисс ... д-ра биол. наук. Вильнюс, 1986.*

[2] *Н. Халдеева, Хакасы. Буряты. Дальный Восток. В кн. Этническая одонтология СССР, М., 1979.*

[3] *Б. Кейта, ук., соч.; В. Шинкоренко и др., ук. соч.*

[4] *Н. Халдеева, 1992.*

ляре только у одного субъекта. Небольшое вздутие, не имеющее самостоятельной вершины наблюдалось у двух субъектов. На втором и третьем верхних молярах бугорок Карабелли не был обнаружен ни разу. Размах бугорка Карабелли заключен в диапазоне от 2.7% у бурят[1] до 61.3% в Дагестане.[2] Пониженные частоты признака большей частью связаны с монголоидным компонентом.[3]

Встречаемость в Вардбахской серии восточной или лирообразной третьей формы первой борозды эоконуса (паракону-са) высока. Повышенные частоты формы 3 первой борозды эоконуса на первом нижнем моляре у монголов – 85%.[4] Высокий процент признака обнаружен у корейцев (76.2%), во многих популяциях восточного одонтологического ствола. Наименьшей частотой признака отличаются литовцы. Косой гребень верхних моляров в подавляющем числе зафиксирован на M^2, меньшая его частота отмечена на M^1 и не был обнаружен ни разу М3. Гигодонтия M^3 обнаруживается в группе с низкой частотой.

Изучение одонтоглифических особенностей Вардбахской краниологической серии пополнило программу ценных для этнической антропологии признаков зубной системы, позволивших высказать предположение о смешанном характере этой популяции. Исходя из анализа признаков, можно предположить, что популяция, представленная Вардбахской серией, не была малым изолятом, не отличалась сколько-нибудь последовательной эндогамией, а являлась, скорее, многочисленной группой, характеризовавшейся в отношении брачных норм условиями, близкими к панмиксии.

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՇՀՀԿ, ՇԵԹ)

ԲԵՆԻԱՄԻՆԻ ԱՆՏԻԿ ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պնտինգերյան տախտակներում Հայաստանի անտիկ մայրաքաղաքը Սև ծովի կենտրոնների հետ կապող տարանցիկ ճանապարհի ճշտմամբ զբաղվել են տարբեր գիտնականներ. Կոնրադ Միլլեր, R. Kipert

[1] *Н. Халдеева, 1979.*
[2] *Ю. Гаджиев, ук., соч.*
[3] *Н. Халдеева, Вариации …, 1992.*
[4] *А. Зубов, И. Золотарева, ук. соч.*

P. Tomaschek, Հ. Մանանդյան և այլք: Մեր կարծիքով, ընդունելի է Հ. Մանանդյանի տեսակետը, որը որպես հիմք ընդունելով դեռևս մ.թ.ա. VIII դ. ուրարտական Արգիշտի առաջին թագավորի այս տարածքների նվաճման երթուղիները, Շիրակում թողած երկու արձանագրությունների մոտ գտնվող բնակավայրերի և Պեւտինգերյան տախտակներում նշված կայանների անունների ստուգաբանությունը, գտնում է, որ Արտաշատ-Սեբաստապոլիս տարանցիկ ճանապարհն անցել է Condeso-Kondakhsaz-ներկայումս՝ Ռյա Թազա, Գյուլլիջա-Սպանդարյան և Մարմաշեն-Գանլիճա կետերով: Այս երկու կայանները՝ Գյումրի-Կումայրիի վրայով կարող էին կապվել Սպանդարյան-Անուշավան-Սարատակ-Բենիամին ճանապարհով, որ գործում է նաև ներկայումս: Այս ուղին պակաս զառիթափ է և ձգվում է Կարկաչան գետակի երկայնքով, որը քարավաններին ապահովել է խմելու ջրով: Մարմաշենից հետո ճանապարհը ձգվելով հյուսիս, այնուհետև Քեթիի լեռնանցքով դուրս է եկել Աշոցքի սարահարթ և մոտավորապես այսօր գործող ճանապարհի տեղով ձգվել դեպի Ջավախք: Այստեղ մինչև այժմ եղած հարյուրավոր աղբյուրները թույլ են տվել գետից հեռանալով կրճատել ճանապարհը:

Արգիշտի I-ից հետո Սարդուրե Արգիշտորդին 4 արշավանք է կատարում դեպի Էրիախի-Շիրակ և հարակից երկրներ: Ուշագրավ է այն փաստը, որ նույն արշավանքի ընթացքում խոսվում է նաև Կուլխա-Կոլխիդա երկրի գրավման մասին, ինչը ցույց է տալիս դեռևս ուրարտական ժամանակաշրջանում Արարատյան դաշտից Շիրակի և Աշոցքի վրայով դեպի Սև ծով հիշատակված ուղու ինտենսիվ օգտագործումը:

Ուրարտական շրջանից մինչ Արտաշատի կառուցումը (մ.թ.ա. II դ. սկիզբ) այս ճանապարհի գործելու մասին հայ մատենագրության մեջ տեղեկություններ չկան, սակայն վրացական աղբյուրներում (Լեոնտի Մրովելի, «Քարթլիս Ցխովրեբա»), չնայած ժամանակագրական որոշ խառնաշփոթին, խոսվում է մ.թ.ա. III դ. վերջերին հայոց Երվանդ թագավորի կողմից ներկայիս Վրաստանի հարավ արևմտյան տարածքներին տիրելու, իսկ այնուհետև հայ-վրացական մի քանի պատերազմների և արշավանքների մասին, որոնց հիմնական երթուղին եղել է այս ճանապարհը:

Ինչպես գիտենք, Աքեմենյան լայնարձակ կայսրության կազմավորումից հետո Դարեհ Ա-ը իրականացրեց իր տերության վարչատարածքային բաժանում: Երկրի կառավարումը, սատրապությունների միջև կապը, բարեկեցությունն ապահովելու համար Դարեհ Ա-ը մեծ ուշադրություն դարձրեց ճանապարհաշինությանը և առևտրական ապահով ուղիների զարգացմանը: Մասնավորապես, Հերոդոտոսի կողմից ամենայն մանրամասնությամբ նկարագրվում է «Արքայական ճանապարհը»: Նույն իրողությունները պետք է լինեին նաև կայսրության կազմի մեջ գտնվող Հայաստանում, որի տարածքը համապատասխանում էր XIII և XVIII սատրապություններին:

XVIII սատրապության կենտրոնը, ըստ ընդունված կարծիքի, գտնվում էր Արարատյան դաշտում, ուրարտական Էրեբունի ամրոցի տեղում: Այս ժամանակաշրջանում, մեր կարծիքով, նոր թափով պետք է վերագործարկվեր հետագայում Արտաշատ-Սեբաստապոլիս անվանումով հայտնի ռազմավարական և տարանցիկ առևտրական ուղին: Հարավարևմտյան Վրաստանից և Սև ծովի հարավարևելյան շրջաններից հայտնաբերված աքեմենյան տիպի գեղարվեստական մետաղագործության արտադրանքի հարուստ նյութերը թույլ են տալիս ենթադրել այս ուղիով կատարվող աշխույժ առևտրական հարաբերությունների մասին: «Արքայական ճանապարհի»՝ Հերոդոտոսի նկարագրության համապատասխան, այն մոտավորապես մեկօրյա անցման հեռավորությամբ բաժանված էր կայանների, ապահովված իջևանատներով և պահակակետերով: Եթե ոչ նույն որակով, համենայն դեպս նույն սկզբունքով և նույն կերպ պիտի կազմակերպվեին նաև կայսրության տարանցիկ առևտրի մյուս ճանապարհները: Այս ենթատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մ.թ.ա. VI դարի վերջում Բենիամինի անտիկ դաստակերտի կառուցման և դրա տեղի ընտրության խնդիրը:

Դաստակերտի տարածքը 100 հեկտարից ավելի է: Տարբեր տեղամասերում կատարված բազմամյա պեղումների ընթացքում բնակավայրի ոչ մի հատվածում աքեմենյան ժամանակաշրջանին նախորդող մշակութային շերտ կամ նյութեր առ այսօր չեն հայտնաբերվել, ինչը ցույց է տալիս բնակավայրի՝ հենց աքեմենյան շրջանում և նախկինում չօգտագործված տարածքում նորակառույց լինելը: Հսկա բնակավայրը ունի մ.թ.ա. V-II և մ.թ.ա. I դարերով թվագրվող 2 մոնումենտալ կառույցներ: Սրանցից առաջինն ունի աքեմենյան պալատական մշակույթի ցայտուն դրսևորումներ՝ սյուների զանգանման և ակոսառվակներով, տորաձև, լոտոսներով զարդարված խարիսխներ, քառակուսի խոշոր սրահներ և այլն: Մոտ կես հազարամյակ ամենայն հավանականությամբ այն եղել է վարչական և առևտրատնտեսական խոշոր կենտրոն: Պալատական անվանված մ.թ.ա. V-II և մ.թ.ա. I դարերով թվագրվող 2 հսկա մոնումենտալ կառույցներն ունեն բազմագործառական բնույթ՝ ինչպես վարչական, այնպես էլ հոգևոր: Պեղումների ընթացքում այստեղից հայտնաբերված մեծ քանակությամբ ներմուծված խեցեղենը, առևտրական կնքադրոշմները, պարթևական և հռոմեական արծաթյա դրամները վկայում են բնակավայրի ակտիվ առևտրատնտեսական հարաբերությունների մասին, ինչը բացատրվում է նրա՝ տարանցիկ առևտրական ուղու վրա գտնվելու հանգամանքով:

Մեր կարծիքով՝ կառուցվող նոր կենտրոնի տեղի ընտրությունը պայմանավորված է հենց այստեղով անցնող նշված տարանցիկ ճանապարհով: Նշված ուղու միջանկյալ հատվածում գտնվող բնակավայրերի (Սպանդարյան, Անուշավան, Լուսաղբյուր, Սարատակ, Բենիամին, Կումայրի, Վարդքաղ, Տիրաշեն, Մարմաշեն, Քեթի) տարածքներից հայտնա-

բերված հնագիտական նյութերն ապացուցում են դրանց գոյությունը մ.թ.ա. I հազարամյակի ամբողջ ընթացքում: Աշոցքի սարահարթի հնագիտական ուսումնասիրությունը դեռևս կատարված չէ, սակայն ներկայիս Ղազանչի գյուղի մոտ՝ գլխավոր ճանապարհից ոչ հեռու, բլուրներից մեկի վրա պահպանվել են ամրոցի և կառույցների ավերակներ և արհեստական ջրամբարի մնացորդներ: Տեղանքը և ավերակները շրջակայքի բնակչությունը անվանում է Քարվանսարա, անվանում, որ, անշուշտ, պատմական հիմք պիտի ունենա:

Հայաստանում տարանցիկ առևտրական ճանապարհների վրա նոր, խոշոր կենտրոններ ստեղծելու պրակտիկան մենք տեսնում ենք նաև հետագայում: Դրա լավագույն օրինակներից մեկը Արշակ II կողմից Կոգովիտում «Արքայական ճանապարհի» վրա Արշակավանի կառուցումն է:

Феликс ТЕР-МАРТИРОСОВ (ИАЭ)

ПЛАНИРОВКА ДВОРЦА-СВЯТИЛИЩА ДРАСХАНАКЕРТА (БЕНИАМИН)

В июле 1989г. археологическая экспедиция Института археологии и этнографии АН Арм ССР совместно с Ширакским краеведческим музеем начала археологические раскопки памятника Драсханакерт у села Бениамин Ширакского марза. Результаты раскопок показали неординарность памятника и его значимость для исследования культуры Армении ахеменидского периода. В середине 90-х годов работы были приостановлены. Большую роль в продолжении исследований открытых комплексов сыграла помощь французских археологов во главе со С.Дешамбом, приступавшие с 1999г. к работам по зачистке дворца. Комплекс этот подвергался многократным перестройкам в срежности и был сильно поврежден мелиоративными работами и ежегодными военными учениями. В результате потребовался максимум осторожности и длительный период работ для выявления стратиграфии его перестроек. В трех лет работы были сосредоточены по расчистке полов во всех частях здания и территории южнее его, уточнена планировка дворца-святилища на холме. В результате работ получены новые важные сведения. В данном докладе представлены предварительные результаты изучения центрального комплекса расположенного на холме, относящиеся к вопросам планировки и конструкции здания на первом этапе его бытования.

Как уже отмечалось в предыдущих публикациях памятника,[1] основание на холме большого дворца-святилища относится к Vв. до н.э. Он имеет прямоугольную форму и размеры 30х25 см. Основания стен дворца каменные. Внешние восточная, западная и южная стены имеют толщину в 140см, северная и внутренние стены имеют толщину в 120 см. Фундаменты стен имеет высоту в 20см. Они сложены в двупанцирной технике из больших грубо оттесанных камней с забутовкой мелкой галькой и глиной. Особо следует отметить, что в местах стыковки, стены не имеют связи. Фундамент был перекрыт водонепронецаемым пластом глины черного цвета толщиной в 5-10см, одновременно с этим предстваляющим и нивелировочный основу для кладки из сырцовых кирпичей. С внутренней стороны основания стен окаймлены линией из мелкой гальки, являющейся, вероятно, основанием для штукатурки стен. На нивелированном каменном основании возвышались стены из сырцового кирпича. Сырцовый кирпич почти повсеместно разрушен в результате поздних построек и сохранился лишь в двух частях здания. Кроме этого следы от сырцового кирпича прослежены также дважды на полу первого слоя здания. С внешней стороны стен прослежены ризолиты, которые указывают на то, что снаружи здание было украшено плоскими пиластрами. Ризолиты западной и восточной стен также не имеют перевязок со стенами. Перевязка камней наблюдается лишь у ризолитов северной стены. Следует отметить, что из-за понижающего к севера-западу рельефа вершины холма, каменное основание здесь более высокое, превышая 30см. Раскрытие ризолитов северной стены и определение расстояния между ними в древности позволяет теперь уверенно говорить о нахождении по 6 ризолитов на северной и южной стенах и по 5 ризолитов на восточной и западной стенах. При этом наблюдается отступление от ахеминидской традиции размещения ризолитов на углах строений. При расчистке северо-западного угла здания выяснилось, что он был уничтожен в период военных учений на холме в новое время. Лучше сохранились фундаменты стен внутренних помещений, прослеженные на уровне одного камня.

По своей планировке здание представляет собой, расположенные в центральной части, два больших прямоугольних

---

[1] *Ф. Тер-Мартиросов, Памятник классической античности Армении, Вестник Ереванского Университета, 1993, N 3, стр. 59.*

помещения, окруженных более узкими прямоугольными комнатами. Центральные помещения имеют размеры 10,30м х 13,60м. Помещения восточной стороны имеют ширину 270 см. Помещения западной стороны имеют ширину в 300см. Помещения южной стороны имеют ширину в 340см. Наибольшую ширину в 710см. имеют помещения северной части, окаймляющие центральные залы. Здание разделено стеной, которая делит на равные части восточную и западную центральные залы и северные помещения. Прохода между западной и восточной сторонами в внутренней части не было. В южной части разделяющая стена отодвинута к востоку. В здании обнаружены два входа с южной стороны. Каждый вход содинялся первоначально с коридорообразным помещением, имевшим дверные проходы, как в центральные залы, так и в восточные и западные узкие помещения. Восточная центральная часть здания представляла собой хлев, с тщательно изготовленными вымосткой из оттесанных плит и сложенной из мелких плит канавкой для стока жидкости. Длина вымостки 11.40м, ширина 200см. Плиты хорошо стесаны и в ряде мест видна тщательная подгонка камней. Это также относится к канавке имеющей каменное основание тщательно отделанного бордюра. В больших плитах вымостки хлева прослежаны два углубления небольшого диаметра, одно из которых было сквозным. Повидимому, данные углубления служили для крепления деревянных столбиков, к которым привязывали животное. Восточнее настила у стены здания располагались ясли для корма животных. Хлев в восточном центральном помещении, вероятно, предназначался для священных телок. Об этом можно судить по найденным здесь курильницам и протоме в форме головы крупного рогатого животного с символом женского лона на лбу. Следует отметить, что широкий проход в хлев, идущий с юга, свидетельствует о том, что здесь содержались животные. В юго-западной части центральной восточной залы находилось небольшая площадка с вымосткой из небольших каменных плит. В промежутке между двумя вымостками был обнаружен очаг, вероятно также имевший культовое назначение. В северо-восточной части центральной залы располагался дверной проход, ведший в северное помещение. Судя по находкам фрагментов керамического и каменного алабасторнов, а также здесь других находок данное помещение являлось дарохранилищем. Уникальной находкой, относящийся к первому периоду жизни дворца-Vв. до н.э., является найденная в

дарохранилище святилища каменная свирель Пана. Она имеет звучание хроматической тетрахорды с нотами FA, MI, FA# (si bemol)LA второй октавы.[1] При расчистке полов здания были выявлены следы побелки глинобитного пола в дарохранилище и там же следы от огня на полу, возможно от пожара.

Следует отметить, что в центральном помещении восточной части были обнаружены две большие торовидные базы, имевшие диаметр тора 70см. Однако базы эти были явно перенесены со своих первоначальных мест. Еще три торовидные базы были обнаружены в дарохранилище. Однако и эти базы были также перенесены со своих первоначальных мест, при последующих перестройках. Большие торовидные базы аналогичны персепольским базам. Особый интерес представляет база из черного туфа, напоминающая персепольские, однако отличающаяся от них по форме. Она имеет низкий квадратный плинт, над которым возвышается большой, округлый тор с поверхностью, украшенной рельефно высечеными крупными лепестками стилизованного растения. Над ним расположен еще один тор с возвышающейся в центре небольшой площадкой под основание колонны. Следует отметить, что наличие двух торов, или торов с фигурной профилировкой характерно для малоазийских территорий ахеменидской империи. База из Драсханакерта по форме наиболее близка к базам из храма в Неандрии.[2] Вероятно, что описываемая база из Драсханакерта представляет собой продукт воздействия культур Малой Азии и ахеменидского Ирана. В тоже время рельефно выступающие в виде гладкого жгута края лепестков орнамента базы характерны для персепольских баз построек Артаксеркса I, т.е. с середины Vв. до н.э. Поэтому данная база является также датирующим для нашего здания элементом. Представляеся вероятным, что первоначально в дарохранилище, в центре помещения распологались четыре базы от деревянных колонн.

В центральном помещении восточной части здания также были помещены две торовидные базы. При этом представляеся, что две из них распологались западнее каменной вымостки. Такое расположение представляется наиболее вероятным исходя из расположения алтарей между двумя колоннами, как

---

[1] *F/Ter-Martirosov, A. Stone Pipe of Pen of the V th century B.C. from Drasxanakert. Etudes Revue d'Armenee, 27. Paris 2000, p. 301-310.*

[2] *Burkhardt Wesenberg, Kapitelle und Basen, Dusseldorf 1971, s. 132-133, fig. 275, 276.*

это засвидетельсвовано для эллинистического времени в храмовом поселении Ширакаван.

Отделенная стеной без прохода западная часть дворца имела, вероятно, светское назначение. В центральном зале западной дворцовой части при расчистке пола были открыты следы от прямоугольной кладки из сырцовых кирпичей. Наиболее вероятным представляестя наличие здесь алтаря сложенного из сырцовых кирпичей. Напомню, что алтарь из глины обнаружен в ахеменидском комплексе ападаны Эребуни[1]. В дворцовой части в зале также были поставлены две колонны. Одна из баз была найдена, а вторая утрачена, по словам крестьян, в 60-х годах. Найденная база относится к базам персепольского типа лотосовидной формы с тщательно высеченными канелюрами. База изготовлена из черного туфа диаметром 70см и сильно пострадала из-за многочисленных перекопов. Колонны в здании, вероятно, были из дерева. Судя по форме баз первый период следует датировать серединой Vв. до н.э. Расчистка южной части данной залы выявила наличие двух пилястров квадратной формы. Один пилястр в виде камня сохранился in sity, а другой прослежен в виде следа в полу. Расположение пилястров позволяет уточнить расстояние между базами колонн. Базы находились на одинаковом удалении от пилястр. Материал в этой части здания крайне скуден. Северные помещения западной части, возможно, являлись жилыми комнатами.

Комплекс дворца-святилища разительно отличается по своей планировке от святилищ и дворцов, до урартского и урартского периодов. В тоже время налицо общность с сооружениями ахеменидского Ирана не только в таких частностях и деталях, как форма и орнаментация без колонн и найденных здесь материалах, но прежде в планировке здания, в характере расположения центральных зал и окружения их коридорообразными помещениями. Такая планировка, как известно, характерна не только для дворцов, но и для святилищ ахеменидского периода[2]. В тоже время показано, что корни такой планировки имеются в древних дворцовых комплексах Месопотамии[3]. Факт этот не случаен и важен. Во II тыс. до н.э. в Месопотамии и на Переднем Востоке, царь выступал священной особой и дворец его являлся одновременно святилищем. Как известно ахеменидские цари, при создании имперской культуры, использовали в ней элементы культур подчиненных народов, специально отобранные для этой цели. При этом, несомненно, особенная роль придавалась архитектуре дворцов и святилищ. Близость их планировки показывает, что ахеменидские

---

[1] *К.Оганесян, Крепость Эребуни, Ер. 1980, стр. 96.*

[2] *Roman Ghirshman. terrasses sacrees de Bard`e Nechandeh et Majid-i Solaiman. L`Iran du Sud-Ouest du VIII-e s.av.n.ere a V-e s.d.n.ere, vol.L, Paris, 1976, p. 197-203; remy Boucharlat, monyments Religieux de la Perse Achemenide Etat des Questions. Temmples et sanctuares. Gis-Maison de I`Orient, 1984, p. 119-135.*

[3] *J-C.Margueron, Prolegomenes a une Etude Portant sur l`Organisation de l`Espace Sacre en Orient. Temmpies et Sanctuares. Gis-Maison de l`Orient, 1984, p. 30-35.*

цари, как и древневосточные владыки выступали в качестве священных особ. Этот момент также четко вырисовывается и в планировке дворца святилища Драсханакерта. Как уже указывалось, конструкция хлева и находки в нем протом и курильниц, неоспоримо, свидетельствуют о культовом назначении восточной части здания. Об этом же свидетельствуют и находки в дарохранилище и находки здесь в последующий период культовых предметов, в том числе и статуэтки с изображением богини. Находки в западной части здания значительно скуднее. Тем более важно обнаружение здесь в наиболее древнем и во втором слое, двух наверший штандартов с изображением орлов, которые, как известно, являлись символом царской власти. То есть несомненно, что если восточная часть являлась культовым помещением, то западная служила резиденцией правителя, представителя царской власти. Характерно в то же время, что помещения светской части и культовой части разделены стеной без прохода на две части, что свидетельствует о четкой раздельности функций правителя и жреца. Однако совмещение в одном здании культовой и светской функций и близость планировки восточной и западной части здания указывают на их равную значимисть в Армении в этот период. Несомненно, что здесь мы видим, фактор нехарактерный для ахеменидской державы. Это феномен местного характера развития культуры. Об этом, прежде всего, свидетельствует облик святилища, в которам богиня Анаит предстает в облике нетеля,[1] что характерно для облика богини в Иране. Это еще раз отрицает тезис прямого заимствования армянской культурой пантеона иранских богов в ахеменидское время и подтверждает мнение о самобытном развитии армянского пантеона богов в этот период времени, переосмысливающего элементы, заимствованные из других культур.[2]Таким образом, рассмотрение планировки здания дворца-святилища Драсханакерта позволяет получить интересные данные по культуре Армении в ахеменидский период.

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ (ՇՀՀԿ, ՇԵԹ)

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԿՈԹՈՂՆԵՐ ՇԻՐԱԿԻՑ

2000թ.՝ Մարմաշենի վանքում՝ կաթողիկե և հյուսիսային եկեղեցիների մեջտեղով անցնող ջրահեռացման համակարգի կառուցման ժամանակ, մինչև կառույցների հիմքերը հասնող խրամատից կաթողիկե եկեղեցու հիմքի մոտ, գտնվեց քարե մի կուռք: Իրը փոքրածավալ է, ունի սև, ողորկ, նաև երկարատև շփումից փայլեցված մակերես: Որպես երկրաչափական

[1] *Ф. Тер-Мартиросов, Памятник классической античности Армении. Вестник Ереванского Университета, N 3,Ер., 1993, стр. 61.*

[2] *Ф.Тер-Мартиросов, Медвеженок и другие персонажи армянской мифологии, Ер.,1996,стр. 32.*

մարմին՝ երկու շեղանկյունիների համադրում է՝ որոշ հատվածում ընդգծված խորակոս բաժանարար գծով:Իրի յուրաքանչյուր կողմը կարող է դիտերես դիտարկվել, որը միաժամանակ կապված է մյուս կողերին արված նշանների հետ: Կողերից երկուսի վրա կա նշաձև փորվածք. մեկն ավարտվում է փոքր կաթիլաձև ոչ խորը փոսիկով:



Պատկերը կարելի է դիտարկել և՛ որպես աչք, և՛ ձուկ: Նշաձև այս փորվածքից վերև՝ բութ անկյան տակ, քիչ անկանոն հոնքանման փորվածք է: Երկրորդ կեսի վրա նույնատիպ փորվածքն ամենավերին հատվածում է և, ի տարբերություն նախորդի, կողեզրի միջնամասում է: Մասերի իրարից մասամբ բաժանված լինելն ընդգծված է խորակոս զույգ փորվածքով, որոնցից մեկն աղեղնաձև է և նման է բերանի բացվածքի, մյուսն սկսվում է առաջինի ձախ եզրից 1, 5սմ հեռավորության վրա և ավարտվում է հակառակ կողմի միջնամասում: Աղեղնաձև բացվածքի տակ 3սմ երկարությամբ ուղիղ, խորակոս գիծ է: Թերված մանրամասների ընդհանրացմամբ քանդակը կենդանու գլուխ է՝ ընդգծված մեծ բերանով և տարբեր հարթությունների վրա պատկերված երկու «աչքերով»: Փորվածքներն արված են տարբեր խորությամբ: Երկու շեղանկյունիների բաժանարար գծերն ունեն 3-4մմ խորություն, աչքերից մեկն ունի մոտ 4սմ երկարություն (ձախ կողմում արված կաթիլաձև փորվածքի հետ՝ 5,5սմ), 1,8սմ խորություն: Մյուսի երկարությունը 5,5սմ է: Վերջինս երկարավուն է, փորվածքը թեքությամբ է կատարված (խորությունը՝ 1,5սմ): Հոնքանման փորվածքների երկարությունը՝ 6-7սմ, *բերանի* կտրվածքինը՝ 3սմ: (տախտ.1)

Երկրորդ կոթողը գտնվեց 2003թ. Ամասիայի Դարիկ գյուղի վարչական տարածքում: Ծովի մակարդակից ավելի քան 2000 մ բարձրության վրա՝ աղբյուրներով հարուստ ալպյան մարգագետնի կենտրոնում, բարձրացել է 3,7մ երկարությամբ, 80սմ լայնությամբ և 30սմ հաստությամբ մոխրագույն բազալտից, երկու ծայրերը կլորավուն, տափակ մի սալաքար (նկ.1): Կոթողի կլորացված անկյուններով երկու եզրերը ենթադրում են, որ այն նախապես պառկած դիրք է ունեցել, քանի որ ուղղահայաց կանգնեցնելու դեպքում

նման մշակման անհրաժեշտություն չկար: Կոթողն ուղղահայաց դիրքով կանգնեցվել է հավանաբար ավելի ուշ, հնարավոր է՝ իր չափերով մերձակա ողջ տարածքի հարթության վրա նույնիսկ բավական հեռվից տեսանելի լինելու համար: Այն ուխտատեղի էր, ուր հայերից բացի անպտղությունից բուժվելու նպատակով գալիս էին նաև ազերի կանայք: Կոթողը կանգուն է եղել մինչև 1988 թ. վերջերը:

2006թ. Շիրակի հյուսիս-արևմուտքում իրականացված հնագիտական հետախուզության ժամանակ Եղնաջուր գյուղի վարչական տարածքում՝ նույնանուն գետակի ափամերձ փոքր հարթության վրա, հայտնաբերվեց ևս մի կոթող: Ճեղքված բազալտից, տափակ կողերով, քիչ սրացված ծայրով, դեպի գետի հոսանքը կանգուն դիրքով կոթողը գտնվեց նույնանուն գետի ձախ ափին (նկ.2): Բարձրությունը նույնն է՝ 3,7մ, հաստությունը՝ 15-20սմ, լայնությունը՝ 25-30սմ: Այսպիսով, ունենք ջրային տարերքի հետ ունեցած որոշակի կապով միավորվող երեք գտածո, և նրանց՝ պաշտամունքային կոթողներ լինելը կասկած չի հարուցում:

Հայկական լեռնաշխարհի տարբեր տարածքներում, հիմնականում լեռնային գոտիներից (աղբյուրների ակունքներ, ջրերի մերձակայք, արոտավայրերով հարուստ տեղանք), հայտնի են *վիշապներ* անվամբ պաշտամունքային կոթողներ: Թեև աշխարհագրությունը բավականին մեծ է (Գեղամա լեռներ, Արագածի փեշեր, Սևանա լճի մերձակայք, Ջավախք), սակայն գտածոները շատ չեն: *Վիշապ*-կոթողները բաժանում են երկու տիպի.պարզունակ, կոպիտ մշակված մակերեսով ձուկ, որ կարող է վերաբերել նեոլիթյան մշակույթին և ձուկ-վիշապ, որ արվեստի լավագույն նմուշների շարքին կարելի է դասել (ձկան գլխին գցած զոհաբերված ցլի պատկերով),և ամենայն հավանականությամբ վաղ բրոնզի դարաշրջանի վերաբերող մշակույթ է ներկայացնում:

Մինչ այժմ հայտնի բոլոր վիշապները նախ ձկնակերպ են, որոնցից շատերն ունեն նաև դիցաբանական հարուստ պատկերներով քանդակա-

զարդ մակերես: Բ.Պիոտրովսկին,[1] Ն. Մառը և Յա. Սմիռնովը[2] այս արձանները վերագրում են *վիշապ-դեմոնի* պաշտամունքին: Ավելի ուշ, Հ. Մարտիրոսյանը ևս կարծիք է հայտնում, որ, ըստ ժողովրդական ավանդության, վիշապները կապվում են աղբյուրների ակունքների հետ, սակայն ոչ իբրև չար էակներ, այսինքն՝ վիշապ-հրեշներ, ինչպես այդ փոխակերպվել է հետագայում, այլ բարի էակներ՝ պտղաբերության հետ կապվող:[3] Մ. Աբեղյանը ոչ միայն չի ընդունում փոխակերպման մասին տեսակետները, այլև գրավոր աղբյուրներում պահպանված վկայություններով և տարբեր հավատալիքների ու ծեսերի վկայակոչումով հավաստում է, որ «վիշապներ կոչված արձանները կապված են եղել ջրի և ոռոգման սիստեմի հետ և վերաբերում են ջրի մի աստվածության պաշտամունքի»: [4]

Մեր գտածոների միակ առնչությունը հայտնի վիշապներին առաջին հայացքից այն է, որ նույնպես գտնվել են ջրերի մոտ: Արդյոք այս կոթողները իմաստային որոշակի կապ ունե՞ն հայտնի վիշապների հետ:

Վիշապների հետ կապված նախնական պատկերացումներն արտացոլված են ինչպես ժայռապատկերներում, այնպես էլ դիցաբանության ու ազգագրության մեջ: Գրավոր աղբյուրներից կարևոր են ինչպես Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ում բերված հայկական դիցաբանության հնագույն պատառիկները, այնպես էլ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում հնագույն հավատալիքների ժխտումը: Պատառիկներ կան նաև ինչպես սրբերի վարքի վկայաբանություններում, այնպես էլ ժողովրդական զրույցներում ու հավատալիքներում, որոնց հենքն ակնհայտորեն հեթանոսական է:

Քնության տարբեր երևույթների արտաքին որոշ հատկանիշների նմանությունը շատ հաճախ հանգեցրել է նաև նրանց էության նույնացման: Պտտահողմը, որի ձագարաձև պտույտը կարող է համադրվել օձի գալարումներին և հսկայական չափի պատճառով նույնացվել մեծ օձի՝ վիշապի հետ: Ժողովրդական զրույցների մեջ «վիշապը լեռներեն երկինք կքաշվի» կամ հրեշտակները լեռներեն վեր կքաշեն վիշապները, նրանց միջից առնելով, մի տեսակ քաղհանելով այնպիսիները, որոնք հազար տարեկան են, սարսափելի մեծացած ու վտանգավոր են և կարող են «երկիրը կուլ տալ»[5] բնորոշումները կարծես ծնված են պտտահողմի և օձ-վիշապի պատկերային համադրումից: Երկնային երևույթի և երկրային կենդանու հատկանիշների համադրումն ստեղծում է առասպելական *վիշապին*՝ ամպրոպային մի էակի, որ բարձրանում է երկինք, ապրում բարձր լեռներում և իբրև ամպրոպային կամ ամպեղեն՝ հաճախ նաև կերպարա-

---

[1] *Б. Пиотровский, Вышапы. Каменные статуи в горах Армении, Л., 1930.*
[2] *Н. Марр и Я. Смирнов, նշվ. աշխ.:*
[3] *Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 111:*
[4] *Մ. Աբեղյան, Երկեր Է, Եր., 1975, էջ 165:*
[5] *Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 111:*

նափոխվում է: Այսպես ծնվում է առասպելը, և ձևավորվում՝ հավատալիքը՝ բնության երևույթների ու հասարակական հարաբերությունների մասին նախնական ժողովուրդներին հատուկ մտածողությամբ և ընկալմամբ:

Առասպելաբանության առավել հին շերտերը հավատալիքներում և ծիսակարգերում են, որոնցից շատերն այսօր արդեն կա՛մ չեն կատարվում, կա՛մ եթե կատարվում են, պահպանելով միայն ձևը, կորցրել են նախնական իմաստը: Որոշ ծեսեր էլ թեև պահպանվել են քրիստոնեության ընդունումից հետո՝ գաղափարական նոր բովանդակությամբ օծված, սակայն ակնհայտ է նրանց հեթանոսական հենքը:

Հայ ժողովրդի հավատալիքներում մինչև 20-րդ դարի սկիզբը պահպանվել են անձրև առաջացնելու մոգական գործողություններ: Ըստ մի հավատալիքի՝ կանայք հողը վարելով կամ ձևացնելով, թե վարում են, ընդունակ են անձրև առաջացնել:[1] Անձրևաբեր մեկ այլ մոգական գործողության ժամանակ ջուրն էին նետում իրիցկնոջը:[2] Այդ նպատակով մի տարեց կին կամ իրիցկինը փարաջա էր հագնում, իսկ տղամարդու շորեր հագած ուրիշ կանայք նրա ղեկավարությամբ ջրի մեջ գութանը քաշում էին հակառակ ուղղությամբ:[3] Փորձելով խանգարել հոսող ջրի ընթացքը, կարծես կանխում էին ջրի հեռանալը: Ծեսը կարող էր ծնվել կրկնվող երաշտների ժամանակ: Ակներև է, որ իրիցկնոջը փարաջա և մյուս կանանց տղամարդու հագուստ հագցնելը պատահական չէ: Կատարվել է պտղաբերության ծիսական գործողությունը, որը հավանաբար կատարել են տղամարդիկ: Հնարավոր է՝ վերջիններիս բացակայության դեպքում, որ կարող էր լինել պատերազմի պատճառով, ծեսն իրականացրել են իրենց տղամարդու կերպ տված կանայք: Անսպասելիորեն տեղացած անձրևը կարող էր ընկալվել որպես իրականացրած արարողության արդյունք և նպաստել ծեսի վերաձևավորմանը, այսինքն՝ հետագայում ծեսը շարունակվեր իրականացվել տղամարդու շորեր հագած կանանց կողմից: Հասարակության զարգացման նախնական փուլում ամեն մի երևույթ ենթակա է և՛ առասպելացման, և՛ ծիսականացման: Իսկ հավատալիքի մեջ կանանցից մեկին իրիցկնոջով փոխարինելը (առավել ևս փարաջա հագցնելը) թերևս կատարվել է միջնադարում, և հավատալիքը քրիստոնեական երանգավորում է ստացել՝ հեթանոսական շերտը քրիստոնեացնելու նպատակով: Բերված երկու օրինակներն անձրև առաջացնելու համար կատարվող մոգական գործողություններ են. մի դեպքում վարում են հողը, մյուս դեպքում՝ ջուրը: Երկու դեպքում էլ կատարվել է պտղաբերման ծես, որը ծնվել է, երբ երկրագործության մեջ արդեն կիրառվում էր խոփը:

Կար նաև ջրի պաշտամունքի հետ կապվող և «Ցասման խաչ» կոչվող մեկ այլ հավատալիք: Այս խաչերը դրվում էին քաղաքից կամ գյու-

---

[1] *Զ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 87:*
[2] *Նույնը:*
[3] *Զ. Ֆրեզեր, նշվ. աշխ., էջ 89:*

ղից դուրս՝ չորս տարբեր հատվածներում, հիմնականում բլուրների վրա: Ըստ ժողովրդական զրույցի՝ կոչվում էին *ցասման խաչեր*, որովհետև կապվում էին Աստծո ցասման հետ: Քրիստոսի խաչը երկինք պարզելով՝ ակնկալվում էր, որ «պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչեն, և աստված հաշտվի»:[1] *Ցասման խաչերը* կանգնեցնելիս, ինչպես սովորաբար երաշտի ժամանակ է լինում, գլխաբաց և ոտաբոբիկ թափորը ման էր ածում որևէ սրբի մասունք, մատաղ էին անում ու հացկերույթ կազմակերպում, որը կոչվում էր *ցասման հաց:* Անձրևի առաջացման հեթանոսական ծեսի վերաձևման օրինակ է՝ կատարման (ոտաբոբիկ և գլխաբաց թափոր) և դրան ուղեկցող զոհաբերության (հացկերույթ) հնագույն շերտով: «Ցասման խաչն» այստեղ ակնհայտորեն փոխարինել է վիշապին՝ պահպանելով ցասկոտ բնույթը: Խաչի նմանաբնույթ մեկ այլ օրինակ (կվկայաբերենք ավելի ուշ) պահպանվել է Ագաթանգեղոսի պատմության մեջ:

Բերենք ևս երկու օրինակ: Ըստ մի հավատալիքի՝ հայերը երաշտի ժամանակ որևէ սրբավայրից լռելյայն բերում էին մի քար և հանդի շուրջը ման ածում՝ հավատալով, թե անձրև կգա: Մեկ ուրիշ միջոց էր նաև քարի վրա որևէ կախարդական բան գրելն ու առվի մեջ գցելը, որ Աբեղյանը արդարացիորեն դիտում է ջրի աստվածությանն արձան կանգնեցնելու մի մնացորդ:[2] Երկու դեպքում էլ գործ ունենք *վիշապների* պաշտամունքի հետնագույն օրինակների հետ, երբ արդեն ձկնատիպ նոր քանդակներ չէին կերտվում, իսկ պաշտամունքը դեռևս պահպանվում էր: *Վիշապի* հատկանիշների կրողը դառնում է քարը՝ սովորական կամ կախարդական գրվածքով, և շարունակում է պահպանել անձրև պարգևելու դերը:

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում վիշապների մասին զրույցների պատառիկները տանում են դեպի հավատալիքի ձևավորման ակունքները: Ըստ Կողբացու՝ հին հայերի պատկերացմամբ վիշապներն իրենցից մեծ օձեր կամ ձկներ էին ներկայացնում, մի տեսակ երկկենցաղ առասպելական արարածներ, երևակայական էակներ, որ դաշտերի կամ զանազան այլ տեղերի պահապաններ կամ վերակացուներ էին:[3] Այսինքն՝ վիշապները պաշտամունքի ձևավորման նախնական փուլում ունեցել են դաշտերը պահպանելու դեր: Իսկ ինչպե՞ս կարող էր ծնվել նման պաշտամունքը: Երկնքի բարեհաճությունից էր կախված մարդու կենսապահովումը: Դեպի երկինք պարզված վիշապ-կոթողը նախնադարյան մարդու պատկերացմամբ կարող էր լինել կապ երկրի և երկնքի միջև և վար բերել երկինք բարձրացած ջուրը: Եվ ջրերի ակունքների մոտ կանգնեցված *վիշապներն* առաջին հերթին ունեին անձրևաբերի դեր: Ասվածը

---

[1] *Մ. Աբեղյան, Երկեր Է, Եր., 1975, էջ 168:*

[2] *Նույնը:*

[3] *Ա.Աբրահամյանը «Եզնիկ Կողբացու» ծանոթագրությունների թիվ 220 տողատակում բերում է «նհանգ» բառի մեկնաբանությունն ըստ Պ.Տեր-Պողոսյանի («Հանդէս ամսօրեայ», 1929, էջ 552)՝«պահապան աշխարհի, աշխարհապահ»:*

հաստատում են նաև տարբեր ժողովուրդների մոտ պահպանված սովորույթներն ու հավատալիքները:

Մոգական գործողությունից էլ ծնվել է Վարդավառը: Ամառվա տապին իրար վրա ջուր ցողելը հավանաբար ծնվել է նախնական այն պարզ պատկերացումից, որ ջրով ցողված մարդկանց նմանությամբ երկնքից անձրև կտեղա, և կթրջվի նաև բնությունը: Այսինքն՝ Վարդավառը ծիսահմայական գործողություն էր, որ միտված էր նմանակման մոգությամբ անձրև առաջացնելուն: Եվ պատահական չէ, որ, թեև քրիստոնեակերպ՝ Վարդավառը տոնվում է ամառվա տապին, երբ արևից այրված բնությունը կարոտ է կենարար, իսկ մարդը՝ զովություն տվող անձրևի: Վարդավառը հայոց նավասարդն է, նոր տարին, իսկ այս տոնակատարության ամենամեծ խորհուրդը բարիքների առատությունն է, որը հատկապես լեռնային երկրում պայմանավորված է ջրի առատությամբ:

Անձրև առաջացնելու հնագույն ծեսերից մեկը հայտնի է խեթական աղբյուրներից: Ծիսակարգն իրականացնողները դիմում են Ամպրոպի աստծուն՝ գլխավոր աստվածությանը անձրև ուղարկելու խնդրանքով, և նկարագրվում է զոհաբերության որոշակի ծիսակարգ՝ նպատակամղված անձրև առաջացնելուն:[1] Այս հնագույն ծեսը համապատասխանում է հոմերոսյան այն ձևակերպմանը, թե *Զևսն անձրև ուղարկեց:* Հնդեվրոպական պատկերացումներում այն տնօրինում է գլխավոր՝ որոտի և կայծակի աստվածությունը, ումից էլ մարդիկ անձրև են խնդրում:[2] Հավանաբար այդ հավատալիքները ծագել են կրկնվող երաշտների ժամանակ, երբ հազվադեպ անձրևները համարվում էին երկնքի պարգև: Այնուհետև հավատալիքների հիմքի վրա ձևավորվել են ծեսերը: Նախնական հավատալիքների կրող կոթողները, հետագայում նոր կերպ ստացան՝ մշակման ձևով և պատկերազարդմամբ հեռանալով դեպի երկինք պարզված նախնական պարզունակ քարերից:

Հայտնի են նաև զրույց-հեքիաթների բազմաթիվ տարբերակներ՝ հետևյալ բովանդակությամբ. վիշապը փակում է աղբյուրի ակը կամ ջրի հունը և պահանջում ամենագեղեցիկ աղջկան, այլ տարբերակներում՝ արքայադստերը: Սոսկումը պատում է բոլորին: Հայտնվում է հերոսը, սպանում է վիշապին և ազատելով գեղեցկուհուն՝ բացում է ջրի հունը: Եթե երկրի վրա օձ-վիշապը ջրի ակունքը բացելու համար պատրաստ է կուլ տալու գեղեցկուհուն, երկնքում վիշապը փակում է ջրերի ճանապարհը, ծածկում արևն ու պատրաստ է կուլ տալ այն: Իսկ հայոց առասպելների մեջ արևն անձնավորվում է իբրև գեղեցիկ աղջիկ, իբրև ամենազոր ամպրոպային աստծո քույր, հարսնացու կամ կին: Ամպրոպային աստվածը դառնում է

---

[1] *Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, стр. 680.*

[2] *Նույնը:*

վիշապի ոխերիմ թշնամին և երկնքում հրեղեն զենքով վիշապին հալածելով՝ ազատում է արեգակ-կնոջը կամ քրոջը՝ լուսավորելով երկիրը:

Կյանքի գոյությանն սպառնացող, աշխարհակործան օձ-վիշապի պատկերային ամենահին վկայությունները ժայռանկարներում են, ուր այն խորհրդանշում է չար տարերքը: Այդ պատկերներում օձ-վիշապը հակադրվում է լույսին ու բարուն, հարձակվում է թռչնի կամ արևի սկավառակի վրա, նաև կուլ տալիս արևը: Այս վիշապներն այլ բովանդակության կրողներ են՝ նախասկզբնական վիճակին վերադառնալու,կյանքի ոչնչացման, աղետի ու ջրհեղեղի խորհրդանիշ: Վիշապների մասին ժողովրդական զրույցներին առասպելների ձևով նույնանում են նաև Խորենացու մոտ Վահագնի և Տիգրանի ու Աժդահակի վիպերգերը, էպոսում մեկ այլ վիշապակռիվ է՝ Սանասարի կռիվը ծովային վիշապի դեմ:[1] Ամեն ինչ, որ պատմվում է վիշապի մասին, ներկայացնում է նրան իբրև ամպրոպի կամ փոթորկի (պտտահողմի) և ամպրոպային ամպի անձնավորում:[2]

Հին հավատքի կամ պաշտամունքի *մահը*, նոր պանթեոնի ձևավորումը միշտ հանգեցնում են նաև հնի մերժման, որով հնի շատ հատկանիշներ անցնում են նորին՝ վերջինիս գաղափարախոսությանը համապատասխան հանդերձանքով: Եվ նման դեպքերում *հին աստվածները* դառնում են *չաստվածներ*, ինչպես դա եղավ քրիստոնեության մուտքից հետո, երբ մերժվեցին հեթանոսական բոլոր աստվածները՝ նոր հավատքի ընտրյալ սրբերին փոխանցելով վիշապամարտիկ հերոսի հատկանիշները: Ասվածի լավագույն ապացույցը Ագաթանգեղոսի պատմության մեջ Լուսավորչի կերպարն է՝ վիշապամարտիկի ակնհայտ հատկանիշներով. Լուսավորչի խաչը վիշապի կործանարար ուժ ունի, որ հին հավատքի տաճարները կործանելու և քրիստոնեությունը հաստատելու համար է:

Քրիստոնյա սրբերի ակնհայտ առնչությունը ջրի և վիշապասպանության հետ արտացոլված է նաև ս. Աթանագինեսի վկայաբանության մեջ: Գոթաց աշխարհ՝ հայրենակիցներին ազատելու գնացող Աթանագինեսը տեսնում է մի ծովակի մեջ «բնակեալ էր մեծագոյն վիշապ մի ահաւոր, եւ ապականէր զմերձակայ բնակիչսն, յափշտակէր զանասուն նոցա եւ՛ զմանկտիք: Եւ սուրբն Աթանագինէս հայեցեալ յերկինս, եւ մեծագոյն հառաչեալ առ Տէր, եհար երիցս ի վերայ գլխոյ վիշապին գաւազանաւն զոր ունէր ի ձեռին իւրում ... եւ առ ժամայն հերձեալ գազանն ապականեցաւ»:[3] Աթանագինեսի նահատակությունից հետո նրա հիշատակի օրը նշվում է սակավաջուր հուլիսի շոգ ու տոթ օրերին: Նրա հիշատակը հարգողները ջրհոր են փորում, որտեղից անպայման ջուր է բխում[4] կամ

---

[1] *Մ. Աբեղյան, Երկեր, Ա, Եր.,1966, էջ 137:*
[2] *Նույն տեղում, Է, էջ 117:*
[3] *Վարք և վկայաբանութիւնք, 1874, 47-48: Ս. Հարությունյան, Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր.,2001, էջ 25:*
[4] *Վարք և վկայաբանութիւնք, 1874, 65-66: Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 25-26:*

այդ օրը նաև անձրև է տեղում: Սա ևս առասպելական մի պատում է ջրի հետ ամպրոպային հատկանիշ կրող վիշապամարտիկ սրբի ունեցած սերտ աղերսի մասին: Եվ քրիստոնեական սրբի անվան տակ ծպտված ամպրոպի աստծուն նվիրված պատումի խորքից մերթընդմերթ առկայծում են հին հավատքն ու Վահագնի առասպելը:

Վիշապների մասին եղած նյութի քննությունը ցույց է տալիս, որ դրանք անցել են զարգացման երկու փուլ: Առաջին փուլում դեպի երկինք վեր պարզած սովորական քարեր են, երկրորդ փուլում ձկնակերպ են և պատկերագիր: Պատկերների (ցուլ, թռչուն, ջուր) առկայությունը հավատալիքի առասպելի աստիճանի բարձրանալու և նաև կատարված զոհաբերությունների արձանագրումն է: Հետագա դարերում անձրևաբեր ծեսերում սովորական, անզարդ կամ «կախարդական գրերով» պատված քարերի օգտագործումը պաշտամունքի վերապրուկներ են:

Հավատալիքների և ծեսերի նմանօրինակ շղթայում Շիրակի երկու կոթողներից երկուսը՝ որպես վիշապներ՝ անձրևաբեր, դաշտերի պաշտպան և պահապան, վեր են խոյացել դեպի երկինք, հավատալիքի ձևավորման նախնական փուլում երկնքի և երկրի միջև որպես յուրատեսակ միջնորդ: Մարմաշենի կուռքն արդեն հավատալիքի հաջորդ փուլին է վերաբերում: Խորհրդանշանային պատկերների համակարգի մեջ առասպելը ներկայացված է բնորոշ հատկանիշներն ընդգծող խորապատկերներով: Իրը խիստ ոճավորված է, և յուրաքանչյուր գիծ, ակոս կամ փորվածք արված է գաղափարական փոխկապակցվածության մեջ: Կոթողի վրա կենդանու խիստ ոճավորված պատկերում առավել հստակ են միայն բերանի բացվածքը և աչքերը: Կոթողը, որ երկրաչափական երկու տարբեր մարմինների համադրում է, ընդգծված բաժանարար ոչ ավարտուն կտրվածքով, կարելի է դիտել և՛ կտեխ, և՛ կենդանու գլուխ, որի բերանն ու աչքերը տարբեր հարթություններում են: Խորը փորվածքով նշաձև աչքերը և բերանի ձևը թույլ են տալիս ենթադրել, որ պատկերվել է ցուլ կամ երինջ: Այսինքն՝ փոքր ծավալի մեջ խտացված է նույն *վիշապը*՝ գլխին զցած զոհաբերված ցլի պատկերով՝ այլ հարթության վրա: Փոքր ծավալի այս քանդակը յուրատեսակ զոհաբերություն է Ծովինար-Աստղիկին:

Դարիկի և Եղնաջուրի կոթողների մոտ որևէ այլ նյութ չի հայտնաբերվել: Մարմաշենի կուռքը գտնվել է խախտված նախնական միջավայրում, և դժվար էր ակնկալել որևէ այլ նյութի առկայություն: Առաջին երկու դեպքում, կարծում ենք, դա բացատրվում է նրանով, որ դեպի երկինք սլացող և անձրև հայցող, պտղաբերությանն ու դաշտերի պահպանությանն ու պաշտպանությանը նվիրված այս կոթողների մոտ կատարվող արարողությունը, հնարավոր է, ուղեկցվել է միայն ջուր ցողելով, ինչպես այն պահպանվել է Վարդավառի ծեսում: Այս կոթողները հավատալիքի նախնական կրողներ են, այնքան պարզունակ են, ինչքան կարող է լինել նոր ձևավորվող հավատալիքը և ըստ այդմ էլ կարող են վերաբերել նեոլիթին:

հետագայում պարզագույն կոթողները վերածել են դիցաբանական հարուստ բովանդակությամբ *վիշապների*, որոնց վերջնական ձևավորումը կարող էր լինել վաղ բրոնզի դարաշրջանում: Այս ժամանակաշրջանին է վերաբերում Մարմաշենի կոթողը:

Այսպիսով, Շիրակից հայտնաբերված նորահայտ երեք կոթողները *վիշապներ* են, որոնք ծիսական նույն բովանդակության կրողներն են, ինչ Հայաստանի տարբեր շրջաններից մինչ այժմ հայտնի գտածոները և կապվում են ջրի պաշտամունքի հետ: Կոթողներից երկուսը վերաբերում են նեոլիթին, իսկ երրորդը՝ վաղ բրոնզի դարաշրջանին:

Ինգա ԱՎԱԳՅԱՆ (ԿԱԹ)

ՀԱԿՈԲ ԿԱՐԱՆՅԱՆԻ ՄԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

XX դարասկզբին Ալեքսանդրապոլ քաղաքի տարածքում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել էին ուշագրավ նյութեր, որոնք 1929թ. Հակոբ Կարանյանը նվիրել էր Հայաստանի պատմության պետական թանգարանին: Այն գրանցվել է որպես պատահական գտածոների հավաքածու Լենինականից՝ բաղկացած 42 իրերից (գույքային համար՝ 22): Հավաքածուի՝ մեր կողմից ուսումնասիրված նյութերը տասնութ ամբողջական կավանոթներ, մեկ խեցեբեկոր, տասնչորս մետաղյա իրեր (չորսը բրոնզե, մեկը երկաթե իրերի բեկորներ են, մնացածը՝ բրոնզե ամբողջական իրեր), երկու քարե, օբսիդիանե գործիքներ և մեկ գանգոսկր են:[1] Ստորև ներկայացնում ենք հավաքածուի իրերը և Ալեքսանդրապոլից գտնված ու Հայոց ազգագրական ընկերությունից Հայաստանի պատմության պետական թանգարան բերված, անհատական հավաքածուի իրերի մեջ մտնող ևս երկու պատահական գտածոներ՝ բրոնզե գոտու բեկորներ և բրոնզե սուր:

1. *Խեցեղեն*: Թիվ 12-ը երկարավիզ, ետ ծալվող շուրթերով, բերանը վերականգնված, ուռուցիկ իրանով ամբողջական կավե կճուճ է (չափսերը՝ 28,5x25սմ): Իրանից քիչ վերև արված են բոլորաձև մի շարք գծեր: Երկու այդպիսի գիծ անցնում է անոթի վզից ներքև: Իրանի և վզի գծերի միջև արված է ոչ պարզորոշ ցանցկեն գոտի:

Ուշադրություն է գրավում կավե կարմիր փայլեցված անոթը (թիվ 13), որի կանթը՝ լրիվ, իսկ շուրթը մասամբ կոտրված է (չափսերը՝ 25,5x20 սմ): Սափորի իրանը ուռուցիկ է, մակերեսը՝ անզարդ, կավի որակը՝ լավ հունցված, թրծումը՝ բարձրորակ: Բազմաթիվ նմանակները հայտնի են ու-

[1] *Գանգի ներքին ծնոտը բացակայում է:*

ռարտական հուշարձաններից՝ Թեյշեբաինիից,[1] Երևանի բիայնական դամբարանից:[2] Այս անոթի կանթն ավելի նման է Կարմիր բլուրից հայտնի մեկ այլ սափորի կանթին, որի ստորին մասը դրված է անոթի ուսին[3]: Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ այս անոթները բնորոշ են Վանի թագավորության մ.թ.ա. VIII դ. թվագրվող հուշարձաններին:[4]

Թիվ 14-ը սև, անզարդ, բերանը և կանթը կոտրված, վեր ձգվող պարանոցով սափոր է (չափսերը՝ 23x16սմ): Թիվ 15-ը ներկա վիճակում թերի սափոր է: Թիվ 16-ը բաց կանաչավուն, հաստ պատերով փոքր սնդկաման է (չափսերը՝ 11,5x10սմ): Սնդկամանի բերանը կոտրված է, հատակը՝ սուր, իրանի վրայով անցնում են ակոսներ, որոնց միջև ուռուցիկ զարդեր են: Նմանակները հայտնի են միջնադարյան Դվինից և Անիից[5]: Թիվ 17-ը ամբողջական, գնդաձև իրանով, անվիզ կճուճ է (չափսերը՝ 20,5 x26սմ): Իրանի վրայով անցնում են բոլորաձև, ուռուցիկ, միմյանց նկատմամբ զուգահեռ դուրս ձգվող տասը գծեր: Թիվ 18-ը երկկանթանի՝ կանթերից մեկը կոտրված, ոչ բարձր, նեղ պարանոցով սափոր է: Թիվ 19-ը ամբողջական, անվիզ, ետ լայնացող շուրթերով, ուռուցիկ իրանով, կիսաշրջանաձև, ուղղահայաց կանթով կճուճ է (չափսերը՝ 36,2x25սմ): Վզից ներքև՝ իրանի վրայով անցնում են թույլ ակոսավոր գծեր: Թիվ 20-ը բաց աղյուսագույն ամբողջական խնոցի է (չափսերը՝ 36,2x25սմ): Խնոցու իրանից վերև անցնում են բոլորաձև երեք թույլ գծեր, ունի մեկ կանթ՝ իրանից քիչ վերև հորիզոնական դիրքով, կանթի կողքին հատուկ անցք կա: Խնոցին հայտնի է նաև Արթիկի թիվ 631 դամբարանից՝ թվագրված վաղ երկաթե դարով, և նմանակում է Գոլովինոյից, Օշականից, Թեյշեբաինիից, Խտրանոցից հայտնի նմուշներին: Արթիկի խնոցու նմանակը հայտնի է երկաթի լայն տարածման դարաշրջանով թվագրվող Քեթիի թիվ 41 դամբարանից:[6] Արթիկի և Քեթիի խնոցիները ձևով՝ փքված, նեղ վզով և երկարավուն մարմնով տարբերվում են թիվ 20-ից: Թիվ 21-ը սև, ուռուցիկ, երկկանթանի, կավե ամբողջական կճուճ է (չափսերը՝ 25x25սմ): Կիսաշրջանաձև կանթերն ուղղահայաց տեղավորված են կճուճի իրանի վրա, պարանոցից քիչ ներքև անցնում են մի շարք մանր ակոսավոր գծեր: Թիվ 22-ը ետ լայնացող շուրթերով, երկկանթանի ամբողջական կճուճ է, կանթերը կիսաշրջանաձև են՝ ուղղահայաց դիրքով (չափսերը՝ 27,5x26սմ): Թիվ 23-ը նեղ, կոտրված վզով սափոր է (չափսերը՝ 37x6սմ), ունի եղջերվի ռելիեֆ պատկեր, շուրջը՝ երկու խորադիր գծեր: Թիվ 24-ը լայն բերանով, մեկկան-

---

[1] *Б. Пиотровский, Кармир-блур III, Результаты раскопок 1951-1953, Ер., 1955, табл. VI, VII, А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 267.*

[2] *С. Есаян, Л. Биягов, С. Амаякян, А. Канецян, Биайнская гробница в Ереване, Ер., 1991, стр.6.*

[3] *Նույնը, էջ 34: Б.Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 190, рис.51.*

[4] *А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 267.*

[5] *Р. Джаншоладян, Сфероконические сосуды из Двина и Ани, Ер., 1982, рис. 9, 10, 45, 49, 59, табл. II, рис.13, 15.*

[6] *Л. Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска(III-I тыс.до.н.э.), Ер.,1989, с.77, т. 70.*

քանի, սև կավից ամբողջական կճուճիկ է (չափսերը՝ 7,5x10 սմ): Կճուճիկի կանթը կոտրված է, իսկ իրանով անցնում է ակոսավոր գիծ: Թիվ 26-ը բարձր, բերանը փոքր-ինչ կոտրված, շուրթը ետ լայնացող գորշ սափոր է (չափսերը՝ 19,5x17սմ): Սափորը զարդարված է միմյանց մեջ անցկացված բեկբեկուն գծերով: Թիվ 28-ը փոքր, սև, կոպիտ, շուրթերը ուղիղ կտրված կավե սափոր է (չափսերը՝ 13x10սմ): Սափորի պարանոցից ներքև անցնում է բոլորաձև երեք թույլ գիծ: Թիվ 32-ը անվիզ, ուռուցիկ իրանով ամբողջական կճուճ է (չափսերը՝ 22x26 սմ): Անոթի վզից ներքև անցնում են մի շարք մանր գծեր, այդպիսի գիծ անցնում է իրանից քիչ վերև: Այս գծերի միջև զույգ-զույգ իրար տակ արված են չորսական պարուրաձև զարդանախշեր, որոնց արանքներում սեպաձև զարդեր կան: Թիվ 36-ը կարմրագույն սափորի ամբողջական կանթ է (չափսերը՝ 7x 2,5 x 1,5 սմ), որի կոտրված մասից երևում է, որ օգտագործվել է ավազախառն կավ: Թրծումը՝ անհամաչափ, կանթը կտրվածքում ուղղանկյունաձև է: Կանթի վրա ուղղահայաց ակոս է, վերին մասը զարդարված է լավ արտահայտված, փորված բերանով և աչքերով կենդանու գլխով: Թիվ 41-ը ներկայումս թերի, սև կավից պատրաստված, արտաքինից կարմրագույն, անզարդ գավաթ է: Թիվ 42-ը ուռուցիկ իրանով, շուրթերը դեպի ետ լայնացող, անհավասար թրծված, մեկկանթանի սև կճուճ է (չափսերը՝ 20,5x 22): Կանթը կոտրված է, մասամբ կոտրված է նաև շուրթը: Իրանի վրայով անցնում են ուղղահայաց, բոլորաձև, միմյանց զուգահեռ ակոսավոր գծեր:

Հայտնաբերված պատահական գտածոների կավե անոթներից մի քանիսը զարդարված են ուշ բրոնզի առաջին փուլում (մ.թ.ա. XIV-XIIIդդ.) լայն տարածում գտած հոյակապ զարդանախշերի մոտիվներով: Զարդամոտիվների և անոթների ձևերի գենետիկ կապը նշմարվում է Արթիկի դամբարանադաշտից հայտնի նմանակներում: Խնոցին, երկկանթ անոթները, ակոսավոր զարդանախշով կավե նմուշները, ալիքաձև փայլեցված գծերով, ակոսներով անոթները, եռանկյունիների, կոնցենտրիկ շրջանների համադրությամբ նմանակվում են Արթիկի երկրորդ և երրորդ դամբարանախմբերի և Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի մյուս դամբարանադաշտերից հայտնի նմուշներին:[1]

2. *Մետաղյա և քարե իրեր.* Կան ձեռքով պատրաստված սովորական երեք բրոնզե կոթառավոր նետասլաքներ (թիվ 1)՝ բեկորային վիճակով: Նետասլաքներից առաջինն ունի միջանկյալ ող և նմանակվում է Շիրակի Ոսկեհասկի երկաթի լայն տարածման դարաշրջանով թվագրվող (մ.թ.ա. IX-VIII դդ.) թիվ 7 կատակոմբային դամբարանից հայտնի երկու նետասլաքներից մեկին:[2] Երկրորդի թևիկները քայքայված են: Դատելով պահպանված մասից՝ այն ունեցել է թույլ արտահայտված միջանկյալ

[1] *Т. Хачатрян, Древняя культура Ширака III-I тыс. до н.э., стр.19.*
[2] *Л. Петросян, նշվ. աշխ., էջ 70, 76-77, աղյուս 69, նկ.11.*

գիծ: Նմանակը՝ Արթիկի դամբարանադաշտի թիվ 74 դամբարանից է:[1] Երրորդը հարթ է, ոչ այնքան երկար պոչով, այն իր ձևով որոշ չափով նմանակվում է Կարմիր բլուրից հայտնի, անդրկովկասյան տիպին մոտ նետասլաքներին:[2] Թիվ 2-ը և 3-ը ձեռքով պատրաստված, լավ պահպանված քարե քերիչներ են: Օբսիդիանե քերիչներից թիվ 3-ը մշակված է և մի ծայրի վրա ունի ատամներ: Թիվ 4-ը լավ պահպանված բրոնզե սլաքի ծայր է՝ երկարությունը 8 սմ: Թիվ 5-ը բրոնզե կախիկ է՝ օձագալար միջուկով քունքազարդ (չափսերը՝ 7,5սմ), կլորաձև է, պատրաստված բարակ, հարթ, հատույթում կլոր ձողից, ներքին ծայրը օձաձև պրկված է, ծայրերն իրարից հեռու են: Այսպիսի կախիկ քունքազարդեր՝ հերակալներ, հայտնի են Հայաստանի և Շիրակի ուշ բրոնզի և վաղերկաթիդարյան մի շարք հուշարձաններից՝ Սև ամրոցի թիվ 6 դամբարանից,[3] Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզի երկրորդ փուլով թվագրվող համալիրներից,[4] նաև Ցամաքաբերդի մ.թ.ա. X-VIII դդ. թվագրվող թիվ 5 դամբարանից, Թազաքենդից, Դիլիջանից:[5] Թիվ 6-ը բրոնզե երկու գավազանի գլուխներ են, որոնցից մեծը կոտրված, իսկ փոքրը լավ պահպանված վիճակում է: Գավազանի գլուխներն ունեն կլոր փոքրիկ գագաթներ՝ ներքևից վերև կլոր անցքերի ուղղահայաց դասավորված շարքերով(մեծի տրամագիծը 5,5սմ, փոքրինը՝ 4սմ): Մեծ գավազանագլխիկը հիմնամասում ունի ռելիեֆ գոտի: Առաջինի ձևին մոտ է Ղաչաղանից հայտնի, երկու ռելիեֆ գոտիներով զարդարված նիզակի բրոնզե ծայրապանակը, որը գավազանագլխիկից տարբերվում է արտաքին հարդարանքով: Գավազանագլխիկներից երկրորդին ձևով մոտավոր նմանություն ունեն Օշականի ուշ բրոնզի և երկաթի դարով թվագրվող դամբարանադաշտի թիվ 102 դամբարանից հայտնի դաշույնի բրոնզե գլխիկը,[6] որը նույնպես կոնաձև է, բայց տարբերվում է հիմնամասով և զարդարված է ոչ թե կլոր անցքերի շարքերով, այլ երկրաչափական տարբեր պատկերներ ունեցող կտրվածքներով: Գավազանագլխիկներն ուշագրավ են ձուլման տեխնիկայի տեսակետից:Թիվ 8-ը և 9-ը լավ պահպանված երկու բրոնզե ապարանջաններ են: Թիվ 8 ապարանջանի ծայրերը իրարից հեռու են, այն կլոր է, հարթ, ներսի կեսը՝ տափակ, դրսինը՝ ուռուցիկ (տրամագիծը՝ 9սմ): Նմանակները Օշականի ուշ բրոնզի և երկաթի դարով թվագրվող դամբարանադաշտի թիվ 80 դամբարանից,

---

[1] *Т. Хачатрян, Артикский некрополь, Каталог, с. 140.*

[2] *Б. Пиотровский, Кармир-блур II, Результаты раскопок 1949-1950, стр. 40.*

[3] *Ի. Ավագյան, «Սև ամրոց» հուշարձանի դամբարանադաշտը, Հայաստանի հնագույն մշակույթը, 3, Տելեմակ Խաչատրյանի 70- ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Մուղնի, Եր., 2003, էջ 129,132:*

[4] *Т. Хачатрян, Древняя культура Ширака III-I тыс. до н.э., с. 185; Т. Хачатрян, Артикский некрополь, Каталог, сс.113, 130, 216, 252, 269, 284, 318, 352, 361, 378, 384, 385.*

[5] *Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 31, տախտակ XXIX, նկար 2,7, տախտակ XXX, նկար 5, տախտակ XXXII, նկար 5:*

[6] *С. Есаян, А.Калантарян, Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983 гг., стр. 94, табл. CVII, рис. 4.*

նմանատիպ ձևի, բայց հատույթում կլոր ապարանջաններ հայտնի են Արթիկի դամբարանադաշտից և թվագրվում են ուշ բրոնզի դարաշրջանով (մ.թ.ա. XIV-XII դդ.):[1] Թիվ 9 ապարանջանը հաստ, ատամնավոր, կլոր ձող է, ծայրերը՝ շատ մոտ (տրամագիծը՝ 7,5սմ): Նմանակները հայտնի են Արթիկի թիվ 223, 431 դամբարանից,[2] Առաջաձորից[3] և այլն: Թիվ 10-ը լավ պահպանված բրոնզե կացին է (չափսերը՝ 18x6սմ): Այն թիակաձև է, կոթատեղիով, բերանը՝ կոթին զուգահեռ, կոթատեղը ավելի կարճ է:Թիվ 37-ը մաշված բրոնզե եռոտանի է (չափսերը՝ 8x4սմ): Եռոտանու ոտքերը գնդաձև են, մեջը՝ անցքեր, ոտքերի վերևում 3 կողմից դարձյալ անցքեր են: Թիվ 38-ը քիչ ժանգոտ երկաթե կնիք է (երկարությունը՝ 8,5սմ):Կնիքի մի գլուխը քնարաձև է, մյուսը՝ ծեծված: Թիվ 40-ը կոտրված բրոնզե դաշույն է (չափսերը՝ 20x5սմ)՝ վրան երկու մեխ: Նմանակը հայտնի է Շիրակավանից:[4]

Ալեքսանդրապոլի տարածքում XIXդ.վերջ-XXդ. սկզբին պատահականորեն հայտնաբերված և Հայաստանի պատմության թանգարանում պահվող հավաքածուի կավե և մետաղյա իրերը տարժամանակյա իրեր են՝ հիմնականում մ.թ.ա. XI-IX դդ. թվագրվող:

Լենինականյան հավաքածուի մետաղյա իրերում առանձնահատուկ ուշադրության է արժանի լավ պահպանված ուրարտական բրոնզե գոտու ձախակողմյան բեկորը[5] (չափսերը՝ 14x12սմ): Գոտու կենտրոնական մասում պատկերված են վազող թևավոր անգղառյուծ՝ գրիֆոն՝ գիշատիչ թռչնի գլխով և թևավոր առյուծի մարմնով, ներգծված խաչով արևի սկավառակ և կենաց ծառ: Անգղառյուծի պատկերում առանձնահատուկ ընդգծված են թևերի փետուրները, առջևի և ետևի թաթերը, տնկած պոչը, վզի և իրանի վրա շտրիխներով ընդգծված են մանր աղվափետուրները: Դեմքի վրա ընդգծված են կլոր աչքը և խոշոր ու կեռ կտուցը: Գոտու երեք կողմերում հավասար հեռավորության վրա անցքեր են արված, հավանաբար կաշվի կամ կտորի վրա կարելու համար: Գոտու բեկորի վերին հատվածի եզրազարդը զարդարված է ոլորապտույտ զարդաքուղով, որի բազմաթիվ զուգահեռները տեսնում ենք Նուզիից պեղված խեցանոթների, նաև ուշբրոնզիդարյան դամբարանադաշտերից հայտնաբերված խեցեղենի և մետաղյա իրերի վրա: Ոլորապտույտ զարդաքուղի մոտիվը կարելի է տեսնել նաև Լոնդոնի թանգարանում պահվող Վանից պեղված ուրարտական վահանի բեկորի վրա և այլ ուրարտական հուշարձաններում: Գոտու բեկորի ներքին հատվածի եզրազարդը զարդարված է պտուղներով և արմավազարդերով: Ըստ Ս. Եսայանի՝ այս գոտու արմավազարդերը որոշ նմանություն ունեն Էրեբունիի Խալդ աստծո տաճարի և պալատի

---

[1] *Т. Хачатрян, Древняя культура Ширака III-I тыс. до н.э., стр.184, рис 91.*
[2] *Т. Хачатрян, Артикский некрополь, каталог, Ер., 1997, стр. 202, 300.*
[3] *Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ, էջ 31, տախտակ XXIX, նկար 20, տախտակ XXX, նկար 30:*
[4] *Նյութը հրատարակված չէ և պահվում է Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանում:*
[5] *Նույն տեղում, էջ 19-20:*

արմավազարդերի հետ:[1] Կանթի հիմնական մասում կան երեք դրոշմվածքներ, որոնք կատարված են նույն դրոշմիչով և փոքրիկ ուղղանկյունաձև դաշտի մեջ առնված կենաց ծառի ռելիեֆ պատկերներ են: Ինչպես կտեսնենք ստորև, կենաց ծառի նմանատիպ պատկերումներ հայտնի են ուրարտական զարդամոտիվներից: Լենինականի գոտու վերին և ստորին եզրազարդերի զարդանախշերը՝ ոլորապտույտ զարդաքուղը, սրածայր պտուղներով և արմավազարդերով դրասանգը ևս նմանակվում է Կելերմեսից և Լիտոե դամբանաբլուրից հայտնի ակինակների պատյանների զարդանախշերի հետ, իսկ ոլորապտույտ զարդաքուղը բնորոշ է նաև Կարմիր բլուրից հայտնի Արգիշտի I-ի, Սարդուրի II-ի և Թոպրախ Կալեից հայտնի Ռուսա III-ի վահաններին:[2]

Շիրակից հայտնի բրոնզե գոտիները պատկանում են Ս.Եսայանի կողմից ըստ զարդամոտիվների տարբերակվող ուրարտական գոտիների առաջին, երկրորդ և չորրորդ խմբերին:[3] Այս գոտու բեկորը դասվում է չորրորդ՝ ծիսական տեսարաններով գոտիների խմբին:

Պատմության թանգարանի մետաղյա իրերի զետեղարանում են պահվում Ալեքսանդրապոլից գտնված անհատական իրերի հավաքածուի մեջ մտնող ևս երկու պատահական գտածոներ՝ բրոնզե գոտու բեկորներ (49a) և բրոնզե սուր (49b)՝ բերված Հայոց ազգագրական ընկերությունից: Իրերը դարձյալ նվիրել է Հակոբ Կարանյանը, 1929թ.: Ուշագրավ են բրոնզե հսկա թիթեղից պատրաստած գոտիները, որոնք կրել են իբրև զարդ, պաշտպանության միջոց և պաշտամունքի առարկա: Բրոնզե գոտին ներկա վիճակում թերի է. պահպանվել են վեց բեկորներ, որոնք կրում են փորագիր երկրաչափական և բուսական, երկնային լուսատուների նախշազարդեր: Ըստ նախնական թվագրման՝ գոտին մ.թ.ա. X-IX դդ. է և դասվում է գոտիների չորս խմբերից երկրորդին՝ երկրաչափական պարզունակ կամ բարդ փորագիր զարդերով՝ եռանկյունիներով, ռոմբերով, պարույրներով զարդարված գոտիների խմբին: Մ.թ.ա. XIդ. թվագրվող բրոնզե սուրը պատրաստված է ճուլման եղանակով՝ կաղապարի մեջ: Ամբողջական բրոնզե սրի կոթառի գլխիկը կիսաշրջանաձև է, շեղբը՝ եռանկյունաձև, քիչ սրացված ծայրով, վրան՝ երկու ակոս, որոնք շեղբի կենտրոնական մասում հատվում են իրար և բաժանվում շեղբի վերին մասում: Այս սրին իրենց պատրաստման եղանակով և ձևերով համահունչ են Արթիկի ուշ բրոնզի 1-ին փուլով (մ.թ.ա. XIV-XIIIդդ.) թվագրվող դամբարաններից հայտնի դաշույնները, որոնք որոշ փոփոխություններով շարունակում են գոյատևել ուշ բրոնզի 2-րդ փուլի (մթ.ա. XII-XI դդ.) դամբարաններում:[4]

---

[1] *С. Есаян, Урартские бронзовые пояса Ширака и их новые параллели в Зап.Армении, стр. 101.*
[2] *Б. Пиотровский, Ванское царство, стр. 251-252. С. Есаян, նշվ. աշխ., էջ 91:*
[3] *Նույն տեղում, էջ 91:*
[4] *Т. Хачатрян, Древняя культура Ширака III-I тыс. до н.э., стр.176, 200-201.*

Այսպիսով, նկարագրական ձևով ներկայացվեցին Հ.Կարանյանի՝ Հայաստանի պատմության պետական թանգարանին նվիրած լենինականյան հավաքածուի և Հայոց ազգագրական ընկերությունից բերված՝ անհատական հավաքածուի մեջ մտնող երկու պատահական գտածոների ուրվագծերը, որ հնարավորություն կտա ուսումնասիրողներին ճշգրտելու զուգահեռներն այս իրերի և Հայկական լեռնաշխարհի այլ հուշարձաններից պեղված նույն դարաշրջաններին պատկանող նյութերի միջև:

Կարեն ԹՈՒԽԱԹՅԱՆ (ՊԻ)

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ

Ժայռապատկերները շատ են կարևորվում հայ ժողովրդի բազմադարյա պատմության անհայտ էջերի վերհանման, մեր բնիկության և ակունքների բացահայտման խնդրում, քանզի ունակ են ծանրակշիռ կռվաններ տրամադրելու հայագիտությանը: Հայկական լեռնաշխարհը շատ հարուստ է բազմատեսակ ժայռապատկերներով և որմնագրերով:

ՀՀ հյուսիսում դրանց կուտակումները հետևյալ վայրերում են.

Արագածոտնում՝ Արագած լեռ, Մաստարա, Շենիկ, Արտին, Ներքին Սասունաշեն, Կաքավաձոր, Շամիրամ, Ոսկեհատ, Ագարակ, Օշական, Գեղամավան, Ապարանի ջրամբար, Արուճ, Տղմուտ, Երնջատափ:

Շիրակում՝ Ձիթհանքով, Անիպեմզա, Ս. Շուշանիկ, Երերույք, Մուսայելյան, Մարմաշեն, Հայկաձոր, Տիրաշեն ամրոց, Հոռոմ:

Լոռիում՝ Լոռիբերդ, Գոգարան, Կողես, Նեղուց: Տավուշում՝ Գոշ:



Արագածոտնի մարզ

Արագած լեռան ժայռապատկերները Հայաստանում հայտնաբերված առաջիններից են: Դրանք 1909թ. նկատել են Կոմիտասը ու Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, իսկ 1913թ. հարավարևելյան լանջերին՝ Գր. Ղափանցյանը:[1] Հետագայում, 30-

[1] *Մ. Տէր-Մովսէսեան, Արարատի և Արագածի գագաթներին, «Արարատ», 1913, h 1, էջ 65-66, Գր. Ղափանցյան, Հնութեան մի քանի յիշատակարաններ,«Արարատ»,1914,h 1, էջ 95:*

ական թթ. Աշ. Քալանթարն այստեղ հայտնաբերել է հարյուրավոր ժայռապատկերներ:[1]

Մաստարայի ժայռապատկերների մասին տեղեկություն կար վաղուց:[2] 2004թ. հունիսին արևելագետ Արտակ Մովսիսյանի, անձավագետ Սամվել Շահինյանի և դիցաբան Գոռհար Վարդումյանի ընկերակցությամբ մեզ հաջողվեց գտնել դրանցից մեկը՝ գյուղից 250մ հյուսիս-արևմուտք՝ Դևախաղ հինավուրց անվամբ գեղատեսիլ կիրճում: Դա 4մ երկարությամբ ալիքաձև, խորը ակոս է հսկայական ժայռաբեկորի հարավահայաց թեք նիստին: Հնավայրում կան հնուց ի վեր բնակեցված քարանձավներ ու միջնադարյան մատուռ: Շենիկի Ս. Աստվածածին եկեղեցու (VII դ.) պատերին ճարտարապետ Աշոտ Գրիգորյանը 2001թ. նկատել է հնագույն նշանագրեր:

Հինքարիդարյան մշակույթի կենտրոն Արտին լեռան ստորոտում՝ «Զաղաներ» վայրում, ժայռապատկերների գոյությունը նշել է հնագետ Սանդրո Սարդարյանը:[3] Քուչակի մոտի հսկայակերտ (կիկլոպյան) երեք ամրոցների քարաբեկորները ծածկված են սրածայր գործիքով արված հարյուրավոր երկրաչափական նշանագրերով, որոնք 1967թ. հայտնաբերել է ճարտարապետ Սուրեն Պետրոսյանը:[4] Ապարանի ջրամբարի աջ ափին, ջրերի բարձրացման հետևանքով 1987թ. ջրասույզ են եղել մոտ 50 պատկերակիր գծային գրերով քարաբեկորներ:[5] Նույն ափին 1999թ. նկատվել է մի քանի տասնյակ կիսաջրասույզ քարասալ՝ գծային գրերով:

Տղմուտ: Ապարանի ջրամբարի հյուսիսային եզրին (նախկին Քասախ գյուղից հյուսիս)՝ մատուռի մոտ, կան հսկայակերտ ամրոցի, քրիստոնեական սրբավայրի վերածված մեհյանի և բնակատեղիի ավերակներ, 25-30մ տրամագծով բոլորաշարեր և վաղմիջնադարյան գերեզմանոց:[6] Հնավայրի տարածքում առկա են մարդկանց ստվերաքանդակներ, գրեր, խաչեր ու անհայտ նշանագրեր: Երնջատափ գյուղի դաշտերում, Փոքր

---

[1] *Աշխ. Քալանթար, Արագածը պատմության մեջ, Եր., 1935, էջ 73, նկ. 22, 23: Լ. Բարսեղյան, Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի վերաբերյալ.ՊԲՀ, 1966,№3, էջ 147:*

[2] *Ս. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Եր., 1935, էջ 43: Աճառյան Հր., Հայոց գրերը, Եր., 1984, էջ 406:*

[3] *Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 118-119: Նույնի, Հայաստանի նախնադարյան բնակչության արվեստը. Գարուն, 1979, № 5, էջ 88:*

[4] *Հ. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ,ՊԲՀ, 1969, № 3, էջ 192:*

[5] *Ֆ. Մուրադյան, Նորահայտ նշանագրեր Ապարանի շրջանից, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-87թթ. պեղումների արդյունքները), Եր., 1992, էջ 103-105, աղ. CIII-CXV: Տես նաև Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, Եր., 2004, էջ 173-188:*

[6] *Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 254: Վ. Սուքիասյան, Ուշագրավ հնություններ Տղմուտում, Երևանի համալսարան, №41 (1191), 23.12.1978, էջ 2, 4: Զ. Դարյան, Ասք Նգա, Եր., 1983, էջ 3, 122-125, 217:*

Ծաղկեվանք գյուղատեղիի մոտ հնագետ Բ. Գասպարյանը հայտնաբերել է գծային գրեր հիշեցնող փորագրություններով մի քանի տուֆասալ:

Շիրակի մարզ

Ձիթհանքովի մոտի հսկայակերտ պարսպաշարի ու ավերված բոլորաշարերի ժայռաբեկորների վրա կան հմայապաշտամունքային հարյուրավոր նշանագրեր, ինչպես նաև կենդանիների ու երկնային մարմինների նշանապատկերներ, որոնք աղերսվում են գյուղից ոչ հեռու հայտնաբերված քարայրային սրբավայրի ժայռապատկերներին:[1]

Անիպեմզա ավանից մոտ 2կմ հարավ-արևելք իր տեսած ժայռապատկերների մասին 2001թ. տեղեկացրեց անձավագետ Արմեն Գևորգյանը: Երերույքի Vդ. բազիլիկ տաճարի արևմտյան պատին քարայծի փորագիր պատկեր կա:[2] Մուսայելյանի Ս. Տրդատ եկեղեցու (1894) պատին Բ. Գասպարյանը երեք փորագիր պատկեր է նկատել: Մարմաշենի վանքի կաթողիկե եկեղեցու (Xդ.) պատերին նկատել ենք մի շարք այծապատկերներ և նշանագրեր: Հայկաձոր գյուղի և Տիրաշեն ամրոցի մոտ կան ժայռապատկերներ՝ ըստ հնագետ Լ. Եգանյանի 2003թ. հաղորդման: Հոռոմի բերդաքաղաքի ավերակներում՝ բնական ժայռերի վրա, հսկայանշաններ կան: Դրանցից մեկը նման է հայերեն«Ռ» կամ «Ս» տառին, ունի 50-60սմ չափեր:[3] Զարիշատի մոտ (Արփաչայ) կա մի քանի հսկայանշան:

Լոռու մարզ

Լոռիբերդի ամենամեծ դամբարանի խցի պատերին 1992-93թթ. հայտնաբերվել են մուգ մոխրագույն ֆոնին դեղին, կանաչ, նարնջագույն խեժահոտ ներկերով արված կենդանիների պատկերներ և ալիքաձև զարդանախշեր՝ բովանդակությամբ և ոճով նման լեռնային ժայռապատկերների: Պատերի փլուզման հետևանքով պատկերներն աղճատված են:[4]

Գոգարանից 1կմ հարավ, դամբարանների հարևանությամբ 1986 և 2004թ. նկատել ենք գծային գրեր հիշեցնող նշանագրեր: Կողեսից 2կմ հյուսիս երկրաբան Հակոբ Տոնականյանը 1991թ. հայտնաբերել է բոլորաշարերի խումբ և Երկրի կողմերը նշող քարաշար երկանկյուն, որի քարերից մեկի վրա կա գծային գիր հիշեցնող նշան:[5] Նեղոցի արևելյան և արև-

---

[1] *Ս. Բարխուդարյան,նշվ. աշխ., էջ 45-47: Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 192:*

[2] *Լ. Լիսիցյան, Գեղամա լեռների ժայռապատկերներից,. ԼՀԳ, 1972, №1, էջ 56:*

[3] *Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1942, էջ 18-19, նկ. 15: Տե՛ս նաև Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003, էջ 208-211, նկ. 119:*

[4] *Ս. Դևեջյան, Լոռի բերդի №79 դամբարանը, «Հայաստանի հնագույն մշակույթը» գիտաժողովի զեկ. հիմնադրույթներ, Եր., 2001, էջ 39: Նույնը, Լոռի բերդ, Եր., 2006, աղ. 14:*

[5] *Հ. Տոնականյան, Կ. Թոխաթյան, Կիսոսե՞ն արդյոք քարերը, Զվարթնոց,1991, №4, էջ 31-34:*

մտյան կողմերում (ձորի եզրին) հնագետ Վարշամ Ավետյանը 1990թ. հայտնաբերել է 15-20 հնագույն ժայռապատկեր:[1]

Տավուշի մարզ Գոշավանքից մոտ 1կմ հարավ-արևմուտք, Դիլանի բլուր վայրում, Վ. Ավետյանը 1985թ. նկատել է 6-7 ժայռապատկեր:[2]

Այսպիսով, ՀՀ հյուսիսի ժայռապատկերները և պաշտամունքային կառույցների որմնագրերը, գտնվելով հիմնականում ցածրալեռնային անտառատափաստանային գոտում,[3] դրսևորում են թեմատիկ ու ոճական, տեխնիկական ու տեղագրական ընդհանրականություն՝ սույնով վկայելով Հայոց մեջ ժայռապատկերման ավանդույթի հարատևումը, անընդհատությունն ու անցումայնությունը:

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ, ԳՊՄԻ)

ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԲԵԿՈՐԻ ՄԵՀԵՆԱԳՐԵՐԸ

Հայաստանի պատմության ազգային թանգարանում պահվող Գյումրու հնագիտական ֆոնդերի մի խմբի մեջ (իրային գրանցումը՝ թիվ 49) կա ուրարտական գոտու մի բեկոր:[4] Մոտավոր ճշտությամբ ժամանակին վերականգնվել է գոտու համապատասխան հատվածի պակասող մասը, որով հնարավոր է դարձել ամբողջական պատկերացում կազմել այդ հատվածի վերաբերյալ: Այդտեղ արևն ու կենաց ծառը խորհրդանշող ոճավոր կենտրոնական պատկերից աջ և ձախ եղել են զույգ արձվառյուծների պատկերներ,[5] որոնցից պահպանված է միայն մեկը: Շատ ժողովուրդների առասպելաբանություններում արձվառյուծների զույգը և նրա բազմազան զուգահեռներն առնչություն են ունեցել արևի պաշտամունքի հետ[6] համարվելով կենդանական մարմնավորումներ և խորհրդանիշեր Լուսաբերի (Արուսյակ մոլորակը արևածագից առաջ) և Գիշերավարի (Արուսյակը արևամուտից հետո): Առասպելաբանական մտածողությամբ լուսաբացը, ցերեկը, արևելքը և այլն առնչվում են «աջ»-ի, իսկ մայրամուտը, գիշերը, արևմուտքը և այլն՝ «ձախ»-ի իմաստաբանական շարքին: Ըստ հայկական ավանդազրույցներից մեկի՝ Արևը «երկու պահապան

---

[1] *Վ. Ավետյան, Նորահայտ ժայռապատկերներ Նեղուց գյուղի տարածքում, ԼՀԳ, 2006, №2, էջ 249-55: Տե՛ս նաև Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Եր., 1991, էջ 975:*

[2] *Հեղինակը դրանք պատրաստում է հրատարակման:*

[3] *Բացի Արագածի լեռնային ժայռապատկերներից:*

[4] *Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975, стр.19.*

[5] *Ս. Պետրոսյան, Գյումրիի պեղածո գոտու բեկորի զարդանախշերի շուրջ, ՇՊՄԺ հանրապետական առաջին գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 30-32:*

[6] *И. Пьянков, Бактрийский гриф в античной литературе, "История и культура народов Средней Азии", М., 1976, стр. 20-21,24.*

հրեշտակ ունի, որոնք նրան ցերեկը երկրի երեսով, իսկ գիշերը՝ տակով ման են ածում»:[1] Այս կերպարների նույնաբնույթ տարբերակներին կարելի է հանդիպել հայ առասպելաբանության տարբեր ոլորտներում: Դրանք հիմք են տալիս Գյումրու ուրարտական գոտու բեկորի կենտրոնական պատկերի աջակողմյան արծվառյուծը համարելու Լուսաբերի, իսկ ձախակողմյանը (չպահպանվածը)՝ Գիշերավարի խորհրդանիշը:

Գյումրու պեղածո ուրարտական գոտու բեկորի արծվառյուծի մարմնին հստակ երևում է մեհենական արձանագրությունը: Չորս մեհենանշաններից բաղկացած գրությունն ուղեկցված է երեք փոքրիկ օղակներով: Դրանցից մեկը առաջին մեհենանշանի աջ կողմում է և աջից ձախ գրության պայմաններում,[2] ըստ երևույթին, ազդարարում է մեհենագրության սկիզբը, իսկ մյուս երկու օղակները, գտնվելով վերջին մեհենանշանից (ձախակողմյան մեհենանշաններից ստորինը) ներքև, հորիզոնական նույն գծի վրա, վերևից ներքև ընթերցման պայմաններում,[3] ամենայն հավանականությամբ, նշում են գրության ավարտը: Արծվառյուծի մարմնին դրոշմված մեհենագրությունը, մեր կարծիքով, ուղղակի կապի մեջ է նրա անվան և էության հետ:

Առաջին մեհենանշանը (աջակողմյանը) ներքևից՝ արծվառյուծի փորի կողմից, դեպի վերև ձգված գծապատկեր է: Այն արտահայտելու է արծվառյուծի անվան առաջին վանկը կամ անվան առաջին մասը: Ի նկատի առնելով մեր առասպելաբանության Սինամ հավքին՝ մենք առաջարկում ենք սյունաձև այդ մեհենանշանը առնչել *սիմ* «սյուն, կանգնեցրած փայտ» բառին և ընթերցել *սիմ*: *Սիմ*-ը ծագում է հ.-ե. *k'īōn-/*k'ī̆ōn- նախաձևից և ազգակիցն է հունարեն κίων «սյուն» բառի:[4] Այս բառն ունեցել է իր **սիմ* տարբերակը՝ առկա *սնար* <**սիմ-ար* բառում (վերջածանցի համար հմմտ. *արդ-ար*, *կերպ-ար*, *պալ-ար* և այլն): *Սնար* նշանակում է ոչ միայն «գլխի ետևը, ծոծրակ», «գլխի վերևը», այլև «կարճ փայտ, որ... սայլի կանգնած ժամանակ իբրև նեցուկ դնում են ցռուկի տակ» (հմմտ. նաև *սնար* «հենարան»):[5]

Եթե մեհենագրության մեջ առկա է Սինամ հավքի անունը, ապա երկրորդ մեհենանշանը՝ սյունաձև նշանից ձախ, ընթերցվելու է *ամ*: Այս մեհենանշանը ներքևից վերև ձգված (որոշ թեքությամբ) լուսնի մահիկ է ներկայացնում և, իսկապես, կարող էր ընթերցվել *ամ*՝ *ամիս* բառի առաջին մասով, որովհետև *ամիս*-ը նախապես «լուսին» է նշանակել. հմմտ. հին հնդկ. mās «լուսին», «ամիս», հուն. μην «ամիս», μηνη «լուսին», ռուս. месяц

[1] *Ա.Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 5:*
[2] *Ա. Մովսիսյան, Հայկական մեհենագրություն, Եր., 2003, էջ 75-76:*
[3] *Նույնը:*
[4] *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), h.IV, Եր., 1979, էջ 221:*
[5] *Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), h. IV, Եր., 1945, էջ 235: ՀԱԲ, h. IV, էջ 235:*

«լուսին, ամիս» մեր բառի ազգակիցները:[1] Այսպիսով, արծվառյուծի վրայի առաջին և երկրորդ մեհենանշանները միասին ընթերցվել են *սին-ամ* > *Սինամ*, որը առասպելական հավքի բուն անունն է: Ինչպե՞ս է ստուգաբանվում այս անունը: Կարծում ենք, որ այն կազմված է **սին* արմատով և *-ամ* անվանակերտ վերջածանցով (հմմտ. *Ար-ամ, Արգ-ամ, Կառն-ամ* և այլն): **Սին* արմատը, մեր կարծիքով, ներկայացնում է *ցին* արմատական բառի տարբերակը: Վերջինս ծագում է հ.-ե. *k'īno-նախաձևից, որից են ծագում նաև հուն. ἰκτῖνος «ցին», հին հնդկ. śyena´-«արծիվ, բազե», արվեստ. saēna «խոշոր գիշատիչ թռչուն» բառերը:[2] Այս արմատն է առկա նաև *արսին* (<*ար-սին) բառում, որը միջնադարյան «Բառգիրք հայոց»-ը բացատրում է որպես «ցին, ուրուր»:[3] Այս բառի **ար-* բաղադրիչը հ.-ե. *Her- արմատի ստորին ձայնդարձն է ներկայացնում (հմմտ. *արօս, արօր* թռչնանունները, *արօրանալ//հարօրանալ* «թռչունների թռչելը խմբով» բառը), իսկ միջին ձայնդարձից ունենք *որոր* և *ուրուր* թռչնանունները (ազգակից բառերից հմմտ. խեթ. ḫaraš «արծիվ», հուն. ὀ´ρνις «թռչուն», գոթ. ara«արծիվ» և այլն):[4]

Ավեստյան saēna թռչնանունից է կազմված իրանական առասպելաբանության saēnō mərəγō առասպելական թևավոր արարածի անունը, որի պահլավական (միջին պարսկական) համարժեքը կոչվում էր sēn-i-murūk, sēn(o)murūk, իսկ պարսկականը՝ sīmurγ:[5] Ի տարբերություն մեր արծվառյուծի՝ պարսկական Սիմուրղը շնարծիվ է, որովհետև շան գլուխ և թաթեր ունի[6] (հմմտ. հայ ժողովրդական հեքիաթների թևավոր շները՝ Զանգի-Զրանգի, Ազան-Գազան,Հասար-Բասար, Ասլան-Դափլան, որոնք ևս լինելու էին Լուսաբերի և Գիշերավարի կենդանական մարմնավորումները): Մեր Սինամ հավքի անվան ծագման հարցում գերիշխող երկու կարծիքներն էլ դրա աղբյուրը փնտրում են իրանական առասպելաբանության մեջ՝ այն ստուգաբանելով կամ որպես «Չինաստանի թռչուն, սիրամարգ», «հեքիաթներում՝ առասպելական ուժեղ թռչուն, զմռութ դուշ» (<Sin «Չինաստան»+marg «թռչուն»), կամ բխեցնելով վերոհիշյալ իրանական ձևերից՝ *սիրամարգ* միջանկյալ օղակով:[7] Վերջին տեսակետը պաշտ-

---

[1] *ՀԱԲ, h. I, Եր., 1971, էջ 158:*

[2] *ՀԱԲ, h. I, 1971, էջ 455: Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II,Тб., 1984, т.I, стр. 149, пр.1, т. II, стр.539.*

[3] «Արսին-*ցինն է, որ է ուրուր, կամ ունելի»(Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975,էջ 40): Ըստ Վանական Վարդապետի, «Արսինն թռչուն է օդագնաց, հասակաւ եւ գունով եւ ձայնիւ որպէս սարիկ. ոտն կարճ է եւ ճանկն սուր. հետեւակ չկարէ երթալ, բարձր բոյն դնէ, եւ բարձր որսայ իւր կերակուր» (ՀԱԲ, h. I, էջ 336): Ուրեմն, մեր* արսին*-ը, եղել է գիշատիչ թռչնի անուն:*

[4] *ՀԱԲ, h. I, էջ 349, 350, h. III, Եր., 1977, էջ 64, 618: Т. Гамкрелидзе, В. Иванов,նշվ. աշխ., h. II, էջ 538:*

[5] *ՀԱԲ, h. IV, էջ 219:*

[6] *Л. Лелеков, Симург, “Мифы народов мира”, т. II, М., 1988, стр. 436-437.*

[7] *ՀԲԲ, h. IV, էջ 214: ՀԱԲ, h. IV, էջ 219:*

պանող Հր.Աճառյանը ավելացնում է. «Մեր գավառականների մեջ էլ սինամարգը (ի նկատի ունի Սինամ հավքը-*Ս.Պ.*) առասպելական մի թռչուն է և ո՛չ «սիրամարգ»:[1] Այս տարբերությունը հիմք է տալիս բացառելու *սիրամարգ* բառի միջոցով «բացահայտվող» ավեստյան saēnō-mərəγō և մեր *Սինամ հավքի* անունների միջև գոյություն ունեցած ուղղակի կապը:[2] Այսուհանդերձ, չի բացառվում նրանց միջև վաղնջական ժամանակներից եկող զուգահեռ կապը, հօգուտ որի է վկայում saēnō-ի և *սինամ*-ի արմատակից *ցին*-ը: Ընդ որում, *Սինամ*-ի **սին* արմատն առավել հարազատորեն է վերարտադրում հ.-ե. *k´īno-նախաձևը, քան *ցին*-ը (որովհետև, սովորաբար, հ.-ե.* k´-> հայ.*ս*):

Հայկական Սինամ հավքը ուղղակի կապի մեջ է եղել առասպելաբանական Սինամ սարի հետ: Վերջինիս էությունը հեքիաթներից մեկում բացահայտում է հենց Սինամ հավքը, որն Անմահական խնձոր և «Սինամ հավքու կաթ» որոնող հերոսին ասում է. «Ըշտե ես Սինամ հավքն իմ օր կամ: Իդա դիմացի բարձր սար կը տեսնա՞ս, էդ լե Սինամա սարն է. էդ սարի վրեն մեկ թաք ծառ կա, էդ ծառի վրեն տարին յոթ խնձոր կը հասնի, ըշտե Անմահական խնձոր օր կըսին՝ էդ է: Մարդ չը կռնա յելնա էդ սար, հողածնի յոտք չը կոխերե զընդրա հող»:[3] Սինամա սարը տիեզերական լեռն է (հմմտ. հին հնդիկների Մերու լեռը), որի վրայի միակ ծառը Կենաց ծառն է, իսկ նրա վրայի յոթ Անմահական խնձորները խորհրդանիշներն են յոթ «մոլորակների» (Արև, Լուսին և անզեն աչքով տեսանելի հինգ մոլորակներ): Սինամ հավքի օգնությամբ «օսկե ծամեր» ունեցող վիշապասպան հերոսը ձեռք է բերում Անմահական խնձորները և նրանից ստանում նույնպիսի հատկությամբ օժտված «Սինամ հավքու կաթը»:[4] «Յոթ անմահական խնձորների» նման այս միջավայրում նրանց հավասար «Սինամ հավքու կաթը» ևս իր աստեղային համարժեքն էր ունենալու: Ըստ երևույթին, դա եղել է Ծիր կաթինը, որը կոչվել է նաև *Սանամոր Քաշ* (ուշ շրջանում հասկացվել է «Սանամոր հետք»): Ծիր կաթինի առաջացմանը վերաբերող ավանդազրույցներում *Սանամայր* կոչվածը հարդագողն է (Հարդագողի ճանապարհ//Ծիր կաթին), կամ ինչ-որ անորոշ «հարս-սանամայր», կամ «մարդագայլ հարս»:[5] Վերջինս դաշունահարվել է, իսկ նրա «կաթը կրծքից ցայտել է երկինք և իր հետքը թողել երկնքի վրա»:[6] *Սանամոր Քաշ*

---

[1] *ՀԱԲ, հ.IV, էջ 219:*

[2] *Ծայրահեղ դեպքում խոսք կարող է լինել օտարամուտ* սիրամարգ *և բնիկ* Սինամ(ա) հաւք *բառերի բաղարկության մասին, մանավանդ որ սրանցից առաջինի բաղադրիչները չէին կարող առանձին-առանձին ընկալվել հայի կողմից («բացառվում է* մարգ *«թռչուն» բառի ինքնուրույն գործածությունը հայերենում», Է.Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 68):*

[3] *«Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. X, Եր.,1967, էջ 112-113:*

[4] *Նույն տեղում, էջ 113:*

[5] *Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 7-8:*

[6] *Նույնը:*

անվան մեջ *Քաշ*-ի հնարավոր «կաթնային» բովանդակության տեսանկյունից հմմտ. *քաշած* «քաշած կաթ», իսկ ծածկաբար՝ ուղղակի «կաթ»:[1] Եթե *Սանամոր Քաշ* բառակապակցության երկրորդ բաղադրիչը իսկապես «կաթ» է նշանակում, ապա նմանահնչյունության պատճառով առաջինը կարող է փոխարինած լինել *Սինամոր* բառին. վանեցիները Սինամ հավքին կոչում էին *Սինամոր Խավք*.[2] Ընդ որում, *Սինամոր* <**սինամ-որ*: Սրանցից վերջինը կամ հայտնի վերջածանցն է (հմմտ. *բեկ-որ, գլ-որ, մոլ-որ* և այլն), կամ *որոր*//*ուրուր* բառի արմատը (<հ.-ե. *or-):

Սինամ հավք և *Սինամա սար* անունների հետ համածագում է հայկական հեքիաթների և ավանդազրույցների Սինամ թագավորի անունը: *Սինամ* արական անձնանունը համարում են *Սենեքերիմ* (<եբրայ. San<u>h</u>ērīb) անվան կրճատ ձևը:[3] Բայց դա քիչ է հավանական, որովհետև *Սինամ*-ը գործածվում էր նաև որպես իգական անձնանուն: «Սասնա ծռեր»-ի լավագույն պատումներից երկուսում *Սինամ* կոչվում է Մեծ Մհերի կինը՝ Դավթի մայրը:[4] Շատ ավելի կարևոր մի փաստ. *Սինամ* անունը գործածական է եղել հնագույն Կիլիկիայում: Այն վկայված է մ.թ.ա. XIII դարի խեթական արձանագրություններից հայտնի Sinamu<u>u</u>a տեղանվան[5] մեջ (<Sinam + u<u>u</u>a տեղանվանակերտ): Վերջինս զուգահեռն է ներկայացնում հայկական *Սինամուտ* տեղանվան, որը կազմված է *Սինամ* հիմքից *-ուտ* տեղանվանակերտով (հմմտ. *Արջ-ուտ, Կառն-ուտ, Տանձ-ուտ* և այլն): Ս. Հայկունու գրառած «Մոքոս» ժողովրդական վեպում այն համարվում է Խարբերդի հին անունը, իսկ նրա առաջացումը բացատրվում է հետևյալ կերպ. «Սինամ (թագավորը) իր մարդերով էկավ բնակռավ մե քարոտ տեղ, էաս տեղ մենծ քար էր, քարի տակը քաղաք շինեց, անունը



[1] *ՀԲԲ, h. IV, էջ 548:*
[2] *Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 4:*
[3] *Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, h. IV, Եր., 1948, էջ 477, 520:*
[4] *«Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, h. Ա, Եր.,1936, էջ 860,1039-1040, 1059:*
[5] *"Keilschrifturkunden aus Boghazköi, Hf. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 43, I, 39-40; В. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ер., 1971, стр. 97-98.*

դրավ Սինամուտ, քարի գլուխ էալ բերդը շինեց»:[1] «Մենծ քարը» սարն է, որն առասպելաբանական մտածողությամբ նույնացվել է Սինամա սարին:

Որպես Արուսյակի կենդանական դրսևորում՝ Սինամ հավքը նախապես ըմբռնվելու էր ոչ թե մեկը, այլ երկուսը՝ համապատասխան լուսատուի զույգ (որպես Լուսաբեր և որպես Գիշերավար) ընկալմանը: Նրա պարսկական զուգահեռ Սիմուրղը ևս երբեմն մեկը չէ, այլ երկուսը:[2] Մեր «Գելվենի ախպեր» հեքիաթում վիշապասպան հերոսին լույս աշխարհ հանող արծիվները երկուսն են՝ նրա փրկած արծվածագերի հայրն ու մայրը:[3] Լուսաբերի և Գիշերավարի՝ որպես մեկ լուսատուի (Արուսյակ) հետագա ընկալման հետևանքով նրանց տարբեր դրսևորումների զույգ կերպարները համադրվել են, և դրանց միաձուլումից ստացված նոր կերպարը դարձել է երկսեռ էակ (Սինամ հավքի իգական էակ ևս ըմբռնվելու մասին են խոսում նրա ձու ածելու և կաթ տալու հանգամանքները): Այսպիսի կերպարանափոխության ընթացքում կարող էին հորինվել երկգլխանի արծիվներն ու նույնատիպ առասպելական էակները: Այս առումով ուշագրավ են հիշյալ օրինակները: Արուսյակի անձնավորում ուրարտական Տուշպուեա դիցուհին պաշտամունքային բրոնզե կաթսաների կանթերին պատկերվում է թռչնակերպ՝ հաճախ կանացի զույգ գլուխներով:[4] Արուսյակը՝ որպես խորհրդանիշ ունեցող և սեմական Իշտարի հետ նույնացված խուռիական Սաուսգա դիցուհի, երկրնույթ էր՝ օժտված ինչպես «կանացիություն» (aštaš<u>h</u>i), այնպես էլ «առնականություն» (ta<u>h</u>aš<u>h</u>i) հատկանիշներով:[5] Առասպելաբանական մտածողությամբ սրանցից առաջինը պատկանում է «ձախ»-ի, իսկ երկրորդը՝ «աջ»-ի իմաստաբանական շարքին:

Գյումրու ուրարտական գոտու բեկորի արծվառյուծի վրայի երրորդ մեհենանշանը թռչնի զույգ թևերի ոճավոր պատկերն է և, մեր կարծիքով, ընթերցվել է *հաւ*: Մեր այս բառը ևս հնդեվրոպական ծագում ունի: Նրա հիմքում հ.-ե. *a<u>u</u>ei- «թռչուն» նախաձևն է, որից են ծագում նաև լատին. avis «թռչուն», հին հնդ. vayas-, ավեստ vīs, vay- և այլն:[6] «Թռչուն» > «հավ» իմաստային զարգացման տեսանկյունից հմմտ.հուն. ὀ΄ρνις «թռչուն,հավ, աքլոր»:[7] Նախորդ մեհենանշանների հետ միասին այժմ ունենք *սին-ամ-հաւ*, այսինքն՝ *Սինամ հաւ(ք)*:

---

[1] *Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք երկրորդ, Եր., 1981, էջ 239, 250 («Մորու», Վաղարշապատ, 1896, էջ 4):*

[2] *Л. Лелеков, նշվ. աշխ., էջ 437: Իրանական Սիմուրղի հին ռուսական զուգահեռ Симаргл թևավոր շունը երբեմն ներկայացվել է որպես երկու առանձին աստվածություններ՝ Сим և Регл (Д. Ворт, Див=sīmurg, "Восточнославянское и общее языкознание", М., 1978, стр. 132; Б. Рыбаков, Язычество древней Руси, М., 1988, стр. 415, 442):*

[3] *«Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VII, Եր., 1979, էջ 593:*

[4] *Б.Пиотровский, Искусство Урарту. VIII-VII вв. до н.э., Л., 1962, стр. 57-58.*

[5] *E. Laroche, Etudes de linguistique anatolienne. III, II, Bilingues hourro-hittites, « Revue hittite et asianique», XXVIII, P., 1970, p.61.*

[6] *ՀԱԲ, հ. III, էջ 66:*

[7] *Նույն տեղում, հ. III, էջ 65-66:*

Թռչնի ոճավոր թևեր ներկայացնող և *հաւ* ընթերցվող նշանին (վերևից ներքև ընթերցման դեպքում) հաջորդում է մի մեհենանշան, որը հիշեցնում է ծայրերով վերև ուղղված երկժանի և միջնադարյան «Նշանագիրք իմաստնոց»-ում բացատրված է «Արուսյակ» և «Լուսաբեր»:[1] Այսպիսի 𐎥,𐎥,𐎥 նշաններին վերագրված մյուս իմաստներն ուղղակի կապի մեջ են այս լուսատուի և նրա անձնավորում դիցուհիների (Ինաննա, Աստղիկ, Դերկետո, Սաուսգա, Ափրոդիտե) հայտնի որակների հետ: Անանիա Շիրակացին գրում է.«Լուսաբերն բնութեամբ իսկ տարփանք է, շնորհի պատճառք, ի գեղեցկութիւն եւ ի սիրելութիւն, այսինքն՝ ողողեալ յանառակ ցանկութիւնս»:[2] Նրանց պետք է համարել նաև «Նշանագիրք իմաստնոց»-ում բերված և «Արուսյակ», «Լուսաբեր» նշանակությամբ նշանները կրկնող այսպիսի նշանների վաղ հասցեատերերը, որովհետև սրանց բացատրությունն է «անարգ»,[3] իսկ *անարգ* նշանակում է «ոչ յարգի, անպատիւ», «նուաստ, ստորին»:[4]

Գյումրու ուրարտական գոտու բեկորի արծվառյուծի վրայի նույնատիպ գաղափարագիր նշանը հուշում է, որ մեր դիմաց Արուսյակ մոլորակի կենդանական դրսևորում արծվառյուծն է: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ Սինամ հավքի անվան արմատակից *արսին* բառը (*Սին-ամ* և *ար-սին*) «Հին հայ մեկնիչները… մեկնում են «թռչուն, Աստղ կամ Արուսեակ»:[5] Արծվառյուծի պահպանված պատկերը վերաբերում է Արուսյակ-Լուսաբերին, որի մասին է խոսում ինչպես Արևը խորհրդանշող կենտրոնական զարդանախշից նրա աջ տեղադրված լինելու հանգամանքը, այնպես էլ նրա էությունը բացահայտող գաղափարագիր մեհենանշանի *վերևում* դրված հորիզոնական գիծը (Արուսյակ-Գիշերավարի գաղափարագիրը գիծ կունենար *ներքևում*): Լուսաբերի և Գիշերավարի մարմնավորում առասպելաբանական կերպարների տարբերակումը «վերևի» և «ներքևի» միջոցով առկա է նաև մեր ժողովրդական հեքիաթներում: Վերոհիշյալ հեքիաթում արծվի երկու ճագերը վիշապասպան հերոսի քունը հսկելիս, հավասար դիրքում չեն՝ «մեկ արծրվու ճագ նստավ գլխու վերև, մեկ նստավ օտքերու տակ»:[6] Բնականաբար, գլխավերևի արծվաճագը համարվելու էր մարմնավորումը Լուսաբերի (հմմտ. վերև, աջ, լուսաբաց, ցերեկ իմաստաբանական զուգորդումները), իսկ ոտքերի տակ նստածը՝ Գիշերավարի (հմմտ. ներքև, ձախ, մայրամուտ, գիշեր և այլ իմաստաբանական զուգորդումները): Նույն կերպ կարելի է բացատրել նաև հին Հայաստանում լայն տարածում գտած բազմանիստ կնիքների վրայի ձիու մեջ-

---

[1] *Հ.Աճառյան, Հայոց գրերը (Յուցակ հայկական հին նշանագրերի, թիվ 104, 191), Եր., 1984: Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 227, 237, 239:*

[2] *Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Եր., 1940, էջ 21:*

[3] *Հ. Աճառյան, նշվ. աշխ., թիվ 43: Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 231, 236:*

[4] *«Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I,Եր., 1979, էջ 113:*

[5] *ՀԱԲ, հ.I, էջ 336:*

[6] *«Հայ ժողովրդական հեքիաթներ», հ.VII, էջ 593-594:*

քին և գլխին դեմ-դիմաց կանգնած թռչուններով պատկերները, որտեղ ձին փոխարինում է Արևին (Միհրին):[1] Անտարակույս, ձիու գլխին կանգնած թռչունը լինելու է Լուսաբերի (վերև), իսկ մեջքին կանգնած թռչունը՝ Գիշերավարի (ներքև) կենդանական դրսևորումը:

Այսպիսով, Գյումրու ուրարտական գոտու բեկորի արծվառյուծի մեհենագրերի ընթերցումը հնարավոր է դարձնում բացահայտելու արծվառյուծի *Մինամ հավ(ք)* անունը, որը նա կրել է Արուսյակ մոլորակի կենդանական դրսևորումը լինելու պատճառով: Ըստ այսմ, նրա մարմնին դրված է նաև Արուսյակ-Լուսաբերի խորհրդանշանը: Ավելացնենք, որ այս մեհենագրերի մեր ընթերցումը համահունչ է ուրարտական մեհենագրության լեզուն հայերենը լինելու այժմ իր հաստատումը գտնող վարկածին:

Վիգեն ԾԱՏՐՅԱՆ (ՊՄՀՊԳ)

ՊԱՏՄԱԿԱՆ ՇԻՐԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Պատմահայր Մովսես Խորենացին «Հայոց Պատմություն» (այսուհետ՝ Խորենացի) աշխատության առաջին գրքում, որի աղբյուրը Մար Աբաս Կատինայի «Պատմության մատյանն» է, նկարագրում է Հայկի սերնդի տարածումը Հայկական լեռնաշխարհում: Հետագա դարերի հայ պատմիչները՝ Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Օրբելյան և այլք, վերաշարադրում են «Ծննդաբանություն հայոց մեծաց» գրքի պատմածը՝ որոշ շտկումներ ու լրացումներ կատարելով: Փաստորեն, «Հայոց պատմությունը» առ այսօր հայտնի միակ աշխատությունն է, որ համակարգված տեղեկություններ է պարունակում Ḩaiassa - Հայք, Armanum - Արամանեակ, Ḫurri-Խոռ, Buzunia-Բազ, Aramali-Արամ, Kadmuḫi-Կադմոս, Mana-Մանավազ, Muṣku-Մշակ, Uelikuḫi-Գեղամ, Giarniani-Գառնիկ, Šiḫini- Սիսակ, Aluani- Աղու (Առան) նահապետներից սերված ցեղերի մասին:[2]

Հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում հաստատվում է Հայկական պար լեռնաշղթայից հյուսիս՝ դեպի Արագած ու Սևանա լիճ հայկական ցեղերի տարածումը:

Վերջին հարյուրամյակում ՀՀ-ից և հարակից շրջաններից հայտնի հնագիտական մշակույթների ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջարկելով ժամանակագրական-տարածական իր սխեման՝ Կ. Կուշնարյովան գրում է. «Կարմիրբերդյան մշակույթի թվագրման հարցում

[1] *Ժ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Եր., 1981, էջ 65:*

[2] *Վ. Ծատրյան, Հավատ և Ավանդույթ, «Կապանցիներ» ամսաթերթ, 2006, թիվ 27:*

մեր տեսակետները համընկան հայ հնագետների տեսակետին (-Վ.Ծ.), չնայած մենք այդ խնդիրներին մոտեցանք տարբեր կողմերից: Կարծում ենք, որ կարմիրբերդյան մշակույթն իր մայրամուտից առաջ գոյատևեց մոտ երկու հարյուրամյակ (մ.թ.ա. XVII-XVIդդ.), և որ դրա կրողները հարավից եկած բնակիչներ էին: Սկզբնական շրջանում կարմիրբերդցիներն զբաղեցրին Արարատյան դաշտավայրը և Արագածի նախալեռները: Հետագայում, հավանաբար հիմնական արեալի գերբնակեցման հետևանքով, կարմիրբերդցիները շարժվեցին հյուսիս-արևմուտք՝ պատմական Շիրակ: Կարմիրբերդցիների 2-րդ ալիքը շարժվեց դեպի հյուսիս-արևելք և սկսեց թողնել իր հուշարձանները Սևանա լճի արևմտյան ափին: Կարմիրբերդյան խեցեղենի տարածման (-Վ.Ծ.) ամենահյուսիսային կետը մենք համարում ենք Կիրովականի շատ հետաքրքիր թաղումը, որտեղ հայտնաբերվել է մեծ քանակությամբ սևան-ուզերլիկյան խեցեղեն: Այնուհետև առաջխաղացումը գնաց ավելի հեռու՝ դեպի արևելք, Միլ-ղարաբաղյան տափաստան»:[1] «Կարմիրբերդցիներ» եզրույթը փոխարինելով «հայեր»-ի՝ մենք կստանանք Խորենացու պատմածի տարբերակը (Խորենացի,Ա,ժբ):

Հաղորդման մեջ հակիրճ քննել ենք պատմական Շիրակի տարածաշրջանին վերաբերող մի շարք հատուկ անուններ (անձնանուններ, դիցանուններ, տեղանուններ), առաջարկել մեր կամ այլ հեղինակների կողմից արված նույնացումներ, հնարավորության սահմաններում նաև ստուգաբանություններ և վերականգնվող հնդեվրոպական արմատը կամ զուգահեռները: Ներկա պահին տեխնիկապես անհնար է պատշաճ հղումներ կատարել ու նշել բոլոր այն հեղինակներին, որոնք այս կամ այն կերպ անդրադարձել են քննարկվող նյութին: Կանխավ հայցելով ընթերցողի ներողամտությունը՝ կարծում ենք, որ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» (Հ.Ա.,ՀԱԲ), Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (Գ.Ջ.,ՀԼՊ. ն.շ), Գ. Ղափանցյանի «Հայոց լեզվի պատմություն, հին շրջան» (Գ.Ղ.,ՀԼՊ. հ.շ), «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» (ՀՀՇՏԲ), Ն. Հարությունյանի «ՈՒրարտական սեպագիր արձանագրությունների դիվան» (Н.А., КУКН) աշխատություններում հետաքրքրվողները կգտնեն սպառիչ հղումներ:

Անձնանուններ, դիցանուններ

1. *m Diuşini* _Իգանի երկրի արքաներից մեկի անունը, որ մենք ծագած ենք համարում հնդեվր. * dhes և g’en > դիւ + ծին նախաձևից՝ դիւցազն, դիցածին իմաստով: Չգիտես ինչու այս անունը Գ. Ջահուկյանը և ուրիշներ փորձում են կապել թրակացիների հետ (Գ. Ջ., Հ ԼՊ.ն.շ, էջ 435: Н. А., КУКН, стр. 480):

2. *mMurinu* Վելիկուխի-Գեղիք երկրի արքաներից մեկի անունը: Հաշվի առնելով, որ անձնանունները հաճախ դառնում են տեղանունների

[1] *К. Кушнарева, Некоторые соображения по поводу развития кармирбердской культуры. Հայաստանի հնագույն մշակույթը 3, Եր., 2003, էջ 33- 36:*

հիմք, զուգահեռների շարքում նշենք Շիրակի Մրեն և Ծղուկի Մուրց, Մորենի բնակավայրերի անունները: Ըստ այդմ կարելի է վերականգնել հնդեվրոպական *moro, *mor- s- նախաձևերը:

3. ^{m} *Qapurini* - Իգանի երկրի արքաներից մեկի անունը մենք կապում ենք Սյունիքի Գաբուռ Սահակ, Գաբուռ Վասակ անունների հետ (տե՛ս Ս. Օրբելյան, Ս.Պ.,էջ 172,174,177,207,255: Հ. Ա.,ԿՈՒՀ, էջ. 487):

4. ^{d} *Aniqu* – տեղական աստվածության անուն Զվարթնոցի արձանագրությունից: Այս դիցանունը մենք կապում ենք Անի քաղաքի, Անի ստերջա երկրի անունների հետ բխեցնելով հնդեվրոպական *Haniia նախաձևից (Գ. Ջ.,ՀԼՊ.ն.շ, էջ 111: Հ. Ա., ԿՈՒՀ, էջ. 478):

Տեղանուններ

Այստեղ վերը նշված գրականության հավելում ենք «Օտար աղբյուրները Հայաստանի մասին, N 1, Հունական աղբյուրներ, Ստրաբոն» (Ստրբն), Ն. Հարությունյանի «ՈՒրարտուի տոպոնիմիկան» (ՏՈ) աշխատությունները: Ցավոք, չկարողացանք օգտվել Հ. Կարագյոզյանի արժեքավոր ուսումնասիրություններից:

Տեղանունները բերվում են ուրարտագիտության մեջ ընդունված այբբենական կարգով և համարակալմամբ: Նախկինում կատարված նույնացումները նշվում են *- ով, իսկ մեր կողմից նոր առաջարկվողները + նշանով: Առայժմ հավաստի տեղադրություն չունեցող տեղանունները կրում են ? նշանը:[1]

1. ^{URU} *Aḫuriani asuni* - * Ախուրեանի ասված քաղաքը իր անունը թողել է Ախուրյան գետին: Այս նույնացումը ճիշտ համարելով հանդերձ մենք համաձայն չենք Հր. Աճառյանի առաջարկած ստուգաբանությանը: Գտնում ենք, որ բառի արմատը+ախոռ բառն է: Նույն արմատով տեղանունները տարածված են ողջ Հայկական լեռնաշխարհում: Հմմտ. նաև զոմ արմատով տեղանունները, + Կումայրի, + Գյումրի և Մակաղտու (ՀՀՇՏԲ, h.I, էջ119- 120,126,Գ. Ջ., Հ ԼՊ.ն.շ, էջ 445: Հ. Ա., ԿՈՒՀ , էջ. 494; ՏՈ, էջ. 47-48):

2. ^{KUR} *AniŠterga* + Անիստերջա երկիր, որ մենք առաջարկում ենք տեղադրել Անի քաղաքի շրջակայքում՝ ելնելով առաջին բաղադրիչից: Շիրակ գավառի տարածքում է տեղադրում նաև Ն. Հարությունյանը (Հ. Ա., ԿՈՒՀ, էջ. 496; ՏՈ, էջ. 30):

3. ^{m} *AŠṭu ḫinei KUR - ni* - * Աշտուխինի երկիրն, է որ նույնացնում են Աստախան գյուղի անվան հետ: Մենք առաջարկում ենք վերականգ-նել + Հաշտուհիմն, Հաշտաշեն, Աստվածաշեն ձևերը, որ աղավաղվելով միջնադարում դարձել է + Աշոտաց երկիր: Բոլորն էլ տեղադրվում են Շիրակ գավառում (ՀՀՇՏԲ, h.I, էջ 295, 342, Հ. Ա., ԿՈՒՀ , c.499, ՏՈ, c.49):

---

[1] *Նշված խնդիրները ավելի մանրամասն քննարկել ենք մեր՝ առայժմ անտիպ «Էբուհնի – Հայք» աշխատության մեջ:*

4. ^{URU}*Durubani* + Դարբնաց քաղաքն է Արագածի հյուսիս-արևմտյան փեշին՝ Կուլիանի երկրի կենտրոնը Շիրակում: Հաշվի առնելով Արթիկի, Հառիճի և Հոռոմի ուշ բրոնզիդարյան զարգացած մետաղագործական մշակույթը՝ Դուրուբանին ստուգաբանել ենք որպես դարբինների քաղաք (Հ.Ա.,ԿՈՒՀ, էջ. 503; ՊՈ, էջ. 76):

5. ^{URU}*Eraţeli-** Էրատեղի, Արատեղ քաղաքն է Իգանի երկրում:

6. ^{URU} *Eraţeli-uli-** Էրատեղի մյուս, նույնանուն քաղաք Իգանի երկրում: Այս երկու քաղաքների անունների հայկական կազմությունը հնարավոր է համարում Գ. Ջահուկյանը, իսկ մենք պնդում ենք, որ Իգանի երկրի Ախուրեան, Էրատեղի, Էրատեղի մյուս, Մակաղտուն տեղանունները հայկական ծագում ունեն և բանալի են Շիրակ գավառի Ախուրյան, Գյումրի և Կումայրի բառերի ստուգաբանման համար: Հմմտ. նույն Իգանի՝ Վանանդ գավառի Աքսեգոմս տեղանունը և ախոռ, գոմ արմատներով մյուս տեղանունները (Գ. Ջ.,Հ ԼՊ.ն.շ, էջ 440, 445, Հ. Ա., ԿՈՒՀ , էջ. 504, ՊՈ, էջ. 257):

7. $^{KUR/m}$ *Eriaḫi-** Էրիախի երկիրը նույնացրել են Շիրակ գավառի հետ, այնինչ Էրիախի՝ Արայի երկիրն ընդգրկել է Արայի դաշտն ամբողջությամբ: Ար-եր-էր հնչյունափոխությունը հաշվի առնելով՝ Էրիախի երկիրը տեղադրում ենք Արաքս-Երասխ գետի ավազանում և հարակից տարածքներում (ՀՀՇՏԲ, հ.II, էջ 368,342, Հ. Ա.,ԿՈՒՀ, էջ. 504,ՊՈ, էջ. 258-259):

8. ^{KUR} *Gulutai* + Գողոտա երկիրն է, որի անունը աղավաղված ձևով փոխանցվել է Գողգոթա վայրին՝ Արշարունիք գավառում: Ն. Հարությունյանն այս երկիրը տեղադրում է նույն վայրում (ՀՀՇՏԲ, հ.I, էջ 934, Հ.Ա., ԿՈՒՀ, էջ. 506; ՊՈ, էջ. 65-66):

9. ^{KUR} *Igani-* + Իգանի, Իգաց երկիրն է Վանանդ գավառում: Կենտրոնը Մակաղտունի քաղաքն էր: Հետագա դարերում «…Բուլղար Վղնդուր Վունդի գաղթականության պատճառով, որ այդ տեղերում բնակվեց, նրա անունով կոչվեց Վանանդ. և (մոտակա) գյուղերը նրա եղբայրների և սերունդների անուններով կոչվում են մինչ այժմ»: Այս հիշատակությունը Խորենացունն է: Էգածոր, Էգեճոր, Էգեպատ, Էգեպար, Էգիաթաշ, Էգնոց, Էքսբատ, Իգածոր և հատկապես Աքսեգոմս տեղանունները պահպանել են նախկին Իգա երկրի հիշատակը: Իգա երկիրը նույն տարածքում են տեղադրում նաև մյուս ուսումնասիրողները (ՀՀՇՏԲ, հ.II, էջ 325-326, 376, 506, Հ. Ա., ԿՈՒՀ, էջ. 509; ՊՈ, էջ. 87-88):

10. ^{KUR} *Išteluani* * Աստեղանի նշանավոր գյուղն է Շիրակում: Այս տեղանունը չպետք է շփոթել Աշտոլխինիի հետ: Մեկի արմատը * աստեղ-ն է, մյուսինը *հաշտ-ը (ՀՀՇՏԲ, հ.I, էջ 343,Հ.Ա.,ԿՈՒՀ,էջ. 511; ՊՈ,էջ.95-96):

11. ^{URU} *Maqaltuni* * Մակաղտունի, Մակաղուտ քաղաքն է Իգանի երկրում: Միջնադարում կոչվել է + Աքսեգոմս՝ Էգիս, Էքիս, Աքս անցումներով: Այս անվան հայկական կազմություն լինելը՝ փոխառյալ մակաղ ար-

մատով, հնարավոր է համարում Գ. Ջահուկյանը (Գ. Ջ.,Հ ԼՊ.ն.շ, էջ 445, H. A., КУКН, стр. 514; ТУ, стр. 132):

12. ^{m} *Quliaini KUR- ni* * Կուլիջան, Գյուլիջան գյուղի շրջակա երկիրն է Դուրուբանի կենտրոնով (H. A., КУКН, стр. 519; ТУ, стр. 117):

13. ^{URU} *Sirani* + Սիրանի, Շիրակ քաղաքն է Արգիշտիխինիլի-Արմավիրից հյուսիս-արևմուտք: Այս քաղաքը մենք նույնացնում ենք Երազգավորս՝ Շիրակավան քաղաքի հետ և գտնում ենք, որ սրանից է առաջացել Շիրակ գավառի անունը (ՀՀՇՏԲ , հ.II, էջ 210, H. A., КУКН, стр. 521):

14. ^{URU} *Şudala* ? քաղաք Իգանի և Էրիախի երկրների սահմանային շրջանում (H. A., КУКН, стр. 522; ТУ, стр. 236):

Սիմոն ՀՄԱՅԱԿՅԱՆ (ՀԱԻ)

ՇԻՐԱԿԸ ՄԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Շիրակը միջնադարում Մեծ Հայքի Այրարատ աշխարհի ութերորդ գավառն էր: Ավելի վաղ Շիրակի կազմում ընդգրկված է եղել նաև Արշարունիքը, որը զատվել էր Շիրակից որպես նորակառույց Երվանդաշատ մայրաքաղաքի արվարձան՝ Երվանդ արքայի կողմից: Շիրակը և Արշարունիքը միասին գրավում էին շուրջ 4955 կմ^2 տարածք:[1] Բացառված չէ, որ Շիրակ անունը ծագում է Արգիշթի Ա արքայի (մ.թ.ա. շուրջ 786-764 թթ.) տարեգրությունում հիշատակված Շերիազի (^{KUR}Seriazi) տեղանունից՝ երկիր, որը, սակայն, տեղադրվում է ոչ թե Շիրակի դաշտում, այլ հարևանությամբ. իր արշավանքներից մեկի ժամանակ Արգիշթին հիմնովին այրում ու ավերում է այս երկիրը:[2]

Ուրարտական արձանագրությունները Շիրակում հիշատակում են վեց իշխանություններ և ցեղապետություններ, որոնք միավորված էին Էրիախի անվանված թագավորության կազմում: Էրիախիի թագավորությունը մասն էր կազմում Լուշա- Քաթարզա-Վիտերուխի դաշնության, որը նկարագրում է նաև Մովսես Խորենացին, և որը պայմանականորեն այժմ անվանվում է «Շարայի ցեղամիություն»:[3] Վերջինս իր հերթին Վանի թագավորության հյուսիսային ամենահզոր ախոյանի՝ Էթիունի համադաշնու-

---

[1] *Անանիա Շիրակացի, Մատենագրություն (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի), Եր., 1976, էջ 296-297: Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Եր., 1963, էջ 40, 73-74:*

[2] *"Корпус Урартских клинообразных надписей" (այսուհետև՝КУКН), Եր., 2001, № 173, I, տող 7: Ընդունված տեսակետի համաձայն, սակայն, այս տեղանունը առնչվում է հյուսիս-կովկասյան Սիրաք ցեղի անվան հետ (Ն. Արոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., էջ 472 – 473: Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 74):*

[3] *Ս. Պետրոսյան, «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում (մ.թ.ա. VI – V դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ԼՀԳ), № 12, Եր., 1979, էջ 63-75:*

թյան մասն էր կազմում:[1] Եղած սեպագիր տվյալները (տե՛ս հավելվածը) հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Էրիախիի թագավորության քաղաքական կառուցվածքի, ունեցած բնակչության քանակի և տնտեսական կյանքի առանձնահատկությունների մասին: Խոսքս Սարդուրի Բ արքայի (մ.թ.ա. 764-735թթ.) տարեգրության մասին է:

Սարդուրին Էրիախի է արշավել ութ անգամ, որոնցից երեքը, կայացած մ.թ.ա. 749-742 թթ. ընթացքում, նկարագրված են առավել հանգամանորեն:[2] Ըստ այդ տվյալների՝ Սարդուրի արքան.

1. Կողոպտել է երկրի գլխավոր պաշտամունքային կենտրոնում գտնվող 150 տաճարապատկան գանձատները[3], որտեղ հավաքված էր՝ իր ասելով, Էրիախիի արքայի, նրա հոր ու պապի կուտակած հարստությունը: Ուշագրավ է, որ այս ամբարների մասին հիշողությունները վաղ միջնադարում, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, ձևակերպված էին որպես թևավոր խոսք. «Դու, ասում են, Շարայի որկորն ունես, բայց մենք Շարայի ամբարները չունենք[4]»: Տաճարապատկան գանձատների ենթակայությունն աստծուն, որպիսին էր Շարան[5] և արքային, վկայություն է թերևս այն մասին, որ երկիրը կառավարվել է աստվածապետական ռեժիմով[6] (թեոկրատիա), իսկ Էրիախիի արքայի նախնիների հիշատակությունը՝ որպես տիրակալների, վկայություն է այն մասին, որ մ.թ.ա. VIII դարում Շիրակը կառավարվել է հին ու ավանդական սկզբունքներով առաջնորդվող դինաստիայի կողմից:

2. Այս արշավանքներից երկուսի ընթացքում Սարդուրին Շիրակից գերեվարել է 9661 պատանի և 20481 կին: Եթե ենթադրենք կանանց այս թվաքանակի դիմաց նույնքան տղամարդկանց գոյությունը, ապա կունենանք շուրջ 41000թիվը: Այսինքն՝ այս երկու արշավանքների ընթացքում զոհված և գերեվարված մարդկանց քանակն անցել է 50000-ից, այսինքն՝ խոսքը շուրջ 5000 ընտանիքների մասին է:

3. Նույն արշավանքների ընթացքում Սարդուրին այս ընտանիքներից կողոպտել է 115 ուղտ, 2025 ձի, 23194 խոշոր եղջերավոր և 63420

---

[1] *Ս. Հմայակյան, Էրիունե երկիրը և «Վիտերուխե - Լուշա - Քաթարզա» դաշնությունը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (այսուհետև՝ ՇՊՄԺ), III գիտաժողովի նյութեր, Գյումրի, 1998, էջ 16-17:*

[2] *"Урартские клинообразные надписи"(այսուհետև՝ УКН), М., 1960., էջ 301-304:*

[3] *Այս ամբարները Սարդուրիի տարեգրությունում անվանված են ^{E}mu-ri-li (КУКН № 241 h, տող 27) հասկացության «տաճարի ամբարներ» բարգմանությունը առաջարկել է Ի. Դյակոնովը (И. Дьяконов, Жертвоприношения в Тейшебаини (УКН, 448), "Кавказо–Ближневосточный сборник" VIII, Тбилиси, 1988, стр. 67):*

[4] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Ա, ժբ:*

[5] *Ս. Պետրոսյան, Հացազգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, № 14, էջ 157 – 294: Ս. Պետրոսյան, «Շիրակայ «ամբարք»-ի շուրջ», ԼՀԳ, Եր., 1982, № 8, էջ 72-76:*

[6] *Ս. Հմայակյան, Էրիախեն՝ աստվածապետություն, ՇՊՄԺ, II գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 12-13:*

մանր եղջերավոր կենդանի, այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիք չէ, որ ունեցել է ձի կամ ուղտ: Սակայն միջին հաշվով յուրաքանչյուր ընտանիք կարող էր ունենալ 4-5 խոշոր եղջերավոր և 12-13 մանր եղջերավոր անասուն: Սա բավարար էր բարեկեցիկ կյանքի համար նկատի ունենալով, բնականաբար, անհրաժեշտ արոտավայրերի և համապատասխան կառույցների առկայությունը, որոնցից վերջիններիս գոյության մասին կան նաև տպավորիչ տեղագիտական ու հնագիտական տվյալներ:[1] Խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների այս առատությունը վկայում է թերևս երկրի տնտեսությունում գյուղատնտեսության գերակշռության մասին: Ձիերի համեմատաբար մեծ քանակը վկայում է «հեծյալների դասի» գոյության մասին, որոնք և տասնամյակներ շարունակ կարողանում էին պահպանել թագավորության գոյությունը՝ պատերազմելով Վանի արքաների դեմ: Ուղտերի գոյությունն այս ջրառատ երկրում վկայություն է առևտրական դասի առկայության մասին: Այն դեպքում, երբ ավարի մեջ մետաղի, տարբեր առարկաների, բարձրորակ գործվածքի բացակայությունը խոսում է լեռնարդյունաբերության և արհեստների ոչ շատ բարձր մակարդակի մասին: Օրինակ՝ Վանի արքաներին հարևան Դիաուեխե երկրի հարկը կազմված էր հիմնականում ոսկուց, արծաթից և պղնձից, իսկ Կումախայի հարկը՝ նաև բարձր արվեստով կերտված առարկաներից:[2] Սա էլ իր հերթին վկայություն է քաղաքային կյանքի անաշխուժության մասին, թերություն, որը ձգտում էր վերացնել Սարդուրին՝ այստեղ հիմնելով բերդավաններ, որոնցից մեկը ուսումնասիրված է հայ-ամերիկյան հնագիտական արշավախմբի կողմից:[3] Երկրի թեոկրատ բնույթն ինքնին վկայում է այստեղ զորեղ քրմական դասի գոյությունը:

Երկրի էթնիկական կազմի մասին հստակ տվյալներ չկան: Հիմնական սկզբնաղբյուրը տեղանունների՝ Շիրակ, Էրիախի և գետանունների՝ Երասխ (Արաքս), Ռախ, Ախուրյան ստուգաբանությունն է, որոնք միահամուռ վկայում են Շիրակի բնակչության կազմում առկա հզոր հնդեվրոպական շերտի գոյության մասին:[4]

Ուրարտա - Էրիախյան ընդհարումներն սկսվել են թերևս Իշպուինիի (մ.թ.ա. շուրջ 825-810 թթ.) և Մինուայի (մ.թ.ա. շուրջ 810-786 թթ.) համատեղ գահակալության տարիներից, երբ որոշվում էր, թե այս երկուսից

---

[1] *Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975.*

[2] *КУКН № 53, № 174 Ю 1.*

[3] *R. Badaljan, Ch. Edens, R. Gorny, P. Kohl, D. Stronach, A. Tonikjan, S. Hmayakjan, S. Mandrikjan, M. Zardarjan, Preliminary report on the 1992 excavations at Horom, Armenia, "Iran"XXXI, 1993, էջ 1-24:*

[4] *Г. Капанцян, Историко – лингвистические работы, том 2, Ер., 1975, стр. 67-69; Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 74,78: Ս. Հմայակյան, Թրակական ցեղերը Շիրակում և Արթիկի դամբարանադաշտը, Հայաստանի հանրապետությունում 1991-1992թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզեր, Եր., 1994, էջ 22 – 24 և այլն:*

ում է պատկանելու գերիշխանությունը Հայկական լեռնաշխարհում: Հարցը լուծվեց մ.թ.ա. 9-րդ դ. վերջին քառորդին կայացած Անաշեի (Ալաշկերտ) ճակատամարտում, երբ «Լուշա - Քաթարզա - Վիթերուխե» դաշնության և օգնության եկած Էթիունյան մյուս իշխանությունների ուժերը ծանր պարտություն կրեցին Վանի տիրակալների բանակներից:[1] Այնուհետև արշավանքներն այս ուղղությամբ շարունակեցին Արգիշթի, Սարդուրի և Ռուսա Բ (մ.թ.ա. 735-714 թթ.) արքաները: Էրիախիի թագավորությունը թերևս վերացրեց Սարդուրին՝ այն դարձնելով մի պարզ գավառ Վանի թագավորության կազմում: Սրան նա կարողացավ հասնել՝ մարդաթափ անելով Շիրակը իր ձեռնարկած ութ արշավանքների ընթացքում:

Մ.թ.ա. 714 թ. սկսվում են կիմերական արշավանքները հյուսիսից և Սարգոն Երկրորդի արշավանքները հարավից:[2] Չնայած Ռուսա արքայի կրած պարտությունները քիչ չէին թե՛ հյուսիսում, թե՛ հարավում՝ Վանի թագավորությունը չի կործանվում, ավելին, այս թոհուբոհի մշուշից այն հառնում է որպես կենսունակ և ամուր մի կազմավորում, սկսվում է երկրի մշակութային ծաղկման մի նոր և ուրույն դարաշրջան: Հիշենք մասնավորապես, որ մեզ հայտնի և հնագիտորեն ուսումնասիրված շատ ուրարտական քաղաքներ, ինչպես օրինակ՝ Թեյշեբաինին (Կարմիր բլուր), Բաստամը (Ռուսախինիլի), Այանիսը (Ռուսախինիլի) և այլն հիմնվել են մ.թ.ա. VIII դ.:[3] Շիրակում էլ հենց մ.թ.ա. VII-VI դդ. է ծաղկում ապրում ու զարգանում տարածաշրջանի ուրարտական ամենատպավորիչ բերդաքաղաքներից մեկը, որը հայտնի է այժմ «Հոռոմի ամրոց» անվամբ:

Այս «հրաշքի» պատճառներից կարևորագույնն էր թերևս այն, որ ճակատագրական պահին, երբ կործանում էր սպառնում լեռնաշխարհի բոլոր թագավորություններին, արդեն կամավոր՝ նրանք միավորվում են Վանի արքաների շուրջը՝ հրաժարվելով իրենց քաղաքական և մշակութային հակամարտությունից, և ներքին խաղաղությունը տևում է շուրջ 100 տարի: Իրադրությունը փոխվում է մ.թ.ա. VII դ., երբ հեգեմոնիան Մերձավոր Արևելքում անցնում է մարերին և ապա՝ պարսիկներին: Հայաստանում ձևավորվում է Երվանդունիների թագավորությունը (մ.թ.ա. VI-II դդ.):

Վաղ միջնադարում Շիրակին և Արշարունիքին տիրում էին հիմնականում Կամսարական իշխանները: Սակայն այստեղ կալվածքներ ունեին նաև Դիմաքսյանները, Սահառունիները և Գնունիները: Այնուհետև

---

[1] *ՍԿՀ № 31, № 32, № 34.*

[2] *F. Thureau – Dangin, Une relation de la huitiйme campagne de Sargon, Paris, 1912; А. Иванчик, Киммеруйцы и Урарту накануне восьмого похода Саргона II, "Вестник древней истории", 1990 № 3, стр. 3-19.*

[3] *Б. Пиотровский, Кармир-блур, Ленинград, 1970; W. Kleiss, Bastam, 1 Ausgrabungen in den urartaischen anlagen 1972-1975), Berlin, 1979, W. Kleiss, Bastam, 2 (Ausgrabungen in den urartaischen anlagen 1977-1978), Berlin, 1988, "Ayanis I" (Ten Years' Excavations at Rusahinili Eiduru – kai, 1989-1998) edited by A. Zilingiroğlu and Mirjo Salvini, Roma, 2001.*

Շիրակն անցնում է Բագրատունիներին՝ դառնալով Հայաստանի ամենակարևոր երկրամասը, և ապա՝ Զաքարյաններին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Էրիախիի հիշատակությամբ սեպագիր տեքստեր

1. Կուլիջանի (Կուլիանի) արձանագրությունը: (ԿՈՒՀ, № 178): Գտնվում է Արագած լեռան հյուսիս - արևմտյան լանջին, Գյումրի քաղաքից ոչ հեռու նախկին Կուլիջան գյուղի մոտ, Կարկաչան գետի ափին, ժայռի մեջ փորված որմնախորշի (նիշա) մեջ:

Սեպագիր արձանագրության թարգմանությունը. «Խալդին արշավեց յուր զենքին ենթարկեց Կուլիանի ցեղի երկիրը, թեքեց (երկիրն այդ) Արգիշթիի առջև: Արգիշթին ասում է, Խալդին առաջնորդում էր. գրավեցի Կուլիանի երկրի Դուրուբանի քաղաքը»:

2. Մարմաշենի արձանագրությունը: (ԿՈՒՀ, № 179): Գտնվում է Գյումրիից հյուսիս-արևմուտք՝ Մարմաշենի մոտ, մի հզոր ժայռի վրա, վերևում:

Սեպագիր արձանագրության թարգմանությունը «Խալդյան մեծությամբ Արգիշթին ասում է. գրավեցի Էրիախի (ցեղի) երկիրը, գրավեցի Իրդանիունի քաղաքը[1] մինչև Իշկիգուլու[2]»:

---

1. Իրդանիունի քաղաքի տեղադրության մասին գոյություն ունի երկու հիմնական իրարամերժ կարծիք. առաջին տեսակետի համաձայն՝ քաղաքը դիտարկվում է, որպես Քաքարգա իշխանության կենտրոն, նույնացվում է հետագայի Արտվին քաղաքի հետ և տեղադրվում է Ճորոխի գետաբերանին հարող տարածքներում, ոչ հեռու Սև ծովի ափեզերքից (ԿՈՒՀ, էջ 510): Մյուս տեսակետի համաձայն՝ Իրդանիունին Էրիախիի մայրաքաղաքն է եղել և տեղադրվում է այժմյան Գյումրիի տարածքում (Հովհաննես Կարագոզյան, Կումայրի /ըստ սեպագիր և այլ աղբյուրների/, ՇՊՄԺ, հանրապետական II գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 13-14):

2. Իշկիգուլու իշխանությունը տեղադրվում է Շիրակից հյուսիս՝ պատմական Աշոցք գավառում:

Էրիախին Արգիշթիի տարեգրությունում

Արգիշթիի թագավորության երկրորդ տարի, 785 թ. մ.թ.ա.: (ՈՒՀ, № 247, ԿՈՒՀ, № 173, I):

Սեպագիր արձանագրության թարգմանությունը «Նույն այդ տարին կրկին զինվորներ հավաքեցի: Արշավեցի Դիաուեխի[1]: Դիաուեխի (ցեղի) երկրի արքային (կրկին) արքա կարգեցի (?): Գրավեցի Շերիազի[2] (երկիրը): Քաղաքներն այրեցի, ամրոցներն ավերեցի, հասա մինչև Բիանի[3] (երկրի) հարևան Փութի[4] քաղաքը, Խուշանի[5] (երկրին) հաղթեցի, հետո Թարիուն (երկրին հաղթեցի): Արշավեցի Զաբախա,[6] գրավեցի զաբախացիների (երկիրը), հասա մինչև Ուզինաբիքարնա քաղաքը մինչև Սիրիմութարա լեռը,[7] այնուհետև Իգանի (երկրի) Մակալթունի քաղաքը հարկատու դարձրի, եկա (հասա) Էրիախի երկիրը»:

---

1. Դիաուեխին իշխանությունների հզոր դաշնություն էր Եփրատ գետի ակունքները և Ճորոխ գետի միջին հոսանքն ընդգրկող տարածքում, համապատասխանում է պատմական Հայաստանի Տայք աշխարհին (ԿՈՒՀ, էջ 503):

2. Շերիազին իշխանություն էր Շիրակից արևմուտք՝ Դիաուեխիի հարևանությամբ (ԿՈՒՀ, էջ 523):

3. Բիանի երկիրը տեղադրվում է Արաքս գետի ակունքների մոտ՝ պատմական Հայաստանի Բասեն գավառում (ԿՈՒՀ, էջ 501):

4. Փութին քաղաք էր Շերիազիի կազմում (ԿՈՒՀ, էջ 518):

5. Խուշանի երկիր էր Դիաուեխեի հարավ - արևմտյան կողմում (ԿՈՒՀ, էջ 508):

6. Զաբախա երկիրը տեղադրվում է Չալդր լճից (Ծովակն հյուսիսոյ) հյուսիս-արևմուտք, համապատասխանում է պատմական Զավախք գավառին (ԿՈՒՀ, էջ 530):

7. Սիրիմութարան լեռ է Չալդր լճից ոչ հեռու (ԿՈՒՀ, էջ 521):

Նույն երկրորդ տարվա իրադարձությունների նկարագրությունը այլ խմբագրությամբ, Վանի Սուրբ Սահակ եկեղեցում գտնված կոթողի (ստելա) վրայի արձանագրությունից. ՈՒՀ, էջ 277-278, ԿՈՒՀ № 174, B 1:

Տարեգրության այս հատվածում կրկին պատմվում է Դիաուեխե կատարած Արգիշթիի վերոհիշյալ արշավանքի մասին և ապա հիշատակվում է Էրիախին հետևյալ կոնտեքստում.
Սեպագիր արձանագրության թարգմանությունը «Արգիշթին ասում է, արքաներին, որոնք Դիաուեխե եկան օգնության երեք տարի (ջարդեցի), գրավեցի Լուշա երկիրը[1], Քաքարզա[2] երկիրը, Էրիախի երկիրն (ու երկիրը) Գուլութախի: Գրավեցի Վիտերուխի երկիրը[3] և հասա մինչև Աբունի:[4] Լուշայի արքային կին դարձրի, Իգանիի[5] (արքային) ստրկացրի, թողեցի (սակայն) իր տեղում. հարկ տվեց (նա) Արգիշթիին»:

---

1. Լուշան «Շարայի ցեղամիության» իշխանություններից մեկն էր, տեղադրվում է այժմյան Հայաստանի հանրապետության Լոռվա մարզում (Հ. Կարագոզյան, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 160):
2. Քաքարզա իշխանությունը նույնպես մասն էր «Շարայի ցեղամիության», համադրվում է պատմական Կղարջք գավառի հետ: Տեղադրվում է Շիրակից հյուսիս-արևմուտք՝ Ճորոխ գետի հովտում: Վաղ միջնադարում Կղարջքն ընդգրկված էր Գուգարաց բդեշխության կազմում: Կղարջքի իշխանը ժառանգաբար կրում էր «Տանուտեր Կղարջքի» տիտղոսը (Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», 1963, էջ, 59):
3. Վիտերուխի իշխանությունը մասն էր «Շարայի ցեղամիության», տեղադրվում է այժմյան Ալաշկերտի շրջանում (ԿՄՀ, էջ 528):
4. Աբունի իշխանությունը համադրվում է պատմական Հայաստանի Հաւունիք գավառի հետ, տեղադրվում է Շիրակից հարավ-արևմուտք՝ Արաքսի աջ ափին (ԿՄՀ, էջ 493):
5. Իգանին լեռնաշխարհի խոշոր ու հզոր թագավորություններից մեկն էր: Տեղադրվում է Չալդր լճից հյուսիս-արևմուտք ընկած տարածքներում: Էթիունի երկրի հեգեմոններից մեկն էր: Մ.թ.ա. VIII դարում Իգանիի տիրակալ Դիուծինին կրում էր «Էթիուխիի արքա» տիտղոսը (ԿՄՀ, էջ 493, 509):

Էրիախի երկիրը Սարդուրի Բ արքայի տարեգրությունում

Իրադարձություններ, որոնք կատարվել են ոչ վաղ, քան մ.թ.ա. 749 թ. և ոչ ուշ մ.թ.ա. 747 թ.-ից (ՍՄՀ, էջ 301-302, ԿՄՀ, № 241 C):
Սեպագիր արձանագրության թարգմանությունը «Խալդին արշավեց, իր զենքին ենթարկեց Էրիախի (ցեղի) երկրի արքային, հպատակեցրեց Աբիլիանիխի[1] (ցեղի) երկիրը, թեքեց նրանց Սարդուրի Արգիշթորդու առջև: «Խալդին զորեղ է, Խալդյան զենքը զորեղ է»[2]: Խալդյան մեծությամբ արշավեց Սարդուրի Արգիշթորդին. Սարդուրին ասում է. արշավեցի Էրիախի. Էրիախի երկիրն (այն) մեկ օրում գրավեցի: Տաճարի ամբարները, որոնք կառուցել էին հայրն ու պապը (արքայի), որտեղ (և իրենց) ունեցվածքն էր պահված, որ երբեք արքաները (ուրիշ) չկողոպտեն թալանեցի: Խալդյան հրամանով տիրական ես 350 ամբար գրավեցի, ավար առա, մարդ, կին, անասուն, հարստություն այնտեղից տարա, քաղաքներն այրեցի, երկիրն ավերեցի, մարդ, կին տարա Թիայնիլի: Սարդուրին ասում է…»:

---

1. Աբիլիանեխի երկիրը համապատասխանում է պատմական Հայաստանի Աբեղյանք գավառին, տեղադրվում է Արշարունիքից արևմուտք՝ Արաքսի ափին:
2. Ուրարտական արքաների ռազմակոչն է:

Իրադարձություններ, որոնք կատարվել են ոչ վաղ քան մ.թ.ա. 747 թ. և ոչ ուշ մ.թ.ա. 747 թ.-ից (ՍՄՀ, էջ 302-303, ԿՄՀ, № 241 E):
Սեպագիր արձանագրության թարգմանությունը. «Սարդուրին ասում է. նույն այդ տարին երրորդ անգամ արշավեցի Էրիախի, երկիրը գրավեցի, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը կողոպտեցի, կին, մարդ տարա Թիայնիլի, ամրոցներ այստեղ կառուցեցի: Երկիրն (այն) երկրիս կցեցի: Խալդյան մեծությամբ Սարդուրին ասում է, ահա ինչ ավար այնտեղ արեցի. 6436 դեռահաս այնտեղից տարա, 15553 կին քշեցի, ընդամենը 21989 մարդ. ոմանց սպանեցի, այլոց ողջ տարա, 1613 ձի ես քշեցի, 115 ուղտ, 16529 խոշոր եղջերավոր կենդանի, 37685 մանր եղջերավոր կենդանի տարա: Սարդուրին ասում է. Խալդիի համար այս առնական գործերը մեկ տարում արեցի»:

Իրադարձություններ, որոնք կատարվել են ոչ վաղ քան մ.թ.ա. 745թ. և ոչ ուշ մ.թ.ա. 742թ.-ից (ՍՄՀ, էջ 303, ԿՄՀ, № 241 B):

Մեսպագիր արձանագրության թարգմանությունը. «Նույն այդ տարին երրորդ անգամ ես զորքեր ուղարկեցի Էրիախի: Երկիրը նրանք գրավեցին, քաղաքները այրեցին, ավերեցին, կողոպտեցին, մարդ, կին Բիայնիլի քշեցին: Խալդյան մեծությամբ Սարդուրին ասում է. ահա ինչ ավար այնտեղ արեցի. 3225 դեռահաս այնտեղից տարա, 4928կին, ընդամենը 8153 մարդ, ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա: 412 ձի, 6665 խոշոր եղջերավոր անասուն, 25730 մանր եղջերավոր անասուն (տարա): Սարդուրի Արգիշթորդին ասում է Խալդիի համար այս առնական գործերը մեկ տարում արեցի»:

Իրադարձություններ, որոնք կատարվել են ոչ վաղ քան մ.թ.ա. 742թ. և ոչ ուշ մ.թ.ա. 739թ.-ից (УКН, էջ 303, КУКН, № 241 F):

Մեսպագիր արձանագրության թարգմանությունը. «Խալդյան զորությամբ Սարդուրի Արգիշթորդին ասում է. անցյալ ամսին tarnuni զինվորներին հավաքեցի, աղոթեցի Խալդիին[1], Թեյշեբային[2], Շիվինիին[3], Բիայնիլիի[4] աստվածներին: Տիրական մեծությամբ…օտար երկրներում լսեցին ինձ աստվածները: Սարդուրին ասում է. ուղևորվեցի Էթիունի… երբ այդ արեցի Էթիունիի առիթով հետո հպատակեցրի Կուրիանիին հարևան Էրիախի երկիրը, ուղևորվեցի Իգանի: Խալդին արշավեց, իր զենքին ենթարկեց Իգանի երկրի արքա Կապուրիին: «Խալդին զորեղ է, խալդյան զենքը զորեղ է»: Սարդուրին արշավեց: Սարդուրին ասում է. 35 ամրոց, 200 բնակավայր մեկ օրում գրավեցի: Ամրոցներն ավերեցի, քաղաքներն այրեցի, երկիրը կողոպտեցի, մարդ, կին այնտեղից տարա Բիայնիլի: Սարդուրին ասում է. նույն ճամփով արշավեցի Բուզունիա[5] երկիր, Ալկանիա (քաղաք), Ծուդալիա[6] (քաղաք): Ամրոցներն ավերեցի, քաղաքներն այրեցի, երկիրը կողոպտեցի (կերա): Վերադարձիս ուղևորվեցի Էրիախի, քաղաքներն այրեցի, մարդ, կին այնտեղից տարա, այնտեղից վերադարձա, ուղևորվեցի դեպի Իշտելիուանի, Կաղիանի[7], Աբունի երկիրն (այն և) Աբիլիանեխի: Սարդուրին ասում է. բանակիս ծարավը հագեցրի…»:

---

1. Խալդին Վանի թագավորության գլխավոր աստվածն է:
2. Թեյշեբան Վանի թագավորության բնության տարերքի աստվածն է:
3. Շիվինին Վանի թագավորության արեգակի և արդարության աստվածն է:
4. Բիայնիլին Ուրարտու երկրի ինքնանունն է:
5. Բուզունիան երկիր էր, որը գտնվում էր Իգանիի և Էրիախիի միջև:
6. Ալկանիան և Ծուդալիան քաղաքներ են Բուզունիայում:
7. Իշտելիուանին և Կաղիանին երկրներ են Էրիախիի հարևանությամբ՝ Էրիախիից թերևս հարավ-արևելք:

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ, ԳՊՄԻ)

*ԱՍ *ԱՐՄԱՏՈՎ ԲԱՌԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հնդեվրոպական նախալեզվի *ans-/Hṇs- արմատից ծագած մի շարք բառեր կան հայերենում, որոնք իրենց արմատակիցներն ու իմաստաբանական երկվորյակներն ունեն ազգակից լեզուներում: Այս տեսանկյունից ուշագրավ են խեթ. ḫaššu «արքա», ավեստ. ahū-«տեր», ahura «տիրակալ, տեր, իշխող», Ahura-Mazdā «Տեր իմաստուն», «Արամազդ», հին հնդ. asura- «աստվածություն, ոգի», հին իսլ. ass «աստված» բառերը:[1]

Հ.-ե. *ans-/*Hṇs- նախաձևից հայերենն օրինաչափ կերպով ունենալու էր **աս/*հաս* արմատը, որովհետև հ. -ե. *-ns-> հայ. –*ս* (հմմտ. հ.-ե.

---

[1] *Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II,Тб., 1984, стр. 750.*

*mens-> *ա-միս>ամիս):[1] *Աստուած* բառն ստուգաբանելու բազմաթիվ փորձեր են արվել:[2] Բայց հայագետներից միայն Կ. Կոստանյանցն ու Գ. Ջահուկյանն են նրա *աս*- բաղադրիչը առնչել իրանական Ahura-Mazdā դիցանվան առաջին բաղադրիչի հետ: Ընդ որում, եթե Կ.Կոստանյանցը նրա հիմքում տեսնում էր հին հնդկերեն as «է» բառը,[3] ապա Գ. Ջահուկյանը,հստակեցնելով դրանց փոխհարաբերությունը,հայ. **աս*-ի, իրան. ahura-ի և հին հնդկ. asura-ի համար մատնանշում էր հ.-ե. *ans- նախաձևը:[4]

Վերջին մոտեցման ճշմարտացիության մասին են խոսում գրաբարյան *հաստիչ* բառը և միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում հիշատակված **աս* արմատով մի շարք բառեր: Դրանց շարքն է, մեր կարծիքով, դասվում նաև Կարնո բարբառի Գյումրու խոսվածքում այսօր էլ գործածական *աս-սան* բառը: Ասվում է. «Ասսանեն գտնի /գտնիս/գտնին»,«Ասսանից կգտնի /կգտնիս/կգտնին», այսինքն՝ «Աստծուց կստանա /կստանաս /կստանան իր /իրենց պատիժը»: *Ասսան* բառի կրկնակի *ս*-երը, ցույց են տալիս, որ այս բարդ բառը բաղկացած է **աս-սան* բաղադրիչներից: Սրանցից առաջինը «Տեր» («Աստված») է նշանակում, իսկ երկրորդը լինելու է հնագույն հայերենի **սան* «ձեռք» բառը: Այն առկա է հայերեն *տասն* (որից՝ *տասանց, երկուտասան* և այլն) և *քսան* բառերում: Սրանցից *տասն*-ը ծագում է հ.-ե *dek'm- ձևից, որի համար ենթադրվում է *dṵe-ḱm̥- «երկու ձեռք» նախաձևը («ձեռք»//«հինգ մատ»> «հինգ». «տասն»< «երկու ձեռք»), իսկ *քսան*-ը նշանակում է «երկու տասնյակ»:[5] *Սան «ձեռք» արմատի երբեմնի գոյությունը հնարավոր է դարձնում *Ասսան<*Աս-սան* բառն ստուգաբանել «Տիրոջ ձեռք», «*Ասի ձեռք» նշանակությամբ, իսկ վերոհիշյալ դարձվածքը հասկանալ «Տիրոջ ձեռքից կստանա /կստանաս/կստանան իր/իրենց պատիժը» իմաստով:

**Աս* «Տեր» կոչված աստծու հայոց հնագույն գերագույն աստվածը լինելու մասին են խոսում նրա անվան հետ արմատակից հայերեն հետևյալ բառերը. *աստեալ* «հաստատամիտ», «զորավոր» (կազմված **աս*- արմատից -*տ*- ածականով և -*եալ* վերջածանցով), *աստեւոր* «զորավոր», «ճշմարիտ» (կազմությամբ հիշեցնում է *կարեւոր, ունեւոր, տարեւոր* բառերը), *ասեւան* «գլուխ» (հմմտ. *երկեւան, հոտեւան, օթեւան* բառերը), *ասվե-*

---

[1] *Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Եր.,1971, էջ 157: Ամիս-ի արմատակից բառերից են հին հնդկ. mās «լուսին, ամիս», հին պարս. māha «ամիս» (նույն տեղում):*

[2] *Գ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 15-19: Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 280-281: Г. Меликишвили, К чтению одного места в летописи урартского царя Аргишти I, "Переднеазиатский сборник. История и философия стран древнего Востока", М., 1979, стр. 171-176; Վ. Համբարձումյան, Հնդեվրոպական արմատի տարբերակայնությունը և հայերեն Աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), թիվ 3, 2002, էջ 242-259:*

[3] *Կ.Կոստանեանց, Հայոց հեթանոսական կրօնը, Վաղարշապատ, 1879, էջ 14:*

[4] *Գ. Ջահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, ՊԲՀ, թիվ 1, 1986, էջ 52:*

[5] *Հ. Աճառյան, նշվ. աշխ.,հ. IV, էջ 378: Т. Гамкрелидзе, В. Иванив, նշվ. աշխ., հ. II, էջ 847:*

բուս «իշխան», «գլուխ»:[1] *Ասվերուս*-ի գրության ձևը՝ բառամիջյան *վ*-ով (ոչ թե *ու*-ով),[2] վկայում է, որ գործ ունենք **աս* և **վեր* արմատներից բաղկացած բարդ բառի հետ (հմմտ. *զառիվայր, զօրավար, ընդվայրաբան, Խաչ-վերաց* և այլ բարդ բառերի գրության ձևը՝ բառամիջյան *վ*-ով): *Ասվերուս* <*աս-վերուստ* (?): Վերջնաձայն *–ս*-ի բացակայությունն այս բառում կարելի է բացատրել ձեռագրական բացթողումով:

*Աս գերագույն աստվածը՝ որպես «գլուխ» և «զորավոր» (հմմտ. *գլուխ* բառի նաև «իշխան, պետ, առաջնորդ, գլխավոր» նշանակությունները), օժտված էր լինելու գերագույն աստվածներին բնորոշ արարչագործական գործառույթով: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նախ և առաջ *հաստիչ* բառը: Գրաբարում *հաստիչ* նշանակում էր «ստեղծիչ, արարիչ», «նույնպէս ստուգաբանի եւ անունս Աստուծոյ»:[3] *Հաստիչ* <**հաս-ս-իչ*, որտեղ առկա է *-իչ* վերջածանցը (հմմտ. *Գրիչ* Որմզդի//Տիր աստված),[4] իսկ *–ս*-ն աճական է՝ առկա հայերեն բազմաթիվ բառերում: *Հաստիչ*-ի արմատակիցներից են նաև *աստել* «կազմել» բառը և ուրարտական սեպագրության լեզվի ašt-//* *աստ*-«դարձնել, անել» բայական հիմքը:[5] Այս վերջին հասկացությունները ևս հայոց վաղագույն գերագույն *Աս աստծուն վերագրելիս, հանձին նրա կարելի է տեսնել այնպիսի մի արարիչ աստծու, ինչպիսին էր նույնարմատ անուն կրող իրանական Ահուրա-Մազդան:

Վաղագույն *Ասը, Ահուրա-Մազդայի նման կարող էր նաև լուսեղեն էությամբ աստված ընկալվել: Դրա վկայությունն է քրիստոնեության մեջ սրբագործված *Աստուած*<**Աս-տիւ-ած* բառը: Սրա առաջին բաղադրիչը *Աս աստծու անունն է, իսկ երկրորդը, ըստ Գ.Ջահուկյանի, կարող է նույնը լինել *տիւ* բառի հետ:[6] *Տիւ* նշանակում է«ցերեկ, մասն աւուր յայգուէ ցերեկոյ լուսաւորեալ յարեգակնէ»:[7] *Աս-տիւ-ած*>*Աստուած* բառում *տիւ*->*տու*- հնչյունափոխության տեսանկյունից հմմտ. *տիւ*>*տու(ը)նջեան*:

Հայ. *տիւ*-ի հ.-ե. *diu̯- «օր» նախաձևի հիմքում հ.-ե. *dei- «փայլել, լուսավորել» արմատն է:[8] Թե մեր նախնիների կյանքում լույսի, մանավանդ արեգակնային լույսի պաշտամունքն ինչքան կարևոր է եղել, վկայում են այսօր էլ կենսունակ այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «Քարի լույսը» և «Աչքդ լույսը»: Այս առթիվ Մ.Աբեղյանը գրում է. «Ժո-

---

[1] *Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Ամալյանի, Եր., 1975, էջ 33-34:*

[2] *Նույն տեղում, էջ 34:*

[3] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.II, Եր., 1981, էջ 56, Հ.Աճառյան, նշվ.աշխ., հ.I, էջ 565:*

[4] *Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, Եր., 1983, ճԸ, 778:*

[5] *Բառգիրք հայոց, էջ 34: И. Мещанинов, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, стр. 64.*

[6] *Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 52:*

[7] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, էջ 879:*

[8] *Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. IV,էջ 410:*

ղովուրդը սովորաբար աղոթում է վաղ առավոտյան և իր աղոթքներում դիմում է ավելի շատ արշալույսին, քան արևին»:[1] Ապա, «լույսը» հայերենում շատ է օգտագործվում «ուրախություն» իմաստով...«Լույսն օգտագործվում է նաև գիտության, իսկ խավարը՝ տգիտության իմաստով»:[2]

Ըստ երևույթին, մեր հեռավոր նախնիները ենթադրում էին, որ գերագույն և արարիչ աստված *Ասը նախ և առաջ ստեղծել էր լույսը: Այլ կերպ չի կարելի բացատրել այն փաստը, որ հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսվա և յուրաքանչյուր տարվա առաջին օրը, ուրեմն, նաև տիեզերաստեղծման տարվա առաջին օրը կոչվում էր *Արեգ*:[3] Այս օրանունը ոչ թե «արեգակ» է նշանակում, այլ «լույս», որից էլ՝ *արեգակն* «արեգի աչք»,[4] այսինքն՝ «լույսի աչք», «լույսի աստծու աչք»: Մեր նախնիների առասպելաբանական պատկերացումների համաձայն իրենց գերագույն աստծու՝ *Ասի կողմից տիեզերաստեղծման գործընթացը լույսի արարումով սկսելու հանգամանքը իր դերը պետք է խաղացած լիներ այն բանում, որ առաջին քրիստոնյա հայերը *Ասի *Աստուած* (<*Աս-տի-ած) անուն-մակդիրն էին ընտրել որպես քրիստոնեության Հայր Աստծու անուն: Լույսը կրող աստվածը համարվել է նաև արեգակնային աստված: Այդ կերպ է ըմբռնվել, օրինակ, իրանական Ահուրա-Մազդան, որի անունը արևելաիրանական մի շարք լեզուներում վերածվել է «արեգակ» նշանակող բառերի:[5] Ըստ այսմ, *Աստուած<*աս-տի-ած* դիցանվան (դիցական մակդիրի) երրորդ բաղադրիչը մենք համարում ենք *Աս գերագույն աստծու լուսակիր լինելու, արեգակնային լույսը կրելու արտահայտությունը և այն նույնացնում հին հայերենի *-ատ//*-ած*, վերջածանցի հետ (Հմմտ.*արգատ, արմատ, խանդաղատ, խանճատ, կնատ*):[6] Սրա-**ած* տարբերակի երբեմնի գոյության մասին են խոսում այնպիսի հնագույն և սրբացված լեռնանուններ, ինչպիսիք են *Արագածը* և *Արարատը*:[7] *Արագած* կոչվում էր նաև հայոց հին տոմարի ամսվա 20-րդ օրը, իսկ *Արարատ* լեռան մյուս անունով *Մասիս* էր կոչվում նրա 18-րդ օրը:[8] *Արարատ*-ի *Արարած* տարբերակը

---

[1] *Մ. Աբեղյան, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 38:*

[2] *Նույն տեղում, էջ 39:*

[3] *Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 78:*

[4] *Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ. I, էջ 310-311:*

[5] *В. Топоров, Мазда, Мифы народов мира, т. II, М., 1988, стр. 89.*

[6] *Гр. Капанцян, Историко-лингвистические работы, Ер.,1956, стр. 351, 360.*

[7] *Ս. Պետրոսյան, «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, թիվ 12, էջ 69-70: Նույնի, Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 197-198: Ըստ երևույթին, վերջածանցի երկու տարբերակներից հենց -ած-ն է կիրառվել պաշտամունքային որորտի հասկացություններ նշող բառեր կերտելիս:*

[8] *Հայոց հին տոմարի Ավելյաց ամսվա օրերի առնչությամբ Ղ.Ալիշանը գրում է. «Ավելյաց օրերի անունները հարցնել են տալիս, թե արդյոք ամբողջ ամսվա օրերը իրենց հատուկ անունները չունե՞ն, և մեկական ոգիներ չկայի՞ն, ինչպես ունի զանդիկների կրոնը» (նշվ. աշխ., էջ 78):*

գրանցված է միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում. *Մասսեայ//«Մասեայ-Արարատ»* (տպագրում փոքրատառով՝ *արարատ*):[1]

Ուրարտական արվեստի գործերի մեջ կա Արևմտյան Հայաստանում հայտնաբերված ձիու բրոնզե ճակատակալ, որը պատկերում է արևը խորհրդանշող թևավոր սկավառակը աջ ձեռքով գոտկատեղի շուրջ բռնած, իսկ ձախ ձեռքով օրհնող մորուքավոր մի աստված (նկ. 1):[2] Քանի որ նա կանգնած է ցուլի վրա, ենթադրվում է, որ Թեյշեբա աստվածն է: Բայց Ամպրոպ-Հողմի աստված Թեյշեբան չէր կարող այսպես անզեն պատկերվել: Նա սովորաբար զինված է պատկերվում՝ հաճախ իր սկավառակաձև գուրզով և մարտական տապարով:[3] Այստեղ պատկերված աստծու թագի օղակը (կամ գունդը) և վերջինիս կից երկու փոքր օղակները (կամ գնդիկները) խոսում են այս աստծու արեգակնային-լուսեղեն էության մասին, որովհետև մեծ օղակն արեգակի խորհրդանշանն է,իսկ փոքրերը՝ Արուսյակ//Վեներա մոլորակի՝ իր երկու դրսևորումներով (որպես Լուսաբեր և որպես Գիշերավար): Ոչ միայն թևավոր սկավառակը, մեծ ու փոքր օղակները, այլև դրանք կրող զարդի ձիու ճակատակալ լինելու հանգամանքը (ձին արևի աստծու սրբազան կենդանին էր),[4] խոսում է պատկերված աստծու արեգակնային-լուսեղեն էության մասին: Նրա համար պատվանդան ծառայող ցուլը (կամ եզը) կարող է լինել հայ ժողովրդական հավատալիքների այն եզը, որն համարվում էր աշխարհի հենարանը:[5]

Ս. Հմայակյանը նշում է այս աստծու և իրանական Ահուրա-Մազդայի հայտնի պատկերների միջև առկա նմանությունը:[6] Պերսեպոլիսից պեղված կնիքներին՝ օրինակ, Դարեհ I-ի անունով հայտնաբերված կնիքին (նկ.2),[7] թևավոր Ահուրամազդան ներկայացված է արևը խորհրդանշող նույնպիսի սկավառակով զոտևորված: Գոտկատեղին թևեր ունեցող աստվածություններ հայտնի են նաև հայկական ժայռապատկերներից:[8] Ուղտասարի (Սյունիքում) ժայռապատկերներից մեկը ներկայացնում է երկու աստվածությունների[9] (գլուխների մոտ դրված մեկական շրջանակները խոսում են դրանց աստվածություններ լինելու մասին), որոնցից հոտնկայսը լինելու է երկրի անձնավորում Մայր դիցուհին, իսկ վերևից գլխիվայր դեպի նա ձգված աստվածությունը՝ երկնքի անձնավորում Հայր աստվածը: Հենց վերջինս էլ ներկայացված է գոտկատեղից դուրս եկող հորիզոնական գծերով՝ թևերով: Բերված փաստերը գալիս են ամրապնդելու *Աստուած<*Աս-տիւ-ած* բառին մեր տված «Աս լուսավոր, Տեր լուսակիր» ստուգաբանությունը:

---

[1] *Բառգիրք հայոց, էջ 209, 405 ծան 154:*

[2] *Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, աղ.16:*

[3] *Նույն տեղում, էջ 42:*

[4] *Մ.Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Եր., 1971, էջ 72-73:*

[5] *Ե.Լալայան, Երկեր, հ.I,Եր., 1983, էջ 240, հ.II, Եր., 1988, էջ 176: Հնագետ ուսումնասիրողների ուշադրությունից չի վրիպել այն հանգամանքը, որ «Հայկական լեռնաշխարհում, Հին Արևելքում եզան պաշտամունքի հետ են աղերսում եղջերավոր հենակների բազմաթիվ տարբերակները» (Գ.Կարախանյան, Պ.Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները,«Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Ժայռապատկերներ, պրակ I, Եր., 1970, էջ 24):*

[6] *Ս.Հմայակյան, նշվ. աշխ., էջ 42:*

[7] *М. Дандамаев, В. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980, стр. 327, М. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, М., 1985, стр. 213, рис. 10.*

[8] *Գ.Կարախանյան, Պ.Սաֆյան, նշվ. աշխ., աղ. 98, նկ 1,աղ. 271, նկ.1:*

[9] *Նույն տեղում, աղ.256, նկ.3:*

*Ասը որպես լույսի արարիչ կարող էր ըմբռնվել նաև անձնավորված[1] և այս դեպքում ունենալ իր երկրային հատկանիշները: Այս տեսանկյունից ուշագրավ նյութ է տալիս ուրարտական դարաշրջանը: Արգիշտի Ի-ի (մ.թ.ա. 786-764թթ.) «Խոռխորյան տարեգրության» մեջ իմիջիայլոց «Արգիշտին ասում է. լսեցի, իբր, Էթիունի երկրում հափշտակվել է Արդինի քաղաքի aštiuzi-ն»:[2] Արձանագրության համապատասխան հատվածում շտկում մտցրած Գ.Մելիքիշվիլու կարծիքով, հիշատակված քաղաքը Արդինի//Մուծածիրն է, իսկ Ն.Հարությունյանի կարծիքով, նույնանուն մեկ ուրիշ քաղաք է՝ գտնված Էթիունի երկրում:[3] Մեր կարծիքով, Էթիունյան Ardini քաղաքը գտնվել է նույնանուն *Արտին//Արտենի* լեռան (Թալինից արևմուտք) շրջանում: Գ. Մելիքիշվիլին aštiuzi-ն համարում է *աստուած* բառի նախատիպը և նրա համար, ըստ այդմ, վերականգն «աստված» կամ «կուռք» նշանակությունը: Բայց aštiuzi-ն չէր կարող դրանցից որևէ մեկը նշանակել, որովհետև արձանագրության մեջ բերված է առանց աստվածության ցուցիչի:

նկ. 1

նկ. 2

Այսուհանդերձ, անվերապահորեն պետք է ընդունել *աստուած* բառի **աս-տիւ-ած* նախատիպի և aštiuzi (*aš-tiu-zi) բառի առաջին և երկրորդ բաղադրիչների նույնությունը: Նրանց երրորդ բաղադրիչները նույնական չեն: Aštiuzi-ի դեպքում այն ներկայացնում է դարձյալ հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն *ձի* բառը:[4] Հայերեն *ձի* բառին սեպագրային zi տեսքով ենք հանդիպում նաև Վանա լճից հյուսիս գտնված Ziuqani (<**ձիուկ-անի*՞) և Ուրմիա լճից արևելք տեղադրվող Zikirtu (<**ձի-կիրթ*, որտեղ *կիրթ* «*կրթել,* մարզել, վարժեցնել») երկրանուններում:[5] Ըստ այսմ, aštiuzi-ն լինելու էր *Աս լուսավոր աստծուն կամ Արևի աստծուն նվիրաբերված սպիտակ ձիերի անվանումը:[6] Հիշենք սպիտակ ձիերի առասպելաբանական կերպարը, որ ձին արևի ուրարտական աստված Շիվինիի հատկանիշներից մեկն էր, որ թևավոր ձիեր են պատկերված ուրարտական շատ իրերի վրա:[7] Ագանթանգեղոսի վկայությամբ, Հայոց Խոսրով Մեծ թագավորն իր հայրենական պաշտամունքի բագիններին նվիրաբերել էր բազում գանձեր՝ «սպիտակ ցլուք եւ սպիտակ նոխազօք,

---

[1] *«Աստվածաշնչի» համաձայն, Հայր Աստվածն իր արարչագործությունն սկսել էր, ասելով. «Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս» (Ծննդ., Ա, 3-4), իսկ Հիսուս Քրիստոսը աշխարհի լույսն էր (Յովհ., Ը, 12) և ասում էր. «Ես լոյս աշխարհ եկի» (Յովհ., ԺԲ, 46):*

[2] *Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 173-176:*

[3] *Н. Арутюнян, Биайнили (Урарту), Ер., 1970, стр. 231, пр. 184.*

[4] *Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ. III, Եր., 1977, էջ 151:*

[5] *Այդ «երկրների» տեղադրությունը՝ Н. Арутюнян, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 80-83.*

[6] *Եթե aštiuzi-ն հատկացված էր *Աս լուսավոր աստծու ձիերին, ապա Արևի աստծուն նվիրաբերված ձիերն էին կոչվելու երիւար//երիվար: *Երիւ-ար < հ.-ե. *reu-, որից է նաև արեւ բառը (վերջածանցի համար հմմտ. արդ-ար, կերպ-ար, պալ-ար և այլն):*

[7] *Մ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 65, 73, ծան. 16:*

սպիտակ ձիովք եւ սպիտակ ջորովք»:[1] Որ թվարկված զոհաբերվելիք կենդանիներից սպիտակ ձիերը նախատեսված են եղել Լույսի կամ Արևի աստծու համար, կարելի է կռահել Քսենոփոնի հետևյալ վկայությունից: Արմենական գյուղերից մեկում իջևանած հույն զորավարն ու պատմիչը Հայաստանում «դեռ առաջներում իր ավար վերցրած պառավ ձին նվիրեց գեղջավագին, որպեսզի սնուցի ու զոհաբերի, քանզի լսել էր, այն նվիրաբերված էր Հելիոսին»,[2] այսինքն՝ Արևի աստծուն:

Այս տեսանկյունից ուշագրավ է նաև իրանական Ահուրամազդա և Միհր աստվածների սրբազան ձիերի մասին Կուրտիուս Ռուֆուսի հաղորդած տեղեկությունը: Ըստ նրա՝ Դարեհ III-ի «Արշավի զինաշարքն այսպիսին էր. առջևից արծաթե զոհասեղանների վրա, կրակ էին տանում, որը, ըստ պարսիկների, հավերժության ու սրբության նշան է: Նրանց հետևից գնացող մոգերը երգում էին հինավուրց հիմներ: Նրանց հետևում էին ծիրանագույն թիկնոցներ հագած 365 պատանիներ՝ ըստ տարվա օրերի քանակի, քանի որ պարսիկները (արեգակնային – Ս.Պ.) տարին բաժանում էին հենց այդքան օրերի: Ապա *սպիտակ ձիերը տանում էին Յուպիտերին* (Ահուրամազդային – Ս.Պ.)*նվիրված մարտակառքը,*[3] *նրան հետևում էր հսկայական չափեր ունեցող մի ձի, որը համարվում էր արևի* (Միհրի-Ս.Պ.) *ձին*: Ձիավորները զարդարված էին ոսկե ճյուղերով և սպիտակ հանդերձանքով»:[4] Այս նկարագրության մեջ պարսկական զինաշարքի հովանավոր Լույսի և Արևի աստվածների աներևույթ առկայությունը բացահայտում են ոչ միայն նրանց մարտակառքն ու ձիերը, այլև տեսարանի թողած գունային ներգործությունը (մի դեպքում «արծաթե զոհասեղաններ», «սպիտակ ձիեր», մյուսում՝ «կրակ», «ծիրանագույն թիկնոցներ», «ոսկե ճյուղեր»):

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ, ԳՊՍԻ)

ԵՐՎԱՆԴԱՎԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երվանդ Վերջին թագավորի (մ.թ.ա. 222-201թթ.) և գահի հավակնորդ Արտաշեսի՝ ապագա Արտաշես 1-ինի (մ.թ.ա. 189-160թթ.) միջև զինված բախումները սկսվել էին Արտաշեսի զորքի ներխուժումով թագավորի ձմեռանոց, որը գտնվում էր Կուրի աջափնյա Ուտիք գավառում:[5] Թագավորը լքել էր իր ձմեռանոցը, ուստի Արտաշեսի զորքը Գեղամա ծովի (Սևանա լճի) ափերով և Արագած լեռան թիկունքով ներխուժել էր Շիրակ, որտեղ՝ Երվանդաշատ մայրաքաղաքից երեքհարյուր ասպարեզ հյուսիս՝

---

[1] *Ագաթանգեղոս, Ա, 22:*

[2] *Xen. Anabasis, IV, V, 35 (Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 98):*

[3] *Սրբազան կառքի ձևավորված պաշտամունքը գոյություն ուներ դեռևս մ.թ.ա. VIII-VIIդդ. Ուրարտուում և Փոյունիայում (И.Дьяконов, К вопросу о символе Халди, Древний Восток, Ер., 1983, стр. 193):*

[4] *Curt.Ruf., III, III, 9-11 (Ալեքսանդր Մակեդոնացի, Եր., 1987, էջ 285):*

[5] *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Եր., 1981, Բ, խդ, Բ, խե:*

Ախուրյանի ափին, գտնվում էր Երվանդ արքայի բանակատեղին:[1] Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության տպագիր տեքստում Երվանդաշատի և Երվանդի բանակատեղիի միջև եղած հեռավորությունը ցույց է տրված «ավելի քան *հարյուր* ասպարեզ»,[2] երբ գրաբար տեքստում «ավելի քան *երեք հարիւր* ասպարիսաւ» է:[3] Գ.Սարգսյանը ճշտում է բանակատեղիի հեռավորությունը. «Երվանդաշատից մոտ 300 ասպարեզ (=շուրջ 50կմ) դեպի հյուսիս, Ախուրյան գետի ափին»:[4] Բանակատեղին կոչվում էր *Երվանդավան*: Նրա մոտ է տեղի ունեցել մ.թ.ա. 201թ. ճակատամարտը Հայոց թագավոր Երվանդ Վերջինի և գահի հավակնորդ Արտաշեսի բանակների միջև:[5]

Մովսես Խորենացին Երվանդավանի անվանակոչությունը բացատրում է Արտաշեսի զորքի կողմից Երվանդին այդ վայրից *վանելու* հանգամանքով:[6] Բայց, ինչպես Գ.Սարգսյանն է ցույց տվել, բնակավայրը *Երուանդաւան* կոչվել է ավելի վաղ և կազմված է *Երուանդ* անվանը *աւան* բառի հավելումով. հմմտ. *Տիգրանաւան, Վարդգէսաւան, Արշակաւան*:[7] Ճիշտ է, բնակավայրը հետագայում *Երուանդաւան* անվամբ չի հիշատակվում, բայց Ս.Պետրոսյանի կարծիքով, դա նույն Անին է՝ Շիրակում, Ախուրյան գետի աջ ափին, Երվանդաշատի ավերակներից մոտավորապես նշված հեռավորության վրա:[8] Անիի հին պարսպի առնչությամբ, Երվանդունի թագավորների այստեղ ծավալած պաշտպանական բնույթի շինարարական աշխատանքների վերաբերյալ Հ. Մանանդյանը գրում է. «Վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին... Բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից, նույն այս հնագույն ժամանակաշրջանի ամրացված կենտրոնավայրեր են եղել նաև Գառնին և Անին»:[9]

Խորենացու շարադրմամբ, մ.թ.ա. 201թ. Երվանդավանի ճակատամարտն ընթացել է հետևյալ կերպ. «Երբ Արտաշեսի նշանները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունն ա-

---

[1] *Նույն տեղում, Բ, խզ:*

[2] *Նույն տեղում, էջ 203:*

[3] *Նույն տեղում, էջ 202:*

[4] *Գ.Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 219:*

[5] *Խորենացի, Բ, խզ:*

[6] *Նույնը:*

[7] *Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 217:*

[8] *Ս. Պետրոսյան, Եռյակ բնակավայրերի համակարգը Ախուրյանի ավազանում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», V, Գյումրի, 2002,էջ 9-10: Նույն կերպ, Երվանդակերտը հետագայում հայտնի էր Մարմէտ անունով (նույն տեղում, էջ 10): Դա եղել էր «հավանորեն Արտաշեսի կամքով, որպեսզի Երվանդի անունը նրա վրայից վերանա» (Խորենացի, Բ, խզ):*

[9] *Հ.Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33-34:*

ռավ ու մի կողմ քաշվեց: Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր զորքի ճակատն առաջ շարժելով, սլանում էր ինչպես արծիվը կաքավների երամի վրա: Իսկ հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թևերն էին կազմում, խառնվում միանում են նրա հետ: Վրաց զորքերը թեպետ իրենց Փարսման թագավորի հետ հանդուգն հարձակում գործելով ընդհարվեցին, բայց շուտով փախչում էին մյուս կողմը... Երկու ճակատներն իրար խառնվելիս, Արտաշեսի դեմն են գալիս Տավրոսցի քաջ մարդիկ, որոնք մահն աչքերն առած՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կսպանեն: Սրանց հետիոտն պատահում է Գիսակը՝ Արտաշեսի ծծմոր որդին, և մեջ մտնելով նրանց սպանում է և հաղթություն է տանում, որի ժամանակ նրա երեսի կեսն էլ սրով կտրում են և նա մեռնում է այս գործի վրա: (Երվանդի) մնացած զորքերը փախուստի են դիմում: Իսկ Երվանդը ձիով շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից (Երվանդավանից-Լ.Պ.) մինչև քաղաքը (Երվանդաշատը-Լ.Պ.) հաստատած իջևաններում նոր-նոր ձիեր հեծնելով փախչում է անընդհատաբար»:[1] Ինչպես Խորենացու վկայությունից է պարզվում, Երվանդավանի և Երվանդաշատի միջև կառուցված է եղել իջևաններ ունեցող մի բանուկ ճանապարհ: Իջևաններում սպասարկման մեջ մտել է նաև սուրհանդակների, իսկ այս դեպքում՝ թագավորի հոգնած ձիերը առույգ ձիերով փոխարինելու գործը: Ճանապարհն, ըստ երևույթին, կառուցված է եղել Ախուրյանի աջափնյակում և նախատիպն է ներկայացրել հետագայում Տիգրան 2-րդի (մ.թ.ա. 95-55թթ.) կառուցած արքունի պողոտայի՝ Արտաշատի և Տիգրանակերտի միջև: Երվանդավան-Երվանդաշատ ճանապարհն իր իջևան-կայաններով հիշեցնում է նաև Դարեհ 1-ինի (մ.թ.ա. 522-486թթ.) կառուցած արքայական ճանապարհը Շոշի (Սուզա) և Սարդեսի միջև:

Արտաշեսի բանակում Խորենացու հիշատակած անձանցից Սմբատը՝ Բյուրատ Բագրատունու որդին, ինչպես պարզվում է Մովսես Խորենացու այլ հաղորդումներից, Արտաշեսի զորահրամանատարն էր և այս ճակատամարտում հեծելազորն անձամբ ղեկավարողը: Գիսակը Դիմաքսյան տոհմի նախնիներից էր[2] և, ըստ երևույթին, հետևակազորի հրամանատարը (կամ առնվազն նրա հրամանատարներից մեկը): Իսկ ովքե՞ր էին Երվանդի բանակում հանվանե հիշատակված անձինք: Դրանցից Արգամը, ըստ Խորենացու, թագավորության «երկրորդական գահն» զբաղեցրած պաշտոնյան էր[3] և առաջիկա ճակատամարտում նա էր առաջնորդելու Երվանդի հետևակազորը:[4] Բայց հեռատես Արտաշեսը կարողացել էր չեզոքացնել նրան, որովհետև ճակատամարտից առաջ «պատգամ էր ուղարկում հաստատուն երդումներով, որ կթողնի նրան, ինչ որ նա ստացել

[1] *Խորենացի, Բ, խգ:*
[2] *Նույն տեղում, խէ:*
[3] *Նույն տեղում, խդ:*
[4] *Նույն տեղում, խդ, խգ:*

էր Երվանդից, և էլի ուրիշ բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին թողնի, մի կողմ քաշվի»:[1] Արգամի՝ պատմական անձնավորություն լինելու վերաբերյալ Գ.Սարգսյանը գրում է. «Նախ և առաջ Արգամին վերաբերող դրվագները (իհարկե, բուն Արգամին և ոչ թե Արտաշեսի առասպելում Արգավանին փոխարինած Արգամին) իրենց մեջ ոչինչ բանահյուսական-վիպական բան չեն կրում... Դրվագը ավելի քան ճշմարտապատում է»:[2] Ապա՝ Արգամի կերպարը «գալիս է, անձամբ իր (և ոչ Արգավանի) հետ կապված դրվագների հետ միասին, Խորենացու հիմնական գրավոր աղբյուրից, որպես Երվանդյանների բարձր պաշտոնյա, հետագայում անցած գահի հավակնորդի կողմը»:[3] Հենց նա էլ եղել է Երվանդավանի ճակատամարտում Երվանդ թագավորի պարտության գլխավոր պատճառը, որովհետև թագավորին, փաստորեն, առանց հետևակազորի էր թողել:

Երվանդի բանակում հանվանե հիշատակված երկրորդ անձը Վրաց Փարսման թագավորն է, որի մարտիկները «հանդուգն հարձակում գործելով ընդհարվեցին, բայց շուտով՝ փախչում են մյուս կողմը»: Վրացական աղբյուրները մ.թ.ա. 3-րդ դարի վերջին գահակալած այսպիսի Վրաց թագավոր չեն հիշատակում: *Փարսման* անունը կրած Վրաց թագավորներից առաջինը գահակալել է մ.թ. 35-74 թվականներին, այսինքն՝ Երվանդ Վերջինից ավելի քան երկուս ու կես դար հետո:[4] Ընդ որում, որևէ Վրաց թագավոր, անկախ իր կրած անունից, Երվանդի բանակի շարքերում գտնվել չէր կարող, որովհետև Վիրքը և Երվանդունիները հակառակորդներ էին՝ անգամ «Վրաց պատմության» («Քարթլիս ցխովրեբա») վկայությամբ:[5] Պատճառն այն էր, որ մ.թ.ա. 270-ական թվականներին ստեղծված Վրաց թագավորությունը, օգտվելով «Սելևկյանների օժանդակությունից, Հայոց երկրից գրավել և անջատել էր Գուգարքն ու Ջավախքը, ինչպես և հարակից այլ շրջաններ»:[6] Դրանք վիճելի տարածքներ մնացին «մինչև մ.թ.ա. 2-րդ դարի սկիզբը, երբ Արտաշեսի օրոք նորից միացվեցին Հայաստանին»:[7] Ուրեմն, Երվանդի բանակի երեք առաջնորդներից (Երվանդ, Արգամ, Փարսման) երրորդը՝ Փարսմանը, Վրաց թագավորը լինել չէր կարող: Գործ ունենք ակնհայտ շփոթության հետ:

Կարծում ենք, որ շփոթության տեղիք է տվել Երվանդավանի ճակատամարտի մասնակից այդ անձնավորության «թագավոր» տիտղոսը: Խորենացու սկզբնաղբյուր Ողյումպ քրմի «Մեհենական պատմությունը»[8]

---

[1] *Նույն տեղում, խզ:*
[2] *Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 158:*
[3] *Նույն տեղում, էջ 161:*
[4] *Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I., Եր., 1971, էջ 716-717, 726:*
[5] *Լ.Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I, Եր.,1934, էջ 154:*
[6] *Ա.Մելքոնյան, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 37:*
[7] *Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 513, Strabo, XI, 14, 5 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Ամառյան, Եր., 1940, էջ 57):*
[8] *Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 144, 219-220:*

Երվանդ-Արտաշես առճակատումը նկարագրելիս, հանձին Երվանդ արքայի զինակից «թագավորի», պետք է որ հիշատակեր նրա քրմապետ եղբորը՝ Երվազին[1]: Ինչպես ժամանակին Հ.Մանանդյանն էր ցույց տվել՝ Արմավիրի հունարեն մի արձանագրության մեջ հիշատակված «արմավիրցիների թագավոր Միթրասը» նույն ինքը Երվազ քրմապետն է:[2] Որ Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչ քրմապետը կարող էր կրել «թագավոր» տիտղոսը (հուն. *բասիլևս*), ընդունում են նաև Գ.Սարգսյանը[3] և Ս.Կրկյաշարյանը:[4] Նշելով հին Հայաստանում տաճարների տնտեսական հզորության աղբյուրները՝[5] Ս. Կրկյաշարյանն ավելացնում է, որ դրանք իրենց ծառայեցնելու լավագույն միջոցը թագավորները գտել էին հետևյալում. «Հայաստանի քրմապետները նույնպես սերում էին թագավորական տոհմից կամ նույնիսկ իրենք թագավորներն էին լինում»:[6]

Երվազ քրմապետը՝ որպես Երվանդ թագավորի հարազատ եղբայր,[7] կարող էր իրեն իրավունք վերապահել «թագավոր» կոչվելու, ինչպես և վարվել էր: Որ նրա այդ քայլը հակառակ թագավոր եղբոր չէր կատարվել, վկայում է Բագարանի կառուցման փաստը: Երվանդաշատի կառուցումն ավարտելուց հետո Երվանդ թագավորը «Ախուրյան գետի վրա շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան... Շինեց նաև մեհյաններ և իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց»:[8] Այս փաստը խոսում է Հայոց թագավորի և քրմապետի միջև գոյություն ունեցած ջերմ փոխհարաբերությունների մասին: Այս դեպքում տարօրինակ չէ՞ր լինի, որ Երվանդավանի ճակատամարտում Երվազն իր եղբոր կողքին չլիներ: Նա չէր կարող եղբոր համար ճակատագրական այդ պահին նրան մենակ թողնել, որովհետև Արտաշեսի հաղթանակը ոչ միայն հարազատ եղբոր, այլև իր կործանումն էր նշանակելու (ինչպես և, ի վերջո, եղել է): Ուրեմն, Երվանդավանի ճակատամարտում Երվանդ Վերջինի զինակից «թագավորը» չէր կարող լինել նրա թշնամի Վրաց թագավորը: Նա, հա-

---

[1] *Ս.Պետրոսյան, Եռադասության մի դրսևորում Ուրարտուի զինված ուժերում, ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու՝ նվիրված է ՀՀ անկախության 15-ամյակին, Գյումրի, 2007, էջ 195-196:*

[2] *Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946, էջ 19:*

[3] *Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 213, ծան. 124: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 682:*

[4] *Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 134: Նույնի, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), Եր., 2005, էջ 105:*

[5] *Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի… , էջ 139:*

[6] *Նույն տեղում, էջ 132:*

[7] *Խորենացի, Բ, լէ: Հարազատ եղբայրներ լինելու իրողությունն արտացոլված է նաև նրանց կրած «երկվորյակային» Երուանդ և Երուազ անունների մեջ (Ս.Պետրոսյան, «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, ԼՀԳ, 1981, թիվ 4, էջ 83):*

[8] *Խորենացի, Բ, խ:*

վանաբար, եղել է Հայոց քրմապետ Երվազը՝ Երվանդ թագավորի հարազատ եղբայրը:

Եթե Երվանդավանի ճակատամարտից առաջ Սելևկյանների և Արտաշեսի ջանքերով Երվանդ Վերջինը մեկուսացվել էր միայն արտաքին աշխարհից, ապա ճակատամարտից հետո մեկուսացումը դարձել էր բացարձակ: Ճիշտ է, թագավորը դեռևս հույսեր էր կապում Երվանդաշատի միջնաբերդի անառիկության և նրա կայազորի արիության հետ, բայց շուտով պարզվեց, որ դրանք զուր հույսեր էին: Երվանդաշատի գրավման նկարագրությունն ավարտվում է այս կերպ. «Եվ երբ քաջերն սկսեցին ամրոցի դեմ կռվել՝ ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին: Չինվորներից մեկը մտնելով՝ վաղրով Երվանդի գլխին խփեց... Այսպես ջախջախվելով վախճանվեց քսան տարի թագավորելուց հետո: Բայց Արտաշեսը հիշելով, թե Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել»:[1] Երվանդի սպանությունից հետո միայն Երվանդաշատ մտած Արտաշեսը, երբ Երվանդի համար արքայավայել թաղում էր կազմակերպում և անգամ մահարձան կանգնեցնում, դրանով սոսկ հարգանքի տուրք չէր մատուցում իր ազգական թագավորին: Դրանով նա ավելի շատ ուզում էր ցույց տալ, որ իր մտադրությունը Երվանդին սպանելը չի եղել, այլ գահընկեց անելը: Միևնույն ժամանակ դա նշանակում էր, որ նախկին թագավորի երկու ամենաբարձր պաշտոնյաները՝ քրմապետ Երվազը և «երկրորդական գահի» տեր Արգամը, կարող էին անհոգ լինել՝ իրենց անձի նկատմամբ որևէ ոտնձգություն չի լինելու, իրենք կարող են մնալ իրենց պաշտոններում (շարունակեցին մինչև Արտաշեսի հրամանով և գիտությամբ սպանվելը):

Հայաստանի սելևկյան ստրատեգոս Արտաշեսը անկախ թագավոր էր դարձել մ.թ.ա. 189թ.: Դրանից հետո նորընծա թագավորը պատիվների է արժանացրել Արգամին և Սմբատ Բագրատունուն, վերջինիս շնորհել է նոր պաշտոններ, ստեղծել Դիմաքսյան և Տրունի նոր նախարարությունները[2] և հանկարծ «Սրանից հետո (Արտաշեսը) հրամայում է Սմբատին գնալ Բագարան ամրոցը, որ Ախուրյան գետի վրա էր, Երվանդի քաղաքին (Երվանդաշատին –Լ.Պ.) մոտ, և սպանել Երվանդի եղբորը՝ Երվազին: Սմբատը նրան բռնելով՝ հրամայում է նրա շլնքից մի երկանաքար կապել և նետել գետի մի պտույտի մեջ»:[3] Ինչպես տեսնում ենք, դիմադրության մասին որևէ խոսք չկա, երբ հայտնի է, որ հայոց քրմերը և տաճարներն ունեին իրենց զինված ուժերը:[4] Ուրեմն, Երվազը հանկարծակիի է բերվել:

---

[1] *Խորենացի, Բ, խգ:*
[2] *Նույն տեղում, խէ:*
[3] *Խորենացի, խը:*
[4] *Ս.Կրկյաշարյան, նշվ. աշխ., էջ 155-157:*

Այլ էր վիճակը Արգամի դեպքում: Սա իր պաշտոնին էր մնում անգամ Արտաշատ մայրաքաղաքի կառուցումից[1] հետո, որը Արտաշես 1-ինն իրագործել էր մ.թ.ա. 185-170-ական թվականներին: Նրա վախճանի վերաբերյալ Խորենացին գրում է, որ Արտաշեսի թագաժառանգ որդի Արտավազդը «ծերունի Արգամին նախանձելով՝ պատրանքներով իր հոր զայրույթը շարժեց Արգամի դեմ, իբրև թե նա մտածում է բոլորի վրա թագավորել: Այս կերպով նրան պատվից գցելով՝ ինքն է առնում երկրորդական գահը»:[2] Արգամի դեմ երկու պատժիչ արշավանք է ձեռնարկվել, որոնցից երկրորդի ընթացքում «արքայորդին հաղթելով, կոտորում է Արգամի բոլոր զավակներին իրենց հոր հետ»:[3]

Այսպիսով, Երվանդավանի ճակատամարտում Երվանդ Վերջինի կրած պարտությունը հանգեցրեց ոչ միայն նրա սպանությանը, այլև Երվանդունի արքայատոհմի գահակալման ընդհատմանը և նրա փոխարինմանը մի նոր, առավել հզոր Արտաշիսյան արքայատոհմով: Երվանդի վախճանը նախերգանքն էր Երվազի ու Արգամի վախճանի, իսկ նրանց հետ՝ նաև այնպիսի պաշտոնների վերացման, ինչպիսիք էին Հայոց քրմապետ-«թագավորինը» և «երկրորդական գահի» տիրոջը: Թե ինչպես է Հայոց քրմապետ-«թագավորը» վերածվել Վրաց թագավորի, կպարզվի, եթե նկատի ունենանք Վիրքի երկու արքաների (ապրած I-II դդ.) *Փարսման* անունը կրելու և հայոց քրմապետների ենթադրյալ նման հնչող պատվանուն կրելու հանգամանքները: Վերջին դեպքում մեր ուշադրության կենտրոնում ծագումով իրանական **բարսման* (հոգն. սեռ. հոլով. *բարսմանց*) բառն է: Ավեստայի լեզվում այն ունի barəsma- (սեռ. հոլով. barəsmanō), պարսկերենում barsam տեսքը, բայց, ինչպես հայագետների կողմից վաղուց ապացուցված է, հայերեն բառը կարող էր ուղղական հոլովի եզակի թվով ունենալ **բարսման* տեսքը և ծագել միայն հին պարսկերեն *barsmanah- ձևից:[4] Ուրեմն, այն պետք է լինի Աքեմենյան դարաշրջանի փոխառություն: *Բարսմանք*[5] Վդարի քրիստոնյա հայերը կոչում էին այն «ճյուղերի կապոցը, որ կրակապաշտները աղոթքի ժամանակ բռնում էին իրենց ձեռքին՝ սրբազան կրակի առաջ»:[6]

Հայտնի է, որ Երվանդունի թագավորները հելլենիստական դարաշրջանում իրենց համարում էին սերունդները ոչ միայն Հայկազունների՝ Հայոց հին թագավորների, այլև պարսիկ Աքեմենյանների և Դարեհ I-ի

---

[1] *Խորենացի, Բ, խբ:*
[2] *Նույն տեղում, ծա:*
[3] *Նույնը:*
[4] *Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 429:*
[5] *Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, Բ, ա: Ա.Աբրահամյանի աշխարհաբար թարգմանության մեջ բերված է բարսմունք ձևով (Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. Աղանդների հերքումը, Եր., 1970, էջ 86. հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 468):*
[6] *Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ. I, էջ 429:*

զինակից Վիդարնայի (Հյուդարնեսի):[1] Այնպես որ հայոց հեթանոսական աստվածների *Արամազդ, Անահիտ, Միհր* և այլ անունների հետ **բարսման* տերմինը ևս կարող էր Աքեմենյան դարաշրջանում թափանցել Հայաստան և պահպանվել Երվանդունի արքայական-քրմապետական տոհմում: Երվազ քրմապետի **բարսման* պատվանունը կրելու օգտին կարող է վկայել նրա *Միթրաս* գահանունը, որը նույն *Միհր* անվան ավելի հին ձևն է՝ հունարեն վերջավորությամբ: Բնականաբար, *Միթրաս* գահանվան հետ Երվազը պետք է կրեր նաև նրա պաշտամունքի արարողակարգի համար պարտադիր բարսմանը: Իսկ պաշտամունքային խորհրդանշանների վերածված և սրբագործված իրերի անվանումների կիրառումը պատվանունների և անձնանունների ձևով բավականին տարածված երևույթ էր Հին և Միջին դարերում: Հիշենք թեկուզև *թագ, ճրագ, ջահ, պսակ* և նույնաբնույթ այլ բառերի՝ մարդկանց նկատմամբ փոխաբերական իմաստով կիրառման դեպքերը:

Լիլիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ԵՊՀ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի վաղքրիստոնեական կոթողային հուշարձանները առանձնակի և կարևոր տեղ են զբաղեցնում հայ արվեստի, ինչպես նաև ողջ քրիստոնեական մշակույթի պատմության մեջ: Թնավոր խաչերով պսակված հուշասյուները և քառակող պատկերազարդ կոթողները հայտնի են հիմնականում Հայաստանի ու Վրաստանի, որոշ հորինվածքային տարբերությամբ, նաև Սիրիայի և Եգիպտոսի տարածքներից: Սակայն ուշագրավ է այն, որ մինչ այժմ Հայաստանում հայտնաբերված այս հուշարձանները խմբավորված են որոշակի լոկալ տարածքներում: Սա, թերևս, հարցականի տակ է դնում կոթողների զուտ տեղական ծագման վարկածը[2], առավել ևս, եթե հաշվի առնենք, որ նրանք բացահայտ ընդհանրություններ ունեն վրացական օրինակների հետ, իսկ պատկերագրությամբ և զարդարվեստով հարում են արևելաքրիստոնեական արվեստի նմուշներին:

---

[1] *Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 30-31, 71, 199; Strabo, XI, 14, 15 (Ստրաբոն, էջ 65):*

[2] *Ս. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները, /Տեղեկագիր Հայկ. ՍՍՌ ԳԱ 1960 N 7-8, էջ 53-79:*

Նշված լոկալ տարածքներից մեկը պատմական Շիրակ գավառն է, որն առանձնանում է ոչ միայն իր վաղքրիստոնեական հարուստ ճարտարապետությամբ, այլև բազմաթիվ կոթողային հուշարձաններով: Հայաստանի IV-VII դդ. թվագրվող կոթողների քանակական մեծամասնությունը գտնված է Շիրակից՝ Ադիաման (այժմ՝ Գառնահովիտ), Հառիճ, Մաստարա, Մրենից, Անիից, Կարսից և Թալինից:

Հայաստանի կոթողային հուշարձանների ուսումնասիրության պատմությունը ժամանակակից է հայ եկեղեցաշինության ուսումնասիրությանը: Հայ ճարտարապետությանը նվիրված աշխատանքներում կոթողներին անդրադարձել են Ն. Մառը, Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Յա. Սմիռնովը: Առանձին ուսումնասիրությամբ դրանց առաջին անգամ անդրադարձել է Գ. Հովսեփյանը,[1] կոթողային հուշարձանները ուղղակիորեն կապելով վաղագույն բազիլիկների «տեղի և ոճի» հետ և, ըստ այդմ, նրանց թվագրելով IV-VI դդ.:[2] Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Գ. Հովսեփյանը, կոթողների նշանակությունը որոշել են որպես մահարձանային հուշարձաններ՝ համարելով դրանք խաչքարերի նախատիպեր: Թ. Թորամանյանը և Գ. Լևոնյանը նրանցից մի քանիսը համարել են հեթանոսական հուշարձաններ:[3] Այժմ բացահայտված են կոթողների այլ՝ մեմորիալ,նվիրատվական և սրբապատկերային գործառույթները: Սակայն դրանց ուսումնասիրության հարցում դեռ բազմաթիվ առեղծվածային, չլուսաբանված խնդիրներ կան՝ կապված հուշարձանների որոշակի տեղայնացման,թվագրման,պատկերագրության, որոշ կերպարների և մոտիվների իմաստային վերծանման և ընդհանուր սիմվոլիկ նշանակության բացահայտման հետ:

Այժմյան Հայաստանի տարածքում մինչ օրս կոթողներ են հայտնաբերվել պատմական Այրարատ աշխարհի կենտրոնական և արևելյան գավառներում (Շիրակ, Արագածոտն, Նիգ, Կոտայք, Ոստան Հայոց) և պատմական Գուգարք աշխարհի Տաշիր, Ձորափոր և Կողբոփոր գավառներում: Արևմտյան Հայաստանն այս առումով դեռևս ուսումնասիրված չէ, և այժմ հնարավոր չէ ստույգ արձանագրել՝ եղել է արդյոք այնտեղ կոթողներ կանգնեցնելու սովորույթը: Բացա-

---

[1] *Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, Պրակ Գ, Նյու-Յորք, 1944:*

[2] *Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 46:*

[3] *Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1941, հ. I, էջ 40, հ. II, էջ 126, 212-214:*

ռություն է կազմում կոթողների մի խումբ Անիի և Կարսի շրջաններից, որոնք պատմական Շիրակի տարածքում են, վարչական և մշակութային ընդհանրությամբ:[1] Անշուշտ, կոթողների տեղադրությունը որոշակի լոկալ տարածքներում պատահական չէր կարող լինել և պետք է ունենար իր պատմամշակութային պատճառները: Այս հարցի վերջնական պարզաբանումը հնարավոր չէ տալ տվյալ ուսումնասիրության սահմաններում, քանի որ շատ ավելի բազմակողմանի պատմական և արվեստաբանական քննություն է պահանջում: Կարելի է միայն ենթադրել, որ կոթողների տեղայնացումը պետք է կապված լիներ այդ տարածաշրջաններում իշխող նախարարական կամ թագավորական տների կրոնամշակութային կողմնորոշման հետ: Այրարատի շրջանները եղել են կա՛մ թագավորական հողեր (Արագածոտնը, Կոտայքը, Նիգը, Ոստան Հայոցը), կա՛մ թագավորական հարստությանն ազգակից Կամսարականների կալվածքներ (Շիրակն ու Արշարունիքը): Գուգարքի բդեշխությունը IV-VII դդ. սերտ մշակութային կապեր է ունեցել Վիրքի հետ, որոշ ժամանակահատվածներում եղել է նաև Վիրքի կազմում (բացի Տաշիր գավառից):[2]

Կոթողները, ըստ իրենց տարածման շրջանների, ունեն նաև որոշակի ոճական և թեմատիկ տարբերություններ: Օրինակ՝ միմյանցից առանձնանում են Այրարատի և Գուգարքի հուշարձանները: Բացի այդ, ինչպես նշում է Բ. Առաքելյանը, Գուգարքի կոթողներն «ընդհանուր են Հայաստանի և հարավ-արևելյան Վրաստանի համար»:[3] Լ. Ազարյանը շեշտում է, որ Տաշիր-Զորափորի հուշարձաններում առկա են ավելի ընդարձակ տերունական ցիկլային թեմաներ, քան Շիրակի կոթողներում, որտեղ ավելի շատ են բիբլիական և սիմվոլիկ թեմաները (Աբրահամի զոհաբերությունը, Դանիելն առյուծների գբում և այլն):[4] Մեր կարծիքով որոշակիորեն առանձնանում են նաև Այրարատյան դաշտավայրի և դրանց հարակից շրջանների (Ավան, Ջրվեժ, Եղվարդ, Օշական, Զվարթնոց, Գեղամա լեռներ և այլն) կոթողները, որոնք իրենց գերակշիռ մեծամասնությամբ հուշասյուներ են:[5]

---

[1] *N. Thiery, Stèles arméniennes découvertes dans la région de Kars, Revue des études Arméniennes, tome 25.*

[2] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Եր., 1986, էջ 967; Ն. Առոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 252, 255-256:*

[3] *Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ., Եր., 1949, էջ 33:*

[4] *Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975, էջ 71:*

[5] *Ս.Մնացականյան, Հայկական վաղմիջնադարյան մեմորիալ հուշարձանները,Եր.,1982:*

Ն. Թիերին Գուգարքում գտնվող կոթողների մի խումբը առանձնացնում է մեկ գեղարվեստական դպրոցի մեջ, որտեղ կան կոթողներ և՛ Հայաստանից (օր.՝ Օձունի և Կեչրորի[1] հուշարձանները), և՛ Վրաստանից (օր.՝ Խանդիսիի կոթողը):[2] Չնայած նրան, որ Կ. Մաչաբելին բոլորովին ժխտում է այդպիսի դպրոցի առկայությունը, վերոհիշյալ օրինակներն ունեն ակնհայտ նմանություններ և՛ պատկերագրական, և՛ ոճական, և՛ կատարողական իմաստով:Վաղքրիստոնեական կոթողների հորինվածքային մանրամասները, թեմատիկ բովանդակությունը, նաև գործառույթը խոսում են այն մասին, որ դրանք բոլորը մեկ մշակութային երևութի արգասիք են, որն ընթացել է մինչարաբական շրջանում ոչ միայն Հայաստանում և Վրաստանում, այլ նաև մի շարք արևելաքրիստոնեական երկրներում: Նույնպիսի ընդհանրություն կար այդ երկրների եկեղեցական ճարտարապետության մեջ:[3]

Առաջին փայտյա, ապա նաև քարե խաչեր կանգնեցնելու սովորույթը, ըստ Մ. Խորենացու և Ագաթանգեղոսի, հատուկ է եղել և՛ Հայաստանին, և՛ Վրաստանին, և՛ Աղվանքին:[4] Հետագայում ընդլայնվում է այդ խաչային հորինվածքների ֆունկցիոնալ նշանակությունը և, որպես հետևանք՝ թեմատիկ բովանդակությունը: Վերջիններս ձեռք են բերում նաև սրբապատկերային բնույթ, իրենց վրա կրելով Աստվածամոր,Քրիստոսի, սրբերի և պատվիրատուների պատկերներ:[5]Այն փաստը, որ նրանք դրվում էին բաց երկնքի տակ և պատկերազարդված էին բոլոր չորս կողմերից, ինչը «ենթադրում էր շրջանաձև պտույտ կոթողի շուրջ»,[6] խոսում է վաղքրիստոնեական շրջանում պահպանված

---

[1] *Գտնվում է Կարսից հարավ-արևմուտք:*

[2] *N.Thierry, Essai de definition d'un atelier de sculpture du Haut Moyen Age en Gogarune: Revue des ütudes Gиorgeinnes et Caucasiennes, N. 1, 1985, Paris.*

[3] *Ա. Յակոբսոն, Взаимоотношения и взаимосвязи армянского и грузинского средневекового зодчества, / Советская археология, 1970, N 4*

[4] *Մ. Խորենացի Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ.223; «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց»,Տփղիս, 1909, էջ 407-408; «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 288:*

[5] *Զ. Հակոբյան, Օձունի կոթողի…, էջ 86-87:*

[6] *Հ. Պետրոսյան, Խաչելության ազգային ընկալումն ու պատկերագրությունը վաղմիջնադարյան Հայաստանում, Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Եր., 2000, էջ 187:*

հեթանոսական ավանդույթների, ինչպես նաև կոթողների և հունա-հռոմեական հաղթական սյուների անմիջական կապի մասին:[1]

Մասնագետների կողմից բազմիցս նշվել է IV-VII դդ. Հայկական քանդակում սիրիական, եգիպտական, պաղեստինյան արվեստի նմուշներին (Մոնցի սրվակների, սիրիական փղոսկրյա կազմերի, ղպտական սրբապատկերների և այլն) հետևելու սկզբունքը:[2] Այսպես, Եգիպտոսից գտնված և VI-VII դդ. թվագրվող Ս.Պաքոմոսի կոթողի[3] վրա հանդիպում են նույն գալարուն խաղողի որթը, հավասարաթև խաչերը, ինչպես նաև աղոթողի դիրքով տրված սրբի պատկերը: Ոճավորված արմավենիկի նույնանման զարդամոտիվը հանդիպում է և՛ Տեկորի տաճարի մուտքի բարավորի վրա, և՛ Սիրիայի Էլ-Կասր եկեղեցու ներքին հարդարանքում,[4] ինչպես նաև Օձունի, Բրդաձորի և Խանդիսիի կոթողների վրա:

ՈՒշագրավ են նաև մի շարք կոթողների վրա հանդիպող շնագլուխ Ս. Քրիստոփորի պատկերները (Խարաբավանքի, Ագարակի, Թալինի երկու կոթողները), որոնք երկար ժամանակ սխալ մեկնաբանվում էին որպես խոզագլուխ Տրդատի պատկերներ:[5] Այս սուրբի պաշտամունքը տարածված է եղել Բյուզանդիայի արևելքում, որտեղից էլ թափանցել է Հայաստան: Մինչ օրս Ներքին Թալինում կանգուն է Ս. Քրիստոփորին նվիրված VII դ. Եկեղեցին:[6]

Ինչպես տեսնում ենք, քրիստոնեական մշակույթի վաղ շրջանում առավելագույնս ընդգծված է եղել կրոնական և գեղարվեստական ընդհանրությունը, դեռ ավելին՝ այն կրել է ծրագրային բնույթ: ՈՒստի կոթողների ծագման և տեղայնացման հարցում ազգային ավանդույթների հանգամանքը չի կարող որոշիչ լինել՝ զուտ վաղքրիստոնեական մշակույթի գաղափարախոսությունից և պատմական իրավիճակից ելնելով:

---

[1] *Л. Григорянц, Трансформация дохристианских памятников и адаптация языческих культов в раннехристианский период в Армении /Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 301:*

[2] *Լ. Ազարյան, նշվ. աշխ., էջ 72, 98, 111:*

[3] *"L'art Copte en Egipte. 2000 ans de christianisme", Editions Gallimard, 2000, fig. 11.*

[4] *Н. Кондаков, Археологическое путешествие по Сирии и Палестине, СПб. 1904, илл. XXVIII-XXXII*

[5] *Այս հարցի շուրջ վերջին տեսակետը տես՝Ф. Тер-Мартиросов, Храм в крепости Гарни-героон, мартирий, Ер., 1995, стр. 28; Ջ. Հակոբյան, Օձունի կոթողի… էջ 80-81:*

[6] *М. Асратян, Армянская архитектура раннего христианства, М., 2000, илл. 83.*

Հայաստանում թագավորական վերնախավը և Կամսարականների նախարարական տունը առաջիններից են ընդունել քրիստոնեությունը[1] և վաղքրիստոնեական շրջանում ծավալել բուռն շինարարական գործունեություն: Ըստ Խորենացու՝ Տրդատ III-ը Կամսականներին հողեր է շնորհում նրանց քրիստոնյա դառնալուն պես, նաև այդ առթիվ «... ժառանգություն է տալիս Արտաշեսի մեծ դաստակերտը, որ այժմ Դրասխանակերտ է կոչվում, և Շիրակ գավառը՝ իբրև իր ազգականի և մտերիմ հարազատի»:[2]

Այսպիսով, կոթողաշինությունը տարածված է եղել առաջին հերթին այն շրջաններում, ուր քրիստոնեությունը առաջինն է մուտք գործել: Հուշակոթողները, լինելով քրիստոնեական կրոնի խորհրդանիշներ և երկրպագության առարկաներ, արտահայտում էին այդ տարածքների բնակչության պատկանելությունը ժամանակի Քրիստոնյա «աշխարհին», նաև դրսևորում էին վերնախավի քաղաքական և մշակութային կողմնորոշումը: Ուստի կոթողների տեղայնացումը պայմանավորված էր նրանց առանձնակի իմաստային բովանդակությամբ, որը հատուկ էր միայն այդ ժամանակաշրջանին, և որից հետո նրանք այլևս չեն կանգնեցվում: Այլ էր հետագայում տարածված խաչքարային արվեստը, որը, ի տարբերություն կոթողների, ընդհանուր էր ողջ Հայաստանի համար և բացառիկ իր ձևի մեջ:

Վարդիթեր ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (ԳՊՄԻ)

ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ

Անիի թագավորության տարածքն ու սահմանները ընդլայնվում են Սմբատ Բ-ին հաջորդած Գագիկ Ա Բագրատունու կառավարման տարիներին (989-1020թթ): Ստեփանոս Ասողիկը, որ ժամանակակիցն էր Գագիկ Ա-ի, իր պատմությունն ավարտում է 1003 թվի դեպքերով, երբ Գագիկը բազմաթիվ բերդեր ու գավառներ էր գրավել Խաչենի ու Փառիսոսի կողմերում:[3] Սրանց գրավումն անհնար կլիներ, եթե Գագիկը նախօրոք իր ձեռքը չվերցներ դեպի Խաչեն ու Փառիսոս տանող ճանապարհի վրա

[1] *Ф. Тер-Мартиросов, Преддверие христианства в Армении / Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, Եր. 2000, стр. 66-67.*

[2] *Մ. Խորենացի Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 229:*

[3] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Յառաջաբան Ստ. Մալխասյան, Ս.Պբ., 1885, էջ 283:*

գտնվող Սյունիքի Վայոց ձոր, նրան սահմանակից Ճահուկ գավառները, Ծղուկ գավառի հյուսիսային մասն ու Աղահեճք գավառը: Ճիշտ է, Ասողիկի մոտ հիշատակություն չկա այն մասին, որ Գագիկը գրավել է նաև Աղահեճքն ու Այլախ (Ծղուկ) գավառը, սակայն Գագիկն անպայման պետք է նախապես տիրապետած լիներ այս գավառներին, այլապես Գագիկի տիրույթները Խաչենում ու Փառիսոսում կտրված կլինեին նրա պետության մասը կազմող Վայոց ձորից:[1] Գագիկ Ա-ն, հանդես գալով Սյունիքի անջատողական ձգտումների դեմ, մոտավորապես 990-992թթ. ձեռնարկում է մի արշավանք, որով Անիի թագավորությանն են միացվում Վայոց ձորը, Ծղուկի մի մասը (Այլախ գավառ), Աղահեճքը և Ճահուկը: Ստեփանոս Օրբելյանի պատմությունը ևս վկայում է, որ հիշյալ գավառները չեն գտնվել Սյունիքի թագավորության կազմում: Հետևաբար Սյունիքի թագավորությունն Անիի թագավորությունից կարող էր բաժանվել հետևյալ բնագծով. Հագարի գետի Աղօղլան վտակի և Որոտան գետի ջրբաժան լեռներով, ապա Իշխանասար, Կարմիրսար, Ծղուկ հրաբխային գագաթների գծով դեպի արևմուտք՝ մինչև Սյունյաց լեռների հետ հատվելը[2]: Այնուհետև սահմանը պետք է անցներ Ճահուկ գավառն արևելքից ու հարավ- արևելքից եզերող Սյունյաց լեռներով:

Ասողիկի վկայությամբ Անիի թագավորության մեջ են մտել նաև Խաչենն ու Փառիսոսը: Գագիկ Ա-ն ու Գանձակի նորընծա ամիրա Փադլունը անժառանգ Սենեքերիմ և Գրիգոր եղբայրների մահվանից հետո իրենց մեջ բաժանում են Փառիսոսի թագավորության տարածքը[3]: Դաշտային մասերն անցնում են Շադդադյաններին, իսկ լեռնային ու նախալեռնային մասերը՝ Գագիկին: Իսկ Խաչենի վերաբերյալ Վարդան Արևելցին գրում է. «Արցախ Խաչէնք է»,[4] ինչը ենթադրել է տալիս, որ Գագիկ Ա-ն իրեն էր ենթարկել ոչ միայն Խաչենի իշխանությունը, այլև ողջ Արցախի տարածքը, կամ նրա մեծ մասը: Այսպիսով, Անիի թագավորությունը Գագիկ Ա-ի օրոք արևելքում ներառում էր Արցախն ու Ուտիքի հյուսիսարևմտյան մասը՝ արևելքում սահմանակցելով Գանձակի Շադդադյան ամիրայությանը: Արաբ հեղինակներ Իբն Հաուկալը և Իսթահրին Բագրատունիների Հայոց թագավորության արևելյան սահմանները հասցնում են մինչև Բարդաա (Պարտավ-Վ.Ա.):[5] Հ. Դրասխանակերտցին Բագրատունիների թագավորության հյուսիսարևելյան սահմանների վերաբերյալ ունի

---

[1] *Թ.Հակոբյան, նշվ. աշխ., էջ 69:*

[2] *Թ.Հակոբյան, նշվ. աշխ., էջ 70:*

[3] *Ստեփանոս Ասողիկ, էջ 283:*

[4] *«Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 11:*

[5] *Ибн-Хаукаль,տե՛ս СМОМПК вып.38,Тифлис,1908, стр. 89. Ал-Истахрий, տե՛ս, СМОМПК, вып 29, Тифлис, 1901, стр. 19. Տե՛ս նաև «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» 16: Արաբական աղբյուրներ Գ: Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005, էջ 631, 575:*

այսպիսի վկայություն. «եւ անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչեւ ի քաղաքն Տփղիս. եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր»:[1]

Գագիկ Ա-ին հաջողվում է ճնշել նաև Տաշիր-Զորագետի թագավորության անկախացման փորձը՝ պայմանավորված Դավիթ Անհողինի օրոք (989-1048թթ.) այդ թագավորության ներքին ու արտաքին դրության ամրապնդմամբ. «Ընդ որ ցասուցեալ Գագկայ արքայի՝ գնաց զօրօք ի Տաշիր և շրջան առեալ ընդ Շամշուլտէ և ընդ Վրաց դաշտ՝ քանդեալ աւերեաց զամենայն:...Եւ Դաւիթ...եկն ի հնազանդութիւն Գագկայ արքայի, և հանդիպեցաւ նմա յաւանն Շիրակայ: Եւ ուխտ խաղաղութեան հաստատեալ կալ ի հնազանդութեան Դաւթի, իբրև որդի առ հայր, և Գագկայ հայրենի խնամով սիրել զնա»:[2]Այսպիսով, Գագիկը ռազմակալել էր Դավիթ Անհողինի տիրույթները և հաշտությունից հետո, ինչպես երևում է այլ տեղեկություններից, Դավթին է վերադարձրել թագավորության տարածքի միայն մի մասը՝ Տաշիր գավառը: Իսկ Աղստևի լեռնահովիտը բռնագրավել և հանձնել է իր ավագ որդի Հովհաննես Սմբատին.[3]: 1020թ. ժառանգելով գահը՝ Հովհաննեսը Աղստև գավառը, որտեղ գտնվում էր Կայան բերդը, հանձնում է Պահլավունի Վասակ Հոլումին, որի որդին՝ Գ. Մագիստրոսը, 1045թ. Աղստևի հովիտը՝ Կայան բերդով և Բջնիի իշխանության հետ հանձնում է Բյուզանդիային: Այսպիսով, Անիի թագավորության սահմանն այս շրջանում հասնել էր մինչև Դեբեդի հովիտ:

1000թ.՝ Դավիթ Կյուրապաղատի մահից հետո, նրա կտակի համաձայն, Բարսեղ Բ-ն կայսրությանն է միացնում նրա ստացած բոլոր պարգևական կալվածները՝ Կարինը, Բասենը, Հարքը, Ապահունիքը,Մարդաղին, Խաղտոյառիճը և Զորմայրին, որի հետևանքով Անիի Բագրատունյաց թագավորությունը Տուարածաջուր և Դալառ, Մեղ և Բաղնոց գետերի ջրբաժանով սահմանակից է դառնում Բյուզանդիային: Սակայն, աղբյուրների համաձայն, երբ Բյուզանդիան Վասպուրականի թագավորությանն է հանձնում Մանազկերտը, Խլաթը, Արճեշը, Արծկեն և Բերկրին[4] (ամենայն հավանականությամբ՝ իր գերիշխանությունը ճանաչելու պայմանով), իսկ Գագիկ Ա-ն Արծրունիներից վերագրավում է Ծաղկոտն ու Կոգովիտ գավառները,[5] Վասպուրականի և Անիի թագավորությունների միջև սահմանը ենթարկվում է նոր փոփոխությունների՝ անցնելով Ծաղկանց լեռների արևելյան հատվածով, Թոնդրակով և Կոտուրի լեռների հյուսիսային փեշերով, ապա՝ Սինոռ լեռներով մինչև Երասխի և Արփայի գետախառնուրդը: Հդ.

---

[1] *«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Եր., 1996, էջ 164:*
[2] *Ստեփանոս Ասողիկ, էջ 280:*
[3] *«Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ,Ս. Ղազար,1862, էջ 92:*
[4] *Հ. Տաշյան, Յուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 100:*
[5] *Ստեփանոս Ասողիկ, էջ 278:*

վերջին տասնամյակում Գագիկ Ա-ին հաջողվում է իրեն ենթարկել նաև Դվինը, Նախճավանն ու Գողթնը:

Ամփոփելով և ամբողջացնելով վերը շարադրվածը՝ Գագիկ Ա-ի օրոք Անիի թագավորության սահմանները փորձենք ներկայացնել ամբողջությամբ: Հիմք ընդունելով այն իրողությունը, որ Շիրակի Բագրատունիներին էին ենթակա Կարսի թագավորությանը սահմանակից Աշոցք, Շիրակ, Ճակատք, Բագրևանդ գավառները, Արշարունիքի արևելյան մի փոքր հատվածը, իսկ սահմաններն էլ հիմնականում անցնում են որոշակի բնագծերով՝ Անիի թագավորության արևմտյան սահմանը, որտեղ այն սահմանակից էր Կարս-Վանանդի թագավորությանը, կարող էր անցնել հետևյալ բնագծով. Եղնախաղի լեռներով հասնելով Մեծագետ և Ախուրյան գետերի գետախառնուրդը՝ այն անցնում էր Ախուրյանի կազմած անկյունով, ապա դեպի հարավ՝ Արջո-Առիճ լեռներով մինչև Երասխ: Երասխի հովտով սահմանը հասնում էր մինչև Կողբ և թեքվում հարավ: Քանի որ Կողբը գտնվում էր Անիի թագավորության տարածքում,[1] իսկ Աղտոռորի լեռնանցքի վրա գտնվող Շատիկ ամրոցը՝ Կարսի թագավորության մեջ, ապա այս հատվածում սահմանը կարող էր անցնել Բարդողի լեռներով՝ հասնելով մինչև Հայկական պար լեռնաշղթայի Սինակ գագաթը: Այստեղից այն թեքվում էր դեպի արևմուտք և անցնում Ջրաբաշխ լեռներով, որոնք Կարսի թագավորության Բասեն, Գաբեղյանք և Արշարունիք (Կեչրոր) գավառները բաժանվում են Անիի թագավորության Բագրևանդ գավառից: Կարսի թագավորության հետ Անիի սահմանները գործնականում մնում են անփոփոխ մինչև թագավորության անկումը:

Հարավ-արևմուտքում Անիի թագավորությունը Բյուզանդական կայսրությունից բաժանվում էր Տուարածաջուր և Դալառ, Մեղ և Բաղնոց գետերի ջրբաժանով, հասնում մինչև Ծաղկանց լեռներ: Հարավում թագավորության սահմանը կազմում են Ծաղկանց լեռների արևելյան հատվածը և նրա շարունակությունը կազմող Թոնդրակի լեռները, այնուհետև սահմանն անցնում էր Կոգովիտ գավառն Արտազ գավառից բաժանող Սինոռ լեռներով՝ հասնելով մինչև Երասխ: Թեքվելով հարավ-արևելք՝ սահմանն անցնում էր Երասխ գետով, որով Անիի թագավորությունը բաժանվում էր Վասպուրականի թագավորության հյուսիսարևելյան շրջանից: Սահմանը Երասխ գետով շարունակվում էր մինչև Սյունիքի լեռների հարավային շրջան, ապա թեքվելով դեպի հյուսիս՝ անցնում էր Սյունիքի թագավորությունն արևմուտքից եզերող Սյունյաց լեռների հարավային հատվածով՝ հասնելով մինչև Ծղուկ, Կարմիրսար, Իշխանասար հրաբխային գագաթները, որոնք եզերում են Անիի թագավորությունը հարավից՝ բաժանելով այն Սյունիքից: Արևելք սահմանն անցնում էր Հագարի գետի Աղօղլան վտակի և Որոտան գետի ջրբաժան լեռներով, ապա դարձյալ թեքվում էր

[1] *«Վիմական տարեգիր», Յուցակ ժողովածոյ Արձանագրութեանց Հայոց, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 91:*

դեպի հարավ, անցնում Սյունիքի թագավորությունն արևելքից եզերող Արցախի լեռների Քիրս-Դիզափայտ հատվածով և Աղավնո գետի ստորին հոսանքի շրջանով հասնում էր Երասխ: Դեպի արևելք սահմանն անցնում էր Երասխ գետով: Քանի որ արևելքում Անիի թագավորության մեջ էր մտնում Արցախը, ուստի սահմանը հասնում էր մինչև Արցախի արևելյան սահմանը կազմող Կուրի դաշտավայր: Թագավորության հյուսիս-արևելքում այն անցնում էր Գարդման գետի միջին և ստորին հոսանքով և Կուր գետով: Ապա թեքվելով դեպի արևմուտք՝ Անիի թագավորությունը Տաշիր-Ձորագետից բաժանող սահմանն անցնում էր Աղստևի հովտով, Միափորի և Արեգունու լեռներով՝ Ճամբարակի հովիտը թողնելով Տաշիր-Ձորագետի թագավորության սահմաններում: Անիի թագավորության հյուսիսային սահմանը անցնում էր Բամբակի և Կանգարք լեռներով, ապա Ջավախքն Աշոցքից բաժանող Աշոցքի լեռներով՝ հասնելով Եղնախաղի լեռներ:

Գագիկ Ա-ի մահվամբ դրությունը փոխվում է: Նրա որդիներ Հովհ. Սմբատը և Աշոտը երկար պայքարից հետո միմյանց միջև բաժանում են Անին: Լաստիվերտցին, որ ժամանակակիցն է, գրում է. «...եկեալ թագաւորն Ափխազաց Գէորգ՝ ի խաղաղութիւն համոզեաց զնոսա. և տայ բաժին երկանուանն Սմբատայ՝ զամուրն Անի և որ շուրջ զնովաւ գաւառք, վասն անդրանկութեան. իսկ Աշոտայ զներքին կողմն աշխարհին՝ որ հայի ի վերայ Պարսից եւ Վրաց»:[1] Ուռհայեցին վկայում է.«...մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, և Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի. և եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն տանն Հայոց»:[2] Պատմիչները ներկայացնում են Հովհաննես Սմբատին անցած տարածքները, ինչը չի կարելի ասել Աշոտին անցած տարածքների մասին: Պարզ է, որ Աշոտին են անցնում այն գավառները, որոնք չեն հիշատակվում Հովհ. Սմբատի բաժնում: Դրանք հիմնականում արևելյան գավառներն են՝ Նիգ, Կոտայք, Գեղամա երկիր, Վայոց ձոր, Խաչեն, Փառիսոս և այլն: Աշոտի իշխանությանը ենթակա էին նաև Բագրատունյաց ոստանի՝ Վրաց թագավորությանը սահմանակից մարզերը՝ Կարսի և Կյուրիկյան թագավորությունները:[3]

Շադդադյանները, որոնք արդեն հաստատվել էին Գանձակ, Պարտավ, Շամքոր քաղաքներում, օգտվելով Գագիկ Ա-ի մահից հետո նրա որդիների միջև ծագած գահակալական վեճի պատճառով երկրում առաջացած անկայուն վիճակից, ընդլայնում են իրենց տիրույթները: Փաղլուն ամիրան գրավում է «զՇաշուաղ եւ զՇօթս: Կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Գանձեաց՝ սպանանէ եւ առնու զերկիր նորա: Եւ այսպէս զօրացեալ տիրէ Խաչենոյ եւ Գորոզոյ եւ Սևորդեացն...տիրէր եւ

[1] *«Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», Եր., 1963, էջ 27:*
[2] *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 10:*
[3] *Ռ.Մաթևոսյան, Տաշիր-Ձորագետ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1982, էջ 89:*

Դունայ»:[1] Ըստ Վ. Սինորսկու Գանձակի Շադդադյանների կողմից 1022թ. գրավվում է նաև Դվինը[2], և Դվինից Գողթան ձգվող հատվածը վերջնակապես կտրվում է Հայոց թագավորությունից:

Հովհաննես Սկիլիցես պատմիչը գրում է, որ 1045թ. Կոստանդին Մոնոմախ կայսրը նամակ է ուղարկում «Դվինի և Արաքս գետի շուրջ ընկած Պերսարմենիայի կառավարիչ Ապլեսֆարեսին (Աբու-լ-Ասուար), որով կոչ էր արվում ասպատակել Մեծ Հայքը և Գագիկին ենթակա երկիրը»:[3] Օգտվելով բյուզանդացիների հարձակման հետևանքով Անիում ստեղծված ծանր դրությունից՝ Աբու-լ-Ասուարը դեռևս մոտավորապես 1042թ. Բագրատունիներից գրավում է Սուրմառին, Ամբերդը և Ս. Գրիգորը, որ հավանական է՝ Դվինից հարավ գտնվող Խոր վիրապն է:

Անիի Բագրատունիների կենտրոնական թագավորությունը Գագիկ Ա-ի օրոք ընդգրկում էր «Աշխարհացոյց»-յան հետևյալ գավառները՝ Այրարատ աշխարհի Աշոցք, Շիրակ,Արագածոտն, Նիգ, Մազազ, Վարաժնունիք, Կոտայք, Ոստան Դվնա, Ուրծաձոր, Արած, Մասյացոտն, Արշարունիքի արևելյան մասը (Աշոռնեք), Ճակատք, Կոգովիտ, Բագրևանդ, Ծաղկոտն, Սյունիքի Գեղարքունիք, Սողք, Վայոց ձոր, Ճահուկ, Ծղուկ (Այլախ), Աղահեճք, Արցախի Քուստ-ի Փառնես, Կողթ, Ծար (Վայկունիք), Բերձոր, Մեծկուենք, Մեծիրանք, Հարճլանք, Պիանք, Մուխանք, Մյուս Հաբանդ, Սիսական-ի Կոտակ, Ուտիքի Տուչքատակ, Գարդման, Վասպուրականի Նախճավան, Գողթն, ինչպես նաև Կայան (Ուտիք աշխարհի Աղուե գավառ) և Կայծոն (Գուգարքի Տաշիր գավառ) բերդերը:

Քնարիկ ՍԱՐԳՍՅԱՆ (ԳՊՄԻ)

ԿԱՆԱՆՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿՈՒՄ X–XIII դդ.

Հայ պատմիչների երկերում տեղ գտած վկայություններն ու փաստերը, վիմական արձանագրությունները հնարավորություն են ընձեռում ներկայացնելու Հայաստանի տարբեր մասերում հայ կանանց ծավալած շինարարական գործունեությունը, որով նպաստել են ճարտարապետական-շինարարական արվեստի և հայ մշակույթի զարգացման գործին:

Բագրատունյաց թագավորության վերելքի շրջանում (X դ. II քառորդից սկսած մինչև XI դ. 40-ական թթ.) քաղաքական անդորրության և տնտեսական բարգավաճման պայմաններում մեծ զարկ տրվեց շինարա-

---

[1] *Ռ.Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 101:*

[2] *Minorsky V., Studies in Caucasin Histori, London, 1953, էջ 22:*

[3] *Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» 10, Բյուզանդական աղբյուրներ Գ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1979, էջ 147:*

ղությանը: Այս բնագավառում թագավորական տների, իշխանական տոհմերի կանայք իրենց ուրույն ձեռագիրն են թողել: Ղևոնդ Ալիշանը գրում է. *«Կանայք Հայկազիանք առաքինացան ... ի շինութիւն, յամրութիւն՝ ի ճոխութիւն Անւոյ. որպիսիք ոմանք Խոսրովանոյշ թագուհի՝ կին Աշոտոյ Ողորմածի, Կատրանիդէ* թագուհի՝ կին Գագկայ Ա, Մարիամ Արծրունի՝ կին թագաւորին Վրաց, Ռուսուդան կին Իվանէի Օրբելեանց, Շանուշ շինող աշտարակաց և բազում այլք».*[1]

Հայկական ճարտարապետության գլուխգործոցը դարձած Անիի Մայր տաճարը վեր հառնեց հայոց թագուհի Կատրանիդեի շնորհիվ: X-XIդդ. պատմագիր Ատեփանոս Տարոնեցին վկայում է. *«Կատրամիդէ թագուհի բարեպաշտուհի եղեալ, ... շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ...»*.[2] Կատրանիդե թագուհու գործունեության մասին, *«որ շինեաց զհրաշաձև եկեղեցին ի յԱնի»*[3] հավաստի տեղեկություններ է հաղորդում նաև Ս. Անեցին:

Կատրանիդեի արձանագրությունը, որը պահպանվել է Մայր տաճարի հարավային պատի արևմտյան անկյունի մոտ, Կաթողիկէ եկեղեցու ամենաընտիր փորված արձանագրությունն է,[4] Ի :ՆԾ: (1001) ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ :ՄԺԹ: ԹՈՒԻՆ ՀՈՌՈՄՈՑ...ԵՒ Ի ՄԵԾԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ՇԱՀԱՆՇԱՀԻ|, ԵՍ ԿԱՏՐԱՆԻԴԷ ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻ, ԴՈՒՍՏՐ ՎԱՍԱԿԱ| ՍԻՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՅ ԱՊԱՒ|ԻՆԵՑԱ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ԱՌՆ ԻՄՈ ԳԱԳԿԱՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ| ՇԻՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ,....:[5]

Անիում շինարարական աշխատանքներ կատարվել են ոչ միայն թագավորական, իշխանական տան կին ներակայացուցիչների, այլև առևտրականների (Դապտա խաթուն), հոգևորականների և նրանց ընտանիքի անդամների, նաև միջին կարողության տեր անձանց կողմից: Շինարարական և միաժամանակ նվիրատվական գործունեությամբ հայտնի էր Տրդատ քահանայի կին Խուշուշը: Պահպանվել է շինարարական արձանագրությունը Աբլղարիք Պահլավունու եկեղեցու դեպի արևմուտք 12-րդ կամարի մեջ. .... ՅԱՄԻ :ՈՒԲ: (1173/ ԹՈՒԱԿԱՆԻՆ). ԱՐԴ ԵՍ ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ՈՐԴԻ ՍՈՍԹԷՆԷՍ ՔԱՀԱՆԱԻ, ԹՈՌՆ| ԳԷՈՐԳԱ ԱՒԱԳԵՐԻՑՈ ԱՐՃՈՅ ԵՒ ԶՈՒԳԱԿԻՑ ԻՄ ԽՈՒՇՈՒՇ| ԱՂԱԽԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈՒՍԱԼՈՎ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՅ. ՇԻՆԵՑԱՔ ԶՄԵՐ ԳԱՆՁԱԳԻՆ ՀԱՅՐԵՆԻՔՍ ԶՍՈՒՐԲ ՓՐԿՉԻՍ.....ՇԻՆԵՑԱՔ ՍՍԱ ԺԱՄԱՏՈՒՆՍ ԱՄԱՐԱՆՈ ԵՒ ՁՄԵՐԱՆՈ...:[6] Ս.Սարգիս եկեղեցու 1210թ. ար-

---

* *Կատրանիդե, այլ աղբյուրներում՝ նաև Կատրամիդե:*

[1] *Ղ. Ալիշան, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 110:*

[2] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, ի Ս. Ժ., 1885, էջ 256:*

[3] *Ստեփանոս Օրբելյան, Պատմություն Միսական նահանգին, Թիֆլիս, 1910, էջ 300:*

[4] *Յ. Գեղամեանց, Ախալցխայից մինչև Անի, «Փորձ» 1880, թիվ 8, էջ 109-110:*

[5] *Դիվան հայ վիմագրության, պրակ 1 /այսուհետ՝ ԴՀՎ/, Եր., 1966, էջ 35, N 101:*

[6] *ԴՀՎ, էջ 47, N 134:*

ձանագրությամբ Գրիգորի տիկինը՝ Սիթի Պահլավունին, իր հանգուցյալ ամուսնու միջոցներով նորոգել է համանուն եկեղեցին. ...ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑԻ ՁՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐ|ԴԵԱՆՑ ԱՌՆ ԻՍՈ...:[1] Հռոմի եկեղեցու երեսպատման քարի վրա փորագրված արձանագրության համաձայն՝ Հռոմոմ տիկինը և իր որդին ՝ Զենիշահը, նորոգել են Ս.Աստվածածին եկեղեցին. Ի ԹՎԻՆ ՈԿԶ: ՇՆՈՐՀԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԵՍ ՀՈՌՈՄ ՏԻԿ|ԻՆ, ԴՈՒՍՏՐ ՅՈՎԱՆԻՍԻ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳ|ԵՑԻ ՁՈՒՐԲ ԱԾԱԾԻՆՍ Ի ՀԱԼԱԼ ՅԱՐԴԵԱՆՑ| ԻՍՈՑ ԵՒ ՈՐԴԻ ՁԵՆԻՇԱՀ Ի ԲԱՐԵԽԱԻ|ՈՒԹԻՒՆ ՄԵՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ:[2]

Քարիմաղինի եկեղեցու զանգակատան կառուցմանը մասնակցել է Դապտա խաթունը,[3] 1271թ. Քորգին և իր կինը՝ Սթէէսը կառուցել են Անիի վիմափոր եկեղեցին.[4] Շիրակ գավառի Բագնայր գյուղում (Բագնայրի վանքը կառուցել է Սմբատ Մագիստրոսը) պահպանվել են մատուռների արձանագրություններ. հիշատակված են շինարարական և նվիրատվական գործունեություն ծավալած կանանց անունները՝ Միսման, Խաթուն:

Շիրակ գավառում է գտնվում Հռոմոսի Ս.Հովհաննես եկեղեցին, որի հարավային ու հյուսիսային կողմերում կան երկու քառանկյունի գմբեթակիր մատուռներ: Հարավային մատուռն ունի շինարարական արձանագրություն (XIIդ. 1-ին տասնամյակ), որը վկայում է... ԵՍ ԽՈՒԹԼՈՒ ԽԱԹՈՒՆՍ ԴՈՒՍՏՐ ՌՈՒԶՈՒՔԱՆԱ ՇԻՆԵՑԻ ԶԻՄ ՆԱԽՆԵԱՑ ՏԱՊԱՆԱՏՈՒՆՍ:[5] Իսկ վանքի համալիրի մեջ են մտնող նշխարատներից մեկում կարդում ենք. ՈՀԸ: ԵՍ ՎԱՉԷ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԻՄ ԱՍՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՍԱ ԽԱԹՈՒՆ ԴՈՒՍՏՐ ԱՊՈՒՍԵՐՀԻՆ ՇԻՆԵՑԱՔ ՁՆՇԽԱՐԱՏՈՒՆՍ Ի ՎԱՆՔՍ ՀՈՌՈՄՈՍԻ...,[6] մյուսում՝ ԹՎ ՉԻԶ ...ՍԱՐԳՍԻ ՈՐԴԻՍ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ՍԷԴԱ ՇԻՆԵՑԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ՁՆՇԽԱ[ՐԱ]ՏՈՒՆՍ...:[7]

Շիրակ գավառում 989-1029թթ. ընթացքում կառուցված Մարմաշենի եկեղեցու շինարարությանը ջանադրաբար մասնակցել է Վահրամի մայրը՝ Հայոց տիկնաց տիկին Շուշիկը,[8] որը եկեղեցու հիմնադրումից հետո ևս ձեռնամուխ է եղել այլ շինարարական կառուցումների:[9]

Կանայք իրենց ունեցվածքը ներդրել են նաև հասարակական բնույթի շենքերի և կառույցների (կամուրջներ, բերդեր, ջրմուղներ) շինարա-

---

[1] *Նույն տեղում, էջ 55, N 162:*
[2] *Նույն տեղում, էջ 66, N 204*
[3] *Նույն տեղում, էջ 65, N 197:*
[4] *Նույն տեղում, էջ 67-68, N 209:*
[5] *Նույն տեղում, էջ 156:*
[6] *Ալիշան, Շիրակ, էջ 24:*
[7] *Ա. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 157-158:*
[8] *Ս. Մաղումյան, Մարմաշենի վանք, Սուրբ Էջմիածին, Վաղարշապատ, 1998, էջ 13: Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 315:*
[9] *И. Орбели, Надписи Мармарашена, Избр. Труды, Ер., 1963, стр. 1.*

ությանը: Անիի բերդերն իրենց պարիսպներով ու աշտարակներով պաշտպանել են քաղաքը թշնամուց: Հայուհին և՛ կառուցել է սրանք, և՛ կռվել ոսոխի դեմ: Անիական կյանքն առաջ քաշեց այդպիսի քաղաքացուհու կերպար՝ Այծեմնիկին, որ *«յայսմ պատերազմի առաքինացաւ ի վերայ պարսպացս...»*.[1] Վիմագրերը հավաստում են Անիում կանանց կառուցած պարիսպների ու աշտարակների մասին տեղեկությունները: XII դ. Անիի Սմբատյան պարիսպների վերականգմանը և աշտարակների շինարարությանը մասնակցել են և կանայք՝ Մամախաթունը, Շանուշը, Մամշահը: Ըստ Մամախաթունի բուրգի ներս ընկած և շրջանակավորված երկու առանձին քարերի վրա պահպանված վիմագրի՝ Խաչերես Լոռեցու դուստրը հոր կողմից ստացած դրամով է կառուցել բուրգը,[2] իսկ մեկ այլ շինարարական արձանագրության համաձայն՝ ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ| ՇԱՆՈՒՇՍ, ԿԵՆԱ/ԿԻՑ ԽԷՉԷՐԵՍԻ ԱՆԴԱՐՁԱՒ ԽԷՉԷՐԵՍԻ Շ|ԻՆԵՑԻ ԶԲՈՒՐՁՆԵ|ՐՍ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՋ:[3]Հոնենցի եկեղեցու արևելյան պատի հարավային անկյունի մոտ պահպանված արձանագրությունը հավաստում է 1310թ. Մաթէսի, նրա կնոջ՝ Սթէնիի և եղբոր՝ Մարկոսի կողմից եկեղեցու ջրատարի կառուցման փաստը.:[4]

Մատենագրական ու վիմագրական սկզբնաղբյուրների մեկնությունների հիման վրա կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ կինը հավասար մաս և բաժին է ունեցել հայրենական տան ունեցվածքից, ժառանգել է անշարժ և շարժական գույք, վայելել իր ունեցվածքը տնօրինելու լիակատար ազատություն: Միջին դարերում կինը ժառանգման, գույքային փոխհարաբերությունների ոլորտում եղել է ազատ, ունեցվածքի տնօրինման, գույքի օտարման իրավունքը ընտանիքում իրականացրել է առանձին՝ ընդսմին համատեղ հանդես գալով ընտանիքի անդամների և ամուսնու հետ: Կինը սեփականատեր է եղել օժիտի, վարձանքի, ժառանգման, նվիրատվության և այլ միջոցներով իրեն փոխանցված գույքի նկատմամբ: Կանայք լիիրավ կողմ են եղել առուծախի և այլ գործարքների ժամանակ, զբաղվել են բարեգործությամբ, հայտնի են վանքերին ու եկեղեցիներին իրենց կատարած նվիրատվություններով, գյուղերն ազատել են հարկերից:Այսպես՝ Խոսրովանուշ թագուհին Տեկորում թողել է արձանագրություն, որով 971թ. սահմանել է շարիատ հարկի չափը:[5] Կատրանիդե թագուհին 1008թ. Տեկորի վանքը ազատում է շարիատի հարկից՝ այդ մասին արձանագրություն թողնելով Տեկորի տաճարի արևմտյան դռան կատարը պսակող քանդակազարդ աղեղի վրա.:[6] Մրենում պրն Մենոպ Սահմադինը իր կնոջ հետ 1288թ., ըստ տաճարի հարա-

---

[1] *Սամուէլի քահանայի Անեցւոյ, էջ 126-127:*
[2] *ԴՀՎ 1, էջ 3, N 5:*
[3] *Նույն տեղում, էջ 4, N 8:*
[4] *Նույն տեղում, էջ 63-64, N 189:*
[5] *Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 285:*
[6] *Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 13:*

վային պատին թողած արձանագրության, զիջում են Մրենի բնակիչներից գանձվող հարկերը:[1] 1320թ. Շահանշահ Բ-ի կինը՝ պատրոն Խուանդզան, իր վախճանված ամուսնու հոգու փրկության համար զիջում է «մեծ և փոքր դռնագիր» կոչված անասնատուրքը:[2] Վիմագրերում հիշատակվում է «հայրենիքը»՝ որպես ամուսինների ընդհանուր սեփականություն. Բագնայրի արձանագրություններից մեկում Շարափշահի դուստր Թաիկը 1262թ. իր հայրենիք հողը նվիրում է Բագնայրի ուխտին. ...ԵՏՈՒ ԶԻՄ ԳԱՆՁԱԳԻՆ ՀԱՅՐԷՆԻՔՍ ԶՆՈՐՍՆ Ի ՄԵՐ ՈՒԽՏՍ, Ի ԲԳՆԱՅՐՍ, Ի ՍԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ...:[3]

Արջո Առիճի (Ալաջա) եկեղեցու պատին արված մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ 1207թ. Գորգկանի դուստր Ավագ տիկինը Ս. Աստուածածնին է նվիրել ծնողներից օժիտ ստացած «կէս ակն ձիթհանքն»:[4] Հոռոմոսի վանքի արձանագրություններից մեկում կարդում ենք՝ ԵՍ ՄԱՍՔԱՍ, ԴՈՒՍՏՐ ԱՍՂԱՒԻՆ ԵՒ ԹՈՌՆ ՏԻԳՐԱՆԱՅ, ԵՏՈՒ ԶԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ ԲԱԺԻՆՔ ԳԵՂՆ ԶՃՈՒԽՔԱԳՈՆ Ի ՍԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ...:[5]Հառիճի վանքի Ս.Աստվածածին եկեղեցու դռան հյուսիսային կողմում պահպանված արձանագրության համաձայն՝ ամուսինները եկեղեցուն են նվիրում իրենց շինած ձիթհանը:[6]

Հոգևորականները մեծ եկամուտներ էին ստանում իշխանների ու իշխանուհիների նվիրած կուղպակներից: Կանանց կողմից կուղպակների նվիրատվության մասին շատ են հիշատակությունները Շիրակ գավառի և հատկապես Անիի վիմական արձանագրություններում: Անիի Ս.Գրիգոր եկեղեցու մուտքի բարավորի վրա պահպանված երկու արձանագրություններում հիշատակվող Գրիգոր Պահլավունու ամուսին Շուշան տիկնաց տիկինը 994թ. ...ԵՏՈՒ ԶՄՐՈՒ|ԱՆԱ ԿՈՒՂՊԱԿՍ Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ...[7], որ նա գանձագին էր արել, այսինքն գնել էր, իսկ երկրորդ արձանագրության մեջ, հավանաբար, նշված է կուղպակի գնի կամ ստացվող եկամտի չափը[8]. ...ԵՏՈՒ ԶՄՐՈՒԱՆԱ ԿՈՒՂՊԱԿՆ Ի ՍՈՒՐԲ| ԳՐԻԳՈՐ :Զ: ԴՐԱՄ :Լ: ՍԵԴԱՒ ԵՒ :Ծ: ՄՐՈՒԱՆԱ ...:[9] Արջո Առիճի եկեղեցին ստացել է կուղպակ Վահրամ և Փառանց ամուսինների կողմից:[10] Անիից ոչ հեռու գտնվող Խծկոնքի վանքը ունեցել է սեփական կուղպակներ, որոն-

---

[1] *Ի. Օրբելի, Надписи Мрена, Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Եր., 1974, էջ 38: Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 199:*

[2] *ԴՀՎ 1, էջ 27, N 82:*

[3] *Վիմական տարեգիր, էջ 105:*

[4] *Նույն տեղում, էջ 122:*

[5] *Վիմական տարեգիր, էջ 122:*

[6] *Ա. Եղիազարյան, Հառիճավանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, Ա, էջ 62:*

[7] *ԴՀՎ 1, էջ 32, N 94:*

[8] *Գ. Սարգսյան, նշվ. հդվ., էջ 269:*

[9] *ԴՀՎ 1, էջ 31, N 93:*

[10] *Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 121-122:*

ցից մեկը 1221թ. նվիրել են Շեխեանց Խաչոտը և իր կին Ավագ տիկինը:[1] Պահլավունյաց Շարափշահ իշխանի կինը՝ Թագուհին, 1230թ. Բագնայրի ուխտին է նվիրում ...ՍԱՌԸՃՓՈՂՈՅԻՆ ԿՈՂՊԱԿ ՎԵՐԻ Ի ՇԱՒՐԱԿՈՒԱՆԻՆ ՁՍԱՐԳՆ,ՈՐ ՃԼՈՒՏ ԿՈՉԻ...:[2] Երկու կուղպակ է նվիրել վանքին նաև Շարափշահի դուստր Թաիկը:[3] XIIIդ. արձանագրություններից մեկում հիշատակվող Հոգևորյանց տոհմից Առյուծն իր կողակից Սեղայի հետ իրենց կուղպակը նվիրաբերել են Հոռոմոսի վանքին:[4]

Վերոհիշյալ վկայությունները պատմական հավաստի և իրեղեն ապացույցներ են Շիրակում հայ կանանց հասարակական բազմաբովանդակ գործունեության՝ արժանի հարգանքի ու երախտագիտության:

Աշոտ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ (ՀԱԻ)

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԱՆՔԻՑ

Հռչակավոր Մարմաշենի վանքի Ս.Աստվածածին կաթողիկե եկեղեցու սրահում պահվում են մեկ տասնյակի չափ վիմագիր բեկորներ, որոնք հայտնաբերվել են 1954-56թթ. (Հ.Եղիազարյան) և 1972-75թթ. (Ս. Հարությունյան) պեղումների ընթացքում: Դրանց մի մասը նախկինում հրատարակված արձանագրությունների կտորներ է,մյուսները՝ մինչ այժմ անհայտ բնագրերի հատվածներ: Այս ոչ ամբողջական սկզբնաղբյուրները, ինչպես պահանջում են հայ վիմագրագիտության հիմնադիր Հ.Օրբելու մշակած արձանագրությունների հավաքման, վերծանման ու հրատարակման գիտական մեթոդները, լինեն անգամ «*մեկ բառ կամ մի քանի տառ կազմող բեկորներ, նույն արժեքն ունեն, ինչ ձեռագրական պատառիկները...,և խտրականություն չպետք է դնել արձանագրությունների միջև ըստ նրանց բովանդակության, որովհետև մեկի համար այն ոչ կարևոր է թվում, մեկ ուրիշ մասնագետի համար կարող է արժեքավոր լիներ*»:[5]

Արդ՝ ներկայացվում են այն վիմագրական բեկորները, որոնք հայտնի արձանագրությունների մաս չեն և հրատարակվում են առաջին անգամ:

1. Արձանագրության բեկոր, 5 տող (լուսանկար № 1):

⌈ՇՆՈՐՀԻ⌉ԻՆ ԱՅ. ԵՍ Թ⌈ՈՒՄԱՅՍ/ ԵԿԻ ՁՍՈՒՐԲ

ՈՒԽՏՍ ՍԱՐՄԱՇԵԷՆ / ԵՒ⌉ՏԵՍԻ ՍԲ ՅԵ⌈ԿԵՂԵՑԻՍ/

ԱՎԵՐԱԿ ԴԱՐՁԵ⌊Ա⌋Լ. ՎԵՐԱՆ⌈ՈՐՈԳԵՑԻ ՁԱՅՆ

[1] *Վիմական տարեգիր, էջ 63:*
[2] *Նույն տեղում, էջ 78:*
[3] *Նույնը:*
[4] *Նույն տեղում, էջ 95:*
[5] *Դիվան հայ վիմագրության, պր. I, կազմեց Հ.Օրբելի, Առաջաբան, Եր., 1966, էջ XXIII:*

/ ՅԻՇԱՏԱԿ⌉ ԶԻՍ ԶԹՈՒԼՄԱ⌋ ՅՍ ԵՒ⌈ ԱԻՐՀՆԵԱՑ⌉
/ ՀԱՅՐ ՄԿՐՏԻՉ?⌈ ԶԱՍԵՆՍ⌉ ՇԻ⌈ ՆՈՂՍ⌉:



Ծանոթություն- Շինարարական բնույթի արձանագրություն է: Այն հավաստում է, որ Մարմաշենի վանքում XIII դ. սկզբին Գրիգոր արքեպիսկոպոս Պահլավունի-Ապիրատյանի իրականացրած վերանորոգումից հետո կատարվել է ևս երկրորդ նորոգում: Այն, ինչպես հիշատակագիրն է վկայում, իրագործել է Թումա (Թովմա) անունով վարպետը: Շինարարի անունը վիմագրի սկզբնամասում ամբողջացվում է չորրորդ տողում, մասամբ պահպանված «Թում⌈այ⌉ս» ձևի հիման վրա: Եթե ընդունելու լինենք այս վիմագրի ուշ միջնադարին պատկանելը, ապա այսպիսի անվամբ գրիչներ և քարգործ վարպետներ հիշատակվում են Սյունիքի XVI–XVIII դդ. արձանագրություններում:[1] Վերծանության ժամանակ բնագրի բացակայող հատվածները վերականգնվել են ըստ վիմագրերում լայնորեն տարածված բառակապակցությունների: Բնագրի վերջին՝ հինգերորդ տողը խիստ եղծված է ու միջնամասում ջարդված: Փակագրված է վանահոր անունը: Տառերի անկանոն փորագրություններն ու ժամանակի հարվածներն այն դարձրել են դժվար վերծանելի: Նախավերջին՝ ⌈ԶԱՍԵՆՍ⌉ փակագրից նշմարվում են միայն տառահետքերը:



2. Արձանագրության բեկոր,3տող (լուսանկար № 2):
…⌈Կ⌉ԱՆԳՆԵՑԻ ԶԱ⌈ՅՍ⌉…/ …ԾԱԽՍ ՍԵԾ⌈ԱՒ⌉
⌈ԵՒ ՓՐԿԵԱ ԱՆԱ⌉ ՀԱՌՍ ԱՀԵ⌈Ղ ԴԱՏԱՍՏԱՆԷ⌉:

Ծանոթություն - Շինարարական բնույթի վիմագրական բեկոր է մեծ միջոցներով ինչ-որ բան կանգնեցնելու, կառուցելու մասին: Առաջին տողում հազիվ նշմարվում է ԶԱՅՍ ցուցական դերանվան «Յ» տառը: Վերջին տողում «ՀԱՌ» տառակապակցության առկայությունը հնարավորություն է տալիս բառը վերականգնելու որպես «ԱՆԱՀԱՌ», իսկ «ԱՀԵ» տառերի շարքը, որտեղ «Ա»-ն և «Հ»-ն կցագրված են՝ իբրև «ԱՀԵՂ», որին պետք է հաջորդի «ԴԱՏԱՍՏԱՆ» բառը: Ուշ միջնադարում հավատացյալների, հատկապես ունևոր խավի ներկայացուցիչների մեջ արմատավորվել էր այն մտայնությունը, որ մեծ գումարով կարելի էր թողություն ստանալ և արժանանալ Աստծո գթասրտությանը:



3. Բեկոր, փոքր, 2 տող.

[1] *Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 115: Նույնի՝ Դիվան հայ վիմագրության, պր. 3, Եր., 1967, էջ 40, 201:*

……⌈ԱՍՏ ՈՒԱ⌉ԾԱԾԻՆՍ…/
Ն…ՈՐՔ ՁԳ….

<u>Ծանոթություն</u> – Քարի մակերևույթը ծածկված է կրաշաղախի շերտով, որ XIX-XXդդ. շինարարական աշխատանքների հետևանք է: Առաջին տողում հիշատակվում է Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցին՝ կաթողիկե Ս.Աստվածածինը:

4. Բեկոր, փոքր, 2 տող, կանոնավոր տառաձևերով (լուսանկար № 3):



…⌈ԿԱ⌉ՏԱՐԻՉ⌈ՔՆ⌉ԱՒՀԵՒՆ Ա̄Յ …
/…Ի ԹՈՒՄ⌈ԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ⌉…

<u>Ծանոթություն</u> – Նվիրատվական արձանագրության վերջնամաս է: Նվիրատուն կատարել է ընծայաբերություն: Նրա պատվին եկեղեցու սպասավորները պարտավորվում են անխափան պատարագ մատուցել որևէ եկեղեցական տոնի ժամանակ: Կատարողներն արժանանում են Աստծո օրհնանքին: Վկայագիրը կարելի է թվագրվել XIIIդարով:

6. Արձանագրության բեկոր, 3 տող: Պահվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, հնագետ Ս.Հարությունյանի աշխատասենյակում:

7. ՇՆՈՐՀԻՒՆ Ա̄⌈Յ⌉…



/ …⌈ԵՍ….ԵՒ Ո⌉ՐԴԻՔ ԻՄ…. Մ…
/ ՇԻ⌈Ն ԵՑԱՔ⌉:

<u>Ծանոթություն</u> –Հայտնաբերվել է 1972-75թթ. պեղումների արդյունքում: Շինարարական բնույթի արձանագրության սկզբնամաս է: Պատվիրատուն իր որդիների հետ Մարմաշենի վանքում նախաձեռնել է շինաշխատանքներ: Բացի վերը նշված բեկորներից՝ Մարմաշենի Ս. Աստվածածին եկեղեցու սրահում պահպանվում է հետևյալ, գրեթե ամբողջական վիմագիրը.

6. Սրբատաշ քարաբեկոր, 4 տող, անկանոն տառաձևերով (լուսանկար 4):



⌈Ա̄Յ⌉Ս ԳՐԵՑԻ ՅԱԿՈ⌈Բ⌉Ս. Ո⌈ՐՔ Կ⌉/
ԱՐ⌈Դ⌉ԱՅՔ. ՁՄԵՂՈՒՑԵԱԼ/ ԵՂԲԱՅՐՆ ԻՄ
⌈ՁՔԱ⌉Ջ ՓԻԼԻ /⌈ՊԵ Յ⌉ԻՇԵՍ⌈ՋԻՔ⌉Ի Ք̄Ս̄:

<u>Ծանոթություն</u>– Արձանագրության ամբողջությունից պակասում է մի փոքր ջարդված մաս՝ աջակողմի ստորին հատվածում, որը չի խանգարում բնագրի ընթերցմանը: Այդ ջարդվածքում եղել է «ՓԻԼԻՊԵ» անվան վերջին երկու տառը: Բնագրում «Փ» սկզբնատառից հազիվ նշմարվում է նշանագրի ուղղահայաց գծիկը օղակող մասնիկը, որը փորագրվել է թեքությամբ: Արձանագրությունը կրում է հիշատակագրային բնույթ: Մարմաշենի մի ան-

թվագիր վիմագրի մեջ, որն չի, հիշատակվում է ոմն Յակոբ, որի համար ամեն տարի սահմանվել է 3 օր անխափան պատարագ:[1]

7. Հյուսիսային կամ երկրորդ եկեղեցի,փոքր գավիթ,տապանաքար,2 տող.

Տ[Է]Ր Ս[ՈՒՐ]Ք. ՈՂՈՐՄԵԱՅ / ՄԱՄՔԻՆԱՅ ՀՈԳՈՅ[Ն]:



Ծանոթություն – Փոքր գավթի միակ արձանագրված տապանաքարն է: Դժվար է միայն տառաձևերով որոշել այս անթվագիր արձանագրության ժամանակը և պարզել Մամքանի ինքնությունը: Հ.Ակինյանի կազմած Պահլավունի-Ապիրատյանների տոհմածառում որպես տեր Գրիգորի կողակից հիշատակված է տիկին Մամքանը:[2]

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ԾՀՀԿ)

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ XVI-XVIII դդ.

XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին Մերձավոր Արևելքի քաղաքական թատերաբեմում կարևոր դեր սկսեցին խաղալ նոր կազմավորված Սեֆևյան Պարսկաստանն ու Սուլթանական Թուրքիան: Այդ ժամանակներից սկսած՝ Հայաստանը մոտ 225 տարի շարունակ դարձավ թուրք-պարսկական պատերազմների արյունոտ թատերաբեմ:

XVI դարի սկզբներից մինչև Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պահը ընկած ժամանակահատվածի Շիրակի քաղաքական պատմությունը, որ այս առումով գրեթե լիովին նույնանում է ամբողջ Հայաստանի քաղաքական պատմության հետ, ավերում, սով ու կոտորած բերող թուրք-պարսկական պատերազմների մի մռայլ ժամանակագրություն է, և սույն հաղորդման շրջանակներում մեկ առ մեկ թվարկել և նկարագրել այդ ամենը, կարծում ենք՝ հնարավոր չէ: Ուստի նպատակահարմար ենք համարում քննության ենթարկել միայն քաղաքական այն խոշոր իրադարձությունները, որոնք առանցքային նշանակություն ունեցան գավառի նշված ժամանակաշրջանի պատմության համար:

Թուրք-պարսկական առաջին պատերազմն սկսվեց 1512թ.՝ սուլթան Սելիմ Ա-ի և Շահ-Իսմայիլի միջև ահաբեկիչ նամակների փոխանակումից հետո: Վճռական ճակատամարտում, որ տեղի ունեցավ Չալդրանի դաշտում 1514թ. օգոստոսին, Շահ-Իսմայիլը խայտառակ պարտություն կրեց

[1] *Կ. Բասմաջյան, Հայերէն արձանագրութիւնք Անիոյ, Բագնայրի եւ Մարմաշիոնոյ, միկրոֆիլմ, Փարիզ, 1931, էջ 210:*

[2] *Հ. Ակինյան, Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեաց ազգաբանութիւնը, Հանդէս ամսօրեայ, թիվ 1-6, Վիեննա, 1954, էջ 43-44:*

և իր զորքերի մնացորդներով փախավ երկրի խորքերը՝ թուրքերին թողնելով Արևելյան Հայաստանի մեծագույն մասը, նաև Շիրակը:

Արևելյան Հայաստանին տիրանալու մարմաջը XVIդ. 50-ական թթ. առաջին կեսին կրկին բորբոքված թուրք-պարսկական նոր պատերազմի պատճառ եղավ: Նախահարձակ եղած Շահ Թահմազի արշավանքին ի պատասխան՝ թուրքերը, 1554թ. Կարսի վրայով անցնելով Ախուրյան գետը, մտան Արարատյան երկիրը և շարժվեցին դեպի Երևան՝ ճանապարհին ավերելով և հողին հավասարեցնելով գյուղերն ու շինությունները: Այս աղետաբեր արշավանքի հետևանքով Շիրակի դաժան ավերումների վերաբերյալ թուրք պատմագիրներ Իբրահիմ Փեչևին ու Սոլաք Զադեն գրում են. *«...Հաղթական բանակը քանդեց ու ավերեց քարաշեն գյուղերը, շինությունները ոչնչացրեց ու հողին հավասարեցրեց».*[1]

1554-1555թթ. տեղի ունեցած երկարատև բանակցություններից հետո 1555թ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց այդ տերությունների միջև: Այդ բաժանման արդյունքում Հայկական Պար լեռնաշղթայից դեպի հյուսիս ընկած բոլոր շրջանները, նրանց թվում նաև Արևելյան Շիրակը, մնացին Պարսկաստանի տիրապետության տակ: Սակայն 1555թ. կնքված հաշտությունը երկարատև չեղավ: 70-ական թթ. վերջերին սկիզբ առավ թուրք-պարսկական պատերազմների մի նոր շղթա, որը գրեթե առանց ընդհատման տևեց ավելի քան 12 տարի՝ 1578-1590 թթ.: Թուրքական 300000-ոց հեծելազորը, հարձակվելով Երևանի վրա, գրավեց այն՝ կայազորներ կարգելով նաև իր արշավանքի ճանապարհին գրավված Շորագյալի, Թալինի, Սուրմալուի և այլ բերդերում:[2]

Մինչև 1590թ. տևած այս շարունակական բախումների հետևանքով թուրքերին հաջողվեց ոչ միայն գրավել ողջ Անդրկովկասն ու Ատրպատականը, այլև սպառնալ բուն Պարսկաստանին: Ցանկանալով վերահաստատել 1555թ. թուրք-պարսկական սահմանագիծը՝ պարսկական բանակը Շահ-Աբաս-ի գլխավորությամբ 1603թ. գրավեց Թավրիզը, Նախիջևանն ու պաշարեց Երևանը: Դրան զուգընթաց՝ պարսկական մեկ այլ զորաբանակ, արշավելով դեպի արևմուտք, սոսկալի ավերածության ու կոտորածի ենթարկեց Շիրակի, Էրզրումի, Բասենի, Խնուսի գավառները, ինչի մասին առանձնակի ցավով են վկայել Առաքել Դավրիժեցին[3] և Զաքարիյա Քանաքեռցին:[4] Թուրքերը պարսկական այս հարձակմանը պատաս-

---

[1] *«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին», հ. Ա, Եր., 1961, էջ 33:*

[2] *«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին», հ. Բ, Եր., 1964, էջ 272:*

[3] *Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 29-30:*

[4] *Զաքարեայ Սարկաւագ Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 18: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620թթ.), հ. Ա, Կազմեցին՝ Ա. Հովհաննիսյան, Վ. Հակոբյան, Եր., 1974, էջ 129-130:*

խանեցին պարսիկների՝ Երևանը գրավելուց միայն երկուս ու կես ամիս անց, երբ Շահ-Աբասը տիրելով նաև Կարսին, *«...եհաս ի գաւառն Շիրակավանայ»*.[1] Սակայն սթափ դատելով, որ ուժերի քանակական հարաբերությունը իր օգտին չէ, և բաց ճակատամարտում թուրքերին դիմադրելն անհնար կլինի, Շահ-Աբասը նահանջեց՝ ամայացնելով իր նահանջի ճանապարհին ընկած բոլոր շրջանները (նաև Շիրակը), քաղաքներն ու գյուղերը, տեղահան անելով բնակչությանը:

1639թ. կնքվեց թուրք-պարսկական հաշտության նոր պայմանագիր, որ պատմությանը հայտնի է Կասրի-Շիրինի անունով: Ի դեպ, այդ պայմանագրով որոշված սահմանները[2] հիմք հանդիսացան նաև Թուրքիայի և Պարսկաստանի միջև 1746թ. կնքված պայմանագրի համար և գրեթե անփոփոխ մնացին մինչև XIX դ. առաջին քառորդը: Այդ պայմանագիրը 1639թ.-ից Հայաստանը վերջնականապես բաժանեց երկու՝ արևելյան և արևմտյան մասերի: Արևելյան Հայաստանը, որի մեջ էին Գուգարքը, Արշարունիքի մի մասը, Շիրակի արևելյան հատվածը՝ Գյումրի ավանով, Արարատյան դաշտը՝ Երևան քաղաքով, Ապարանի շրջանը մինչև Լոռվա լեռները, Նոր-Բայազետի և Նախիջևանի գավառները, Սյունիքը, Արցախը և Վասպուրականի արևելյան մասը անցավ Պարսկաստանին:[3]

Խնդրո առարկայի քննության տեսակետից տարածաշրջանի XVI-XVIII դդ. պատմաքաղաքական անցքերի այսպիսի համառոտ շարադրանքն անհրաժեշտ համարեցինք ոչ միայն ցույց տալու, թե Շիրակի գավառը վերոհիշյալ թուրք-պարսկական պատերազմների ընթացքում քանիցս ձեռքից ձեռք անցավ, այլև ընդգծելու, թե Հայաստանի աղետալի բաժանումը ինքնին որքան առավել աղետալի եղավ այս գավառի համար՝ տրոհվելով այն նույնպես երկու մասերի՝ Արևմտյան կամ Թուրքական և Արևելյան կամ Պարսկական[4]՝ իրենց ուրույն ճակատագրերով ու պատմաքաղաքական զարգացումներով: Այժմ ավելի մանրամասնենք Շիրակի գավառի արևելյան հատվածի նկարագիրը, թե ի՞նչ կարգավիճակ ուներ այն պարսկական տիրապետության տարիներին:

XVI դարի վերջերին Շիրակի արևելյան տարածքում կազմավորվում է Շորագյալի սուլթանությունը՝ Արթիկ կենտրոնով, որ հարավից սահմանակից էր Թալինի, արևելքից՝ Ապարանի մահալներին, արևմուտքից՝ Կարսի, հյուսիս-արևմուտքից՝ Ախալցխայի փաշայություններին, իսկ հյուսիս-արևելքից՝ Փամբակի սուլթանությանը:Շորագյալի սուլթանության ձևավորման մասին ժամանակագրական առումով կարծիք են հայտնել

---

[1] *Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 37: Հ. Նաջարյան, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Եր., 1959, էջ 40:*

[2] *Հ. Նաջարյան, 1639 թվականի թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Եր., 1969, էջ 26:*

[3] *Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, հ. 2, Եր., 1968, էջ 378:*

[4] *Ղ. Ալիշան, Շիրակ, տեղագրութիւն, պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 143:*

նախ Վ. Իվանենկոն,[1] ապա նաև Լեոն:[2] Երկուսն էլ իրողությունը ներկայացնում են հետևյալ կերպ. XVIդ. երկրորդ կեսին պարսից շահերի հրամանով Բորչալու և Ղազախ գավառներում (հին Գուգարքի մի մասը) բնակություն հաստատեցին մոտ 35000 թաթարներ: Այդ երկիրը պատկանում էր Վրաստանին և սկզբնապես բնակեցված էր հիմնականում հայերով, որոնք, տեղի տալով թաթարներին, հեռացան ավելի ապահով վայրեր (տեղում մնացին շատ քչերը): Թաթարները, որպես հուսալի տարր, չպետք է թույլ տային վրացիներին՝ ընդվզելու Պարսկաստանի դեմ և միևնույն ժամանակ մշտական հսկողության տակ պիտի պահեին վրաց արքունիքը: Սկզբում այս թաթարներն անկախ էին և կառավարվում էին իրենց խաների կողմից, բայց Նադիր Շահը սրանց ենթարկեցրեց վրաց Թեյմուրազ թագավորին, իսկ արդեն Հերակլ Բ-ն, օգտվելով Պարսկաստանում տիրող խառը իրավիճակից, Վրաստանը հռչակեց անկախ, իշխանություն ձեռք բերեց նաև թաթարական շրջանների կամ այսպես կոչված՝ թաթարական «դիստանցիաների» վրա: Դրանք Աղստև գետի մոտ բնակվող ղազախական, սրանցից հարավ-արևելք՝ Գյանջայի խանության սահմանին՝ Շամշադինի, արևմուտքում՝ Դեբեդ գետի մոտ՝ Բորչալուի, սրանից դեպի հարավ՝ Փամբակի, իսկ սրանից էլ արևմուտք՝ Երևանի խանության և Թուրքիայի սահմանին՝ Շորագյալի թաթարական դիստանցիաներն էին (ուղեմասեր - Ա.Հ.):

Սակայն անկախությունը կորցրած թաթարներին հաջողվեց պահպանել ներքին ինքնավարությունը, որ ունեին դեռևս պարսկահպատակության շրջանից: Նրանց գյուղերը կառավարվում էին աղալարների ու մելիքների կողմից, որոնք, հողի սեփականատերեր չլինելով և չվարձատրվելով պետության կողմից, ապրում էին ժողովրդից գանձված հարկերով: Իրրև ժողովրդի առաջնորդներ և նրա զորական ուժը գլխավորողներ, իրենց անձի մեջ կենտրոնացնելով նաև ներքին դատաստանական և վարչական իշխանությունը, սրանք հետզհետե հայտնվեցին կատարյալ իշխողների դրության մեջ: Աղալարները իրենցից մեկնումեկին ընտրում էին որպես գլխավոր՝ դիստանցիայի բոլոր բնակավայրերը կառավարելու և միմյանց միջև ծագած վեճերը հարթելու նպատակով: Ղազախում դրանք կոչվում էին վեքիլներ, իսկ Շամշադինում և Շորագյալում՝ սուլթաններ:

Պարսկական տիրապետության շրջանում Շորագյալի սուլթանությունը կամ նույն Արևելյան Շիրակը Այրարատ, Վարաժնունիք (Դարաչիչագ), Նիգ (Ապարան), Մազազ-ՈՒրծ-Մասսյացոտն (Գառնի-Վեղի), Ճակատք (Սուրմալու), Արագածոտն (Կարբի), Կոտայք (Կըրխբուլաղ) և Սյունիք աշխարհի Գեղարքունիք ու Սոդք գավառների հետ մտնում էր Չու-

[1] *В. Иваненко, Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901, стр. 25-27.*

[2] *Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ., գիրք 1, Եր., 1969, էջ 90-91:*

խուր-Սաադ կամ Չուգուր-Սաադ[1] կոչված կուսակալության մեջ, որ առաջացել էր արդեն XIVդ. վերջերին՝ կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակ, և սկզբնական շրջանում իր մեջ էր առնում նախկին Երասխաձոր և Ճակատք գավառներն ու դրանց մերձակա մի քանի շրջանները[2]: XVIդ. էլ ավելի ընդարձակվելով՝ այս կուսակալությունն իր մեջ ընդգրկում էր նախկին Այրարատ աշխարհի մեծագույն մասը, իսկ XVIIդ., ըստ Ադամ Օլեարիի վկայության, Երևանի բեյլերբեյությանը (նույն Չուգուր-Սաադի կուսակալությանը) ենթակա էին Դավիանը, Ջուղան, Սիսիանը, Քաշաթաղը, Երևանը Կըրխբուլաղը, Աղստաֆան, Ապարանը, Դմանիսը, Ալգետը, Չըլդրը և շատ այլ շրջաններ:[3] Ինչ վերաբերում է բուն Երևանի խանության XVIIդ. սահմաններին ու տարածքի մեծությանը, ապա այդ մասին վկայությունները տարտամ են ու ոչինչ չասող և թույլ չեն տալիս մեզ հստակ պատկերացում կազմելու այդ ժամանակաշրջանում Արևելյան Շիրակի պատկանելության հարցի մասին: Օրինակ՝ այդ դարի երկրորդ կեսի հայտնի հեղինակներից մեկը՝ Շարդենը, Երևանի խանության սահմանների վերաբերյալ բավարարվում է միայն հետևյալ անորոշ արտահայտությամբ. *«Երևանի խանությունը տարածվում է Երևանի շուրջը ավելի քան քսան մղոն: Այդ տարածության մեջ կան քսաներեք մենաստաններ և հինգ կուսանոցներ».*[4] Ինչպես տեսնում ենք, ժամանակակից ճանապարհորդի վկայությունը բանալի չի տալիս որևէ չափով մեկնելու Երևանի խանության գրաված տարածքի ու սահմանների իրական մասշտաբները: Նույնչափ թերի են նաև հայ ժամանակագիրների և վրաց աղբյուրների վկայությունները: Այսպես, օրիակ՝ XVIIդ. հեղինակ Հակոբ Կարնեցին Երևանի խանության սահմանների մասին գրում է միայն, որ նրա խանը *«մեծ պարոն է և բազում զօրաց տէր. և ունի սինօր մինչև ի շրջապատն Մասիսոյ, երկիրն Երէվանայ և մյուս կողմն մինչ ի Արտազ, որ է Մակու և Յապաղան».*[5] Այս վկայությունից հայտնի է դառնում միայն, որ Երևանի խանության սահմանները հարավ-արևելքում ձգվում էին մինչև Մակուի մերձակայքը՝ ընդգրկելով Արարատյան դաշտն իր շրջակայքով: Նույն հեղինակի մեկ այլ անուղղակի վկայությունից հայտնի է դառնում Երևանի խանության նաև արևմտյան սահմանը, երբ խոսելով թուրքական տիրապետությունների արևելյան սահմանների մասին՝ գրում է. *«Ի յարևելից կողմն Ախալցխոյ և Չլտրոյ և Շիրակավանս երկիրն, յԱնի քաղաքն իւր թէմովն մինչ ի դուռն Էրէւանայ...».*[6]

---

[1] *Դ. Բենիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 255:*

[2] *Հ. Փափազյան , Օտար տիրապետությունը Արարատյան Երկրում, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հասս. գիտութ.), Եր., 1960, N 7-8, էջ 25:*

[3] *Adam Olearus, Les Voyages en Moscovie, Tartarie et Perse, Amsterdam, 1727, pg., 22.*

[4] *Путешествие Шардена по Закавказью в 1672-1673гг., Тифлис, 1902, стр. 248.*

[5] *Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Եր., 1956, էջ 557:*

[6] *Վ. Հակոբյան,նշվ.աշխ., էջ 562:*

Երևանի խանության հյուսիսային սահմանի մասին վկայություն ունի XVIII դ. վրաց անանուն հեղինակներից մեկը: Նկարագրելով Վրաց Կոստանդինի որդի Դավիթ թագավորի տիրույթները՝ սա ընդգծում է, որ հարավում դրանք հասնում են *«... մինչև Երևանի սահմանը, որև տարածվում է մինչև Քամբակ և Լոռի և մինչև Ղազախի սահմանը»:*[1] Ինչ վերաբերում է խանության արևելյան սահմանին, ապա հայտնի է, որ Երևանի խանությունը այդ կողմում շփվում էր Նախիջևանի խանության հետ, և դրանց սահմանագիծը սովորաբար անցնում էր Գեղամա լեռների հարավային վերջավորություններով: Հիշյալ վկայությունների համադրմամբ կարելի է պնդել, թե Երևանի խանությունը XVIIդ. սկզբներին ձգվում էր հետևյալ սահմանների մեջ. Արևմտյան Արփաչայից (Ախուրյան) մինչև Գեղամա լեռները և Հայկական պար լեռնաշղթայից մինչև Փամբակի լեռնաշղթան ու Արագածի հյուսիսային ստորոտները: Ասվածից հետևում է, որ Արևելյան Շիրակը XVIIդ. սկզբին չկար Երևանի խանության կազմում: Սրան համամիտ լինելով՝ Թ. Հակոբյանը նշում է, թե Շորագյալը Երևանի խանության կազմի մեջ է մտել միայն կիսանկախ խաների տիրապետության շրջանում, ի մասնավորի Հուսեին-Ալի խանի օրոք (1762-1783թթ.):[2]

Հայ պատմագրության մեջ ընդունված այս կարծիքը վիճելի է, քանի որ արդեն Զ. Քանաքեռցու կողմից XVII դարակեսի դեպքերի, մասնավորապես Զալ խանի (Երևանի խանը մինչև 1670թ.)՝ իշխանության գլուխ գալու և խանությունում անհուսալի ու վնասակար տարրերին պատժելու նկարագրությունից երևում է, որ Արևելյան Շիրակն արդեն այդ շրջանում մտնում էր Երևանի խանության մեջ: Քանաքեռցին գրում է. *« Զալ խան եղև տէր Երևանայ: Եւ ի նմին ժամու...ըմբոնեաց այր մի Այրումլու Տաշտամուր անուն. վասն զի յառաջին դանորէից ապստամբեալ էր ... ըմբոնեաց զնա, և կախեալ ի ոտանէն՝ բրածեծ արարին այնքան՝ մինչև մերձ ի մահ լինել. և ապա արկին ի բանտ. և բազում տուգանս առին և արձակեցին. և գնաց ի տուն իւր ի Շիրակ»* :[3]

Արևելյան Շիրակի՝ XVIIIդ. 30-ական թթ. Երևանի խանության կազմում լինելու մասին շատ ավելի հստակ տեղեկություն է հաղորդում պատմիչ, ժամանակի կաթողիկոս Աբրահամ Կրետացին՝(1734-1737թթ.) նշելով, թե Շորագյալը Երևանի խանության ինը մահալներից մեկն է. *«...զի յԵրևան Թ մահալ գալով, Թ մելիք կան. Կարբու և Ղրխպուլախու, Շորակլու, Իքտիրու, Գառնու, Ծաղկաձորու, Գեղարքունոյ, Ապարանու և Շիրակաւանու»*[4]: Շատ ավելի ամբողջական ու որոշակի են դառնում տեղեկությունները Շորագյալի մասին սկսած XVIIIդ. երկրորդ կեսից՝ Հուսեին-

---

[1] *Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, Եր., 1938, էջ 144:*

[2] *Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500-1800թթ.), էջ 142;*

[3] *Զաքարեայ Սարկաւագ Քանաքեռցի, նշվ. աշխ., հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 102-103:*

[4] *Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցից իւրոց և Նադր Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 61-32:*

Ալի խանի տիրապետության շրջանից, մասնավորաբար վրաց Հերակլ Բ թագավորի՝ 1779թ. Երևանյան արշավանքի առիթով[1]:

XVIII դ. 70-ական թթ. վերջերին լարվում են հարաբերությունները Վրաստանի և Երևանի խանության միջև՝ կապված Հուսեին-Ալի խանի կողմից Վրաստանին հարկ չվճարելու հետ: 1779թ. Հերակլ Բ վրաց թագավորը Երևանի խանությունից պոկում է Շորագյալի սուլթանությունը և նրա սուլթան Ղահրամանին դարձնում իրեն հպատակ:[2] Դրանից հետո Շորագյալը հետ վերցնելը Երևանի խաների մտահոգության առարկան էր ընդհուպ մինչև դարավերջ. պարսիկներին միայն 1700-ականների վերջերին է բախտ վիճակվում գրավել Շորագյալը,[3] և այս իրավիճակ պահպանվում է մինչև 1805թ., երբ ռուսները գեներալ Պ.Նեսվետաևի գլխավորությամբ Շորագյալը վերջնականորեն միացնում են Ռուսաստանին:

Էմմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ (ՊԻ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԱՊԸ «ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ԱՄՍԱԳՐԻ ԵՎ ՆՐԱ ԽՄԲԱԳԻՐ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ ՀԵՏ

Պատմական հանգամանքների բերումով հայ պարբերական մամուլն սկզբնավորվել է գաղթօջախներում՝ Հնդկաստան, Եվրոպա, Ռուսաստան, Օսմանյան կայսրություն (համապատասխանաբար՝ Մադրաս, Վենետիկ (Ս. Ղազար), Ս. Պետերբուրգ, Մոսկվա, Թիֆլիս, Կ.Պոլիս, Զմյուռնիա): XIXդ. արևելահայ մշակութային կենտրոնը Թիֆլիսն էր, իսկ արևմտահայը՝ Կ.Պոլիսն ու Զմյուռնիան, որտեղ հրատարակվում էին մեծ թվով պարբերականներ: Մկրտիչ Խրիմյանն առաջինն էր, որ հանդգնեց տպագրական արվեստի լույսը՝ գուտտենբերգյան հրաշագործությունը, հասցնել Արևմտյան Հայաստան: Դա 1858թ. սկիզբն էր:

Մինչ այդ 1855թ. Կ.Պոլսում գտնվող Մկրտիչ Խրիմյանին հաջողվում է թույլտվություն ստանալ և հունիսին հրատարակել «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որի տիտղոսաթերթին գրված էր. «Արծուի Վասպուրական, թռուցեալ հայրենասէր թեւոք յԱրծրունի գահէն ի Վան Տոսպ, Ա տարի, թիւ 1,յունիս, խմբագիր հայրենախօս Մկրտիչ վարդապետ Խրիմեան, Կոստանդնուպոլիս»:Արապյան եղբայրների տպարանում չորս թիվ հրատարակելուց հետո Խրիմյանին հաջողվում է գնել տպագրական մեքենա և Ուսկյուտարի Ս. Խաչ եկեղեցում հիմնել սեփական տպարան:

---

[1] *ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 247, ցուցակ 1, գործ 181 (քարտեզ); П. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803г., т. 2, СПб., 1869, стр. 73.*

[2] *Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջերում, Եր., 1958, էջ 32-33: Լ.Մելիք-սեթ-Բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 178:*

[3] *Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. 3, СПб., 1886, стр. 207.*

1855թ. հունիսից մինչև 1856թ. հունիսը շարունակվող համարակալությամբ ամսագիրը լույս է տեսնում Կ.Պոլսում: Սակայն ամսագրի վերնագիրն անգամ հուշում էր, որ խմբագիրը մտադիր չէր գործը շարունակել Կ.Պոլսում: 12 թիվ հրատարակելուց հետո՝ 1856թ. մայիսին, խմբագիրը հայտնում էր իր ընթերցողներին, որ «Արծուի» հրատարակությունը կշարունակվի հայրենի Վասպուրականում: Կ.Պոլսի ազդեցիկ գերդաստանների օգնությամբ նրան հաջողվում է ժամանակի պատրիարքից կոնդակ ստանալ, դառնալ Վանին մերձակա Վարագա վանքի վանահայրը և ծանր նախապատրաստական աշխատանքից հետո վերադառնալ հայրենի եզերք: 1857թ. հունվարին Վարագա վանքում նորընտիր վանահայրը դնում է «Ժառանգավորաց» վարժարանի առաջին քարը, իսկ դասատվությունն սկսվում է մարտ ամսից: Վանահորը չի հաջողվում 1857թ. շարունակել «Արծուի» հրատարակությունը Վարագում: Վարժարանի աշակերտներից նա պատրաստում է օգնականներ, որոնք պետք է գրաշարություն անեին, հոդված ու բանաստեղծություններ գրեին, նաև խմբագրեին ընկերների գրածները: Աշխատանքի բովում թրծվեց «Ժառանգավորաց»-ի առաջին շրջանավարտների սերունդը, և վանահայր Խրիմյանին հաջողվեց 1858թ. հունվարից լույս ընծայել «Արծուի Վասպուրական» ամսագրի Վարագյան շրջանի թիվ 1-ը, որի վրա գրված էր. «Թռուցեալ հայրենասէր թեւոք յԱրծրունի մենաստանէն Վարագայ»:

Հենց այդ թիվ 1-ում «Թանգարան հայկական դպրութեանց» բաժնում խմբագիրը ծանուցում էր ընթերցողներին, որ ամսագիրը դեռ նոր էր սկսել իր աշխատանքները, և խմբագիր-հրատարակիչը մտորում էր, թե ով պիտի իրեն առաջինը ողջունե, Ախուրյան գետի եզերքից մի «քարձրաթռիչ բազե» երկու փունջ ծաղիկով հասավ իր մենաստանը, ողջունեց «Արծուին» և ծաղկեփնջերն ընծայեց թանգարանին: Այդ «քարձրաթռիչ բազեն» Ալեքսանդրապոլի գավառական ուսումնարանի օրենուսույց վարժապետ Տեր Հակոբ արժանընտիր քահանան էր, իսկ ծաղկեփնջերը՝ նրա ուղարկած նամակն ու բանաստեղծությունը:

Թիվ 1-ում տպելով վարժապետի նամակը՝ խմբագիրը հաղորդում է, որ բանաստեղծությունը զետեղելու է թիվ 2-ում: Ուշագրավ է, որ առաջին նամակն ստացվել էր Արևելյան Հայաստանից՝ Ալեքսանդրապոլից: Սակայն, երբ պրպտում ենք խմբագրի կենսագրության էջերը, մեզ համար հասկանալի է դառնում այդ հանգամանքը: Դեռ տասը տարի առաջ՝ 1847թ. վերջերին, զինվորագրությունից խուսափող Խրիմյանն իր ընկերոջ՝ Ագրիպաս Դաբաղյանի հետ անցնում է Պարսկաստան, ապա Ավարայրի դաշտով, Արաքսի ափերով մտնում է Այրարատ, Շիրակ, հասնում Ալեքսանդրապոլ: Այդ վայրերում 6-7 ամիս մնալուց հետո, 1848թ. Թիֆլիսից Բաթումի վրայով ճանապարհվում է Կ.Պոլիս: Արխիվային փաստաթղթեր չկան, ոչ էլ գրառումներ, թե ինչով է զբաղվել 6-7 ամիս Արևելյան Հայաստանում երիտասարդ Խրիմյանը: Միայն 1850թ. լույս տեսած «Հրավիրակ

Արարատյան» պոեմում հեղինակը մեծ ոգևորությամբ նկարագրում է պատմական Հայրենիքի Արևելյան հատվածի անցյալի փառքերը, Աստվածաշնչյան սուրբ լեռը, Արարատյան դաշտը, Էջմիածնի սուրբ կաթողիկեն, Վաղարշապատն ու Անին՝ հայոց մայրաքաղաքները: Վաղարշապատից Անի անցնելու ժամանակ նա եղել է Ալեքսանդրապոլում և դրանից առաջ էլ, ճիշտ է, նա ոչ մի անձի անուն չի տալիս պոեմում, բայց պարզ է, որ այդ ընթացքում նա հարաբերություններ է հաստատել տեղի մտավորականների հետ:

Ճանապարհորդությունից հետո անցնում է տասը տարի,իսկ «Հրավիրակ»-ի տպագրությունից՝ 8 տարի: Որ «Հրավիրակ Արարատեան»-ը հասել է Ալեքսանդրապոլ և տարածվել այնտեղ, կասկած չի հարուցում: Դրա ապացույցը 1858թ. «Արծուի Վասպուրական»-ի թիվ 1-ում տպված Հակոբ քահանա Տեր-Մխիթարյանցի նամակն է, որտեղ նամակագիրը խմբագրին մեծարելով «մեծանուն հայրենասէր» բառերով գրում է, որ իրեն անծանոթ չեն Խրիմյանի երկու հրավիրակները, ո՛չ Արարատյանը, ո՛չ սուրբ քաղաքինը, ակնարկելով «Հրավիրակ երկրին ավետեաց» պոեմը: Նամակագիր քահանան նկարագրում է այն խնդությունը, որ պատել է իրեն և իր աշակերտներին, քանի որ «սխրափայլ Արծուոյն Հայաստան աշխարհի», այսինքն՝ ամսագիրը հասել է իրենց՝ Ալեքսանդրապոլ:

Շնորհավորելով «Արծուի Վասպուրական» ամսագրի Վարագյան հրատարակությունը,նամակագիրը խոստանում է խմբագրին «դնել ի ներքո թեւոց նորա, որպես զբնական, զբարոյական, զբանասիրական, զազգային և զայլ հարկաւորելի եւ զայլ և այլ գիտելիս եւ զծանօթութիւնս»: Նամակագիրը խնդրում է խմբագրից, որ վերջինս հայտնի, թե ինչ քանակությամբ ամսագիր կարող է ուղարկել, որպեսզի ինքը տարածի Ալեքսանդրապոլում: Նամակի շարունակությունից պարզվում է, որ վարժապետ քահանան մտերիմ է ոչ միայն Խրիմյանի, այլև այլ վանեցիների, որոնց ջերմ ողջույններ է հղում նամակագիրը: Նամակը երբեմն ընդմիջվում է բազմակետերով, որից հասկացվում է, որ խմբագիրը մտերմական արտահայտությունները կրճատել է: Պարզ երևում է նաև երկու անձանց մտերմիկ հարաբերությունները: Նամակագիրը բարձր է գնահատում ամսագրի խմբագրին, նրան անվանում «ճառագայթարձակ Արծիւդ ոչ միայն Վասպուրականի, այլև բոլոր Հայաստան ազանց»: Ամսագրի 1858թ. թիվ 2-ում լույս է տեսնում նույն հեղինակի բանաստեղծությունը «Երախայրիս Արծուոյն Վասպուրականի» խորագրով: Դա գովերգ բանաստեղծություն չէ. բովանդակությունից երևում է, որ գավառական ուսումնարանի ուսուցիչը լավ ծանոթ է ամսագրի անցած կյանքին, որ նա մի տարի հրապարակվել է Կ.Պոլսում, իսկ այժմ հայրենի երկնակամարի տակ երիտասարդացել է, «զխորխ թողեալ ծերունի նորափետուր զարդարեցար»,վերահրատարակվում է հայրենիքում: Նամակագիրը նշում է, որ երկար սպասել է «Արծուի» թռիչքին և այժմ կրկնակի ուրախություն է ապրում, որ ամսագիրը հրատա-

րակվում է ոչ թե «ի Բիւզանդ» /այսինքն՝ Կ.Պոլիս/, այլ բուն Հայաստանում: Հեղինակը տեղյակ է, որ ոսոխները խանգարել են խմբագրին.

Մի՛ նեղեսցին սլաք թեւոց
Քոց նենգ ողաց ածել յուշ.
Հերիքասցին յարարս իւրեանց
Առնել զքոյս բանդագու:

Նամակագիր քահանան բավականին ընթերցասեր է, հաղորդակից ժամանակի հասարակական կյանքին. նրա բանաստեղծության մեջ թվարկվում են մինչ այդ հրատարակվող ամսագրեր և պարբերականներ՝ «Մասիս», «Մասեաց աղավնի» (անվանում է «Նոյան աղավնի»), «Արշալույս Արարատեան», «Եվրոպա», «Բազմավեպ»: Այդ անունները ոչ թե սոսկ թվարկվում են, այլ ընթերցողին են մատուցվում գեղարվեստական հնարանքներով: Գրաբարով գրված ամբողջ բանաստեղծությունը մի հիմն և գովք է «Արծուի Վասպուրական» ամսագրին և նրա հայրենանվեր հեղինակին: Դրա հետ միասին հնչում են նաև տրտմության երանգներ և նամակագիրը երազում է, որ «սառած» (այսինքն՝ տառապած) հայության ապրիլն ու մայիսը գան, և Արագածի վրա վարդի կոկոններ բազմանան:

Անցնում է երկու տարի: 1860թ. երկու թիվ հրատարակվելուց հետո դադարում է «Արծուի Վասպուրական»-ի Վարագյան շրջանի առաջին փուլը: Պատճառը Սկրտիչ Խրիմյանի և մերձավոր զինակիցների (Գարեգին Սրվանձտյանց, Հրաչյա Սևիկյան, Երեմիա Տեկանց) ձեռնարկած ճանապարհորդությունն էր Արևելյան Հայաստան՝ ամսագրի համար հանգանակություն կատարելու և հասարակական գործիչների հետ սերտ հարաբերություններ հաստատելու նպատակով:

1860թ. նոյեմբերի 10-ին սկսված ճանապարհորդությունն ավարտվում է 1861թ. հուլիսի 16-ին, երբ Խրիմյանը վերադառնում է Վան: Վերսկսվում է «Արծուի» հրատարակությունը: Ճանապարհորդությունը դրական հետևանքներ ունեցավ ամսագրի համար. ընդլայնվեցին նրա տարածման ոլորտները: Եթե մինչ այդ ամսագիրը տարածվում էր արևմտահայ հատվածում՝ Վան, Կարին, Բաղեշ, Տրապիզոն, Պոլիս, Զմյուռնիա, Բերիա, և արևելահայում՝ միայն Սալմաստ, ապա 1861-ին ամսագիրն ավետում է,որ ընդլայնվել է բաժանորդների ցանցը, դրանց թվում են Թիֆլիս, Գանձակ, Ղարաբաղ, Ալեքսանդրապոլ, Նոր -Բայազետ, Երևան, Նախիջևան, Վերին և Ներքին Ագուլիսներ, Սալմաստ և Թավրիզ քաղաքները: Ամեն մի քաղաք ուներ իր գործակալը, որը տարածում էր ամսագիրը:Ալեքսանդրապոլինը արքունական ուսումնարանի օրենուսույց սարկավագ Սիմեոնն էր, որը մեծ նվիրվածությամբ կատարում էր այդ գործը: Ժամանակի ընթացքում սարկավագը դառնում է քահանա և 1862թ. «Արծուի Վասպուրականի» թիվ 12-ում լույս է տեսնում նրա ուղարկած հոդված-նամակը՝ ստորագրված Սիմեոն քահանա Չմշկեանց:

Ամսագրի խմբագիրն ընթերցողների ուշադրությունն է հրավիրում այդ հոդվածի վրա, որը վերնագրված է «Ազգային աղքատանոց կամ աղքատաց հոգատարութիւն Աղեքսանդրապօլու մէջ»: Հեղինակը նկարագրում է քաղաքի սոցիալապես ծանր վիճակի մեջ գտնվող ընտանիքների վիճակը: Ըստ նրա հաշվարկների, իրենց մոտ գոյություն ունի ավելի քան 200 աղքատ ընտանիք, որի անդամները տնից տուն, խանութից խանութ են շրջում և ողորմություն խնդրում: Նամակագրի հաղորդած տվյալների համաձայն՝ դրանց շարքում կային նույնիսկ կարողության տեր մարդիկ, որոնք մուրացկանությամբ փող վաստակելը կարծես «արհեստ» էին դարձրել: Մուրացկաններից ոմանց աշխատանք էին առաջարկում՝ ծառա լինել տարբեր ընտանիքներում, բայց նրանք գերադասում էին ողորմություն հավաքելը: Դրանց մեջ կային նաև ծերեր, որոնց զավակներն անուշադրության էին մատնել իրենց ծնողներին: Այդ չարիքները կանխելու համար քաղաքի պատվավոր՝ «բարեհամբավ» անձինք՝ Մատթեոս աղա Գորոյանցը, Կարապետ Ջիթողցյանը և Նիկողայոս Աբրահամյանցը, նաև մի քանի պատվավոր քաղաքացիներ խորհրդակցություն են հրավիրում և որոշում միասնական գործակցությամբ կարգի բերել աղքատանոցը: Այդ խորհրդակցության մասնակիցները շրջում են բոլոր աղքատների տները, ուսումնասիրում նրանց կյանքի պայմանները, հաշվառում կատարում, ողորմությունը իբրև «արհեստ» համարողներին արգելում մուրացկանությունը, կարող ուժերին ապահովում աշխատանքով և պարզում են, որ իսկապես աղքատ հաշվվում է մոտ 100 ընտանիք: Դրանք ֆիզիկական թերություններ ունեցող մարդիկ էին՝ կույրեր, անդամալույծներ, նաև որբ երեխաներ: Խորհրդակցության մասնակիցներն այս բոլոր անձանց «ամենին իրենց բավականութեան չափ ամսական թոշակ նշանակեցին»:

Նամակագիրը գոհունակությամբ հայտնում է, որ քաղաքի աշխատելու ունակ մարդիկ «իրանց ճակտի քրտինքով վաստակում են իրանց հացը», այսինքն՝ կատարում են աստվածաշնչյան պատգամը՝ «քրտամբ երեսից քոյ կերիցե զհաց քոյ»: Իսկ որտեղի՞ց են առաջանում աղքատանոցի եկամուտները՝ «արդյունքները»: Դրանք են «ասնաֆների /այսինքն՝ էսնաֆների/ տուրքը, որոնք ամեն ամիս իրանց կարեաց չափ ուսթապաշիի ձեռքով կը հավաքուին և կհանձնուին աղքատանոցի Հոգաբարձուաց»:[1] Նամակագիրը նկատում է, որ «ազնուական աստիճանավորներից», այսինքն՝ պաշտոնյաներից ընդամենը մի քանի հոգի ամսական փոքր գումար են հատկացնում, իսկ մեծ մասը «տակավին ձեռնտուութիւն չեն արած»: Այդ բարեգործությանը մեծ մասնակցություն են ցույց տալիս տեղի հոգևորականները. հոգևոր առաջնորդ Մովսես արքեպիսկոպոսի կարգադրությամբ բոլոր ծեսերի ժամանակ՝ պսակ, կնունք, ննջեցյալ, հոգևորականներն իրենց ստացած գումարներից որոշ մասը հատկացնում են աղքատանոցին: Փաստորեն, աղքատանոցը պահվում է հասարակ ժո-

[1] *«Արծուի Վասպուրական», 1862, թ. 12, էջ 360:*

ղովրդի միջոցներով: Այս աստվածահաճո լուրը հաղորդելով «Արծուի» խմբագրին, նամակագիրը խնդրում է իր նամակն անպայման հրատարակել ամսագրի էջերում, «որով տեղեկանան մեր սիրելի ազգակիցք և յորդորուին հետեւող լինել այս բարի օրինակին»:

Խմբագիր Խրիմյանը հաճույքով կատարում է քահանայի այս խնդրանքը, շարունակում է նաև կապ պահպանել Ալեքսանդրապոլի հետ: Այս փոքրիկ փաստերն ապացուցում են մի հանգամանք: Ճիշտ է, խմբագրի և իր սաների Արևելյան Հայաստան կատարած ճանապարհորդությունից հետո նրա սանը՝ Գ. Սրվանձտյանցը հերթականությամբ հոդվածներ է զետեղում արևելահայ մշակութային կենտրոնների մասին՝ «Երևան քաղաք», «Տփխիս քաղաք», «Սյունիք», «Շուշի քաղաք», բայց այդ վայրերից ոչ մի տեղից, բացառությամբ Հ. Մելիք-Հակոբյան Ռաֆֆուց (Սալմաստից) «Արծուին» նամակ չի ստանում: Միայն Ալեքսանդրապոլից երկու տարբեր քահանաներ, 1858-ին և 1862-ին նամակագրական կապ են պահպանում Մ. Խրիմյանի հետ, որն իր հերթին անդրադառնում է արևելահայ իրականությանը, էջմիածնում տիրող բարքերին, հնչեցնում իր բարեկամական, նաև քննադատական խոսքը, ջանքեր թափում, որ «Արծուի Վասպուրական»-ին իր թևերը թափահարի հայկական բոլոր հորիզոններում և կապող օղակ դառնա տարբեր կենտրոնների միջև: Թեև շատ դանդաղ, սակայն քայլ առ քայլ այդ գործը հաջողվում էր նրան:

Գեվորգ ԱՅՎԱԶՅԱՆ (ՇՀՀԿ)

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ XIX դ. ՎԵՐՋԻՆ

Ալեքսանդրապոլի գավառը ձևավորվեց 1840թ. ապրիլին՝ սկզբում լինելով Վրացա-Իմերեթական, ապա՝ Թիֆլիսի, իսկ այնուհետև՝ Երևանի նահանգի կազմում: Գլխավորապես ներգաղթյալներից միս ու արյուն ստացած գավառն ընդգրկում էր 3848,6 քառ.կմ տարածություն, որից գյուղական համայնքների օգտագործման տակ գտնվում էր 227690դես. հող, այդ թվում պետական՝ 227272(99,9%),մասնատիրական՝ 418(0.1%):[1] «Անհարմար» հողերը կազմում էին բոլոր հողերի 28,86%-ը,վարուցանքի, արոտի տեղերը և անտառամասերը՝ 71,14%:[2] Այստեղ գյուղական խավի հողատերերից գերակշռում էր պետական գյուղացիությունը, այսինքն՝ սոցիալ-տնտեսական կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ հողը, պետության սեփականություն էր: Ինչպես նշվեց, մասնատիրական հողատիրու-

[1] *Մ. Ադոնց, Հայ ժողովրդի տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Եր., 1968, 77 աղյուսակի տվյալներից:*

[2] *«Մուրճ», 1890, թիվ 11: Ալեքսանդր Քալանթար, Պանդխտությունը մեզանում, 1546:*

թյունը չնչին մասնաբաժին էր կազմում և ներկայացված էր ի դեմս Հառիճի վանական տնտեսության,որի Սովուղբուլաղ հողամասը 1886 և 1895թթ. հողաչափման տվյալներով կազմում էր 329դես. 670 քառ. սաժեն:[1]

Հայաշատ և համեմատաբար խիտ բնակեցված գավառի տարաբնույթ պրոբլեմների կողքին 1870-ական թթ. կամաց-կամաց սկսեց հասունանալ բնակչության հողով ապահովվածության հարցը: Անընդհատ շարունակվող գաղթականական ներհոսքը և տեղի բնակչության քանակի վերընթաց աճն ավելի էին շեշտում խնդրի կարևորությունը: Գյուղական ամեն մի ծխին ընկնում էր 15,42 դես. տարբեր տեսակի հողեր՝ որից «հարմար»՝ 10,9դես.:[2] Սակայն գյուղեր կային, որոնք նույնիսկ նշվածից էլ քիչ հողակտոր ունեին: Օրինակ՝ Մեծ Քյափանակ գյուղը, որը բաղկացած էր 216 ծխից, ուներ ընդամենը 1120 դես. հողաբաժին, որից օգտագործվում էր 660 դեսյատինը, մնացածի 2/3-ը (306.6 դես.) անհարմար հողեր էին և մնում էր լրիվ ազատ, իսկ 1/3 (153.3 դես.) դրված էր արոտավայրերի տակ՝ ամառային արոտավայր չունենալու պատճառով: Ընդ որում, հարմար հողերը, որոնք դրված էին ցանքի տակ, անպտղաբեր, քարոտ էին և չէին արդարացնում գյուղացու աշխատանքը նույնիսկ բերրի տարիներին:[3] Փաստորեն մեկ ծխին ընկնում էր 3 դես. վարելահող, 0.70դես. արոտավայր, 1.41դես. անհարմար հողատարածք:

Գյուղական համայնքը բնազդորեն ձգտում էր սոցիալական և տնտեսական հավասարեցման: Գյուղացիական շարժումների տեսանկյունից փաստառատ այս ժամանակահատվածը[4] Ալեքսանդրապոլի գավառն էլ էր առել իր շրջագծի մեջ: Բնական պատուհասները (կարկուտ, ցուրտ, երաշտ և այլն) չէին շրջանցում նաև Շիրակի արևելյան հատվածը՝ տեղի ժողովրդին նետելով անբերրիության ու սովի գիրկը: Հատկապես ծանր էր 1891-1894թթ. բերքազուրկ տարիներին: Ինչպես նշվում էր կաթողիկոսին ուղղված մի խնդրագրում. «Շիրակը, որ ժամանակին իր հացով կշտացնում էր ամբողջ Կովկասը, այժմ (1894-Գ.Ա) հացից զուրկ է»:[5] Պետության կողմից խորապես գիտակցվեց հարցի լրջությունը, նույնիսկ Ս. Զավարյանի գլխավորությամբ մի հանձնաժողով կազմվեց բնական աղետների հասցրած վնասների չափը ճշտելու կապակցությամբ:

Փաստերը խոսուն էին և արտահայտվեցին գյուղացիական բազմաթիվ դիմում-խնդրագրերում: Առ Երևանի նահանգապետը վերին դանլիջեցիների, մեծ քեթեցիների, հոռոմցիների, ալիխանցիների, իլլիղարաքիլիսեցիների 1894-1895թթ. խնդրագրերում նույն խնդրանքն էր՝ հետաձգել իրենց տրամադրված պարտքի վճարումը՝ պարտավորվելով վերա-

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 180, թ. 1:*
[2] *«Մուրճ», նույն տեղում:*
[3] *ՀԱԱ, Ֆ. 94, ց.5, գ. 141:*
[4] *Վ. Հովակիմյան, Արևելյան Հայաստանի գյուղացիական շարժումների պատմությունից (XIX դ. վերջին քառորդ), Բանբեր Հայաստանի արխիվների, 2, 1976, էջ 128:*
[5] *Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ.162, վ. 153:*

դարձնել այն առանց մնացորդի և վերադիր տոկոսներով:[1] Իհարկե, իշխանությունների վերաբերմունքը միանշանակ չէր, և շատ դեպքերում երկար ձգձգումներից հետո դիմումներն անարձագանք էին մնում կամ մերժվում տեղական իշխանության՝ Ալեքսանդրապոլի գավառապետի կողմից, որի զեկուցագրերի հիման վրա (հաճախ կողմնակալ) գործը հետագայում սովորաբար լուծում չէր ստանում: 1894թ. դեկտեմբերի 19-ով է թվագրված 147 ծուխ շիրվանջուղցիների, որոնցից շատերն իրենց օրվա հացը վաստակում էին արտագնա աշխատանքով,[2] խնդրագիրը Երևանի նահանգապետին, որում ներկայացնելով իրենց ծանր վիճակը և բողոքելով տեղանքի լեռնային բնույթից՝ հայտնում էին, որ ունակ չեն վճարելու դեռևս 1893թ. պետությունից փոխարինաբար վերցրած 1064 փութ ցորենի դիմաց 1072ռ 58կ պարտքը: Ի հեճուկս նրանց՝ Ալեքսանդրապոլի գավառապետը տեղեկացնում է նահանգապետին, որ «նրանք կարող են վճարել նշված գումարը, քանի որ 147 ծխից միայն 40-ն են չունևոր»:[3]

Անդրկովկասի համար կենսական նշանակություն ունեցող[4] հողային հարցի առավել սրությամբ դրսևորմանը նպաստում էին նաև հողաչափական աշխատանքների դանդաղկոտությունն ու գործի հաջողության համար կամք չցուցաբերող ցարական չինովնիկների գործողությունները:

Արդեն 1859թ. վերջերից սկսեց մշակվել հողաչափության վերաբերյալ նախագիծ, որը 60-ական թթ. սկզբին (1861թ. հուլիսի 29) վերջնական փոփոխություններ կրելուց հետո ստացավ ամբողջական կերպարանք: Հողաչափական աշխատանքների և պաշտոնյաների գործողությունների բարձրագույն վերահսկումը դրվում էր Կովկասի փոխարքայի վրա, իսկ այդ աշխատանքի համար ստեղծվեց հատուկ կառույց՝ Անդրկովկասի հողաչափման գրասենյակ:Թեև Անդրկովկասի հողաչափումը «հենց սկզբից իրականացվեց անկանոն և աննպատակահարմար»,[5] բայց 1889թ. ապրիլի 3-ի, 1892թ. մայիսի 3-ի և 1897թ. մայիսի 26-ի բարձրագույն հրամաններով այն բավական կարգավորվեց:[6]Պետական գույքի նախարար Մ.Օստրովսկու առաջարկությամբ 1892թ. հոկտեմբերի 19-ին հետևեց բարձրագույն հրաման՝ Պետական նախարար, Կովկասի գաղտնի խորհրդական Յ. Մեդվեդևի գլխավորությամբ Անդրկովկասի 5 նահանգների պետական գյուղական հողային հարցի կարգավորման համար Թիֆլիսում հատուկ

---

[1] *ՀԱԱ, Ֆ. 94, ց. 5, գգ. 222, 224, 172, 184, 190:*

[2] *«Շիրվանջուղցիք և Սեօգութլեցիք իրանց գութանով գնում են մերձակայ Էջմիածնի գավառի քրդերի եաթաղը և պարապում են գլխավորապես հողագործությունով Գեալթօ, Ղլիջեաթաղ, Հակօ ձմերանոցներում»: «Մուրճ», 1890, 12, 1709-1710:*

[3] *ՀԱԱ, Ֆ. 94, ց. 5, գ. 197:*

[4] *А. Амилахвари, О Закавказскомъ межеваніи, Тифлисъ, 1882, 1:*

[5] *С. Аваліани, Крестянскій вопрос вь Закавказье, т.I, Одесса, 1912, стр. 101.*

[6] *Նույնի, Т. V (дополнительный), Тбилиси, 1986, стр. 58:*

հանձնաժողով ստեղծելու մասին:[1] Մեդվեդևը առաջարկում էր սակավահող գյուղական հասարակություններին հողով ապահովել շատ հող ունեցողների և պետության ազատ հողերի հաշվին: Սակայն առաջարկը մնաց անիրականանալի:

Գյուղացիները սովորաբար հանձնաժողովին դիմում էին այն ժամանակ, երբ գիտեին, որ կան պետական ազատ հողեր, և հնարավոր է բավարարել իրենց պահանջը:[2] Իհարկե, շեղումներ լինում էին: Ուշադրության է արժանի ռուս-թուրքական պատերազմի ժամանակից գաղթած Քիչիկ Ջանգիի 25 ծուխ քուրդ եզիդիների 1893թ. խնդրագիրը Երևանի նահանգապետին՝ թույլ տալու իրենց տեղափոխվել Կարսի մարզի Նախիջևանի գավառի Կաղզվանի շրջանի Մրեն, Գյուլ Հեյրան հողամասեր, քանի որ անժամանակ ցրտերն ու անբարենպաստ պայմաններն իրենց ողջ աշխատանքը ջուրն են լցնում: Մերժվելուց հետո վերջիններս երկրորդ հայտ են ներկայացնում, այս անգամ Ալեքսադրապոլի գավառի Սաբունչի, Ղարայազ և Կարսի մարզի Տայլար, Ախչայ հողամասերի նկատմամբ: Կրկին բացասական պատասխան է ստացվում՝ պատճառաբանությամբ, որ Սաբունչին[3] նախատեսված է Բոգդատ Դոլութախտի քուրդ եզիդիների, Ախչայը՝ Նոր Բայազետի գավառի Ելենովկայի և Ալեքսանդրովկայի 36 ընտանիքների համար, Ղարայազը արդեն հատկացված է Կարսի մարզի Ջամալդինսկի հասարակությանը, որտեղ նրանք ձմեռանոց ունեն, Տայլարը՝ Ղոշավանքի հայկական վանքին: Իշխանությունը պատրաստակամություն է հայտնում նաև, որ եթե մատնացույց արվեն պետական այլ ազատ հողեր, իրենք դեմ չեն լինի տրամադրել:[4]

1895թ. նույնատիպ խնդրանքով (տեղափոխվել Կարսի մարզի Գյուլլուջա, Սարի գոմ, Ջինդի և Մրեն հողամասերը) են դիմում նաև Մեծ Ջամուշլիի 27 և քրդական Փամբի 6 բնակիչներ:[5] Միջգյուղյա հողաբաժանման ուշագրավ դրվագ է հաջիխալիլցիների դիմում-բողոքը, որով նրանք հայտնում են, որ 1887թ. հողաբաժանման ժամանակ իրենց և հարևան ղոնդախսազցիների միջև վեճ է տեղի ունեցել 45դես. հողատարածքի առիթով, և որը շահել են իրենք, և ահա ղոնդախսազցիները գրավել են այն: Բացի դրանից՝ իրենց Իլիսի Տոսպա հողատարածքի հարևանությամբ ղոնդախսազցիներն ունեն ևս 20դես. հող, որը, ըստ հաջիխալիլցիների,

---

[1] *Ա. Հակոբյան, Կարսի մարզ. գյուղացիական պատմության ուրվագծեր 1878-1917թթ., Եր., 2000, էջ 66:*

[2] *Ա. Համբարյան, Գյուղացիական հուզումներն Արևելյան Հայաստանում 1895-1900թթ., Պատմա-բանասիրական հանդես, հ. 2, 1976, էջ 122:*

[3] *Այս հողամասի մեջ էր գտնվում նույն գավառի IV ոստիկանական տեղամասի «Բալուլ» պետական հողահատվածը (525 դես.), որի նկատմամբ 1893թ. դիմում էին ներկայացրել նաև II ոստիկանական տեղամասի Թաթարական Դուզքյանդի (55 ծուխ) և Գյոզալդարայի (58 ծուխ) բնակիչները: Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 94, ց. 5, գ. 32:*

[4] *ՀԱԱ, Ֆ. 94, ց. 5, գ. 36:*

[5] *Նույն տեղում, գ. 340:*

նրանց գյուղից շատ հեռու է գտնվում և վեճերի առիթ է, քանի որ հաճախակի նրանց անասունները փչացնում են իրենց ցանքերն ու խոտհարքները: Խնդրում են, ի հեճուկս ղոնդախսազցիների, իրենց տրամադրել Շիշքափա բլրի սահմանակցությամբ գտնվող նրանց հողամասը:[1]

Ալեքսանդրապոլի գավառապետի զեկուցագրից իմանում ենք նաև Դուզքյանդ և Դիրաքլար գյուղերի միջև վեճի մասին: Այդ գյուղերի հողերը, որ իրար կից են, մի ժամանակ բաժանված են եղել հողաբաժան նշաններով, որոնք այլևս չկան, և դա դժգոհությունների պատճառ է հանդիսանում: Պահանջում են հողաչափ՝ այդ նշանները վերականգնելու նպատակով:[2] Երբեմն նման վեճերն ունենում էին անցանկալի հետևանք՝ ավարտվում մահացու ելքով, ինչպես օրինակ՝ Շիշքափա և Ղազանչի գյուղերի բնակիչների միջև տեղի ունեցած միջադեպն էր. «Այս օրերս Շիշքափա գյուղի բնակիչները խոտհունձի տեղի համար կռիվ ունեցան. Ղազանչի գյուղի բնակիչներ 4 մարդ ծանր կերպով վիրավորված են, մեկը արդեն մեռած է: Նույն տեսակ կռիվ եղած է Մուսլուխլի և Մաստարա գյուղերի բնակիչների միջև, 2 ձի և մի կով գնդակահար են եղել»:[3]

Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության համար հողասակավությանը նպաստող լուրջ գործոն էր հենց իր անընդհատական աճը: 1893թ. Ջաջուռի, Հաջի-Նազար Ղուլիի, Մեծ Դուզքյանդի, Մեծ Սարիարի, Աղքիլիսայի, Ղոնախղոանի և Արըխվալիի պետական գյուղացիները բողոքում են, որ «հիմնադրման օրից մինչև այսօր բնակիչների մեջ տարբերությունը մեծացել է, և եթե նախկինում մեկ ծխին հասնում էր 30դես., այժմ հողը քիչ է, և մի ծխին չի հասնում այնքան, որ կարողանան ընտանիք պահել»:[4] Համատարած բնույթ էին ստացել ամբողջ Արևելյան Հայաստանին բնորոշ սխալ ու անարդարացի հողհատկացումները պետական պաշտոնյաների և պետական կառավարման ստորին օղակ հանդիսացող տեղական իշխանական մարմինների կողմից: Դրանք հարուցում էին բնակչության արդարացի զայրույթը: Օրինակ՝ Արըխվալի գյուղի վերաբնակիչ Սարգիս Սահակյանի բողոքագիրը կաթողիկոսին այն մասին, որ մինչ ինքը ընտանիքով որոշ ժամանակ բացակայել է գյուղից, ծխատեր քահանան հողաբաժանման ժամանակ իր ընտանիքը չի ընդգրկել ցուցակի մեջ:[5] Կամ ասենք 1894թ. Աղքիլիսայի բնակիչների այն խնդրագիրը, որով բողոքում էին համագյուղացիներ Ավետ Խաչատուրովի, Հարութ Հակոբովի, Հարություն Կիրակոսովի, Ալեքսան Պետրոսովի և Բաղդասար Սկրտիչովի դեմ: Սրանք սկզբնական շրջանում կարողացել էին շահել բնակիչների վստահությունը և ընտրվել որպես հողաբաժաններ,

[1] ՀԱԱ, Ֆ. 94, ց. 5, գ.187:
[2] Նույն տեղում, գ. 73:
[3] «Մշակ», 1892, թիվ 87, 4 օգոստոսի, էջ 3:
[4] ՀԱԱ,Ֆ. 94, ց. 5, գ. 80:
[5] Կաթ. դիվան, թղթ. 103, վ. 671:

սակայն ընթացքում պարզվել է, որ ճիշտ չեն կատարում հողաբաժանությունը՝ չառանձնացնելով հարմար ու անհարմար հողերը, իսկ իրենց հարազատներին ու բարեկամներին ավելի շատ ու լավորակ հողեր են հատկացնում: Պահաջում էին ուղարկել այլ հողաչափ:[1] Պետության կողմից հողհատկացման հարցին ոչ ճիշտ մոտեցման արդյունք է նաև Մուսլուխլիի հասարակության կողմից լիազորված Խաչ. Լուսիկովի և Մելիք Պողոսովի 1894թ. բողոք-խնդրագիրը: Ըստ այդ բողոքագրի՝ «Մուսլուխլին հիմնադրման օրից բաղկացած է եղել 33 տնից, որին 1868թ. համապատասխան քանակի հող է հատկացրել նախկին նահանգային հողաչափ Իստոմինը, և իրենք դրան համազոր մուծել են պետական հարկեր»: Այնուհետև բնակչությունը շատացել է և հասել 62 ծխի, մինչդեռ հողը մնացել է նույն չափի: Ավելին, «…մեր հողերից 70դես. առանց հայտնի պատճառին տրվել է դուզքյանդցի Հովի. Բրուդյանցին»: Խնդրում են հարցի կարգավորման նպատակով հողաչափ ուղարկել:[2] Պետական իշխանության մարմինների և տեղական վերնախավի փոխհամաձայնեցված լռության մասին է խոսում նաև 1894թ. Միրաքի 24 ծխականների խնդրագիրը, որը, ձգձգվելով մինչև 1898թ., այդպես էլ լուծում չի ստանում: Խնդրի էությունը հետևյալում էր: 1886թ. գյուղը բաղկացած է եղել 62 ծխից, «այժմ չկա տուն, որ շատացած չլինի», իսկ շինությունները մնացել են նույնը: Գյուղը երեք կողմից շրջապատված է ժայռերով, իսկ մյուս կողմից՝ ձորակով: Չունենալով բավարար քանակի բնակելի տարածքներ, խոտանոցներ՝ բնակիչները հնարավորություն չունեն անասուններ պահել, և նրանց տնտեսությունները կամաց-կամաց քայքայվում են, ուստի պահանջում են գյուղի տարածքի մեջ մտնող Դավե Բոյուն վայրը, ուր կան համապատասխան պայմաններ, տրամադրել իրենց: Գյուղացիների հարցապնդմանը նահանգապետը պատասխանում է, որ այդ հարցով զբաղվելու համար ազատ հողաչափ չկա, այն դեպքում, երբ միրաքցիներն իրենք մատնանշում են, որ հողաչափ Դոյգանովը գտնվում է Ալեքսանդրապոլում: 1896թ. գյուղացիները փորձում են իրենց ուժերով հողաբաժանություն կազմակերպել, սակայն գյուղի 8 ծուխ աղալարները, որոնք տիրում էին լավագույն հողերին (ըստ որում, հարկեր չվճարելով) խոչընդոտ են հանդիսանում: 1897թ., ի պատասխան Երևանի նահանգապետի գրության, Պետական գույքի կառավարման վարչությունը գրում է, որ Միրաքի հասարակության 10 գյուղերի հողերը միասին են չափված, և առանձին-առանձին գծված չեն գյուղամիջյան սահմանները: 1898թ. միրաքցիները կրկին խնդրագիր են ներկայացնում հողաչափ տրամադրելու մասին՝ պահանջվող 184 դես. հողատարածքը իրենց հատկացնելու՝ շեշտելով, որ «դեռևս հին ժամանակներից Միրաքի հասարակության գյուղերը բաժանված են, նույնիսկ առկա են հողաբաժան նշաններ»: Ընդ որում, հողաչափի

[1] *ՀԱԱ, նույն տեղում, գ. 191:*
[2] *ՀԱԱ,նույն տեղում, գ. 87:*

գործուղման ծախսերը ևս նրանք պարտավորվում են հոգալ: Հետևում է նահանգապետի պատասխանը. եթե իրոք սահմանները հայտնի են, ապա հենց իրենք էլ կարող են առանձնացնել պահաջվող հողաքանակը:[1]

Հաղորդման մեջ բերված փաստերը վկայում են,որ XIXդ. 90-ական թթ. Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիության տնտեսական առանց այն էլ ծանր կյանքի համայնապատկերի բաղադրիչներից մեկն էր լուծում պահանջող մի այնպիսի ցավոտ հարց, ինչպիսին հողով նրանց ապահովվածության խնդիրն էր՝ թերևս ամենակնճռոտ խնդիրը գյուղական բնակչության տնտեսական վիճակի ամրապնդման տեսակետից: Սակայն ցարական իշխանության ցածր ու միջին օղակներում տարբեր աստիճանի չինովնիկների կողմից այդ հարցի լուծման ուղղությամբ ո՛չ ցանկություն, ո՛չ էլ կամք ու վճռականություն էր ցուցաբերվում: Իհարկե, այստեղ կարևոր դեր էր խաղում նաև հողի պակասության օբյեկտիվ գործոնը: Այս և այլ պատճառներով վերոհիշյալ հիմնախնդիրը մինչև XXդ. երկրորդ տասնամյակի կեսերը այդպես էլ լուծում չունեցավ ու մնաց թերակատար:

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1918-1920թթ.

1918թ. դեկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի հեռանալուց հետո տեղական իշխանությունների և հասարակության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների մեջ առաջնային տեղ էր զբաղեցնում գաղթականների խնամատարության հարցը: Հայաստանի առաջին հանրապետության Կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919 թվականի հունվարի տվյալներով՝ Ալեքսանդրապոլի գավառում կար 31989 թուրքահայ գաղթական:[2] Նրանց թիվը գավառում գնալով շատանում էր: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո Ռուսաստանից և հանրապետության տարբեր վայրերից բազմաթիվ գաղթականներ շտապում էին Ալեքսանդրապոլ՝ այնտեղից շուտով իրենց հայրենի օջախները վերադառնալու հույսով: Մեծաթիվ էին հատկապես Կարսից փախած գաղթականները, որոնք այստեղ էին կուտակվում՝ սպասելով սահմանների բացվելուն: Նման հույսի համար հիմքեր կային: 1919թ. հունվարի 8-ին Արևմտյան Անդրկովկասում բրիտանական ուժերի հրամանատար Ուոլկների և Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի միջև կնքվել էր Կարսի մասին մի համաձայնություն, որով մինչև հաշտության դաշնագրի ստորագրումը, Կարսում գնդապետ Թեմպերլեյը պիտի նշա-

[1] *ՀԱԱ, նույն տեղում, գ.159:*
[2] *ՀԱԱ, ֆ. 127, ց. 1, գ. 4 ,թ. 20:*

նակվեր անգլիական զինվորական նահանգապետ, քաղաքացիական իշխանությունը պիտի կազմվեր հայերից ու զինվորական նահանգապետի ենթակայությամբ վարեր քաղաքի ու նահանգի քաղաքացիական գործերը: Հունվարի 12-ին զինվորական նահանգապետի հետ հայ պաշտոնյաները պետք է անցնեին Կարս:[1] Այս համաձայնության հիման վրա անգլիական զինվորական նահանգապետն ու հայ պաշտոնյաները մեկնում են Կարս: Բայց նրանց երևալը Կարսում թշնամաբար է ընդունվում թուրքերի կողմից, և անգլիական նահանգապետի խորհրդով հայերը վերադառնում են Ալեքսանդրապոլ: Փաստորեն, չցանկանալով վատացնել հարաբերությունները թուրքերի հետ, անգլիացիները ճանաչում են նրանց իշխանությունը Կարսում: Սա ծանր վիճակ է ստեղծում Ալեքսանդրապոլում խմբված և սահմանների բացվելուն անհամբեր սպասող հազարավոր գաղթականների համար:1919թ. հունվարի 25-ին Հանրապետության վարչապետ Հ. Քաջազնունին դիմում է Թիֆլիսում գտնվող Անդրկովկասի անգլիական բանակի հրամանատարին հետևյալ գրությամբ. «Գեներալ Ուոլկների հաղորդումը հայկական վարչակազմի, հետևաբար նաև գաղթականների Կարսի մարզ բնակեցնելու անհնարինության մասին, անելանելի դրության մեջ է դնում Հայաստանի կառավարությանը: Ավելի քան 50000 գաղթականներ են հավաքվել Արփաչայի ափին և սպասում են սահմանների բացմանը, որը խոստացել է նրանց Ալեքսանդրապոլում գեներալ Ուոլկների կնքած պայմանագիրը: Բաց երկնքի տակ առանց սննդի մնացած գաղթականները մեռնում են հարյուրներով: Ձեզ հայտնի է, որ թուրքական բանակը ութ ամսվա ընթացքում ապրել է մեր երկրի հաշվին, որ առանց այն էլ ավերված էր չորս տարվա ընթացքում: Հեռանալով, նրանք իրենց հետ են տարել այն ամենը, ինչ մնացել է բնակչության մոտ: Հացի հսկայական քանակ նրանք տեղափոխել են Թուրքիա, մնացած մասը դեռ գտնվում է Ալեքսանդրապոլ-Սարիղամիշի ճանապարհին՝ պահեստներում: Թուրքիայի պարտությունը հույսեր է տալիս, որ այդ հացի որոշ մասը կվերադարձվի իր տերերին, և նրանք, ովքեր դեռ չեն մահացել, կապրեն կիսաքաղց, մինչև նոր բերքի հավաքումը: Ստեղծված իրադրությունը զրկում է մեզ այս հնարավորությունից: Մասսաները հասցված են հուսահատության և ընդունակ են խելացնոր արարքների, և կառավարությունը ի վիճակի չէ նրանց պահել Արփաչայի այս կողմը: Գոնե Կարսի հացի մի մասը պետք է ուղարկվի Ալեքսանդրապոլ, հակառակ դեպքում անխուսափելի է աղետը: Հայաստանի կառավարությունը հավատում է, որ Անգլիական կառավարությունը կարող է և կանի այդ»:[2]

Կարսը միայն 1919թ. մայիսին է հանձնվում հայերին: Բայց մինչև անգլիացիների կողմից Կարսի շրջան անցնելու թույլտվություն ստանալը, գաղթականների մեծ մասը դատապարտվել էր մահվան: Սովից և հիվան-

---

[1] *Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 257:*
[2] *ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.92, թ.86;*

դություններից հազարավոր գաղթականների մահը Ալեքսանդրապոլը վերածում է համընդհանուր գերեզմանոցի, տարածվում են վարակիչ հիվանդություններ.[1]«…Համատարած լռություն է տիրում Ալեքսանդրապոլի վրա՝ խորը և չարագուշակ լռություն, ասես քաղաքը լռվել է, խեղդվել շարունակական թաղումներից,- գրում է 1919թ. Ալեքսանդրապոլ այցելած Մ. Չաթերն իր «Մահվան մեջ թաղված երկիրը» հոդվածում:[2]

Թուրքական օկուպացիան ապրած, ամբողջովին թալանված գավառը ստիպված էր վերստին հոգալ գաղթականների խնամատարությունը: 1918թ. դեկտեմբերի 10-ին կազմավորվում է Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության գաղթականական կոմիտե՝ Մ. Ղազարյանի նախագահությամբ:[3] Կոմիտեն իր առաջին իսկ նիստում խնդիր է դնում ապահովել գաղթականներին բնակարաններով, սննդամթերքով:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքն ի վիճակի չէ ապահովել գաղթականներին տեղով և պարենով, Կոմիտեն որոշում է դիմել խնամատարության նախարարությանը՝ խնդրելով դրամական օգնություն և միաժամանակ միջնորդել պարենավորման նախարարության առաջ՝ մթերք ուղարկելու գաղթականների համար, նաև ապահովել անգլիական և ֆրանսիական կառավարությունների ներկայացուցիչների աջակցությունը Կարսից գաղթականների համար ցորեն գնելուն: Կոմիտեն հեռագրով դիմում է Ղարաքիլիսա և Թիֆլիս՝ խնդրելով դադարեցնել գաղթականների հոսքը Ալեքսանդրապոլ՝ «մինչև Կարսի պարպումը թուրքերից»:[4]

Խնամատարության նախարարությունը, խոստանալով ֆինանսական օգնություն, առաջարկում է կանգ չառնել ծախսերի առաջ, բացել հիվանդանոցներ և ապաստարաններ: Նախարարության աջակցությամբ որոշվում է քաղաքում բացել սննդատու կայաններ, նաև հիմնել հիվանդանոց՝ հիվանդ գաղթականների համար: Սակայն տեղի զինվորական իշխանությունները, պատճառաբանելով, որ առաջին հերթին զինվորների համար են հիվանդանոց բացելու, մերժում են քաղաքի պահեստներից բաց թողնել հիվանդանոցային կահ-կարասի և անհրաժեշտ պարագաներ, և հիվանդանոցի բացումը հետաձգվում է:

Քաղաքը բաժանվում է վեց մասերի՝ մեկական սննդատու կայաններով:[5] Հետագայում դրանց թիվը հասնում է 10-ի: Ոգևորված սրանից՝ կոմիտեն խնամատարության նախարարությանն առաջարկում է Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում սոսկալի դրության մեջ գտնվող 20000 գաղթականների հոգածությունը ևս վերցնել իր վրա՝ խնդրելով դրամ ու հրահանգ գավառի գաղթականներին նպաստ բաժանելու համար: Սա-

[1] *«Հայաստանի աշխատավոր», Եր., 1919, թիվ 27:*
[2] *Melville Chater,The land of the stalking death, The National geographic magazine,vol. xxxv, N.3, September, 1919, p. 407.*
[3] *ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2715, թ1:*
[4] *Նույնը:*
[5] *Նույն տեղում, թ. 6-7:*

կայն շուտով այս ոգևորությունը տեղի է տալիս. «տեղ չեն հասնում» կառավարության խոստացած փողերը, և գաղթականների խնամատարության գործում լուրջ դժվարություններ են առաջացնում անբարեխիղճ լիազորների չարաշահումները: «Բոլորն էլ շատ լավ գիտեն,- գրում է «Հառաջ»-ը,- թէ ինչ զարհուրելի վիճակումն է մեր գաղթականութիւնը: Հաց չկա՝ սովածներին մահից փրկելու, բայց եղածն էլ հասարակութեան բռունցքներն են հափշտակում, ինչպէս նաև կառավարութեան ստոր պաշտոնեաները: Ո՞վ չգիտէ, թէ Ալեքսանդրապօլում ինչ աստիճանի էին հասել սովամահվող գաղթականութեանը հասանելիք հացի գողութիւններն ու զեղծումները: Հարիւր հազարներով բաժին է ստացում, բայց մի քանի տասնեակ հազար գաղթականութիւնը դարձեալ մնում է սոված»:[1]

Կոմիտեն իր նիստերում հաճախ էր ստիպված լինում աշխատանքից ազատել անբարեխիղճ լիազորներին և ընդունել նորերին, բայց այդպես էլ չի կարողանում կանխել զեղծումները և ապահովել վերահսկողությունը: Այսպես, դեկտեմբերի 24-ի նիստում որոշվում է աշխատանքից ազատել 5-րդ սննդատու կայանի լիազոր պ. Նազարեթ Շիրակունուն՝ «իբրև անբարեխիղճ աշխատողի»:[2] Հաջորդ՝ դեկտեմբերի 25-ի նիստում կոմիտեն, ելնելով բազմաթիվ բողոքներից, որոշում է յուրաքանչյուր կետում ունենալ 2-3 ստուգողներ փախստականներից և մթերքները կենտրոնացնել պահեստներում, թույլ չտալ, որ գնումները կատարվեն կառավարիչների միջոցով:[3] Բայց կրկին ոչ մի արդյունք: Դեկտեմբերի 30-ի նիստում նախագահ Գյուլբեկյանը տեղեկացնում է, որ ինքը այցելել է բոլոր կետերն ու հանրակացարանները և դրանք գտել վերին աստիճանի անմխիթար դրության մեջ. «... եփած ճաշը անբավարար է, շատ տեղերում ժամանակին չեն ստանում, շատերին միս չի հասնում,կամ երկար սպասելուց հետո դատարկ վերադառնում են»:[4] Կոմիտեի 1919թ. հունվարի 28-ի նիստում գաղթականության ներկայացուցիչները պահանջում են իրենց անդամներին մտցնել կոմիտեի կազմի մեջ և վերացնել սննդատու կայանները, փողը և ցորենը ուղղակիորեն բաժանել գաղթականներին: Կոմիտեն համաձայնում է գաղթականների ներկայացուցիչներին մտցնել իր կազմի մեջ, իսկ սննդատու կայանների վերացմանը որոշվում է անդրադառնալ կառավարությունից փող և ցորեն ստանալուց հետո: Բայց կառավարությունից ստացված փողը շատ քիչ էր, և հնարավոր չէր բաժանել գաղթականներին: Հետևաբար սննդատու կայանները պահպանվում են, միաժամանակ որոշվում է, որ կոմիտեի ամեն մի անդամ հանձն առնի որևէ կայանում վերահսկել ծառայողների գործունեությունը:[5] Աննպատակահարմար

---

[1] *«Հառաջ», Եր.,1919, թիվ 27:*
[2] *ՀԱԱ ֆ.105, ց.1, գ.2715, թ. 25:*
[3] *Նույնը:*
[4] *Նույնը:*
[5] *ՀԱԱ ֆ.105, ց.1, գ. 2715, թ. 25::*

է համարվում գաղթականներին ցորենի բաշխումը, և գաղթականությունն առաջարկում է իր միջից նոր մարդիկ վերցնել և նրանց միջոցով բաժանել ցորենը: Սակայն գաղթականական կոմիտեն չի ընդունում սա, առաջարկելով իրեն կասկածելու դեպքում վերահսկիչներ նշանակել:

Կոմիտեի բազմաթիվ դիմումներին ի պատասխան՝ կառավարությունը փակում է փող ուղարկելու հարցը՝ դրանց բացակայության պատճառով: Ուստի կոմիտեն կառավարության համաձայնությամբ փոխառություն է վերցնում տեղական բանկերից,[1] բայց կոմիտեի կասկածանքով վերաբերվող քաղաքային վարչությունը, չնայած կառավարության կարգադրությանը, հրաժարվում է այդ նպատակին տրամադրել իր մոտ եղած փողը:

Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության գաղթականական կոմիտեի գործունեության անարդյունավետությունը հետևանք էր Ալեքսանդրապոլի բնակչության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի: Հասարակությունը դարձել էր անտարբեր, սովորական տեսարաններ էին փողոցում մեռնող երեխաները: Ակնհայտ էր, որ գավառի իշխանությունները և հասարակությունը չէին կարող սեփական ուժերով լուծել գաղթականության խնդիրը: Քաղաքային ինքնավարության գաղթական կոմիտեն իր աշխատանքները շարունակում է մինչև 1919թ. ապրիլի 2-ը, որից հետո գաղթականների պարենավորման գործն իր վրա է վերցնում Ամերիկյան կոմիտեն:[2] Սակայն գաղթականների դրությունը շարունակում էր մնալ շատ ծանր: Հատկապես ահավոր էր հանրակացարաններում տեղավորված գաղթականների վիճակը: «Գաղթականները լցված էին ռուսական հանրակացարաններում, որտեղ նրանք կուտակված էին մեղվախմբի նման: Մենք քայլում էինք այս մութ, խցի նման սենյակներով, չկար ո՛չ աթոռ, ո՛չ մահճակալ, միայն դժբախտ մարդկանց խմբեր, խոնված իրար գլխի, թափված իրենց ընդհանուր մահճակալում՝ խոնավ սալաքարին: Մթության մեջ տեսնում էինք առաջ ուղղված բազմաթիվ ձեռքեր և նորից այդ ցածր բզզոցը՝ «… հաց, հաց, հաց, - գրում է Մ. Չաթերը»:[3]

Ալեքսանդրապոլի գաղթականության գործերի և սանիտարական մասի կոմիսար Ամատունին, քաղաքագլխին ներկայացրած զեկուցումում նկարագրելով գաղթականների ծանր վիճակը, խնդրում է միջամտել նրանց սննդի բարելավման գործին: Դա իհարկե, հեշտ չէր իրականացնել. նախ տեղական ազգաբնակչության մեծ մասը նույնպիսի վատթար վիճակում էր, մյուս կողմից էլ՝ ամերիկյան կոմիտեի տեղի ներկայացուցիչները թույլ չէին տալիս միջամտել իրենց ներքին գործերին: Այդ զեկուցման մեջ մասնավորապես ասվում էր. «Ալեքսանդրապոլում գաղթականները տեղավորված էին 19 հանրակացարաններում, որտեղ կար 558 առանձին

---

[1] *Նույն տեղում, p. 16:*

[2] *ՀԱԱ ֆ. 105, g.1, q. 2715, p .50-51:*

[3] *Melville Chater, The land of the stalking death, The National geographic magazine, vol. xxxv, No.3, September, 1919, p. 406.*

սենյակ: Բոլոր գաղթականների թիվն այստեղ 15000 է, այնպես որ քառակուսի սաժենի* վրա տեղավորվում են 4-5 մարդ, այսպիսի մի խտություն ինքնին բացասական երևույթ է: Առողջ գաղթականներից ամեն օր նշանակվում են հանրակացարանները մաքրելու համար հերթապահ խմբեր, որոնք հսկում են բնակարանի մաքրությունը: Հավաքված աղբը կիտվում է բակերում, որտեղից սանիտարական սայլակներով ուղարկվում է քաղաքից դուրս: Սակայն այս միջոցը բավարար համարել չի կարելի, որովհետև ամենաառողջ ճանաչված գաղթականը իրենից ներկայացնում է մարդկային կերպարանքը կորցրած ու մաշված մի էակ, որը տունը սրբելու ժամանակ քրքրում է աղբը մատներով, բերանը ձգելու մի հարմար բան գտնելու համար: Հանրակացարաններում ապրող բոլոր գաղթականներն իրենց սնունդը ստանում են բացառապես Ամերիկյան կոմիտեից, որն իր գործակալների միջոցով տալիս է ամեն շնչին 1/4 ֆունտ հաց և 6 մսխալ բրինձ: *Վերջին օրերս մթերքներ չունենալու պատճառով կոմիտեն տալիս է միայն միս՝ շնչին 6 մսխալ (հում և ոսկրոտ): Ամսի 25-ին տվեց 1/2 ֆունտ հաց՝ առանց ուրիշ ուտելիքի: Սա սնունդ չի կարելի համարել, այն միայն գրգռում է թշվառների ամբողջ էությունը և ախորժակը: Մայրը գիշեր ժամանակ ծածուկ դուրս է շպրտում իր կիսակենդան երեխային փողոց, որպեսզի օգտվի նրա բաժնից»:[1]

Գաղթականների մի մասը հրաժարվում էր ապրել հանրակացարաններում: Նրանք ուղղակի «թափված» էին Ալեքսանդրապոլի փողոցներում: Անկարող իշխանության և անտարբեր դարձած հասարակության աչքի առաջ օրական մահանում էին 200-250 գաղթական:

1918թ. դեկտեմբերի 28-ին Ալեքսանդրապոլի կայարանում տեղի ունեցած պայթյունի հետևանքով, կայարանում և դրա մերձակայքում գիշերող հազարավոր գաղթականներ մնացին փլատակների տակ: Թուրքերն Ալեքսանդրապոլից հեռանալիս կայարանամերձ շինություններում և կառամատույցի վրա թողել էին մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Տեղական զինվորական իշխանության անփութության հետևանքով քաղաքից դուրս էր տեղափոխվել հազարավոր փութ վառոդից և պայթուցիկներից ընդամենը 80 փութը: «Վնասած զոհերի թիվը մինչև օրս չի որոշվել, որովհետև այդ շրջանում պայթումի ժամանակ իջած են եղել շատ գաղթականներ անյայտ տեղերից, բոլորն էլ ջարդուել էին և մնացել փլատակների տակ. դիակների մի մասը մինչև օրս էլ չեն գտնուած սարերի պես կուտակուած հողակոյտերի տակից: Սպանվածների թիվը մօտ 300 է, որոնց դիակները գտնուած են, իսկ վիրավորներինը՝ 500 հոգի»:[2]

** Մեկ սաժենը 2,13360 մետր է:*

** 1 ֆունտը՝ 453 գրամ է, 1 մսխալը՝ 4.26 գրամ - Կ.Ա.*

[1] «Մարդկայնություն», Ալեքսանդրապոլ, 1919, թիվ 4:

[2] «Ժողովուրդ», թիվ 12, Եր., 1919:

Ալեքսանդրապոլի փողոցներում մեռնում էին արևմտահայության վերջին բեկորները՝ հայրենիք վերադառնալու հույսը դեռ սրտերում, մեռնում էին, կարծես թե այս անգամ առանց թուրքերի ուղղակի և անմիջական մասնակցության, սակայն, իհարկե, նրանց կողմից հմտորեն հյուսված քաղաքական որոգայթների սարդոստայնում:

Հրաչիկ ՍԱՀԱԿՅԱՆ

ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Նպատակ ունենալով ուսումնասիրել իմ հայրենի գյուղի՝ Շիրակի մարզի Աշոցքի ենթաշրջանի Զույգաղբյուրի պատմությունը, շուրջ երեք տարի ուսումնասիրել եմ դրան վերաբերվող պատմագիտական և այլ բնույթի գրականությունը, արխիվային փաստաթղթերը և հրապարակում եղած այլ տիպի աղբյուրներ: Խորհրդատվության համար հանդիպել եմ պատմաբանների, հնագետների, աշխարհագետների և ճարտարապետների հետ: Մինչ ուսումնասիրությունն սկսելը կարծում էի, թե հրապարակում եղած հանրագիտարանները,բառարաններն ու մասնագիտական գրականությունը պարունակում են ճշգրիտ տեղեկություններ գյուղի հիմնադրման պատմության, նրա բնակչության ծագման և ավերակված եկեղեցու մասին, սակայն ձեռքի տակ եղած նյութերի թռուցիկ ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ վերը հիշված աշխատությունները պարունակում են մեծ թվով անճշտություններ: Մեր նպատակն ենք համարում նորովի և հնարավորինս ճշգրիտ ներկայացնել Զույգաղբյուրի և նրա եկեղեցու պատմությունը:Նախ տեսնենք, թե ի՞նչ է գրում Հայկական սովետական հանրագիտարանը. «Զույգաղբյուր (մինչև 1946թ. Չիֆթալի) գյուղ Հայկ. ՍՍՀ Ղուկասյանի շրջանում…Հիմնադրվել է 1800թ. (ահա առաջին անճշտությունը-Հ.Ս.)»:[1]Գյուղի հիմնադրման տարեթվի վերաբերյալ ՀՍՀ-ում սպրդած սխալը ճշտելու փոխարեն Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում կարդում ենք. «…գյուղի բնակիչների նախնիները այստեղ են գաղթել Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանի Գյարագ գյուղից»:[2] Բառարանում Զույգաղբյուրին նվիրված հոդվածի վերջին տողում նշված է. «Գյուղում կա մի քարաշեն եկեղեցի՝ կառուցված 19-րդ դ.»:[3] Եկեղեցու անվան և թվագրության մասին կխոսենք իր տեղում:Իրականում գյուղի բնակիչների նախնիները Ադրիանապոլսի պայմանագրի կնքումից հետո Արևելյան Հայաստան են

[1] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Եր. 1977, էջ 715:*
[2] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Եր., 1988, էջ 323-324:*
[3] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, էջ 324:*

ներգաղթել և 1830թ. հաստատվել են Փամբակի Նալբանդ գյուղում (այժմ՝ Լոռու մարզի Շիրակամուտ գյուղ): Նալբանդում հաստատվածները եկել էին Ներքին Բասենի Գերեկ (Գյարակ, Կյարակ), Վերին և Ներքին Թարխոջա, Գոմաձոր և Իդ գյուղերից: Սրանց մի մասը՝ 16ընտանիք, 28 տարի Նալբանդում ապրելուց հետո 1858թ. տեղափոխվել և հիմնադրել են Չիֆտլիկ (ավելի ուշ Չիֆթալի) գյուղը, սրանց են միացել նաև երկու ընտանիք Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբյուր) և մեկ ընտանիք Սարիար գյուղերից: Մեր տեղեկությունները հաստատվում են ՀՀ պետական ազգային արխիվում պահպանվող 1842, 1852թթ. Նալբանդին և 1859թ. Չիֆտլիկին վերաբերող կամերալ ցուցակներում առկա նյութերով:[1] Այժմ պարզենք, թե ինչպե՞ս է կոչվել այն բնակատեղին, ուր 1858թ. տեղափոխվել են Զույգաղբյուրցիների նախնիները: Ինչպես 1842թ. այնպես էլ 1852թ. Նալբանդ գյուղին վերաբերող կամերալ ցուցակներում կան նշումներ «…սույն ընտանիքը համաձայն 1857թ. դեկտեմբերի 4-ի թիվ 371 կարգադրության տեղափոխվել է Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի գավառակի Ղայդուլի-Չիֆտլիկ (Չիգթալի) խարաբա»:[2] Պարզ է,որ նոր գյուղը հիմնադրվել է ավերակ բնակատեղիի վրա, սակայն հարց է առաջանում ինչպե՞ս է կոչվել նախկին գյուղը: Պողոս վրդ. Պետրոսյանը այս կապակցությամբ գրում է. «…թիվ 18 Կուռճի-Եօլի: Ի թիկունս սորա կայ Խարախաչ լեռան ի վեր քան զգիւղն ի միջակի գոյ մեծ ավերակ շինատեղոյ: Ուր լիալ են հինգ ձիթհանք, զորոց քարինս ածեալ են ի քաղաք: Անդ են բազում ջրաղացք, որք ի ջուրց լերացն իջելոց շրջեալ են և այլ շինութիւնք ոչ սակաւ որում այժմ անուն տան Մեծ խարաբա կամ Խարախաչ խարաբա…»:[3] Ղևոնդ Ալիշանը հավանաբար օգտվելով վերը բերված աղբյուրից գրում է. «Յարնելս Կիւրճի-Եօլ գեղջ ի լերանցամէջս ասի գոլ մեծի աւերակ շինատեղոյ, ձիթհանք հինգ և բազում ջրաղացք և այլ մնացածք շինուածոյ, զորս կոչէն Խարապա Գարա խաչի, այսինքն աւերք Գարախաչ լերին և ի քարաց անտի տարեալ են ի պետս շինութեան Ալեքսանդրապոլի, բայց ազգայնոց ոչ է քննեալ զտեղիս որպես վայելն է»:[4] Թվում է, թե երկու տեղեկությունն էլ նույնի մասին են, միայն մի բացառությամբ, որ Ղ.Ալիշանը նշում է, թե գյուղատեղիի քարերը տարել են Ալեքսանդրապոլ՝ շինարարական նպատակով, որը քիչ հավանական ենք համարում:

Հարկ է նշել, որ Գյուրջիյոլը (այժմ՝ Թորոսգյուղ) Ղարախաչ լեռան ստորոտին չի գտնվում, և նրա մոտով հոսող ջուրը բնավ էլ չէր կարող բազում ջրաղացներ աշխատեցնել: Ինչ վերաբերվում է Չիֆտլիկի տեղադրությանը, ապա այն հստակ երևում է ռուսական մի կարևոր աղբյուրից[5],

[1] *ՀՀ ՊԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82, 110:*
[2] *Նույն տեղում:*
[3] *Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ Պողոս վրդ. Պետրոսեան, «Արարատ», Էջմիածին, Գ., 1872, էջ 100:*
[4] *Ղ.Ալիշան, Շիրակ, տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 146:*
[5] *ՀՀ ՊԱԱ, ֆոնդ 247, ցուցակ 2, գործ 8:*

որում առկա է մանրազնին քարտեզ (Карта военных действий в Закавказье. 1827г.): Այստեղ ճշգրիտ նշված են Кизилгочъ (այժմ՝ Աշոցք), Карагачъ (Չիֆթալի) և Кайкули (Հարթաշեն) գյուղերի կորդինատները: Այս տեղեկությունը հուշում է մեզ, որ 19-րդ դարի առաջին երեսնամյակին գյուղատեղին կոչվել է Խարախաչ կամ Ղարաղաչ, այստեղից էլ՝ Ղարախաչա խարաբա (ավերակ): Ղարաղաչի խարաբայի մասին մի քանի իրարամերժ տեղեկություն կա Տեղանունների բառարանում: Մի բառահոդվածում կարդում ենք.«Ղարաբա Ղարախաչ գյուղատեղի Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, Գյուրջիյոլ (այժմ Թորոսգյուղ) գյուղից արևելք: XIXդ. վերջին պահպանվում էին տների, ճիթհանքի և ջրաղացի ավերակներ»:[1] Մեկ այլ տեղ Կարախաչի խարաբան է հիշատակվում Ղարաղաչ լեռան ստորոտին, որտեղից իբր շինարարական քար են տարել Ալեքսանդրապոլ:[2] Նույն բառարանում հիշատակվում է Քաթ խարաբան. «գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, Գյումրիից 25կմ հյուսիս-արևելք, Հարթաշեն գյուղի մոտ»:[3] Վերը բերված տեղեկությունները փաստորեն միևնույն գյուղատեղիի մասին են, սակայն չգիտես թե ինչու գյուղատեղը տեղադրվում է Գյուրջիյոլից արևելք, երբ այն հյուսիս է: Բացի այդ, ավերակ ջրաղացների և ճիթհանքերի հետքեր կան իսկապես Զույգաղբյուր և Հարթաշեն գյուղերի միջև, որտեղով անցնում է Ղարաղաչի լեռնաշղթայից սկիզբ առնող գետը: Ինչ վերաբերում է Քաթ խարաբային, ապա այն հիշատակվում Ի.Պոտտոյի կողմից Շորագյալի դիստանցիայի 109 գյուղերի շարքում 83-րդ համարի տակ:[4] Իմ կարծիքով՝ Ի.Պոտտոյի հիշատակած Катъ գյուղատեղին և Ղ.Ալիշանի Քաթ խարաբան նույնն են: Կարելի է ենթադրել, որ Քաթ խարաբա, Ղարախաչ կամ Մեծ խարաբա, Չիֆտլիկ խարաբա և Չիֆթալի տեղանունները Զույգաղբյուր գյուղի նախկին անվանումներն են:

Անդրադառնանք Զույգաղբյուրի եկեղեցու տարիքի և անվան խնդրին, որոնց շուրջ կան բազմաթիվ տարընթերցումներ և անճշտություններ: Գյուղի հիմնադրումից (1858թ.) ընդամենը երկու տարի անց նալբանդցի քահանա Տեր Իսրայելը հիմնում է գյուղի Չափաբերական մատյանը և 1861թ. գրանցում է ծնվածների, իսկ 1862թ.՝ մահացածների անունները:[5] 1882-1915թթ. գրանցում են կատարել գյուղից ձեռնադրված Տեր Ստեփան և Տեր Մեսրոպ քահանաները: Արդեն 1864թ. գրանցումներում եկեղեցին հիշատակվում է Ս. Խաչ անվամբ: Բնական էր, որ Չիֆթալի ներգաղթած շուրջ երկու տասնյակ ընտանիքները ի զորու չէին մի քանի տարում կառուցել եռանավ բազիլիկ եկեղեցի սրբատաշ քարերով և բավական մեծ

[1] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, էջ 689:*
[2] *Նույն տեղում, էջ 989:*
[3] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, էջ 287:*
[4] *Кавказский сборник, т. XXI, Тифлис, 1900, стр. 42-43.*
[5] *ՀՀ ՊԱԱ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 788:*

ծավալային հորինվածքով (18.6x11,6մմ): Գյուղում արդեն կար կանգուն եկեղեցի,որը հաստատվում է նաև Հուշարձանների պահպանության վարչության կազմած վկայագրով, ըստ որի եկեղեցին թվագրվում է XVII-XVIII դարերով: Սակայն այստեղ սխալմամբ որպես եկեղեցու շինաքար հիշատակվում է տեղի սրբատաշ բազալտը, այնինչ եկեղեցին կառուցված է Գյումրիում և Մարմաշենում տարածված սև և մասամբ կարմիր տուֆ քարից: Թե ինչ է եղել եկեղեցու անունը մինչև 1858թ. մենք չկարողացանք պարզել, սակայն մի բան հաստատ է, որ այն 1864թ. դրությամբ կոչվել է Ս. Խաչ: Արխիվում պահպանվել է մի փաստաթուղթ, ըստ որի գյուղի բնակիչները 1884թ. դիմել են Էջմիածնի Սինոդին և Հայոց հայրապետին՝ գումար տրամադրելու եկեղեցու վերանորոգման կարիքների համար: Կաթողիկոսարանը չի մերժում՝ տրամադրելով 206ռ 5կ գումար:[1] Մինչև 1930-ականների վերջը Չիֆթալիի եկեղեցին գործող էր և ծառայում էր ժողովրդի հոգևոր կարիքներին: 1936թ. սեպտեմբերի 1-ից-հոկտեմբերի 6-ը Ղուկասյանի շրջան գործուղված Հուշարձանների պահպանության կոմիտեի աշխատակից Հ.Եղիազարյանը կազմեց մի չարաբաստիկ փաստաթուղթ, որում նշվում էր. «Չիֆթալի, Դյուզխարաբա (Հարթաշեն), Բոզյոխուշ (Մուսայելյան), Սալուտ և Բաշգյուղ գյուղերի եկեղեցիները հնագիտական արժեք չունեն և այդ գյուղերի տարածքում հնագիտական արժեք ունեցող ոչինչ չի նկատվում»:[2] Սա հերիք էր, որ եկեղեցին քանդվի ակումբ կառուցելու նպատակով,իսկ հետագայում նրա քարերով կառուցվի դպրոցի շենքը:

Եկեղեցու դաժան ճակատագիրն արտահայտվեց նաև նրա անվան հետ կապված խառնաշփոթում: Այսպես, 2004թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված Անշարժ հուշարձանների պետական ցուցակում Զույգաղբյուրի եկեղեցին հիշատակվում է Ս. Հովհաննես անվամբ:[3] Թե ո՞վ և ինչպես «օծեց» եկեղեցին այս անվամբ հայտնի չէ: ՀՀ Շիրակի մարզպետարանի համապատասխան բաժնի աշխատակիցները ևս չկարողացան բացատրել այս հանգամանքը: Ավելի առաջ գնաց Շիրակի թեմի «Յոթվերք» թերթը, որի հոդվածագրի թեթև ձեռամբ եկեղեցին «վերակոչվեց» Ս. Աստվածածին,իսկ գյուղի բնակիչները «ներգաղթեցվեցին» Մուշից, Ալաշկերտից և Ղարսից, որը մեղմ ասած՝ ակնհայտ սխալ է:

Գյուղի և նրա եկեղեցու «մահկանացուն կնքեցին» 1970-ական թթ., երբ Զույգաղբյուր-Լենինական ջրագծի կառուցման պատրվակով շեն գյուղը տեղահան արվեց և առանց գյուղացիների կարծիքը հաշվի առնելու՝ Ղուկասյանի շրջկենտրոնի հարևանությամբ գտնվող ճահճուտում կառուցեցին նոր գյուղ, ձևականորեն պահպանելով Զույգաղբյուր հնչեղ անունը, որը կնքահայրը Մեծն Ավ.Իսահակյանն էր եղել 1946թ-ին: Գյուղը դատարկվեց, դիմազրկվեց և այսօր վտանգված է նրա հետագան:

---

[1] *ՀՀ ՊԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 7935:*
[2] *Նույն տեղում, ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 1346, էջ 13:*
[3] *ՀՀ կառավարության որոշում N 1240, 2004թ.:*

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1915-1918թթ.

1915թ. արևմտահայերի եղեռնի հետևանքով Արևմտյան Հայաստանի զանազան վայրերից բազմաթիվ գաղթականներ հաստատվում են Ալեքսանդրապոլի գավառում: Նրանց մեծ մասը տեղավորվում է գավառի գյուղերում: 1915թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառում գաղթականների թիվը հասնում է 22815-ի, որից 6844-ը՝ Ալեքսանդրապոլում:[1] Բնականաբար, գաղթականներին օգնության հարցը հայտնվում է Ալեքսանդրապոլի հասարակայնության ուշադրության կենտրոնում:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ի հովանավորությամբ այստեղ արդեն 1914թ. հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլի գավառի թեմի առաջնորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ ստեղծվել էր Ազգային հանձնաժողով՝ կամավորների և ինքնապաշտպանության, գաղթականներին, վիրավորներին օգնող և վիճակագրական տեղեկություններ հավաքող բաժիններով:[2] Գաղթականների անընդհատ հոսքի պայմաններում քաղաքում երևան են գալիս նոր կազմակերպություններ, որոնք ձեռնամուխ են լինում նրանց խնամքին, նրանց համար որբանոցների, արհեստանոցների և դպրոցների բացմանը: Մասնավորապես մեծ թափ են առնում որբախնամ աշխատանքները, 1915-1917թթ. ընթացքում այստեղ բացվում են ութ որբանոցներ, որտեղ ապաստանում են ավելի քան 500 արևմտահայ որբեր: Առաջին որբանոցն Ալեքսանդրապոլում բացվում է 1915թ. նոյեմբերի 20-ին «Երիտասարդական միության» կողմից, որը մեծ դժվարությունների գնով՝ միայն իր սեփական միջոցների հաշվին պահում է որբանոցը մինչև 1916թ. փետրվարը,[3] երբ մի քանի ընկերություններ՝ «Եղբայրական օգնությունը», «Երիտասարդական ընկերությունը», «Օրիորդաց կոմիտեն» և «Բարեգործական ընկերությունը» համաձայնության են գալիս այսուհետև որբանոցը պահել միացյալ ուժերով՝ այն անվանելով «Միացյալ ընկերությունների առաջին որբանոց»:[4] Այստեղ ապրում էին 5-13 տարեկան 30 երեխա:[5] 1916թ. ապրիլի 25-ին քաղաքից դուրս

---

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց.2,գ.1287, թ.3-5:*

[2] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 5: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք գ,Արտակ եպիսկոպոս Սմբատյանց /Տաուշեցի/, հոգևոր, գրական, պատմա-բանասիրական գործունեությունը և գնդակահարությունը (1876-1937թթ.), կազմ. Սանդրո Բեհբուդյան, Եր., 1997, թ.116-117:*

[3] *ՀԱԱ, ֆ.28, ց.1,գ.506,թ.125:*

[4] *ՀԱԱ, ֆ. 28, ց.1,գ. 506,թ. 125:*

[5] *Նույն տեղում, գ. 406, թ. 13:*

բացվում է 62 որբերով «Միացյալ ընկերության երկրորդ որբանոցը»՝ բաղկացած 8 լուսավոր, մեծ և հարմար սենյակներից:[1]

1916թ. հունիսի 7-ին Բասենի Բաշգեղ գյուղից Ալեքսանդրապոլ տեղափոխված որբերի համար Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղը[2] բացում է իր առաջին որբանոցը, 2-րդը բացվում է 1916թ. հունիսի 27-ին՝ Սասունից բերված 108 որբերի համար: Երկու որբանոցներն էլ ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի նախագահ Հակոբ Խաչվանքյանի ջանքերի արդյունքն էին:[3]

Իր որբանոցներն է բացում նաև պատերազմից տուժածներին օգնող Հայկական Բարեգործական ընկերության կենտրոնական կոմիտեն: Առաջին որբանոցը, որի վերահսկողությունը պատկանում է Ալեքսանդրապոլի գաղթականական դպրոցի ուսուցչական խմբին, Հովսեփ Միրզոյանի ղեկավարությամբ, բացվում է 1916թ. ապրիլի մեկին:[4] 1916թ. հուլիսին նույն խմբի և Միրզոյանի վերահսկողությամբ բացվում է երկրորդը, մինչև 1917թ. բացվում է նաև երրորդը:[5] 8-րդ որբանոցը հատկացրած էր միայն քոսոտ-քաչալ երեխաներին, զատված էր մյուս որբանոցներից և առնչություն չուներ նրանց հետ:[6] 1917թ. հունվարի 15-ին Լոնդոնի Կարմիր խաչի կոմիտեի միջոցներով 8-12 տարեկան 40 սասունցիների համար Ալեքսանդրապոլում մի նոր որբանոց է բացվում՝ «Ռոբինզոն» անվանումով:[7]

Առաջնորդական փոխանորդ Արտակ վարդապետը, Ալեքսանդրապոլում բացված որբանոցների մասին տեղեկացնելով կաթողիկոս Գևորգ V-ին, խնդրում է որոշ գումար բաց թողնել Կենտրոնական կոմիտեի միջոցներից:[8] Հարկ է նշել, որ գաղթականների և որբերի օգնության գործում անսահման մեծ էր կաթողիկոս Գևորգ V դերը, որը թե՛ բարոյապես և թե՛ նյութապես աջակցում էր գաղթականների գործերով զբաղվող կազմակերպություններին: 1915թ. հունվարի 7-ին նա հատուկ կոնդակով օրհնում է իր հովանավորությամբ ստեղծված Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնության» հանձնաժողովի գործունեությունը, հորդորում շարունակել մարդասիրական գործը՝ ուղարկելով 5000 ռուբլի: «Լիայոյս եմք,- ասված էր կոնդակում,- զի դուք ամենեքեանդ առաջի աչաց ունելով հանապազ զյուսահատ վիճակ անկածելոց,մանաւանդ անօգնական կանանց, անմեղ մանկանց և ծերոց, նույնպէս և հիւանդոց, ունիք կատարել զմարդասի-

[1] *Նույնը:*
[2] *Նույն տեղում, գ. 428, թ. 15:*
[3] *Նույն տեղում ,գ. 506, թ. 129:*
[4] *Նույն տեղում, գ.1,գ. 506,թ., թ. 116:*
[5] *Նույն տեղում, թ. 123:*
[6] *Նույն տեղում, գ. 1, գ. 547, թ 4-5:*
[7] *Նույն տեղում, գ. 901, թ. 2:*
[8] *Նույն տեղում, ֆ. 57, գ. 2, գ. 1159:*

ական պարտականութիւնս Ձեր ամենայն անձնուիրութեամբ և զեկուցանել Մեզ պարբերաբար զգործունէութենէ յանձնաժողովոյդ»:[1]

Նշված որբանոցները բացվում էին անհատների սեփական միջոցներով, որոնց ծախսերն այնուհետև վճարվում էին Կովկասի հայոց բարեգործական ընկերության կողմից: Հասարակական գործիչները շատ հաճախ չէին էլ սպասում, որ ընկերության կողմից փող ստացվի, այլ իրենց միջոցներով կամ պարտք վերցնելով էին լուծում գաղթականների օգնության հարցերը: Լինելով քաղաքում հայտնի և վստահելի մարդիկ՝ նրանք առևտրականներից առանց փողի ապրանք էին վերցնում՝ հետո վճարելու պայմանով: Սակայն փողի արժեզրկման պայմաններում հայտնվում էին անելանելի վիճակի մեջ՝ հաճախ անհարկի կորցնելով վստահությունը քաղաքի հասարակայնության մեջ: Մյուս կողմից էլ՝ հաճախ մեղադրվում էին Բարեգործական ընկերության կենտրոնական կոմիտեի կողմից, որի վերահսկիչները բազմաթիվ թերություններ էին գտնում որբանոցների աշխատանքում:Այս առումով հատկանշական են Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի նախագահ Հակոբ Խաչվանքյանի և ընկերության կենտրոնական կոմիտեի միջև առաջացած տարաձայնությունները: 1916թ. հոկտեմբերին Հակոբ քահանա Խաչվանքյանը Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդին գրում է. «Բազմիցս գրել եմ Հարգելի խորհրդիդ իմ ջանքերով բացուած Ալեքսանդրապօլի որբանոցի աշխատանքների փակման մասին, բայց խորհրդիցդ որևէ դրական կամ բացասական պատասխան չեմ ստացել: Եկաւ խորհրդիդ լիազօրը, իսկ մինչև այժմ կարգադրութիւն չեղաւ պարտքերի վճարման մասին: Սա մի սոսկալի երեւոյթ է մեր գործունէութեան մէջ, եւ ցանկալի է, որ այն օր առաջ իր վախճանն ունենայ:

Կարծում եմ վատութիւն չեմ արել՝ ստանձնելով իմ անձնական պատասխանատվութեամբ հայրենիքի սարսափներից ճողոպրած որբ մանուկների պատսպարութեան գործը Ալեքսանդրապօլում: Եվ իբր տեղի է ունեցել որեւէ թերութիւն գործավարութեան մէջ,այս իրողութիւնն էլ չպէտք է խիստ դատապարտելի լինի: Պէտք է յիշել այս մեծ ճշմարտութիւնը, թէ որով դատէք, դատւելու էք: Չեմ ուզում ասել, թէ թերութիւնները մի՛ դատապարտէք, սա կլինի հիմարութիւն եւ գործերի քայքայում, ո՛չ դատեցէք ամենայն խստութեամբ, բայց ի նկատի ունեցէք, որ այս գործը մասնաւոր է, չէր կարող զերծ լինել թերութիւններից, ինչպէս մեր աշխատաւորները խոստովանեցին: Գործին այս տեսակէտից մօտենալով՝ մենք հեռու պէտք է լինենք մէկին պատժելու մտադրութիւնից, քանի որ դա անարդարութիւն կլինի թափած աշխատանքի դիմաց»:[2]

Գաղթականների օգնության և որբախնամ գործունեության մեջ աչքի էին ընկնում նաև Ալեքսանդրապոլի կանայք: 1916թ. հուլիսին որբ մե-

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 8: Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, էջ 118-119:*
[2] *ՀԱԱ, ֆ. 28, ց.1, գ. 428, թ. 2-3:*

ծահասակ աղջիկների համար որբանոց է բացում Ալեքսանդրապոլի «Տիկնանց միությունը»: Որբանոցների վերահսկիչ Գ. Էդիլյանը 1916թ. հուլիսի 4-ին այս մասին հաղորդելով Բարեգործական ընկերության կենտրոնական կոմիտեին, վստահեցնում է, որ այն կարող է աշխատել, և նրան կարելի է նպաստ տրամադրել: «Տիկնանց միությունը, -գրում է Գ. Էդիլյանը,- կազմված է տեղիս սոլիդ և դիրքով տիկիններից: Նրանք դժգոհում են, որ իրենց գործի չեն հրավիրում:Այս կոմիտէն վարձել է մի բնակարան 30 որբ մեծահասակ աղջիկների համար, բացի այդ որոշել է բոլոր որբանոցների մեծ աղջիկների համար գորգագործի արհեստանոց բանալ և խնդրում է Կենտրոնական կոմիտէից նպաստ: Իմ ստացած տպավորութիւնը այն է, որ տիկնանց կոմիտէն կարող է որբանոց և արհեստանոց բանալ, այդ պատճառով էլ կարելի է վստահաբար այդ գործերը նրան վստահել և հարկավոր չափի դրամ տալ»: [1]

1916թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի հայուհիների «Տարօն» ընկերության վարչությունը կաթողիկոս Գևորգ V-ին տեղեկացնում է «Աշխատանքի տան» բացման մասին, որի նպատակն էր աշխատանք հայթայթել և նոր արհեստներ սովորեցնել գաղթական կանանց:[2] 1917թ. ապրիլի 7-ին կաթողիկոսը, գիտակցելով հայ ժողովրդի համար այդ ծանր պահերին հասարակության բոլոր ուժերի օգտագործման անհրաժեշտությունը, իր կոնդակով վերականգնում է կանանց իրավունքները համայնական գործերի մեջ.«Այս օրվանից սկսած,- ասված էր այդ կոնդակում,- արտօնում ենք կանանց սեռի իրավունքների վերականգնումը համայնական գործերի մեջ: Կանանց սեռի իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի՝ տղամարդոց հետ միասին մեր կեանքի ամէն մի գործի մեջ հանդես գալու..»: [3]

Մեծ էր կանանց դերը հատկապես որբերի խնամքի և դաստիարակության գործում: Նրանք աշխատում էին դպրոցներում՝ հաճախ անվճար կամ շատ ցածր աշխատավարձով: Գաղթականների գործով զբաղվող կազմակերպությունները հատուկ ուշադրություն են դարձնում գաղթական երեխաների համար դպրոցների բացման գործին: Մասնավորապես «Եղբայրական օգնության կոմիտեի» նախագահ Արտակ վարդապետը Գևորգ V կաթողիկոսին տեղեկացնում է, որ 1915 թ. ամռանը «Եղբայրական օգնության» հանձնաժողովի որոշմամբ հավաքելով 280 երեխա, Հովսեփ Միրզոյանը ամառային դպրոց է բացել, ուր անվճար դասավանդում են Արդության վարժարանի օրիորդները:[4] Նույն աշնանը այդ դպրոցը վերածվում է հատուկ դպրոցի՝ 350 փախստական երեխաների համար:[5]

---

[1] *Նույն տեղում, գ. 506, թ. 5-7:*
[2] *Նույն տեղում, ֆ. 57, ց.2, գ. 1311, թ. 4:*
[3] *Վավերագրեր ...., 1997, թ. 144:*
[4] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 11:*
[5] *Նույն տեղում, գ.1306, թ. 8-9: Վավերագրեր… , էջ 131:*

Չնայած այս գործի իրականացման դժվարություններին, որը երեխաների համար դպրոցներ են բացվում նաև գյուղերում: Դպրոցական գործի կառավարիչ Հովսեփ Միրզոյանը բազմաթիվ դիմումներ է հղում Կենտրոնական կոմիտեին:«Դպրոցական գործը մեր շրջանում շատ դանդաղ է առաջ գնում և խայտառակ կերպով կաղում է, - գրում է Միրզոյանը 1916թ. ապրիլի 3-ին,-չնայելով իմ բազմաթիվ դիմումներին, մինչև այժմ չուղարկեցիք ո՛չ բաւարար քանակութեամբ ուսուցիչներ և ո՛չ ևս դպրոցական և դասարանական պիտոյքներ, որպեսզի բացուած սակաւաթիվ դպրոցները գոնէ կարողանային կանոնաւոր աշխատանք սկսել»:[1]

Հատուկ ուշադրություն էր դարձվում նաև արհեստանոցների բացմանը՝ փորձելով մեղմել գաղթականների վիճակը՝ նրանց ներգրավելով աշխատանքի մեջ: Ընդ որում, դրանք, հատկապես հայրենակցական մի - ությունները, այնպիսի արհեստներ էին սովորեցնում գաղթականներին, որպեսզի վերադառնալիս վերջիններս նպաստեին երկրի վերաշինության գործին: Մասնավորապես Ալեքսանդրապոլի «Տարօն–Տուրուբերան» հայրենակցական միության վարչության նպատակների ու ընտրված կազմի մասին կաթողիկոսին ուղղված 1917թ. փետրվարի 23-ի զեկուցագրում, ասված է. «Վարչութեանս նպատակն է սովորեցնել տարօնցիներին անհրաժեշտ արհեստներ, երկրի ապագայ վերաշինութեան գործին նպաստելու համար, որպեսզի ապագայում ծանր դժվարութիւնների առաջ չկանգնենք: Այդ նպատակով արհեստանոցն արդեն բացուած է, և բանուորներին սովորեցնելու համար հրաւիրուած են վարպետներ»:[2]

Հույս կար, որ անմիջապես պատերազմի ավարտից հետո գաղթականները հետ կվերադառնան և ձեռնամուխ կլինեն երկրի վերաշինության գործին: Նույնիսկ պատերազմը դեռ չավարտված՝ շատ գաղթականներ դիմում էին իրենց հայրենի օջախները վերադառնալու հնարավորություն ստանալու խնդրանքով: Այսպես՝ Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնության» կոմիտեի նախագահը Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից «Պատերազմից վնասվածների օգնության» Հայկական կենտրոնական կոմիտեին 1917թ. փետրվարի 4-ին տեղեկացնում էր այն մասին, որ Ալեքսանդրապոլի գավառում գտնվող բազմաթիվ տղամարդ գաղթականներ դիմել են իրեն հայրենի օջախները վերադառնալու խնդրանքով, և հարցնում էր. «Արդյոք այս հարցի վերաբերեալ Կենտրոնական կոմիտէդ կայացրած ունի որևէ որոշում: Եթե կա որոշում կոմիտէս խնդրում է յայտնել, թէ ինչ միջոցներից է տրվելու գնացող գաղթականների ճանապարհածախսը»:[3]

Գաղթականների մոտ այս տրամադրություններն ավելի են ուժեղանում, և որբերի գործերով զբաղվող կազմակերպությունների ու անհատ-

[1] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 338, թ. 47:*
[2] *Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1311, թ. 9: Վավերագրեր ..., էջ 138:*
[3] *ՀԱԱ, ֆ. 28, ց.1, գ. 889, թ.8:*

ների վիճակն առավել է ծանրանում 1917թ. ընթացքում, երբ գաղթականների անընդհատ նոր հոսքի պայմաններում քաղաքն այլևս դժվարանում է նույն թափով և ոգևորությամբ շարունակել իր որբախնամ գործունեությունը և բավարարել գաղթականների ծով կարիքները:

Այնուամենայնիվ, չնայած 1915-1918թթ. իր հոգսաշատ ու ծանր կյանքին, Ալեքսանդրապոլի հասարակությունը մեծապես սատար կանգնեց եղեռնից մազապուրծ հայրենակիցներին և հնարավորության սահմաններում փորձեց փրկել նրանց, մինչև որ 1918թ. մայիսին թուրքերի՝ քաղաք մտնելուց հետո ինքը ևս ստիպված եղավ բռնելու գաղթի ճամփաները:Կարծում ենք՝ 25000–ից ավելի արևմտահայ գաղթականների առկայությունը Ալեքսանդրապոլում իր նկատելի բացասական դերն ունեցավ թուրքերի ներխուժման ժամանակ քաղաքում խուճապի առաջացման մեջ:

Անդրանիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ (ԵԹԿՊԻ)

1988թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Մ.Գորբաչովի 1985թ. ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար ընտրվելը նշանավորվեց «վերակառուցում»,«բացախոսություն» քաղաքական գործընթացների սկզբնավորմամբ՝ նպատակ հետապնդելով սոցիալ-տնտեսական, քաղաքական և ազգամիջյան հարաբերությունների համակարգում վերևից իրականացվող բարեփոխումների միջոցով երկիրը դուրս բերել ստեղծված խորը ճգնաժամից և դրանով փրկել կայսրությունը փլուզման վերահաս վտանգից:

ԽՍՀՄ-ի կազմում ապրող հայ ժողովրդի համար այդ գործընթացների հոլովույթում իբրև առաջնային շարունակեց մնալ XX դ. առաջին քառորդին տեղի ունեցած աշխարհաքաղաքական իրադարձությունների հետևանքով իրեն պատուհասած մեծ արհավիրքների՝ ցեղասպանության, տարածքային կուրուստների հիմնախնդիրներին, ասել է թե՝ հայկական հարցին բուռն անդրադարձը: Վերջինիս համազգային հնչեղություն ունեցող փորձաքարը հանդիսացավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որը ՌԿ/բ/Կ Անդրկովկասյան երկրկոմի 1921թ.հուլիսի 5-ի ապօրինի որոշմամբ մտցվել էր Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ, ինչի հետ անցած յոթ տասնամյակներին արցախահայությունը երբեք չէր հաշտվել:

1987թ. սկզբներին արդեն կիսալեգալ ձևով հօգուտ Ղարաբաղի հայության կազմակերպվեց համաժողովրդական ստորագրահավաք հետևյալ ձևակերպմամբ. «Մենք՝ նորքոստորոգրյալներս, կողմնակից ենք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից

դուրս բերելուն և այն ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելուն»:[1] 233.5հազ. բնակչություն ունեցող Լենինականում ևս շրջանառվեց այս փաստաթուղթը:

1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողպատգամավորներն իրենց արտահերթ նստաշրջանում որոշում ընդունեցին «ընդառաջ գնալ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ձգտումներին՝ դուրս գալու Ադրբեջանական ԽՍՀ կազմից և վերամիավորվելու ՀԽՍՀ-ին, ինչպես նաև դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ հաշվի առնելով բնակչության բացարձակ մեծամասնության կարծիքը, հաստատել մարզը Ադրբեջանական ԽՍՀ ենթակայությունից հանելու և այն ՀԽՍՀ-ին հանձնելու ժողպատգամավորների Մարզային խորհրդի որոշումը»:[2]

ԽՍՀՄ կենտրոնական և ադրբեջանական իշխանությունները ղարաբաղահայության՝ Հայրենիքի հետ վերամիավորման պայքարը որակեցին որպես ազգայնամոլների, ծայրահեղականների կողմից ձեռնարկված քայլ՝ «վերակառուցմանը թիկունքից հարվածելու նպատակով»: Նմանօրինակ ձևակերպումները սահուն ձևով քոչեցին կենտրոնական մամուլ, մասնավորապես, ԽՄԿԿ ԿԿ օրգան «Պրավդա» և այլ թերթեր: Ի սկզբանե պարզ դարձավ, որ ղարաբաղահայության հարցի լուծման ճանապարհին սպասվելու են դաժան փորձություններ:

Հանրապետության երկրորդ քաղաքում՝ Լենինականում 1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին վերաբերող լուրերն ընդունվեցին մեծ ոգևորությամբ, և փետրվարի 24-ից սկսած՝ տեղի ունեցան հանրահավաքներ քաղաքի աշխատավորության և մտավորականության մասնակցությամբ, որտեղ հնչում էին կոչեր ի պաշտպանություն արցախահայության՝ Հայրենիքի հետ վերամիավորվելու պայքարի:

Հանրահավաքներում ծածանվող ցուցապաստառներն ու կարգախոսները՝ «Ղարաբաղը հայկական հող է», «Պահանջում ենք վերականգնել պատմական արդարությունը Ղարաբաղի հարցում», «Միացում», «Մենք քեզ հետ ենք, Ղարաբաղ», «Վերակառուցում», «Աջակցում ենք ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականությանը», «Արցախ-Ղարաբաղ-Հայաստան-Միացում», «Մեր պահանջն արդարացի է», «Ղարաբաղը մերն է» բովանդակությամբ, վկայում էին, որ ղարաբաղյան շարժումն իր բնույթով չուներ հակախորհրդային բնույթ: Բազմահազարանոց հանրահավաքներում առաջ էին քաշվում կարգախոսներ՝ ի պաշտպանություն վերակառուցման և բացախոսության, լենինյան ազգային քաղաքականության: Ելնելով 1988թ. Լենինականում Ղարաբաղյան շարժման զարգացման ընթացքից և հարցադրումների ուղղվածությունից՝ կարծում ենք՝ այն կարելի է երեք փուլերի բաժանել.

---

[1] *Տե՛ս հեղինակի անձնական արխիվ, թղթապանակ 1, թուղթ 11:*
[2] *«Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթ, 1988թ. 21-ը փետրվարի, էջ 1:*

1. Համաժողովրդական շարժման սկզբնավորման և ձևավորման փուլ (1988թ. փետրվար - հունիս)

Գլխավոր քաղաքական նպատակ համարվեց «պատմական իրավունքի» և «պատմական անարդարության» վերանայման գաղափարախոսական հենքի վրա ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքանությունը և հռչակված վերակառուցման կուրսը պաշտպանելու վերաբերյալ հավաստիացումներով հասնել խնդրի կարգավորմանը: Պայքարի միջոցներ ընտրվեցին բազմահազարանոց համաժողովրդական հանրահավաքները, Կենտրոնին ուղղված դիմում-խնդրագրերը: Հանրահավաքները կրում էին բացառիկորեն խաղաղ բնույթ: ՀԽՍՀ- ի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման հարցը դիտարկվում էր որպես ԽՍՀՄ ներքին հարց: Կար համոզվածություն, որ ԽՄԿԿ և ԽՍՀՄ ղեկավարության քաղաքական կամքի առկայության պարագայում կարելի էր այդ խնդրին օրինական լուծում տալ:

Սակայն 1988թ. փետրվարի 27-29-ին Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացված զանգվածային սպանդը համաժողովրդական ցասման նոր ալիք բարձրացրեց ողջ հայության, այդ թվում նաև լենինականցիների մեջ, շատ հարցերում հանգեցնելով ժողովրդական լայն զանգվածների քաղաքական ինքնագիտակցության, նախկին արժեքների նկատմամբ մոտեցումների վերանայման և վերաիմաստավորման: Հավատը շատ կարծրատիպերի նկատմամբ (ԽՄԿԿ լենինյան իմաստուն ազգային քաղաքականություն, սովետական իշխանությունը հայ ժողովրդի բարգավաճման, ապահովության միջոց և այլն), խփվելով դաժան իրականության արգելապատնեշին և ճաքեր տալով, արագորեն փշրվում էր:

1988թ. մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանի մայրաքաղաքում, հանրապետության այլ բնակավայրերում, նաև Լենինականում փետրվարյան իրադարձություններից հետո հանրահավաքների թափը ժամանակավորապես ընկավ, սակայն 1988թ. մարտից սկսած՝ Շարժման մեջ սկսվեցին հստակորեն գծագրվել և տարորոշվել երկու մոտեցումներ.

ա) շարժմանը միայն ազգային-ազատագրական բնույթի հաղորդման և որակման կողմնակիցներ (Իգոր Մուրադյան, Մանվել Սարգսյան, Գագիկ Սաֆարյան և ուրիշներ), բ) շարժմանը ժողովրդավարական-ազատական և սահմանադրական բնույթ հաղորդելու կողմնակիցներ, որ առաջնահերթ համարելով «Միացում» կարգախոսը, գտնում էին, որ չի կարելի անտեսել բոլոր այն հիմնախնդիրները, որոնք հանրապետությունում կուտակվել էին կյանքի բոլոր բնագավառներում (Աշոտ Մանուչարյան, Համբարձում Գալստյան և ուրիշներ):

Այս երկու թևերի միջև քաղաքական անհամաձայնությունը հանգեցրեց «Ղարաբաղ» կոմիտեի պառակտմանը: Առաջին փուլի մեծագույն ավանդը եղավ այն, որ հարցն ստացավ համաժողովրդական բնույթ և իր վրա գրավեց միջազգային հանրության ու Խորհրդային ղեկավարության

ուշադրությունը, վերածվեց հռչակված «վերակառուցում», «բացախոսություն» քաղաքական կարգախոսների յուրատեսակ փոթաքարի:

2. 1988թ. հունիս - սեպտեմբեր:

1988թ. մայիսի վերջերից և հունիսի սկզբներից վերակազմավորված Հայաստանյան «Ղարաբաղ» կոմիտեին (Լ.Տեր-Պետրոսյան, Վ.Մանուկյան,Վ.Միրզաեղյան, Բ.Արարքցյան և ուրիշներ) վիճակվեց դառնալ քաղաքական այն միջուկը, որի շուրջը համախմբվելով, հնարավոր եղավ մշակել Շարժման նոր որակի գաղափարախոսությունը, որում ոչ միայն Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի հետ վերամիավորման պայքարին աջակցելու խնդիրն էր ներառված, այլև հայ ժողովրդին հուզող բազմաթիվ համազգային նշանակության հիմնահարցեր: Շարժման տրամաբանությամբ թելադրված՝ վերաիմաստավորվում և վերագնահատվում էին շատ արժեքներ, որոնցից կարելի է առանձնացնել. ժողովրդավարության ճանաչումը՝ որպես ժողովրդի զարգացման կարևորագույն նախապայման, ազգի սուվերենության առաջնայնությունը, սեփական ուժերին ապավինելու միջոցով իրատեսական քաղաքականության իրականացումը դիտարկվեց որպես կարևորագույն նախապայման ժողովրդի կենսապայմանների համաչափ և բնականոն զարգացման համար: Այլոց հավատարմության երդումներ տալը համարվեց ստրկամտության դրսևորում, բարդույթ, ժողովրդի վզին փաթաթված քաղաքական շինծու կատեգորիա: Բնույթով ազգային-ժողովրդավարական այս արժեքները դարձան Շարժման գաղափարական ողնաշարը, քաղաքական գործելակերպի հիմքը:

Լենինականյան «Ղարաբաղ» կոմիտեն ոչ միայն սատար կանգնեց Ղարաբաղյան շարժման Հայաստանյան կոմիտեին, այլև ակտիվորեն (հատկապես 1988թ. հունիսից) ընդգրկվեց քաղաքական գործընթացների հորձանուտում՝ էական դեր խաղալով Շարժման գաղափարախոսությունը Շիրակում թեժ պահելու խնդրում: Այս ժամանակահատվածում Կոմիտեի կողմից անցկացվեցին մի շարք քաղաքական միջոցառումներ.

1988թ. հունիսի 5-ից Լենինականում սկսվեց նստացույցը՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով՝ քննարկելու համար հետևյալ հիմնահարցերը. ա) Համաձայնություն տալ 1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողպատգամավորների մարզային խորհրդի XX գումարման արտահերթ նստաշրջանում ընդունած որոշմանը՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու մասին: բ) Ադրբեջանի ԽՍՀ-ի ղեկավարությանը պաշտոնական բողոք ներկայացնել Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության կապակցությամբ և դիմել ԽՍՀՄ դատախազությանը՝ այն որպես ցեղասպանություն որակելու և քննությունն իր վարույթ վերցնելու համար:

Այս նպատակներին հասնելու քաղաքական ռեսուրսներ համարվեցին հանրահավաքները, երթերը, ցույցերը, նստացույցերը, հացադուլը և

գործադուլը: Հանրահավաքները Լենինականում առավել մեծ մասշտաբներ ընդգրկեցին. Հունիսի 11-13-ին ցուցարարների թիվը հասավ գագաթնակետին՝ անցնելով 60-65 հազարի սահմանները, իսկ այդ օրերին կազմակերպված ոտաբոբիկ երթը Լենինականից Երևան՝ Ազատության հրապարակ՝ ի համերաշխություն Ղարաբաղի հայ ժողովրդի հերոսական պայքարի, մեծ արձագանք ունեցավ ամբողջ Հայաստանում:

1988 թ. հունիսի 15-ին Երևանում հրավիրվեց Հայկական ԽՍՀ ԳԽ յոթերորդ նստաշրջանը, որն ընդունեց որոշում ԼՂԻՄ վերաբերյալ. համաձայնություն տրվեց Լեռնային Ղարաբաղի ժողպատգամավորների մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշմանը մարզի՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու մասին:[1]

1988թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը Մոսկվայում նախատեսվում էր անցկացնել ԽՄԿԿ XIX համամիութենական կոնֆերանս՝ նվիրված երկրում ազգամիջյան հարաբերությունների սրված խնդիրներին: Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեն կազմակերպեց ստորագրահավաք՝ Ղարաբաղի հարցը կոնֆերանսում քննարկման առարկա դարձնելու նպատակով, որին արձագանքեցին հազարավոր կոմունիստներ, բացառությամբ կուսակցական ապարատի ներկայացուցիչների: Կոնֆերանսում Ղարաբաղի հարցը մնաց բաց: Դրան ի պատասխան՝ ողջ հանրապետությունում հայտարարվեց համազգային գործադուլ, որին իր ակտիվ մասնակցությունն ունեցավ Լենինականի աշխատավորությունը: Համազգային լարված մթնոլորտում, 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հատուկ նիստ հրավիրեց ԽՍՀՄ բարձրագույն քաղաքական ղեկավարության մասնակցությամբ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի հարցին,մերժեց ԼՂԻՄ խնդրանքը՝ վերամիավորվել Հայաստանին՝ չեղյալ հայտարարելով 1988թ. հունիսի 15-ին Հայկական ԽՍՀ ԳԽ որոշումը ԼՂԻՄ Մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի՝ ԼՂԻՄ-ը ՀՍՍՀ կազմի մեջ մտնելու որոշմանը համաձայնություն տալու վերաբերյալ:

Լենինականում համազգային գործադուլը նոր ծավալներ ընդունեց: Չէին աշխատում կամ մասամբ էին աշխատում քաղաքի արդյունաբերական հսկաները՝ Տեքստիլ կոմբինատը, Գուլպա-նասկեղենի արտադրական միավորումը, Հոկող հաստոցների, Էլեկտրակենցաղսարք, Էլեկտրակոնդենսատոր, Ստրոմմաշինա,Անալիտիկ սարքերի,Միկրոէլեկտրաշարժիչ, Ռեզիստորների և այլ գործարանները:

3. 1988թ. սեպտեմբեր - դեկտեմբեր

Լենինականում շարունակվող հանրահավաքների գլխավոր թեման 1988թ. սեպտեմբերի 18-ին ազերի հրոսակների կողմից Խոջալուում հայերի նկատմամբ կատարված բռնությունը դատապարտելն էր:Սկսվեց պայքարի որակապես նոր փուլ: Խոջալուից հետո Շարժումը Վազգեն Մանուկ-

[1] *«Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1988թ. 16-ը հունիսի, թիվ 142, էջ.1:*

յանի բնութագրմամբ թևակոխեց պատերազմի սկիզբն ազդարարող փուլ:[1] Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեն 1988թ. սեպտեմբերի 22-ին նախաձեռնեց ստորագրահավաք քաղաքային խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու համար՝ Ղարաբաղում կատարվածը դատապարտելու նպատակով: Լենինականի քաղխորհուրդը մերժեց այդ: Քննարկվում էին նաև քաղաքում կաղդային քաղաքականությանը, հովանավորչությանը, կաշառակերությանը բյուրոկրատիզմին առնչվող, 1915թ. Մեծ եղեռնի պաշտոնապես ճանաչման, հայոց լեզվին ու մշակույթին մեծ տեղ տալու, հայ փախստականներին աջակցություն ցուցաբերելու և այլ հարցեր:

Հոկտեմբերի 21-ին, ի պատասխան Շուշին աղրբեջանցիներով բնակեցնելու Աղրբեջանական ԽՍՀ ղեկավարության նկրտումների, Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնությամբ դիմում ներկայացվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանին՝ 1988թ. նոյեմբերի 5-ից Լենինական-Երևան-Գորիս-Լաչին-Շուշի և Լենինական-Երևան-Գորիս-Լաչին-Շուշի-Ստեփանակերտ երթուղիների գործարկման թույլտվություն ստանալու նպատակով: Համագործակցելով Հայաստանյան կոմիտեի հետ՝ Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեն միացավ նոյեմբերի 18-ը համազգային գործադուլի օր հայտարարելու նախազգուշական ակցիային՝ պահանջելով բավարարել Արցախում սկսված գործադուլի պահանջները զորքերը մարզից դուրս բերելու, պարետային ժամը վերացնելու վերաբերյալ:

Նոյեմբերի 19-ին և 20-ին Լենինականի Թատերական հրապարակը դարձյալ լեփ-լեցուն էր հանրահավաքի մասնակիցների բազմությամբ «Արցախ», «Ղարաբաղ», «Միացում», «Արդար պահանջ» կարգախոսներին ավելացել էր «Համազգային գործադուլ»-ը:[2] Հաշվի առնելով հանրապետությունում ստեղծված ծանր քաղաքական իրավիճակը՝ Հայկական ԽՍՀ ԳԽ նախագահությունը Շարժման մասնակիցների ճնշումների ներքո 1988թ. նոյեմբերի 22-ին որոշեց հրավիրել տասնմեկերորդ գումարման ԳԽ VIII նստաշրջան, քննարկելու համար. Հանրապետության սովետական և տնտեսական մարմինների կողմից ԼՂԻ մարզի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ ԳԽ նախագահության և Սինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքը, ապրիլի 24-ը 1915թ. ցեղասպանության զոհերի հիշատակի օր հայտարարելու և այլ հարցեր:

Այդ նույն օրերին Բաքվում ընթանում էին հակահայկական հանրահավաքներ, որոնք ուղիղ եթերով հեռարձակում էր Աղրբեջանական հեռուստատեսությունը:Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ ՀԽՍՀ ԳԽ-ն որոշեց ընդհատել նստաշրջանի աշխատանքները: Խնդիր դրվեց այցելել հանրապետության տարբեր շրջաններ՝ տեղերում իրավիճակին ծանո-

---

[1] *Վազգեն Մանուկյան, Հայկական Երազանքը գոյատևման փակուղում, ելույթների և հոդվածների ժողովածու, Եր., 2002, էջ 24:*

[2] *«Բանվոր» օրաթերթ, 1988թ., նոյեմբերի 22, էջ 2:*

թանալու և 2-3 օր հետո վերսկսելու նստաշրջանի աշխատանքները: Բայց պարզվեց,որ ԳԽ նախագահությունը նստաշրջանի աշխատանքները դադարեցրել էր մինչև «իրադրության նորմալացումը» ձևակերպմամբ, ինչը չէր բխում նստաշրջանի ընդունած որոշման ոգուց:Այդ քայլը առավել սրեց քաղաքական իրավիճակը Հայաստանում:

1988թ. նոյեմբերի 24-ին Օպերային թատրոնի դալիճում պատգամավորների մեծամասնության նախաձեռնությամբ, որին միացան նաև Լենինականյան «Ղարաբաղ» կոմիտեի նախաձեռնություններին աջակցող պատգամավորներ (Ժ.Խաչատրյան, Ա.Դիլանյան, Կ.Սարգսյան, Վ. Բավեյան, Ռ. Թամիրյան, Գ. Խլղաթյան, Թ. Իսկանդարյան, Հր. Մատնիշյան, Գ. Խաչատրյան, Մ. Ծատուրյան, Թ. Խաչատրյան) հրավիրվեց քվորումի առկայությամբ չարտոնված ԳԽ նստաշրջան: Սա առիթ հանդիսացավ, որպեսզի ԽՍՀՄ Պաշտպանության Սինիստր Դ. Յազովի հրամանով Երևանում մտցվեր պարետային ժամ, ինչը հավասարազոր էր Շարժումը գլխատելուն: Ցասման ալիքը հասավ իր գագաթնակետին:

Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեն Ղարաբաղյան Շարժման Հայաստանյան կոմիտեի ղեկավարների հետ համատեղ որոշեց քաղաքական մի շարք ակցիաներ իրականացնել Լենինականում՝ քաղաքական մթնոլորտը ղարաբաղյան հարցի շուրջ «տաք» պահելու համար: Պարբերաբար կազմակերպվող բազմամարդ հանրահավաքները, երթերն ու ցույցերը հետևյալ պահանջներն ունեին. վերացնել ոչնչով չհիմնավորված հակասահմանադրական որոշումը Երևանում պարետային ժամ մտցնելու վերաբերյալ, կենտրոնական իշխանություններից պահանջել ապահովել Ադրբեջանական ԽՍՀ տարածքում բնակվող հայերի ֆիզիկական անվտանգությունը, միջոցներ ձեռնարկել կասեցնելու նրանց բռնագաղթը, չեղյալ հայտարարել Հայկական ԽՍՀ ԳԽ նախագահության որոշումը 1988թ. նոյեմբերի 24-ի տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի ութերորդ ընդհատված նստաշրջանի աշխատանքներն անօրինական ճանաչելու վերաբերյալ, դադարեցնել կենտրոնական զանգվածային լրատվամիջոցների կողմից Շարժմանն առնչվող հիմնախնդիրների միակողմանի լուսաբանումը, քաղաքական գնահատական տալ Սումգայիթում,Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի այլ վայրերում հայերի նկատմաբմ կիրառվող բռնություններին՝ որակելով դրանք որպես ցեղասպանություն, դադարեցնել Բաքվում անցկացվող բացահայտ հակահայկական միտինգները և այլն:[1] Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեի իրականացրած կարևորագույն քայլերից էր քաղաքում հակաադրբեջանական ելույթները կասեցնելը, որոնց ունենալիք իրական հետևանքներն ամենևին չէին բխում Շարժման շահերից: Կանխվեց քաղաքից երթը դեպի Ամասիայի ադրբեջանական գյուղերը: Կոմիտեն այլատյացությունը համարեց մերժելի, Շարժմանը բացարձակապես անհարիր:

[1] *Տե՛ս հեղինակի անձնական արխիվ, թղթապանակ 4, թուղթ 19:*

1988թ. նոյեմբերի 29-ից աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ ԳԽ տաս-/ներկուերորդ նստաշրջանը, որի «ռեգիոնում իրադրության նորմալացման և աղրբեջանական և հայ ազգությանը պատկանող քաղաքացիների ինտերնացիոնալ բարեկամության վերականգնման[1] ուղղված անհետաձգելի միջոցառումների» ոչինչ չասող կոչերը համանուն փաստաթուղթը անարդյունավետ և անիրականանալի դարձրին:

Վերջին հանրահավաքը Լենինականում տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի 4-ին «Համազգային գործադուլ», «Միացում», «Շիրակ, Արցախը քեզ հետ է» կարգախոսների ներքո:

1988թ. դեկտեմբերի 5-ից 7-ը ընկած ժամանակահատվածում կոմիտեն հիմնականում զբաղված էր Երևանի ու Ստեփանակերտի հետ տեղեկատվության փոխանակման և այլ կազմակերպչական հարցերով, և դա տևեց մինչև 1988թ. դեկտեմբերի 7-ը՝ Մեծ արհավիրքի օրը: Լենինականի «Ղարաբաղ» կոմիտեն, վայելելով հասարակության լայն շերտերի աջակցությունը, իր որոշակի ավանդն ունեցավ Արցախյան գոյամարտի կազմակերպման սկզբնափուլում:

Նազիկ ԳԱԲՐԻԵՅԼԱՆ (ՀՊՄՀ)

ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ժողովրդագրական իրավիճակի ու հնարավոր զարգացումների գնահատումները գտնվում են մի շարք գիտությունների, այդ թվում՝ աշխարհագրության ուշադրության կենտրոնում: Այս հիմնախնդիրը դիտարկելի է և՝ տեղական, և՝ տարածաշրջանային, և՝ համամոլորակային մակարդակներով, քանի որ առկա է վերջինիս դրսևորման պատճառահետևանքային կապերի ողջ համալիրը: Տեղական մակարդակում գնահատումներն ունեն ինչպես զուտ գիտական-տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Դրանք կարևոր են ռազմավարական նշանակության ծրագրերում տարածաշրջանային առանձնահատկությունների հաշվառման տեսանկյունից, հատկապես եթե դիտարկվում են կայուն զարգացման համատեքստում:Հայաստանի Հանրապետության համար նույնպես ժողովրդագրական իրավիճակի գնահատումներն ու հնարավոր զարգացումների կանխատեսումներն ունեն առաջնային կարևորություն: Միաժամանակ, կարևոր է նաև առանձին տարածաշրջանների ու բնակավայրերի համար նմանատիպ գնահատականներ ներկայացնելը, մանավանդ որ այսօր առկա են «ռիսկային գոտիներ», որտեղ ժողովրդագրական

[1] *«Բանվոր», 1988թ. 3-ը դեկտեմբերի, թիվ 279:*

հիմնախնդիրներն ունեն առավել սուր դրսևորումներ: Գյումրին այդ շարքում կարևոր տեղ է զբաղեցնում:

Վերջին մեկուկես տասնամյակում բավականին լայն տարածում ունեն ժողովրդագրական զարգացումները կայուն զարգացման համատեքստում գնահատելու փորձերը: Ըստ առավել ընդունված ձևակերպումների՝ կայուն զարգացումը «ներկա և հաջորդ սերունդների ներկայացուցիչներին երաշխավորում է պատշաճ, առավելագույն հնարավոր հավասար մեկնարկային պայմաններ՝ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական կարիքները բավարարելու համար»:[1] Գյումրին, լինելով բնակչության թվով հանրապետության երկրորդ քաղաքը, ունի կարևոր ռազմավարական նշանակություն:Սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով այն այսօր հանրապետության մյուս քաղաքներից շարունակում է տարբերվել իր «մեկնարկային հնարավորություններով», կրելով նաև Սպիտակի երկրաշարժի դեռևս չհաղթահարված հետևանքները: Քաղաքում, չնայած կայուն զարգացման ապահովման համար անհրաժեշտ հսկայական ներուժին, դեռևս շարունակում է տիրապետող մնալ «գոյատևման ռազմավարությունը»:

Կայուն զարգացման տեսության համատեքստում կարևոր է դիտվում առաջին հերթին մարդկային ներուժը, ինչը սոցիալական, տնտեսական, մշակութային բնականոն զարգացման կարևոր նախապայման է: Գյումրին ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ այսօր ունի մարդկային բավականին մեծ ներուժ: Սակայն վերջին մեկուկես տասնամյակի անբարենպաստ զարգացումների պատճառով քաղաքի ժողովրդագրական իրավիճակում արդեն նկատվում է երկրաշարժի «ժողովրդագրական ալիքի» ազդեցությունը: Մարդկային կորուստները, վերարտադրողական գործառույթներից արհեստականորեն դուրս մնացած անհատների զգալի զանգվածը, արտագաղթը և այլ իրողություններ նպաստեցին քաղաքի բնակչության թվաքանակի նվազմանը, ինչպես նաև մարդկային ներուժի իրացման հնարավորությունների սահմանափակմանը: Եթե 1988թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմում էր 230.6 հազար մարդ, ապա 2007թ. հունվարի 1-ին այն նվազել էր մինչև 147.7 հազար: Նշված ժամանակում քաղաքի բնակչությունը նվազել է տարեկան միջինը 4.5%-ով: Որպես կանոն բնակչության թվաքանակի առավել ճշգրիտ հաշվառում իրականացվում է մարդահամարների ժամանակ: 2001թ. մարդահամարի արդյունքները հավաստեցին,որ Գյումրու բնակչության թիվը 1988թ. համեմատ նվազել է ավելի քան 30%-ով: Առկա բնակչությունը մշտականից պակաս է մոտ 10000 մարդով: Այս տարբերությունը խոսում է այն մասին, որ ցանկացած քայլ, որը չի հանգեցնի քաղաքի հիմնախնդիրների լուծմանը, կարող է ոչ միայն էական ազդեցություն ունենալ ժամանակա-

[1] *Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման հայեցակարգ, Եր., 2002, էջ 6:*

վոր բացակայողների միգրացիոն վարքագծի վրա,այլև փոխել քաղաքում մնացած բնակչության միգրացիոն տրամադրությունները:[1]

Քաղաքային մշակույթը Գյումրիում երկրաշարժից հետո ենթարկվել է էական փոփոխությունների: Բնակչության գերակշիռ մասը, հայտնվելով գործազուրկի կարգավիճակում և ունեցվածքային աղքատության եզրին, երբեմնի բարեկեցության վերականգնումը պատկերացնում է հիմնականում «դրսում վաստակելու» ճանապարհով: Սա է պատճառը, որ որպես կանոն միգրացիոն գործընթացներում հիմնականում ընդգրկվում են ակտիվ վերարտադրողական տարիքում գտնվող անհատները, ուստի խախտվում է նաև բնականոն վերարտադրողական գործընթացը:

Ժողովրդագրական իրավիճակի ցայտուն ցուցանիշը բնակչության սեռատարիքային կառուցվածքն է, որը միաժամանակ «ժողովրդագրական պատմության դրոշմն» է՝ կրելով ժողովրդագրական ցնցումների հետքերը:

Գյումրու բնակչության սեռատարիքային բուրգը
(ըստ 2001թ. մարդահամարի տվյալների)

Տղամարդիկ Կանայք



Ինչպես երևում է գծապատկերից, ժողովրդագրական անբարենպաստ զարգացումներն արդեն հանգեցրել են բնակչության սեռատարիքային կազմի փոփոխությունների: Այսպես՝ ծնելիության նվազման հետևանքով դիտվում է ստորին տարիքային խմբերի տեսակարար կշռի նվազում, ինչը ենթադրում է, որ մոտ ապագայում քաղաքի աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը ևս նվազելու է: Եթե այս երևույթն ընթանա շարունակվող արտագաղթի պայմաններում, ապա նվազման մակարդակն առավել բարձր կլինի: Բնակչության տեսակարար կշռի նվազում դիտվում է նաև 25-34 տարիքային խմբերում, ինչն արդեն այս տարիքային խմբերի ներկայացուցիչների միգրացիոն ակտիվության հետևանք է: Ուշագրավ է նաև 15-19 և 40-44 տարիքային խմբերի տեսակարար կշռի համեմատաբար մեծ բաժինը, որն էլ բացատրվում է բնական

[1] *Պատահական չէ, որ վերջին տարիներին, կապված Երևանում շինարարության մեծ ծավալների հետ, ակտիվացել են դեպի Երևան ուղղված հոսքերը:*

աղետներից, պատերազմներից, ինչպես նաև այլ արտակարգ իրավիճակներից հետո մարդկային կորուստները վերականգնելու ձգտմամբ[1]:

Քաղաքում նկատվում է ժողովրդագրական ծերացում, համաձայն Բոժիե-Գառնիեի-Ռոսսետի սանդղակի, այն գտնվում է ժողովրդագրական ծերացման միջին մակարդակում, ինչը հանգեցնում է առավել ցածր տարիքային խմբերի սոցիալական ծանրաբեռնվածության աճի: Իրավիճակն էլ ավելի կբարդանա մոտ ապագայում, քանի որ կենսաթոշակային տարիք կմտնի հետպատերազմյան համեմատաբար մեծաթիվ սերունդը:

Բնակչության սեռային կառուցվածքը կախված է երեք հիմնական գործոններից՝ սեռերի երկրորդային հարաբերակցությունից, տարբեր տարիքային խմբերի տղամարդկանց և կանանց մահացության ցուցանիշների տարբերությունից, միգրացիոն գործընթացներում տարբեր սեռերի ներկայացուցիչների ընդգրկվածության ինտենսիվությունից:[2]Քաղաքի բնակչության սեռատարիքային բուրգում արտացոլված է այն իրողությունը, որ միջին և բարձր տարիքային խմբերում կանայք գերազանցում են տղամարդկանց: Առաջին դեպքում հիմնական պատճառներից մեկը միգրացիոն գործընթացներում տղամարդկանց համեմատաբար ակտիվ ներգրավվածությունն է, երկրորդ դեպքում՝ արդեն նաև տղամարդկանց մահացության համեմատաբար բարձր ցուցանիշը:

Զարգացման նման միտումների պահպանման դեպքում մոտ ապագայում աշխատունակ տարիքի բնակչության սոցիալական ծանրաբեռնվածությունն առավել սուր դրսևորումներ կունենա, քանի որ քաղաքի բնակչության 30%-ից ավելին տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունն է: Հետևաբար տնտեսապես ակտիվ բնակչության ապահովումը՝ երաշխավորված աշխատատեղով, այսօր կարևոր է առավել, քան երբևէ: Հիմնականում խորհրդային տարիներին ստեղծված և սեփականաշնորհումից հետո չգործող արդյունաբերական ձեռնարկությունների անմխիթար վիճակն անհրաժեշտ քանակությամբ աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն չի ընձեռում: Ուստի կարևորվում է մտավոր ներուժի իրացման, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման, բնակչության զբաղվածության այլ ոլորտների ստեղծման հնարավոր պայմանների ապահովումը: Այս խնդրի լուծմանը ձեռնամուխ պետք է լինեն ոչ միայն կենտրոնական, այլև տեղական իշխանությունները, իսկ նմանատիպ ծրագրերի հիմքում պետք է դրվեն գիտականորեն հիմնավորված տեսակետներ ու

---

[1] *Երկրաշարժից հետո 1991,1992թթ. մարզում դիտվում էին ծնելիության բավականին բարձր ցուցանիշներ: Շատ ընտանիքներ նախընտրեցին երեխա ունենալով վերականգնել մարդկային կորուստները, ինչի արդյունքում բազմաթիվ ընտանիքներում ծնվեց երրորդ երեխան: Նմանատիպ երևույթ նկատվել է նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին հաջորդած ժամանակահատվածում:*

[2] *«Դեպի կայուն քաղաքներ», 21-րդ դարի տեղական օրակարգերի ուղեցույց անցումային տնտեսությամբ երկրների քաղաքների համար, Եր., 2003, էջ 113*:

մոտեցումներ, որոնք կընձեռեն մարդկային ներուժի իրացման առավել արդյունավետ հնարավորություններ:

Սվետլանա ՊՈՂՈՍՅԱՆ (ՀԱԻ,ՀԱՊԹ)

ՇԻՐԱԿԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՋԱՐԴԱՀԱՍՄԱԼԻՐԸ

Զարդն արտահայտում է կրողի գեղագիտական նախասիրությունները և գեղեցիկի ընկալման առանձնահատկությունները, աշխարհայացքը, կարգավիճակը և կենսական այս կամ այն իրադրությունը (առօրյա, տոն, ծես): Զարդերն ունեցել են նաև ծիսական, հմայական և պաշտպանական գործառույթներ: Նրանց դիրքը մարմնի վրա ամրացման և կրողի ապահովության առումներով որոշակի դեր և խորհուրդ ուներ: Դրանք այն մասերում էին, որտեղ մարդն առավելապես խոցելի է՝ գլուխ, կրծքամաս, գոտկատեղ, ձեռք-ոտք: Ըստ գործառույթի՝ զարդերն եղել են գեղագիտական, կիրառական, հմայական,ըստ սեռատարիքային առանձնահատկությունների՝ մանկան, կնոջ և տղամարդու (ամուսնացած կամ չամուսնացած հակադրությամբ): Զարդերը լինում են անշարժ զգեստի վրա ամրացվող (ճարմանդ, կոճակ, կախիկ, հմայիլ) և շարժական, առանձին կրվող:

Հայ տղամարդու երբեմնի հարուստ զարդարանքից՝ ուլունքաշարեր, վարսակալ, ականջօղեր, ապարանջաններ, բազպաններ, մատանիներ, գոտի, ավանդական կենցաղում օգտագործվել են վերջին երկուսը:

Շիրակում կրել են թամբաձև ճարմանդով արծաթյա կամ ոսկյա գոտի կամար, որը տղամարդկության, արժանապատվության խորհրդանիշ էր: Գոտին կրվել է գոտկատեղում և ամրացվել հատուկ ճարմանդի միջոցով՝ միանալով հենց պորտի վրա, որը մարմնի կենտրոնն էր, սերնդի հիմքը: Հասունացած, ամուսնանալու իրավունք ունեցող տղային անվանում են գոտիացու:[1] Առաջին անգամ արծաթյա, ոսկյա գոտի կապել են հարսանիքի օրը՝ իբրև նվեր ստանալով հարսնացուի կամ իրենց ծնողներից: Արծաթյա գոտի կապել են ամուսնական խմբի՝ որդեծնության հետ կապված տղամարդիկ: Գոտին հարդարվել է երկրաչափական և բուսական զարդանախշերով: Ստորին եզրին հատիկազարդ եռանկյուններից կամ կիսաշրջանաձև լարերից կազմված ժանյակ է արվել: Ճարմանդի երկու կողմերում արվել են արծաթե տախտակներով կաշվե բարակ ծոպեր կամ շղթաներ՝ գնդաձև կախիկներով, որոնք ունեցել են պաշտպանական գործառույթ: Առանձին զարդատախտակներից կազմված գոտիների վրա արվել են խաչաձև զարդակոճակներ: Խաչը խորհրդանշել է կյանք, բեղմ-

[1] *Л. Варданян, Пережитки института инициации у армян /по материалам свадебной обрядности, ՊԲՀ, N 4, 1964, էջ 195:*

նավորություն, ծաղկում, պաշտպանվածություն և, որ կարևորն է, տվյալ դեպքում ակտիվ տղամարդկային սկզբի նշանագիրն է[2]:

Գոտի կամարը յուրահատուկ շրջան էր, պահպանակ, որը գոտևորելով իրանը, ամուր է դարձրել կրողի գոտկամասը հատուկ զարդանախշերի և զարդամասերի միջոցով:

Հատկանշական է, որ կնոջ զարդարանքի համալիրը շատ ճոխ էր ու բազմազարդ: Հատկապես զարդարվել են գլուխը, կրծքամասը և ձեռքերը: Գլուխը՝ որպես մարմնի վերին մաս, գագաթ, առանձնակի ուշադրության առարկա էր: Հայկական հանելուկներում գլուխը և մազերը արտահայտվել են բուսական կողով, գլուխը՝ որպես արտ, մազերը՝ խոտ:[3]

Գլխազարդերից ուշագրավ են ականջօղերը, որոնք մեծ մասամբ շրջանաձև էին: Շրջանը կապված է կանացի սկզբի հետ: Ոսկե գնդաձև ականջօղերը՝ գինդեր անվամբ, նյութի և ձևի առումով կապված են արևի հետ՝ որպես կյանքի խորհրդանիշի: Հայկական առասպելներում արևը հաճախ հանդես է եկել որպես կին կամ քույր:[1] Հատիկաձև, օղակաձև, տերևաձև, եռանկյունաձև ականջօղերը, մեծ մասամբ զարդարվել են բուսանախշերով, իսկ բուսական կողով՝ հատիկը և սերմերն արտահայտել են կյանքի անընդհատ զարգացման և պտղաբերության գաղափարը:[2] Ականջօղերը հնագույն հմայիլ-պահպանակներ են, և կանայք դրանք կրել են ողջ կյանքի ընթացքում, մահանալուց հետո էլ դրանք մնացել են կրողի ականջներին: Կնոջ ճակատը Շիրակում զարդարել են ոսկյա կամ արծաթյա դրամաշար ջուխտ-շերիտով: Դրա հետ միասին կրել են ջավշակ և կտուց կոչված ոսկյա, ութաձև զարդամասերով մարգարտազարդ ճակատակալը: Քունքամասերը հարդարվել են երկար մարգարտազարդ քունքակախիկներով՝ զիլիֆլը կամ փերուշան անվամբ: Դրանց ծայրին կախվել են ոսկեդրամներ: Դրամաշարերից կազմված ճակատազարդեր, վզնոցներ և կրծքազարդեր կանայք կրել են բոլոր պատմազգագրական շրջաններում: Այդ մասին վկայություն է թողել Քսենոֆոնը:

Շիրակում կանայք կրել են ոսկյա, արծաթյա մատանիներ՝ ակով և առանց ակների: Ոսկյա մատանին և գինդերը եղել են նշան-զարդեր, որոնք նվիրել են հարսնացուին՝ ի ցույց նշանված լինելու: Ձեռքի զարդերից էին ոսկյա, արծաթյա սևադապատ, բուսանախշերով հարդարված կամ ցորնահյուսքով արված ապարանջանները:

Ալեքսանդրապոլում հարսնացուները կրել են կարմիր ծոպազարդ գդակ-ֆես՝ մանուշակագույն մետաքսյա թելափնջով, որի վերնամասն ամփոփվել է արծաթյա զանգականման գլխազարդով: Գլխի հարդարանքը և զարդերը համալրվել են մարգարտաշար քունքակախիկներով, ոսկե

---

[2] *Мифы народов мира, т. 2, М. 1992, стр. 12.*

[3] *Ս. Հարությունյան, Հայկական ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 89:*

[1] *Мифы народов мира, т. 2, стр. 12.*

[2] *Նույն տեղում, էջ 19:*

դրամաշար՝ ջուխտ շերիտով, ութաձև ոսկե թիթեղիկներով հարդարված ճակատազարդ կտուց ջավշակով, ճակատակալ վարդով: Երկշար ոսկեդրամ ճակատաշարի մեջտեղը խոշոր ոսկեդրամ էր: Կտուց շարանի ոսկիների վերևում ալիքավոր մարգարիտների շարան էր՝ երկու կողմերից չորսից-հինգ հատ (25 սմ երկարությամբ, 4սմ լայնությամբ)՝ ծայրերին ոսկիներ, դրանք ավելի խոշոր էին, քան ճակատի ոսկեդրամները: Ոսկուց ձուլած գարու ոսկեհատիկներն ամրացրել են պարանոցին՝ որպես մանյակ: Այդ մասում կրել են նաև մի քանի շարքից բաղկացած ոլորած մարգարտե վզնոց:[1] Քունքակախիկների վրայից կապել են ճակտնոց ջուխտշերիտը: Այն դեղին ժապավենի վրա ամրացված մեկ կամ երկու շարք 20-200 ոսկեդրամներից էր բաղկացած՝ մեջտեղում՝ խոշոր դրամ: Ծերերը ոսկեդրամներից ճակտնոց չեն կրել: Շիրակում նշանդրեքին հարսնացուին նվիրել են ոսկե մատանի, արծաթե և ոսկե դրամներ կրծքազարդի և ճակատնոցի համար: Հարսի գլխին գցել են երկու՝ կարմիր և մետաքսե քող. մեկը մինչև կրծքամաս ծածկելով երեսը, մյուսը՝ ուսերն ի վար: Հարսը կրել է նաև միաշար կամ երկշար դրամներով ճակատնոց, երկու ձեռքերին ոսկե կամ արծաթե ապարանջան (Զավախքում խալխալ, Շիրակում բիլազուկ անուններով), ոսկե գնդաձև օղեր, մանյակ, վզնոց-օսկի և այլն: Հարուստները հարսներին նվիրել են ոսկե երկտակ հաստ շղթաներ՝ խաչով, կափարիչով ժամացույց, թանկագին ակներով ականջօղեր, զմրուխտե, ադամանդե մեծ շրջանակներով մատանիներ, ոսկե ապարանջաններ, գոհարազարդ կրծքազարդեր[2]: Ամենաթանկարժեք քարը ալմաստն է, որը լատիներեն բառ է և նշանակում է «անհաղթ, չհնազանդվող, չսանձահարվող»:[3] Ըստ Առաքել Դավրիժեցու տվյալների, երբ կնոջ ծննդաբերությունը ուշացել է, ալմաստ քարը կապել են բազուկին, և կինը ազատվել է:[4] Աղջիկները և երիտասարդ կանայք կրծքին կրել են մեկ կամ մի քանի շար ոսկիներ, ականջներին՝ օղեր, ձեռքերին՝ ոսկե ամբողջական ապարանջաններ և մատանիներ:[5] Զարդերի շարքում հատուկ տեղ ունեն ոսկյա կամ արծաթե զարդերը: Ուշագրավ է, որ մատանիների վրա տեղադրված բնական քարերի կտորները հայտնի են *ակ, աչք* անուններով: Թանկարժեք բնական քարեր են համարվում ալմաստը, ռուբինը, զմրուխտը, տոպազը, մեղեսիկը (ամետիստ), նռնաքարը և այլն: Թանկարժեք քարերն ունեն հղկվելու մեծ կարողություն, ամրություն և փայլ: Դրանք չեն խուսանավում թթուների ներգործությունից: Բնական քարերի շարքում հաճախ են հանդիպում սարդիոնը, փիրուզը, մարջանը, մարգարիտը և սադափը, որոնք ունեցել են հմայական հատկություն: Շիրակի զարդահամալիրում ա-

[1] *Հ. Փափազյան, Հայկական տարազ, Եր., 2002, էջ 99:*
[2] *Ս. Պողոսյան, Հարսանեկան տարազը Զավախքում, Կերոն, Եր., 2002, էջ 199-205:*
[3] *Թ. Թադևոսյան, Ինչ են պատմում քարերը, Եր., 1957թ., էջ 200:*
[4] *Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Թանկագին քարերի անունների և որպիսությունների մասին, Եր., 1988, էջ 457:*
[5] *Հ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 116:*

ռանձնապես նկատելի է մարգարտի և ոսկու առատ կիրառություն: Մարգարիտ բառը լատիներեն margarita բառից է՝ ծաղկի կոկոն, ծաղիկների փունջ իմաստով:[1] Դրանք լինում են տարբեր ձևերի և գույների, ծովային և գետային ծագմամբ:[2] Հատկանշական է, որ հայկական միջնադարյան արքայական հանդերձանքում մարգարիտը և ոսկին մեծ կիրառություն են ունեցել:[3] Ըստ ժողովրդական պատկերացումների՝ երազում մարգարիտ տեսնելը երկակի դեր ունի. հիմնականում այն մեծության նշան է, ըստ ոմանց՝ անախորժություն բերող: Ոսկի տեսնելը բախտավորության նշան է, գտնելը՝ վաստակ, ոսկին և արծաթը խառը տեսնելը՝ մեծ շահ, իսկ դրանք հավաքելը՝ կեղծություն:[4] Հարկ է նշել, որ կիրառական ու գեղագիտական ընկալումներից զատ՝ զարդերին և դրանց վրա եղած բնական քարերից ակներին վերագրվել է նաև բուժական նշանակություն. այսպես, մարգարիտն օգտակար է համարվել հավկուրության, աչքի այլ հիվանդությունների դեմ, որոշ դիմահարդար բուժումների համար: Պատահական չի թվում դրանց կիրառությունը քունքակախիկների,ճակատակալների ձևով: Հայոց ավանդական զարդարանքում գործածվել են նաև փիրուզ, մարջան (բուստ) քարեր, որոնցից առաջինն օգտակար է համարվել տեսողության համար, երկրորդը՝ մոռացկոտության, ուղեղի ցնցման, աչքի և սրտի հիվանդությունների դեմ: Սադափը կապվել է լուսնի պաշտամունքի հետ: Սարդիոնը հուսալի պահպանակ է համարվել չար աչքի դեմ: Զմրուխտը գործածվել է տեսողությունը կարգավորելու և օձի խայթոցների դեպքում: Քաղաքային կենցաղում շատ հարգի են եղել ալմաստե, ադամանդե ակները, որոնք տեղադրվել են մատանիների, քորոցների և ականջօղերի ակնախոռոչներում: Ենթադրվել է, որ այդ քարերը ապահովում են իշխանություն և հաջողություն, օգտակար են ստամոքսի բուժման, հիշողության պահպանման համար, ունեն հակաթույնի զորություն:[5] Բնական քարերին վերագրվել են դրական հատկություններ:[6] Դրանց մոգական հատկությունը վերագրվել է նաև փոխարինողներին՝ ապակուն և մածուկին: Մեծ կիրառություն ունեն կարմիր ապակուց քարերը: Կարմիրը խորհրդանշել է կրակը, արևն ու կենսուժը, կատարել պահպանական գործառույթ: Սև քարերը քշել են չար ուժերին, իսկ սպիտակ ակները՝ գրավել բարի ուժերին:

Փաստորեն,գեղեցկացնելով մարդուն, ավելի ակնահաճո տեսք տալով նրան, շեշտելով կրողի սեռատարիքային կարգավիճակը՝ զարդերը միաժամանակ միտում են ունեցել պահպանել կրողի առողջությունը և հի-

---

[1] *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 277:*

[2] *Природные ювелирные камни /понятийный толковый словарь/- Система научного описания музейного предмета, СПБ, 2003, стр. 360-361.*

[3] *Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի, հ. 2,Վենետիկ, 1835, էջ 278-283:*

[4] *Փ. Ղազարյան, Գ. Ղազարյան-Հակոբյան, Տիեզերական երազահան, Ոսկե բարեկամ հայ ընտանյաց (մատենաշար), գիրք 1, Եր., 1999, էջ 59, 65:*

[5] *Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., 1988, էջ 456-472:*

[6] *Նույն տեղում, էջ 464:*

վանդության դեպքում բուժել նրան: Մարդու առողջության պահպանման նպատակով որպես չարխափան միջոցներ գործածվել են հմայիլ-պահպանակներ՝ եռանկյունաձև զարդամասով, մահիկաձև կախիկներով սև կամ կապույտ-սպիտակ գունային զուգորդումներով աչքուլունքներ, երկաթե մանյակներ, վզնոցներ, ապարանջաններ, մատանիներ: Հայոց մեջ կայծակի հարվածներից զերծ մնալու համար կրել են դարբնի պատրաստած պողպատե վզնոցներ և մատանիներ: Ոսկուն և արծաթին վերագրվել են մաքրագործող հմայական զորություն: Կրողի՝ ողջ ժամանակ հանել զարդերը նշանակում էր ծիսական, սիմվոլիկ մահ, որը կատարվել է ծննդաբերության ժամանակ և ամուսնու, հարազատի մահվան դեպքում:

Շիրակում և Ջավախքում զարդերին մեծ հարգ ու արժեք են տվել՝ դիտելով որպես պատվի խնդիր և նեղ օրերի խնայողություն: Ոսկե և արծաթե զարդերի նկատմամբ հակվածությունը, դրանք սերնդեսերունդ աղջիկներին փոխանցելու սովորույթը, գեղագիտական և պրեստիժային խնդիրներից բացի, դրսևորել է տվյալ էթնիկ հանրույթի առանձին ազգագրական խմբերի մտահոգվածությունը իր անդամների ապագայի, բարեկեցիկ կյանքի կանխապահովման ձգտմամբ:Վերջին հաշվով զարդերը հուսալի միջոց էին դժվար և սև օրերին: Փոխվել են տարազի ավանդական տիպը, զգեստավորման և զարդարվելու եղանակները, չի փոխվել վերաբերմունքը հագուստի,զարդերի նկատմամբ. դրանց պրեստիժային, սոցիալական, տոնական գործառույթները չեն կորցրել իրենց դերը: Ժամանակակից արծաթագործները և ոսկերիչներն ավանդական զարդարանքի համակարգից պատրաստում են միայն ականջօղեր, մատանիներ, ապարանջաններ, որոնք նյութի, ձևի կամ զարդանախշման առումով կապվում են տեղային ավանդույթի հետ հիշեցնում են ավանդական նմուշները:

Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)

ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԸ ՀԱՅՈՑ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ (Ալեքսանդրապոլի օրինակով)

Խորհրդային շրջանի հայ պատմազգագրական գրականության մեջ (Բ.Առաքելյան, Թ.Հակոբյան, Վ.Աբրահամյան, Կ.Մեղրոսյան)[1] համքարությունները ներկայացված են քաղաքի բնակչության տնտեսական կենցաղի համատեքստում: Այս և նմանօրինակ հետազոտություններում համքարական կազմակերպությունները հանդես են գալիս որպես քաղաքի

[1] *Բ.Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIIIդդ., հ. II, Եր., 1959: Թ.Հակոբյան, Երևանի պատմությունը, հ.2, Եր.,1959: Վ.Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII-XXդ. սկիզբ), Եր., 1971: Կ.Մեղրոսյան, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պրակ 6, Եր., 1974:*

բնակչության տնտեսական զբաղմունքների կցորդներ կամ դրանք «ներսից» ու «դրսից» կարգավորող ինչ-որ հասարակական կառույցներ: Համքարությունները, արհեստների և առևտրի հետ միասին,մեթոդական առումով դիտարկվում էին հայոց տնտեսական կենցաղի շրջանակներում, որը թույլ չէր տալիս հետազոտողին ճիշտ մեկնաբանել այս կազմակերպությունների նախասկզբնական գործառույթներն ու իրական տեղը հայոց կենցաղամշակութային համակարգում: Խորհրդային պատմագրության որդեգրած կեղծ մատերիալիստական մոտեցումը հնարավորություն չէր տալիս դիտարկելու համքարությունները իրենց հասարակական- կարգավորող գործառույթների տեսանկյունից: Մեր համոզմամբ, մեթոդաբանական տեսանկյունից առավել հիմնավորված է համքարությունները ուսումնասիրել ելնելով Յու. Ի. Մկրտումյանի առաջարկած ավանդական մշակույթի քառամաս բաժանումից, որոնցում առանձնացվում են միմյանց միահյուսված և իրարով պայմանավորված ենթահամակարգեր[1] (Ս.Ա.Հարությունովն այս բաժանումն անվանում է «Цветок культуры»),[2] քանի որ իրար միահյուսված մշակութային շրջանակների գծապատկերն ունի բացված ծաղկի տեսք): Հայ համքարությունները իրենց բոլոր դրսևորումներով հայոց սոցիոնորմատիվ մշակույթի բաղադրիչներն են և դրա լավագույն ապացույց են հանդիսանում Ալեքսանդրապոլի էսնաֆությունները:

Հարկ է նշել, որ դեռևս XIXդ. վերջերին հայ մեծանուն գիտնական Ս.Եղիազարյանցը հայ համքարությունները ուսումնասիրել է որպես քաղաքային համայնքի կազմակերպման ձև, սակայն հիմնական շեշտը դրել է դրանց իրավական-կարգավորող գործառույթների վրա:[3] Ս. Եղիազարյանցը, լինելով իրավագետ, ըստ ամենայնի խնդիր չուներ դիտարկել համքարությունները էթնոմշակութային տեսանկյունից: Նրա համար կարևոր էր ցույց տալ արևելյան և, ի մասնավորի հայկական համքարությունների նմանությունները եվրոպական ցեխերի հետ և ապացուցել ռուսական գիտական հասարակությանը, որ հիշյալ կազմակերպությունները ոչ թե ինչ-որ հետամնաց և արխայիկ կառույցներ են, այլ իրենց արևմտյան անալոգների պես իրավական և տնտեսական կարգավորող գործառույթներով օժտված սոցիալական հիմնարկներ:[4] Ցավոք, Ս.Եղիազարյանցի որդեգրած ճիշտ մեթոդաբանությունը շարունակություն և զարգացում չունեցավ: Խորհրդային շրջանում տուրք տալով «գռեհիկ սոցիոլոգիզմին», երբ

---

[1] *Ю. Мкртумян, Основные компоненты структуры этноса, в. кн, Методологические проблемы исследования этнической культуры. Материалы симпозиума, Ер., 1978, стр. 48; Ю. Мкртумян, Культура жизнеобеспечения и этнос, Ер., 1983.*

[2] *С. Арутюнов, С. Рыжакова, Культурная антропология, М., 2004, стр. 78.*

[3] *С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, 1891.*

[4] *Գ. Աղանյան, Ավանդական արհեստների փոխակերպումները Ալեքսանդրապոլ-Լենինականում (XIX դ. երկրորդ կես-XXդ. առաջին կես), ՀՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. IX, Գյումրի, 2006, էջ 47:*

ամեն մի հասարակական երևույթ և մշակութային ֆենոմեն անհարկի մատերիականացվում ու ամեն ինչի հիմքում դրվում էր տնտեսական անհրաժեշտությունը, հայ պատմազգագրական գրականության մեջ փաստորեն անտեսվեցին համքարությունների սոցիոնորմավորող գործառույթները: Այնինչ դրանց ուսումնասիրությունը թույլ կտար առավել ամբողջական պատկերացում կազմելու քաղաքային համայնքի էթնոմշակութային պատկերի մասին: Հայ ազգագրության բացերից մեկը համարվում է քաղաքային համայնքի թերուսումնասիրվածությունը (բացառություն են կազմում Կ. Մեղբոսյանի մի շարք արժեքավոր աշխատությունները):[1] Համայնքի կենցաղամշակութային համալիրում կարևոր դեր էին խաղում արհեստավորական կազմակերպությունները՝ համքարությունները:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ և՛ միջնադարում և՛ նոր պատմության ընթացքում համքարությունների հիմնական գործառույթները մեծ մասամբ առնչվում էին քաղաքի բնակչության գերակշիռ հատվածի, այսինքն՝ արհեստավորների և առևտրականների կյանքի սոցիալական-կարգավորող և ավելի քիչ՝ տնտեսական-կենցաղային իրողություններին: Այս թեզը ապացուցելի է Գյումրի-Ալեքսանդրապոլի էսնաֆությունների օրինակով, որոնց թիվը XIXդ. անցնում էր երեսունից,[2] իսկ համքարային հարաբերությունների շրջանակում ներառված էր արհեստավորա-առևտրական քաղաքի համարյա ողջ բնակչությունը:[3] Հատկանշական է, որ ձևավորվելով արևմտահայ արհեստավորաառևտրական կենտրոններից սերված գաղթականության հիմքի վրա՝ Ալեքսանդրապոլը ժառանգեց դեռևս միջնադարից եկող այն բոլոր համքարային ավանդույթները, որոնք հատուկ էին Կարինին, Կարսին և Բայազետին: Սրանից էլ բխում էր այն հասարակական հարաբերությունների և հասարակական ինստիտուտների բնույթը, որը հատուկ էր արևմտահայ դասական քաղաքային համայնքին (ներքին լայն ինքնավարություն,պետություն-հանրույթ միջնորդավորված կապեր, ինքնապաշտպանական ավանդական կառույցների վերապրուկներ[4] և այլն): Բոլոր ներքին իրավական և այլ կենսական կարևոր հասարակական խնդիրները կարգավորվում էին համքարությունների Կանոնադրությամբ և սովորութային իրավունքի նորմերով, և կարևորն այն է, որ սկզբնական շրջանում նույնիսկ ռուսական իշխանությունները ձեռնպահ էին մնում քաղաքի բնակչության ներհամայնքային գործերին խառնվելուց (XIXդ. վերջերին, կապված Ռուսական կայսրությունում մունիցիպալ բարեփոխումների հետ, իրադրությունը մասամբ փոխվեց): Համքարությունների ղեկավար կառույցներն ու համքարական

[1] *Կ. Մեղբոսյան, նշվ.աշխ:*

[2] *Վ. Աբրահամյան, նշվ.աշխ., էջ 27-28:*

[3] *Վ.Աբրահամյանի կարծիքով Ալեքսանդրապոլի բոլոր արհեստավորներն անխտիր մտնում էին որևէ համքարության մեջ, նշվ. աշխ., էջ 27:*

[4] *Նկատի ունենք միջնադարում համքարություններին կից ձևավորված կիսառազմականացված «Կտրիճվորաց եղբայրությունների» հասակային խմբերը:*

ավագանին հանդես էին գալիս յուրահատուկ բուֆերի դերում համայնքի և իշխանության ու պետական կառույցների միջև: Էսնաֆությունները փորձում էին «մոտիկ չթողնել» իշխանական կառույցներին իրենց հանրության ներքին կյանքին և ամեն կերպ հետ էին պահում իրենց անդամներին պետական կառույցների հետ ավելորդ «շփումներից»: Կորպորատիվ և համայնքային շահերը դրվում էին ամեն ինչից վեր և էսնաֆական ավագանին փորձում էր բոլոր ներքին հարցերն ու ծագած խնդիրները լուծել՝ ելնելով իրենց հանրության գրավոր և բանավոր իրավական նորմերից: Գլխավոր վարպետները (ուստաբաշի) և վարպետաց վարպետները (ուստալար-ուստասի) կարող էին պատժել վարպետներին և ենթավարպետներին այս կամ այն զանցանքի համար կամ էլ լուծել էսնաֆների միջև վեճերը առանց պետական կառույցների միջամտության: Հասարակական կարգի և բարոյական նորմերի պահպանումը ևս այս կամ այն չափով առնչվում էր համքարություններին, որոնք դրանով ինչ-որ տեղ «թեթևացնում էին պետական մարմինների հոգսը»: XIXդ. վերջին և XXդ. սկզբին այն ժամանակների համար բավական մեծ քաղաք հանդիսացող, 30 հազարանոց Ալեքսանդրապոլում ծառայում և հասարակական կարգն էին պահպանում մեկ տասնյակից մի փոքր ավելի ժանդարմներ և ոստիկաններ:

Համքարությունների սոցիոնորմատիվ գործառույթները հատկապես հստակ են արտահայտվում քաղաքային համայնքի ներսում սեռատարիքային և գենդերային հարաբերությունների մակարդակում: Ինչպես հայտնի է, համաձայն համքարային Կանոնադրության, այդ կազմակերպությունների լիիրավ անդամներ տղամարդ վարպետներն ու ենթավարպետներն էին, սակայն իրականում, սովորութային բանավոր իրավունքի մակարդակում դրանց մեջ ներգրավված էին նաև նրանց կանայք և երեխաները: Քաղաքի սոցիոնորմատիվ մշակույթում հատուկ տեղ էր հատկացվում կնոջը: Վարպետի կինը ամուսնու մահից հետո և անչափահաս զավակների առկայության դեպքում լիակատար իրավունք ուներ տնօրինելու ամուսնու արհեստանոցը կամ կրպակը (վաճառել, վարձով տալ և այլն)՝ նախապես ստանալով ճյուղային համքարության գլխավոր վարպետի համաձայնությունը: Հանգուցյալ վարպետների երեխաները շրջապատված էին հատուկ հոգատարությամբ և համքարությունները, ի հաշիվ իրենց գանձարանի, հոգում էին որբերի կրթության և հետագա ճակատագրի մասին: Համքարական գանձարանից միջոցներ էին տրամադրվում որբ աղջիկների օժիտը պատրաստելու համար: XXդ. սկզբին Ալեքսանդրապոլում համքարությունների միջոցներով կառուցվեցին և պահվում էին երկու սեռերի համար ուսումնական հաստատություններ, որտեղ թերի միջնակարգ կրթության հետ պատանիներն ու աղջիկները հմտանում էին արհեստների մեջ: Հարկ է նշել, որ այս ուսումնական հաստատություններում սովորողների գերակշիռ մասը քաղաքային համայնքի քիչ ապահով

ընտանիքներից էր, և այս հարցում ևս համքարությունները ամբողջովին իրականացնում էին իրենց սոցիոնորմավորող գործառույթները:

XIXդ. վերջի և XXդ. սկզբի համառուսաստանյան լիբերալ բարեփոխումների արդյունքում համքարությունների սոցիոնորմատիվ և կարգավորող գործառույթները զգալիորեն նվազեցին, սակայն մեծ թվով կորպորատիվ ավանդույթներ շարունակեցին կենցաղավարել ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը և դրանից քիչ հետո:[1] Նոր իշխանությունների ջանքերի շնորհիվ՝ ալեքսանդրապոլյան համքարային ավանդույթները ու համայնքի կառավարման ավանդական միջոցները XXդ. 30-ական թթ. սկզբներին համարյա ամբողջովին արմատախիլ արվեցին:

Ամփոփելով կարելի է նշել, որ Արևելյան Հայաստանի քաղաքային համայնքի համապարփակ ուսումնասիրության գործում գիտամեթոդական առումով առավել արդարացված է դիտարկել այն սոցիոնորմատիվ մշակույթի տեսանկյունից՝ որպես ուսումնասիրության հիմնական օբյեկտ ընդունելով դասական համքարությունները:

Կարինե ԲԱԶԵՅԱՆ (ՇՀՀԿ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԹԱՂԱՅԻՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

XIX դարի կեսերից Անդրկովկասի մի շարք քաղաքներում (Թիֆլիս, Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ) որպես ժամանցի ձև տարածված էին, այսպես կոչված, «թաղային կռիվները», որոնք միաժամանակ տղամարդկանց հասակային խմբերի և ձոնման ծեսերի (ինիցիացիա) ձևափոխված, վերապրուկային արտահայտություններ էին՝ տարբեր քաղաքներում յուրովի դրսևորումներով: Ալեքսանդրապոլում այդպիսի ժամանցային-մրցութային կռիվների մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Խայաթ Զահրիյանի ձեռագիր հիշողություններում: Նկատի ունենալով, որ այս երևույթին երբևէ անդրադարձ չի եղել, հարկ համարեցինք ներկայացնել մեր ձեռքի տակ եղած նյութերը՝ չհավակնելով խորը և հանգամանալի վերլուծության:[2]

Հայ ժողովրդական մշակույթում պատանիների և երիտասարդների հասակային խմբերը պատմազգագրական գրականության մեջ հանգամանորեն վերլուծվել են մի շարք հեղինակների կողմից՝ Լ. Վարդանյան,

---

[1] *Սրանց մասին ավելի մանրամասն տե՛ս Կ.Մեղրոսյան, նշվ. աշխ:*

[2] *Խայաթ Զահրիյան, Հիշողություններ հին Գյումրիից, ԳԱԱ ՀԱԻ, Բանահյուսության բաժնի արխիվ, FF I:*

Ժ. Խաչատրյան, Վ. Բդոյան և այլք,[1] որոնք ներկայացրել են դրանց դերն ու նշանակությունը գերազանցապես հայոց գյուղական ավանդական սոցիոնորմատիվ մշակույթում՝ հպանցիկ անդրադառնալով նաև քաղաքի համանման խմբերի գործունեությանը:

Հայոց քաղաքային կենցաղում երիտասարդական խմբերի՝ «եղբարց կամ քաջվորաց միաբանությունների», «կտրիճվորաց եղբայրությունների» գոյության և գործունեության մասին ամենավաղ վկայությունները վերաբերում են XIII դ.:[2] Այս խմբերի առանձնահատկությունն այն է, որ դրանք ունեին խիստ արտահայտված ռազմականացված բնույթ: Այսպիսի կազմակերպություններն առաջացել էին Արևմտյան Հայաստանի և հայկական գաղթօջախների համքարային ավանդույթներ ունեցող արհեստավորաառևտրական քաղաքներում: Լինելով համքարային կազմակերպությունների բաղկացուցիչ մաս՝ այս կազմակերպություններն ունեին ավելի շատ ինքնապաշտպանական գործառույթ: Ավելի ուշ՝ XIX դ., գործած երիտասարդների հասակային խմբերի պաշտպանական-ռազմական գործունեությանն է անդրադարձել Լ.Վարդանյանը, որը, վկայակոչելով այլ հեղինակների, նշում է, որ գյուղերում տարբեր թաղերի պատանիների խմբերի միջև երբեմն առաջանում էին վեճեր կամ թշնամանք, որն էլ հանգեցնում էր նրանց ընդհարմանը: Ինչ վերաբերում է քաղաքներին, ապա, ըստ նույն հեղինակի, դրանք գտնվում էին համքարությունների վերահսկողությունների ներքո և Արևելյան Հայաստանում չունեին այնպիսի ընդգծված ռազմականացված բնույթ, ինչպես Արևմտյան Հայաստանում: Փաստորեն կորցնելով նախնական ինքնապաշտպանական գործառույթը՝ այդ կռիվները շարունակվեցին՝ ձեռք բերելով ժամանցի բնույթ. օրինակ՝ Ջավախքում դրանք թաղային քարակռիվներն էին, իսկ Ալեքսանդրապոլում՝ ձեռնամարտերը:Կարինից և ընդհանրապես Բարձր Հայքից գաղթածները նոր բնակատեղիներ (Ախալցխա, Ախալքալակ և Ալեքսանդրապոլ) իրենց հետ փաստորեն բերեցին ոչ միայն համքարային հարուստ ավանդույթները, այլև դրանց բաղկացուցիչ մասը կազմող քաջվորաց կամ կտրիճվորաց կազմակերպություններին բնորոշ թաղակռիվները: Ըստ Ժ. Խաչատրյանի՝ Ախալցխայում հաճախ կռվում էին գետով բաժանվող հին և նոր քաղաքի «ազաբների խմբերը»: Դրանք ուժային-մրցակցային կռիվներ էին և կրում էին կազմակերպված բնույթ, քանի որ ունեին չգրված

---

[1] *Լ. Վարդանյան, Տղամարդկանց հասակային խմբերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև ՀԱԲ), 12, Եր. 1981, էջ 103-107: Ժ. Խաչատրյան, Ջավախքի ժողովրդական պարերը, ՀԱԲ 7, Եր. 1975, էջ 14: Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղերը, հ. 1, Եր. 1963, էջ 47:*

[2] *Լ. Խաչիկյան, Երգնկայում 1280թ. կազմակերպված «Եղբայրությունը», ՀՍՍՅ ԳԱ «Տեղեկագիր», Եր., 1951, N 12: Նույնի Երգնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը, «Բանբեր մատենադարանի», 1962, N 6: Վ.Գրիգորյան, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «կտրիճվորաց եղբայրությունների» մասին, ՊԲՀ, 1963, N 2:*

օրենքներ, որոնք խստորեն պահպանվում էին և որոնց նպատակն էր գերիշխանություն ունենալ քաղաքում:[1]

Շատ հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Թիֆլիսում կենցաղավարած քաղային կռիվների մասին, որոնք նույնպես ներկայացված են որպես զուտ ժամանցի սիրված ձևեր:[2] Եթե նկատի ունենանք, որ ողջ XIX դ. ընթացքում հայերի թիվը գերակշռող էր այդ քաղաքում, ապա կարելի է ասել, որ դրանց մասնակիցների մեծ մասը եղել է թիֆլիսահայ, չնայած այդ մասին վրացական պատմազգագրական գրականության մեջ որոշակի հիշատակություն չկա կամ էլ վրաց հեղինակները խուսափում են կռվողների էթնիկ պատկանելությունը նշելուց:

Ալեքսանդրապոլի կռիվները ներկայացնող Խայաթ Զահրիյանը դրանց է նվիրել իր ձեռագրի չորրորդ գլուխը, որը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Թաղային կռիվները»: Հեղինակը, այն համարելով «մի անախորժ ու մռայլ սովորություն… որ ընդունված էր ժամանակի անփորձ երիտասարդների մեջ»,[3] միաժամանակ բավականին մանրամասն նկարագրում է՝ անուղղակի ցույց տալով քաղաքային կենցաղում դրանց ունեցած կարևոր նշանակությունը: Նրա հիշողություններում հստակ դրսևորվում են երիտասարդների բարձր հասակային խմբերի՝ ազարների միությանը բնորոշ հատկանիշները՝ դրանց բաժանումներն ըստ թաղերի, կռիվների կազմակերպման ու ընթացքի արարողակարգը, ծիսականացված բնույթը և այլն, որոնց կանդրադառնանք առանձին- առանձին:

Հեղինակի թվարկած թաղային խմբերը ներկայացնում են Ալեքսանդրապոլի ամենահայտնի թաղերը, որոնց մի մասն առ այսօր պահպանել է իր ուրույն դեմքը՝ սլաբոդկի, ձորի, բոշի, բոստանճիների, փափանենց (այժմ՝ փափախանա), ուռումներու և ֆրանկների (վերջին երկուսն այժմ գոյություն չունեն): Հետաքրքիր է այն, որ հիշյալ խմբերը ներկայացված են անվանական ձևով՝ յուրաքանչյուր կռվողն առանձին-առանձին: Բացի այդ, նկատվում է մեկ այլ առանձնահատկություն ևս՝ միացյալ խմբերով կռիվները՝ «փափանենց մայլի կռվող տղաները միացած ուռումներու մայլի տղոնց հետ կռվում էին ֆռանկների մայլի տղոց հետ, իսկ ֆռանկների մայլի տղերք էլ միացած էին սլաբոդկի մայլի տղերանց հետ աներկյուղ կռվում էին: Ձորի մայլեցի քոյվլի թախումի տղաները միանում էին բոշի մայլի հետ՝ կռվում բոստանճիների թախումի հետ»:[4]

Կռվողների յուրաքանչյուր խմբի հովանավորում՝ «փողով օգնում» էին թաղի հարուստները: Հովանավորությունն այն էր, որ նախքան կռիվն սկսելը երիտասարդները մտնում էին գինետուն, մի փոքր ամրապնդվում՝ «գլուխները լավ տաքացնում», նոր դուրս էին գալիս հրապարակ: Այդ կե-

---

[1] *ՀՀ ԳԱԱ ՀԱԻ պարարվեստի բաժնի արխիվ, Ժ. Խաչատրյանի ֆոնդ:*
[2] *Ի. Գրիաաշվիլի, Литературная богема старого Тбилиси, Тбилиси, 1977.*
[3] *Խ. Զահրիյան, նշվ. աշխ., էջ 8094:*
[4] *Նույն տեղում, էջ 8095:*

ռուխումի ծախսը վճարում էին վերոհիշյալ հարուստները:[1] Ուշագրավ է, որ նման սովորույթ գոյություն է ունեցել նաև Թիֆլիսում, որտեղ կռվողներին հովանավորողների թվում հիշատակվում են իշխաններ Արչիլ Մուխրանսկին, Դ. Բեհբութովը, նույնիսկ վրաց թագավոր Հերակլ II-ը, որոնք որպես հանդիսատես միշտ ներկա էին լինում այդ մրցումներին:[2] Այստեղ ևս, նախքան կռվելը, երկու կողմերի ներկայացուցիչները մտնում էին դուքան, որտեղ նախկինում պարտվածները հրավիրում էին հաղթողներին մի բաժակ գինի խմելու և պայմանավորվելու կռվի պայմանների մասին:[3]

Ալեքսանդրապոլում կռիվները տեղի էին ունենում կիրակի օրերին, ցերեկվա ժամի երկուսին այն դեպքում, երբ Ախալցխայում և Թիֆլիսում դրանք գերազանցապես կազմակերպվում էին Բարեկենդանին:[4] Նախապես որոշվում էր այն հրապարակը, որտեղ կայանալու էր կռիվը: Քանի որ այդ երևույթը պարբերաբար էր տեղի ունենում, այսինքն՝ արդեն սովորույթ էր դարձել, հրապարակում նախօրոք հավաքվում էր հանդիսատեսների մեծ բազմություն: Ընդ որում առաջին շարքում տեղերը զբաղեցնում էին այն մարդիկ, որոնք փող էին տալիս կռվողներին:

Այս կռիվների ծիսականացված բնույթի վկայությունն է այն, որ կռվողները հրապարակ էին մտնում դուդուկների նվագակցությամբ: Հատկանշական է, որ Թիֆլիսում ևս կռվողների խմբերին ուղեկցում էին երաժիշտները (զուռնաչիներ, դհոլչիներ, երգասացներ), որոնք նվագում և գովերգում էին քաջերին:[5] Ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ Թիֆլիսում, կռիվն սկսում էին երկու կողմերը ներկայացնող ավելի փոքր՝ 10-12 տարեկանների հասակային խմբի պատանիները: Կարճ ժամանակ կռվելուց հետո նրանք թողնում էին թատերաբեմը և առաջ էին գալիս բուն կռվողները: Կիրառվում էին ձեռնամարտի տարբեր եղանակներ, որոնց միջոցով հաջողության չհասնելու դեպքում գործի էին դրվում գոտիների մեջ խրած կարճ դագանակները: Կռվի կանոնների համաձայն՝ կռվողներն իրավունք ունեին բռունցքներից բացի գործի դնելու դագանակներ կամ փայտյա թրեր, որոնք կրում էին մեջքի վրա, ինչպես նաև քարեր, որոնք նետում էին պարսատիկների միջոցով:

Ինչպես ամեն մրցման, այս դեպքում ևս կռվող կողմերին ոգևորում էին երկրպագուները, որոնք փորձում էին ինչ-որ ձևով օգնել իրենց թիմերին: Ըստ Խայաթի՝ փափանենց թաղի տղաներին օգնել են Պոլոզ Մուկուչն ու Բուլուլ Մակարեն, որոնք տղաների հետևում կանգնած որոշակի ձայնային նշաններով հասկացնում էին աջից կռվել, ձախից, թե հետ

[1] *Խ. Զահրիյան, էջ 8096:*
[2] *И. Гришашвили, նշվ. աշխ., էջ 23; Ю. Анчабадзе, Н. Волкова,Старый Тифлис, город и горожане в XIX веке, М., 1990, стр. 215.*
[3] *И. Гришашвили, նշվ. աշխ., էջ 22:*
[4] *Նույնը: Ժ. խաչատրյան, նշվ. աշխ., էջ 14:*
[5] *И. Гришашвили, նշվ. աշխ., էջ 23:*

քաշվել: Ըստ հեղինակի՝ դա Պոլոզ Մուկուչի «գյուտն էր», որը մեծ ոգևորություն էր առաջ բերում, և կռվողները սովորաբար հաղթում էին:

Կռիվն ընթանում էր այնքան ժամանակ, մինչև որ կողմերից մեկը վերջնական հաղթանակ տաներ: Երբեմն դրանք հասնում էին արյունահեղության և վնասվածքների, այդ ժամանակ նոր միջամտում էին իշխանությունները և դադարեցնում կռիվը: Հետաքրքիր է, որ Կովկասի փոխարքայության կենտրոն Թիֆլիսում ևս իշխանական մարմինները չէին միջամտում նման միջոցառումներին, քանի գործը չէր հասնում տուրուդմփոցի ու արյունահեղության: 1851թ. փետրվարի 4-ի կռվից հետո, որի ժամանակ վիրավորվեց 300 և զոհվեց 5 մարդ, Նիկոլայ I-ի հրամանով արգելվեցին թաղային կռիվները, սակայն, հաշվի առնելով, որ դրանք քաղաքային կենցաղում արմատացած և սովորույթի ուժ ստացած միջոցառումներ են, թույլատրեց անցկացնել քաղաքից դուրս:[1]

Թաղային կռիվների որոշ արձագանքներ պահպանվեցին նաև խորհրդային շրջանում, սակայն դրանք ըստ էության կորցրել էին իրենց նախնական ռազմամարզական բնույթը: Նորագույն շրջանի թաղակռիվներում, ինչպես ցույց են տալիս մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը, սկսում են գերակշռել հանցագործ միջավայրին բնորոշ երևույթներ և տարրեր, որոնք, ինչպես և ավանդականները, կարոտ են լուրջ պատմազգագրական հետազոտության:

Արմենուհի ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՀԱԻ)
Համլետ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀԱԻ)

XIX ԴԱՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՄՐԻ - ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

XIXդ., հայ ժողովրդի պատմության մեջ բախտորոշ նշանակություն ունեցած քաղաքական իրադարձություններով հարուստ ժամանակաշրջան էր: Մեկ հարյուրամյակի ընթացքում սանձազերծված ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմները, որոնց հետևանքով մի քանի անգամ վերաձևվեց Պատմական Հայաստանի քարտեզը, պատճառ հանդիսացան հայ բնակչության ստվար զանգվածների տեղաշարժերի:

Այդ տեղաշարժերն աղետալի եղան հատկապես Արևմտյան Հայաստանի համար, որտեղից բնակչությունը գաղթում էր Անդրկովկաս,

[1] *Ю. Анчабадзе, Н. Волкова, նշվ. աշխ., էջ 216:*

մասնավորապես Արևելյան Հայաստան (1828թ. կազմավորված Հայկական մարզի տարածք), որը դիտվում էր իբրև ազգահավաքման կենտրոն:[1]

Ընդհանուր առմամբ XIXդ. ընթացքում արևմտահայոց տեղաշարժերը մեծապես պայմանավորված էին ոչ այնքան ռուսական զենքի հաջողությամբ, որքան դիվանագիտական բանակցություններով: Այս ասպարեզում մշտապես պարտություն կրելով՝ Ռուսաստանը պարտադրված էր Օսմանյան Թուրքիային վերադարձնել Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքները:Հայ բնակչությունը, որն իր ազատատենչ մղումներով մշտապես նպաստել է ռուսական առաջխաղացմանը, զգուշանալով թուրքերի վրեժխնդրությունից, հաճախ հարկադրված էր լինում հեռանալ հայրենի վայրերից՝ գաղթելով ռուսական կայսրության սահմանները:

Արևմտահայերի տարերային տեղաշարժերը դեպի Անդրկովկաս պարբերական դարձան 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո,[2] շարունակվելով մինչև 1870-1880-ական թվականները: Այդ ընթացքում երկրի բնիկների քանակն աստիճանաբար նվազեց, գյուղերն ու քաղաքներն ամայացան: XIXդ. արևմտահայերի տեղաշարժերում առավել զանգվածայինն ու կազմակերպվածը 1829-1830թթ. գաղթն էր:

1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին՝ գրեթե ողջ Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո, Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր Թուրքիային հետ վերադարձնել գրաված տարածքները՝ Կարսը,Արդահանը, Էրզրումը, Բայազետը: Ըստ պայմանագրի՝ նախատեսվում էր բնակչության ազատ տեղաշարժ պատերազմող երկրների միջև: Գաղթողներին տրվում էր ժամկետ՝ տասնութ ամսվա ընթացքում իրենց գույքն ու կայքը տնօրինելու:

Կարսի, Էրզրումի, Բայազետի ու շրջակայքի հայ ազգաբնակչությունը դժվարին որոշում է կայացնում՝ գաղթել ռուսական նահանջող զորքերի հսկողության տակ, քանի որ չէին վստահում Պոլսի տված երաշխիքներին՝ անձի և կայքի ապահովության վերաբերյալ: Գաղթել ցանկացողների նախնական թիվը, որը ռուսական կողմի համար նույնպես սպասածից ավելին էր, մտահոգություն է պատճառում թուրքական կառավարությանը, որը զանազան խոչընդոտներ է հարուցում արտագաղթի չափերը մեղմելու համար: Օսմանյան կառավարության անհանգստությունը լուրջ հիմքեր ուներ, քանի որ երկրագործությամբ միայն հայերն էին զբաղվում, իսկ քաղաքներում՝ նրանց ձեռքում էր կենտրոնացած արհեստներն ու առևտուրը: Հայերի հեռանալով՝ երկիրը տնտեսական մեծ վնաս էր կրելու:

---

[1] *Զ. Գրիգորյան, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը հայ ժողովրդի ազգահավաքման և գոյատևման համար, ՊԲՀ, թիվ 3, Եր., 1978, էջ 25: Տե՛ս նաև՝ Եվգ. Մանուկյան, Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում XIXդ. 20-ական թթ. վերջին և 30-ական թթ. սկզբին, Եր., 2005:*

[2] *Կ. Մուրադյան,Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգից XIXդ. առաջին տասնամյակում, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 2, Եր., 2001, էջ 12:*

Չնայած թուրքական կառավարության հարուցած արգելքներին ու խոչընդոտներին՝ հայ բնակչությունը մնաց անդրդվելի:

Արևմտահայ գաղթականները բաժանված էին երեք հիմնական խմբերի՝ էրզրումցիներ, որոնց առաջնորդում էր Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին, կարսեցիներ՝ Ստեփան եպիսկոպոսի առաջնորդությամբ և բայազետցիներ՝ Մկրտիչ Արծրունու գլխավորությամբ[1]: Շատերն անշարժ գույքը թողեցին՝ վաճառելու հնարավորություն և ժամանակ չունենալու պատճառով: Ցարական կառավարությունը ջանքեր չգործադրեց փոխհատուցում պահանջելու թուրքերից՝ գտնելով, որ հայերի գաղթը կամավոր է՝ թելադրված նրանց սպառնացող վտանգով և ոչ ռուսական զինվորականության դրդմամբ: 1830թ. գարնանից սկսվում է արևմտահայերի մեծ գաղթը:[2] Գաղթականները փոքր խմբերով էին ուղարկվում, շատերը ստիպված էին թողնել իրենց բեռները փոխադրամիջոց չլինելու պատճառով: Չնայած դրան՝ էրզրումցիների հիմնական մասը շարժվում է դեպի Ախլցխա, մյուս մասը դարսեցիների ու բայազետցիների հետ հաստատվում է Գյումրիում: Գաղթականների մեջ որոշակի թիվ էր կազմում քաղաքային բնակչությունը, հիմնականում առևտրականներ ու արհեստավորներ էին: Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանի քաղաքները, հատկապես Էրզրումն ու Կարսը, հնուց ի վեր արհեստագործական կենտրոններ էին:

XIXդ. այդ քաղաքներում ծաղկում էին ապրում ոսկերչությունը, ատաղձագործությունը, ջուլհակությունը, մետաքսագործությունը և այլն, կային արհեստագործական միություններ՝ համքարություններ՝ դարերով ձևավորված ավանդույթներով: Արհեստագործական հմտությունները վարպետ-աշակերտ կարգով փոխանցվում էին սերնդեսերունդ՝ կատարելագործվելով ու բյուրեղանալով:[3] Էրզրումի, Կարսի արհեստավորների, հատկապես ոսկերիչների արտադրանքը ոչ միայն բավարարում էր տեղական պահանջարկը, այլև տարանցիկ առևտրական ճանապարհներով դուրս էր բերվում լայն շուկա՝ հասնելով հարևան և հեռավոր երկրներ:

Արևմտահայ գաղթականները բերեցին նաև իրենց արհեստի հետ կապված գործիքներ, պատրաստի՝ չիրացված արտադրանք և իրենց փորձն ու գիտելիքները՝ բնակության նոր վայրում զարկ տալու արհեստների ու ժողովրդական հմտությունների զարգացմանը: Երբեմնի գյուղը, որը 1837թ. վերանվանվեց Ալեքսանդրապոլ, աստիճանաբար ձեռք էր բերում քաղաքին բնորոշ հատկանիշներ, և որի արհեստագործական ավանդույթ-

---

[1] *Մ. Դարբինյան, Արևմտահայերի գաղթը Հայկական մարզ և հարևան շրջաններ 1828-1829թթ., ՊԲՀ, թիվ 2, 1974, էջ 91-100: Տե՛ս նաև Եր. Լալայան, Կարնո գաղթականությունը, Երկեր, հ.1, Եր., 1983, էջ 415-428:*

[2] *Գ. Աղանյանց, Կարնոյ գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891, էջ 25:*

[3] *Կ. Մեղրոսյան, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում // Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ, հ. 6, Եր., 1974, էջ 177-178:*

ների սկզբնավորման հիմքում ներգաղթած վարպետների փորձն ու արհեստագործական հմտություններն էին:

Արևմտահայերի զանգվածային ներգաղթը XIXդ. մեծ նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի,մասնավորապես Հայկական մարզի բնակչության աճի, հայէթնիկ տարրի թվային գերակշռության, քաղաքների առաջացման, արհեստների զարգացման ու առևտրի աշխուժացման գործում: Միաժամանակ,արտագաղթի հետևանքով զգալի կրճատվեց հայ ազգաբնակչության թիվն Արևմտյան Հայաստանում, ուժեղացավ ազգային ու սոցիալական ճնշումը, անկում ապրեցին առևտուրն ու արհեստները, անմշակ մնացին հազարավոր հեկտար հողատարածքներ:

Ըստ աղբյուրների վկայության՝ նախքան արևմտահայերի ներգաղթը, Գյումրի գյուղում կար 503 ծուխ՝ 1744 տղամարդ բնակչությամբ, որից 130-ը թաթարներ:[1] Հաշվարկները վկայում են, որ այդ ժամանակ գյուղն ուներ 3 հազարից ավելի բնակիչ: Արևմտահայերի ներգաղթից հետո բնակչության թիվը կրկնապատկվեց, այսպես, 1830թ. սկզբներին Գյումրին ուներ 1350 ծուխ՝ 7250 բնակչով (3980տղ., 3270կին), հայերը կազմում էին բնակչության 96%-ը, թյուրքալեզու էթնիկ խմբերը՝ 3, հույները՝ 1%-ը:[2]

Ինչպես ասվեց վերևում, Գյումրիում հանգրվանած արևմտահայերը գաղթել են հիմնականում Կարսից, Էրզրումից, Բայազետից, մասամբ՝ Բասենից, Մուշից, Ալաշկերտից և այլ վայրերից: Աշխուժացնելով արհեստներն ու առևտուրը՝ եկվոր բնակչությունը նոր թափ հաղորդեց քաղաքի զարգացմանը, շրջակա գյուղերի պարապ բնակչությունը աշխատանք գտնելու հույսով տեղափոխվում էր Գյումրի, որի հետևանքով ավելանում էր բնակչության թիվը, որն ապացուցում է 1842թ. «Կամերալ ցուցակների» տվյալները, ըստ որի՝ քաղաքի 1807 ընտանիքներում ապրում էր 9385 բնակիչ, որից հայեր՝ 94.6%, թաթարներ՝ 4.0, հույներ՝ 1.4%[3]:

Արհեստավորական Ալեքսանդրապոլի զարգացումը շարունակվում էր, հայերի ներգաղթն արդեն ավելի շատ ներքին բնույթի էր, այդուհանդերձ, տեղաշարժերի արդյունքում աճում էր բնակչության թիվը: 1842-1848թթ. ընթացքում քաղաքի բնակչության թիվն ավելացավ 1.3 անգամ, 1848թ. հասնելով 11.8 հազարի, ուր հայերը դարձյալ գերակշռող էին[4]:

Որպեսզի Ալեքսանդրապոլի բնակչության թվի ու կազմի շարժընթացի պատկերը XIXդ. առաջին կեսի համար պարզ լինի, բերենք 1859-1860թթ. «Կամերալ ցուցակների» տվյալները, ընդամենը 2595 ծուխ ունե-

---

[1] *Обозрение Российских владений за Кавказом в историческом, финансовом, этнографическом отношениях, ч. 2, СПб, 1836, стр. 314.*

[2] *Г. Саркисян, Население Восточной Армении в XIX - начале XXв., Ер., 2002, стр. 93.*

[3] *Национальный архив Армении (НАА), Фонд 93, оп. 1, дело 84, Камеральное описание (КО) г. Александрополя на 1842 г., ч. 1, 377 листов; Там же, дело 83, ч. 2, 280 листов.*

[4] *Кавказский календарь(КК) на 1849, Тифлис, 1848, отд. II, стр. 103; НАА, Фонд 93, оп. 1, дело 97, КО г. Александраполя на 1848 г.*

ցող քաղաքում ապրում էր ավելի քան 13 հազար բնակիչ, որից հայ էր՝ 94.5%-ը, թաթարներ՝ 3.7, այլք (ռուս, հույն, հրեա)՝ 1.8%-ը[1]:

Այսպիսով, թռուցիկ անդրադարձն անգամ ցույց է տալիս, որ Գյումրի-Ալեքսանդրապոլը XIXդ. կեսերին, տնտեսամշակութային առումով, Անդրկովկասի արագ աճող կենտրոններից էր: Քաղաքում ընտանիքների գերակշռող մասը զբաղված էր արհեստագործությամբ, առևտրով և գյուղատնտեսությամբ:Հացահատիկի մշակությամբ ու բանջարաբուծությամբ հիմնականում զբաղվում էին բնիկ հայերը, թաթարները, իսկ արևմտահայերից՝ շուրջ 100-150 ընտանիք: Ալեքսանդրապոլի բնակչության զբաղմունքների մասին մանրամասն տվյալներ կան Հայաստանի ազգային արխիվում պահվող «Կամերալ ցուցակներում», որոնք մշակվել են մեր կողմից: Դրանց քանակական ու որակական փոփոխությունները 1848-1860թթ. երևում են ներկայացվող աղյուսակից[2]:

հհ	Զբաղմունքի անվանումը	1848	1859-1860	հհ	Զբաղմունքի անվանումը	1848	1859-1860
1.	Հացահատիկ մշակող	315	303	34	Փականագործ	8	13
2.	Կտորեղեն վաճառող	130	31	35	Թամբագործ	7	13
3.	Ջուլհակ	127	55	36	Պարանագործ	7	9
4.	Սևագործ	122	127	37	Ջինագործ	7	11
5.	Քարագործ	120	148	38	Սեռաքսագործ	7	14
6.	Մանրավաճառ	119	108	39	Բաղնիսպան	7	10
7.	Դարբին	118	83	40	Դրամափոխ	7	3
8.	Բանջարեղեն վաճառող	96	95	41	Գդակակար	5	15
9.	Դերձակ	80	88	42	Օճառագործ	5	-
10	Մաշկակար	45	75	43	Քիսայի	4	5
11	Պարենավաճառ	36	63	44	Երաժիշտ	5	8
12	Կոշկակար	33	29	45	Բամբակագործ	4	-
13	Սսագործ	32	41	46	Գզրար	4	7
14	Առաղձագործ	32	42	47	Մորթեգործ	4	-
15	Հոգևորական	32	45	48	Հովիվ	4	6
16	Ծխախոտագործ	30	46	49	Սաքսատան պահապան	3	6
17	Կայեկող	29	24	50	Խոհարար	3	9
18	Այգեգործ	26	18	51	Պայտար	3	-
19	Արծաթագործ	21	22	52	Սողցարար	3	5
20	Վարսավիր	19	42	53	Ժամագործ	2	7
21	Ներկարար	19	22	54	Հարկահավաք	3	2
22	Կառապան	18	23	55	Անչափահաս	50	50
23	Հացթուխ	17	20	56	Արքատ	-	55
24	Ջրվոր	16	39	57	Բանջարաբույծ	-	34
25	Սրճարանատեր	14	22	58	Բանվոր	-	26
26	Տարբեր մարդկանց մոտ ծառայող	14	26	59	Սովորող	-	23
27	Գիշերային պահակ	12	25	60	Տրեխ կարող	-	13
28	Զբաղմունք չունեն	12	111	61	Մրգավաճառ	-	12
29	Կաշեգործ	11	26	62	Աղավաճառ	-	9

[1] *ՀԱԱ, Ֆոնդ 93, օп. 1, дело 120, КО г. Александраполя на 1859-1860гг., 520 листов.*

[2] *Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. ՀԱԱ, Ֆոնդ 93, оп. 1, дело 97; Там же, Фонд 93, оп. 1, дело 120; Վ. Աբրահամյան, Հայ համքարություններն Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Եր., 1971, էջ 53-59: Կ. Սեղբոսյան, նշվ. աշխ., էջ 163-165, 176-178:*

30	Քեռնակիր	10	16	63	Ցրիչ	-	10
31	Պղնձագործ	9	10	64	Աղյուսագործ	-	12
32	Վերավաճառող	9	200	65	Զբաղմունքը նշված չէր	17	156
33	Զբաղացպան	8	29		Ընդամենը	1930	2595

Աղյուսակից երևում է, որ աճել է ոչ միայն զբազմունք ունեցողների, այլև ամենատարբեր զբաղմունքների ու հատկապես արհեստների թիվը: «Կամերալ ցուցակների» վերլուծությունը ցույց տվեց, որ եթե 1848թ. յուրաքանչյուր ընտանիքում մեկից ավելի արհեստներով զբաղվողների թիվը փոքր էր, ապա 1859-1860թթ. 73 ընտանիք ուներ 2-ական զբաղմունք, 6-ը՝ 3-ական և 3-ը՝ 4-ական:

Նիկոլ ՄԱՐԳԱՐՅԱՆ (ՀԱԻ)

ԼԵՆԻՆԱԿԱՆ - ԵՐԵՎԱՆ ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1970-80-ԱԿԱՆՆԵՐԻ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անեկդոտների «...մէջը հանդես դուրս կգան ազգային, մտային և բարոյական առաքինութիւնները և մոլութիւնները, սովորութիւնները, հանճարը, ուշիմութիւնը և պարզմտութիւնը ու նրանց վերածնութիւնները, մինչեւ անգամ կրօնական կամ քաղաքական կենցաղի մեջ զարգացումն, ի վերջոյ նրանցից երբեմն երբեմն ինչ ինչ դեպքեր կը ծառայեն ազգային պատմութեան վերաբերեալ մասին ինչ ինչ առարկաների բացատրութիւններին եւս»:[1]

1970-80-ական թվականներին Հայաստանում,մասնավորապես խոշոր քաղաքներում, շրջանառվող անեկդոտների մեջ քանակով և գործածման հաճախականությամբ մեծ թիվ էին կազմում քաղաքներին և քաղաքային բնակչությանը վերաբերող անեկդոտները: Դրանց շարքում մեծաթվությամբ առաջին տեղում, անշուշտ, երևանցի-լենինականցի հարաբերությունները շոշափող անեկդոտներն էին,[2] որ հիմնականում երկու կարգի էին՝ նկարագրական և բանավիճային: Նկարագրական անեկդոտներում զավեշտի կամ ծաղրի ենթարկվող թերությունը ներկայացվում է պատմողական-նկարագրական եղանակով: Այս կարգի անեկդոտներին բնորոշ չէ երկխոսությունը: Իսկ եթե այդպիսին կա, ապա այն ավելի շուտ զրույց է, քան բանավեճ (տե՛ս օրինակ ակվարիումի մասին պատմող անեկդոտը): Բանավիճային անեկդոտներում կերպարները (գլխավորապես երևանցի ու լենինականցի) բանավիճում են որևէ հարցի շուրջ: Այս

[1] *Անեկդոտներ, Զվարճալի զրույցներ, համառօտ դէպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած, Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս,1878, էջ 4:*

[2] *Հոդվածում օգտագործվել են հիմնականում հեղինակի տարբեր տարիներին գրառած, նաև տարբեր գրքույկներում և մամուլի էջերում հրապարակված անեկդոտներ: Մի քանի անեկդոտներ այս հոդվածը գրելու առիթով հուշել են ՀԱԻ իմ գործընկերն ու ընկերները, ինչի համար հայտնում եմ իմ շնորհակալությունը:*

կարգի անեկդոտներին բնորոշ գիծը ծաղրի արժանի թերությունը իբրև թիրախ ընտրելը չէ սոսկ. թիրախը երբեմն կարող է երկրորդական՝ օժանդակ դեր խաղալ: Կարևորն այստեղ սրամտելու և դրա օգնությամբ բանավեճում հաղթանակի հասնելու կարողությունն է: Բանավեճ-անեկդոտների մեծ մասը բաղկացած է մեկ ավարտուն դրվագից, հիմնականում՝ երկխոսությունից:[1] Որպես կանոն այդպիսի անեկդոտները հարուստ չեն կերպարների քանակով և հիմնական հերոսները հավաքական երկու կերպարներ են՝ երևանցին ու լենինականցին: Նվազ թվով օրինակներում է, որ հերոսները հանդես են գալիս տեղական հայտնի մարդու, հիմնականում զվարճախոսի անվան տակ (Պոլոզ Մուկուչ, Ջղեր Խաչիկ, Կուժիկ): Բազմակերպար անեկդոտների թիվը շատ քիչ է, և դրանցում երբեմն հանդես է գալիս կիրովականցին, որը չեզոք, իսկ երբեմն էլ երևանցիամետ (տես ներքևում՝ երեք «խոսպանչիների» մասին, կամ Ջղեր Խաչիկի ռեստորանային դրվագի հետ կապված անեկդոտում) դիրք է գրավում:

Երևան-Լենինական (կամ երևանցի-լենինականցի) հարաբերություններին վերաբերող անեկդոտները ներառում են քաղաքային կյանքի և քաղաքացիների նկարագրի ամենատարբեր կողմերը, կենցաղային առանձնահատկությունները, բարոյականության ու հանրային հարաբերությունների մասին պատկերացումների տարբերությունները: Տարբերությունները զվարճախոսություններում քննվում և զավեշտի են ենթարկվում համեմատության մեջ, ինչն էլ ակնհայտ են դարձնում միջքաղաքային մրցակցության ոգին ու միտումը: Մրցությունը ծավալվում է ամենատարբեր ասպարեզներում, սկսած երկու քաղաքների պատմության հարցերից, վերջացրած քաղաքացիների սրամտելու կարողությունով: Հաշվի առնելով այդ միտմամբ զվարճախոսությունների մեծաթվությունը և մրցության ասպարեզների բազմազանությունը՝ դրանցում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական թեմաները:

- *Քաղաքի հնամենիությունը.* Երևանցին պարծենում է, որ իրենց քաղաքը Հռոմից էլ հին է և դրա մասին Արգիշտիի հեղինակությամբ արձանագրություն պարունակող քար կա, որը դրված է Երևանի կենտրոնում: Լենինականցին պատասխանում է, որ այդ քարը Լենինականից են բերել:
- *Քաղաքաշինության տեմպերը.* Մի երևանցի գալով Լենինական, տաքսիով շրջում է քաղաքում: «Այս շենքը ինչքա՞ն ժամանակում են կառուցել», հարցնում է վարորդին: «Երկու տարում», պատասխանում է վարորդը: «Իսկ մեր մոտ կառուցում են վեց ամսում», պարծենում է երևանցի ուղևորը: Քիչ հետո երևանցին հարցնում է մեկ ուրիշ շինության մասին և իմանում, որ դա էլ 5 ամսում է կառուցվել: «Իսկ մեր մոտ դրա նման շենքը մեկ ամսում է կառուցվել», պարծենում է նա: Զայրացած լենինականցի

[1] *Այդ առանձնահատկությունը ամրագրել է նաև բանասեր Ա. Ղազինյանը հայտնի զվարճասեր Պրլ Պուդին վերաբերող անեկդոտներում: Տե՛ս Ա. Ղազինյան, Ղարաբաղի զվարճախոս Պրլ Պուդին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 9, Եր., 1978, էջ 60-69:*

տաքսիստը մեծ արագությամբ անցնում է կամուրջը և բախվում 10 հարկանի մի շենքի ու զարմացած ձևանալով՝ ասում է. «Առավոտ կամրջով անցա՝ էս շենքը չկար»:

• *Կլիման.* Երևանցին պարծենում է, որ Երևանում այնքան շոգ է, որ ճանճը օդում խանձվում է: Լենինականցին պատասխանում է. «Լենինականում այնքան շոգ է, որ հավերին «մարոժնի» են տալիս, որ «հավկիթը էփած չածեն»:

• *Բարբառը.* Երևանցին փորձում է համոզել լենինականցուն, որ ասի ոչ թե ջուրը պաղ է, այլ սառն է: Լենինականցին պատասխանում է, որ էդ դեպքում «մարոժնուն» պիտի ասեն «սառսառակ» ու ոչ թե «պաղպաղակ»: Մեկ այլ զվարճախոսությունում լենինականցին հարցնում է երևանցուն, թե նրանք քանի նոտա ունեն: Երևանցին պատասխանում է՝ 7: «Ինչու՞, դու՞ք քանիսն ունենք», հարցնում է երևանցին: «8 հատ», պատասխանում է լենինականցին ու թվարկում. «դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի, ծո»: Մեկ այլ անեկդոտում ծաղրվում է երևանյան բարբառը՝ երևանցին զանգում է լենինականցի ծանոթի տուն: Խոսափողը վերցնում է կինը: «Հակոբենց բնակարա՞նն ա»: Պատասխան՝ «Հա»: «Հակոբը տա՞նն ա»: Պատասխան՝ «Չա»: Մեկ ուրիշ անեկդոտում լենինականցին ուզում է ամուսնանալ երևանցի աղջկա հետ: Աղջկա հայրը հիմնավորում է պահանջում: Տղան ասում է. «սիրեմզը»: Հայրը հեգնելով հարցնում է. «քա «գ»-ն ի՞նչ է»: «Գուրգուրեմ գը», պատասխանում է տղան: Մեկ ուրիշ անեկդոտում երևանցին հեգնում է լենինականցուն «կալբաստ» բառի «տ» տառի համար: Լենինականցին պատասխանում է, «տ»-ն էլ վրայի կաշին է»:

• *Սպորտ.* Երևանցին հարցնում է, թե՞ ինչպե՞ս եղավ, որ Յուրի Վարդանյանը դարձավ չեմպիոն: «Իրեն ուղարկեցինք, ինքն էղավ», պատասխանում է լենինականցին: Մեկ այլ տարբերակում պատասխանողը լենինականցի հայտնի զվարճախոս Ջղեր Խաչիկն է:

• *Քաղաքի կարգավիճակը.* Երևանցին հեգնում է լենինականցուն Լենինականը «հայրաքաղաք» կոչելու համար և ասում, որ բոլոր երկրները միայն մայրաքաղաք ունեն: Լենինականցին պատասխանում է, որ դրա համար էլ դրանց քաղաքացիները լրիվ մամայի բալա են: Մեկ ուրիշ տարբերակում լենինականցին պնդում է, թե ոնց որ նորմալ կնկան տղամարդ է պետք էդպես էլ մայրաքաղաքին հայրաքաղաք է պետք, թե չէ մայրաքաղաքը առանց հայրաքաղաքի նման է անտեր կնկա: Մի ռեպլիկում լենինականցին ասում է երևանցուն. «Երբ որ Լենինականը քաղաք էր, Երևանի տեղը ճահիճ էր»: Առաջինը և որպես կենտրոն ներկայանալու միտումը շատ դիպուկ դրսևորվում է երկրաշարժյան անեկդոտում, որում ասվում է. «Գիտեիք, որ ցենտր ենք, բայց չիտեիք, որ էպիցենտր ենք»:[1] (Այս

[1] *Ազգագրագետ Լ.Աբրահամյանը նույնպես այս սրամտությունը դիտում է Լենինական-Երևան մրցակցության համատեքստում: L. Abrahamyan, Armenian Identity in a Changing World, Armenian Studies/Number 8/, Mazda Publishers, inc., Casta Mesa u CL u 2006, p.46-47.*

անեկդոտը ներկայացվել է նաև համայն հայության անունից՝ հաշվի առնելով Ղարաբաղյան շարժման արձագանքները):

• *Քաղաքացու, մարդու կարգավիճակը.* Երևանցին հարցնում է լենինականցուն, թե որտեղի՞ց է: «Իսանը (մարդը) ուրդի՞ց կեղնի» պատասխանում է վերջինս: Մեկ այլ տարբերակում լենինականցին է հարցնում անծանոթի քաղաքացիության մասին, և, երբ իմանում է, որ երևանցի է, ասում է. «Բան չկա, ախպե՛ր, բան չկա»: Սրա լրացված տարբերակում ասվում է. «Ամեն մարդ էլ մե այիբմ ունի» կամ «Էդ էլ քու այիբն է»:

• *Պարծենկոտությունը.* Երևանցին բերանի երեք մասերում մի-մի հատ ոսկե ատամ է ունենում և Լենինականի մի խանութում առևտուր անելիս բերանը մաս-մաս բացելով, հերթով տարբեր բաներ է հարցնում: Լենինականցին, որի բոլոր ատամներն են ոսկուց՝ բերանը լայն բացելով, պատասխանում է՝ չկա: Մեկ այլ տարբերակում երևանցին միայն մի ոսկե ատամ է ունենում, իսկ լենինականցին՝ երեք և բերանի տարբեր կողմերը հերթականությամբ բացելով՝ պատասխանում է բերանի մի կողմով հարցեր տվող երևանցուն:

• *Ֆիզիոլոգիական տվյալները.* Երևանցին հեգնում է լենինականցուն, որ լենինականցիները չաղլիկ աղջիկներին են հավանում: Լենինականցին պատասխանում է, որ ոսկրոտ մսից միայն «քյասիբի» բորշ կստացվի: Մի ռեպլիկում լենինականցի սկեսուրը, ակնարկելով երևանցի աղջիկների նիհարությունը, ասում է. «Երևան, ոսկորներդ կերևան»:

• *Սրամտելու կարողությունը.* Երևանցին պարծենում է, որ ինքը չորս Զապորոժեց ունի: «Մի հատ էլ առ՝ քարկտիկ խաղանք», ասում է լենինականցին: Լենինականցին էշով ճանապարհ է գնում: Մեփական Վոլգայով նրան վազանցող երևանցին ծաղրելով հարցնում է, թե ավտոն ի՞նչ մակնիշի է: «Մակնիշը չիտեմ, բայց բենզինը ունիվերսալ է: Թե հանկարծ բենզինդ կպրծնի, արի ավտոիցս քաշե»: Այս անեկդոտն ունի բազմաթիվ այլ տարբերակներ: Ընդհանրապես այս շարքին պատկանող բավական մեծ թվով գռեհիկ անեկդոտներ կան, որոնք համապատասխան մշակման ենթարկվելու պարագայում իրենց պարունակող ինֆորմացիայի և գունագեղության տեսանկյունից կարող են գիտական ու գեղարվեստական մեծ հետաքրքրություն ներկայացնել:

Սրամտելու կարողությունը յուրօրինակ կերպով գործի է դրվում նաև այն դեպքերում, երբ լենինականցին չունի համեմատության առարկան գերազանցող փաստ կամ տարբերակ: Օրինակ, երևանցին (ուշ երեկոյան ժամանելով Լենինական) մատնացույց է անում լենինականցուն, որ Լենինականում տրամվայ չկա: Լենինականցին պատասխանում է, որ կա, բայց ապահովության համար գիշերը գծերը հավաքում են: Մեկ այլ տարբերակում՝ պարտքով տալիս են երևանցիներին:

Որոշ անեկդոտներում և սրամտություններում լենինականցին փորձում է ոչ թե մրցակցային որևէ բան առաջարկել, այլ հիմնավորել գոյու-

թյուն ունեցող պակասությունը կամ նվաստացնել մրցակցի առավելության նշանակությունը: Ինչպես, օրինակ մետրոյին վերաբերող սրամտությունում՝ «Երևանցիք մետրո են սարքել, որովհետև գետնի վրա ման գալու երես չունեն»: Ավելի վաղ նման պատճառաբանություն բերվում էր նաև Երևանի ստորգետնյա անցումների համար, որը Լենինականում ստորգետնյա անցումներ կառուցելուց հետո անհեթեթ դարձավ և մոռացվեց:

Լենինականցին ամեն առիթով, թեկուզև ոչ բանավեճի, այլ նաև ուրիշ միջոցներով (օրինակ անճար կամ պարտված ներկայանալով) փորձում է շեշտել իր առավելությունները: Այդպիսի առավելություն է նաև հյուրասիրությունը, որն ընդգծելու համար մատնացույց է արվում երևանցիների ժլատությունը: Լենինականցին մի քանի ժամով հյուրընկալվում է երևանցու տանը: Նրան երեք-չորս անգամ սուրճ են հյուրասիրում: Սովից տանջվող լենինականցին թախանձում է, որ սուրճի մեջ մի քանի կարտոֆիլ կտրատեն: Մեկ այլ տարբերակում երևանցին իր տանն արդեն մի քանի ժամ հյուրընկալած լենինականցուն հարցնում է, թե ձուկ սիրու՞մ է: Վերջինս կարծելով, որ իրեն ձուկ են հյուրասիրելու՝ ուրախացած պատասխանում է՝ այո: Երևանցին նրան տանում է մյուս սենյակ և առաջարկում է նայել ակվարիումի ձկներին:

Հօգուտ լենինականցիների ավարտվող անեկդոտներում զավեշտի են ենթարկվում այդ ժամանակներում արտառոց համարվող նաև այլ տարբերություններ: Օրինակ մշտապես քամոտ և փոշոտ Լենինականում, որտեղ քաղաքացիները հիմնականում մուգ գույնի տաբատներ կամ շրջազգեստներ էին հագնում, ոտքից գլուխ ճերմակ հագած երևանցի հյուրին ծաղրում են, որ եթե մի հատ էլ կապույտ գլխարկ դներ, կլիներ մածնի շիշ: Մեկ այլ անեկդոտում հայհոյանքի կիրառմամբ ծաղրվում է երևանցիների մեջ Լեռնիկ անվան տարածված լինելը: Իսկ երևանցիները զավեշտի առարկա են դարձնում լենինականցիների մեջ Օնիկ անվան շատ տարածված լինելու փաստը:

Ի տարբերություն հօգուտ լենինականցիների ավարտվող անեկդոտների, որոնց հեղինակները (կամ տեղայնացնողները) բնականաբար լենինականցիներ էին, հօգուտ երևանցիների պատմվող անեկդոտները աչքի չեն ընկնում ծաղրի ենթակա տարբերությունների կամ թիրախների բազմազանությամբ, միօրինակ են և հիմնականում միտված են լենինականցիների բերանի չափերը (բերանի մեծությունը) հեգնելուն: Սա, անշուշտ, վկայում է, որ Լենինական-Երևան մրցակցությունն առաջին հերթին նշանակություն ուներ լենինականցիների համար: Ինչ վերաբերում է լենինականցիների մեծ-բերանությունը հեգնող անեկդոտներին, ապա դրանց մեծ մասը, իսկապես, կարծես ավելի շատ վերաբերում է դրա ֆիզիոլոգիական նկարագրին: Օրինակ, մի ատամնաբույժ գտնվում է լենինականցի հաճախորդներին, որ «տաբուրետկան» կարող է դնել լենինականցու բերանի մեջ ու հանգիստ գործ անել: Կամ Հայաստան եկած մի թռչող

ափսե է անհետանում, որը հայտնվում է լենինականցու բերանում: Մեկ այլ անեկդոտում երևանցի երեխան շրթներկի հետքերը՝ մեկը ճակատին, մյուսը՝ ծնոտին իջնում է բակ խաղալու: Զարմացած ընկերները հարցնում են, թե ի՞նչ է պատահել: Երեխան պատասխանում է, որ Լենինականից մորքուրն է իրենց հյուր եկել: Ուրիշ անեկդոտում երևանցին լենինականցուն խորհուրդ է տալիս խաղողը հատ-հատ ուտել: «Ըդիկ դու տանձի հետ ես», պատասխանում է վերջինս: Այս կարգի անեկդոտները ամենամեծ թիվն են կազմում: Հիշատակված անեկդոտներում գործ ունենք մեծբերանության սկզբնական իմաստի շրջման հետ: Նախնական իմաստն ակնհայտ է ավելի վաղ անեկդոտներում և կապվում է պոռոտախոսության հետ: Օրինակ՝ երեք «խոպանչիներ»՝ երևանցին, լենինականցին և կիրովականցին գնացքով գալիս են տուն: Երբ լենինականցին քնում է, երևանցին առաջարկում է կիրովականցուն՝ սպանել լենինականցուն և վերցնել նրա փողերը: Կիրովականցին չի համաձայնվում՝ պատճառաբանելով, որ լենինականցին առավոտ կելնի «լաբարոշ» բերանը կբանա: Կամ մեկ այլ անեկդոտում Մոսկվան Հայաստանից Ուոթերբոլի (ջրագնդակի) թիմ է պահանջում համամիութենական մրցումներին մասնակցելու համար: Լենինականցիք պարծենում են, որ իրենք պատրաստ են թիմ հանելու և հաղթելու: Թիմը մասնակցում է մրցումներին և չոր հաշվով պարտվում մի քանի խաղերում: Մարզիչը պահանջում է գոնե պատվի գնդակ խփել: Հանկարծ գոլային իրավիճակ է ստեղծվում հակառակորդի դարպասի մոտ, բայց մարզիչը պահանջում է գնդակը փոխանցել հետևում գտնվող խաղացողին՝ Օնիկին: Հարձակվողը չի ենթարկվում և առաջ շարժվելով գոլ է խփում: Ուրախացած՝ նա դիմում է մարզիչին. «Տեսա՞ք գոլ խփեցի»: Մարզիչը զայրացած պատասխանում է՝ «Գոլն ինչ էնեմ, Օնոն խեղդավ»:

Ուշագրավ է, որ լենինականցիները սովորաբար հրճվանքով էին ընդունում իրենց մեծբերանության մասին պատմող անեկդոտները, և հավանաբար նաև իրենք էին հորինում այդպիսիք: Լենինականցիների սրամտություններին մեծբերանության մակդիրներով ու անեկդոտներով պատասխանելը լենինականցիներն ըստ էության ընկալում էին որպես երևանցիների պարտություն և այդ պատճառով է, որ իրենք էլ հաճույքով իրենց մասին վերապատմում էին մեծբերանությանը վերաբերող այդ պատմությունները, իսկ երբեմն էլ իրենք էին հորինում այդպիսիք:

Ժամանակն ու իրադարձությունները իրենց կնիքն են թողնում անեկդոտների բովանդակության վրա: Քննության առարկա թեմայով վերջին անեկդոտները արձագանքում են երկրաշարժի ժամանակահատվածի իրողություններին ու դրանց հետևանքներին: Դրանցից մեկում քննադատվում է աղետի գոտուն հատկացված օգնությունների յուրացումը երևանցիների կողմից, երբ վերջիններս վերցնում են նոր հագուստները և իրենց հները ուղարկում են աղետի գոտի: Շուտով Եվրոպայից որպես օգնություն մի վագոն երիտասարդ աղջիկներ են «ստացվում»: Լենինականցին

առաջարկում է երևանցիներին դրանք վերցնել և փոխարենը իրենց կանանց ու աղջիկներին ուղարկել աղետի գոտի: Մեկ այլ անեկդոտում Երևան հարսնատես գնացած լենինականցիներին ապագա զոքանչը պարծենալով ասում է, թե եկել են իրենց ծաղիկը տանեն պարտեզը գեղեցկացնելու համար: Ապագա սկեսուրը պատասխանում է. «Չէ՛ Եկել ենք ձեր լոմիկը տանենք, որ մեր դոմիկը քանդենք»: 1990-ականներից միջքաղաքային մրցակցությունն արտահայտող անեկդոտներն սկսում են աստիճանաբար դուրս գալ շրջանառությունից՝ իրենց տեղը զիջելով քաղաքացիներին հուզող նոր խնդիրներին վերաբերող անեկդոտներին:

1970-1980-ականների զվարճախոսությունները, արձագանքելով տվյալ ժամանակահատվածում քաղաքային կյանքին ներհատուկ երևույթներին ու իրադարձություններին, մեզ հնարավորություն են տալիս տարիների հեռվից վերապրելու ու ընկալելու դրանց ամբողջ գունագեղությունը, պատկերացում կազմելու հանրային հարաբերությունների հիմքում ընկած արժեքային ու սոցիոկարգավորող չափանիշների մասին: Թվարկված հատկանիշները, հիրավի, բարձրացնում են զվարճախոսությունների պատմազգագրական նշանակությունը և անհրաժեշտ դարձնում դրանց հետևողական ու համակարգված ուսումնասիրությունը:

Սմբատ աբեղա ՊՈՂՈՍՅԱՆ (ՇՀԹԱ)

«ՏԱՆ ՍՐԲԵՐԸ» ՇԻՐԱԿՈՒՄ

Շիրակի պատմագավառը հնուց ի վեր աչքի է ընկել ոչ միայն հնագույն քրիստոնեական սրբագործված և կանոնական հուշարձանների, այլև պարականոն բնույթի, այսպես կոչված, «Տան սրբերի» առատությամբ: Սրանք հիմնականում որևէ գյուղական կամ քաղաքային ընտանիքին պատկանող Սուրբ Գրքեր են՝ Ավետարաններ (ձեռագիր կամ հնատիպ տպագիր), Նարեկներ, Հմայիլներ, ձեռագրերի պատառիկներ կամ սրբազնացված գրքեր: «Տան սրբերն» ընդհանրապես սրբազան գործառույթ ունեցող իրեր են՝ հիմնականում սրբազան բովանդակությամբ գրավոր մասունքներ, որոնց մեր ժողովուրդը օժտել է հաճախ Սրբերին բնորոշ հրաշագործ և պահպանիչ հատկություններ:[1] Հայ ժողովրդի հավատալիքների անքակտելի մասը կազմող «Տան սրբերը», ըստ նրանց երկրպագողների պատկերացումների, իրենց զորությամբ օգնում էին իրենց թեթևացնելու կյանքը, բուժելու տարաբնույթ հիվանդությունները, հեռու պահելու զանազան աղետներից ու փորձություններից և այլն: Իր բարեգործությունների համար դրանք պահանջում էին հնազանդություն, ուշադիր վերա-

[1] *Հ. Մարության, Տան սրբերի շուրջ, Եր., 2001, էջ 58:*

բերմունք, նվիրվածություն, ակնածանք և ընծաներ, որոնց բացակայության դեպքում հավատացյալները կարող էին պատժվել:[1]

«Տան սրբերից» շատերը Շիրակում հայտնվել են XIXդ. սկսած, երբ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից (Բարձր Հայք, Կարս, Բասեն, Ալաշկերտ, Մուշ և այլն) այստեղ հաստատվեցին բազմաթիվ գաղթականներ, որոնք իրենց հետ բերեցին իրենց ծննդավայրերին բնորոշ ժողովրդական հավատալիքային տարրեր: Ներգաղթից շատ տարիներ անց, տարեց կանայք անընդհատ հիշում էին իրենց պատմական հայրենիքում թողած «Զորավոր օթևանները», որոնք գալիս էին երազում և ստեպ-ստեպ հիշեցնում էին իրենց գոյության մասին: Շիրակի բանահյուսությանը քաջագիտակ Ա.Մխիթարյանն իր հեղինակած «Փշրանքներ Շիրակի ամբարներից» աշխատության մեջ բերում է այս դրսևորումների բազմաթիվ օրինակներ. «…սատանա Սարգսենց Թուխմանուկը ջահել տղի պես է ու ամեն օր կերթա Բասեն, իրան օթևանը հանդիպի կուգա» կամ «…մեր Աղեն-Թուխմանուկն է, ամեն օր կերթա Բասեն մեր թողած տունն ու էլի կուգա, սիրտը օթևանեն չի կտրի: Քա՞նի քա՞նի հեղ (անգամ) կեսարիս էրազի մեջ ըսել է թե ընծի տարեք իմ օթևանս, էդ տնաշենի մարդն էլ անկաջի ետևն է գցել ու էնպես թողել է. ես իմանիս պես գիտեմ, որ անկաջ չեենելով մեկ օրըմ մեր տան գլխուն մեկ փորձանքըմ կուգա, հըմը տեսնինք թե երբ է…»:[2] Հավատավոր հայ մամիկների համար ծննդավայրի կարոտը և հայրենի սրբատեղիների հիշատակը պահպանելու միջոց էին «Տան սրբերը», որոնք պահվում էին հատուկ քնքշությամբ ու խնամքով: Տան մեջ առանձնացվում էր հատուկ անկյուն, որտեղ շուշաներով և այլ պաճուճանքներով զարդարվում էին սրբազնացված իրերը:

«Տան սրբերի» թիվը ավելացավ Մեծ եղեռնից հետո՝ Շիրակում հաստատված գաղթականների շնորհիվ: Շիրակի թեմի տարբեր գյուղերում և քաղաքներում հին «Տան սրբերի» կողքին հայտնվեցին նորերը, որոնց շուրջ հյուսված պատմությունները մեր ժողովրդի անուրանալի նվիրվածության և հավատքի նշան են հանդեպ մեր պապերի Սուրբ հավատը:

Մեր հոգևոր ծառայության ընթացքում այցելելով տարբեր բնակավայրեր՝ հանդիպել ենք «Տան սրբերի» հետ կապված զանազան պատմությունների ու ավանդազրույցների, որոնց մասին մեր գրառումները կուզեինք դարձնել մեր հավատավոր ժողովրդի սեփականությունը: Այս պատումներն այնքա՜ն հուզիչ են ու տպավորիչ, որ կարող են մեր ժողովրդի հոգևոր առաքինությունները երևակող մի ստվար հատոր կազմել:

1915թ. եղերական իրադարձություններից հետո Կարինից (Էրզրումից) գաղթած Ազարյանների ընտանիքին պատկանող հրաշագործ հմայիլի դեգերումները նման են նրան արարող ժողովրդի ճակատագրին: Ազարյանների փեսան՝ Էրզրումի նշանավոր Չիթիող գյուղացի Միքայել

[1] *Հ. Մարության, նշվ. աշխ., էջ 58:*
[2] *Ա. Մխիթարյան, Փշրանքներ Շիրակի ամբարներից, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 98:*

(Մուխել) Բարբարյանը, Առաջին աշխարհամարտի սկզբին եղբայրների խնամքին թողնելով երիտասարդ կնոջը, գալիս է Կովկաս և զինվորագրվում հայկական կամավորական շարժմանը: 1914-1918թթ. կռվում է զորավար Անդրանիկի ջոկատում, միաժամանակ կատարելով շեփորահարի պարտականություններ: Ըստ ընտանեկան ավանդության՝ առավոտ ծեգին, երբ Մ. Բարբարյանը պատրաստվում էր հնչեցնել վերկացի կանչը, հայկական ավերված մատուռի փլատակների տակ լույսով ողողված ինչոր խորհրդավոր փաթեթ է տեսնում, որը նա իր հետ բերում է ճամբար և ցույց տալիս հրամանատարներին, սրանք էլ ոչ տառաճանաչ զինվորին բացատրում են, որ իր գտածը հմայիլ է: Հայկական զորաջոկատում ծառայելու ողջ ընթացքում Մ.Բարբարյանը հմայիլը խնամքով փաթաթած կրել է իր մարմնի վրա: Անդրանիկի զորաջոկատի կազմացրումից հետո Բարբարյանը գալիս է Կարս,որտեղ ամուսնանում է Ազարյանների դստեր հետ (նրան լուր էր հասել, որ ընտանիքը զոհ էր գնացել թուրքական յաթաղանին), որն էլ, ամուսնուց իմանալով զորավոր հմայիլի գոյության մասին, համոզում է նրան այն հանձնել իր ավագ եղբորը՝ Կարինի հռչակավոր Սանասարյան վարժարանի շրջանավարտ Միսակ Ազարյանին, որի սերունդների տանն էլ Գյումրիում առ այսօր պահպանվում է հմայիլը: Ազարյանների ընտանիքի հետ հմայիլը դեգերում է Կարսից Դիլիջան, հետո Կրասնոդար և 1930-ականների սկզբին վերջապես հանգրվանում է Գյումրիում: Այս գերդաստանի հարևան-բարեկամները, որոնք գիտեին հմայիլի գոյության մասին, խորհրդային անաստված տարիներին միշտ գալիս մոմ էին վառում և զորակցություն էին խնդրում նրանից: Ազարյանների գերդաստանի հայրը միշտ շեշտել է, որ հմայիլն էր պահապան, որ հայրենական մեկնած իր երեք որդիները ողջ և առողջ տուն վերադարձան: Սակայն հմայիլի հետ կապված է նաև տխուր պատմություն: Մ. Բարբարյանի կինը՝ Պարգևուհին, մինչև խոր ծերություն չէր ներում իրեն, որ համոզել է ամուսնուն դուրս տալու պահպանիչ հմայիլը: Այս հավատավոր կինը համոզված է եղել, որ ամուսնու բավական երիտասարդ տարիքում մահանալու պատճառը ինքն էր և երբեք չէր ներում իրեն:[1]

Ահավասիկ մեկ այլ օրինակ. ներկայացնենք Հայկավան գյուղի հռչակավոր «Բայո մամի Ավետարանի» հետ կապված ավանդազրույցները և նրա հետ կատարված եղերական պատմությունները: Մեծ եղեռնից փրկված բազմաթիվ մասունքներ են բերվել Արևելյան Հայաստան և եղել են այնպիսիները, որոնք երկար տարիներ հետո են միացվել և ամբողջացվել, ինչպես Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Մշո հռչակավոր ու մեծաղիր «Ճառընտիրը»: Ոչ պակաս հուզիչ է նաև «Բայո մամի» կամ «Ղլիջ» Ավետարանի ճակատագիրը: Տարոնի Մշո գավառի հայտնի Արկավանք գյուղից էր Բայազ Մելքոնյանը (Հայկավանցիները նրան անվանում էին Բայո մամ), որի շնորհիվ էլ փրկվել էր Մշո Կարա-

[1] *Մեր հավաքած նյութերը, տետր 1:*

պետ հռչակավոր վանքին պատկանող այդ մասունքը: Ժամանակին Բայո մամը պատմել է համագյուղացիներին, որ եղել են երկու Ավետարան, իր խոսքերով ասած՝ քույր և եղբայր(հավանաբար բովանդակային կամ ներքին զարդահորինվածքային նմանություններից ելնելով են այսպես կոչել): Քույրը՝ «Շեկ» Ավետարանն էր, որը Բայազը փոխանցել է իր ազգականներից մեկին, իսկ սա իր հետ տարել է Եվրոպա (հավանաբար Ֆրանսիա): Եղբայրը շքեղակազմ «Ղլիջ» Ավետարանն էր (ղլիջ՝ թուրքերեն նշանակում է խաչ), որի հետ կապված են մի շարք ավանդազրույցներ: Կոտորածի ժամանակ քրդական հրոսակախմբերից մեկի ղեկավարը (քրդական շեյխը) բռնազավթում է Բայազի թանկարժեք ունեցվածքը և «Ղլիջ» Ավետարանը, սակայն շատ շուտով պատուհաս է գալիս շեյխի տանը: Սկզբում մեկը մյուսի հետևից մահանում են նրա տասներկու զավակներից չորսը, ապա գայլերը հոշոտում են նրան պատկանող ոչխարների հոտը: Ըստ ավանդության՝ շեյխի մտերիմներից մեկը համոզում է նրա հետ վերադարձնել գերեվարված մասունքը, և շեյխն այն վերադարձնում է Բայազին: Դեպի Արևելյան Հայաստան գաղթի ճանապարհին գետանցի ժամանակ Բայազը գնում է ինքնազոհության հասնող մի քայլի. երբ փրփրադեզ գետի հոսանքը քշում տանում է Բայազի զավակներին, նա փրկում է իր չորս որդիներից մեկին միայն և «Ղլիջ» Ավետարանը: Մեկ այլ պատումի համաձայն, երբ հասել է գետանցի պահը, Բայազը որպեսզի փրկի Ավետարանը, ջուրն է գցում իր երեք զավակներին: Գետանցից հետո չի ավարտվում Բայազի և «Ղլիջ» Ավետարանի ոդիսականը: Ավետարանը շարունակում է հրաշքներ գործել: Գաղթականների խումբը և նրանց հետ Բայազը գերի են ընկնում ազերի-թուրքերին, և հրաշքով այստեղ է հասնում վերևում հիշված քուրդ շեյխը, որն ազատում է նրանց գերությունից: Երկար դեգերումներից հետո Բայազը և իր կողմից փրկված սրբությունը վերջնականապես հաստատվում են Շիրակի Հայկավան (նախկինում՝ Բաջօղլի) գյուղում: «Ղլիջ» Ավետարանը երկար տարիներ դարձավ գյուղի գլխավոր ուխտատեղին, որտեղ գալիս էին ոչ միայն Շիրակից, այլև Հայաստանի և հարևան հայաբնակ շրջաններից հարյուրավոր ուխտագնացներ: Այս զորավոր Ավետարանը դուրս էր բերվում իր օթևանից երաշտի, կարկուտի և այլ բնական աղետների ժամանակ: Տարբեր վայրերից եկած ուխտավորներն ընծաներ էին բերում Ավետարանին, մատաղ խոստանում և նրա զորությանը հավատալով՝ զանազան հիվանդություններով տառապող մարդկանց էին բերում:

Խորհրդային տարիներին հռչակավոր այս մատյանով հետաքրքրվում են նաև գիտության և մշակույթի գործիչները: Նախորդ դարի 50-ական թթ. մի պատվիրակություն է ժամանում մայրաքաղաքից գրող Նաիրի Զարյանի գլխավորությամբ: Չնայած բոլոր հորդորներին և սպառնալիքներին՝ ո՛չ Բայազը և ո՛չ էլ համագյուղացիները Ավետարանը չեն հանձ-

նում Մատենադարանին՝ վախենալով , որ դրանից հետո գյուղը կզրկվի պահապան սրբությունից, և աղետները ու չարիքները կպարուրեն այն:[1]

Սակայն աղետը վրա հասավ 1993թ., երբ Բայազի անհոգի և ուրացող, արծաթասեր ազգականներից, մեկը բառի բուն իմաստով, գողացավ սրբազան մասունքը և վաճառեց ԱՄՆ մեկնող իր նման մեկ այլ հավատուրացի: Եվ նորից «Ղլիջ» Ավետարանն ընկավ գերության մեջ: Ավետարանի կորուստը մեծ է ոչ միայն Հայկավան գյուղի, այլև ողջ հայ հավատացյալ ժողովրդի ու մշակույթի համար, և մեր բոլորի ու պետության պարտքն է ամեն գնով վերադարձնել Մշո սբ. Կարապետի հիշատակ մասունքը: Ինչ վերաբերում է «Շեկ» Ավետարանին, ապա բացի նրանից, որ գիտենք, թե մոտավորապես ուր է տարվել այն, նույն Հայկավան գյուղի բնակիչներից մեկի տանը պահվում է հավանաբար դրա թերթերից մեկը: Գյուղում կա մեկ այլ «Տան սուրբ»՝ Ժ. Մխոյանի՝ «էրգրից» բերած Ավետարանը, որը Մխոյանները պահում են մեծ ակնածանքով և սրբորեն, ինչպես վայել է իսկական քրիստոնեին:

Նմանատիպ պատումներ և զրույցներ կան նաև Շիրակի այլ բնակավայրերում գոյություն ունեցող «Տան սրբերի» մասունքների շուրջ:

Կարինե ՍԱՄՎԵԼՅԱՆ (ԱԻ)

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԵՆՔԸ ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՄԱԶՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Նկարչուհի Մարիամ Ասլամազյանի կյանքի ճանապարհը նրա ստեղծած աշխատանքներում շատ որոշակի գծագրված է: Հետադարձ հայացքով վերստին ու վերստին անդրադարձը տարեթվերին, աշխատանքների վերնագրերին ու թեմաներին հստակեցնում է պատմական շատ որոշակի ընդգրկում՝ անբաժան արվեստագետի կենսագրականից:

Մարիամ Արշակի Ասլամազյանը ծնվել է 1907թ. հոկտեմբերի 20-ին Բաշ-Շիրակ գյուղում: 1924թ. ընդունվել է Լենինականի կերպարվեստի ստուդիան՝ սովորելով Յու. Վերժբիցկայայի մոտ: Շատ հետաքրքրական է նրա մասնագիտական ձևավորման ճանապարհին հետևյալ կարևոր կենսագրական դրվագը՝ Լենինականում ավարտելով երկրորդ կարգի միջնակարգ դպրոցը և միաժամանակ տեղի կերպարվեստի ստուդիան՝ նա գալիս է Երևան և ընդունվում գեղարվեստաարդյունաբերական տեխնիկում՝ ուսումնառությունն սկսելով անմիջապես 4-րդ կուրսից: Երևանի այս տեխնիկումում նրա դասախոսներն էին Մեղրակ Առաքելյանը և Ստեփան

[1] *Մեր հավաքած նյութերը, տետր 2:*

Աղաջանյանը: Նման օժտված արվեստագետների մոտ ուսանելը պահանջում էր համապատասխան պատրաստվածություն:

Մեր զեկուցման հիմնական ասելիքը Մ. Ասլամազյանի ստեղծագործություններում ազգագրական հենքի, ատաղձի, նշանակետի հիմնավորումն է: Սակայն մեր ուշադրությունից չվրիպեց նաև այն փաստը, որ Լենինականի կերպարվեստի ստուդիան՝ այժմ Մերկուրովի անվան, այնքան բարձր հիմքերի վրա է եղել, որ նրա շրջանավարտը կարողացել է բավարարել Երևանի գեղարվեստաարդյունաբերական տեխնիկումի IV կուրսի պահանջները: Սա նույնպես ազգագրական արժեք է ազգային կրթական համակարգի գնահատման տեսանկյունից: Ավելացնենք, որ գյումրեցի նկարիչների մեծ մասն այստեղից է սկսել առաջին քայլերը:

Ազգագրական հետաքրքրությունը Մարիամ Ասլամազյանի ստեղծագործություններում նախասիրություն է: Նրա աշխատանքների մեծամասնությունը դրա հաստատումն է: Ընդ որում՝ նկարչուհին հավատարիմ մնաց ստեղծագործական այդ տեսադաշտին, աստիճանաբար ավելի հաստատվելով ու ընդարձակվելով ժանրային իմաստով:

Ժամանակագրական առումով նույնպես ընդհատումները ցայտուն չեն (նկատի ունենք նրա ստեղծագործական բեղուն շրջանը): Նկարագանկն սկսվում է 1935 թվականից՝ 1937թ. նրա ստեղծած «Հայաստանի գորգագործուհիները» կտավով (յուղաներկ, 180x220, Խաբարովսկի գեղարվեստական թանգարանի սեփականությունն է): Հայաստանի պետական պատկերասրահում պահվող «Հերոսի վերադարձը» (կտավ, յուղ., 175 x 225 1943 թ.) աշխատանքը, իհարկե, լավատեսության, պատերազմի մոտալուտ հաղթական ավարտի շունչ ուներ, սակայն միաժամանակ ազգագրական ծավալուն տեսադաշտ էր. երեխայի օրորոցը, մահճակալը, առաստաղի լուսամփոփը, ծալ-ծալ անկողինը, կինը խնոցի հարելիս, սպասքը և այլն, ընդ որում՝ ժողովրդական, գյուղական մթնոլորտ:

Այդ նույն թվականին է ստեղծվել «Դդումները կարպետի վրա», (1943թ.) յուղաներկ կտավը: Ընդ որում՝ կարպետի ֆակտուրան ընդգծված է, հասուն դդումների չորացած երկար կոթեր և այլն: 1954թ. ստեղծվեց «Ճախարակի մոտ» նկարը: Դարձյալ, բացի ճախարակից առաջին պլանում հայ կին է՝ ձեռքին բացված գիրք, սենյակի ինտերիերը նույնպես առկա է՝ դարսված անկողին, հատակին կարպետ և այլն:

1980թ. նկարչուհին դարձյալ անդրադառնում է դդումներով կոմպոզիցիային՝ «Դդումներ փիրուզե ֆոնի վրա» (1980): Այս կտավը շատ որոշակի կրում է արևելյան ազդեցություն, թեև բոլոր ատրիբուտները հայկական են՝ կծու պղպեղ, սմբուկ, սխտոր, գորգի, թե կարպետի զարդանախշ: 1977թ. ստեղծված «Մոր երազներն ու անհանգստությունները» յուղաներկ կտավում մայրն է երեխային կրծքով կերակրելիս: Այստեղ ողջ նկարը ազգագրական պատկերների հավաքածու է՝ օրորոցը, կնոջ հագուստը, սի-

նիով լիքը մրգերի պատկերը, սափորների, խեցեգործ առարկաների շարքը, օրորոցի ոտքի տակ հենած ծոպքերով բարձիկը և այլն:

1959թ. նրա ստեղծագործական ժանրին՝ գեղանկարչությանը գումարվեց նաև խեցեգործությունը: Նկարչուհու հետ անձնական զրույցներում բազմիցս եմ լսել նրա հիացումը խեցեգործության գրավչությամբ:

Դրա արդյունքն են բազմաթիվ աշխատանքներ, այդ թվում՝ մոմակալներ, սկուտեղներ. «Սկուտեղ ուղտի գլխով», «Կապույտ նիշերով մոմակալ», «Տերևներով կարմիր մոմակալ» (1947թ.) և «Կինը զամբյուղը գլխավերևում», որը և դարձավ 1985թ. Լենինականում բացված իր թանգարանի մուտքի հյուրընկալը, «ներս եկողին դիմավորողը», ինչպես ինքն էր սիրում կրկնել: Հիմա համոզվում եմ, որ խեցեգործ զամբյուղն իրոք, հայկական է իր հյուսվածքով և ձևով:

Նկարչուհու դիմանկարներում հուզականության կամ ներաշխարհի պատկերելու ճիգը բացակայում է, քանի որ նրա համար կարևորը ձևն ու գույնն են: Բացառություն են կազմում մի քանիսը, առանձնապես հարազատը՝«Հեռացող Լենինական»-ը (1967), ուր գլխաշորով գյումրեցի կնոջ աչքերն են խոսում և դեմքի կնճիռները տների խիտ ցանցի վրա: Սա հաջողված գործ է՝ երկար մտորումներից ծնված, ասելիքով:

Արտասահմանյան բազմաթիվ ուղևորությունների տպավորությամբ ծնված կտավներն ու խեցեգործական աշխատանքները հաստատում են ազգագրական հետաքրքրությունը նաև այլ ժողովուրդների կենսաձևի ու կիրառական արվեստի հանդեպ «Ռուսական նատյուրմորտ տրեխներով» (1976), դիմակներ, նատյուրմորտներ, դիմանկարներ՝ «Պարագվայցի աղջիկը», «Հնդկական ընտանիք», «Մալգաշուհին», «Ինդիրա Գանդիի դիմանկարը» (1974), «Հնդկուհի» (1973) և այլն:

Ազգային տարազով քրդուհիների կերպարների նկատմամբ սերն իր ողջ ստեղծագործության ընթացքում ուղեկցեց նրան.«Ծաղկած կակտուս» (1951), «Մանուշակներ արծաթի հետ» (1980), «Ինքնադիմանկար» (1980):

Նրա խոսելաոճը նույնպես Գյումրու բարբառով էր հագեցած: «Եթե, խոսեր,... ուզեր բարբառով խոսել, կխոսեր...»,- հաստատեց նրա երբեմնի ուսանողը Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, վաստակավոր գեղանկարիչ Ալ. Գրիգորյանը, երբ այդ մասին ես ակնարկեցի: Հետո ավելացրեց, շատ մարդամոտ էր, լավ ուսանողներին դժվար տարիներին ներկեր էր տալիս, ես էլ եմ ստացել, միշտ հետաքրքրվում էր, թե ուսանողներն ինչպես են ապրում(նկարչուհին 1942-1944թթ. գեղանկարչություն է դասավանդել Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում): Այնուհետև տեղափոխվել է Մոսկվա:

Մ. Ասլամազյանի արվեստը իր ապրած ստեղծագործական տարիների ցայտուն արտահայտությունն է՝ սոցիալիստական ռեալիզմին հավատարիմ, ժողովուրդների «անխախտ» բարեկամության դրոշի ներքո: Մնացածը, տպավորիչը՝ կանացի ինքնատիպությունն է, տքնաջան աշ-

խատանքի արդյունքով իր պատկերացրած արվեստին նվիրված ու հետամուտ, համառ, նաև գումարած պետական հովանավորությունը այն լայն հնարավորություններով, պայմաններով, որ ստեղծվում էին ԽՍԿԿ-ի անդամ, կուսակից արվեստագետների առջև:

Ազգագրական միտվածությունը բնորոշ է խորհրդային տարիներին ստեղծված աշխատանքներին, սակայն Մ. Ասլամազյանի գործերում դա շատ ավելի հագեցված ու խոսուն է:

Մարիամ Ասլամազյանը Երևանում սովորաբար զբաղված էր իր նատյուրմորտներով, որոնց թեման Հայաստանի բնաշխարհի հասուն մրգերն էին: Նա անձամբ շուկա էր գնում, ընտրում նուռը, դեղձն ու խաղողի տեսակները, գույները, հետո դասավորում սկուտեղի մեջ՝ հարմարեցնելով հայկական ձեռագործ փռոցը: Շուկայում վաճառողուհիները նրան ճանաչում էին և մրգերի ընտրանին նվիրում, որից ինքը նեղսրտում էր. «էս կնանիքը հա՛մ էրեխեքի տեր են, հա՛մ էլ հոգնած դաղրած՝ առավոտից իրիկուն էս բազարում են, հլա փող էլ չեն վերցնում ինձանից, նեղանում են... հող են մշակում, մարդ են յոլա տանում ... մեղք են»:

Այսպես՝ յուրաքանչյուր ամառ Մոսկվայից Երևան գալով՝ նա սևեռուն ու լարված աշխատում էր Աբովյան փողոցի իր արվեստանոցում, արևից շիկացած ապակիների դիմաց, մինչև արևի և լույսի իրիկնամուտը: Երեկոյան քրոջ՝ Երանուհու հետ այցելում էր իրենց ծանոթներին: Այս այցելությունները նույնպես իր գործի շրջանակում էին և բացի հանդիսավորությունից՝ նաև նպատակառուղղված: Նրանք իրենց շրջապատն ունեին և, բարեբախտաբար, գոհ էին տեղի վերադասներից իրենց արվեստին սատարելու, օգնելու համար: Նկարչուհին չէր զլանում նրանց նկարներ նվիրել: Մարիամ Ասլամազյանը միշտ իր կերպարի մեջ էր: Ծանոթները նրան հայերեն գրքեր էին նվիրում, թերթերից արվեստին վերաբերվող նյութեր էին տրամադրում: Մարիամ Արշակովնան ինձ հաճախ էր զանգում նաև արվեստաբանական իմ հոդվածների առիթով, շնորհավորում, իրեն դուր եկած ամբողջ պարբերությունները հեռախոսով կարդում, հետո ավելացնում՝ հետաքրքիր ես գրում... սիրուն ես հագնվում, երբ կգա՞ս, ես ամեն օր պիտի նկարեմ, որ չնկարեմ կմեռնեմ:

Արևելագետի իմ մասնագիտությունը և իր հանդեպ իմ ջերմ վերաբերմունքը նրան տրամադրեցին, որ անկեղծորեն խնդրի հնարավորություն ստեղծել որոշ ժամանակով Ալագյազ գնալու՝ քրդական տարազով կնոջ նկարելու նպատակով: Դա բավական դժվար էր, քանի որ 0 1986թ. էր, նկարչուհին շուտով 80-ամյակն էր տոնելու, առողջական խնդիրներ ուներ, իսկ լեռնային այդ տարածքը Երևանից բարձր էր: Նա անդրդվելի էր, անընդհատ կրկնում էր, որ երկար տարիներ քրդուհիներ չի նկարել, և դա իր երազանքն է: Ստիպված խնդրեցի մեր ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի քրդական բաժնի վարիչ, պ.գ.թ. Խալիդ Չատոևին, որը սկզբում առարկեց: Ես նրան հրավիրեցի նկարչուհու արվեստանոց:

- Ապրի արևդ, ասաց Խալիդ Մուրադիչը, իսկականից ջահել ա, ես էլ կարծում էի ... ուզում ես ասել, թե ութանասուն տարեկան կնկան քսան տարեկանից չենք ջոկում ... ապրի արևդ ... ես կօգնեմ շենքին-շնորհքին մեր Մարիամին դոնաղ կտանեն: Հաջորդ օրը առավոտյան Մարիամը՝ կտավները ձգած մեզ էր սպասում: Նա շատ գոհ վերադարձավ ջերմ ընդունելությունից, այնտեղի առաջին դեմքի տանը ապրելով և ստեղծագործելով բավական երկար ժամանակ: Խալիդ Չատոևը իմ միջոցով միշտ բարևներ էր ուղարկում Մարիամին: Նկարչուհին ինձ հաճախ էր շնորհակալություն հայտնում, և կրկնում. «Հիմա Ալագյազում բնակարաններում մեքենը շարած, կռավաթի կենտրոնում կուկլեքը շարած, ջահելները ջինսերով ... էլ քրդուհիները, եզդիները իրանց սիրուն տարազը չեն հագնում: Ինչ ունեին բոխչեքի մեջ պահած, հանեցին մեյդան, ինձ համար հագան, որ նկարեմ ... նկարեցի, բայց ափսոս, որ իրենց տարազը այդպես էլ չեն պահպանում, չեն հագնում»:

Այս աշխատանքներով, որոնք նրա ստեղծագործական վերջին տարիներին ստեղծված գործերի առանցքում են, ժողովրդական նկարչուհին հետագայում անհատական ցուցահանդեսներ բացեց Մոսկվայում:

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ (ՇՀՀԿ)

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ 1946-1947թթ. (ըստ ՀՀ ԱԱ Շիրակի տարածքային բաժնի նյութերի)

Հայերի զանգվածային արտագաղթը հայրենիքից դեպի մերձակա ու հեռավոր երկրներ, ինչպես հայտնի է, սկսվել է դեռևս բյուզանդական գերիշխանության և սելջուկյան արշավանքների ժամանակներից, շարունակվել հետագա դարերի ընթացքում, ահավոր չափերի հասել XIXդ. վերջերին, XXդ. առաջին քառորդում և ակնհայտ է նաև մեր օրերում: Ժամանակակից հայկական սփյուռքը Մեծ եղեռնից մազապուրծ փրկված հայերի սերունդն է, նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող հայերը և 1990-ական թթ. տեղի ունեցած ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների բերումով մեր հանրապետությունից արտագաղթածները, որոնց մի զգալի հատվածը այժմ մշտական բնակություն է հաստատել Ռուսաստանում, ԱՄՆ-ում և Եվրոպական մի շարք երկրներում:

Ներկայումս տարբեր երկրներում բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ ամենաստույգ տվյալներ, դժբախտաբար, չկան: 1920-ական թթ. գաղութահայության քանակի մասին տվյալները զանազան աղբյուրներում տատանվում են 800 հազարից մինչև 1,2 մլն մարդու սահմանն-

րում:[1] Նրանց ճնշող մեծամասնությունը բնակություն էր հաստատել Թուրքիային սահմանակից երկրներում՝ հուսալով մի օր վերադառնալ հարազատ բնակավայրեր: Ցավոք, հայտնի պատմաքաղաքական իրադարձությունների բերումով դա տեղի չունեցավ: 1950-ական թթ. սփյուռքահայության թվաքանակը գրեթե չփոխվեց՝ մնալով շուրջ 1,2 մլն. մարդ:[2] Այդ տարիներին Սփյուռքում հայության թվի գրեթե անփոփոխ մնալն առաջին հերթին բացատրվում է լայնածավալ հայրենադարձությամբ:

Միայն 1921-1948թթ. հայրենադարձների թիվը կազմել է մոտ 200 հազար մարդ: Որպեսզի հստակ պատկերացում կազմենք վերջինիս ծավալների մասին, բերենք մի քանի թվային տվյալներ: 1923թ. փետրվարի 1-ի դրությամբ Հայաստանի գյուղական վայրերում հաշվառման են ենթարկվել 128,6 հազար ներգաղթյալներ,[3] իսկ սփյուռքահայության առաջին խմբաքանակը Հայաստանում բնակություն է հաստատել 1921թ. վերջերին և 1922թ. սկզբներին, երբ մեր երկիր եկան Միջագետքում ապաստանած 9000 գաղթական հայեր: 1921-1936թթ. հայրենադարձների թիվը Հայաստանում հաշվվում էր արդեն 42286 մարդ,[4] իսկ 1946-1948թթ. Մերձավոր և Միջին Արևելքի ու եվրոպական երկրներից հայրենադարձվեցին ևս 90000 հայեր կամ սփյուռքահայության ամբողջ թվաքանակի 7,5%-ը: 1962-1978թթ. ներգաղթեցին ևս 31 հազար սփյուռքահայեր: Այսպիսով, ընդհանուր առմամբ՝ 1921-1978թթ. ընթացքում Խորհրդային Հայաստանն ընդունել է 250 հազար սփյուռքահայերի, որոնց 20 հազարը բնակություն են հաստատել, Լենինականում, ընդ որում, դրա 45%-ը՝ 1946-1947թթ.:[5]

Սփյուռքահայերի ներգաղթն էական ազդեցություն ունեցավ Հայաստանի բնակչության թվաքանակի աճի վրա: 1926թ. և 1939թ. մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում հայրենադարձված էր հանրապետությունում ավելացած բնակչության ավելի քան 10%-ը, 1939-1959թթ.՝ 18,7%-ը և 1962-1978թթ.՝ 8,1%-ը: Ըստ ՀՀ Ազգային արխիվի Շիրակի տարածքային բաժանմունքի (այսուհետև՝ ԱԱ ՇՏԲ) նյութերի՝ 1946-1947թթ. Լենինականում բնակություն հաստատած հայրենադարձների թիվը 7351 մարդ էր:[6] Այդ առումով ուշագրավ է ընդգծել, որ 1939-1950թթ. Լենինական քաղաքի բնակչության ընդհանուր թվի աճի մոտ 50%-ը բաժին էր ընկնում հայրենադարձներին: 1946-1947թթ. Լենինականում հաստատված սփյուռքահայությունը, իր գործուն ազդեցությունը թողեց ոչ միայն քաղաքի կենցաղամշակութային համալիրի ու ձևավորված ավանդույթների վրա, այլ նաև մեծ ներդրում ունեցավ քաղաքի տնտեսության,

---

[1] *ՀԺՊ, VII, Եր., 1967, էջ 539-541:*
[2] *Ս. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., 1962, էջ 246:*
[3] *Խորհրդային Հայաստանը 1920-1925թթ. Եր., 1926, էջ 69:*
[4] *ՀԺՊ, h VII, Եր., 1967, էջ 577:*
[5] *Խ. Ավետիսյան, Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Եր. 1987, էջ 74:*
[6] *ՀՀ ԱԱ ՇՏԲԱ, ֆ. 2, ց. 2, գ. 640-641:*

մասնավորապես թեթև և սննդի արդյունաբերությունների, մեքենաշինության և փայտամշակության զարգացման վրա:

1946-1947թթ. Լենինականում բնակություն հաստատած սփյուռքահայության ժողովրդագրական կազմին վերաբերող մեր ձեռքի տակ եղած տվյալների հիման վրա փորձել ենք ճշգրտություն մտցնել հայրենադարձների թվաքանակի, աշխարհագրության, սեռատարիքային կառուցվածքի, մասնագիտության և զբաղվածության հարցերում: Հայրենադարձների թվի և աշխարհագրության մասին աղյուսակ կազմել ենք ՀՀ ԱԱ ՇՏԲԱ նյութերի հիման վրա (ֆ. 2, ց. 2, գ. 640-641):

Աղյուսակ 1 *1946-1947թթ. Լենինականում բնակություն հաստատած հայրենադարձների թվաքանակն ըստ երկրների*

N	Երկրներ	1946թ.			1947թ.			Ընդամենը 1946-1947թթ.		
		ընտ. թիվը	բնակչությունը		ընտ. թիվը	բնակչությունը		ընտ. թիվը	բնակչությունը	
			մարդ	%		մարդ	%		մարդ	%
1	Բուլղարիա	93	343	11,1	71	264	6,2	164	607	8,3
2	Եգիպտոս	26	121	3,9	57	271	6,3	83	392	5,3
3	Լիբանան	153	789	25,6	191	931	21,8	344	1720	23,4
4	Հունաստան	225	908	29,5	223	915	21,4	448	1823	24,8
5	Սիրիա	118	670	21,8	161	827	19,4	279	1479	20,4
6	Ռումինիա	43	160	5,2	33	117	2,7	76	277	3,8
7	Ֆրանսիա	10	37	1,2	228	909	21,3	238	946	12,9
8	Այլ երկրներ	16	50	1,7	6	39	0,9	22	89	1,1
	ԸՆԴԱՄԵՆԸ	684	3078	100	970	4273	100	1654	7351	100

Բերված թվերից երևում է, որ Լենինականում բնակություն հաստատած հարենադարձների 68,6%-ը երեք երկրներից են՝ Լիբանանից, Հունաստանից և Սիրիայից: Ընդ որում, Մերձավոր և Միջին Արևելքից ներգաղթած հայերի ընտանիքներն ավելի բազմանդամ էին (ընտանիքի անդամների թվի միջին մեծությունը կազմում էր 5,1 մարդ), մինչդեռ Բալկանյան երկրներից և Ֆրանսիայից ներգաղթած ընտանիքների անդամների թվի միջին մեծությունը 4 մարդ էր: Այդ թվականներին Լենինական ներգաղթած հայրենադարձների ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ էր՝ Բեյրութից, Կահիրեից, Հալեպից, Դամասկոսից, Բուրգասից, Վարնայից: Լիբանանից և Սիրիայից եկած հայության մեջ մեծ էր կիլիկիահայերի թիվը (Ֆրանսիայի և Թուրքիայի միջև 1938-1939թթ. կայացած դիվանագիտական գործարքով Սիրիայի Ալեքսանդրետի սանջակը Թուրքիային վերադարձվելուց հետո այնտեղ բնակվող կիլիկիահայերի ճնշող մեծամասնությունը տեղափոխվեց նախ Սիրիա, իսկ նրանց մի հատվածը 1946-47թթ. եկավ Հայաստան, այդ թվում՝ նաև Լենինական):[1] Այլ տարածաշրջաններից և երկրներից եկած սփյուռքահայության ճնշող մեծամասնությունը Մեծ եղեռնից փրկվածներն էին, նրանց զավակներն ու թոռները:

[1] *Ս. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., 1962, էջ 108:*

Խորհրդային կառավարության գործուն միջոցառումների շնորհիվ այդ տարիներին հազարավոր հայեր տեղափոխվեցին Ռումինիայից, Բուլղարիայից և Հունաստանից: Մեծաթիվ սփյուռքահայության ներգաղթը այդ երկրներից, այլ պատճառներից բացի, մեծ չափով նաև դրանց կառավարությունների կողմից հայերի հանդեպ տարվող խտրական քաղաքականության արդյունք էր. Հայերն այս երկրում վերաբնակեցվել էին անբարենպաստ տնտեսաաշխարհագրական պայմաններ ունեցող վայրերում՝ հայտնվելով սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Այդ պատճառով Հունաստանում բնակվող 70 հազար հայությունը, 1922-1946թթ. ընթացքում էապես նվազելով, հասել է 30 հազարի, որից 20 հազարը 1946-1947թթ. գաղթեց Հայաստան, մնացածը՝ Ֆրանսիա, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, մասնավորապես ԱՄՆ:[1]

Հետաքրքրական են նաև այդ տարիներին Լենինականում տեղավորված հայրենադարձների սեռատարիքային կազմի մասին տվյալները: Նախ ասենք, որ ընդհանրապես ՀԽՍՀ-ում բնակություն հաստատած հայրենադարձների սեռատարիքային կազմի տեսակարար թվի ցուցանիշը գրեթե չի տարբերվում տեղաբնիկների սեռատարիքային կազմի նույն ցուցանիշի մեծությունից: Լենինական հայրենադարձվածների մեջ մինչև 14տարեկանները կազմել են 27,5%-ը,15-60 տարեկանները՝ 64,5%-ը, 61 և բարձր տարիք ունեցողները՝ 8,0%: Տեսանելի է, որ հայրենադարձների տեսակարար քանակում մեծ էր աշխատունակ տարիքի բնակչության թիվը: Եվ դա իր բարերար ազդեցությունն ունեցավ քաղաքի զբաղվածություն ունեցող բնակչության աճի վրա:

Աղյուսակ 2 1946-1947թթ. Լենինական հայրենադարձվածների սեռատարիքային կազմը

Տարիքային խմբեր	1946թ.				1947թ.				Ընդամենը 1946-1947թթ.			
	ար.	իգ.	ընդ.	%	ար.	իգ.	ընդ.	%	ար.	իգ.	ընդ.	%
մինչև 14 տարեկան	439	412	851	27,6	599	574	1173	27,5	1038	986	2024	27,5
15-60 տարեկան	972	995	1967	63,9	1392	1385	2777	65,0	2364	2380	4744	64,5
61 և բարձր	118	142	260	8,5	115	208	323	7,5	233	350	583	8,0
Ընդամենը	1529	1549	3078	100	2106	2167	4273	100	3635	3716	7351	100

Վերոբերյալ աղյուսակից պարզ է դառնում, որ մինչաշխատունակ բնակչության թվաքանակում մեծամասնություն է կազմել արական սեռը, աշխատունակ տարիքի հայրենադարձների թվաքանակում գրեթե սեռային հավասարություն է, և կենսաթոշակային տարիքում կանայք գերա-

[1] *Ս. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., 1962, էջ 198:*

զանցում են տղամարդկանց 233-ով: Մեծ է աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար թիվը (64,5%): Մերձավոր և Միջին Արևելքից հայրենադարձված հայությանը բնորոշ էր բնական վերարտադրության ընդլայնված տիպը (դրա գործակիցը կազմում էր 3,1), մինչդեռ Բալկանյան երկրներից և Ֆրանսիայից եկածների մոտ այդ ցուցանիշը 2,3 էր՝ բնորոշ վերարտադրության սովորական տիպին: Բնականաբար, հայրենադարձները հասցրել են իրենց վրա կրել այդ տարածաշրջաններին բնորոշ ժողովրդագրական և էթնոմշակութային ազդեցությունները:

Հայրենադարձների մեջ մեծ թիվ են կազմել արհեստավորները, հատկապես դերձակները: Քիչ չէին նաև վարորդները: Ընդ որում, Մերձավոր Արևելքի երկրներից, մասնավորապես Եգիպտոսից, Սիրիայից և Լիբանանից եկած հայերի մեջ շատ էին կոշկակարները, երկաթագործները, դերձակները և ջուլհակները, իսկ եվրոպական երկրներից եկածների մեջ՝ վարորդները, սպասարկման ոլորտի աշխատողները և որակյալ բանվորները: Հայրենադարձների ցուցակներից դուրս բերված թվային տվյալները պարզում են, որ 1946թ. զբաղվածություն ունեցող հայրենադարձների թիվը 635 մարդ էր, ինչը կազմում էր աշխատունակ տարիքի հայրենադարձ բնակչության 42,3%-ը (92-ը կոշկակարներ էին, 60-ը՝ դերձակներ, 47-ը՝ ջուլհակներ, 29-ը՝ վարորդներ): 1947թ. զբաղվածություն ունեին 925 մարդ՝ այդ տարվա աշխատունակ տարիք ունեցող հայրենադարձների 46,3%-ը (162 կոշկակարներ, 95 դերձակներ, 50 վարորդներ, 49 ատաղձագործներ և հյուսներ, 14 ոսկերիչներ, 41 երկաթագործներ և այլն): Հայրենադարձների մեջ կային նաև որակյալ սանրագործներ, գորգագործներ, ներկարարներ, լուսանկարիչներ, պաղպաղակ պատրաստողներ և այլն: 1947թ. Լենինականում տեղավորված աշխատունակ տարիքի 153 հայրենադարձներ աշխատել են քաղաքի տնտեսության տարբեր ճյուղերում, 33-ը՝ կոշիկի գործարանում, 10-ը՝ «Հացառում», 11-ը՝ կարի գործարանում, 13-ը՝ «Պրոմկոմբինատում», 11-ը՝ Տեքստիլ կոմբինատում և 75-ը՝ այլ ձեռնարկություններում:[1] Հայրենադարձվելուց անմիջապես հետո սփյուռքահայերը ներգրավվել են հանրային աշխատանքի մեջ: Քաղաքային իշխանություններն ակտիվ աշխատանք են ձեռնարկել հայրենադարձներին բնակարանով ապահովելու ուղղությամբ: Նրանց մի հատվածին միջոցներ են տրամադրվում կառուցելու առանձնատներ, մի մասն ապահովվել է հանրակացարանով, մնացածը՝ պետական բնակարաններով: Բնակարանների կառուցման գործում հայրենադարձներն ունեցել են իրենց անմիջական մասնակցությունը, հատկապես նրանք, ովքեր որմնադիր, քարտաշ, հյուսն կամ ներկարար էին: Հայրենադարձներին բնակեցրել են քաղաքի տարբեր թաղամասերում: Ըստ արխիվի տվյալների՝ նրանց զգալի մասը բնակություն է հաստատել քաղաքի կենտրոնական թաղամասերում, որտեղ հայրենադարձները աշխատել են գերազանցապես Տեքստիլ կոմ-

[1] *ՀՀ ԱԱ ՇՏԲԱ, ֆ. 2, ց. 2, գ. 641:*

բինատում և կարի ու կոշիկի գործարաններում, իսկ մսագործները և երշիկագործները բնակեցվել են հիմնականում Մսի կոմբինատի բանավանում: Այսինքն՝ հայրենադարձների բնակեցման հարցում ինչ-որ չափով հաշվի է առնվել նաև նրանց մասնագիտությունը:

1946-1947թթ. հայրենադարձությունը Հայաստան ընդհանուր առմամբ ուներ կազմակերպված բնույթ, դա խորհրդային իշխանությունների կողմից այդ ժամանակաշրջանում տարվող ժողովրդագրական ու սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր բաղադրամասերից մեկն էր:

Գայանե ՇԱԳՈՅԱՆ (ԻԱԷ)

ГОРОД КАК РАЙ И РАЙ КАК ГОРОД (о некоторых восприятиях Гюмри до и после землетрясения)

«Если будущее кажется непостижимым или тусклым,
прошлое, как правило тоже оказывается необъяснимым или пустым:
оба образа сосуществуют вместе, надежда соседствует с ностальгией»[1].

Любая катастрофа в той или иной мере порождает мифологический образ Апокалипсиса. Не лишено этого образа и Спитакское землетрясение[2], которое часто сравнивали с концом света[3], с адом[4] или мифологическим драконом (вишапом)[5]. В представлении поколения, которое не видело этой катастрофы, последняя воплощает соединение всех стихийных[6], искусственных[1] бедствий, является также

---

[1] *К. Линч, Образ города , М., 1982, стр. 180.*

[2] *С целью изучения восприятия поколения, не видевшего спитакское землетрясение, в старших классах трех школ: 4-й, 10-й и Ахурянской 1-й средней школы были проведены сочинения на тему: «Что я знаю о землетрясении 1988 года». Тем же школьникам было задано домашнее задание написать сочинение на близкую тему: «Что случилось 7 декабря 1988 года», с целью выявления различий семейного дискурса землетрясения и непосредственного восприятия школьников. Пользуясь возможностью, хочу выразить глубокую благодарность дирекции и преподавательскому составу указанных школ за оказанное содействие при проведении указанных сочинений.*

[3] *В школьных сочинениях момент землетрясения часто описывается клишированным словосочетанием: «время остановилось».*

[4] *Ср. например название фильма о землетрясении А. Невзорова «Семь дней ада».*

[5] *Такое описание землетрясения часто встречаемая метафора в упомянутых школьных сочинениях. Наряду с вишапом, землетрясение в сочинениях описывается также как: «алчный зверь», «хищный зверь, пожирающий город и людей», «зверь», – а также «землетрясение поставило на колени целый город» (ср. с образом антропоморфного врага).*

[6] *Ср. отрывок из сочинения девятиклассника Х школы: «Во время землетрясения небо покрылось тучами, подул сильный ветер, здания и деревья стали раскачиваться, задрожала земля... и все это всего за сорок секунд» (ср. 40 дней потопа – Быт. 7:17). А в другом сочинении говорится о распространившейся эпидемии, которой на самом деле не было. ПЭМ, Гюмри, 2006.*

корнем социального зла[2]. Вопрос о причине возникновения землетрясения, помимо ожиданий получить различные мифологические или научные объяснения, часто задается как эмоционально-риторический. Именно в такой тональности большей частью ставился этот вопрос в школьных сочинениях[3], так он звучит на эпитафиях могильных плит жертв землетрясения[4]. Эмоциональная окраска вопроса «почему?» предполагает фон беззаботного счастливого идеального города, почти рая, который был внезапно потерян, и его жители оказались в аду. Внезапность, неожиданность, «беспричинность» случившегося, видимо, сильнее всего воздействовали на формирование психологической травмы, которая передалась следующему поколению[5]. Образ «потерянного рая» сопутствует описаниям города до землетрясения почти во всех школьных сочинениях. Состояния «до» и «после» начинают противопоставляться во всем. Так, несмотря на то, что утро 7-го декабря 1988 г. на самом деле было туманным (из-за чего появление длительного тумана, кстати, до сих пор вызывает панику у людей, воспринимающих это природное явление как примету землетрясения), во многих сочинениях описывается как яркое, солнечное, теплое. Город «до» в то утро представляется абсолютно беззаботным и счастливым, живущим своим обычным ритмом: «Все шли на работу, дети – в школы и детские сады»[6]. Хотя на самом деле далеко не все было таким идеальным и счастливым. В тот год Армения переживала стадию митинговой борьбы за Нагорный Карабах, друг за другом следовали эшелоны беженцев, в Ереване был объявлен комендантский час, да и в Гюмри все жили в большом напряжении. В

---

[1] *Ср. отрывок из сочинения девятиклассника X школы: «Не знаю, правильно ли выражаю свою мысль, но я слышал, что это землетрясение не было естественным бедствием, а результатом взрывов атомных оружий, поскольку землетрясения распространяются по радиусу, а в данном случае распространение волны шло по прямой линии. А еще говорят, что может быть землетрясение было слабой силы и резонировалось подрывом атомных оружий». ПЭМ, Гюмри, 2006.*

[2] *Ср. отрывок из сочинения десятиклассника гюмрийской IV школы: «Однажды я спросил у своего дяди почему у него хриплый голос? И он мне рассказал, что во время землетрясения остался под панелями обвалившегося здания и ровно сутки оставался без воды, без пищи, беспрерывно зовя на помощь. От этого крика он навсегда сорвал голос. ПЭМ, Гюмри, 2006.*

[3] *Ср. из школьных сочинений: «Что это было: стихийное бедствие или божья кара?» ПЭМ, Гюмри, 2006.*

[4] *На одном из могильных плит портрет девочки, казалось действительно задает вопрос «почему», и только одно это слово было выведено рядом с ним.*

[5] *Из школьных сочинений: «Думаю, что боль землетрясения нам передалась генетически. Хотя нас тогда еще не было, но мы переживаем ее так, как будто сами видели эти ужасы». – ПЭМ, Гюмри, 2006.*

[6] *Из школьных сочинений, ПЭМ, Гюмри, 2006.*

первое после землетрясения время, некоторые даже считали, что именно социальное напряжение пробудило тектонические силы города.[1] Теперь же, спустя 17 лет, город «до» приобрел облик беззаботной идиллии. Более того, этому «до» стали приписывать свойства идеального города, которые могли возникнуть лишь в современном дискурсе. Например, ставший приоритетным в концепции развития современной Армении туризм в школьных сочинениях неожиданно стал фигурировать как «известная черта» Ленинакана: «Сюда съезжались туристы со всего света и все поражались красоте нашего города».[2] Любопытно, что в этот миф стал верить и мэр Гюмри, который в фильме «Гюмри: старый и новый» заявляет: «В Ленинакане был развит туризм, все было в нашем городе...» Конечно, туристов в Ленинакане было не больше, чем в любом другом советском городе, и они в основном были из других советских республик или стран, что, как известно, не отражало реального туристического спроса.

Итак, согласно школьным сочинениям, в городе «до» было все, что не хватает городу «после»: чистота, красота, туристы... В домашних сочинениях, написанных теми же школьниками, но на этот раз с помощью родителей, образ идеального города «до» получает иную важную черту-идеальный город индустриальный, это город, где у всех была работа. Так возникает существенное расхождение в оценке Ленинакана между официальными властями, которые даже в самых смелых мечтах не представляют восстановления индустриального потенциала Ленинакана, и обычными жителями, для которых в условиях тотальной безработицы именно рабочие места являются необходимым атрибутом идеального поселения.[3]

С другой стороны, все ассоциации и воспоминания, которые вызывает землетрясение, воспринимаются как элементы антигорода, и реальное развитие Гюмри во многом направлено на «борьбу» с этими ассоциациями. Так, пыль, которая как туман окутала город после землетрясения, стала одним из наиболее устойчивых характеристик города «после». Один из школьников попытался по-своему осмыслить этот «туман»: «Город стал неузнаваемым, можно было сойти с ума, и неслучайно в воздухе был заметен странный желтый туман. Я же добавлю, что это был не туман, а какое-то воздушное

---

[1] *Дневниковые записи автора, Гюмри, 1989.*

[2] *Из школьных сочинений, ПЭМ, Гюмри, 2006.*

[3] *Ср. Заметки Джонатана Стила: «Даже в Гюмри последствия землетрясения забываются на фоне мрачной картины безработицы, охватившей 60 процентов населения. Во времена СССР здесь было 46 предприятий, обслуживавших огромную советскую систему централизованного планирования. Сегодня работает всего два, и то не на полную мощность». – www.inosmi.ru*

лекарство, которое, дубя человеческий мозг, не позволял ему сойти с ума»[1]. На борьбу с пылью были направлены особые мероприятия муниципалитета, и город в 2006 г. получил специальные машины-пылесосы из Франции. С материальной и духовной грязью разрушенного города борется и авангардист АЗАТ, акция которого заключалась в подметании улиц Гюмри[2].

Таким образом, если городу «до» приписывается то, к чему он стремится сегодня, то для развития города в будущем становится необходимостью изьять любое напоминание землетрясения: руины, домики, пыль, грязь. «Светлое будущее» города молодое поколение представляет как возврат старого «до». В самых оптимистических указанных школьных сочинениях будущий Гюмри такой же прекрасный как Ленинакан, но не более. Кажется странным, что ни один из школьников не представляет потенциальный город лучше старого. Трудно сказать, что сыграло роль в такой оценке: пессимизм, реализм или идеализм, с которым новое поколение относится к старому городу? Во всяком случае недавно утвержденный генплан развития Гюмри также не предполагает увеличение его населения больше отметки, которая была на момент землетрясения. Масштаб будущего Гюмри (до 200000человек) даже немного отстает от масштаба Ленинакана 1988 г.. [3]

Свое представление о соотношении городов «до» и «после» на I-ом биеннале достаточно наглядно изобразил гюмрийский скульптор Завен Коштоян, во время перформанса «Из рая в ад». Город «до» представлен в виде живого многолетнего дерева[4], ствол которого украшен скульптурами традиционных городских персонажей, художник расположившись под кроной этого дерева, так описывает свои ощущения: «Этот мир был раем, и я, как многие, лежал под Деревом, когда рай рухнул. Все встали на ноги и пошли разными путями, чтобы вновь обрести нашу потерю». Художник инсталлирует этот путь, босиком проходя дорожку от своих детских воспоминаний старых гюмрийских образов (от сделанного им дерева) через постземлетрясенческую свалку строительного мусора к молодому саженцу, который он посадил в конце пути, пытаясь таким образом сотворить новый рай, новый город.

---

[1] *ПЭМ, Гюмри, 2006.*

[2] *См. фильм телевидения «Ширак» о первом гюмрийском биеннале.*

[3] ПЭМ, Ер., 2006.

[4] *Отметим, что армянское слово, обозначающее рай (драхт) – заимствование с пехлевийского, буквально означает дерево.–см. Гр. Ачарян, Этимологический коренной словарь армянского языка, Т. I, стр. 690-691.*

«Городом отдает» и авангардистское «Дерево желаний», собранное в основном из строительной арматуры бывших зданий и поставленное во время гюмрийского биеннале на площади перед административным центром области (*марзпетараном*). Инсталляция этого дерева завершилась привязыванием к «магическому» дереву рубашек с надписью: «вера», «надежда», «любовь». Настроение возрождения, созданное этим художественным актом побудило одного из участников перформанса неподалеку посадить живое дерево, после чего пошел дождь и, как заметили участники: «Небо приняло священнодействие».[1]

Միհրան ԳԱԼՍՏՅԱՆ (*ՀԱԻ*)

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԱՐԴԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Շիրակի մարզի բնակչության շրջանում 1987թ. իրականացված և այնուհետև հարցաթերթում տեղ գտած որոշ փոփոխություններով 2005թ. կրկնված էթնոսոցիոլոգիական հետազոտություններից ստացված համեմատական վիճակագրական տվյալները հնարավորություն են տալիս բացահայտելու ինչպես հանրապետության համար ընդհանուր, այնպես էլ մարզի կտրվածքով աշխատանքային միգրացիայի առանձնահատուկ զարգացման միտումները:[2] Առկա վիճակագրական տվյալները փաստում են, որ ինչպես խորհրդային շրջանում, անպես էլ 1990-ական թվականներից հետո, մյուս մարզերի հետ համեմատած, Շիրակը առանձնանում է բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերի բարձր տեմպերով, և այդ տվյալները գերազանցել են հանրապետական միջին ցուցանիշները: Այսպես, 1980-ական թվականներին ՀԽՍՀ-ից, ոչ ամբողջական վիճակագրական տվյալներով, ամեն տարի արտագնացությանը մասնակցել է 25-30 հազ. մարդ,[3] իսկ որոշ հաշվարկներով՝ շուրջ 40հազ. մարդ, որից 7694-ը՝ Շիրակի պատմաազգագրական շրջանից:[4]Միգրանտների տեսակարար կշիռը Շիրակի ամբողջ բնակչության թվաքանակում

---

[1] *См. фильм телевидения «Ширак»: «Гюмрийский биеннале», Гюмри, 1998.*

[2] *Հետազոտությունը 2005թ. իրականացվել է Եվրասիա հիմնադրամի ծրագիր հանդիսացող և Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի կողմից ֆինանսավորվող Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ (ՀՌԿԿ)-Հայաստան կենտրոնի հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:*

[3] *О полноте учета миграции населения Армянской ССР, ЦСУ Армянской ССР, N 12.11- 1, 19. 01. 1984г, ինչպես նաև՝ М. Галстян, Современное отходничество в Армянской ССР, автореферат канд. диссертации, Ер., 1990, стр. 5.*

[4] *Сводные итоги выехавших на сезонную работу. ЦСУ Армянской ССР, по данным 01.01 1983г.; ինչպես նաև՝ Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, Եր., 2001, էջ 254:*

կազմել էր 25.8%:[1] Հայաստանի անկախացումից հետո հանրապետության բնակչության աշխատանքային միգրացիան ընդհանուր առմամբ պայմանավորված էր հանրապետությունում սկիզբ առած և հետզհետե խորացող տնտեսական ճգնաժամի գործոնով: Մինչդեռ Շիրակի մարզը ոչ միայն հանդիսացավ դրա անմիջական կրողը, այլև այդ գործընթացները առավել խորացան երկրաշարժի և մարզում ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքներով, որի արդյունքում բնակչության շրջանում աշխատանքային միգրացիայի տեմպերը ընդունեցին առավել զանգվածային բնույթ: Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքներով՝ վերջին երեք տարիներին Շիրակի մարզի յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսությունն ընդգրկված է աշխատանքային միգրացիայի գործընթացում[2], ընդ որում՝ ընտանիքների 18.4%-ը ունեցել է երկու,7.3%-ը՝ երեք կամ ավելի աշխատանքային միգրանտներ: Եթե խորհրդային տարիներին մարզից արտագնացության մասնակիցները հիմնականում գյուղաբնակներ էին, ապա ներկա պայմաններում այդ երևույթը լայն տարածում է գտել նաև քաղաքային բնակավայրերում: Դա մեծ մասամբ պայմանավորված էր ոչ միայն երկրաշարժի պատճառով հիմնականում քաղաքներում կենտրոնացված արդյունաբերական ձեռնարկությունների ոչնչացմամբ, այլև մարզի առանձին քաղաքային բնակավայրերի կարգավիճակի փոփոխությամբ, որտեղ նաև չկային գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու պայմաններ: Որոշակի փոփոխություններ են նկատվում նաև աշխատանքային միգրանտների սեռատարիքային կազմում: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ 95.1% տնային տնտեսություններում աշխատանքային միգրացիային մասնակցում են տղամարդիկ, իսկ 4.9% տնտեսություններում՝ կանայք: Կանանց մասնակցությունը այդ գործընթացին արձանագրում է հայկական ընտանիքում նրանց կարգավիճակում և դերում տեղի ունեցած փոփոխությունները, քանի որ ավանդաբար այդ աշխատանքներով հիմնականում զբաղվել է տան տղամարդը: Աշխատանքային միգրացիոն գործընթացներում առավել ընդգրկված է 30-44 տարիքային խումբը, որի ներկայացվածությունը նրանց շրջանում կազմել է 38.3%, այնուհետև՝ 45-60 և բարձր տարիքային խումբը՝ 31.2%, իսկ 16-29 տարիքային խումբը՝ 30.5%: Միգրանտների գերակշռող մեծամասնությունն ակտիվ աշխատունակ տարիքի ներկայացուցիչներ են, որոնց աշխատուժը իրացվում է մարզից դուրս՝ ստեղծելով բազմաթիվ նյութական և հոգևոր բարիքներ: 16-29 և 30-44 տարիքային խմբերն ունեն նաև ակտիվ վերարտադրողունակ վարքագիծ և կարող են

---

[1] *Հաշվարկները կատարվել են Сводные итоги выехавших на сезонную работу. ЦСУ Армянской ССР, по данным 01.01 1983г. տվյալների հիման վրա:.*

[2] *Շիրակի մարզում աշխատանքային միգրացիայի բարձր տեմպերի մասին վկայում են նաև «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի կողմից կատարված հետազոտության տվյալները,Եր., 2005, էջ 28:*

կարևոր դերակատարում ունենալ մարզի բնակչության ժողովրդագրական իրավիճակի բարելավման վրա:

Անդրադառնանք նաև մարզից աշխատանքային միգրացիայի մեկնելու դրդապատճառներին: «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին 1987թ. մասնակիցների 39%-ը պատասխանել է՝ արտագնա աշխատանքի վայրում ավելի բարձր գումար վաստակելու հնարավորությունը, 29.3%-ը՝ տեղում համապատասխան աշխատանքի բացակայությունը, 21.6%-ը՝ ընտանիքում մեծ ծախսեր (բնակարանի կառուցում, հարսանիք, օժիտ, ավտոմեքենա և այլն) կատարելու համար փողի ձեռքբերումը: Այդ հարցի վերաբերյալ 2005թ. հարցման մասնակիցների պատասխանները բաշխվել են հետևյալ ձևով.

Աշխատանքային միգրացիայի մեկնելու հիմնական դրդապատճառները (%-ով)	
Տեղում աշխատանքի բացակայությունը	36.6
Ցածր աշխատավարձը, որը չէր բավականացնում նորմալ ապրելու համար	37.1
Մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը	5.7
Գործարարությամբ զբաղվելու համար պայմանների բացակայությունը	19.1
Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը	1.0
Իրավական անպաշտպանվածությունը	0.5
Ընդամենը	100.0

Աղյուսակի տվյալները վկայում են, որ աշխատանքային միգրացիան առաջին հերթին մարզում կապված է աշխատանքի բացակայության հիմնախնդրի հետ, որը հարցվածների շրջանում կազմել է 78.8%: Այդ թվում՝ մասնակիցների 37.1%-ը որպես վճռորոշ դրդապատճառ համարել է տեղում բավարար եկամուտ ապահովող աշխատանքի, 36.6%-ը՝ տեղում ընդհանրապես աշխատանք չունենալու, իսկ 5.7 %-ը՝ մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը:

Հարցվածների 19.1%-ը, որպես միգրացիայի կարևոր գործոն, համարել են գործարարությամբ զբաղվելու համար Հայաստանում համապատասխան պայմանների բացակայությունը: Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ փոխվել են նաև միգրանտների սոցիալ-մասնագիտական կազմը և զբաղվածության ոլորտները: Ըստ հետազոտության արդյունքների՝ խորհրդային տարիներին մարզից մեկնող արտագնացների 58%-ը ոչ ինդուստրիալ (ծեփագործ, հյուսն, ատաղձագործ, պատշար և այլն) և 30%-ը ինդուստրիալ (մեխանիզատոր, վարորդ, էլեկտրիկ և այլն) որակավորում ունեցող ֆիզիկական աշխատողներ էին, որոնցից յուրաքանչյուրը տիրապետում էր 2-3 մասնագիտությունների, և շատ ցածր էր ծառայողների և բարձր որակավորում ունեցող մտավոր աշխատանքով զբաղվողների թվաքանակը: Մինչդեռ 1990-ական թվականներից հետո, հետազոտության արդյունքներով, կտրուկ ավելացել է բարձրագույն կրթություն ունեցողների թիվը՝ 22.8%, ովքեր նախկինում չեն ունեցել նման փորձ, և մինչև արտագնացության մեկնելը նրանց որոշ մասը զբաղված է եղել գիտության, կրթության, մշակույթի, արդյունաբերության ոլորտներում: Ինչ վե-

ռաբերում է մուտքի երկրներում աշխատանքային միգրանտների զբաղվածությանը, գերակայողը և՛ նախկինում, և՛ ներկայումս մնում են շինարարության և վերանորոգման աշխատանքները՝ 80.1%, նրանց միայն 10.2%-ն է ընդգրկված եղել սպասարկման, 3.9%-ը՝ առևտրի, 3.0%-ը արդյունաբերության, իսկ 2.9%-ը՝ գյուղատնտեսության ոլորտներում:

1960-ական թվականներից սկսած՝ Շիրակից շինարարական բրիգադների և նրանց սերունդների գերակշռող մեծամասնությունը հիմնականում աշխատանքի է մեկնում Ռուսաստան, և տեղի իշխանությունների հետ ունեցած կապերը, այդ վայրերում աշխատանքային փորձը մեր օրերում համարվում են կարևոր գործոն մարզից աշխատանքային միգրացիայի ուղղության համար: 2005թ. հարցման արդյունքներով՝ որպես ամենագրավիչ երկիր շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը, և մարզի միգրանտների 84.2%-ի համար այն ունի որոշակի ձգող պայմաններ: Դրանք առաջին հերթին պայմանավորված են ՌԴ աշխատաշուկայում ազատ աշխատատեղերի առկայության,[1] կարճ ժամկետներում բարձր եկամուտների ձեռքբերման, ՌԴ-ի վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածության և այնտեղ հասնելու մատչելիության, լեզվական արգելքների բացակայության և ՌԴ-ում շուրջ 1.5 միլիոնանոց հայկական համայնքի առկայության գործոններով: Միգրանտների 6.1%-ը աշխատանքի էր մեկնել ԱՊՀ մյուս երկրներ՝ հատկապես Ուկրաինա և Ղազախստան: 1990-ական թվականներից հետո ընդլայնվել են արտագնացության աշխարհագրական սահմանները. 2.5%-ը աշխատանքի է մեկնել Լեհաստան, 2.3%-ը Գերմանիա, 1.4%-ը՝ Հոլանդիա, 1.3-ը՝ ԱՄՆ, 0.7%-ը՝ Հունաստան, 0.7%-ը՝ Բելգիա և այլն: Այն հարցին՝ «Հատկապես ինչու՞ է ընտրել այդ երկիրը», պատասխաններից կարելի է եզրակացնել, որ այդ հարցում դեռևս էական դեր չեն կատարում Հայաստանում և արտերկրում գործող աշխատանքի տեղավորման գործակալությունները, և մարզից աշխատանքային միգրացիայի կարևոր մեխանիզմ դեռևս մնում են ոչ ֆորմալ միջանձային հարաբերությունները՝ ազգակցական, բարեկամական, ընկերական և դրացիական կապերը, որոնց անմիջական օգնությամբ հարցվածների 82.4%-ը մեկնում է հանրապետությունից դուրս աշխատանքի: Աշխատանքային միգրացիայի մեկնելու այդ մեխանիզմը համարվում է նաև շղթայական արտագաղթի ձևավորման կարևոր աղբյուր և կանխորոշում է մարզից դուրս նրա բնակչության միգրացիոն ուղվածությունը: Դրա հետևանքով մարզի յուրաքանչյուր բնակավայր հանրապետությունից դուրս՝ հատկապես ՌԴ-ում, ձևավորում է իր «նոր համայնքները», քանի որ այնտեղ հաճախ ձեռք են բերում նաև քաղաքացիություն: Օրինակ, Ազատան գյուղից տարիներ շարունակ արտագնա

[1] *Տնտեսական վիճակագրությունը փաստում է, որ 2001թ. ՌԴ-ում ձեռնարկությունների 27%-ն ունեցել է աշխատուժի դեֆիցիտ: Տե՛ս Кавказ-Россия: Миграция легальная и нелегальная, Ер., 2004, стр. 10.*

աշխատանքի են մեկնում Սախա-Յակուտիայի Հանրապետություն, և միայն 2004թ. 87 միգրանտներ մշտական բնակության նպատակով այնտեղ են տեղափոխել նաև իրենց ընտանիքները, սակայն նրանց մեծ մասը գյուղի գրանցումից դուրս չի եկել և գյուղում չի վաճառել տները: Փոխվել են նաև աշխատանքային միգրացիայի տևողության ժամկետները: Նախկինում այն կրում էր խիստ սեզոնային բնույթ, և միգրանտները արտագնացության էին մեկնում վաղ գարնանը, վերադառնում ուշ աշնանը: Ներկա պայմաններում այդ ժամկետները երբեմն չեն պահպանվում, և հետազոտության արդյունքներով նրանց շուրջ մեկ քառորդը մեկ տարուց ավելի գտնվում էր հանրապետությունից դուրս:

Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ աշխատանքային տեղաշարժերը դարձել են մարզի բնակչության եկամուտների գոյացման կարևոր աղբյուր և աղքատության դիմակայության ռազմավարություն:Հարցման մասնակիցներին տրված«Որո՞նք են Ձեր տնտեսության եկամտի հիմնական աղբյուրները» հարցի պատասխաններից պարզ է դառնում. Հարցվածների շուրջ մեկ երրորդը միգրացիոն գործունեությունից ստացված գումարները համարել է տնտեսության եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր: Միգրանտների միջին ամսական եկամուտները կազմել են 350-600 ԱՄՆ դոլար: Խորհրդային շրջանում, եթե ձեռք բերված այդ գումարները հիմնականում ուղղվում էին բնակարանի կառուցման, հարսանիքի, օժիտի և երկարատև օգտագործման այլ առարկաների ձեռքբերման, ապա 2005թ. հետազոտության արդյունքներով՝ հարցվածների 34.7%-ը դրանով միայն հոգում է ընտանիքի առաջնային կարիքները՝ սննդի, հագուստի ձեռքբերման և ընթացիկ այլ ծախսերը, իսկ 24.6%-ը՝ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ծախսերը: Արտագնացների ընտանիքների կողմից դեռևս այդ գումարների միայն չնչին մասն է՝ 4.7%-ը, ներդրվում նոր արտադրության միջոցների ձեռքբերման և փոքր ու միջին բիզնեսի զարգացման ոլորտներում: Աշխատանքային միգրանտների որոշ մասը մարզի գյուղական մի շարք բնակավայրերում զբաղվում է նաև բարեգործությամբ: Այսպես, օրինակ՝ Սախա-Յակուտիայի Հանրապետությունում գտնվող հարուստ համագյուղացիները ֆինանսավորել են Ազատան գյուղի եկեղեցու, դպրոցի, խմելու ջրի խողովակաշարի և ճանապարհների վերանորոգումը, ինչպես նաև գյուղի զարգացման հիմնադրամին նվիրել են 36մլն դրամ:

Աշխատանքային միգրացիան մարզային, համայնքային, անհատական մակարդակներով ունենում է տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և մշակութային լուրջ հետևանքներ, այն հատկապես՝ մարտահրավեր է հայ ընտանիքի ամրությանը:

Карине СААКЯН (ШЦАИ)
Карине ГАЛОЯН (ВНИИТЭ)

НОВЫЙ БРЕНД ГЮМРИ КАК ФОРМА ПРЕОДОЛЕНИЯ КОМПЛЕКСА ИОВА БЛАЖЕННОГО

"… и Господь принял Иова. И возвратил Господь потерю Иова, … и дал Господь Иову вдвое больше того, что он имел прежде…. И благословил Бог последние дни Иова более нежели прежние. …После того Иов жил сто сорок лет, и видел сыновей своих и сыновей сыновних до четвертого рода…"

Библия. Ветхий завет. Книга Иова, гл. 46.

История вопроса с точки зрения брэндинга:

Исторически сложилось так, что в сознании окружающего мира наряду с армянским коньяком и библейской горой Арарат, брэндом армянского народа стал геноцид 1915-ого года, а брэндом города Гюмри (бывший Ленинакан) страшное землетрясение 1988 года.

В психологию же применительно к армянской и в особенности Гюмрийско-Ленинаканской ментальности, в устный оборот, вошёл термин "комплекс Иова"–извечного библейского страдальца неспособного выйти за пределы заколдованного круга своих переживаний с соответствующими негативными последствиями для себя, для настоящего и будущих поколений потомков, которые продолжат жить в зоне бедствия. При этом основной задачей специалистов занимающихся психологической реабилитацией людей переживших катастрофу является не только их *выход* из *ահեղ ակնթարթը – ужасного мгновения парализующей катастрофы*, полностью поглотившей человека и лишившей его адекватного восприятия времени в пространстве своей жизни, но и *обретение* этими людьми способности видеть свои реальные жизненные перспективы в состоянии свободном от деструктивных фиксаций деформированного сознания жертвы, а также умения самостоятельно преодолевать, освобождаться и жить дальше с надеждой–осознанием своей силы и позитивным видением себя, своего будущего и будущего своих детей. *Исследуя пережитый опыт преодоления катастрофы в сознании Гюмрийцев и жителей Ширакской области на стыке брэндинга и этно-психологии, авторы статьи видят своей задачей обозначение узловых моментов на пути воссоздания прежней идентичности – до землетрясения, и создания на её базе обновлённой или новой идентичности и образа выражающихся через новый брэнд, т.е. восприятия города Гюмри окружающим миром и самовосприятия его жителей теперь уже свободных от*

комплекса Иова многострадального, причём вопрос самовосприятия носителей брэнда первичен по отношению к самому брэнду города. Именно эта задача, по мнению авторов, и формирует актуальность данной публикации.

Определения брэнгита:

В настоящее время по причине многогранности и многофункциональности брэнда теория брэндинга предлагает различные, дополняющие друг друга определения брэнда. Большинство из них (на примере брэнда Гюмри) можно свести к следующему: ***Являясь в первую очередь понятием экономическим, брэнд (brand–клеймо (англ.) прежде всего это имя, за которым находятся материальный и духовный миры его носителя (населения Гюмри), со своими отличительными и уникальными ценностями, выделяющими и делающими его мгновенно узнаваемым, принимаемым или отвергаемым на фоне других городов как Армении, так и за её пределами. И какой бы ни оказалась реакция на брэнд (брэнд Гюмри) со стороны его аудитории, будь-то равнодушие или отрицательная реакция (в нашем случае Гюмри пока вызывает ассоциативную связь только с зоной бедствия), она является первым признаком того, что брэнд как положительная, жизнеутверждающая ассоциация не состоялся, или пока не состоялся, и требует активного и грамотного брэнд-менеджмента, соответствующих действий со стороны носителя брэнда (совместных, скоординированных действий руководства и населения Гюмри), т.е. целевого продвижения брэнда города к своей аудитории, целевой группе или рыночной нише, исходя из имеющихся целей и задач.***

Новые реалии брэнда:

Объектом построения любого ***брэнда*** **является** ***пространство мысли брэнда*** **как его** ***идейная составляющая*****. Пространство мысли брэнда предполагает наличие множества собственных мыслительных пространств:** ***экономическое, маркетинговое, социальное, политическое, творческое, психологическое, философское, культурное, духовное*** **и др.. Каждое пространство использует свои профессиональные методы и подходы для решения своих внутридисциплинарных задач. Теоретическая база брэндинга сегодня оперирует пока только на уровне междисциплинарных рассуждений внутри и на стыке каждого из его пространств, а действительная ценность зарождающихся понятий и терминов апробируется непосредственно во времени и пространстве рыночного взаимодействия между носителями брэнда – самим брэндом** ***(в нашем случае Гюмри и его жители)*** **и его аудиторией (*****окружающим миром*****). При этом функциональная значимость этих новых понятий и терминов выражается прежде всего их** ***реаль-***

ным влиянием на рыночную стоимость конкретного брэнда в сторону его удорожания (т.е. повышения качества жизни его носителей – гюмрийцев)*, поскольку брэнд, как уже говорилось выше, прежде всего понятие сугубо экономическое, хотя и является объектом исследования многих, на первый взгляд не связанных ни с экономикой, ни между собой, научных дисциплин. Здесь важно отметить, что *все исследуемые пространства мысли брэнда соподчинены этой главной первопричине и цели его существования – рыночной стоимости брэнда, его конкурентноспособности.

У каждого из мыслительных пространств брэнда своя задача в отношении своего брэнда. Поэтому естественно, логично и целесообразно полагать, что каждое пространство обладает своей собственной логикой мышления, и основной задачей брэнд-менеджмента является суммирование, синтез результатов этих логик в единое брэнд-послание потребителю. И в нашем случае важно определиться с тем, что есть послание брэнда Гюмри, что говорит это имя окружающему миру: "Смотрите что с нами случилось. Жизнь страшна и ужасна! Выхода нет!" или "Не смотря даже на самое страшное, всё преодолимо и всегда есть реальная надежда на лучшее будущее!".

Тео-логика и этно-графика в пространстве мысли брэнда:

Одна из основных задач исследования *"Тео-логика и этно-графика брэнда"* направлена на то, чтобы определить место и логику духовного пространства брэнда в едином брэнд-послании в контексте новых понятий *тео-брэнд, этно-брэнд, тео-логика* и *этно-графика брэнда,* определить степень их инновационности как реальную предпосылку вероятной экономической, а также общественно полезной отдачи вне сферы прямого влияния рынка, показать ожидаемый результат от целенаправленных инвестиций для практической реализации функций предлагаемых понятий.

***Этно-брэнд* – это брэнд образованный с максимальным учётом всех аспектов этнического и культурологического мышления, его мироощущения, мировоззрения, взаимоотношений и поведенческих мотиваций, т.е. всего комплекса его "этно-образующих" компонентов согласно запросам целевой аудитории или рынка.**

***Этно-графика брэнда*–это совокупность всех аспектов этно-брэнда, его описательная линия–графика, содержание и форма, выраженным образом присущая самому брэнду по которой чётко просматриваются и узнаются визуальные, вербальные, ментальные, поведенческие, культурные, исторические и др. составляющие этно-брэнда.**

***Тео-брэнд* –это ценности, образ мышления, поведенческие реакции опосредованно внушённые носителям этно-брэнда через его кол-**

лективный или личный, реальный или номинальный и почти всегда генетический религиозный опыт выраженный в любой деятельности этно-брэнда, кроме конкретно религиозной.

Тео-логика брэнда **– маркетинговое выражение ценностей, образа мышления, поведенческих реакций носителей этно-брэнда, всей логики их жизни, её сути и смысла отражённое реальной рыночной стоимости материальных и нематериальных активов этно-брэнда.** ***Аутентичность и уникальность этно-брэнда определяется его тождеством своему тео-брэнду, его тео-логическому наполнению, по сути – этно-брэнд и тео-брэнд, должны взаимно коррелироваться.***

Брэнд и его роль в актуализации вопроса:

Гюмри–это прежде всего имя. А имя–это традиция, наследство, уверенность и безопасность. Имя – это брэнд. Относительно *традиции* и *наследства* в имени, т.е. в брэнде Гюмри сомнений быть не может, отсутствие *уверенности* и *безопасности* в зоне бедствия даже через два десятка лет после катастрофы не вызывает сомнений, и является основной точкой Пересечения усилий брэндинга, этно-брэндинга, психологии, психотерапии и этно-психологии.

Исследование *этно-брэнда Гюмри* в контексте его последовательного рассмотрения через призму новых терминов *тео-логика* и *этно-графика* брэнда, способно проявить, обозначить и определить составляющие его постоянные и неизменные величины – *этно-психологические брэнд-константы* лежащие в основе духовного измерения брэнда, такие как *любовь, доброта, игра, красота, власть, долг, свобода, воля, истина, смысл, жизнь, самовыражение,* способные раскодировать, проявить и определить ценности материальных и не материальных активы этого брэнда независимо от жизненных условий, обстоятельств и цивилизационных процессов, среди которых ему приходится не только сохранять себя, но и неизбежно развивать себя с учётом необходимости возвращения ранее утерянных позиций и выхода на новые позиции в любой области своего духовного и материального жизненного пространства. Эти брэнд-константы способны задать или обозначить *миссию (послание) брэнда Гюмри,* его *цель, значение* и *предназначение*. Эти константы способны определить его *суть, смысл, содержание* и *форму этно-брэнда*, т.е. позволят носителям этно-брэнда не только наследовать его от предыдущих поколений носителей, но и заново овладевать им, научиться им управлять, изменять и развивать его в любом из выбранных направлений.

Согласно вышеизложенном,у этно-графичность брэнда содержит в себе принцип принадлежности, а значит и уверенности, где сопричастность его носителей к брэнду и друг другу – это защита “по

горизонтали". Прочтение брэнда здесь осуществляется буквальное и эмоциональное, т.е. по форме и содержанию.

Тео-логичность брэнда содержит в себе принцип безопасности, т.е. надёжность – прикрытие "по вертикали", сопричастность к вере предков, традициям, символике, национальным праздникам и т.д., что определяет метафорическое и духовное прочтение брэнда, т.е. по смыслу и сути. При этом необходимо учесть важность взаимной корреляции этно-брэнда и тео-брэнда Гюмри, при которой акцентуация силы этого брэнда через его этно-графические и тео-логические составляющие заметно возрастёт.

<u>История вопроса с точки этно-психологии:</u>

"Ничего не помню о времени после землетрясения, я всё ещё там, до этой катастрофы. То что должна была прожить – не прожила, не узнала что это такое, мы нитями души привязаны к этому ужасному мгновению катастрофы… Этот день длился бесконечно долго… В этот день раздавали хлеб населению, я вспомнила запах хлеба который пекла моя бабушка, с болью вспоминаю этот запах – запах ушедший навсегда. Моя тетя погибла в этом землетрясении, а я вместо того чтобы искать её на рабочем месте, всё смотрела на часы и думала, что вот пройдёт время и она придёт. Я всё складывала часы 5, 6,7…Мне казалось, если победить время,то тётя возвратится." Время "до землетрясения" ещё длиться в сознании опрошенной женщины.

Время после бедствия, когда согласно мнению людей происходили эти события, "прибит" ли человек к этому событию, постоянно вспоминает, помнит, проговаривает или преодолел.

- Что надо сделать чтобы вывести человека из этого состояния, чтобы он не остался прибитым к тому моменту. - Их постоянный пересказ как наложение событий или момент фиксации вобравший в себя всю жизнь. -Поиски психологических путей выхода для всех слоёв населения затронутых землетрясением.- Национальные ритуалы, традиции, обычаи, праздники, как механизм самозащиты, который выводит население из глубокого кризиса.

Коммуникация – общение как феномен.

Особенности выбора средств, формы коммуникации, мотивация выбора. - национальных символов в психокоррекции человека. Чувство безопасности рядом со своими символами.- линия поведения других народов во время стресса. Норд-Ост, Цунами, 11 сентября, стихийные бедствия. - необходимо усилить информационное поле, чтобы человек чувствовал что он не одинок.- научить поведению в экстремальных ситуациях, примирить человека с жизнью.-Активизировать межличностные связи человека, смягчение межличностных отноше-

ний, чтобы он чувствовал себя оценённым и любимым. -Наполнить поле психологических контактов.- Постоянная занятость. -Создание праздников для человека, способ выхода из этого состояния.

Уроки Гюмрийского землетрясения для остального мира человек преодолевает всё, создавая свой новый образ, новый брэнд.

Гюмрийский этно-брэнд в перспективе является одним из самых многообещающих армянских брэндов в контексте его силы, т.е. выживаемости,способности влиять и последующего расширения, что находит своё подтверждение в историчности и опытности его *теологики* и *этно-графики* и порядка ценностей стоящих за ними или закодированных в них. Его проблема – самораскрытие, самопознание, постижение и в первую очередь прочтение себя – раскрытие собственного кода. Всё это является последовательным, неизменным и цельным только в контексте своей собственной культуры, т.е. создания и созидания своих уникальных материального и духовного миров в качестве противопоставления и противостояния глобализации как ценности цивилизационного,потребительского и потребительски подражательного, а не культурного, познавательно-проникающего и осмыслительного порядка. Его задача – сохранение, развитие и саморазвитие в контексте неизбежных цивилизационных изменений ведущих в итоге к окончательной глобализации. Его конечная стратегическая цель-обозначить и занять своё уникальное место, сферы и пределы своего реального тео-логического и этно-графического влияния на рынке как материальных, так и нематериальных активов– продолжить свой жизненный цикл динамично и наступательно.

Елена ВАРДАНЯН (ГПИ)

ГЕНДЕРНОЕ РАВЕНСТВО - ВОСПРИЯТИЕ И ПЕРСПЕКТИВЫ В ГЮМРИ

В новейшей истории Армении тесно переплетаются два политических процесса–становление независимой государственности и демократизация общественных отношений. Их взаимосвязь обусловлена как историческим развитием страны, так и задачами ее интеграции в мировое сообщество. Но в Армении формирование демократического общества осложнено как особенностями, свойственными всей республике, так и проблемами регионального характера. Например, в Гюмри такие последствия экономических и социальных реформ переходного периода, как безработица, миграция и социаль-

ная дифференциация были усугублены последствиями разрушительного землетрясения 1988 года. Кроме того, на процесс общественных преобразований здесь влияет тенденция противопоставления столицы и регионов республики, которая проявляется во все усиливающемся различии финансовых, технических и информационных возможностей. Сложившаяся в 90-е годы ситуация, часто определяемая как экстремальная, во многом сохраняется и теперь. В этих обстоятельствах особое проявление приобретают гендерные проблемы.

В числе гендерных проблем особое место занимают вопросы прав и возможностей женщин, их гражданского и политического участия. В современном мире их актуальность рассматривается не только с точки зрения установления гендерного равноправия, но и в аспекте выявления новых общественных ресурсов, социализации и формирования гражданственности. Актуализация данных проблем в Армении обусловлена тем, что женщины-составляют не только большую часть населения страны, но и электората; -имеют высокий уровень образования и профессиональной подготовки;-в условиях переходного периода достаточно активно участвовали в общественно-политических процессах;-наиболее пострадали от социальных, экономических и духовных последствий реформирования общества. В силу этого,для дальнейшего развития демократических процессов важно определить какова реальная роль женщин в обществе, насколько общественное развитие зависит от женского участия и как это участие может способствовать установлению гендерного равенства.

Рассмотрение гендерных проблем, их восприятия в обществе и перспектив продвижения гендерного равенства на примере Гюмри важно и в историческом, и в социокультурном плане. Их исследование в экстремальных условиях региона предполагает учет следующих положений: - Землетрясение и миграция, изменив возможности и статусы мужчин и женщин, возложили на женщин заботу о детях и семейном очаге; - Условия жизни и быта женщин крайне осложнены последствиями землетрясения – до сих пор более 4 тысяч семей живут в “домиках”; - На женщинах в наибольшей степени отразились последствия социальных и экономических реформ и они составляют как большинство безработных, так и вынужденно изменивших форму трудовой деятельности; - Своим фактически безвозмездным трудом женщины сохранили систему образования, а затем пострадали от ее оптимизации; - Женщины Гюмри, по сравнению с другими регионами республики, наименее представлены в органах власти.

По поводу последнего можно отметить, что в Ширакском марзпетаране число сотрудников женщин составляет около 50% от числа

мужчин, а в целом по Армении подобная низкая представленность характерна только для Ширакского и Гегаркуникского марзов.[1] Назначение в 2007 году марзпета-женщины пока к каким-либо гендерным изменениям в кадровом составе не привело. Что касается органов местного самоуправления, то и здесь отмечается крайне низкая представленность женщин. В руководящем составе мэрий городов Ширакского марза женщины отсутствуют, в составе советов старейшин городов по марзу из 36 человек только одна женщина (в Артике), а в числе сотрудников городских мэрий 204 мужчины и только 85 женщин. Для сравнения отметим, что в Котайкском марзе в числе сотрудников мэрий городов 102 женщины и 115 мужчин, в Сюнике – 60 женщин и 67 мужчин, Гегаркунике – соответственно 55 и 99.[2] Таким образом, можно утверждать, что женщины в Ширакском марзе, как на руководящих должностях, так и в числе рядовых сотрудников, представлены менее, чем в среднем по республике. Однако, такая ситуация не соответствует женским возможностям и их реальному потенциалу.

Для более адекватного представления проблем женского гражданского и политического участия и формирования в обществе гендерной культуры целесообразно обратиться к материалам социологических опросов, проведенных в Гюмри в 2001 году и по республике, включая Гюмри, в 2003, 2004, 2005 гг.

Гендерные проблемы в сфере политики целесообразно рассматривать, исходя из отношения женщин к политике и политическим преобразованиям происходящим в стране. С этой точки зрения интерес представляют ответы респондентов указанных социологических опросов. В какой степени Вы интересуетесь политическими событиями? В % к общему числу ответов

Время проведения опроса	1998 г.	2004 г.			2005 г.		
Варианты ответов / Гр. респондентов	Жен.	Весь опрос	Мужч.	Жен.	Весь опрос	Мужч.	Жен.
Очень интересуюсь	19,5	31,4	37,4	25,4	33,2	41,2	25,2
В целом интересуюсь	55,7	42,3	43,0	41,6	55,8	50,6	61,0
Не особенно интересуюсь	21.0	20.1	13.8	26.4	9.3	6.8	11.8
Совсем не интересуюсь	3.7	6.2	5.8	6.6	1.7	1.4	2.0

Исходя из приведенных данных можно утверждать, что интерес к политике и политическим событиям повышается, причем заметно

[1] *Հայաստանի կանայք և տղամարդիկ. Վիճակագրական գրքույկ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2006, էջ 95:*

[2] *Там же, с. 96.*

возрастание численности “очень интересующихся” как среди мужчин, так и среди женщин и снижение числа “совсем не интересующихся”. При этом если в Ереване “совсем не интересуются” 2,5% опрошенных, то в Гюмри и Ванадзоре – 0,8%.

Интерес к политике отражает заинтересованность в участии и ставит вопрос о том, должны ли женщины вообще заниматься политикой. Респонденты опроса 1998 года высказали мнения, которые в целом допускают такую возможность. (См. таблицу)

Должны ли женщины заниматься политикой? В % ко всему опросу

	Весь опрос	Ереван	Зона бедствия
Да	53.50	50.00	54.00
Нет	27.00	34.00	26.00
Затр. ответить	19.50	16.00	20.00

Но возможности женщин влиять на политику воспринимаются более противоречиво. Большинство опрошенных (63% мужчин и 82,7% женщин) признают возможность такого влияния. В опросе, проведенном в 2001 году в Гюмри респонденты отмечали, что наибольшее влияние на политику могут оказывать жены политических деятелей и женщины - политические лидеры (Маргрет Тэтчер, Мадлен Олбрайт и др). В то же время 47,3% мужчин и 76,7% женщин отметили, что аргументом в пользу женского влияния можно считать такие женские качества как дальновидность и способность быстро ориентироваться. В контексте гендерного подхода особое значение имеют ответы типа: “С участием женщин политика становится более интересной”, “Женщины придают политике новый смысл” и т.д.

К политическому участию женщин конкретно в республике и регионе отношение более сдержанное. Причины выдвигаются следующие -“В Армении нет соответствующих условий” (32,7% мужчин и 38,4% женщин) и “В обществе существуют стереотипы” (61,8% мужчин и 42,3% женщин). Примечательно, что ни мужчины, ни женщины не обсуждают вопрос о нежелательности или неспособности женщин к участию в политике. В материалах опроса 2005 года[1] в качестве причин, препятствующих политической карьере женщин, “национальные стереотипы” указываются значительно реже, чем прежде (12,4% мужчин и 14,5% женщин по всему опросу и 9,9% в Гюмри). Теперь респонденты в наибольшей степени отмечают “недостаточный уровень политической культуры общества” (по всему опросу – 19,4% из них 17,8% мужчин и 21,0% женщин; в Гюмри 20,8%) и “недостаточную развитость институтов демократии” (14,5%

[1] *Политическое участие в обществе переходного периода: измерение гендерного равенства. Центр гендерных исследований АЖУО, Ер., 2006.*

мужчин и 12,5% женщин, в Гюмри – 13,4%). Особый интерес представляет выделение в качестве причины “отсутствие у женщин опыта деловых соглашений” (15,8% мужчин и 12,7% женщин, в Гюмри – 16,3%). Объяснение низкого уровня политического участия женщин уровнем политической культуры и степенью развитости институтов демократии свидетельствует не только о незавершенности процессов формирования демократических отношений, но и о востребованности гендерного равенства. Это подтверждается и тем, что проблема “отсутствия инициативы у женщин” (5,6% по всему опросу и 4,8% в Гюмри) отступает на второй план, меняется отношение к стереотипам. Это проявляется в ответах на вопрос относительно занятости женщин, в которых выделяются две тенденции: женщины имеют право трудиться и женщины должны трудиться. В первом случае речь идет о правах женщин на удовлетворение профессиональных и духовных потребностей. Во втором случае допускается возможность женщин работать для поддержания семейного бюджета. Отношение к занятости можно определить по ответам на вопрос “В каких сферах жизни вы видите женщин и мужчин?”. Здесь были предложены варианты – руководящие органы, политика, наука, культура, образование, воспитание. И мужчины и женщины на первой позиции видят мужчин. В сфере культуры женщин видят 22,0% женщин и 24,0% мужчин, образования - 21,1% женщин и 24,5% мужчин, воспитания - 22,4% женщин и 27,7% мужчин.

Достаточно позитивное отношение к занятости проясняет отношение к возможностям увеличения женского влияния. Так, 11,7% женщин и 10,7% мужчин полагают, что возможно возрастание влияния в сфере политики, 14,0% женщин и 16,0% мужчин - в хозяйстве, 16,0% женщин и 19,0% мужчин - в общественной жизни и 18,7% женщин и 20,8% мужчин - в культуре. Признание возможности возрастания роли женщин в указанных сферах свидетельствует о востребованности женского видения проблем и способов их решения в этих важнейших сферах общественной жизни. В опросе 2005 года эта проблема получила своеобразное развитие. Респондентам было предложено определить чему может способствовать участие женщин в принятии политических решений на высшем уровне. В ответах в наибольшей степени выделяется –“нацеленность на социальные программы” (24,4% мужчин и 24,1% женщин, а в Гюмри -24,3%), что соответствует традиционным представлениям об эффекте женского участия. Особый интерес представляет второй по уровню показатель, непосредственно касающийся качества политики – “гуманизация политики”–(весь опрос 21,8%, Гюмри –22,4%). И хотя 7,0% мужчин,

считают, что женское участие ни к чему не может привести, тем не менее, значительно большее их число полагают, что установление равенства между мужчинами и женщинами привет к “социальной и политической стабильности”, “укреплению норм демократии”, а главное “восстановлению справедливости по отношению к женщинам” (22,1% мужчин и 21,1% женщин).

В материалах социологических опросов заметна тенденция более или менее равнозначного восприятия проблематики мужчинами и женщинами. Причем чаще всего это касается проблемы возможностей гражданского и политического участия женщин, которые рассматриваются в зависимости от экономической и политической стабильности, от успехов демократизации, от воли властей. Влияние стереотипов не является доминирующим фактором, как иногда это представляется. В целом из приведенных данных можно заключить, что женское политическое участие воспринимается в обществе как желательное, но невозможное. Для изменения ситуации рассматриваются различные варианты от “активизации женского участия в работе политических партий” до “создания позитивного образа женщин посредством СМИ”. Но главной политической мерой признается “демократизация стиля политического руководства”, как метод формирования гендерной культуры.

Гендерное равенство в современной Армении становится актуальной и обсуждаемой политической проблемой. Причем в этих обсуждениях не допускается сама мысль о жизнедеятельности общества без женщин, слишком значимое и большое пространство они в нем сегодня занимают. И если в обществе, и, в частности, таком традиционном как гюмрийское, не всегда допускается возможность участия женщин на руководящих постах, в большой политике, то аргументами считаются не столько традиции и стереотипы, а то, что мешает их изжить: незавершенность демократических преобразований, несовершенство гражданского общества и его институтов.

Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ (ԱԻ)

ԱՆԻԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան Հայաստանի ամենահռչակավոր մայրաքաղաքը՝ Անին, գտնվում է պատմական Շիրակում, Ախուրյան գետի և նրա վտակ Անի գետակի միախառնվումով ստացվող, մոտավորապես եռանկյունաձև հրվանդանի վրա, որն արևելքից ու արևմուտքից, եզերված է խոր կիրճերով (այժմ՝ Թուրքիայի տարածքում, Հայաստանի Հանրապետության

սահմանին հանդիպակաց): Քաղաքի զբաղեցրած տարածքը հիմնականում հարթ է, և միայն հարավային կողմում կան երկու՝ Ներքին բերդի («Աղջկաբերդ») և ավելի բարձր՝ Միջնաբերդի բլուրները:

Հայկական լեռնաշխարհում նման տեղադրությամբ (եռանկյունաձև հրվանդանի վրա) ամրոց-բնակավայրեր հիմնվել և կառուցվել են մ.թ.ա. II-I հազարամյակից մինչև միջնադար (կիկլոպյան Մոտկան բերդը, ուրարտական Բաստամ ամրոցը, հելլենիստական Գառնի ամրոցը, Ամբերդը, Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռի-բերդը և ուրիշ շատերը): Նման դիրքն ապահովում է Անիի պաշտպանվածությունը բնական միջոցներով՝ տեղանքի առանձնահատկություններն օգտագործելով, որոնք լրացվում են ամրաշինական կառույցներով: Միաժամանակ, հրվանդանի վրա տեղադրությունը հնարավորություն է տալիս ամրոց-բնակավայրին զարգանալու, ձևավորվելու որպես քաղաք, ինչն անհնար է, օրինակ, լեռների գագաթին հիմնված ամրոցների համար:

Առաջին շինություններն Անիում կառուցվել են Ներքին բերդում: Պատմիչ Վարդան Արևելցին հայտնում է, որ Լուսավորիչը մկրտել է Անիի Ներքին բերդի իշխանին:[1] Միաժամանակ նա այստեղ եկեղեցի է կառուցել: XIIդ. Անիի տիրակալ իշխան Զաքարե ամիրսպասալարը Ներքին բերդում իր կառուցած եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշում է, որ այն հիմնել է լուսավորչաշեն եկեղեցու մոտ[2]:

Վաղ միջնադարում Անին պատկանել է Կամսարական իշխաններին: Vդ. հայ պատմիչներն Անին հիշատակում են որպես անառիկ ամրոց. Եղիշեն՝ պարսից դեմ հայերի 451թ. ապստամբության և Ղ. Փարպեցին՝ Հայաստանի 480-ական թթ. ազատագրական պայքարի կապակցությամբ:[3]

Կամսարական իշխանների օրոք Անի ամրոցը գրավել է Միջնաբերդի և Ներքին բերդի բլուրները: Այդ ժամանակաշրջանից շատ քիչ բան է պահպանվել՝ Ներքին բերդի բլրի հարավային կողմը պաշտպանող, քառակուսի բուրգերով պարսպի մնացորդները[4] և Միջնաբերդում «Պալատական» կոչված միանավ թաղածածկ եկեղեցին, որը, ելնելով զարդաքանդակների արխայիկ բնույթից, շինարարական արձանագրության վիճելի թվականից (622թ.)[5] վերագրվում է Կամսարականներին: Վաղ միջնադարում, սակայն, Անին դեռ քաղաք չէր բառիս բուն իմաստով, այլ միայն ամրոց:[6] VIIIդ. վերջում Անին անցավ Բագրատունիների տիրապետության

---

[1] *Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 118:*

[2] *Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք, Եր., 1966, էջ 58:*

[3] *Եղիշեի Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 87: Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1908, էջ 265:*

[4] *Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Եր., 1942, էջ 332:*

[5] *Н. Марр, Ани, Ер., 1939, стр. 332.*

[6] *И. Орбели, Развалины Ани, С.Петербург, 1911, стр. 8.*

տակ, և արդեն XդԴ. այն բարգավաճ գյուղաքաղաք էր, բազմաթիվ «կուղ-պակներով»՝ արհեստանոց-խանութներով:

Նոր և ամենակարևոր փուլն Անիի քաղաքաշինական զարգացման պատմության մեջ սկսվեց 961թ., երբ Աշոտ Գ Ողորմած թագավորը մայրաքաղաքը Կարսից տեղափոխեց Անի: Միջազգային առևտրական ճանապարհների վրա գտնվելը, երկրի վարչական և մշակութային կենտրոն լինելը, իսկ 992 թվականից նաև հոգևոր կենտրոն դառնալը (Արգինայից այստեղ տեղափոխվեց Հայոց կաթողիկոսական աթոռը) նպաստեցին քաղաքի բուռն զարգացմանը և աճին: Բագրատունի թագավորները հիմնովին վերակառուցեցին Միջնաբերդը և պարիսպներով պաշտպանված պալատական համալիր կառուցեցին: 3,4 հա տարածություն գրավող Միջնաբերդի մակերեսի մեկ վեցերորդը (4900մ^2) զբաղեցնող, բլրի գագաթին կառուցված պալատի 1907-1909թթ. պեղումները հնարավորություն տվեցին պարզել նրա հատակագծային կազմությունը: Պալատը մոտ 60մ երկարությամբ միջանցքով բաժանվում է երկու՝ հյուսիսային ու հարավային, միմյանց համարյա հավասար, մասերի: Հյուսիսային մասում գտնվում են 1-2 հարկանի, միաշարք դասավորված սենյակներ և երեք դահլիճ, որոնցից արևմտյանը և հյուսիս-արևելյանը եռանավ բազիլիկաներ են, իսկ արևելյանն ունի խաչաձև հատակագիծ: Վերջինիս կից է պալատական բաղնիքը: Համալիրի հարավային կեսում գտնվում են օժանդակ, տնտեսական շինությունները, խոշոր ջրավազան,արևելյան կողմում՝ Պալատական եկեղեցին: Ինչպես վաղ միջնադարի, այնպես էլ հետագայի Հայաստանի արքունի պալատները չեն պահպանվել, և Անիի պալատական համալիրը արժեքավոր նյութ է տալիս նրանց հորինվածքի վերաբերյալ:

Աշոտ Գ Ողորմածը 963-964թթ. պարսպապատել է Միջնաբերդից դեպի հյուսիս գտնվող հրվանդանի նեղ՝ Ախուրյանի կիրճի և Ծաղկոցաձորի միջև ընկած մասը, որը պարփակել է «Հին քաղաքի» 7հա տարածքը:1912թ. պեղումներով բացվեց Հին քաղաքի թաղամասերից մեկը, որի կենտրոնում գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցու շուրջը խմբավորված են բնակելի տները՝ ներքին բակերով, երդիկից լուսավորվող սենյակներով:

Անիի քաղաքաշինական զարգացման բուռն տեմպերի հետևանքով ընդամենը քառորդ դար անցած քաղաքի տարածքի զգալի ընդարձակման կարիք զգացվեց: Սմբատ Բ Տիեզերակալ թագավորը 989թ. սկսեց նոր պարիսպների կառուցումը Աշոտյան պարսպից 720մ հյուսիս: Պաշտպանական նոր գոտու տեղը նպատակահարմար էր ընտրված՝ Իգաձորի և Գայլիձորի միջև, որոնք խրվելով հրվանդանի տարածքը՝ պատերի երկարությունը կրճատում են մոտ կես կմ: Երկու պարիսպների միջի տարածությունը՝ 41.8 հա մակերեսով, զբաղեցրեց Նոր կամ Արտաքին անվանված քաղաքը, որտեղ կառուցվեցին Անիի՝ գեղարվեստական արժեքով և մեծությամբ առավել աչքի ընկնող եկեղեցիներն ու աշխարհիկ շենքերը:

Անիի տնտեսական, մշակութային, ճարտարապետական-շինարարական կյանքի շեշտակի վերելքը տեղի ունեցավ Գագիկ Ա Բագրատունու թագավորության տարիներին (990-1020թթ.): Մատենագիտական տվյալներով և պեղումների արդյունքներով բացահայտվում է Անիի՝ արհեստագործական խոշոր կենտրոն լինելը, որի փողոցներում և առանձին թաղերում խմբավորված են եղել տարբեր արտադրանք տվող արհեստանոցներ՝ կից խանութներով: Անիում են մշակվել Շիրակի բարեբեր դաշտերի բերքը, և քաղաքում գործել են բազմաթիվ ձիթհաններ ու ջրաղացներ: Անիի կապը շրջակա բնակավայրերի հետ ապահովվել են ձորերի վրա կառուցված մի շարք կամուրջներով, որոնցից ամենախոշորը Ախուրյան գետի վրա ունեցել 31.5մ թռիչք, եռահարկ պահակատներ-մաքսատներ:

Անիի քաղաքաշինական առանցքը գլխավոր պողոտան էր՝ «Բուն փողոցը», որը քաղաքի կենտրոնական դարպասից՝ «Ավագ դռնից» ձգվել է մինչև Միջնաբերդ և փոխհատվել է լայնական ուղղությամբ մի շարք փողոցներով: Վերջին տարիներին ֆրանսիական հնագիտական արշավախումբը պեղել է այդ փողոցներից մեկը: Բացվել են միմյանց կից կառուցված, ունևոր խավի բնակելի տները, արհեստանոցներն ու խանութները:

Անիի համայնապատկերում առաջին հերթին, առանձնանում են եկեղեցիները, որոնցով էլ բնորոշվում է X-XIդդ. ձևավորված Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցը:[1] Անիի եկեղեցիների շարքում իրենց թե՛ տեղադրությամբ, թե՛ չափերով և թե՛ գեղարվեստական բարձր հատկանիշներով առանձնանում են երեքը՝ Անիի Մայր տաճարը, Գագկաշեն Ս.Գրիգոր և Ս. Փրկչի եկեղեցիները: Ուշագրավ է, որ երեքն էլ միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ Տրդատի ստեղծագործություններն են:[2] Կարևոր է Անիի կառուցապատման և քաղաքի ճարտարապետական կերպարում դրանց ունեցած դերը: Այս երեք գմբեթավոր եկեղեցիների տեղադրության հարցում Տրդատն իրեն դրսևորել է նաև որպես խոշոր քաղաքաշինարար: Նոր քաղաքի մոտավորապես եռանկյունաձև տարածքը խիտ կառուցապատված էր հիմնականում մեկհարկանի բնակելի, առևտրական ու արտադրական շենքերով: Տրդատը, որ ինքն էր ընտրել իր կառուցած եկեղեցիների տեղը, Գագկաշեն Ս.Գրիգոր եկեղեցին տեղադրել է քաղաքի հյուսիսարևմտյան մասում, Ս.Փրկչի եկեղեցին՝ արևելյան, Մայր տաճարը՝ հարավային, նրանցից յուրաքանչյուր դարձնելով Անիի՝ Նոր քաղաքի հիմնական թաղամասերի ուղղաձիգ շեշտերը, նրանց բարձր գմբեթները՝ կառուցապատման զանգվածի գերիշխող տարրերը: Անիի սիլուետում կարևոր են XIդ. ևս երկու կառույց՝ Ծաղկոցաձորի եզրին Աբուղամրենց Ս.Գրիգոր և հնգագմբեթ Ս.Առաքելոց եկեղեցիները:

---

[1] *P.Cuneo, L'architettura della scuola regionale di Ani nell' Armenia medievale, Roma, 1975.*

[2] *Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 187: Դիվան հայ վիմագրության, պրակ 1, էջ 43:*

Անիի փողոցների ցանցի մասին առայժմ դժվար է դատել՝ տարածքի անբավարար պեղման հետևանքով: Համարվում է, որ քաղաքի հատակագիծը կազմակերպված է եղել երկու փոխհատվող փողոցների շուրջը, որոնք ձգվել են հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք:[1] 1045թ. Բագրատունյաց Հայաստանի անկախության կորստից հետո՝ բյուզանդական կարճատև տիրապետության ժամանակ, նորոգվեցին պարիսպները և ջրմուղ կառուցվեց: 1064թ. սելջուկ թուրքերը գրավեցին և ավերեցին Անին: 1072-1199թթ. Անիին տիրեցին սելջուկների վասալ Շեդադյանները, որի ժամանակ անկում ապրեց քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքը: XIդ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին ցավով գրում է, որ «աղոթատներն ավերվեցին, և սուրբ յուղով օծված քարերով դրվեցին այլազգիների ապարանքների հիմքերը»:[2] Այդ տարիներին մաքսատան շենքին բարձր միներեթ կցելով՝ այն վերածվեց Էմիր Մանուչեի անվամբ մզկիթի:

1199թ. Անին ազատագրվեց և դարձավ Զաքարյանների տերության կենտրոնը: XIIIդ. ապրեց իր ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային վերածնունդը: Զաքարյան իշխանները քաղաքի մեծահարուստների լայն մասնակցությամբ վերաշինեցին պարիսպները, նորոգեցին եկեղեցիները, կառուցեցին նորերը, դրանց հետ պալատներ, հյուրատներ:

Թ. Թորամանյանը Անիի քաղաքաշինական պատմությունը բաժանում է չորս փուլի՝ Կամսարականների, Բագրատունիների, Շեդադյանների և Զաքարյանների:[3] Սակայն ավելի ճիշտ է և իրականությանը համապատասխան, որ Անին՝ որպես քաղաք, ձևավորվեց Բագրատունիների օրոք ու քաղաքաշինական առումով բարձր աստիճանի հասավ Զաքարյանների օրոք, այսինքն ունեցել է միայն երկու շինարարական շրջան:[4]

Անիի բուռն կառուցապատումը XIIIդ. արհեստների և առևտրի հետագա զարգացումը բերեցին քաղաքաշինական փոփոխությունների: Մինչ այդ ստեղծված հասարակական-առևտրական կենտրոնը, որը տեղադրված է Մայր տաճարի և Ս.Առաքելոց եկեղեցու միջև, ճյուղավորվում է և տարածվում բուն փողոցի ուղղությամբ դեպի քաղաքի գլխավոր դարպասը՝ Ավագ դուռը: Կենտրոնի փողոցների կառուցապատումը խտանում է նոր վաճառատների ու հյուրանոցների շինարարությամբ: Անիի քաղաքաշինական մշակույթի կարևոր մասն է կազմում բարեկարգումը: Փողոցները և հրապարակները սալահատակված են եղել, փողոցների մեծ թերություն ունեցող հատվածները քարի աստիճաններ են ունեցել: XI դարից քաղաքում կանոնավոր ջրամատակարարում է եղել (ջուրը բերվել է 12 կմ

---

[1] *A. Khatchatrian, Ani, "Reallexikon zur Byzantiniche Kunst", Stuttgart, 1966, p. 158-170.*

[2] *Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, Եր., 1971, էջ 106-107:*

[3] *Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 330-352:*

[4] *Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 189-192, 282-287:*

հեռավորության աղբյուրներից կավե խողովակներով), քաղաքում գործել են հասարակական բաղնիքներ:

Անիի XIIIդ. քաղաքաշինությունն արժեքավոր է ոչ միայն հայկական, այլ նաև միջնադարյան Արևելքի ճարտարապետության պատմության համար: Անիի կառուցապատման մեջ, ճարտարապետական կերպարում ներդաշնակ զուգակցվել են ամենատարբեր նշանակության, տիպերի, ծավալների շենքեր՝ քրիստոնեական և մահմեդական, կրոնական և աշխարհիկ, հասարակական և մասնավոր[1]:

XIIIդ. Անիում առաջացավ եկեղեցիներ կառուցող մեկենասների նոր՝ մեծահարուստների դաս: Նրանց աչքի ընկնող ներկայացուցիչ Տիգրան Հոնենցն Ախուրյանի ձորալանջին կառուցեց Անիի լավագույն եկեղեցիներից մեկը, որն արվեստների՝ ճարտարապետության, քանդակագործության և որմնանկարչության սինթեզի փայլուն օրինակն է:[2]

Անիի կառուցապատման մեջ XIIIդ. մեծացել էր աշխարհիկ շենքերի քանակը, սակայն քաղաքի կերպարում գերակշռողը և որոշիչը դարձյալ մնում էր եկեղեցական ճարտարապետությունը:[3] Միջնադարում պատմիչները Անին անվանում են «հազար ու մեկ եկեղեցիների քաղաք» (Մատթեոս Ուռհայեցի, Կիրակոս Գանձակեցի):[4] Անշուշտ, դա գեղարվեստական չափազանցություն է: Իրականում, ըստ Կ. Մաթևոսյանի ուսումնասիրության, բուն քաղաքի տարածքում եղել են 59 պարսպից դուրս՝ 9, ժայռափոր՝ 35 եկեղեցի և մատուռ, ընդհանուրը՝ հարյուրից ավել:[5] Սա բավական մեծ քանակ է միջնադարյան մի քաղաքի համար, որի տարածքը համեմատաբար մեծ չէ՝ ընդամենը 51.5 հա:[6]

Անիի բակչությունը մոտավոր հաշվարկներով հարյուր հազար մարդ է եղել: Քաղաքի տարածքը բավարար չէր այդքան բնակչություն տեղավորելու համար, և Անին տարածվել է նաև պարիսպներից դուրս, դեպի հյուսիս՝ հարթավայր, որտեղ գտնվում էին քաղաքի հետ ամբողջություն կազմող արվարձանները: Դրանք ձգվել են Սմբատյան պարիսպներից մոտ 3 կմ այն կողմ: Հետևաբար Անին, միջնադարյան Հայաստանի շատ քաղաքների նման, ունեցել է հատակագծային բազմամաս կազմություն: Եթե հաշվի առնենք իր պարիսպներն ունեցող պալատական համալիրը՝

---

[1] *P.Cuneo, Les ruines de la ville d'Ani, capitale armenienne et metropole cosmopolite du Moyen-Age en Orient: un probleme urgent de sauvegarde et de mise en valeur, "Monumentum", vol. V,Louvain, 1970, p. 60.*

[2] *N. et M.Thierry, L'eglise Saint-Gregoire de Tigran Honenc a` Ani (1215), Louvain-Paris, 1993.*

[3] *P.Cuneo, A.Zarian, G.Uluhogian, N.Thierry J.M.Thierry, Ani (Documenti di architettura armena, 12), Venezia, 1984.*

[4] *Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, 1991, էջ 160: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, 1961, էջ 258:*

[5] *Կ. Մաթևոսյան, Անի, Էջմիածին, 1997, էջ 162-173:*

[6] *Վ. Հարությունյան, Անի քաղաքը, Եր., 1964, էջ 28:*

որպես առանձին քաղաքաշինական միավոր, ապա Անին ունեցել է քառամաս կազմություն՝ պալատ, միջնաբերդ, քաղաք և արվարձաններ:

Անիի պաշտպանական համակարգի մասն են կազմել նաև քաղաքի մատույցները հսկող Տիգնիս և Մաղասբերդ ամրոցները: Անիի տնտեսական ոլորտի մեջ են մտել շրջակա գյուղերը, իսկ հոգևոր և մշակութային ոլորտի մեջ՝ մոտակա երեք խոշոր վանքերը՝ Հոռոմոսը, Բագնայրը և Արջո-Առիճը: Հոռոմոսի վանքը եղել է կապված Անիի հետ հաղթակամարի տակով անցնող հանդիսավոր ճանապարհով, այսպես կոչված «արարողությունների և ծիսակատարությունների պողոտայով»:[1]

Անին ունի մի ինքնատիպ առանձնահատկություն. քաղաքը «երկհարկ» է՝ վերգետնյա ու ստորգետնյա, որոնք հաղորդակցվում են միմյանց հետ: Անիի սարահարթը եզերող ձորերի և ձորակների լանջերին փորված արհեստական քարայրներում կան մոտ հազար շինություն, որոնք ամենատարբեր նշանակություն ունեն՝ բնակարաններ, եկեղեցիներ, մատուռներ, խանութներ, պահեստներ, ձիթհանքներ, փոստային կապի համար նախատեսված աղավնատներ, տապանատներ:[2] Ստորգետնյա Անին ստեղծվել է X-XIդդ. և եղել է բազմահարկ (այժմ պահպանվել են միայն վերին երեք հարկերը), ունեցել է ներքին փողոցներ: Խիտ բնակեցված քաղաքի բնակչության մի մասին (ըստ երևույթին՝ չքավոր) տեղավորելուց բացի՝ այն նաև պաշտպանական դեր է խաղացել, օրինակ, XIIդ. սկզբում Անիի վրա Արդեբիլի սուլթանի հանկարծակի հարձակման ժամանակ քաղաքացիների մի մասը պատսպարվել է Միջնաբերդում, մնացածը՝ ստորգետնյա թաղամասում:[3]

Անիում կյանքը հարատևել է մինչև XIVդ. կեսը: 1319թ. երկրաշարժի հետևանքով քաղաքի լքվելու մասին տեսակետը ավելի շուտ ավանդության վրա է հիմնված, քան փաստի: Անիի անկման և նրա՝ որպես քաղաք գոյությունը դադարելու հիմնական պատճառներն էին մոնղոլների կեղեքիչ հարկահանությունը, նրանց հաստատած հետամնաց վարչակարգն ու տնտեսաձևը ու, ամենակարևորը, առևտրի անկումն ու առևտրական տարանցիկ ճանապարհների տեղափոխվելը դեպի հարավ:

Անիի կառուցապատման հազարամյա պատմությունը, թեպետ անավարտ պեղումների պատճառով շատ հարցեր դեռ չեն լուսաբանվել, չափազանց կարևոր է միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական մշակույթի մասին համեմատաբար ամբողջական պատկերացում կազմելու նպատակով, որովհետև Անիում մշակված սկզբունքները օրինակ են ծառայել երկրի մյուս քաղաքների համար:

---

[1] *Ա. Զարյան, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Եր., 1986, էջ 125:*

[2] *Н. Токарский, По страницам истории армянской архитектуры, Ер., 1973, стр. 52.*

[3] *Н. Марр, նշվ. աշխ., էջ 72:*

Լեւոն ՄՈՒԹԱՖՅԱՆ (ԵԹԿՊԻ)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Ինչպես Երևանում, այնպես էլ Ալեքսանդրապոլ-Գյումրիում առաջին թատերական ներկայացումները կազմակերպվել են XIXդ. երկրորդ կեսին, մասնավորաբար 1865–ին:[1] Արևելյան Հայաստանում թատրոնը չուներ գեղարվեստական և հանրային այնպիսի պահանջմունք, ինչպիսին կար Արևմտյան Հայաստանում, Թուրքիայում և Վրաստանում: Եթե Հայաստանից դուրս ձևավորվում և օրավուր հարստանում էին թատերական ավանդույթները, մի շարք գաղթավայրեր դառնում էին թատերական ուրույն կենտրոններ, ապա բուն Հայաստանում, որը պետականությունից զուրկ աշխարհագրական տարածք էր՝ Ռուսաստանի կայսրության գաղութներից մեկը, թատրոնը չէր ստեղծել գոյավորման անհրաժեշտ պայմանները, չէր դարձել հանրային կյանքի բաղկացուցիչներից մեկը: Այս ամենի հիմքում սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային նախադրյալների, արդյունաբերական և մշակութային հզոր կենտրոնների հետ կապի բացակայությունն էր, մի հանգամանք, որը վճռորոշ դեր էր կատարում Արևելյան Հայաստանի մշակութային իրողությունների ձևավորման գործում: Հենց 1865-ին Երևանի և Ալեքսանդրապոլի համար մշակութային կենտրոնը Թիֆլիսն էր, որի հետ էլ առնչությունները XIXդ. երկրորդ կեսին նոր ծավալներ են ստանում, նպաստում այն բանին, որ թիֆլիսյան մշակութային ավանդույթները թափանցեն նաև Հայաստան, այստեղ ևս սկիզբ դնեն թատրոնի և թատերական արվեստի ձևավորմանը:

Ալեքսանդրապոլում առաջին թատերական ներկայացումները կազմակերպած Ա. Մելիք-Հայկազյանցը ևս Թիֆլիսում էր ձևավորել իր պատկերացումները թատրոնի մասին, այստեղ դիտել նշանավոր հայ դերասան և թատերական գործիչ Գևորգ Չմշկյանի ներկայացումները, որոնք էլ նրա մեջ մեծ սեր էին ծնել թատրոնի հանդեպ: [2] Ա. Մելիք-Հայկազյանցն էլ, գալով Ալեքսանդրապոլ, կատարում է հանգանակություն՝ հավաքելով 117 ռուբլի, դրամագլուխը մեծացնում է անձնական միջոցներով և ձեռնամուխ լինում առաջին ներկայացման ստեղծմանը, որի բեմադրիչի պարտականությունները ստանձնում է քաղաքագլխի պաշտոնակատար Վաղարշակ Շահխաթունյանը:[3] Առաջին բեմադրության համար ընտրվել էր Հ. Կարենյանի «Շուշանիկ» ողբերգությունը, հայ ազգային կրոնաբարոյախոսական դրամայի երևելի երկերից մեկը, որն արդեն բեմադրվել էր

[1] *«Մեղու Հայաստանի», 1865, թիվ 22:*
[2] *Ռ.Մադոյան, Թատրոնի ուղին, Եր., 1967, էջ 8:*
[3] *Նույն տեղում, էջ 9:*

տարբեր թատերախմբերում:[1] Թատերախումբն Ալեքսանդրապոլում ձևավորվել էր ուսուցիչներից, մտավորականության ներկայացուցիչներից, որոնցից էին Տիգրան Վարդ-Պատրիկյանը, Հովհաննես Լալայանցը, Հովհաննես Սահրադյանը, Սկրտիչ Տեր-Դավթյանը, Սարգիս Արաբաջյանը:[2] Ներկայացման ցուցադրության համար ընտրվել էր Խաչատուր Հովհաննիսյանի տունը, որը շատերի գիտակցության մեջ տպավորվել էր որպես «կլուբ»: Վերջինիս 125 տեղ ունեցող դահլիճը տեղավորել էր բոլոր նրանց, ովքեր կամեցել էին ներկա գտնվել մոտ 17 հազար բնակիչ ունեցող քաղաքի մշակութային խոշոր իրադարձությանը: Մայիսի 23-ին տեղի ունեցած առաջին ներկայացումը յուրատեսակ և վարակող խթան էր, իրողություն, որը պարտադրեց ալեքսանդրապոլցիներին նոր հայացքով նայել մշակութային խնդիրներին, հնամենի արհեստավորական քաղաքում ևս ձևավորել ավանդույթներ, որոնք հետայսու անշրջելի պիտի լինեին:

Տարեվերջին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած Չմշկյան-Ամրիկյան-Մանդինյան թատերախմբի հյուրախաղերը մեկ անգամ ևս ամրապնդեցին այն տեսակետը, որ այստեղ կան բոլոր նախադրյալները ներկայացումների կազմակերպման և հանդիսատեսային հետաքրքրություն ստեղծելու համար: Առաջին բեմադրությունից կարճ ժամանակ անց՝ 1868-ի նոյեմբերի 30-ին, Ալեքսանդր Մանուկյանի փոխադրությամբ և բեմադրությամբ ներկայացվում է Գյոթեի հռչակավոր «Ֆաուստ»-ը, ուր գլխավոր դերերը կատարում են Ա. Մանուկյանն ու Ա. Կրիտյանը:[3]

Ինչպես նկատում ենք, ներկայացումները կազմակերպվում էին ոչ պարբերաբար, սակայն դրանք ձեռք էին բերում մեծ արձագանք և ընդունելություն: Ներկայացումների կազմակերպման առաջին շրջանում կանանց դերերը խաղում էին տղամարդիկ՝ ինչպես ընդունված էր ողջ եվրոպական թատրոնում: Իբրև օրինակ՝ կարող ենք հիշատակել Սկրտիչ Տեր-Դավթյանի Շուշանիկի դերակատարումը: 1873թ. Ալեքսանդրապոլում «Սանդուխտ» պիեսի բեմադրության մեջ հանդես են գալիս առաջին դերասանուհիները՝ Երանուհի Տիգրանյանը և Զարուհի Գուլումյանը: «Սա մի առաջադեմ քայլ էր, որ արեց Ալեքսանդրապոլը ժողովուրդը…»,- գրում է «Մեղու Հայաստանի» թերթը:[4]

Ալեքսանդրապոլի թատերական կյանքի 2-րդ կարևոր շրջափուլը ձևավորվում է XXդ. 2-րդ տասնամյակում, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ բոլշևիկյան-կոմունիստական կուսակցությունը գաղափարախոսական աշխատանքների գլխավոր կռվաններից մեկը հռչակեց թատրոնը՝ թատերական արվեստի և թատերգության միջոցով ևս ձգտելով ամրապնդել սոցիալիստական հեղափոխության

---

[1] *Մ. Քոչարյանց, Նամակ Ալեքսանդրապոլից, Հայկական աշխարհի կռունկ, հ.8-9, էջ183-184:*
[2] *Բ. Հարությունյան, 19-20-րդ դարերի հայ թատրոնի տարեգրություն, հ. 1, Եր., 1980, էջ 67:*
[3] *Բ. Հարությունյան, Տարեգրություն, հ. 1, էջ 84:*
[4] *«Մեղու Հայաստանի», 1973, թիվ 8:*

ձեռքբերումները: Պատահական չէ, որ ՀԽՍՀ լուսժողկոմատը որոշում է ընդունում «թատերական պիտույքների ցուցակագրման և հաշվառման մասին»:[1] Երևանի Առաջին պետական թատրոնի հիմնադրումից՝ 1920թ., անմիջապես հետո Ալեքսանդրապոլում ևս թատերական կյանքը մտնում է որոշակի հունի մեջ՝ այս անգամ ամեն ինչ պայմանավորելով հայ պրոֆեսիոնալ ռեժիսուրայի հիմնադիր Արմեն Արմենյանի գործունեությամբ:

Մինչև Ա. Արմենյանի Ալեքսանդրապոլում հիմնավորվելը Վարդան Միրզոյանի գլխավորությամբ 1921-ից գործում է Հայ դերասանական խումբը, որը ներկայացնում է Հ. Իբսենի «Ուրվականները», Ս. Յուշկևիչի «Թագավոր» և այլ պիեսներ: Քաղաքում հիմնադրվում է քաղլուսվարի թատրոնը, որի կազմում ընդգրկվում են Թաքիկ Սարյանը, Բաբկեն Գաբրիելյանը, Վարդան Սիրվանյանը, Բագրատ Մուրադյանը, Աստղիկ Աղասյանը, Մարիամ Մոճոռյանը և ուրիշներ: Այս թատերախումբն ահռելի դեր կատարեց թատերական ավանդույթների ձևավորման և նախկինում ստեղծված բարենպաստ միջավայրի հարստացման համար:

Ողջ երկրում ծնունդ առած ուրույն գեղարվեստական շարժումները տեղափոխվում էին նաև Ալեքսանդրապոլ, որն արդեն ուներ իր դերասաններն ու թատերական արվեստի նախանձախնդիրները: Ուրեմն, Ա. Արմենյանը եկավ ոչ թե մի քաղաք, ուր ինքն էր ձևավորելու պատկերացումներ թատրոնի մասին, այլ ընթանալու էր արդեն որոշակի հիմքեր ձևավորած ավանդույթների ճանապարհով՝ ձգտելով միավորել դասական թատրոնի մեթոդաբանությունն ու գեղարվեստական միտումները նոր ժամանակների գեղագիտական պահանջմունքներին, նաև՝ սոցիալական հեղափոխությամբ ծնունդ առած իրականության խնդիրների արտացոլմանը: Հեղափոխական ժամանակների և հեղափոխական թատրոնի գաղափարախոսությունն էլ Ա. Արմենյանին տարավ մի աննախադեպ թատերական գաղափարի իրականացման՝ յուրատեսակ կամուրջ ստեղծելով ռուս ականավոր բեմադրիչ Վ. Մեյերհոլդի «Ջմեռայինի գրավում»-ի և նոր կենսագործվող հղացման միջև: Ա. Արմենյանին հրապուրում է հրապարակային ներկայացման գաղափարը, որի սկզբունքները տեղ էին գտել Վ. Մեյերհոլդի արդեն հիշատակված և Կ. Մարջանով-Մարջանիշվիլու «Դեպի համաշխարհային կոմունան» բեմադրություններում, ուստի նա ձեռնամուխ է լինում «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի երրորդ ճյուղի բեմավորմանն ու բեմադրությանը՝ ներկայացման վայր ընտրելով ամֆիթատրոնային թեքություն ունեցող տարածքը: «Տեղը՝ հուշարձանի աջ կողմի ձորը, շատ հարմար էր ընտրված, որի շնորհիվ բոլոր հանդիսականները ոչ միայն ազատորեն տեսնում էին ամբողջ պիեսան, այլև հստակորեն լսում էին դերակատարների յուրաքանչյուր խոսքը:Այն տպավորությունն էր

[1] *«Կոմունիստ», 1921, 20 հունվարի:*

ստացվում, որ կարծես ներկա ենք գտնվում հին հունական ներկայացման»,- գրել է «Շիրակի ռանչպար» թերթը:[1]

1922թ. հուլիսի 8-ին տեղի ունեցած ներկայացմանը մասնակցում էր շուրջ 10 հազար հանդիսատես և 150 դերակատար՝ հիմնականում որբանոցի սաներ, Դավթի դերը կատարում էր պատանի Վահան Դասոյանը, ով հետագայում դարձավ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի առաջատար դերասաններից մեկը: «Սասունցի Դավիթ» բեմադրությունը հայ թատրոնի պատմության մեջ անօրինակ երևույթ էր, քանզի միջնադարյան ժողովրդական թատերախաղերից հետո առաջին անգամ էր ստեղծվում հրապարակային թատրոնի գեղագիտությանը համահունչ ներկայացում՝ կիրառելով թե՛ հունական թատրոնի, թե՛ նոր հեղափոխական թատրոնի գեղարվեստական առանձնահատկությունները:

1922թ. Ալեքսանդրապոլի քաղլուսվարի թատրոնը բեմադրում է «Սատանա»,«Ավազակներ»,«Ապահարզանի անակնկալներ», «Տրիլբի», «Հիմար», «Անհայտ կին», «Ուրվականներ», «Օթելլո», «Հենակներով մարդը» և այլ պիեսներ: Թատերախմբում գործում են նաև Ե. Դուրյան-Արմենյանը, Գ. Ջանիբեկյանը, Ն. Մանուչարյանը, Զաբելը և ուրիշներ:

Մեր թատերական գրականության մեջ, մասնավորաբար Բ. Հարությունյանի հայտնի աշխատության մեջ[2] քաղլուսվարի թատրոնը ներկայացվել է որպես հայ դերասանական խումբ, ինչը շփոթմունք է, քանզի իր «Վաթսուն տարի հայ բեմի վրա» հուշագրության մեջ հիշյալ թատերախումբը ներկայացվում է որպես քաղլուսվարի թատրոն:[3] Այսպես են կոչում այս թատերախումբը նաև Ռ. Մադոյանը[4] և Ս. Մելիքսեթյանը:[5] Ի-ին խաղաշրջանը որակելով վերհառնումի ժամանակաշրջան՝ «Շիրակի ռանչպարը» գրում է.«Թե ի՞նչ դրության մեջ էր գտնվում թատրոնը մեկերկու ամիս առաջ՝ բոլոր տեղացիներին հայտնի է, բայց այսօր արդեն, կարող ենք ասել, որ մեր միակ թատրոնը փրկված է…»:[6]

Առաջին խաղաշրջանում ներկայացված ստեղծագործությունները վկայում էին, որ թատրոնի խաղացանկը չափազանց էկլեկտիկ էր, բացակայում էին գաղափարական և գեղարվեստական միասնականության միտումները, դասական մի շարք նշանավոր երկերի կողքին տեղ էին գտել էժանագին մելոդրամներ և «ագիտկաներ», որոնց հանդեպ հետաքրքրությունը յուրատեսակ տուրք էր ժամանակին ու հանդիսատեսներից շատերի նախասիրություններին:

Իր երկրորդ թատերաշրջանը բացելով 1922թ. նոյեմբերի 16-ին, թատրոնը գրեթե նույնությամբ կրկնում է իր խաղացանկը, դարձյալ ներ-

---

[1] *«Շիրակի ռանչպար», 1922, հուլիսի 16:*
[2] *Բ. Հարությունյան, Սովետահայ թատրոնի տարեգրություն, Եր., 1961, էջ 55:*
[3] *Ա. Արմենյան, «60 տարի հայ բեմի վրա», Եր.,1954, էջ 125:*
[4] *Ռ. Մադոյան, «Թատրոնի ուղին», էջ 28:*
[5] *Ս. Մելիքսեթյան, Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության, Եր., 1960, էջ 23:*
[6] *«Շիրակի ռանչպար», 1922, մայիսի 14:*

կայացնում արդեն բեմադրված ստեղծագործությունները, որոնցից շատերը բխում էին թատրոնի առաջատար դերասանների նախասիրություններից,այն ավանդույթներից, որոնք հաստատվել էին հայ թատրոնում, հատկապես այն թատերախմբերում, որոնք տակավին չէին առաջնորդվում անսամբլային թատրոնի սկզբունքներով, համախաղն իբրև միասնական գեղարվեստական միտում հռչակած խմբերում: Չնայած այն բանին, որ խաղացանկի ձևավորումը չուներ գեղարվեստական-ծրագրային նպատակասլացություն, այնուհանդերձ մշտական գործող թատրոնի փաստն ինքնին արժեքավոր էր, քանզի Ալեքսանդրապոլը ևս ձեռք էր բերում իր խաղացանկային թատրոնը, որի գործունեությունը դարձավ կայուն և նպատակային: Չափազանց մեծ է Ա. Արմենյանի ներդրումն այս թատրոնի կայացման գործում: Նա աստիճանաբար գնում է դեպի անսամբլային-ռեժիսորական թատրոնը՝ այստեղ ևս ստեղծելով այնպիսի ներկայացումներ, որոնք աչքի են ընկնում ռեժիսորական և դերասանական արտահայտչամիջոցների միասնականությամբ և ամբողջականությամբ:

Քաղլուսվարի թատրոնն էլ այն հենքն էր, որի վրա ձևավորվեց ՀԽՍՀ Երկրորդ պետական թատրոնը: Այն բացվեց 1928-ին՝ Դ. Ֆուրմանովի «Խռովություն» պիեսի բեմադրությամբ, որը բեմադրել էր Ա. Գուլակյանը՝ ասիստենտ ունենալով երիտասարդ բեմադրիչ Վ. Ամեմյանին:

Լեւոն ՄՈՒԹԱՖՅԱՆ (ԵԹԿՊԻ)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՐԻՖՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Քսաներորդ դարի հայ թատրոնի պատմության մեջ շատ հաճախ մոռացության է տրվել Հովհաննես Զարիֆյանի՝ դարասկզբի խոշորագույն դերասաններից մեկի անունը: Այդ մոռացության պատճառները բազմաթիվ են. անպայմանորեն առաջին՝ պատճառներից մեկը քաղաքականն է եղել, քանզի Հ. Զարիֆյանը, ոչ իր կամքով, ողբերգական հանգամանքների բերումով հեռացել է Հայաստանից (Հայաստանից հեռացածները խորհրդային իշխանության կողմից մերժվում և գաղափարական հակառակորդներ էին համարվում), մեծ դեգերումներից հետո յուրատիպորեն կրկնելով ռուս ականավոր դերասան Միխայիլ Չեխովի[1] ողիսականը, բնակություն հաստատել ԱՄՆ-ում և այնտեղ էլ կնքել իր մահկանացուն: Մյուս պատճառը թերևս ազգային պրոֆեսիոնալ թատրոնից օտարվելու հետևանքով թատերագիտության և թատրոնի պատմության մաս-

[1] *Չեխով Միխայիլ Ալեքսանդրի, 1891-1955, ռուս դերասան, բեմադրիչ, մանկավարժ, «To the actor. On the technigue of acting» աշխատության հեղինակ, ՌՍՖՍՀ վաստակավոր արտիստ, Ա. Չեխովի զարմիկը:*

նագետների ուշադրությունից հեռու լինելն էր, քանզի սփյուռքն այդպես էլ չձևավորեց արհեստավարժ թատրոն և արհեստավարժ թատերագիտություն, որոնք առիթ պիտի ստեղծեին ուսումնասիրելու և արժևորելու Հ. Զարիֆյանի ստեղծագործության առանձնահատկությունները, կարևորելու նրա տեղն ու դերը ազգային թատրոնի պատմության մեջ: XXդ. երկրորդ կեսին միայն արտիստի ստեղծագործության հանդեպ ձևավորվեց որոշակի հետաքրքրություն, որի արտահայտություններից առաջինը թատերական գործիչ և նախկին դերասան Սամվել Բոգեմսկի-Զատիկյանի համեստ ուսումնասիրությունն էր՝ գրված դիմանկարային ակնարկի սկզբունքով:[1] Այս ուսումնասիրությունը փորձ էր ձևավորելու պատկերացումներ Հ. Զարիֆյանի մի շարք դերակատարումների և նրա ստեղծագործական յուրատիպությունների մասին: Այս ուսումնասիրությանը հաջորդեց թատերագետ Գրիգոր Զարեյանի կազմած և խմբագրած ժողովածուալբոմը, որում ներկայացված էին բազմաթիվ հուշեր, տպավորություններ, տարբեր դերակատարումների վերլուծություններ:[2] Չնայած հրապարակ հանված այս երկու գրքի՝ Հ. Զարիֆյանի ստեղծագործությունն, այնուամենայնիվ, խոր և համակողմանի վերլուծության և ուսումնասիրության կարիքն էր զգում, քանզի նրա խաղընկերների, ժամանակի թատերախոսների, նրա ստեղծագործության մասին հոդվածներ հրապարակած թատերագետների կարծիքները և դիտարկումները վկայում էին, որ Հ. Զարիֆյանն անպայմանորեն ազգային դերասանական արվեստի խոշորագույն դեմքերից մեկն էր, մի հզոր անհատականություն, որը չժխտելով XIXդ. դերասանական արվեստի սկզբունքները, որոնց վրա էր կառուցվում նոր դարի առաջին տասնամյակների թատրոնն ու նրանում գոյավորված դերասանական արվեստը, այնուհանդերձ ձգտում էր դեպի նորն ու ինքնատիպը, դեպի բացառիկը, դեպի նոր թատրոնի գեղագիտական-գեղարվեստական համակարգերի ձևավորումը: Հ. Զարիֆյանի ստեղծագործության նկատմամբ գիտական հայացք ձևավորողների մեջ առաջինը ակադեմիկոս Լևոն Հախվերդյանն էր, ում «Հայ թատրոնի պատմություն»[3] աշխատության մեջ առաջին անգամ օբյեկտիվ և գիտական համակարգման ենթարկվեց ոչ միայն Հովհ. Զարիֆյանի, այլև XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային բեմարվեստի շատ երևելիների ստեղծագործությունը, քննարկվեցին այն փոխառնչությունները, որոնք ձևավորվել էին ռուս և արևմտաեվրոպական թատերարվեստների ազդեցությունների ներքո: Հ. Զարիֆյանի մասին ծավալուն առաջին ուսումնասիրությունը, որի հեղինակը արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Ռազմիկ Մաղոյանն էր, նույնպես ի զորու չեղավ դառնալու հիմնարար և ամբողջական գիտական շարադրանք, չնայած Ռ. Մաղոյանը կարծես հենց այդ առաքելությամբ էր

[1] *Ս. Բոգեմսկի-Զատիկյան, Հովհաննես Զարիֆյան, Եր., ՀԹԸ, 1966:*
[2] *Հ. Զարիֆյան, ժողովածու-ալբոմ, կազմող՝ Գ. Զարեյան, Եր., ՀԹԸ, 1977:*
[3] *Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն. 1901-1920 թվականներ, Եր., 1980:*

ձեռնամուխ եղել ուսումնասիրության ստեղծմանը:«Այսուհանդերձ, հիշատակածս գրքույկն ու ժողովածուն,[1] ունենալով առաջադրանքի համեստ շրջանակ, ամենևին էլ չեն հետապնդել Զարիֆյանի արվեստը հիմնավորապես արժեքավորելու և նրա նշանակությունը հայ թատրոնի տարեգրության մեջ *գիտականորեն* հիմնավորելու առաքելություն»,- գրում է «Բեմն իմ խաչն է» աշխատության հեղինակը:[2] Հ. Զարիֆյանի ստեղծագործության գիտական գնահատման դժվարությունը Ռ. Մաղոյանը պատճառաբանել է այն բանով, «*որ նրա բեմարվեստն անսովոր էր, հեռու ժանրային ստույգ սահմանումից*»:[3] Անսովորությունն ու ժանրային ստույգ սահմանումների բացակայությունը, անտարակույս, չէին կարող պատճառ և հիմնավորում ունենալ. այստեղ գործ ունենք Հ. Զարիֆյանի ստեղծագործության և ազգային դերասանական արվեստում ձևավորված ավանդույթների և կաղապարայնության միջև ստեղծված անհամաձայնությունների, ավանդույթի խիզախ ժխտման փաստերի հետ, որոնք էլ հայ թատերագիտությանը հնարավորություն չեն տվել ընկալելու այն անսովորն ու յուրատիպը, որն իր հետ բերում և հաստատում էր Հ. Զարիֆյանը:

Հովհաննես Գևորգի Զարիֆյանը ծնվել է Ալեքսանդրապոլում, 1879թ.: «Նրան չվիճակվեց իր մորաքրոջ որդու՝ Ավետիք Իսահակյանի բախտը. լավ կրթություն ստանալ, ունենալ անհոգ մանկություն: Վաղ հասակում զրկվելով ծնողներից, մեծացել է հորեղբոր խնամքի տակ, աշխատել կոշկակարի արհեստանոցում, ապա՝ հորեղբոր խանութում: Հազիվ մի քանի ներկայացում էր տեսել տասնութամյա պատանին և այնքան էր հափշտակվել տեսածով, որ ինքնագլուխ բռնել է Թիֆլիսի ճամփան՝ թատրոն ընդունվելու համար»,- գրել է Լ. Հախվերդյանը:[4] Հայկական համառոտ հանրագիտարանի վկայությամբ Հ. Զարիֆյանը 1892-94 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:[5] Թեև Լ. Հախվերդյանը ոչինչ չի հիշատակել դերասանի ստացած կրթության մասին, այնուամենայնիվ Ռ. Մաղոյանը վկայում է, որ «Հովիկն ուսանեց Սուրբ Փրկչի ծխական դպրոցում և այնպես առաջադիմեց, որ Աբիսողոմը[6] որոշեց… տասներկուամյա կրտսեր եղբորը Էջմիածին ուղարկել, կրթությունը շարունակելու»:[7] Գևորգյան ճեմարանում, ուր այդ տարիներին սովորում էր նաև Ավետիք Իսահակյանը, Հ. Զարիֆյանը երկար չի մնում հիվանդության պատճառով և վերադառնալով Ալեքսանդրապոլ՝ զբաղվում է կոշկակարությամբ: Սկզբում Գևորգյան ճեմարանում, ապա արդեն Ալեքսանդ-

---

[1] *Նկատի ունի Ս. Բոգեմսկու գիրքն ու Գ. Զարեյանի կազմած ժողովածու-ալբոմը:*
[2] *Ռ. Մաղոյան, Բեմն իմ խաչն է, Լոս Անջելես, Color Depot. Inc.1999, էջ 16:*
[3] *Նույն տեղում, էջ 17-18:*
[4] *Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն. 1901-1920 թվականներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1980, էջ 265:*
[5] *Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Եր., 1995, էջ 184:*
[6] *Աբիսողոմ Զարիֆյանը Հ. Զարիֆյանի ավագ եղբայրն էր:*
[7] *Ռ. Մաղոյան, Բեմն իմ խաչն է, էջ 26:*

ռապոլում, որը դարավերջին արդեն ձևավորել էր ուրույն թատերական ավանդույթներ, դարձել թատերական կենտրոններում ստեղծագործող դերասանների համար սիրելի քաղաք, որի թատերասեր հանրությունը արտակարգ սիրով էր ընդունում հյուրեկ թատերախմբերին, հրապուրվում է թատրոնով, և մեկընդմիշտ որոշում իրեն նվիրել բեմին: Այդ որոշումն իրականություն դարձնելու նպատակով էլ տասնութամյա երիտասարդը հայտնվում է Թիֆլիսում, որն արդեն հռչակվել էր որպես ազգային մշակույթի խոշորագույն կենտրոն՝ այստեղ ձևավորելով հոգևոր-մշակութային հարուստ կյանք: Լույս տեսնող թերթերի ու հանդեսների, համակողմանի գործունեություն ծավալած ազգային կրթարանների կողքին գոյության իր ճանապարհն էր հարթում նաև հայոց թատրոնը, որն իբրև գեղարվեստական հանգրվան և արվեստի տեսակ, այս քաղաքում սկզբնավորվել էր տակավին 1836 թվականին[1]՝ քաջալերող և կազմակերպիչ ունենալով Թիֆլիսի քաղաքագլուխ, հանրային գործիչ Գալուստ Շերմազանյանին:[2] Դարավերջի թիֆլիսյան թատերական կյանքը շատ ավելի հրապուրիչ և կազմակերպված էր, քան Ալեքսանդրապոլինը, ուր հյուրեկ դերասաններից զատ հանդես էին գալիս նաև տեղական սիրողները, որոնց մեջ արհեստավարժներ չկային: Նրանց ներկայացումները չունեին գեղարվեստական այն բարձր արժանիքները, որոնցով փայլում էին Թիֆլիսում, Բաքվում, Կոստանդնուպոլսում կազմակերպվող ներկայացումները: Եթե Ալեքսանդրապոլում Հ. Զարիֆյանի՝ թատրոնի մասին ստացած պատկերացումները չափազանց անճոռնի ու նախնական էին, ապա Թիֆլիսում, բնականաբար, ձևավորված հարուստ թատերական ավանդույթները, Սիրանույշի, Հ. Աբելյանի, Ա. Արմենյանի, Գ. Պետրոսյանի, մյուսների ներկայացումները չափազանց մեծ ու ազդեցիկ տպավորություններ են գործում ապագա դերասանի վրա: Դերասանական իր գործունեությունը Հովհաննես Զարիֆյանը սկսում է Թիֆլիսի Հայոց դերասանական ընկերության խմբում, որի կազմում էին ականավոր դերասան և թատերական գործիչ Գ. Չմշկյանը, Գ. Տեր-Դավթյանը, Ա. Խիթարյանը, Ա. Մանդինյանը, Ս. Չմշկյանը, Ա. Մամիկոնյանը և ուրիշներ: Ալեքսանդրապոլից եկած երիտասարդն առաջին անգամ բեմ է բարձրանում 1897թ. դեկտեմբերի 17-ին՝ Գ. Տեր-Դավթյանի բեմական գործունեության 25-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյին՝ խաղալով *Կարլ*՝ Ժ.Բ. Մոլյերի «Սկապենի արարքները» պիեսի բեմադրության մեջ:[3] Մի քանի օր անց Հ. Զարիֆյանը Թիֆլիսի Վրաց ազնվականների բանկի թատրոնում մաս-

---

[1] *Անհասկանալի պատճառներով, չունենալով որևէ գիտական և փաստական հիմնավորում, Թիֆլիսում հայկական թատրոնի ձևավորման տարեթիվ է համարվել 1857-ը, որին էլ գրականագետ Աշոտ Հայրապետյանը նվիրել է իր «Փառապանծ ուղի» գիրքը՝ տպագրված 1958-ին, Թբիլիսիում:*

[2] *Շերմազանյան Գալուստ Հարությունի, 1807-1891, բանահավաք, հասարակական գործիչ, թատերագիր: 1836-ին Թիֆլիսում հիմնադրել է «Շերմազանյան դարբաս» թատերասրահը:*

[3] *Դեկտեմբերի 17-ին հայոց թատրոնում, Արձագանք, 19 դեկտեմբերի, 1897, թիվ 147:*

նակէցում է Արշակ Մամիկոնյանի բենեֆիսին՝ խաղալով *ծառայի* դերեր Ն. Օգնոբիշինի «Ընտանեկան գաղտնիք»[1] և Դ. Մանսֆելդի «Ճարահատյալ դերասան»[2] պիեսների բեմադրություններում: Խաղալով անգամ ծառաների աննշան դերեր՝ Հ. Զարիֆյանն իր վրա է սևեռում խաղընկերների և հանդիսատեսի ուշադրությունը,պարտադրում խոսել իր դերասանական անուրանալի շնորհների և ստեղծագործական ներուժի մասին: «Ես ընդունում եմ այն տեսակետը, որ ամենափոքրիկ դերերում էլ դերասանը պետք է ուսումնասիրություն դնե, և Զարիֆյանը խելոք դերասան էր, նա ըմբռնում էր գեղարվեստի պահանջը եղող աշխատասիրությունը, նույնիսկ անխոս ծառաների դերի մեջ»,- գրել է Սիրանույշը:[3]

Հ. Զարիֆյանի դերասանական գործունեությունն սկսվեց այս աննշան դերերով, սակայն «իր բնության, իր ներքին ձայնի թելադրանքով… հազիվ մի տասնամյակ անց դարձավ» հայ թատրոնի «հայտնի դեմքերից մեկը, այնպիսի մի արտիստ, որ հիացմունք է պատճառել իր ոչ միայն նրբագեղ խաղով, այլև նրբանկատ բնավորությամբ, ազնվական վարքուբարքով, ինչպես ընտիր դաստիարակության տեր մի անհատ»:[4] Այս ամենին նա հասավ շնորհիվ իր մեծ աշխատասիրության, անդուլ ջանքերի. «… ես ինձ զրկեցի բոլոր վայելքներից, գիշեր ու ցերեկ աշխատեցի, որ ձեռք բերեմ այն պակասը, ինչ-որ անհրաժեշտ էր իմ ընտրած ասպարեզի համար: Եվ ես հարթեցի իմ ուղին շնորհիվ իմ զորեղ կամքի և տոկուն աշխատանքի»,- գրել է Հ. Զարիֆյանը:[5]

Չափազանց կարճ ժամանակամիջոցում, աշխատելով Թիֆլիսի և Բաքվի թատերախմբերում, աշակերտելով հայ պրոֆեսիոնալ ռեժիսուրայի հիմնադիրներից մեկին՝ Արմեն Արմենյանին, Հովհաննես Զարիֆյանը հարստացնում է իր խաղացանկը, դառնում հայ նոր թատրոնի ամենաինքնատիպ դերասանական անհատականություններից մեկը: Նրա խաղացանկն աչքի էր ընկնում բազմազանությամբ և բազմաթեմայնությամբ, տարբեր ժանրերի ինքնատիպ միահյուսումներով: «Այն դերերը, որոնցով հանդես էր գալիս երիտասարդ Զարիֆյանը, վկայում էին և՛ նրա արագորեն շահած վստահությունը թատերական միջավայրում, և՛ նախասիրած թեմայի շրջանակը, ասելիքն ու ներքին մղումները: Նա անձնավորում էր կերպարներ, որ հիացնում էին ազնիվ ու շիտակ վարքագծով, հարուցում կարեկցանք իրենց ազնիվ տառապանքով»,- գրել է Լ. Հախվերդյանը:[6] Դերասանի համարձակ և ինքնատիպ խաղացանկի բազմազանությունը, հակումը դեպի ժամանակակից ռուս և արևմտյան թատերգությունը, դեպի մարտնչող նկարագիր ունեցող կերպարները, ինչպիսիք էին Ալեքսանդրը

[1] *Շ. Խաշնարածյան, «Ընտանեկան գաղտնիք», Նոր Դար, 10 հունվարի, 1898, թիվ 4*
[2] *Բ. Հարությունյան, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, Եր., 1980,հ. 1, էջ 492:*
[3] *Հովհաննես Զարիֆյան ժող., Եր., 1977, էջ 63:*
[4] *Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն. 1901-1920, Եր., 1980, էջ 264:*
[5] *Ս. Բոգեմսկի-Զատիկյան, Հովհաննես Զարիֆյան, Եր., 1966, էջ 11:*
[6] *Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն, էջ 266:*

(«Ժայռ»), Քիչմիշյանը («Նոր կյանքի շեմին») և այլն, վկայությունն էին այն բանի, որ ազգային թատրոն էր եկել բոլորովին նոր գեղարվեստական հայացքների տեր մի անհատականություն, ով հետագայում առավել վարպետանալով ու հմտանալով՝ պիտի խաղար Շեքսպիրի, Հյուգոյի, Սենկևիչի, Շանթի, Շիրվանզադեի, Դեմիրճյանի, սիմվոլիստական և նատուրալիստական թատերգության նշանակալի դերեր: Նրա խաղացանկի այս յուրահատկությունը հետագայում նշանավոր թատերական գործիչ և բեմադրիչ Լևոն Քալանթարին առիթ էր տվել Հ. Զարիֆյանին կոչել «ժույժ հետաքրքրական ու գունեղ, բայց և չափազանց էկլեկտիկ»:[1] Կառչած լինելով դերասանական ամպլուաների մասին ձևավորված ավանդական ու հին պատկերացումներին, Լ. Քալանթարն *էկլեկտիզմն* ու ժանրային բազմազանությունը հավանաբար շփոթել է՝ չցանկանալով տեսնել այն բացառիկ իրողությունը, որ մղվելով դեպի արտահայտչական-ոճական տարբեր սկզբունքներ, խաղալով ժանրային մեծ ընդգրկումների դերեր՝ Հ. Զարիֆյանը ձգտում էր ուրույն վերանայումների դերասանական արվեստում, ցանկանում էր թատրոն բերել, այսպես կոչված, դերասանական ունիվերսալիզմը, ինչն հնարավորություն էր տալիս կռիվ տալու *դերատեսակների*[2] սահմանափակվածության դեմ, խախտել համաբնույթ դերերի մասին եղած ընկալումները: Այս երևույթը պետք է դիտարկել որպես նորարարություն, որպես դերասանական արվեստում նոր պատկերացումների խիզախ հաստատում: Մշտապես գտնվելով որոնումների և նորահաստատումների հորձանուտում,ցանկանալով իր հարուստ արտահայտչամիջոցներն օգտագործել ամենատարբեր ոճական և ժանրային արտացոլումներում՝ Հ. Զարիֆյանը, բնականաբար, չէր կարող տեղավորվել դերասանական արվեստի կաղապարված ընկալումների մեջ, իսկ այս հանգամանքը պիտի առաջ բերեր թյուրըմբռնում, պիտի պահպանողականությանը հարկադրեր նրա արվեստում տեսնել էկլեկտիզմի դրսևորումներ: Ճիշտ է ընկալել Զարիֆյանի արվեստը Լ. Հախվերդյանը. «…Զարիֆյանը ցայտուն արտահայտված խարակտերային դերասան չէր: Առավել ևս նա հեռու էր կենցաղային ռեալիզմի ավանդներից, միանգամայն հեռու ազգագրական ճշգրիտ խաղառճից: Նրա խաղը եղել է սովորականից դուրս հուզական և համակող, ստեղծած դերապատկերները՝ հոգեբանորեն ստույգ, անձնավորումը՝ ճշմարտացի, խաղը՝ հավաստի»:[3] Այս հատկանիշների առկայությունն արդեն խոսում է այն մասին, որ էկլեկտիզմ փնտրողները եղել են խոր մոլորության մեջ՝ ավելորդ բանավեճ ծնելով դերասանի ստեղծագործական յուրատիպության շուրջ: Իսկ այդ յուրատիպության հիմքում նեոռոմանտիզմի արտահայտությունն էր, որը միավորվում էր սիմվոլիստականին և սենտիմենտալիզմին՝ ստեղծելով բացառիկ

[1] *Լ. Քալանթար, Արվեստի մայրուղիներում, Եր., 1963, էջ 352:*
[2] *Թատերագիտական եզր է, ամպլուա (emplol– ֆրանս.) բառի հայերեն թարգմանությունը:*
[3] *Լ. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 268:*

արտահայտչական-ոճական գեղարվեստական իրողություն:Տևական ժամանակ քննադատության շրջանում մեկ այլ բանավեճ էլ է եղել Զարիֆյանի շուրջ: Ի տարբերություն Հովհաննես Աբելյանի՝ Հ. Զարիֆյանը հեռու է մնացել կենցաղային ռեալիզմից, այդ ուղղության դրամատիկական երկերից, միևնույն ժամանակ, որպես յուրատիպ հայտնություն՝ ներկայացրել Գիժ-Դանիելին «Չար ոգի» դրամայում՝ շեշտելով կերպարի ուրույն ռոմանտիկականությունը, խոր հուզականությունը: Ոմանք, համեմատելով Աբելյանի և Զարիֆյանի դերակատարումները, նախապատվությունը տվել են Զարիֆյանին, սակայն Շիրվանզադեի «Արմենուհի» դրամայում Ալամդարյանի դերակատարման առթիվ էլ գրել. «…դերասանը խաղում էր ճիգով», «կարծես բեմի վրա ամեն վայրկյան հաշիվ էր տալիս, թե ինչ դեր է կատարում ինքը»:[1] Աբելյան-Զարիֆյան զուգադրումների դեպքում ուշագրավ եզրահանգումներ ենք արձանագրում. շեքսպիրյան խաղացանկից Զարիֆյանը խաղացել է այն դերերը, որոնք զարդարել են նաև Աբելյանի խաղացանկը՝ Օթելլո, Էդգար («Լիր արքա»), ինքնատիպ մեկնաբանությամբ և խաղարկմամբ ներկայացրել Մերկուցիոյին և Համլետին, սակայն եթե Աբելյանն ընտրել էր ռեալիստականը՝ որոշակի կենցաղային դրսևորումներով, ապա Զարիֆյանի կատարումները մղվում էին դեպի ռոմանտիկական թատրոն: Սա բնավ էլ չէր նշանակում, թե Զարիֆյանը չէր արտահայտում դարաշրջանի առաջատար գեղարվեստական ուղղությունները՝ մղվելով դեպի XIX դարասկիզբ: Նա, ինչպես նշեցինք, հայ թատրոնում ձևավորում էր նեոռոմանտիզմը՝ դառնալով այդ ուղղության խոշորագույն ներկայացուցիչը մեզանում: Վահրամ Փափազյանը հաստատել է Զարիֆյանի՝ նորարար լինելու հանգամանքը. «… և Զարիֆյանը ճանաչված էր այդպես՝ նոր արվեստի ռահվիրա»:[2] Ավանդականը ժխտելու,նոր ու ինքնատիպ խաղաձևերին դիմելու մասին է վկայում հետևյալ գնահատությունը. «Եզակի տաղանդի տեր է Զարիֆյանը: Հայ դերասանի սովորությանը հակառակ, նա չգիտե գալարվել, ջղաձգումներ անել, ձեռ ու ոտ դողդողացնել… Նա արտիստ է բառի նուրբ իմաստով»:[3] Ամեն ինչում սեփական դիտումները կարևորելու, նոր մեկնաբանություններ և խաղային միտումներ հաստատելու մասին է վկայում նաև Գուրգեն Զանիբեկյանի դիտարկումը Պաղտասար աղբարի դերակատարման մասին.«Հուզմունքը շատ անկեղծ էր, առանց ավելորդ ընդգծվածության՝ լիներ դա կոմիկական, թե դրամատիկական կողմը: Ծիծաղելով՝ խղճահարություն էիր զգում դեպի այդ մարդը, որովհետև նա տեսցնում էր քեզ կերպարի ներքին դրաման: Ես դիտել էի նաև Արամ Վրույրի Պաղտասարը, որ բոլորովին այլ կերպար էր»:[4]

---

[1] *Մա-ր, «Արմենուհի», Հորիզոն, 31 դեկտեմբերի, 1910, թիվ 293:*
[2] *Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, Եր., 1958, էջ 327:*
[3] *«Հորիզոն», 28 մարտի, 1915:*
[4] *Գ. Զանիբեկյան, Իմ աշխարհից, Եր., 1976, էջ 126:*

Հովհաննես Զարիֆյանի նորարարությանը տվել են «ձախ ռեալիստական» բնութագիրը,[1] այսպես անպայմանորեն մեզ մղելով դեպի այն միտքը, որ այս բնութագրի մեջ պետք է տեսնել առաջին հերթին XX դարասկզբին գոյավորված թատերական-գեղարվեստական ուղղությունների արտացոլումը: Թատերագետ Ռազմիկ Մադոյանը Լևոն Շանթի թատերգության հետ է կապում «ձախ ռեալիստականի» (Վ. Փափազյանի բնութագրումն է) հայտնությունը. «Շանթն իր հետ բերում էր թատերական պայմանականություն, խորհրդանիշներ, վերացարկում և ներզգայականի արտացոլման մինչ այդ հայ բեմին անհայտ պատկերներ ու երանգներ»:[2] Եթե ասվածը խիստ դիպուկ էր «Հին աստվածների» Վանահոր դերակատարման առիթով, ապա դերասանի արվեստում միայն Շանթի ազդեցությունները կամ էլ հոգեհարազատությունը չէին այս նորի դրդիչները: Այո, Զարիֆյանն արդիական թատերգության կողմնակիցն էր, սիմվոլիստական դրամայի լավագույն մեկնաբանը հայ թատրոնում: Սակայն միայն սիմվոլիստականի անդրադարձը չէ, որ կար նրա արվեստում: Զարիֆյանի խաղացանկում տեղ գտած մի շարք դերեր (Համլետ, Վանահայր, Տոկերամո, Ֆաուստ) հուշում են, որ նա փնտրում էր ժամանակի գեղարվեստական և հոգեբանական խնդիրների արտացոլման նոր միջոցներ՝ ժամանակակից արտահայտչաձևերով, գեղագիտական սկզբունքներով: Հ. Զարիֆյանը դերասանական ասպարեզ եկավ XIX դարի վերջին տարիներին, երբ արդեն համաշխարհային թատրոնում տեղի էին ունենում որոշակի տեղաշարժեր, երբ գեղարվեստի տիրույթներում հաստատվում էին արտահայտչաձևերի վերանայման գործընթացները, երբ գեղարվեստական ֆաբուլայի և ձևի ավանդական միջոցներն այլևս չէին կարող բավարարել դարավերջի ու դարասկզբի խաչմերումներում հայտնված մարդկանց, ովքեր հայտնվել էին էկզիստենցիալ վիճակում՝ ժխտելով իրականությունը, կքվելով նրա առաջադրած հոգեբանական պրոբլեմների ծանրության տակ: Մարդը մղվում էր ինքնաճանաչման՝ ստեղծելով իռեալ-պայմանական, վերացարկված-մետաֆիզիկական մի իրականություն,ուր դեկադենտությունը, սուբյեկտիվիստական կամայականությունն ու միստիցիզմն էին դառնում տիրապետող: Այս ամենի անդրադարձն արվեստում ստանում էր իր մեկնաբանությունն ու գնահատությունը՝ ստեղծելով արվեստի նոր չափանիշներ, միանգամայն նոր կարծրատիպեր բերելով նաև թատերարվեստ: Հ. Զարիֆյանն հենց այս ժամանակների անհատին էր ցանկանում բերել թատրոն՝ գտնելով-ձևավորելով այդ անհատին պատկերելու գեղարվեստական ձևերը: Սրանից զատ՝ Հ. Զարիֆյանը հոգեբանական-նեոռոմանտիկական արտահայտչամիջոցների համադրմամբ ստեղծում էր պարադոքսների յուրատեսակ տեսությունը՝ արդեն հայտնի թատերագրական կերպարների մեջ պեղելով տակավին

[1] *Ռ. Մադոյան, Բեմն իմ խաչն է, էջ 207:*
[2] *Նույնը:*

չուսումնասիրվածը, չներկայացվածը: Նա նաև հեռանում էր բեմական արվեստում այնքան լայն տարածում գտած բևեռացումների սկզբունքից և թատրոնում ձգտում հաստատել «դոստոևսկիական մոդելը»՝ մարդուն դիտարկելով ոչ թե որպես «բացասական» կամ «դրական» սուբյեկտ, այլ որպես բարդ հոգեբանական ամբողջություն: Հենց այս ձգտումն էլ նրա արվեստը տարազատում էր հայ դերասանական դպրոցի մյուս ներկայացուցիչների արվեստից և հիմք դնում դերասանական արվեստի կերպարանափոխմանը, որն արդեն XX դարի կեսերից դարձավ դիմորոշ ողջ ազգային թատրոնի համար: Հ. Զարիֆյանն իսկապես ունեցավ հետևորդներ, ունեցավ իր ձևավորած ավանդույթների կրողներ: Հեռու լինելով հայրենիքից և մայր թատրոնից՝ նա, այնուհանդերձ իր յուրօրինակ ներկայությունն էր հաստատում բոլոր այն նորահաստատումներում, որոնք էլ ստեղծում էին թատերական նորարարության շարժումը:

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՇՀՀԿ, ԵԿԳՄ)

ԱՆԻԻ ՀԱՆԴԵՄՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱԳՆԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնադարյան Անիի քաղաքային ծաղկուն կյանքի վկայություններից էին *ուրախական հանդեսները,* որոնց արձագանքներն «հնչում են» միջնադարյան պատմիչների գրառումներում: Դրանց փայլուն նկարագրությունները պարբերաբար հանդիպում են հատկապես Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում»:[1] Տոնական և խրախճական տրամադրության անբաժանելի մասն են կազմել հատուկ երգատեսակները, որոնք հիմնականում ընդգրկվել են գուսանների երգացանկում և կոչվել են հագներգություններ: Վերջիններս հատուկ ուշադրության են արժանի ոչ միայն իբրև յուրահատուկ հորինվածքներ, այլև որպես իմաստային տարբերակված նշանակության կրողներ, որոնք տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվել են հետաքրքիր մեկնաբանությունների և իրենց մեջ ստեղծագործական բազմակողմանի դրսևորումներ են ներառել:

Հագներգություն բառը հիմնականում կիրառվել է միջնադարյան քերականական գրականության մեջ, սակայն իմաստային առումով ընդգրկում է բավական լայն շրջանակ: Կարևորներից մեկը վերաբերում է գրական արվեստին, *բանաստեղծությանը.* «Հագներգութիւն որպէս մասնաւոր քերթուած Հոմերոսի, չափաւոր ոչ կարճ և ոչ լի տողիւք»,[2] «…որպէս գիրք պատմութեանց և բաժանումն մատենին յայլ և յայլ գիրս ի գլուխս

[1] *Հ.Ստեփանյան, Հ.Ափինյան, Երաժշտությունը միջնադարյան Անիում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.1, Գյումրի, 1998, էջ 137:*

[2] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.Բ, Վենետիկ, 1837, էջ 2:*

ճառ. բան. դպրութիւն»:[1] Այլ իմաստների թվում է նաև *երգվող հագներգությունը*. Այսպես՝ Մագիստրոսը, հիշատակելով հագներգությունների կատարման մասին, նշում է, որ կատարողները «գործարանս երաժշտականութեան առեալ մահական սարդենի, որ է դափնի»:[2] Այս նկարագրությունը գրեթե նույնությամբ կրկնվում է Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ իբրև *հագներգության* բնորոշում:[3] Այստեղ ասվում է. «Հագներգութիւն, ըստ որում ասէ ի հագնելոյ կարկատուն բանս», «կարկատուն բանիւք յարամանին շարամանեալ ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան, քանզի բազում բանից պէտք են կարկատել եւ աւարտել զսա, զոր այժմ ի հայումս առաւել քան յունականին գտանեմք»: «Հագներգութիւն հոռոմին լսի գաւազաներգութիւն. կամ ի հագնելոյ կարկատուն բանս, կամ է հագներգութիւն՝ ելք շնչոյ հագագին, զօր երաժշտականութեամբ նուագեն ի տաղս պարանցիկ երգոցն. կամ ի հագուցանելոյ ընդ միմեանս և կարկատելով բանս՝ յիրարս յեռել»:[4] Բառարանային համարժեքների թվում է նաև *երաժշտաժանրային* իմաստը. «Որ մեկնի յոմանց գաւազաներգութիւն և յայլոց՝ կարկատերգությիւն (զի «ռավտօս» է գավազան և «դաբդօ» կարեմ, կարկատեմ), իսկ ի մեզ ոմանք ի հագնի բառե ածանցեն, և այլոք ի հագնելոյ կամ ի հագագէ, կամ յագուցանելոյ: Որպես և է, նշանակէ քերթուած, *տաղ*, վէպ կամ վիպասանութիւն»:[5]

Հագներգության մեկնությունը որպես երաժշտաբանաստեղծական հորինվածք, հանդիպում է Դ.Թրակացու «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ, որի հայ մեկնիչները նույնպես անդրադարձել են հիշյալ հասկացությանը: Առավել տիպական հատկանիշներ բերված են XIII-XIV դդ. հեղինակ Հ.Երզնկացի Ծործորեցու «Համառօտ տեսութիւն քերականին» աշխատության մեջ:[6] Տաղերի արվեստի ծագումնաբանության և հորինվածքային առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրության մեջ Մ. Նավոյանն առավել հանգամանորեն անդրադարձել է վերոհիշյալ բնորոշիչներին և կատարել է մի շարք արժեքավոր դիտարկումներ՝ հագներգության երաժշտաբանաստեղծական առումների վերաբերյալ: Նա կանգ է առել նախ՝ հասկացության բացատրության մանրամասների վրա: «Ըստ Ծործորեցու,- գրում է Մ.Նավոյանը,- (հագներգությունը – Հ.Ս) բացատրվում է որպես իրար «հագցնելով», հանգուցելով և կարկատելով իրար «հեռել», որը «երգեցողք» առնելով երգում են, քանի որ իսկապես, մրմունջները և գուսանական երգերը հյուսվում են մտքերի «կարկատու-

---

[1] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի:*
[2] *Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 33:*
[3] *Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 383.*
[4] *Նույնը:*
[5] *Նույնը:*
[6] *Մ.Նավոյան,Տաղերի ժանրային ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Եր., 2001, էջ 86:*

մով»:[1] Այստեղից նա եզրակացրել է, որ *հագներգութիւն* նշանակում է բարդ կառույց ձևավորող հորինվածքի ստեղծագործական սկզբունք կամ հնար:[2] Այնուհետև ասվածը համեմատվում է Ստ. Սյունեցու «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ տրված մեկնությանը, ըստ որի հագներգությունը մեկնաբանվում է որպես գեղարվեստական խոսքի եղանակավորման կերպը որոշող հասկացություն:[3] Դիտարկումների տրամաբանական ընթացքը, հանգում է միջնադարյան տաղերի երաժշտաբանաստեղծական արվեստի հորինվածքային-ձևակառուցողական, կատարողական արտահայտչամիջոցների համալիրի և *հագներգության* համադրմանը, բազմաթիվ զուգահեռների անցկացմանը:

Ստ. Սյունեցու և Հովի. Ծործորեցու աշխատություններում հագներգությանը վերաբերող արժեքավոր տեսակետները այժմ փորձենք համադրել Գր. Մագիստրոսի «Մեկնության» հետ՝ կարևորելով նրա «Թղթեր»-ը՝ որպես յուրօրինակ «ասպարեզ», որտեղ լավագույն անդրադարձն են գտել հեղինակի կողմից իր ժամանակի մշակութային երևույթներին տրված մեկնություններն ու գնահատականները: «Թղթերում» Մագիստրոսը մի քանի անգամ հիշատակում է *հագներգությունը*՝ ոչ միանշանակ: Այսպես՝ ՀԱ թղթում, նա խոսում է հագներգությունների բովանդակության մասին. «Այսոքիկ *առասացութիւնք առականք հագներգութիւնք* սակս իմաստութեան ներհակաց իբրու Տիւռենացւոց զԵլլադացիս և Պառնասոյ զԱտտիկէ»:[4] Թվում է, որ հեղինակը վիպական բնույթի *գրական գործի* մասին է խոսում: Աղանդավորների դեմ ուղղված ԿԷ թղթում Մագիստրոսը վկայում է երաժշտական հագներգության մասին:[5] Գ. Բագրատունուն հասցեագրված թղթում Մագիստրոսը նրան խորհուրդ է տալիս «ի հոմերական տաղսն վերտառեալ չափաբերական և ոտանաւորս *հագներգական* կարկատեալ»:[6] Այստեղ ակներև է *հագներգության* և *տաղի* համակցությունը և *կարկատեալ* կողմնորոշիչ գործողության շնորհիվ պարզորոշ զգացվում է *հագներգության* որպես ստեղծագործական սկզբունքի կամ, եթե երգվող տաղ է, ապա նաև՝ տեքստի *եղանակավորման միջոցի* կամ *կերպի* գործառույթը: Մագիստրոսն իր «Թղթեր»-ում ընդգրկել է նաև գրական ստեղծագործությունների (որոնք, հնարավոր է ենթադրել՝ նաև երգվել են)՝ տաղերի նմուշներ: Դրանցից մեկը, որը նա նվիրել է իր որդուն, բնութագրված է այսպես. «Ազէ՛ ա՛ռ ընթերցի՛ր զարհեստ ոտանաւորացդ. *դիւցազնական է տաղդ, քաջ ոլորեալ,* և տաղ պղպջուն, օղուն և զեղուն»:[7] Այստեղ *տաղը* բնութագրվում է որպես *քաջ ոլորեալ* հորինվածք: Նույնը հանդիպում ենք

[1] *Մ.Նավոյան, նշվ. աշխ., 86:*
[2] *Նույնը:*
[3] *Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 193:*
[4] *Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, էջ 204:*
[5] *Նույն տեղում, էջ 155-156:*
[6] *Նույն տեղում, էջ 97:*
[7] *Նույն տեղում, էջ 234:*

նաև Պետրոս Գետադարձի խաչանշան գավազանին նվիրված տաղի բնութագրության մեջ. «*Հագներգութիւնս այս … տաղ է հոմերական քաջ ոլորեալ*»:[1] Հոմերական տաղի բնորոշումը, անտարակույս, *քաջոլորակ* բառի համարժեքն է: *Քաջոլորակ*-ը նույնպես միջնադարյան քերականական գրականության մեջ մեկնաբանված հասկացություն է, որը բնորոշում է տաղ ժանրի եղանակավորման կերպը: Դա միջնադարյան ընթերցանության արվեստում ընդունված կատարողական ուրույն մի սկզբունք է, որը զարգացել է գուսանական արվեստում և ապա անցել նաև միջնադարյան մասնագիտացված երգարվեստի ոլորտ:[2] «Երբ ասվում է, թե «քաջոլորակի տաղը», ըստ «վերծանողական» սովորության է եղանակավորվում նշանակում է, որ տաղի եղանակավորումը կատարվում է նախ՝ տեքստը ըստ բովանդակության տրոհելով, ապա՝ դրանց ճիշտ առոգանությամբ (շեշտելով, «բթելով», «պարբկելով») և բովանդակությամբ թելադրված «ենթադատությանը» համապատասխան, ճիշտ եղանակի մեջ ամփոփելով մատուցել»:[3] Մագիստրոսի հիշատակություններում հագներգությունը լիովին ընկալելի է նաև որպես գուսանական երգարվեստում ընդունված հորինվածքային սկզբունք, որպիսին ակնարկվում է Գագիկ Բագրատունուն ուղղված թղթում. «Զի տեսանեմք զքեզ ի հոմերական տաղսն վերտառեալ չափաբերական և *ոտանաւորս հագներգական* կարկատեալ»:[4]

Ինչպես տեսանք, Մագիստրոսի «Թղթերում» *հագներգություն* ժանրի անվանումը հիշատակված է թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր երգարվեստում, ինչը դարձյալ վկայում է զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում այս երկու մշակութային ոլորտների առնչակցությունների և փոխազդեցությունների մասին: Այսպիսով ակներև է դառնում հանդեսներում գուսանական արվեստի բազմակերպ դրսևորումների և հատկապես *հագներգությունների* գործուն դերն ու կշիռը:

Անահիտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԱԻ)

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Ներկա հաղորդման առարկան Ալեքսանդրապոլում XIX դարում և XX դարասկզբին տարածված հայ աշուղական հայրենասիրական երգերն են, որոնք (շուրջ 83 նմուշ, դրանցից 49-ը՝ ձայնագրյալ) դիտարկել ենք «Հայրենասիրության թեման հայ երաժշտության մեջ» մեր հետազոտա-

[1] *Գրիգոր Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 33:*
[2] *Մ.Նավոյան, նշվ. աշխ., էջ 79-95:*
[3] *Նույն տեղում, էջ 94:*
[4] *Գրիգոր Մագիստրոս,նշվ. աշխ., էջ 97:*

կան աշխատության շրջանակներում: Մեր նպատակն է ուսումնասիրել այդ երգերի երաժշտաբանաստեղծական դիմագիծը, վերջինիս տարբեր բաղադրիչներով բառակազմ, լեզվական հատկանիշներ, բովանդակություն, ոտանավոր, մեղեդի, վանկաչափություն:

Առաջնորդվել ենք «հայ ազգային մշակույթի երախտավորներից մեկի՝ երաժիշտ-ֆոլկլորագետ Արշակ Բրուտյանի»[1] «Ռամկական մրմունջներ» «կոթողային»[2] ձայնագրյալ ժողովածուի երկրորդ հատորով, որի նյութը հիմնականում աշուղական երգեր, ալեքսանդրապոլցի երաժշտագետը գրառել է Շիրակի գյուղերում և, մանավանդ, հայրենի քաղաքում ապրող աշուղներից, և ամենից առաջ՝ մեծն աշուղ Ջիվանուց[3]: Հիմք են ծառայել նաև «Շիրակի հայ աշուղները» արժեքավոր ժողովածուն (Եր.,1986, կազող՝ բանասեր-աշուղագետ Կ. Դուրգարյան), Ջիվանու և Շերամի ձայնագրյալ ժողովածուները[4] և այլ հրատարակություններ:

Ինչպես հայտնի է, հայրենասիրության գաղափարը, վերջինիս թեմատիկ, բովանդակային ամենալայն ընդգրկումով, խիստ բնորոշ է հայ աշուղական երգարվեստին, որ հատկապես ընդգծվեց XIX դարում և XX դարի առաջին տասնամյակներում տարբեր պատերազմների, գաղթերի, կոտորածների, նաև հայոց հերոսամարտի, «թոհ ու բոհով» առլեցուն ազգային կյանքի պայմաններում: Այս իմաստով Ալեքսադրապոլը՝ «Հայաստանի աշուղական երկրորդ՝ Նոր դպրոցի կենտրոնը» (Գ. Լևոնյան)[5], առանձնահատուկ նշանակություն ունեցավ: Այստեղ լիաթոք հնչեց հայ աշուղների հայրենաշունչ քնարը, լայնորեն տարածվեցին «խիստ շեշտված հայրենասիրական» երգերը[6]: Դրանք կատարվում էին ամենուրեք՝ սրճարաններում, հավաքույթներում, շատ անգամ, հատկապես XIXդ 70-ականներից՝ նույնիսկ փոխարինելով քաղաքի կենցաղում սիրված աշուղական դասական երգացանկի նմուշները՝ սիրո, խրատական, երգիծական, կրոնաբարոյագիտական և այլ երգերը, սիրավեպերը, հեքիաթները[7]:

Երգերի հեղինակները՝ շուրջ տասնինն անուն, հայ աշուղական տարբեր սերունդների ներկայացուցիչներն էին (ամենատարեցը՝ Ջահրին, ծնվ. 1818թ., կրտսերը՝ Ֆահրատը՝ ծնվ. 1867թ.), մեծ մասամբ ալեքսանդրապոլցիներ՝ Հավեսի, Հազիրի, Ֆիզայի, Ջամալի, Յուշարի, Խայաթի, կամ Շիրակի գյուղերից՝ Գյուլգյազյան, Հովսեփ, Ֆահրատ, կամ դրսից

---

[1] *Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, հ. Գ, Եր., 2002, կազմեց Մ. Բրուտյանը, Առաջաբան, էջ 12: Հետագա տեքստում՝ Ռամկ. մրմ., հ. 2:*

[2] *Նույն տեղում, էջ 12:*

[3] *Նույն տեղում, էջ 9:*

[4] *Ջիվանի, Եր., 1955, կազմ. և խմբ. Մ. Աղայանը և Շ. Տալյանը, Ջիվանի (ձայնագրյալ երգարան), Եր., 1998: Հետայում ժողովածուները նշում ենք. առաջինը՝ Ջիվանի, 1955, երկրորդը՝ Ջիվանի, 1998: Շերամ, Երգեր, Եր., 1959, խմբ. Մ. Աղայան, Շերամ, Երգեր, Եր., 1981: Հետայում՝ Շերամ, 1959, և Շերամ, 1981:*

[5] *Հայ աշուղներ, կազմեց Գ. Թարվերդյանը, Եր., 1937, Առաջաբան, էջ XV:*

[6] *Ռամկ. մրմ., հ. 2, էջ 10:*

[7] *Շիրակի հայ աշուղները, էջ 9:*

եկածներ և Ալեքսանդրապոլում «աշուղների ոստանում»[1], նաև մերձակա գյուղերում հաստատվածներ՝ Զահրի, Մալուլ, Բագրատունյան, Ջիվանի, Պայծառե և ուրիշներ: Քաղաքում երգել են նաև հայ աշուղական Երևանյան կամ Արարատյան դպրոցի հիմնադիր՝ Շիրինի հայրենասիրական երգերը[2]: Երգերի լեզուն հիմնականում գրական հայերենն է՝ աշխարհաբար: Վերջինս ներկայացված է ոչ միայն իր «անխառն» տեսքով, այլեւ մեծ մասամբ, համեմված հայոց լեզվի «Կը» ճյուղի Կարնո բարբառին հատուկ խոսքով, արտահայտություններով, նաև բառերի հնչյունափոխության, հոլովման և խոնարհման այլևայլ ձևերով.

«Գարուն <u>կուգա</u> իր անուշիկ հովերով,
Կանցնի <u>կերքա</u> նրա գլխեն ցողերով»:
(Շերամ, Հերոսի հիշատակին, 1959, էջ 152) և այլն:

Որոշ երգերում գրական հայերենն ընդմիջվում է գրաբարյան բառերով և դարձվածքներով, որի առավել ցայտուն օրինակն է Բագրատունյանի «Այս իմ ծով արտասուք» երգը (Ռամկ. մրմ., հ. 2, N 6, էջ 26): Այս իմ ծով *արտասուք* գնան-ընթանան
Ի քեզ սիրտ ապառաժ, քանի՞ կան մնան

Պայծառեի «Իբրև Արաքս ես հոսում եմ» երգում (Ռամկ. մրմ., հ.2, N 39, էջ 71) գրական լեզուն զուգորդված է գրաբարյան, և միաժամանակ բարբառային (Կը ճյուղի Կարնո բարբառ) օրինակներով.

Չկար քեզ նման վարդարան
Բայց վարդերդ *ստարք* տարան,
<u>Ինձի</u> վարձել է քո տերդ:

Նշենք նաև Մշո բարբառով հորինված մի շարք երգեր: Դրանցից է աշուղ Ջամալուն վերագրվող «Իմա՞լ պըտի էնինք» երգը (Ռամկ. մրմ., հ. 2, N 92, էջ 134) Իմա՞լ պըտի էնինք, ես լե չըմ գինա,
Որ չը թորկինք քոչինք մըր տուն ու վաքան»:

Հանդիպում են և օտարալեզու բառեր՝ հունարեն, ռուսերեն, պահլավերեն, արաբերեն, պարսկերեն, տաճկերեն: Դիտարկվող երգերում հայրենասիրության գաղափարը մարմնավորված է իմաստային երկու նշանակությամբ: 1. Առկա են հայրենասիրական երգի ավանդական թեմաները՝ սեր, կարոտ հայրենի երկրի, ժողովրդի նկատմամբ (Ջիվանի՝ «Ազգ իմ», Ռամկ. մրմ., հ. 2, N 1, էջ 18), գովք ծննդավայրին (Շերամ՝ «Ծննդավայրս», Շիրակի հայ աշուղները, էջ 166), լեզվին (Ջիվանի՝ «Հայոց լեզու», Շիրակի հայ աշուղները, էջ 65): 2. Միաժամանակ երգերի մեծ մասը նվիրված է ժամանակաշրջանի (XIXդ. և XXդ. սկիզբ) ազգային

[1] *«Շիրակի հայ աշուղները», էջ 5:*
[2] *Ինչպես հայտնի է Շիրինն իր աշուղական կրթությունը ստացել է Ալեքսանդրապոլում՝ աշուղ Բավեի մոտ («Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 212):*

կարևորագույն խնդրին՝ արևմտահայոց ողբալի ճակատագրին և օսմանյան լծից ազատագրման գաղափարներին:[1]

Հատկանշական է, որ Արևմտյան Հայաստանի և արևմտահայոց վիճակին անդրադարձել են դիտարկվող աշուղական երգերի համարյա բոլոր հեղինակները, որոնց՝ խնդրո շուրջ բազմաբովանդակ և բազմաբնույթ «երգաբանությունները» փորձել ենք դասակարգել ըստ թեմատիկ խմբերի: Դրանք են՝ *1.«Մարտնչող» երգեր,* այս խմբում ընդգրկել ենք «ակտիվ, գործնական հայրենասիրության» բնույթի (Ծ. Նազարյան) երգային նմուշներ, որոնք բովանդակում են կոչեր «ի զեն»՝ պայքարելու, կռվելու «յանուն նախնեաց և հայրենեաց», Ջիվանի՝ «Սլանանք» (Ջիվանի, 1955, էջ 141), գովք հերոսներին՝ ապստամբած զեյթունցիներին, Շերամ՝ «Զեյթունցիների քայլերգ» (Շերամ, 1959, էջ 147), սասունցիներին, Ջիվանի՝ «Սասունա սար» (Ջիվանի, 1998, էջ 10), ֆիդայիներին, Շերամ՝ «Ալ ու ալվան ես հագել» (Ա. Քոչարյան, Հայ գուսանական երգեր, Եր., 1976, N79, էջ 179), Անդրանիկին, Շերամ՝ «Իբրև արծիվ» (Շերամ, 1981, էջ 148) և այլն: *2.Պատերազմի և արտագաղթի մասին երգեր:* Դրանցից մեկը՝ Շերամի «Մալ ու մալալս ջարդեցին» երգն է (Շերամ, 1959, էջ 148), ժողովրդական ոճով հորինված գեղջուկի բողոք-պատմվածքը պատերազմական արհավիրքների մասին: Արտագաղթի թեմայով երգերում, երևույթը՝ արտագաղթը, ներկայացված է որպես «ախտ (Ջամալի՝ «Գաղթականություն», Շիրակի երգեր, էջ 100) հայ իրականության առավել բացասական, հայակուլ կողմերից մեկը (Ջիվանի՝ «Գաղթականություն», Շիրակի երգեր, էջ 69): *3.Այլաբանական երգեր:* Խնդրո առարկա երգերին բնորոշ է հայրենասիրության մեկնության այլաբանական կերպը: Ավելին, այստեղ «գործում է» Հայրենիքի հետ կապված այլաբանությունների մի ամբողջ համակարգ (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

Հայրենիքի այլաբանական կերպարները							
սգազգայաց կին	սիրուհի	մայր	այծյամ	հավ	սոխակ	այգի	ծով
Հարակից այլաբանական կերպարները							
արեգակ	ամպ	ջուր	կռունկ	գարուն	առավոտ		

4.Պատմական երգեր: Այս երգերում ներկայացված է «Նորահիրաշ պսակավոր» (Ջայնքաղ Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 432) ս. Վարդան Մամիկոնյանը և նրա կյանքի սխրանքը՝ Ավարայրի ճակատամարտը (Ջիվանի՝ «Ավարայրի դաշտը», Ռամկ. մրմ., հ. 2, N15, էջ 40): Մամիկոնյանի հետ միասին ոգեկոչվում են նաև հայոց պատմության մյուս հերոսները՝ Տրդատ արքան, Գայլ Վահանը, Բագրատունի քաջ Սմբատը (Ջիվանի՝ «Գնաց վրեժ առավ Հոչե արքայից», Ռամկ. մրմ., հ. 2, N23, էջ 50),

[1] *Ինչպես հայտնի է, նույն գաղափարները սնել են ժամանակի ոչ միայն հայ աշուղական ստեղծագործությունը, այլ նաև ազգային ողջ արվեստն ընդհանրապես, և հատկապես, գրականությունը:*

Երվանդյան Տիգրանը, Արշակը, Արտաշեսը և այլք (Ջամալի, «Ո՞ւր են մեր նախնիքը», Շիրակի հայ աշուղները, էջ 101): Երգերի «հերոսներից է նաև «ողբալի քաղաք Անին (Ջիվանի՝ «Հանդիպողը քեզի՝ տխրի կը մնա», Ռամկ. մրմ., հ. 2, N46, էջ 79)՝ որպես տառապյալ Հայրենիքի և ազգի, հայ քնարերգության ավանդական խորհրդանիշներից մեկը:

Հաղորդման մեջ կներկայացնենք նաև Ալեքսանդրապոլում տարածված աշուղական հայրենասիրական երգերի հեղինակների, այդ երգերի բառակազմի, հայրենասիրության գաղափարի մեկնության տարբեր կերպերի վերաբերյալ ուշագրավ նյութեր:

Խաչիկ ԲԱԴԻԿՅԱՆ (ՀԱՀ)

ՇԻՐԱԿԸ՝ ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԳԵՐԻ ՈՒ ՊԱՐԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ

«Ամենայն Հայոց երգի վեհափառ, մեր երգի Մեսրոպ Մաշտոց, Հայոց երգի գիր ու տառ» (Պ. Սևակ), Հայ երգը սրբագործող և աշխարհով մեկ տարածող Կոմիտաս Վարդապետը իր հավաքած ու մշակած շուրջ 3000 ժողովրդական երգերի ու քառյակների և մոտ 230 զուգերգերի ու պարեղանակների մի զգալի մասը լսել ու գրի է առել Շիրակի դաշտի ժողովրդից:Դեռևս Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին(1881-1893) այդ ձայնեղ պատանին («ձայն մը չէր ադ, հոգի մըն էր» (Խրիմյան Հայրիկ)) ժողովրդական երգի նկատմամբ պաշտամունք ունեցող Սողոմոն Սողոմոնյանը, տարբեր հայաբնակ վայրերից ճեմարան եկած իր դասընկերներից գրի էր առնում իրենց հետ բերած երգերն ու պարեղանակները. դրանցից առավելապես նրան դուր էին գալիս Մշո դաշտի և Շիրակի երգերն ու մեղեդիները: Շնորհիվ իր դասընկերների և ուսուցիչների նա զգացել էր, որ Շիրակի ժողովուրդը օժտված է ստեղծագործական աստվածատուր շնորհքով. անհամար հեքիաթների, անեկդոտների, առակների ու ասացվածքների հետ ստեղծել է նաև հազարավոր երգեր ու մանիներ: Ահա թե ինչու նա մի քանի անգամ այցելեց Շիրակ՝ դրանք գրի առնելու և մշակելու նպատակով:

Կոմիտասի առաջին այցը Ալեքսանդրապոլ տեղի ունեցավ 1899-ի ամռանը, երբ Բեռլինի Արքայական կոնսերվատորիան ավարտելուց և անվանի երաժիշտների բարձր գնահատականներին արժանանալուց հետո արտաքինով եվրոպականացած, հոգով ու էությամբ հայ մնացած Կոմիտասը վերադառնում է հայրենիք: Նա գնացքով հասնում է Թիֆլիս, այստեղից էլ՝ Ալեքսանդրապոլ: Բեռլինից դաշնամուր էր բերել Խրիմյանի եղբոր՝ Խորենի թոռնիկների համար: Տեղեկություն ուներ, որ Խրիմյանը եղբոր ընտանիքի հետ հանգստանում է Բյուրականի կաթողիկոսական

ամառանոցում: Կոմիտասը դաշնամուրը պահ է տալիս կայարանի պահասենյակում և հարցուփորձ անելով գտնում է իր ճեմարանական դասընկեր, Յոթվերքի քահանա Հակոբ Խաչվանքյանի տունը. ջերմ ընդունելությունից և մեկ օր հյուրընկալվելուց հետո միասին այցելում են հայ դաշնամուրային արվեստի հիմնադիր, բանահավաք ու բազմաթիվ հայ ժողովրդական երգերի մշակող Նիկողայոս Տիգրանյանին, որի մշակած երգերը Կոմիտասին շատ էին դուր գալիս: «Քանի մը օր հյուր մնաց մեզի, մեր օրերը անցուցինք արևելյան և հայ ժողովրդական երգերու և պարերգերու ուսումնասիրությամբ, որոնք շատ կհետաքրքրեին զինքը, ոտքով կամ կառքով կշրջեինք մոտակա գյուղերը, կհանգստանայինք Արփաչայի եզերքներին և ամեն տեղ հայկական ձայնանիշերով կգրեր իր լսած երգերը, ու ինքն էլ իր քաղցր ձայնով կերգեր անոնք. նրա երգի ձայնը կարձագանքեր ամեն կողմ»,- իր հուշերում գրում է Ն. Տիգրանյանը: Մի քանի օր Ալեքսանդրապոլում մնալով, տեղից և մոտակա գյուղերից բազմաթիվ երգեր ու պարերգեր, այդ թվում նաև Ն. Տրգրանյանի նոր մշակած «Ռանգի»-ն ձայնագրելուց հետո Խրիմյանի եղբոր և իր մտերիմ ընկերներ Փանոս Թերլեմեզյանի և Եղիշե Թադևոսյանի հետ մի ձիասայլ են վարձում և դաշնամուրը տեղափոխում են Բյուրական: Սրտառուչ հանդիպում Խրիմյանի հետ...: Մի շաբաթ հայ երգի ու պարի տոնահանդես էր. մոտակա գյուղերից հարյուրավոր մարդիկ էին գալիս Վեհափառի Աջը առնելու և իրենց Խաղ Կանչող Վարդապետի քաղցր երգը լսելու:

Տեղի երիտասարդները խնդրում են սիրելի Վարդապետին՝ իրենց հետ մի երկու օրով լինել Արագածի լանջերին՝ շնչելու լեռնային մաքուր օդը, վայելելու բազմերանգ ծաղիկների բույրը և սառնորակ աղբյուրների կարկաչը: Կոմիտասը չի մերժում, մանավանդ որ այնտեղ պետք է լսեր նաև նոր երգեր, հատկապես՝ քրդական:

Թեև Կոմիտասի երգացանկը բավականին հարստացել էր Շիրակի մեղեդիներով, բայց նա զգում էր, որ դրանք իրենց տարբերակներն ունեն, և նա որոշել էր ավելի հարստացնել իր գանձարանն այդ հյուրընկալ ու խոսքաշեն ժողովրդի երգարվեստով: Դեմն ամառ էր, ինքը դասերից ազատ էր, իսկ շինականի համար ամենաեռուն օրերն էին. սկսվում էր խոտհունձը, կսկսվի նաև կալուկուտը, հարս ու աղջիկ յայլաներ են բարձրացել ու ավելի ազատ ու անկաշկանդ էին երգում. ուրեմն պետք է լինել նրանց մոտ ու լսել նրանց երգը տարբեր աշխատանքների ընթացքում՝ խոտը հնձելիս, հնձվորին հաց բերելիս, կով կթելիս, խնոցի հարելիս, բանջար քաղելիս... իսկ հարսանյաց երգերը կլսի ուշ աշնանը ու ձմռանը:

Կոմիտասը երկրորդ անգամ այցելեց Գյումրի 1904թ., այս անգամ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյանի հետ: Խրիմյանը Վրաստանի Հայոց թեմի հետ հանդիպելու համար իր հետ տարել էր նաև Կոմիտասին, որը մի քանի օր Թիֆլիսում մնալն օգտագործում է մի քանի վրացական երգեր ձայնագրելու համար: Վերադարձին երկու օրով հյուրընկալվում են

Ալեքսանդրապոլում, իջևանում են հոգևոր ասաջնորդի տանը՝ կիրակի օրը Յոթվերք եկեղեցում պատարագ մատուցելու: Գյումրեցիները, իրար ձայն տալով, հավաքվում են հոգևոր առաջնորդի պատշգամբի առաջ՝ իրենց սիրելի Հայրիկին տեսնելու և իրենց արդեն ծանոթ Կոմիտասի քաղցր ձայնը լսելու: Պատշգամբ է դուրս գալիս Խրիմյանը, օրհնում է ժողովրդին և հանդիսավոր պահպանիչ կարդում, բայց ժողովուրդը չի հեռանում. վանկարկում է՝ Կո-մի-տաս...: Կոմիտասը դուրս է գալիս պատշգամբ ու սկսում է երգել: «Նրա ձայնը կլկլում էր կաքավի նման, մի երգը հաջորդում էր մյուսին, մինչև անգամ «Դլե յաման»-ը»,- պատմում են ներկա եղողները՝ նաև՝ իմ տատիկը: Կիրակի օրը տոն էր ոչ միայն գյումրեցիների, այլև տարբեր գյուղերից, նաև Ջավախքից ու Ախալքալաքից Գյումրի եկած ժողովրդի համար: Պատարագ էր մատուցում Խրիմյանը, իր քաղցր երգով բոլորին գերել էր Կոմիտասը, ժողովուրդը ձայնակցում էր նրա շարականներին: Պատարագից հետո մի քանի տեղով մատաղներ, քեֆ, ուրախություն, երգ ու պար: Կոմիտասը առիթը բաց չէր թողնում. ձայնագրում է իր համար նոր երգեր ու պարեղանակներ:

Խրիմյանին շատ էր դուր եկել Շիրակի ժողովուրդը՝ իր հյուրասիրությամբ և երգ ու երաժշտության նկատմամբ ունեցած մեծ սիրով:

-Վեհափա՛ռ Տեր, Շիրակի ժողովուրդը լրիվ տարբերվում է մեր մյուս գավառների ու քաղաքների բնակիչներից. նախ՝ շատ սրտաբաց են ու հյուրասեր, ապա՝ ժողովրդական բան ու բառի, երգ ու տաղի, զվարճախոսությունների անսպառ շտեմարան է այս երկիրը: Դուք ինձանից լավ գիտեք, Վեհափա՛ռ, որ «Շիրակ» բառն էլ շտեմարան է նշանակում, հացահատիկի շտեմարան: Արդեն երկրորդ անգամ եմ լինում այս տարածքում, որը շատ է հարստացրել իմ գանձարանը: Աստված էլ այս ժողովրդի սրտով իրեն է տալիս. դաշտերը առատ են ու բերրի, շատակեր Շարան միայն Շիրակի դաշտերով է կշտանում: Խոսք է բացվում նաև հայկական ու ռուսական երգերի մասին,- հետդարձին վագոնի մեջ կաթողիկոսին մեծ հիացմունքով պատմում էր Կոմիտասը:

Կոմիտասի երրորդ այցը Շիրակ եղավ 1905թ. ամռանը՝ առողջական վիճակը վերականգնելու նպատակով: Դրանից առաջ Թիֆլիսում տված 3 համերգները, տարբեր մարդկանց հետ հանդիպումները հոգնեցրել էին Կոմիտասին, առողջությունը վատացել էր, հանգստանալու խիստ կարիք էր զգում. աշակերտներից ու ընկերներից շատերն են առաջարկում իրենց գյուղերում հանգստանալու և բուժվելու, բայց նա գերադասում է նորից Շիրակը՝ նրա զովաշունչ օդն ու մարդկանց ջերմությունը: Եվ իր լավագույն աշակերտ, ծնունդով հառիճեցի Երվանդ Տեր-Սինասյանի հետ ճանապարհ է ընկնում դեպի Հառիճ՝ նպատակ ունենալով տեսնելու նաև Արագածի կանաչազարդ փեշին 7-րդ դարի կառույց Հառիճավանքի համալիրը: Առավոտյան գնացքը կանգ է առնում Ալեքսանդրապոլում, այստեղից կառք են նստում և ուղևորվում իրենց վաղեմի բարեկամ վարդա-

պետ Կյուրեղ Նավունյանի տունը. ջերմ ընդունելություն ու հյուրասիրություն: Հավաքվում են գյումրեցիները, շնորհավորում են Կոմիտասի՝ Թիֆլիսյան համերգները, նրան ցանկանում են նոր հաջողություններ: Նա նորից երգեր ու մեղեդիներ է ձայնագրում՝ հայկական նոր նոտագրությամբ:

-Հայր սուրբ ջան, խնդրեմ կը էսի մի կտոր փախլավեն անուշ էնեք, էնքան համով է, օրա ուտողը մեկն էլ կուտե,- խնդրում է տանտիրուհին:

-Ես չեմ կասկածում ձեր շնորհքի վրա, հարսխանում ջան, բայց մինչև չերգես, քո փախլավան ուտող չկա,- կատակում է Կոմիտասը:

-Հայր սուրբ ջան, էսօր դու կե, երկու օր հետո Վարդավառն է. ուխտի գուկանք Հառիճ, էնքան երգենք, օրա զայլեդ տանենք:

Առավոտյան հյուրերին էր սպասում նախշած կառքը՝ զարդարված ձիերով: Ճանապարհին Երվանդը իր ուսուցչին է ներկայացնում իրենց արևելյան տիպի քաղաքը, ժողովրդի կյանքն ու կենցաղը, եկեղեցական տոների նկատմամբ խիստ ավանդապահ լինելը:

-Գիտեմ, սիրելի Երվանդ, ես այստեղ եղել եմ նաև Հայոց Հայրիկի հետ. նա էլ շատ է հավանել արհեստների ու արվեստների այս քաղաքը և ստեղծագործ ժողովրդին՝ երաժշտասեր ու բանաստեղծական. դե քեզ օրինակ մեր Ավոն ու Ջիվանին, Արմեն ու Նիկողայոս Տիգրանյանները, և ով գիտե դեռ ինչքան կան, որոնց մենք չենք ճանաչում: Տեղ են հասնում, տեղավորվում են, հանգստանում, որպեսզի հաջորդ օրը Վարդավառի ծիսակատարությունները բաց չթողնեն:Վարդավառի տոնախմբությունը, ժողովրդական երգն ու երաժշտությունը, զուռնան ու դհոլը, պարն ու շուրջպարը Կոմիտասին մոռացնել տվին տենդն ու հիվանդությունը: Այս ամենը նրա համար ամենալավ բժշկությունն էր: Գնալով վանքի բակը լցվում է բազմությամբ. գալիս են ռանչպարներ ու արհեստավորներ, ծերեր ու երեխաներ, հարսներ ու աղջիկներ, նորապսակներ ու սիրահարվածներ, նաև արբունքի հասած տղաներ ու աղջիկներ՝ կյանքի ընկեր փնտրելու: Դհոլի ու զուռնայի ձայնը աշխարհ է բռնում, կամաց-կամաց բոլորում է շուրջպարը. խայտաբղետ տարազներով հարսների ու աղջիկների երգն ու պարը, տղաների պարի մեջ մտնելը, պարուհիների խաղիկներին պատասխանելը հիացնում են Կոմիտասին, նա իրեն զգում է, ինչպես ձուկը ջրում: «Ժողովրդական այս երգերն ու մանիները հրաշալի գոհարներ են, պետք է դրանք փրկել կորստից»,- մտածում է Կոմիտասը ու ծոցատետրում գրանցում. Մատանուս կարմիր ակը, վայ լե, լելե... Ալ յայլուղս կորավ ձեր դուռն... Վարդ եմ քաղել շաղերով... Ցար, մի գնա յայլեն...Գնա, արի ման արի... Կանաչ արտը հաց տարա... Թագվորի մեր դուրս արի... Առնեմ, երթամ իմ յարը... Ամա, Թելո, Թելո ջան... Սև է չոբանի շունը... Այդ օրը Կոմիտասը ցնծության մեջ էր, նրա ուրախությանը չափ չկար: Նրա «ավարը» երբեք այդքան ծանր ու բազմազան չէր եղել, նա գրի էր առել 34 երգ ու պարեղանակ: Կոմիտասը 6 շաբաթ մնում է Հառիճում, հաճախ Երվանդի

հետ լինում է մոտակա գյուղերում, ավելի մոտիկից ծանոթանալու գյուղացիների նիստ ու կացին, և ավելի է հարստացնում իր «ավարը»:

Կոմիտասի վերջին այցը եղավ Շիրակ 1913-ին:

1907թ. Խրիմյանի վախճանվելուց հետո աստիճանաբար վատթարանում է ինչպես Մայր Աթոռի, այնպես էլ ճեմարանի վիճակը. գլուխ էր բարձրացրել միջակությունը, սկսվում են բանսարկություններ Կոմիտասի դեմ, և նա 1910թ. սրտի ցավով թողնում է Էջմիածինն ու գնում Պոլիս: Այստեղ կազմակերպում է համերգներ ու դասախոսություններ, կազմում 300 հոգանոց «Գուսան» երգչախումբ, ցանկանում է բաց անել կոնսերվատորիա, կազմակերպում է հայ գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված մեծ փառատոն, որը զարմացնում է թուրքերին: Հայրենի երկրի կարոտը նրան կրկին բերում է իր սուրբ օրրանը: Սակայն Մայր Աթոռի «Նորին միջակությունը» (Պ.Սևակի խոսքերն են) և անձամբ Գևորգ V կաթողիկոսը նրան շատ սառնությամբ են ընդունում, և կաթողիկոսի «Ե՞րբ ես եկել, ե՞րբ ես գնում» խոսքերը խոցում են նրբազգաց երգահանի սիրտը: Պոլիս վերադառնալուց առաջ մոտ երկու ամիս շրջում է իր երկրի գյուղերն ու շրջանները, լինում Իգդիրում, Գառնիում, Բյուրականում, Գավառում, Կոտայքում, Վանաձորում ու Շիրակում, հավաքում է հարյուրից ավելի նոր երգեր ու պարեղանակներ: Մի երկու շաբաթ մնում է Ղարաքիլիսայում, այնուհետև անցնում է իր սիրելի Ապարանը. այստեղ էլ հյուրընկալվում է իր ընկեր ու բարեկամ Բենիկ վարդապետի տանը, որտեղ նրան են այցելում ինչպես տեղաբնակներ, այնպես էլ Մշո դաշտից գաղթականներ: Ապարանից Կոմիտասը վերադառնում է Էջմիածին, մտնում Մայր Տաճար, խնդրում ամենայն երկնավորին՝ արդար ու մեղավորը ջոկել, ապա հրաժեշտ է տալիս իր սիրելի սաներին, ընկերներին ու բարեկամներին, հավաքում է վերջին իրերը և վերադարձի հույսը կտրած՝ սրտի ցավով թողնում է հայրենի երկիրն ու ժողովրդին...

Պոլիս, 1915 թվական, ապրիլ...

Մարինե ՀԱՐՈՅԱՆ (ԳԱԹ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ Կ.ԿՈՍՏԱՆՅԱՆԻ «ԻՆՉ ԵՐԳԵՐ ԷԻՆՔ ԼՍՈՒՄ ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՒՄ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայագետ, մանկավարժ Կարապետ Կոստանյանի թողած հարուստ ձեռագիր ժառանգությունը, ցավոք, դուրս է մնացել ուսումնասիրության ոլորտից, մինչդեռ նրա թողոններում կան բանահյուսությանը, Հայ եկեղեցու պատմությանը նվիրված մի շարք արժեքավոր անտիպ ուսումնասիրություններ, հարուստ ազգագրական նյութ պարունակող հուշագրություններ: «Ինչ երգեր էինք լսում մեր մանկութեան օրերում»

անտիպ հուշագրությունը, որ ստորև ներկայացնում ենք, հարուստ նյութ է պարունակում հատկապես Ալեքսանդրապոլի երաժշտական կենցաղի մասին: Ձեռագրում հեղինակն անդրադառնում է Գյումրիում առավել տարածված մանկական, աշուղական, եկեղեցական և աշխարհիկ երգերին, դրանց կատարողներին և տարածողներին: Բերված են ոչ միայն երգերի անունները, տեքստերը, այլև կատարման նկարագրությունները, իսկ որոշ դեպքերում նաև ստեղծման շարժառիթները: Ուշագրավ տեղեկություններ կան հատկապես տեղի երգահանների մասին: Հեղինակը փորձել է ականատեսի փաստական վկայություններով վերարտադրել Ալեքսանդրապոլի երաժշտական կենցաղը:

Ժամանակագրական առումով հուշագրությունն ընդգրկում է 1850 մինչև 1900 թվականը: Ձեռագիրը հեղինակի կողմից թվագրված չէ, սակայն ելնելով ձեռագրային առանձնահատկություններից, օգտագործված թանաքի, թղթի տարբերությունից՝ կարելի է ենթադրել, որ գրված է տարբեր ժամանակներում:Հուշագրությունն սկսվում է ժողովրդական մանկական երգերի նկարագրությամբ: Հիշատակվում են Գյումրիում տարածված այն երգերը, որոնք հեղինակի բնութագրմամբ՝ «ամէն մէկ երեխայ գիտեր»: Հեղինակը բերում է «Ճի՛վ ճի՛վ» կամ «Ծի՛վ ծի՛վ», «Բութը կըսե՝ գելը կուգայ….», մատներգերի, «Ծափին–ծափին» խաղերգի տեքստերը և կատարման նկարագրությունը, ինչպես նաև «Հեքիաթ-հեքիաթ պապս…» կատակերգի Գյումրու տարբերակը: Ի դեպ այս երգերը, որոշ փոփոխություններով, այսօր էլ տարածված են:

Կոստանյանն անդրադառնում է նաև Գյումրիում տարածում գտած ծիսական երգերին՝ մասնավորապես ծաղկազարդի երգերին. *«Ծաղկազարդի տօնին երեխաներս ստանում էինք ծնողներից ճըռ-ճըռ (չախչախ) և կարկաչայ: Դռքա երկու տարբեր խաղալիքներ են փայտից շինուած և կարմիր նախշած».*[1] Այնուհետև հեղինակը ոչ միայն մանրամասնորեն նկարագրում է այդ գործիքների արտաքին տեսքը, գործածման եղանակը, այլև գծագրում դրանք: Բերում է ծաղկազարդի «Կարկաչա՜յ Կարկաչա՜յ» երգից մի քառատող: Այս մասում Կոստանյանը ներկայացնում է նաև հմայական երգերի երկու օրինակ՝ «Արեգա՛կ դուս արի՛», «Լուսացա՛վ լուսացա՛վ»: Բերված են այդ երգերի տեքստերը, կատարման նկարագրությունները:

Հուշագրության հաջորդ մասի նյութը աշուղական երգերն են: Ընդհանուր տեղեկություններ տալով աշուղների և աշուղական խմբերի /սազանդարների/ մասին (որտեղ էին հանդես գալիս, ինչ նվագարաններ էին գործածում, ինչ դերակատարություն ունեին քաղաքի երաժշտական կենցաղում)՝ հեղինակը ներկայացնում է տեղական աշուղներից մի քանիսին. «*Ես յիշում եմ ուստայ Յակոյին, որ թեև ծերացած լինելով լաւ ձայն ունէր,*

[1] *ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆ. թիվ 2 ,այս և մնացյալ մեջբերումներում պահպանված է հեղինակի ուղղագրությունը:*

սազ ածող էր և հեքիաթ պատմող. նորան հրաւիրում էին տներն և շատ շատերը գիշեր էին լուսացնում նորա հէքիաթները լսելով սազի երգի դաշնակցութեամբ»: Ուշագրավ մանրամասներ կան աշուղ Խրթլզիի մասին, որը հայտնի է եղել իր *«ուժեղ և հնչիւն»* ձայնով: Աշուղական մրցույթի մի հետաքրքիր նկարագրություն կա՝ Խրթլզիի հետ կապված, որը տեղի է ունեցել 1861թ.: Այն ավանդական մրցույթներից տարբերվել է նրանով, որ մրցակիցները մի հարկի տակ չեն գտնվել: Խրթլզին երգել է Կոստանյանենց տանը, որը ձորի մեջ է գտնվել, իսկ մրցակիցը՝ (ցավոք անունը չի հիշատակում) բարձունքի վրա գտնվող մեկ ուրիշ տան մեջ: Երկուսի ձայնն էլ, հեղինակի վկայությամբ, գիշեր ժամանակ շատ մեծ տարածության վրա լսելի և ճանաչելի է եղել: Մրցույթում հաղթել է Խրթլզին, որի ձայնն ավելի հնչեղ է եղել:

Արժեքավոր տեղեկություններ կան նաև աշուղ Շիրինի մասին: «Իմ մանկութեան առաջին տարիներում ես լսում էի միմիայն թուրքերէն երգ, որն և չէի հավանում, բայց հետզհետէ, մանաւանդ աշուղ Շիրինի հանդէս գալով սկսեց ընդհանրանալ և հայերէն երգեցողութիւնը»:

Կոստանյանն անդրադառնում է վերջինիս Գյումրիում առավել տարածված սիրային, ազգասիրական, ծաղրական երգերին: Մանրամասն տեղեկություններ է տալիս այդ երգերից յուրաքանչյուրի մասին՝ որտեղ, ինչ առիթով և ինչպես էր կատարվում. տալիս է ժողովրդի կողմից շատ սիրված «Կորած յափունջին» երգի ստեղծման պատմությունը: Թռուցիկ անդրադառնում է նաև այլ աշուղների, որոնց երգերը նույնպես տարածված և սիրված էին Գյումրիում:

Ձեռագրում հարուստ տեղեկություններ կան հատկապես թափառական աշուղների (*«շրջիկ գուսանների»*) մասին, որոնց հեղինակը բաժանում է երկու խմբի: Առաջին խումբը պատահական կամ մշտական շրջիկներ էին՝ քաղաքի կամ շրջակա գյուղերի թշվառներից, մեծամասամբ կույր, որոնք սովորաբար մի պատանու կամ աղջնակի ուղեկցությամբ մուրացիկների նման շաբաթ օրերը շրջում էին քաղաքում. «սոքա նորանց պէս չէին կանչում “ մի ողորմութիւն արէք” այլ իրենց սազը շալակներին գալիս նստում էին դրան շէմին և ածում ու երգում էին, որով հրաւիրում էին ուշադրութիւն իրենց վերայ, եթէ կարեկցող գտնուում էր, մի բան տալիս էին և արձակում. եթէ ոչ, նա իւր սազն առնում ու շարունակում էր իւր ճանապարհը»: Գյումրեցիներն այդ օրերին մշտապես պատրաստ ունեցել են հաց կամ դրամ աղքատների համար, երբեմն էլ այդ աշուղներին տուն են հրավիրել. վերջիններս էլ երգով, բարձր ձայնով մի առնածին ջերմությամբ բարեմաղթություններ են հղել: «Գիւմրին այդ բանին այնքան սովոր էր, որ արդէն հասարակաց խօսք էր դառել, երբ մէկն անժամանակ մի բան էր խնդրում իւր համար, նորան պատասխանում էին սովորաբար, թէ “Աղքատը” շաբաթ օրը կուգայ…»: Սակայն միշտ չէ, որ այս աշուղները լավ ընդունելություն են գտել:

Թափառող աշուղների մյուս խումբը՝ Ս.Կարապետին ուխտ գնացած և շնորհք ստացած էին համարվում, նրանք կիրակի կամ տոն օրերին էին ման գալիս, կեսօրից հետո և գրեթե ամեն տեղ ընդունելություն էին գտնում: Սրանք ամենից առաջ երգում էին Ս.Կարապետի գովասանքը, իրենց անվանելով *«ճորտ ու ծառայ»*, կամ *«զուլ»*[1] Ս.Կարապետի: Հեղինակն առանձնակի ջերմությամբ հիշում է նման աշուղներից մեկին՝ մշեցի Մրտոյին, որը տարբեր տարիների հյուրընկալվել է իրենց տանը. *«մի տարի նա մեր տան մէջ մնաց մեր ծառաների հետ միասին մօտ երկու ամիս, այդ ժամանակ մեզ մոտ ամէն երեկոյ գրէթէ խաղ ու պար էր,* - գրում է Կոստանյանը - *այդ օրերին էր, որ մենք նորանից լսելով և յաճախ կրկնելով սովորեցինք ջանգիլումի և Զուլոյի*[2] *երգերը»*: Կոստանյանին ականատեսի վկայություններով նկարագրում է Մրտոյի տեսքը, հագած տարազը, երգերի կատարումները, բերում է որոշ երգերից հատվածներ: Հետաքրքիր տեղեկություններ կան նաև այլ շրջիկ աշուղների մասին: Հարկ է նշել, որ եթե Ալեքսանդրապոլի աշուղների մասին կան բազմաթիվ ուսումնասիրություններ, ապա Ալեքսանդրապոլ այցելած շրջիկ աշուղների մասին տեղեկությունները շատ աղքատիկ են, և Կոստանյանի հուշերն[3] արժեքվում են ոչ միայն ականատեսի վկայությամբ, այլև ուրիշ աղբյուրներում չհանդիպող տեղեկություններով:

Հուշագրության մյուս բաժնում հեղինակն անդրադառնում է եկեղեցական և աշխարհիկ երգերին: Սակայն հետզհետե քաղաքի երաժշտական կենցաղ մուտք է գործում ժողովրդական և պրոֆեսիոնալ բանաստեղծություններով ստեղծված *«նորամուտ»* երգերը, որոնք երգվում էին հասարակական և ընտանեկան խնջույքների ժամանակ: Երաժշտական մշակույթի այս շերտի կրողները հիմնականում քահանաներն էին, որոնց մեծ մասը նաև երգեցողություն էր դասավանդում դպրոցներում:

Հիշատակվում է ավագ քահանա տեր Կարապետ Առաքելյանը, որին գյումրեցիները *«ձայնեղ տէր Կարապետ կամ խաչակիր տէր Կարապետ»* էին կոչում, կապույտ աչքերով և ուժեղ ձայնով այս մարդը *«եկեղեցու զարդն էր, դպրոցի ուսուցիչն էր երգեցողութեան, և մեծ խնջոյքների ուրախութիւնն էր, ինքն էլ զուարճասէր լինելով. մասնաւոր կեանքի մէջ, մտերիմների շրջանում, նա թուրքերէն խաղեր էլ էր կանչում, բայց հասարակաց շրջանում ուր որ կրպատշաճէր նորա իբրև քահանայի հանդէս գալ և երգել...»*: Տեր Կարապետի կատարումներից հեղինակը հիշատակում է «Հաւիկ», «Խնկի ծառի նման ես», «Մայր ցանկալի իմանալի կոյս գովելի», իր բնորոշմամբ կես եկեղեցական կես աշխարհական

---

[1] *ստրուկ*

[2] *Նկատի ունի Խնուսի հայտնի աշուղ Զուլոյին:*

[3] *Կ.Կոստանյանի «Գիւմրին և իւր բարքերը», «Ինքնակենսագրութիւն» , «Կոստանեան Յովսէփ քահանայի կենսագրութիւնը» հուշագրություններում նույնպես կան աշուղների մասին ուշագրավ տեղեկություններ:*

տաղերը, ինպես նաև Պ. Ղափանցու, Հ. Ալամդարյանի, Ս. Պատկանյանի հեղինակած այն երգերը, որոնք մեծ տարածում ունեին Գյումրիում[1]:

Նորամուտ երգերի տարածողներից մեկն էլ Աբգար Գյուլումյանն էր[2]: Վերջինս, Կոստանյանի հոր հովանավորությամբ լինելով Թիֆլիսում, Երևանում և Կ.Պոլսում, իր հետ Գյումրի է բերում Մ.Նալբանդյանի «Հայրիկ տես-տես աստղը ռուսո», «Մեր հայրենիք», «Ազատն աստուած», ինչպես նաև «Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ» «Եղբայրք մեր շուրջ ժողովեցեք», «Ծիծեռնակ»,«Կոմբաբուլին» և այլ նորամոտ երգեր,[3] որոնք շատ շուտով տարածվում են ինչպես աշուղների, այնպես էլ երիտասարդության շրջանում: Նորամուտ երգերը տարածվել են նաև տարբեր առիթներով Գյումրի ժամանած հոգևորականների, պատահական անցորդների և երգիչների միջոցով: Մասնավորապես հիշում է 1859 թվականը, երբ Մաթեոս Կաթողիկոսի հետ Կ. Պոլսից Ալեքսանդրապոլ ժամանած բավական մեծ թվով տաճկահայերի միջոցով տարածվեց «Վերջին վա՛ղդ», առաջին աշխարհաբար երգը՝ որը շատ կարճ ժամանակում գյումրեցիների սիրելի երգերից մեկն է դառնում: Վերջին էջում հեղինակը աղյուսակի տեսքով տալիս է 32 նորամուտ երգերի ցանկ, յուրաքանչյուր երգի անվանման դիմաց նշելով՝ ում միջոցով և որտեղից է Գյումրի հասել: Հետազոտական հարուստ նյութ են պարունակում հատկապես տեղացի երգահանների մասին հուշերը: Մանրամասն տեղեկություններ կան Հակոբ Մխիթարյանի՝ քահանա տեր Հակոբի,[4] տեր Սիմոն Չմշկյանցի,[5] Աբրահամ Փափանյանի[6] և Մկրտիչ Արաբաջյանի[7] ինչպես նաև կաթոլիկ համայնքի հոգևոր հովիվներ՝ Ալեքսանդր Արարատյանի,[8] Պողոս Նահապետյանի մասին: Բերված են այդ հեղինակների առավել տարածված երգերի անվանումները, որոշ երգերի տեքստերը, ստեղծման թիվը և շարժառիթը: Անդրադառնալով «տեղական արտադրության» երգերի թեմատիկ առանձնահատկություններին, հեղինակն առանձնացնում է Անիին նվիրված երգերը. «Գիւմրեցին արդէն սովորել էր Անիի վերայ նայել իբրև իւր թանկագին հարազատի վերայ, որը գերության մէջ էր, գրում է հեղինակն ու ավելացնում,-ամեն ոք փափագում էր գէթ մի անգամ գնալ այնտեղ և ողբալ»: Պատահական չէ, որ համարյա բոլոր տեղացի երգահանները ունեին Անիին նվիված որևէ երգ: Այդ երգերից ներկայացնում է

---

[1] *Երգերի անվանումները տրված են:*

[2] *Հայտնի էր նաև քահանա տեր Մեսրոպ անունով և Ալեքսանդրապոլի առաջին կին դերասանուհիներից մեկի՝ Զարուհի Գյուլումյանի ամուսինն էր:*

[3] *Մեծամասամբ Ռ. Պատկանյանի «Ազգային Երգարան հայոց» ժողովածուից:*

[4] *Գավառական ուսումնարանի և Հոգևոր դպրոցի ուսուցիչ, որի երգերից տպագրվել են Աղեքսանդր Մխիթարյանի «Տաղեր ու խաղեր», Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունջներ» ժողովածուներում:*

[5] *Հոգևոր դպրոցի ուսուցիչ, հետագայում Թիֆլիսի Մուղնու եկեղեցու ավագ քահանա:*

[6] *Տեր Հակոբի աշակերտներից՝Հոգևոր դպրոցի ուսուցիչ:*

[7] *Տեր Հակոբի աշակերտներից՝Հոգևոր դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ:*

[8] *Թիֆլիսում 1850թ. տպագրված «Ճակատ անմեհից» երկասիրության հեղինակ:*

Արարատյանի երգը, որ գրված լինելով «ժողովրդական ոգով ու ոճով»՝ առավել տարածված ու սիրված է եղել: Երգեր էին հորինվում նաև պատմական անցքերի կամ քաղաքի համար հիշարժան տարբեր դեպքերի առիթներով: Սրանցից Կոստանյանը հիշատակում է երկուսը: Մեկը՝ Մաքենս Ա կաթողիկոսի Գյումրի կատարելիք այցի առիթով տեր Հակոբի[1] գրած երգն է. չնայած այն բանին, որ այցը չի կայացել, երգը մնացել է: Այն երկար ժամանակ «երգւում էր հասարակութեան մէջ և ընտանիքներում, երբ պէտք էր կաթողիկոսի պատուի համար բաժակ առաջարկել կամ բարեմաղթութիւններ անել»: Մյուսը՝ Սկրտիչ Արաբաջյանի երգն է՝ գրված Մաքենս կաթողիկոսի օծման արարողության առիթով, որ երգվել է «դպրոցական երգերի շարքում»: Հորինվում էին երգեր նաև նշանավոր անձանց մասին. որպես օրինակ բերում է իշխան Վարանցովին և Հ. Բեհբությանին նվիրված Ալեքսանդր Արարատյանի երգերը:

Հուշագրությունում անդրադարձ կա նաև քաղաքային երգարվեստի կենցաղային ժանրի մեկ այլ դրսևորման՝ այն է՝ այս կամ այն դեպքի առիթով ստեղծված ծաղրական երգերին. *«Գյումրին շատ արքուն էր. վա՜յ թէ մէկի անունը քիչ թէ շատ դուրս գար, լաւ կամ վատ կողմից. իսկոյն երգը պատրաստ էր. այդպիսի դեպքում ասում էին „այսինչի վերայ խաղ են կապել”. խաղ կապելը սովորական բան էր և ո՞վքեր էին խաղ կապողները՝ անունով յիշել կարելի չէ, այդ հորինողները, ծածկւում էին»*: Կատարողները Գյումրվա Լոթիներն էին. երգում էին սկզբում գիշերները փողոցներում և հրապարակներում, հետագայում նաև ցերեկները՝ փողոցներում, գինետներում, և այլ հասարակական վայրերում: Այդ երգերը, որպես կանոն, երկար կյանք չէին ունենում: Դրանք հաճախ վիրավորական էին և երբեմն տխուր ավարտ էին ունենում. ում որ ծաղրում էին, ստիպված էին լինում հեռանալ քաղաքից: Բերված է այդպիսի խաղերի մի քանի օրինակ: Բարեբախտաբար թե՛ սրճարանների, թե՛ միկիտանների հասարակության որակը գնալով փոխվում է.«Գիւմրուայ բարքերն հետզհետէ սկսեցին ազնուանալ և զտուել: Տեղական ստեղծագործութիւնն էլ իւր կարգին նոր հոսանքի մէջ մտաւ, հանդէս եկան Գիւմրուայ հողի վերայ ծնուած ու սնուած նոր աշուղներ, որոնց թագն ու պսակը վերջերում հանդիսացաւ աշուղ Ջիւանին (Սերովբէ Լևոնեան)»:

Հեղինակը Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքում շրջադարձային է համարում 1862 թ. «*Մինչև 1862թ. կարելի է ասել, որ Գիւմրին ապրում էր հին աւանդական կեանքով զէթ երգերի և գեղարուեստական պէտքերի նկատմամբ: Այդ տարին արդեն նախընթաց ձգտումների և ջանքերի պտուղն իրականացաւ, բեմական արուեստը կամ թատրոնը, եւրոպական նուագախումբ, համերգ, երաժշտական աշխարհի ժամանա-*

[1] *Երաժշտությունը Կարապետ Առաքելյանինն է:*

կակից նորութիւններ սկսեցին մտնել մեր Գիւմրին»:[1] Այս շրջանում ասպարեզ է գալիս նաև բանաստեղծների նոր սերունդը՝ Ավ. Իսահակյան, Հ. Կոստանյան (հեղինակի եղբայրը), Պ.Մոճոռյան,[2] Թ. Թառլանյան,[3] Ա. Խնկոյան,[4] որոնց «քերթուածները նոյնպէս երգւում էին»:

Հուշագրությունն ավարտվում է հեղինակի հետևյալ դիտարկումով. «Պէտք է ասեմ, որ գոնէ Գիւմրեցւոց մէջ յաւէրժաբար իշխող ոչ մի երգ կարելի չէ յիշել բացի զուտ ժողովրդական կամ գեղջուկ երգերից, որոնք կարծես անթառամելի են»: Ամփոփենք. հուշագրությունը, զերծ լինելով գիտական ուսումնասիրություն կոչվելու հավակնությունից, գրված է հմուտ բանագետի զգացողությամբ և ազգագրագետի վերաբերմունքով:

Լիլիթ ԵՐՆՋԱԿՅԱՆ (ԱԻ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայ երաժշտական արևելագիտության թերի խնդիրներից է Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթների համակողմանի քննությունն ու արժևորումը Մերձավոր Արևելքի մշակութային առնչությունների համատեքստում: Կենցաղային ու մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Ալեքսանդրապոլում ապրել և ստեղծագործել են բազում հայ աշուղներ, տեղի են ունեցել հանրահայտ գործիքահարների ու երգիչների ավանդական մրցույթներ, ձևավորվել է աշուղական դպրոց. այստեղ է զարգացել ու մշակվել մուղամաթի արվեստի հայ իրականությանը բնորոշ նվագարանային ճյուղը:

Մշակութային կենտրոնին բնորոշ տարբեր գործոնների առկայությամբ են պայմանավորված Ալեքսանդրապոլի հարուստ երաժշտական ավանդույթների պատմական արժեքն ու վերազգային նկարագիրը: Արևելահայաստանի մասնագիտացված և ժողովրդամասնագիտացված արվեստների զարգացման այս կարևոր օրրանում են արգասավորվել Արևելք-Արևմուտք մշակութային փոխառնչությունները, ինչպես նաև քրիստոնյա և մահմեդական Արևելքներին բնորոշ գեղարվեստական երևույթները:

---

[1] *Հուշագրության վերջում հետաքրքիր տեղեկություններ կան առաջին թատերական ներկայացումների նախաձեռնողների, մասնակիցների, առաջին դերասանուհիների և թատերական գործին աջակցողների մասին:*

[2] *Գեղագետ, գրող, վերջինիս Ալեքսանդրապոլի թատրոնի պատմությանը նվիրված անտիպ աշխատության ձեռագիրը գտնվում է ԳԱԹ -ում:*

[3] *Գրող, աշուղ Հովհ. Տեր-Մարտիրոսյան (Նազանի):*

[4] *Աբաբեկ Խնկոյանը կրթությունը ստացել է Ալեքսանդրապոլում և որոշ ժամանակ դասավանդել է տեղի դպրոցներում:*

Ասվածի լավագույն վկայությունն են Ն. Տիգրանյանի նորարարական ձեռնարկումներն ու ստեղծագործական ձեռքբերումները, որի համար արևելյան երաժշտության բարձրարժեք նմուշները հոգեհարազատ էին իրենց պատմական ակունքներով: Մերձավորարևելյան երկրների ավանդական երաժշտության պատմությանը հայտնի չեն բանավոր ավանդույթով կենցավարող նյութի գրառման և մշակման փորձեր 19-րդ դ. երկրորդ կեսին: Ն. Տիգրանյանի մուղամների և դաստգահների ձայնագրությունները առ այսօր մնում են ինչպես Իրանում, այնպես էլ Անդրկովկասում տարածված ժանրի առավել վաղ գրառման օրինակներ, որոնց համեմատությունը ժամանակակից կատարումների հետ լույս է սփռում ժանրի գոյատևման ու զարգացման ընթացքի վրա: Ժողովրդամասնագիտացված արվեստի ավանդական նմուշների գոյատևման նոր ուղիներ մատնանշող հեղինակային մտահղացումների և գեղարվեստական լուծումների գնահատանքը դուրս է գալիս զուտ հայկական մշակույթի շրջանակներից և կարևորվում տարածաշրջանի մակարդակում:

Կոմպոզիտորի լարային կվարտետի համար ստեղծած մշակումները, ձևավորելով հայ կամերային-անսամբլային երաժշտության հիմքերը, լինելով արևելյան սազանդարային մտածողության բնութագրական հատկանիշները եվրոպական գործիքներով նմանակելու աննախադեպ օրինակներ, համալրում են Արևելքի մոնոդիկ երաժշտարվեստում «առաջինի» կարգավիճակ ունեցող երաժշտապատմական փաստերի շարքը:

Ն. Տիգրանյանի ստեղծագործությունը մերձավորարևելյան, մասնավորապես հայ-իրանական երաժշտական փոխադարձ կապերի դրսևորման անսպառ շտեմարան է՝ ստեղծված հայ քաղաքային մշակույթին հարիր չափանիշներով: «Արևելքի մեծ երգչի» և «Մեծ գյումրեցու» դիրքորոշումը մուղամաթի արվեստի նկատմամբ թույլ է տալիս հստակեցնել ժողովրդամասնագիտացված ժանրերի արևելյան կաղապարի առանձնահատուկ դիմագիծը հայ մշակույթում:

Չափազանց տարողունակ խնդիր է Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի քննությունը միջմշակութային համատեքստում հատկապես XIX-XXդդ.: Ջիվանու գործունեությամբ նորովի իմաստավորված աշուղական արվեստի «հայացումը» Մերձավոր Արևելքում ընթացել է լեզվի, կրոնի և ազգային երաժշտամտածողության խնդիրների հստակ ըմբռնումով:

Ջիվանին նաև նոր աշուղական տաղաչափական ձևերի հեղինակ էր. նրա հորինած «Ջիվանա» ձևի հիմնական պահանջը աշուղի անվան տառերի բացակայությունն էր բանաստեղծական տեքստում: Ջիվանու (ինչպես նաև Ջամալու, Սազայու) հեղինակային փոխադրությունների և սեփական արարումների շնորհիվ հինավուրց արևելյան սիրավեպի ժանրը ևս մեկ անգամ հավաստեց իր կենսունակությունն ու զարգացման հնարավորությունները:Նրա ստեղծած մեղեդիներն անհատականացված բնութագրերով յուրօրինակ լեյտմոտիվներ դարձան սիրավեպ ասացողնե-

րի համար: Աշուղի ստեղծագործությունն ավանդույթի փոխանցման գործում նշանակալի փուլ է՝ «արևելյան» կողմնորոշում ունեցող ժանրն իր ժամանակի սոցիալ-մշակութային համատեքստում ընդունելի գեղագիտական կերպավորումով ներկայացնելու դիտակետից:

Սիրավեպերի հայերեն երգերն այնքան սիրված են եղել Անդրկովկասում և Թուրքիայում, որ նույնիսկ մինչև XXդ. կեսերը աղավաղված և վերանվանված շարունակել են հնչել ժողովրդամասնագիտացված երաժշտության տարբեր ներկայացուցիչների արվեստում: Այդ տեքստերի հայտնաբերումը թուրք և ադրբեջանցի աշուղների երկացանկում նոր փաստերով է հաստատում մեր սկզբունքային դիրքորոշումը մերձավորարևելյան դասական մեղեդիների ստեղծման ու կանոնավորման գործընթացում հայ երաժիշտների ներդրած խոշոր ավանդի վերաբերյալ: Թուրքիային սահմանակից լինելը նպաստել է թե՛ պատմական Հայաստանի տարբեր նահանգներում ձևավորված երաժշտաբանաստեղծական ավանդույթների ներհոսքին Ալեքսանդրապոլի երաժշտական կենցաղ, թե՛ հարևան ժողովուրդների երաժշտարվեստների փոխներթափանցմանը:

Ժամանակակից էթնոերաժշտական ուսումնասիրություններում (W. Eberhard, Ch. Albright, J. During) հանդիպում ենք Իրանի և Թուրքիայի երաժշտական արվեստներում հայ աշուղների և գործիքահարների խաղացած դերին տրվող օբյեկտիվ գնահատականների: Իրանական Ադրբեջանի աշուղական երգարվեստին նվիրված հետազոտություններում նշվում են «հավա արմանի» կոչվող եղանակները, ինչպես նաև թուրք աշուղների խոստովանությունները Գյումրուց և Էրիվանից իրենց հասած երգերի մասին: Բազմաթիվ թուրք աշուղների վկայությամբ, որոնք թուրքական աշուղական դպրոցի հիմնադիրներն են և իրենց գիտելիքներն ու արվեստի հիմքերը ամրապնդել են Անդրկովկասում, շրջագայել ու շփվել են Գյանջայի, Գյումրու, Թիֆլիսի և Ռևանի աշուղների հետ: Փաստերի թիվը կարելի է ավելացնել, սակայն իր ամբողջության մեջ հայկական աշուղական ավանդույթը միջազգային երաժշտական հանրության համար մնացել է իբրև բոլոր չափագծերով անհայտ խնդիր: Մերձավոր Արևելքի երաժշտամշակութային կենտրոնների՝ Թեհրանի, Սպահանի, Թիֆլիսի, Կ.Պոլիսի շարքում, ուր ձևավորվել և դարեր շարունակ զարգացել է աշուղի, քաղաքային երաժշտի և գործիքահար-մուղամաքահարի կերպարը, իր արժանի տեղն ունի Ալեքսանդրապոլը, որ հայկական Արևելքի ամենաբնութագրական դրսևորումներից մեկն է:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ (ԱԻ)

ԴԱՆԻԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԸ ԵՎ ԼԵՆԻՆԱԿԱՆԸ

2008 թվականին լրանում է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, վաստակավոր ուսուցիչ (1944), կոմպոզիտոր, երգերի ու ռոմանսների,

խմբերգերի, մանկական երգերի և մանկական օպերաների, նվագախմբային ու դաշնամուրային ստեղծագործությունների, դրամաների համար գրված երաժշտության հեղինակ, խմբավար, երգիչ, մանկավարժ, Բաթումի (1922) և Լենինականի (1924) երաժշտական ստուդիաների հիմնադիր, հայ պրոֆեսիոնալ երաժշտության և խմբերգային արվեստի զարգացմանը զգալի ավանդ մատուցած *Դանիել Ղազարյանի* (1883-1958թթ.) ծննդյան 125-ամյա հոբելյանն ու մահվան կեսդարյա տարելիցը:

Հայ երաժշտության պատմության մեջ այդ նշանակալի հոբելյանին նվիրված հիմնարար մենագրության ստեղծմանը ձեռնամուխ լինելով և Դ. Ղազարյանի ստեղծագործական դիմանկարը մեկ զեկուցման շրջանակում ներկայացնելու միտում չունենալով՝ փորձենք ուրվագծել հայ երաժշտարվեստի երախտավորի գործունեությունը Լենինականում:

Ծանրակշիռ է Շուշիում ծնված, Թիֆլիսի կոնսերվատորիայում երաժշտական բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած Դանիել Ղազարյանի ներդրումը Լենինականի երաժշտական կյանքում: Փորձենք ներկայացնել այստեղ նրա ծավալած բազմաբեղուն գործունեության առանձին բնագավառները:

Ալեքսանդրապոլը հաստատուն տեղ ուներ խմբավար-կոմպոզիտորի համերգային շրջագայությունների ծավալում աշխարհագրության մեջ: Դեռևս 1911-ի օգոստոսի 13-ին Դ.Ղազարյանի ղեկավարությամբ սիրողական երգեցիկ խումբը համերգ է տալիս Ալեքսանդրապոլում, որին անդրադառնում է «Մշակ»-ը թիվ 183-ի օգոստոսյան համարում:[1]

Դ. Ղազարյանն Ալեքսանդրապոլ է այցելում նաև 1912-ին.«Երաժշտագետ Պարույր Բաբայանը, որն Ալեքսպոլում ղեկավարում էր երկու դպրոցների աշակերտ-աշակերտուհիներից կազմված քառաձայն երգեցիկ խումբը, տրամադրում է այն Դ. Ղազարյանին, որը Կոմիտասի, Կարա-Մուրզայի ու իր ստեղծագործություններից կազմված ծրագրով ելույթ է ունենում թատրոնի դահլիճում: Համերգն անցնում է հաջողությամբ»:[2] Դ. Ղազարյանին առաջին անգամ 1912-ին Ալեքսանդրապոլում է հանդիպել երգ-երաժշտության դասատու, խմբավար, մեթոդիստ, 1912-ին Ալեքսպոլում Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի պրեմիերայի ժամանակ ծերունու դերերգով հանդես եկած Մկրտիչ Թամիրյանը:[3]

Դ. Ղազարյանը վերստին Լենինականում է 1915-ին. օգոստոսի 8-ին ժողովրդական տանը տեղի է ունենում Ալեքսանդրապոլի սիրողական երգեցիկ խմբի համերգը՝ Ա. Տիգրանյանի և Դ. Ղազարյանի ղեկավարությամբ, երգչուհի Սիրանույշի մասնակցությամբ, որի մասին տեղեկություններ են պահպանվում Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի

[1] *Ռ. Մազմանյան,նշվ. աշխ.:*
[2] *Ա. Տոնիկյան, նշվ.աշխ., էջ 31-32:*
[3] *Նույն տեղում, էջ 31:*

թանգարանի Ա.Տիգրանյանի դիվանում:[1] Ա. Տիգրանյանի և Դ.Ղազարյանի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլի սիրողական երգեցիկ խմբի հաջորդ համերգը կայանում է օգոստոսի 12-ին: Բարեբախտաբար, ԳԱԹ Դ. Ղազարյանի դիվանում պահպանվել են տեղեկություններ թե՛ համերգի մասնակիցների, թե՛ ծրագրի մասին: Համերգին մասնակցել են երգիչներ Ա. Մոծակյանը, Շ. Հարությունյանը, Տ. Մանուկյանը, Սիրանույշը, Կ. Աղաբաբյանը, հնչել են Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի երկրորդ գործողությունը, «Սև աչեր», Կոմիտասի «Կուժն առա», «Ուր ես գալի այ գարուն», «Քելեր, ցոլեր», Դ. Ղազարյանի «Ուռին», «Ես երգեցի», «Զույգ աչեր», «Հորովել», «Ծառիս տակը կանաչ է» և այլն:[2]

1922-ի հուլիսի 16-ին Ալեքսանդրապոլի պետթատրոնում տեղի է ունենում Դ. Ղազարյանի ստեղծագործություններից կազմված համերգ՝ հեղինակի ղեկավարությամբ: Բեմադրվում է «Հաղթված բազե» մանկական օպերան: Համերգին անդրադառնում է «Շիրակի ռանչպարը» հուլիսի 23-ի N 20 համարում՝ «Մանկական օպերա և համերգ» հոդվածով:[3] Սակայն Լենինականում տևական և առավել արգասաբեր իր գործունեությունը Դ. Ղազարյանն սկսում է 1924-ին, երբ ուսումնական տարին ավարտելուց հետո նա Բաթումից մեկնում է Լենինական: Այստեղ 1924-ի հունիսի 1-ին[4] նրա ջանքերով և անմիջական ղեկավարությամբ կազմակերպվում է առաջին երաժշտական օջախը՝ երաժշտական ստուդիան՝ դաշնամուրի, ջութակի. երգի, երաժշտության տեսության դասարաններով:[5] Ըստ Ա. Տոնիկյանի՝ ստուդիայում գործել է նաև ժողգործիքների դասարանը: Ստուդիան գործունեությունն սկսեց 180 աշակերտներով,[6] մինչդեռ ընդունվելու ցանկություն էին հայտնել շուրջ 700 երեխաներ: Նախնական քննությունից հետո մնում են 380: Ցավոք, նորաստեղծ Ստուդիան շենքի բացակայության և մասնագետ դասատուների սակավության պատճառով ի զորու չէր ընդունել բոլոր ցանկացողներին, և աշնանը կատարված երկրորդ ստուգումից հետո մնում են 180-ը: Դասավանդելու են հրավիրվում Տ. Նալբանդյանը (երգ), Կ. Տեր-Ղուկասյանը (ջութակ), Ն. Գյանջումյանը (դաշնամուր), Վ.Ղազարյանը (ժողգործիքներ), Կ. Պապայանը (խմբերգեցողություն) և այլք: Ստուդիայի դիրեկտոր է նշանակվում Դ. Ղազարյանը, որը դասավանդում է նաև տեսական առարկաները:[7]

---

[1] *Ռ. Մազմանյան, նշվ. աշխ.:*
[2] *Ռ. Մազմանյան, նշվ. աշխ.:*
[3] *Նույն տեղում, էջ 18:*
[4] *Դ. Ղազարյանին նվիրված իր գրքույկում Ա.Տոնիկյանը գրում է, որ ստուդիան բացվել է հունիսի 15-ին:*
[5] *Ռ. Մազմանյան, նշվ. աշխ., էջ 33:*
[6] *Ա. Տոնիկյան, նշվ. աշխ., էջ 37:*
[7] *Նույնը:*

1924-ի հուլիսի 11-ին կայանում է Լենինականի երաժշտական ստուդիայի անդրանիկ երեկոն:[1] Բնականաբար, Ստուդիայի ղեկավարությունը համագործակցում է Երևանի պետական կոնսերվատորիայի հետ. ռեկտոր Ա. Ադամյանն ու կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանը հաճախակի այցելում են Լենինական, ունկնդրում աշակերտական համերգները, ցուցաբերում մեթոդական արժեքավոր օգնություն: Ստուդիայի գեղարվեստական խորհրդի աշխատանքներում ներգրավվում է Ն. Տիգրանյանը: Ստուդիան դառնում է Լենինականի ու հարակից շրջանների երաժշտական դաստիարակության հիմնական օջախ, նաև հանրապետությունում երաժիշտ կատարողների պատրաստման դարբնոց:

1926-ի փետրվարի 14-ին տեղի է ունենում Լենինականի երաժշտական ստուդիայի աշակերտների համերգը՝ լուսաբաժնի դահլիճում: Ծրագրում ընդգրկվում են Կոմիտասի, Մ. Միրզոյանի և Դ. Ղազարյանի ստեղծագործությունները: Համերգի ընթացքում Դ. Ղազարյանի ղեկավարությամբ ելույթ է ունենում Ստուդիայի երգեցիկ խումբը: Համերգին մասնակցում են երգիչներ Մ. Լուսինյանը, Մ. Մեդմարը, Շ. Տալյանը: Ստուդիային կից կազմակերպվում է քառաձայն երգեցիկ խումբ (ղեկ.՝ Կ.Պապայան), որը համերգներ է տալիս թե՛ Լենինականում, թե՛ Ղարաքիլիսիայի և Արթիկի գյուղական սաների համար[2], մանկական երգեցիկ խումբ (ղեկ.՝ Մ.Թամիրյան), ժողգործիքների անսամբլ (ղեկ.՝ Վ.Ղազարյան): Ստուդիայի կոլեկտիվները հայ ժողովրդական երգերից և կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված համերգային ծրագրերով հանդես են գալիս բանվորական ակումբներում, կարմիրբանակայինների և երկաթուղայինների, գյուղական բնակչության համար: Դպրոցի բոլոր կոլեկտիվները մասնակցում են Շիր-Կանալի բացման արարողությանը: «Համերգն ընդունվեց օվացիաներով,-հետագայում հիշում է մանկական երգեցիկ խմբի ղեկավար Մ. Թամիրյանը,- և մեծ տպավորություն թողեց: Առաջին անգամ քառաձայն երգչախումբը երգեց Դ. Ղազարյանի «Շիր-Կանալ» երգը՝ Գ. Մահարու խոսքերով, որը ջերմ ընդունելություն գտավ և հանդիսականների պահանջով կրկնվեց երեք անգամ»[3]: 1925-ին Լենինականում լույս է տեսնում Դ. Ղազարյանի «Շիրջրանցք» խմբերգը՝ գրված քառաձայն խառը խմբի համար: Դպրոցի մանկական խմբի ջանքերով բեմադրվում են մանկական օպերաներ՝ Դ. Ղազարյանի «Հաղթված բազեն», «Գայլը», «Գիքորը», Ս.Մուրադյանի «Շունն ու կատուն»:

Լենինական քաղաքի և գյուղերի դպրոցներում երաժշտության դասավանդման վիճակը բարելավելու նպատակով Դ. Ղազարյանը կազմակերպում է երաժշտության դասատուների վերապատրաստման դասընթացներ: Շարունակելով Երևանի կոնսերվատորիայի ավանդույթները՝ նա

---

[1] *Ռ. Մազմանյան, նշվ. աշխ., էջ 35:*
[2] *Ա. Շեկունց, Հայ խմբավար կոմպոզիտորները, Եր., 1986, էջ 63:*
[3] *Ա. Տոնիկյան, նշվ. աշխ., էջ 39:*

կազմակերպում է հայ կոմպոզիտորներին նվիրված համերգ-զրույցներ՝ ներգրավելով պրոֆեսիոնալ կատարողների՝ Նիկողայոս Տիգրանյանին, Տիգրան Նալբանդյանին, Շարա Տալյանին, Մարիաննա Մեղմարին և շատ ու շատ ուրիշների… Այդ շարքում 1927-ին Կարա-Մուրզայի մահվան 25-րդ տարելիցի առթիվ կազմակերպվում է երեկո, որտեղ Դ.Ղազարյանի ղեկավարությամբ երգեցիկ խումբը հանդես է գալիս Կարա-Մուրզայի խմբերգերի կատարմամբ: Բեթհովենի մահվան 100-րդ տարելիցի կապակցությամբ Դ. Ղազարյանը կազմակերպում է երեկո, ապա Լենինականի «Բանվոր» թերթի 1927 թվականի ապրիլի 7-ի թիվ 26 համարում տպագրում «Բեթհովենի մահվան հարյուրամյակի մասին» հոդվածը:[1]

1930-ի հուլիսի 15-ին Լենինականի լուսաբաժնի դահլիճում կայանում է Արևելյան համերգը՝ կոմպոզիտորներ Ն. Տիգրանյանի և Դ.Ղազարյանի մասնակցությամբ: Նմանատիպ երեկո տեղի է ունենում նաև 1931-ի սեպտեմբերի 20-ին Լենինականի երկաթուղայինների ակումբում:

Վերջում անդրադառնանք նաև Ավ. Իսահակյանի խոսքերով Դ.Ղազարյանի գրած երգ-ռոմանսներին, որոնք դարձան կոմպոզիտորի այցեքարտը: Խոսքը մեծ ժողովրդականություն վայելող «Գետակի վրա» և «Քույր իմ նազելի» մեներգերի և «Գիշերն եկավ, աստղերն ելան» զուգերգի մասին է:[2] 1916-ին ստեղծված «Գետակի վրա» մեներգը, որը կոմպոզիտորը նվիրել է երգչուհի Վարդանուշ Փարվանյանին, առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում, 1929-ին:[3]

Այսօր՝ Երևանի կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հիմնադրման 10-ամյակի նախաշեմին, մենք խոնարհվում ենք հայ մշակույթի երախտավորի՝ Դ. Ղազարյանի հիշատակի առջև. դեռևս հեռավոր 1920-ականներին հենց նա՛ կատարեց Լենինականում երաժշտական մասնագիտական կրթության հետագա մեծ ճանապարհի առաջին քայլը:

Կարինե ԱՎԴԱԼՅԱՆ (ԵԿԳՄ)

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյումրին հայ արվեստի նշանակալի կենտրոններից է՝ վաղ ժամանակներից հայտնի իր հարուստ մշակույթով: Նա կրողն ու ժառանգորդն է երաժշտական այն բազմաշերտ ավանդույթի, որը կարևոր դերակատարություն ունեցավ դեռևս XIXդ. կեսերին ինքնահաստատվող հայ ազ-

[1] *Ռ. Մազմանյան, նշվ. աշխ., էջ 71:*
[2] *Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ, տեղեկատու, Եր., 2006, էջ 32-35, 97:*
[3] *Издание Ассоциации армянских Пролетарских писателей "Горн", 1929.*

գային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման հարցում: XXդ. հայկական արվեստի պատմության մեջ նոր էջ բացեց և արձանագրեց անանախադեպ վերելքի այնպիսի փաստեր, որոնք համաշխարհային մշակույթի գանձարանում գրավեցին իրենց հաստատուն տեղը՝ դառնալով ազգային արվեստի ինքնությունը հաստատող խոսուն վկայություններ: Նույն ժամանակահատվածը բնորոշվեց նաև մշակութային տարբեր բնագավառների կենտրոնացման գաղափարի իրականացմամբ: Մայրաքաղաքում ստեղծված պայմաններն ու ստեղծագործական մթնոլորտը մի կողմից նպաստեցին հայ արվեստի վերելքին, իսկ մյուս կողմից բացասաբար անդրադարձան այլ քաղաքների, մասնավորաբար Գյումրու, մշակութային կյանքի զարգացման վրա: Մայրաքաղաքում գործող հզոր նվագախմբերի, տաղանդավոր անհատ արվեստագետների ու կոմպոզիտորական մտքի փայլատակումների համեմատությամբ, կատարողական առանձին կոլեկտիվների ոչ պարբերական ելույթները, ստեղծագործական գործունեության (նկատի ունենք կոմպոզիտորական ստեղծագործությունը) հաջողված մի քանի ճիգերը, անշուշտ, դրական քայլեր էին XX դարի կեսերին և որոշ չափով աշխուժացնում էին քաղաքային երաժշտական կյանքի մթնոլորտը, սակայն մշակույթի բնականոն, նշանակալի առաջընթաց կամ թռիչք չարձանագրեցին:

1988թ. երկրաշարժի հետևանքով առավել խորացած ճգնաժամից դուրս գալու առաջին փորձերը և արթնացման հուսադրող քայլերը Գյումրիում դարձան մասնագիտական կրթության անհրաժեշտ նախապայմանի կարևորումը, կատարողական գործունեության վերականգնումը, գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպումը: Ոլորտներից յուրաքանչյուրնն այսօր էլ գործում է այս կամ այն կերպ, կարելի է ասել մեկուսի, ինչի հետևանքով էլ երաժշտական ստեղծագործությունն օտարվում է, այսպես կոչված, մշակութային սոցիոդինամիկայից, մինչդեռ համագործակցության, համալիր գործունեության պարագայում այն կարևոր դեր կխաղար ոլորտի կարգավորման հարցում:

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմանների տարերային զարգացումը, շուկայական հարաբերությունների բարդ ու անկառավարելի ընթացքն իր հերթին որոշակի կնիք է թողնում արդի արվեստի վրա: Հայաստանի մշակութային դաշտն այժմ արտացոլում է ավելի ու ավելի շերտավորվող ու պառակտվող հասարակության սոցիալական գործընթացը: Կորցնելով իր ամբողջականությունը՝ այն վերածվում է անհավասարակշիռ, խախտված գործառական կապերով էկլեկտիկ գոյակցության, որում կենտրոնացվածության միտումը, արտաքուստ պահպանելով ամբողջականությունը, ներքուստ թուլանում է և մասնատվում: Այս առումով ավելի խոցելի են կենտրոնից հեռու գործող մշակութային օջախներն ու ստեղծագործական օբյեկտները, իսկ անհատ արվեստագետների գործու-

նեությունն այստեղ ինքնաբերաբար մատնվում է անգործության, և ընդհանուր մշակութային կյանքը աստիճանաբար անշարժանում է:

Մեր ժամանակներին խիստ բնորոշ այլ մշակութային, կամ ավելի ճիշտ հակամշակութային տարրերի անարգել ներհոսը կասեցնում է երաժշտական արվեստի տարբեր ոլորտների զագացումը՝ կոմպոզիտորական արվեստի առաջընթացը, կատարողական գործունեության ծավալումը: Խաթարվում են ազգային երաժշտական մտածողության արմատները, ինչի պատճառով և հայ արվեստում, հատկապես երաժշտության մեջ տեղ գտած հակոտնյա երևույթների համաժամանակյա գոյակցությունը բերում է երևույթների համահարթեցման, ինչը ոլորտի զարգացման օգտին չի ծառայում և տանում է ազգային արժեքների նկատմամբ ցուցաբերվող անտարբերության, խորթացման և անգամ՝ մոռացության: Ընդ որում, ազգային արժեք հասկացության տակ պետք է նկատի ունենալ ոչ միայն անցյալի գեղարվեստական ստեղծագործությունը, այլև արդի արվեստն իր ամենաբազմազան դրսևորումներով: Այս տեսակետից կենտրոնից հեռու գտնվող երաժշտական մշակութային հաստատություններում (Գյումրի) վիճակն անմխիթար է: Այստեղ ժամանակակից երաժշտության համերգային ծրագրերի իրականացումը գրեթե անհնարին է: Իսկ եթե նույնիսկ քաղաքի դահլիճներում հնչում են ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ, ապա դրանք մեծամասամբ կատարվում են մայրաքաղաքից ժամանած երաժիշտների մեկնաբանությամբ: Այսօր հնարավոր է ու անհրաժեշտ հետևել երաժշտական մշակույթում տեղի ունեցող տեղաշարժերին և փոխակերպումներին: Կարևորվում է համալիր հետազոտությունների միջոցով թերացումների ու կնճռոտ հարցերի պարզաբանումը, ինչի պատճառով քաղաքի երաժշտական մշակույթը հետընթաց է ապրում: Նկատվող բազմաթիվ թերություններից առանձնացնենք մի քանիսը. -Սոցիալ-տնտեսական վատթար պայմաններում, նախաձեռնությունների համաձուլման և ամենաթողության ժամանակներում անտարբերությունը ստիպում է ստեղծագործող անհատին հեռանալ սեփական դաշտից: - Անգիտությունը. երբ պրոֆեսիոնալին բեմում փոխարինելու է գալիս ոչ պրոֆեսիոնալը, որը սեփական նախաձեռնությամբ իրական և անկեղծ արվեստը փոխարինում է շինծու՝ «հանրամատչելի» ստեղծագործությամբ: Անտեսում է արվեստի հեռանկարային գործը՝ փոխարինելով այն հասարակական մեծ պահանջարկ ունեցող էժանագին, այսրոպեական արտադրանքով: - ժողովրդական ցանկացած երգի, այսպես կոչված, էստրադայնացված տարբերակի կատարումը, առանց հաշվի առնելու երգի բովանդակությունը, ժանրային առանձնահատկություններն ու կատարման նրբերանգները: -Օտարամոլությունը. նմանակելու, երբեմն նաև անարվեստ ընդօրինակելու ցանկությունը, երբ ազգային եաժշտությունը անընդհատ այլ դաշտի մեջ տեղափոխելու ան-

գիտակից տարվածությունը հանգեցնում է մոլորության, որի պատճառով տեղի է ունենում ազգային ճաշակի զգալի անկում:

Ուղորտի կարգավորման համար խիստ անհրաժեշտ են *ազգային երաժշտական մարտավարության մշակում, ազգային երաժշտության պրոպագանդում, ազգային երաժշտության ուսուցողական ծրագրերի իրականացում:*

Հասմիկ ԱՓԻՆՅԱՆ (ՇՀՀԿ, ԵԿԳՄ)

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՇԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Ազգագրական շրջանների երաժշտական բանահյուսության ուսումնասիրումը հայ ֆոլկլորագիտության մեջ զբաղեցնող հիմնախնդիր է: Այս ուղղությամբ ծավալված աշխատանքների հիման վրա հրատարակված արժեքավոր ժողովածուները, առանձին ուսումնասիրություններն ու հոդվածները[1] այսօր ավելի են ընդլայնում երաժշտագիտության սահմանները՝ պահանջելով խնդրի լուծման մեթոդաբանական նոր մոտեցումներ, համեմատական վերլուծության արդիական ուղիներ, որոնք կհանգեցնեն երաժշտական գեղարվեստական երևույթի նոր գնահատականների:

Շիրակի երաժշտական բանահյուսությունը հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ամենահարուստ ամբարներից է, որտեղ զարմանալի անաղարտությամբ պահպանված ավանդական շատ երգատեսակներ, գործիքային նվագներ ու երաժշտաբանաստեղծական հորինվածքներ իրավամբ դարերի հնության խոր կնիք ունեն: Դրանցից շատերն այսօր էլ կենցաղավարման լայն շրջանակներ են պահպանում և իրենց կենսունակությամբ ժողովրդական գեղարվեստական մտածողության արգասիք են: Անշուշտ, բանավոր փոխանցվող երաժշտական շատ արժեքների ակունքները պատմական Հայաստանի խորքում են՝ Մշո, Ալաշկերտի, Էրզրումի գավառներում և երգաշատ այլ վայրերում: Սակայն պատմական հայտնի իրադարձությունների բերումով բնօրրանից բռնահանված և Շիրակում վերաբնակեցված ժողովուրդը, շփվելով տեղաբնակների հետ, ժամանակի ընթացքում իր խոսքային ու երաժշտական լեզուն հարստացնում է այստեղի հնչերանգներով, որի հետևանքով առաջ են գալիս երգամտածողության նոր շերտավորումներ:

---

[1] *Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Ալեքսանդրապոլ, 1904: Սպ. Մելիքյան, Ան. Տեր-Ղևոնդյան,Շիրակի երգեր, Թիֆ., 1917: Սպ. Մելիքյան, Գ. Գարդաշյան, Վանա ժողովրդական երգեր, Եր., 1927: Թալին (կազմողներ՝ Ա.Փահլևանյան, Ա.Սահակյան), Եր., 1984: Ա.Փահլևանյան,Հայրենի երգեր, Եր.,1980: Հ.Չոլակյան, Քեսապի ժողովրդական երգարվեստը, Հալեպ, 1980: Մ.Մանուկյան, Մարտունու շրջանի ժողովրդական երգեր, Եր.,1997:*

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ն. Տիգրանյանի, Ա. Բրուտյանի, Կոմիտասի, Սպ. Մելիքյանի Շիրակում ձայնագրած նյութերը պատմականորեն արժեքավորվող բացառիկ գրառումներ են, որ վկայում են երաժշտաազգագրական այս հարուստ գոտու նկատմամբ անվանի երաժշտագետների ցուցաբերած ուշադրության և հետաքրքրության մասին: Հրատարակված տարբեր ժողովածուներում[1] զետեղված նյութն առաջին հերթին բնորոշվում է ժանրային բազմազանությամբ: Առանձին դեպքերում Կոմիտասն ինքը, հատուկ կարևորելով նյութի վաղնջական ծագումը և տեղային հատկանիշները, որոշ երգերի տակ նշում է կատարում, օրինակ. «Շիրակի Մահմու-ջուղ գյուղի ամենահին երգերից մեկն է սա»:[2]

Թեև անցյալ դարի սկզբին ժողովրդական երաժշտության ուսումնասիրումը հիմնականում ուղղված էր ընդհանրական կողմերի բացահայտմանն ու բնորոշմանը, այդուհանդերձ երաժիշտ-բանահավաքների կողմից չեն անտեսվել նյութի գրանցման տեղն ու ժամանակը, նույնիսկ կատարողների մասին ժողովածուներում զետեղված են փոքրիկ տեղեկություններ, ցավոք, խիստ սակավ ու թերի:[3]

Այսօր Շիրակի երաժշտական բանահյուսությունն ինքնատիպ մի համաձուլվածք է երգամտածողության մեջ գեղարվեստական կերպարային հին և նոր շերտերի համադրությամբ, ժանրային գոյացումների ճկուն համակարգով: Հայաստանի ֆոլկլորագիտական հետազոտություններով զբաղվող հաստատություններում՝ ԳԱԱ ԱԻ ժողովրդական արվեստի ուսումնասիրությունների բաժնի Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Մ. Բրուտյանի անվան ֆոլկլորագիտության ամբիոնի Ժողովրդական ստեղծագործության կաբինետում, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի Ժողովրդական ստեղծագործության տան, ՀՀ կոմպոզիտորների միության արխիվներում և ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ձայնադարանում, մասնավոր հավաքածուներում ամբարված է հսկայական քանակության նյութ: Այստեղ ավանդական երգատեսակների, գործիքային նվագների կողքին առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նոր ժամանակների հորինումների գրառումները: Ավելացնենք նաև, որ անվանի ֆոլկլորագետների՝ Ա. Քոչարյանի, Քր. Քուշնարյանի, Ս. Լիսիցյանի, Մ. Բրուտյանի, Մ. Մանուկյանի, Ա. Փահլևանյանի, Ա. Բաղդասարյանի և այլոց ձայնագրությունները մի ամբողջ դարաշրջան են ներկայացնում: Այս հսկայածավալ նյութի համամատական քննությունը հետազոտության նոր հեռանկարներ է բացում: Միևնույն ժանրի կամ մեկ

[1] *Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հատ. I, Եր.,1935, հատ. II, Եր., 1950: Ա. Բրուտյան, նշվ. աշխ.: Սպ. Մելիքյան, Ան.Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ.:*

[2] *Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հատ. II, էջ 148:*

[3] *Սպ. Մելիքյան, Ան. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ, էջ Զ*

երգի բազմաթիվ տարբերակների համեմատական վերլուծության միջոցով, անշուշտ, կարելի է հետևել ժանրի զարգացման, կամ, ընդհակառակը, որևէ երգատեսակի քայքայման գործընթացին:

ՇՀՀ կենտրոնում գրի առնված օրինակների մեջ մեծ քանակություն են կազմում պարերգերը, ավելի տարածված են աշուղական երգերը, սակավ են դարձել երգվող հատվածներով հեքիաթների, սիրավեպերի կատարումները: Ավանդական որոշ երգատեսակներն աստիճանաբար դուրս են մղվում կենցաղից և քիչ-քիչ մոռացության ենթարկվում: Մեծ մասամբ պատճառներն օբյեկտիվ են՝ պայմանավորված ժամանակի գործոնով: Կենդանի խոսակցական լեզվի մեջ տեղի ունեցող փոփոխությունները բնօրրանից ժառանգված բարբառների համահարթեցման պատճառ են դառնում, որն էլ իր հերթին երաժշտական ինտոնացիոն ոլորտի մեջ է փոփոխություններ մտցնում: Քաղաքային և գյուղական երգերի կատարման լսարանների միջև տարբերությունն աստիճանաբար նվազում է, ուստի պատճառով երգային բանահյուսության մեջ նկատելի է դառնում անհատական ստեղծագործության դերը:

Շուրջ 150 տարվա կտրվածքով հավաքված մեծաքանակ նյութի տարաժամանակյա գրառումների համեմատությամբ միայն կարելի կլինի պարզել և լուսաբանել տեղային հատկանիշների, երաժշտական մտածողությանը բնորոշ ինչ-ինչ ոճական առանձնահատկություններ:

Нина АЙРАПЕТЯН (ГФЕГК)

ВОКАЛЬНЫЙ ЦИКЛ АРМЕНА АРУТЮНЯНА НА СЛОВА СИАМАНТО

В конце 90-ых гг. XXв. на музыкальном поприще выступило поколение армянских композиторов, многие из которых уже зарекомендовали себя, как интересные и своеобразные художники. Их деятельность особенно ценна поиском собственного слова, индивидуальности, и новизны во взглядах на традиционные формы и жанры. К ним можно отнести гюмрийского композитора Армена Арутюняна, композитора обладающего самобытностью мироощущения и оригинальным строем мышления.

Первоначальное музыкальное образование А.Арутюнян получил в амасийской музыкальной школе. Далее продолжил учебу в Ереванской Консерватории им. Комитаса, которую закончил в 1994г., по классу композиции Степана Сукиасяна. После окончания консерватории Арутюнян работал в Ереванском театре марионеток, в качестве руководителя музыкальной части. В настоящее время композитор живет и работает в Гюмри. Арутюнян-композитор лирик. Лирический дар его особенно органично раскрылся в жанре камерной вокальной музыки. Он автор более 50 песен и романсов на

собственные слова и стихи армянских поэтов: Геворга Эмина, Ваагна Давтяна, Ваана Теряна, Сиаманто. Заслуживают внимания симфоническая поэма “Саят Нова”, соната для скрипки и фортепиано, струнный квартет и музыка к спектаклю “Храбый Назар”, поставленного в ереванском театре марионеток. Последняя работа композитора – буквально недавно законченное соло для виолончели.

Вокальный цикл на слова Сиаманто для голоса /тенор/ и фортепиано создан в 1999г. В его основу взяты два стихотворения поэта из цикла «Հոգեվարքի ու հույզի ժամը» - «Արցունքների», «Խավար», собственно переименованные композитором - «Այս գիշեր», «Ու ես պիտի մեկնեմ».

Поэзия Сиаманто, сочетающая черты романтизма и символозма, оказалась близка и созвучна мироощущению самого композитора. Суть музыкальной драматургии цикла предопределяется внутренним динамическим движением: от грусти по утраченной любви к глубокому выражению душевной боли. В каждом из романсов заключен своеобразный образ-символ, выявляющий определенное состояние души. Утонченный, поэтически-тонкий, едва уловимый образ первого романса дополнен драматическим порывом второго. В поисках музыкального воплощения поэтического стиля Сиаманто композитор, глубоко проник в стилистический и лексический строй его поэзии. Тонкое ощущение интонации стиха, позволило ему выявить их глубинное настроение, раскрыть своеобразие чувствований и грани миросозерцания их автора. Тем неменее, музыкальное прочтение стиха довольно свободно. В целях создания нужного ему эмоционального состояния, автор музыки может повторить фразу, распеть отдельные слоги, и выделить слова, имеющие ключевое значение в раскрытии смысловых ориентиров музыкального высказывания.

В процессе музыкально-образного развития конструктивное значение имеют свободно-переменный метр и разнообразно представленные ритмические формулы, которые не только выявляют образные качества самой темы, но и способствуют раскрытию эмоционально открытой, как-то по особенному доверительной ее интонации. Глубоко образно гармоническое мышление композитора, обусловленное особенностью прочтения поэтического текста: характерным принципом можно считать частое сопоставление единого гармонического комплекса основанного на терцово-квинтовой основе. В представлении, становлении и развитии художественного образа важна функция фортепианного сопровождения, которому присуща графическая манера письма. Каждая линия фортепианного сопровождения – значима. В каждом из романсов композитора применим свой фактурный прием. Глубоко индивидуализированное в плане фактурных приемов, фортепианное сопровождение призвано выявить художественный подтекст романса. В цикле явственна связь его музыкального языка с народно-песенными

истоками. Композитор тонко претворил особенности народного мелоса. В музыкально- стилистическом отношении примечательно творческое освоение современной речевой интонации и опора на традиции вокальной лирики армянского романса второй поовины XX века.

Циклу присуще образно-стилевое единство, поскольку художественная целостность цикла обеспечивается не только общностью автора их поэтического текста, идей, но и всей логикой образно-музыкального развития.

Обобщая, хочется отметить, что вокальный цикл на слова Сиаманто, несомненно, свидетельствует о становлении вокального стиля молодого гюмрийского композитора Армена Арутюняна.

Լաուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ (ՇՀՀԿ, ԳՊՄԻ)

ԳՅՈՒՄՐԵՑԻ ՆԿԱՐԻՉՆԵՐ. ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ

1910-1950-ական թթ. Հայաստանի գրաֆիկայի ավագ սերնդի ներկայացուցիչներից է Գևորգ Բրուտյանը, առաջադեմ արվեստագետ, համոզված ու հետևողական իրատես, միշտ կապված իր ժամանակին ու իրադարձություններին: Նա ստեղծագործական լայն հետաքրքրությունների տեր նկարիչ էր, որը վրձնել է թե՛ հեղափոխական իրադարձություններ, թե՛ Հայրենական մեծ պատերազմի դրվագներ, թե՛ հարազատ վայրերի բնանկարներ ու ազգագրական տիպեր ու հանդերձներ:

Նկարիչն անցել է կյանքի մեծ ու գեղեցիկ ճանապարհ և ունի անգնահատելի վաստակ մեր արվեստի պատմության մեջ:

Գ. Բրուտյանը ծնվել է 1888թ. Ալեքսանդրապոլում, երաժիշտ-ազգագրագետ Արշակ Բրուտյանի ընտանիքում: Ընդհանուր մասնագիտական կրթությունը ստացել է Ալեքսանդրապոլում, իսկ մասնագիտականը՝ Թիֆլիսում, Օ. Շմելինգի նկարչական դպրոցում:

1908-1910թթ. Գ. Բրուտյանն աշխատանքի է անցնում Թիֆլիսի օրիորդաց դպրոցում՝ որպես նկարչության դասատու և միաժամանակ զբաղվում ստեղծագործ աշխատանքով: 1910-ից նա արդեն Ալեքսանդրապոլում էր: Իր նման երկու նվիրյալների հետ 1913թ. կազմակերպում է գրաֆիկական աշխատանքների ցուցադրություն, որն այդ ժամանակների համար մեծ խիզախում էր: Ցուցադրությունը զոհունակությամբ է ընդունվում արվեստասեր հասարակության կողմից: Դա արվեստագետի առաջին և համարձակ քայլն էր, որին հետևելու էին իսկական սխրագործություններ, որոնք մեր արվեստի պատմության մեջ ուրույն տեղ էին հատկացնելու նկարչին:1910-ական թվականների կեսերից նա առաջին հայ նկարիչներից էր, ով կապվում է հեղափոխական շրջանների հետ, աշխատակցում հեղափոխական մամուլին:

1913թ. նկարչի ցուցադրած աշխատանքները փոքր-ինչ հոռետեսական, նույնիսկ խորհրդապաշտական երփնագիր ունեին. վկայություն հենց նկարների վերնագրերը՝ «Հիվանդ ընկերոջ մոտ», «Հուղարկավորություն», «Ճակատագրական հարսնացուն» և այլն:

Հեղափոխական գաղափարներով տոգորված մտավորականության շրջան ներքաշվելով և խորապես գիտակցելով իր քաղաքացիական պարտքը կյանքում ու արվեստում՝ Գ. Բրուտյանն արագ և վճռական բեկում մտցրեց իր ստեղծագործական հետաքրքրությունների թեմատիկայի և նույնիսկ կատարողական ձևերի ու տեխնիկայի մեջ: Արվեստում մեծ վաստակ ունենալու համար պարտադիր չէ լինել միայն տաղանդավոր գործերի հեղինակ: Առավել կարևոր է այն քաղաքական, հասարակական գործունեությունը, որը ծավալում է արվեստագետն իր ժամանակի մշակութային կյանքի ասպարեզում: Այս առումով անգնահատելի է Գ. Բրուտյանի ներդրումը ազգային մշակույթի մեջ:

Գ. Բրուտյանը նկարիչ դարձավ դժվար ժամանակ, դժվար միջավայրում: XX դարի սկզբին Ալեքսանդրապոլը հայտնվել էր հեղափոխության շեմին: Բնակվելով Ալեքսանդրապոլում՝ արվեստագետն ակտիվորեն մասնակցում է քաղաքի հասարակական կյանքին: Տեղի հեղափոխական կոմիտեի պատվերով 1920թ. նա պատրաստում է հեղկոմի կնիքն ու շտամպը, պարբերաբար հանդես գալիս հայկական և ռուսական թերթերում: Սոցիալ-դեմոկրատների հրատարակած «Մեր օրերը» ռուսալեզու լրագրում, սկսած 1916-ից, նա տպագրում է իր կենցաղային նկարներն ու ծաղրանկարները: 1920թ. մասնակցում է Մայիսյան ապստամբությանը, որը հետո հարուստ նյութ էր դառնալու նրա գրչանկարների համար:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Գ. Բրուտյանը ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքի հասարակական-գեղարվեստական կյանքին: 1921թ. հունվարից ղեկավարում է Հայկական հեռագրական գործակալության Լենինականի բաժանմունքը, նշանակվում զինվորական «Մահ կամ ազատություն» թիվ 17 զրահագնացքի ակումբի վարիչ, «Կրասնի նաբաթ», «Շիրակի ռանչպար» և «Բանվոր» թերթերում հանդես է գալիս օրվա հրատապ թեմաներով արված բազմաթիվ գրչանկարներով ու ծաղրանկարներով, նկարում է բազմաթիվ պլակատներ, որոնք բազմացվում և մասսայաբար տարածվում են քաղաքում և շրջաններում: Այդ գործերից հատկանշական են 1922թ. մի պլակատ՝ կատարված վիմագրական տեխնիկայով և «Մենք ենք տերը» լինոփորագրությունը (1923թ.), որոնք արտահայտում են նկարչի ակտիվ վերաբերմունքը նոր կարգերի նկատմամբ:

1921-ից Գ. Բրուտյանն աշխատանքի է անցնում Ալեքսանդրապոլի նկարչական դպրոցում՝ սկզբում որպես դասատու, ապա՝ տնօրեն մինչև 1928թ.: Նա եղել է նաև Հայաստանում նկարիչների առաջին ասոցիացիայի նախագահ: Նկարիչը մինչև 1937թ. ապրել է Լենինականում: Քաղա-

քային կոմիտեի հանձնարարությամբ ֆաբրիկաներում և գործարաններում կազմակերպել է կերպարվեստի ինքնագործ խմբեր, ցուցահանդեսներ: Գ. Բրուտյանը ակտիվ մասնակցություն է ունենում նաև Լենինականում կերպարվեստի թանգարան ստեղծելուն, պիոներական տանն ու երկաթուղայինների ակումբում գեղարվեստական խմբակների գործունեությանը: Իբրև միակ ճանաչված նկարիչը քաղաքում՝ նրան են հանձնարարվում ժողովրդական տոների առթիվ քաղաքային հրապարակի և գլխավոր տրիբունայի գեղարվեստական ձևավորման աշխատանքները, որոնց համար մի քանի անգամ պարգևատրվում է:

Բացի գրաֆիկական ստեղծագործություններից՝ Բրուտյանը միաժամանակ աշխատում է գունանկարչության, թատերական նկարչության և քանդակագործության ոլորտներում: Նրան են հանձնարարվում նաև Սպայի տան և Ա. Մռավյանի անվան (այժմ՝ Վ. Աճեմյանի անվան) պետթատրոնի բեմադրությունների նկարչական ձևավորումները:

1937թ. Գ. Բրուտյանը մեկնում է Երևան, որտեղ շարունակում է իր բեղմնավոր ստեղծագործական աշխատանքը: Հիմնականում նկարազարդում է մանկական գրքեր ու դասագրքեր, աշխատակցում «Հոկտեմբերիկ» ամսագրին: 1950թ. ամսագրի 20-ամյակի առիթով նկարիչը պարգևատրվում է ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով: 1939-ից մինչև 1941թ. հուլիսը աշխատում է Ռ. Մելիքյանի անվան գիտահետազոտական կաբինետում՝ որպես նկարիչ: Իսկ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ակտիվորեն մասնակցում է բոլոր շեֆական աշխատանքներին և ցուցահանդեսներին, որոնց համար էլ արժանանում է "За доблестный труд в Великой Отечественной Войне 1941-1945гг." մեդալի: 1942թ. մինչև կյանքի վերջը (1952թ.) նկարիչը ժողստեղծագործության տան մշտական խորհրդականն էր (հասարակական կարգով):

Գ. Բրուտյանի ստեղծագործական աշխատանքներն ընթանում են հիմնականում լինոփորագրության և գրչանկարչության բնագավառում: 20-ական թվականներին հայ գրաֆիկների շարքում նկարիչը միակն էր, որ հետևողական աշխատում էր լինոլեումի վրա՝ հաստոցային այդ տեսակի մեջ մշակելով իր գեղարվեստական լեզուն և ինքնատիպ ձևերը:

Գ. Բրուտյանի ստեղծագործությունների զգալի մասը գրչանկարներ է, որոնց մեջ ուրույն տեղ ունի «Հին Գյումրի» շարքը: Շարքը ճանապարհորդություն է դեպի արդեն կորուսյալ անցյալը: Այն հիշողությունների գեղարվեստական վերարտադրություն է և ոչ թե անցյալի լոկ ազգագրական, փաստական նկարագրություն: Նկարիչն այդ կյանքը ներկայացրել է գեղարվեստական պատկերավորությամբ: Ճիշտ է՝ երբեմն հումորով, երբեմն քննադատորեն, անգամ ծաղրով: Նրան հազիվ է հաջողվել թաքցնել իր սերն ու համակրանքն այդ բարի, խոսքաշեն, «դարդիման» հին մարդկանց նկատմամբ: «Հին Գյումրի» շարքը վերհուշ է (նկարել է 1937թ., խորհրդային կարգերի հաստատումից հետո, և հավանաբար հու-

մորն ու ծաղրը նկարներում թելադրված են ժամանակի պահանջով), հաճելի, աչք շոյող պատկերներ՝ կոմպոզիցիոն հետաքրքիր լուծումներով ու հյութեղ կոլորիտով: Արվեստագետը պատկերել է մի անհետացող աշխարհ, որն իր հետ տարել է շատերի մանկությունը: Նկարներից պարզ երևում է զգացումի այն տրոփյունը, որ ունենում է մարդ, երբ խոսքն է իր սիրելի քաղաքի մասին է, այն թախծոտ խնդությունը, որն համակում է մանկությունը վերհիշող մարդուն: Կերպարվեստում տեղական «դիալեկտ» համարվող այս ժանրին դիմել են նաև Վ. Խոջաբեկյանը, Հ. Շամշինյանը, շատ ավելի ուշ՝ Հ. Անանիկյանը, Վ. Էլիբեկյանը և ուրիշներ:

Գ. Բրուտյանը հին Գյումրին դարձնում է իր ստեղծագործության գլխավոր թեմաներից մեկը: Բայց նրա մեկնաբանումները եղերական հիշողություններ կամ տխուր մտորումներ չեն առաջացնում: Բրուտյանը քաղաքի մասին պատմում է գեղեցիկ, խորամանկ հումորով, հիանալով «օրիգինալով», այսինքն՝ այն կոնկրետ կենցաղային միջավայրով, որը նրան քաջ ծանոթ էր: Գյումրին իր անդարդ, ուրախ լոթիներով, փողոցային տոնակատարություններով, աղմկոտ իրադարձություններով անսպառ նյութ էր բազմաբնույթ գեղարվեստական մարմնավորումների համար:

«Հին Գյումրի» շարքը կենցաղային ժանրի տեսարաններ է՝ հարսանեկան, թաղման, տոնակատարության, խրախճանքի, փողոցի ու շուկայի: Չնայած նկարները պարզ են, ինչ-որ տեղ պրիմիտիվ, բայց կան նրբորեն ընկալված և վարպետորեն արված կերպարներ, որոնք հատկորոշ են պրոֆեսիոնալ մակարդակի հասած արվեստագետին: Ինչպիսի՜ խորաթափանցություն ու բարքերի ինչպիսի՜ իմացություն, ինչպիսի՜ հմտություն է պետք եկել նկարչին՝ տեղական կենցաղի այսպիսի հյութեղ ժանրային պատկերներ ստեղծելու համար:

Ծաղրանկարներ համարվող այս աշխատանքներն իրենց բնույթով ավելի մոտ են շարժին: Նկարիչն ընդամենը փորձ է արել ծաղրել անցյալի մնացուկ համարվող սովորույթները, սակայն այսուհանդերձ ծաղրը խայթող չէ, նա բավարարվել է չափավոր հումորով: Նկարիչն ուշադրություն է դարձնում ոչ միայն գործող անձանց հոգեվիճակին, այլև նրանց շարժումներին, որոնք ավելի են արտահայտչականություն հաղորդում նկարների բովանդակությանը՝ հերոսների ձեռքերի, աչքերի ու բերանի շարժումների, գծերի աննշան տատանումների միջոցով ընդգծելով արտահայտել տարբեր նկարագրերի մարդկանց կերպարներն ու նույնիսկ տրամադրությունները: Իհարկե, պատկերներում կան մարմնաձևերի համաչափություններ և տարածական անճշտություններ, սակայն դրանք գրեթե չեն նկատվում՝ արարողություններն ու ծեսերն այդպես անմիջականորեն, անկեղծ, սրատես և ճշմարտացիորեն ընկալելու ու պարզագույն միջոցներով պատկերելու շնորհիվ: Գյումրու կենցաղին ու բարքերին քաջածանոթ՝ այդ միջավայրում ծնված ու մեծացած նկարչի համար դժվար չէր ստեղծել հե-

տաքրքրաշարժ, կենսական արտահայտչականությամբ օժտված ինքնատիպ կերպարներ ու բնութագրեր:

20-ական թվականներին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության առավել ուժեղ թևերից մեկն Ալեքսանդրապոլի կազմակերպությունն էր, որի ամենաակտիվ անդամներից էր Բրուտյանը: Նա պարբերաբար հանդես էր գալիս սուր ծաղրանկարներով ընդդեմ դաշնակների, Անտանտայի զավթողական պլանների, տեղի հարուստների: Նա նկարում էր պլակատներ, ինքն էլ բազմացնում և տարածում էր ազգաբնակչության շրջանում: Այդ թվականի մայիսը հիշարժան էր ալեքսանդրապոլցիների կյանքում բոլշևիկների կազմակերպած ապստամբությամբ: Տրամաբանական է, որ Բրուտյանը, ապրելով ու շնչելով քաղաքի ամեն օրով, չէր կարող չանդրադառնալ Ալեքսանդրապոլի պատմության այդ էջին ևս:

Թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի զավթումից հետո նա մի շարք աշխատանքներում, որոնց զգալի մասը պլակատներ էր, ուղղակի կամ անուղղակի կերպով ծաղրել է թշնամուն: 1934թ. Գ. Բրուտյանը նորից անդրադառնում է այս իրադարձություններին իր «Պատերազմի արհավիրքները» շարքով (թուղթ, տուշ): Նա առաջին նկարիչներից էր, որ պատկերեց պատերազմի ահավոր հետևանքները: Նրա նկարներն ականատեսի անմիջական տպավորություններ են՝ մահ, հազարավոր անապաստան փախստականներ, սով, համաճարակ… Նկարիչը չէր կարող անտարբեր անցնել այս ողբերգության կողքով: Բրուտյանի նման ազատամիտ մարդու հավատը մարդկային բանականության հանդեպ խարխլվեց այն դաժանության ու բռնության առջև: Բռնությունը, թալանը, տանջանքն ու մահը եղան այն բանի ապացույցը, որ կենդանական բնազդը, որ ննջում էր մարդու մեջ, հիմա իշխում էր բանականության վրա: «Պատերազմի արհավիրքները» շարքի «Դիակի մոտ» աշխատանքը համր վշտի մի տեսարան է, որ զարմացնում է իր հուզական ու գեղարվեստական ուժով:

«Պատերազմի արհավիրքները» շարքի ստեղծագործություններին առանձնահատուկ է այն, որ նկարիչն իր մտահղացումները մարմնավորում է կենդանի, կոնկրետ կերպարներում՝ չհորինելով դրանք և չդիմելով դասականների արդեն պատրաստի կերպարներին,օգտագործում է շրջապատող կենդանի միջավայրը,իրական դեպքերն ու իրադարձությունները:

Գ. Բրուտյանը՝ որպես նկարիչ, ունի թեմաների ու սյուժեների որոշակի շրջանակ, որի մեջ ամենասիրելի թեման սոցիալիստական Լենինականի կյանքի պատկերումն է: 1920-30-ական թվականներին նկարիչն ստեղծում է քաղաքի վերակառուցման, նրա շինարարական ծավալուն աշխատանքներն արտացոլող լինոփորագրություններ՝ «Սոցիալիստական Լենինական» շարքը:

1923-ից մինչև 1940 թվականները Լենինականում կազմակերպվում են նկարիչների չորս ցուցադրություններ, որտեղ Գ. Բրուտյանը բերում է իր գործուն մասնակցությունը. ներկայանում է «Մենք ենք տերը» (1923),

«Բանվորները զինաթափում են ցարական ժանդարմներին» (1928), «Պատերազմի արհավիրքները» (1934) լինոփորագրություններով, ցուցադրում է իր «Հին Գյումրի» և «Սոցիալիստական Լենինական» շարքերը: Բրուտյանի «Սոցիալիստական Լենինական» շարքը բարի ու գեղեցիկ հուշեր է արթնացնում քաղաքի՝ արդեն հիշողություն դարձած տեսարժան վայրերի մասին: Այդ աշխատանքները դիտելիս կարծես տարիների խորքից աչքերիդ առջև են հառնում սիրելի ու հարազատ վայրեր, տեսարաններ՝ կապված մանկության ու երիտասարդության օրերի հետ:

Հիմա, երբ քաղաքը վերականգնվում է հերթական դաժան արհավիրքից հետո, ավելի թանկ են դառնում արդեն անդարձ կորած պատկերները, որ կան շարքի «Կուլտուրայի և հանգստի պուրակում», «Լենինի անվան պուրակում», «Գորկա. Լենինական», «Զրուցատեղի» և այլ գործերում: Շարքը քաղաքի տարեգրության էջերից մեկն է: Սա վերհուշ է, կարոտ, պատկերներն արված են շատ նատուրալիստորեն, գրեթե լուսանկարչության աստիճանի: Հայտնի է, որ արվեստում չկան հասարակ սյուժեներ, կա միայն նկարչի համապատասխան վերաբերմունք դրանց նկատմամբ: Հենց այդ վերաբերմունքի բացակայությունն է, որ Բրուտյանի լինոփորագրությունները մոտեցնում են լուսանկարի: «Թատրոնի շենքը», «Զրուցատեղի» (1946) աշխատանքներում ներկայացված են ճարտարապետական արժեք ունեցող կառույցներ: Պետք է ընդգծել, որ ընդհանուր գեղագիտական արժեքի, անգամ հմտության տեսակետից Բրուտյանն ունի ոչ կատարյալ, չհաջողված ստեղծագործություններ՝ զուրկ գեղարվեստական արժեքից: Նկարչի թեմատիկ որոնումները երբեմն պարզապես հասու չէին նրա ստեղծագործական ամպլուային: Նրա մի շարք ստեղծագործություններ վերակազմակերպվել են արվեստանոցում՝ վերածվելով բնության և իրականության տեսողական նմանակման:

Բնության տեսարաններում որոշակի չափով զգացվում է Բրուտյան նկարչի սուբյեկտիվ վերաբերմունքը միջավայրի նկատմամբ, նրան հաջողվել է քնարականություն ու հուզական տրամադրություն ստեղծել: Նույնը չի կարելի ասել նրա հետագա տարիների ստեղծագործությունների, մասնավորապես «Հայրենական պատերազմ» շարքի մասին:

Հայրենական մեծ պատերազմն էական փոփոխություններ մտցրեց հայ նկարիչների թեմատիկայի մեջ: Հատկապես այդ օրերին ակնհայտ դարձավ, թե ինչպիսի հսկայական ուժով է օժտված արվեստը: Այդ տարիները շրջադարձային եղան հայ գեղանկարչության ու գրաֆիկայի բնագավառում: Մասնավորապես ակտիվանում է երգիծական գրաֆիկան: Սրան զուգահեռ մեծանում է նաև պլակատի դերը: Ընդարձակվում են նաև հայ կերպարվեստի թեմատիկ շրջանակները, ի հայտ են գալիս նոր ժանրեր՝ մասնավորապես մարտական նկարի ժանրը, որ մինչ պատերազմը գոյություն չուներ: Նկարիչները հատկապես հետևողական էին ռազմա-

կան, պատմական և կենցաղային ժանրերում: Առաջնայինը Հայրենական պատերազմի թեման էր:

Այս տարիներին ստեղծվել են ոչ քիչ գծանկարներ, փորագրություններ, օֆորտներ, որոնք պատկերել են մարտական տարբեր դրվագներ: Այս շրջանում ստեղծվեցին բարձրարժեք գործեր, որոնք դիմացան ժամանակների փորձությանը: Նկարիչներից շատերի համար պատերազմը երևակայության արդյունք չէր, այլ ապրած, տեսած իրողություն: Կային նկարիչներ էլ, որ թեև մնացին թիկունքում, բայց չդադարեցրին իրենց հայրենանվեր աշխատանքը: Նրանցից էր նաև Գ. Բրուտյանը: Նրա պատերազմական թեմաներով պլակատները, լինոփորագրությունները հայրենասիրական ուղղվածությամբ համապատասխանում էին այն խնդիրներին, որոնք ծառացել էին պատերազմական փորձության օրերին:

Հայրենական պատերազմի թեմայով Գ. Բրուտյանն ստեղծում է ավելի քան 50 լինոփորագրություններ, որոնք այժմ գտնվում են Երևանի և Գյումրու թանգարաններում, Ազգային պատկերասրահում: Չնայած այն հանգամանքին, որ նկարիչն անձամբ չի մասնակցել մարտական գործողություններին, դա չի խանգարել, որ նա արտահայտի իր ջերմ զգացմունքը հայրենիքի նկատմամբ: Բայց նկարները արված են ոչ անմիջական ականատեսի ձեռքով, ուստի ստացվել են պարզունակ, տեղ-տեղ անհամոզիչ: Արվեստագետը վերարտադրել է միայն առարկայի, բնության տեսարանի կամ իրադարձությունների արտաքին կողմը՝ աշխատելով հարազատ մնալ բնօրինակին: Անգամ գործող մարդկանց ու նրանց շրջապատը պատկերում է միևնույն հարթության վրա. ինքը հանգիստ, երբեմն սառը, անտարբեր է մնում իր պատկերածին. բացակայում է ստեղծագործական վերաբերմունքը նույնիսկ գործողություն պատկերող այժմեական ստեղծագործություններում: Այս ամենը նրա «Հայրենական պատերազմ» շարքի աշխատանքները դարձնում են միօրինակ ու միապաղաղ:

Բրուտյանի «Հայրենական պատերազմ» շարքի աշխատանքներն առավել արժեքավոր են որպես փաստագրություն, պատմական իրադարձությունների արձագանք, քան գեղարվեստական արժեքներ:

Գ. Բրուտյանի բազմաբնույթ ստեղծագործությունների մասն են նաև դիմանկարները: Այս ժանրին նա անդրադարձել է իր ստեղծագործական կյանքի համարյա բոլոր փուլերում՝ նկարելով թե՛ գիտության, թե՛ արվեստի, թե՛ քաղաքական գործիչների: Ժամանակի պահանջով թելադրված՝ նրա դիմանկարների շարքում քիչ չեն Ի.Ստալինի, Վ. Լենինի, Կ. Բուդյոննու և Կ. Վորոշիլովի, բայց շատ ավելի ստվարաքանակ են մշակույթի գործիչների դիմանկարները: Դրանցից շատերը չեն պահպանվել, ուստի կբավարարվենք մեր ձեռքի տակ եղած նյութով: Այստեղ ամենաուշագրավը «Ավդալենց Թաթոս»-ի դիմանկարն է, որին կոչում էին նաև Պեչնիկ Թաթոս: Նա վառարանագործ էր և (Գյումրու սովորույթների համաձայն՝ արհեստավորներին սովորաբար կոչում էին իրենց արհեստի ա-

նունով): Նկարը գտնվում է տղայի տանը: Այս դիմանկարը հետաքրքրական է նաև այն առումով, որ Բրուտյանի՝ յուղաներկով արած հազվադեպ աշխատանքներից է: Նկարում պատվասեր, արժանապատիվ գյումրեցին է՝ իր տոհմիկ տարազով, մեռնող աշխարհի վերջին մոհիկաններից մեկը: Արհեստավոր այս մարդը պատկերված է փաստագրականի սահմաններից դուրս չեկող ճշգրտությամբ: Պեչնիկ Թաթոսը Գյումրու կենսափիլիսոփայության արտահայտիչն է: Նրա դեմքին կա պատվասիրություն, թախծի ու կորուստների դառնության զգացում: Հիմա՝ մեր այս անդեմ ժամանակներում, որքա՜ն հարազատ ու մտերիմ է թվում արդեն «կորուսյալ» աշխարհի վերջին ներկայացուցիչը:

Թերություններով հանդերձ՝ Բրուտյան նկարիչն իր ավանդն ունի հայ արվեստում: Այն կարևոր է ոչ միայն հին և նոր Գյումրու կյանքը հարազատորեն, ազգագրական ճշգրտությամբ ու գեղարվեստական պատկերավորությամբ կերպավորելու, այլև գծանկարի՝ գրաֆիկայի այդ տեսակի ավանդույթն ամրապնդելու առումով: Իսկ «Հին Գյումրի» շարքն արժեքավոր է նաև այն տեսակետից, որ ունի կարևոր ճանաչողական նշանակություն և կարող է սկզբնաղբյուր ծառայել ազգագրագետների համար:

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ (ԵԳԱԳՄ)

ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՄԱԶՅԱՆԸ ԵՎ ԼԵՆԻՆԱԿԱՆԸ

Գաղտնիք չէ, որ Շիրակը տաղանդավոր մարդկանց բնօրրան է, որ ծնում ու սնում է բազմաթիվ բանաստեղծների, քանդակագործների, նկարիչների (Ավ. Իսահակյան, Ս. Մերկուրով, Մ. Ավետիսյան, Հ. Անանիկյան, Հովհ. Շիրազ, Մարիամ և Երանուհի Ասլամազյաններ և այլք):

Մարիամ Ասլամազյանը ծնվել է 1907թ. Ալեքսանդրապոլի մերձակայքում գտնվող Բաշ-Շիրակ գյուղում: Այն, ըստ Մ. Ասլամզյանի, հնում կոչվել է Շիրակավան և հանդիսացել է Բագրատունիների ամառանոցներից մեկը: Մարիամի հոգևոր ներաշխարհի ձևավորման վրա հատկապես մեծ էր հոր՝ Արշակ Ասլամազյանի ազդեցությունը, որը բացառիկ օժտված անձնավորություն էր: Կանոնավոր կրթություն չունենալով հանդերձ՝ հայրը Գերմանիայից բերել և կառուցել էր առաջին ալրաղացը իրենց գյուղում, ինչի համար ամբողջ կյանքում նրան հալածում էին: Նրա տան դռները մշտապես բաց էին գիտության և մշակույթի մարդկանց առաջ, այդ թվում՝ ճարտարապետներ Թ. Թորամանյանի, Ա. Բունիաթյանի, ակադեմիկոսներ Ն. Մառի և Հ. Օրբելու, իսկ Ավ. Իսահակյանը նրա մանկության ընկերներից էր: Նրանց մտքերն ու դատողությունները մեկընդմիշտ դրոշմվելու են Մարիամի հիշողության մեջ: Հոր չիրականացած երազանքները կիրագործեն նրա զավակները՝ ճղուստրերն ու միակ որդին,

որոնք հետագայում կդառնան ականավոր մարդիկ և գիտնականներ, իսկ դուստրերից երկուսը՝ Երանուհին և Մարիամը՝ հայտնի նկարչուհիներ: Հայրը հետագայում ասելու է. «Իմ երեխաների հետ միասին ես կարող եմ նոր քաղաք կառուցել: Ես ունեմ բոլոր մասնագիտությունները»:[1]

Լենինականի հետ կապված Մարիամի առաջին հուշերը վերաբերում են 1918-1920թթ. իրադարձություններին, երբ նա դեռ 13 տարեկան էր:[2]

Իր վերապրածը նա նկարագրում է իբրև զարհուրելի մղձավանջ: «1920թ Լենինականի վրա նորից կուտակվել էին սև ամպեր: Կարսի գրավումից հետո թուրքերը շարժվում էին Ալեքսանդրապոլի ուղղությամբ, իսկ մեր զորքերը նահանջում էին այնքան արագ, որ ժողովուրդը չէր հասցնում տեղահանվել: ՈՒշ աշուն էր, ցեխոտ ճանապարհները դարձել էին անանցանելի: Գաղթականներ, սայլեր, զինվորներ. ամենուրեք լաց և ճիչեր…

Մեր տունը լցված էր հարևան գյուղերից փախած գաղթականներով: Այրվում էին պահեստները, պայթում էին ռումբեր: Քաղցած մարդիկ կողոպտում էին խանութները: Այս ու այն կողմ դիակներ էին՝ «Ազգի դավաճան» մակագրությամբ:

Հարկավոր էր շտապ հեռանալ քաղաքից: Սակայն հայրս ուշանում էր: Նրան շուտով բերեցին 40° ջերմությամբ, և մենք հաշտվեցինք այն մտքի հետ, որ մնալու ենք քաղաքում: Ամբողջ գիշեր վարարում էր անձրևը, իսկ առավոտյան քար լռություն տիրեց: Այդ լռության մեջ հանկարծ լսվեցին թուրքական ազգային հիմնի հնչյունները: Հետո երևաց թուրքական ջոկատի առաջապահը: Ամեն մի ձիավորի թամբին կար մի ցից՝ սպանված հայի գլխով: Ամենասարսափելին ծեր կնոջ գլուխն էր, որի ալեհեր մազերը ծածանվում էին քամուց: Տեսարանը զարհուրելի էր և սահմոկեցուցիչ: Թեպետև փակ էին բոլոր դռներն ու պատուհանները, ասկյարները այրում էին դռները, մտնում տները, ավերում, թալանում»:[3]

Այս հիշողությունները ուշագրավ են նաև այն իմաստով, որ գրեթե եզակի են իբրև ժամանակակցի վկայություն: Հետաքրքիր է, որ չափազանց զգայուն նկարչուհին իր ստեղծագործություններում երբևիցե չի անդրադարձել մանկության այս հուշերին: Նրա մյուս հուշերը բերում են մեզ 1920-ական թթ. Գյումրի, երբ նա հաճախում է քաղաքի դպրոցներից մեկը: Այստեղ նա նախապատվություն է տալիս բժշկությանը և նկարչությանը: Նկարչության ուսուցիչ Բրուտյանը Մարիամ և Երանուհի Ասլամազյաններին խորհուրդ է տալիս դիմել 1924թ. Գյումրիում բացված գեղարվեստի ստուդիան: Հետաքրքիր է, որ առաջին խմբակը Հայաստանում, որտեղ նկարչություն էին դասավանդում, բացվել է Գյումրիում: Դա հնարավոր էր նաև այն հանգամանքի շնորհիվ, որ Գյումրու կայազորում էր գտնվում ռուսական սպայակազմը, որը մշտապես աջակցում էր քա-

[1] *М. Асламазян, Давтар моей жизни, Москва,2001,стр.15.*
[2] *Նույնը:*
[3] *М. Асламазян,նշվ. աշխ., էջ 15:*

ղաքի մշակութային կյանքին: Այստեղ էին գալիս աշխատելու ռուսական կրթությամբ բանիմաց մասնագետներ: Այսպես, գունանկարչություն էր դասավանդում Յուլյա Հովսեփի Վերժբիցկայան, իսկ գծանկար՝ Ելիզավետա Իվանի Պատկանյանը: Առանձնակի մեծ սիրով է Մարիամը հիշում Յուլյա Վերժբիցկայային՝ նրան անվանելով «սիրալիր, խոհեմ մարդ, լավ նկարչուհի»: Նա սովորեցնում էր սիրել բնությունը և այն, ինչը նկարում ես: Ուսուցչուհիները զարգացնում են աղջկա մեջ նկատված տաղանդը և խորհուրդ են տալիս շարունակել ուսումը նախ՝ Երևանում, իսկ հետո՝ Մոսկվայում: Իրենց աշխատանքների տարեվերջյան ցուցադրության ժամանակ Մարիամը պատահաբար լսում է ուսուցչուհիների զրույցը. «Երանը լավ է զգում ձևը, նրանից լավ գծանկարիչ դուրս կգա, իսկ Մարիամը զգում է գույնը. նա բնատուր գեղանկարիչ է»: Մարիամի հետագա ճակատագիրը կանխորոշված էր...Մարիամը և նրա քույրը ընտրում են նկարչի դժվար ուղին: Միառժամանակ նրանք թողնելու են իրենց մանկության հուշերի քաղաքը, որպեսզի վերադառնան հայտնի և կայացած: Իսկ մինչ այդ պետք է անցնեին երկար ճանապարհ....

Լենինականը Մ. Ասլամազյանի համար եղել է այն հոգևոր հայրենիքը, որտեղից նա ստացել է մեծ ներուժ, և որը նա չէր մոռանում իր աստեղային պահերին: 1961թ. նա իր երկրորդ անհատական ցուցահանդեսն է բերում Լենինական՝ Երանուհու հետ ներկայացնելով 600 ստեղծագործություններ: 1960-ական թթ. թեմատիկ կոմպոզիցիաներում նա կարծես վերհիշում է իր անցած ուղին, կյանքի կարևոր դրվագները: Նկարներից մի քանիսը կապված են Լենինականի հետ: Դրանց շարքին կարելի է դասել հետևյալ ստեղծագործությունները, որոնցում նկարչուհին շեշտադրում է հին և նոր կյանքի հակադրությունները: «Քույրիկները Լենինականից» (1967) կտավի հերոսուհիները պատկերված են քաղաքի բնապատկերի ֆոնին: Միգուցե նկարչուհին վերհիշել է իր վաղ մանկությունը, երբ քույրիկի՝ Երանուհու հետ հաճախում էր դպրոց Լենինականում: Ավագ քույրիկն ավելի կամային է, գիտի՝ ինչի է ուզում հասնել կյանքում: Փոքրիկ քույրիկն ավելի երազկոտ է. նրա աչքերում կա հույս և հավատ:

«Հեռացող Լենինական»-ի (1967) մեջ կան ողբերգական հնչերանգներ: Հին քաղաքի ֆոնին պատկերված է փաթաթանով, խորշոմած դիմագծերով «բաջին»: Սակայն պատմությունը կրկնվում է. այսօր հետերկրաշարժյան Գյումրիում էլ կարելի է տեսնել և՛ կիսախարխուլ ավերակ տներ, և՛ հնամաշ զգեստներով, խորշոմած դեմքերով տառապած կանանց:

«Նամակ ռազմաճակատից» (1969) կտավում ընկերուհիները հավաքվել են այրու շուրջը՝ նրա հետ սգալու ծանր կորուստը: Կենտրոնում պատկերված է բոթաթեր «սև թուղթը»: Ամեն մի կանացի դեմք յուրովի է արտահայտում վիշտը: Նրանց ծալապատիկ դիրքը, օգտագործված սահմանափակ գունաշարը ավելի են սրում նկարի ողբերգական իմաստը: Կոմպոզիցիայի կենտրոնում դարձյալ նույն «բաջին» է՝ նախորդ նկարի

հերոսուհին: Այստեղ ի հայտ է գալիս նոր Ասլամազյանը՝ մարդկային վշտի հանդեպ զգայուն և կարեկից նկարչուհին:

1980-ական թվականների հանկարծահաս փոփոխությունները ստիպում են նկարչուհուն մտածել իր ստեղծագործական ժառանգության ճակատագրի մասին: Նա հասկանում էր, որ դառնում է ժամանակավրեպ: Եվ նա քրոջ՝ Երանուհու հետ որոշում են իրենց անձնական հավաքածուն՝ թվով 600գեղանկարչական, գրաֆիկական, խեցեգործական աշխատանքներ, նվիրել Գյումրուն: Այս ընտրությունը պատահական չէր, քանի որ մեր քաղաքի հետ կապված էին նրանց մանկական հուշերը: 1988թ. Գյումրիում բացվում է Մարիամ և Երանուհի Ասլամազյանների ստեղծագործությունների թանգարանը: Այն գտնվում է քաղաքի կենտրոնական մասում՝ հարմարավետ և հնաոճ առանձնատանը: Առաջին էքսպոզիցիան կատարել է Տ. Մախմուրյանը: Գյումրեցիների համար թանգարանը վերածվեց ուխտավայրի:Սակայն ավերիչ երկրաշարժը չխնայեց նաև այս կառույցը:

Թանգարանը վերաբացվեց 2005թ.՝ նոր ցուցադրությամբ: Նկարչուհին, որ կյանքի վերջին տարիներին զամված էր հաշմանդամի սայլակին, այդպես էլ բախտ չունեցավ տեսնելու թանգարանը վերականգնված: Նա մահացավ Մոսկվայում, 99 տարեկանում՝ լուսավոր և կենսահաստատ իր արվեստը պահ տալով հայրենի քաղաքին: Քաղաք, որտեղ անց էր կացրել մանկությունը, և որտեղ ծլարձակել էր իր բնատուր ձիրքը…

Էսթեր ԽԵՄՉՅԱՆ (ՀԱԻ)
Սվետլանա ՎԱՐԴԱՆՅԱՆ (ՀԱԻ)

ՇԻՐԱԿԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
(ըստ ՀԱԻ-ի բանահյուսության արխիվի նյութերի)

Շիրակի բանահյուսության գրառման պատմությունն սկսվում է XIXդ. վերջից, երբ հայ ժողովրդի հոգևոր արժեքների գնահատումն ու հավաքումն արդեն վաղուց իր հաստատուն տեղն էր գրավել հայ ժողովրդի պատմության մեջ: Շիրակի պատմազգագրական շրջանն իր գրաված դիրքով, պատմությամբ, ներէթնիկ յուրօրինակ շերտերով (Հայաստանի զանազան բնակավայրերից եկած գաղթականներ և պանդուխտներ), ավանդապահությամբ, խոսքաշենությամբ ու սրամտությամբ չէր կարող վրիպել բանահավաքների ուշադրությունից: Մի կողմ թողնելով XIXդ. վերջի հավաքման ու հրատարակության պատմությունը՝ մեր նպատակն է ներկայացնել ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում ամբարված ժողովրդագիտական արժեքները:

XXդ. առաջին քառորդը հայ ժողովրդի համար ճակատագրորեն ծանր ժամանակահատված էր, վտանգված էր թե ազգի գոյությունը և թե

նրա հոգևոր ու նյութական մշակույթը, ուստի ազգի առաջ ծառացած գոյապայքարին զուգահեռ՝ հայ մտավորականները փորձում էին կորստից փրկել նաև հոգևոր արժեքները: Դեռևս 191թ. Երվանդ Լալայանը բանահյուսական նյութեր է գրառել նաև Շիրակում: Այնուհետև 1915թ. Լալայանի խմբարշավն աշխատել է Ալեքսանդրապոլում և գրառել է ոչ միայն արևմտահայ գաղթականության, այլ նաև տեղացիների բանահյուսությունը: Լալայանի գրառած հեքիաթների բնագրերը պահվում են ՀԱԻ բանահյուսության արխիվում (FAI:-FAVII: ֆոնդում), դրանք տպագրվել են «Հայ ժողովրդական հեքիաթների» համահավաքի IV հատորում, որը նվիրված է Շիրակի պատմազգագրական շրջանին:[1]

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ կյանքն աստիճանաբար իր հունի մեջ մտավ, ժողովրդագիտական նյութերի հավաքման գործը նոր ընթացք ստացավ: Շիրակի պատմազգագրական շրջանի բանահյուսական նյութերի հավաքման պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ 1) 1925թ. մինչև 1940թ., 2) 1960թ. հետո: Երկրորդ փուլի բանահավաքչական աշխատանքները կապված են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գործունեության հետ:

Առաջին փուլի աշխատանքները ներկայացնում են բանահավաքներ Գ. Թարվերդյանը, Մն. Թամրազյանը, Խայաթը (Սուքիաս Զահրիյան), Ն. Նիկողոսյանը, Հ. Տեր-Վարդանյանը: Ի թիվս Հայաստանի մյուս շրջանների, բանահավաք Գեղամ Թարվերդյանը 1925-1934թթ. նյութեր է հավաքել Ամասիայի, Ղուկասյանի (նախկին Աղբաբա), Ախուրյանի գյուղերում և Լենինական քաղաքում: Թարվերդյանի ուշադրության կիզակետում հիմնականում քնարական բանահյուսության ժանրերն էին: Նա ժամանակի պահանջի համեմատ հավաքել է հայրենասիրական, զինվորի, աշուղական երգեր: Նրա գրառած երգերի թեմատիկան հիմնականում խորհրդային երկրի առօրյայի, կուսակցական ղեկավարների (Լենին, Ստալին), կոլտնտեսային կյանքի («Տրակտորի երգը», «Կոլխոզի խաղը» և այլն), տեղական նշանակության անհատների և դեպքերի («Լենինականի հայկինոյի հրդեհը») մասին էր:

Կինոն մարավ, քաղաքն ընկավ խավար մըթի մեջ,
Երեք տարվա աշխատանքը իլավ հեչ[2]:

Գ. Թարվերդյանի գրառած նյութերի բնագրերը պահվում են FFI: 2349-3802 համարների տակ:

Աշուղական ավանդույթի արմատները Շիրակում դարերի խորքն են գնում, և աշուղական երգարվեստն այս պատմազգագրական շրջանի բնորոշ առանձնահատկություններից մեկն է: Բանահավաք Մն. Թամրազյանը 1937թ. Լենինականում հավաքած բանահյուսական նյութերի շար-

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ, IV հ., Ե., 1963:*
[2] *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ (հետայսու՝ ՀԱԻԲԱ) FFI:2687,02-2690,00:*

քում ներկայացրել է նաև «Ալեքսանդրապոլի աշուղները 1830-1930թթ.» աշխատանքը,[1] որում անուն առ անուն հիշատակում է բոլոր այն աշուղներին, ովքեր ժամանակին ապրել և ստեղծագործել են այս տարածքում: Գյումրու աշուղների մասին հիշողություններ է գրի առել նաև աշուղ Խայաթը,[2] հուշերին կից ներկայացված են նաև Խայաթի երգերը:

1940թ. բանահավաք Ն. Նիկողոսյանը կազմել է մի բառարան, որում ընդգրկված են Շիրակում տարբեր տեղերից (Կարս, Էրզրում, Բայազետ և այլ տեղերից) վերաբնակված բազմաբարբառ հանրության գործածած բառերը և ոճերը: Բառարանում տեղ են գտել նաև ժողովրդական բուժամիջոցները, հագուստը, ուտեստները, սովորույթները, հավատալիքներն ու նախապաշարմունքը և այլն: Նիկողոսյանի հավաքածուում ներկայացված են բանահյուսական-ազգագրական բազմաբնույթ նյութեր (զրույցներ, զվարճախոսություններ, հանելուկներ, առած-ասացվածքներ, երգեր, աղոթքներ, մանկական խաղեր, ընտանեկան և հասարակական կյանքը XIXդ. վերջին և XXդ. սկզբին, արհեստները Գյումրիում):[3]

1940թ. պեմզաշենցի Հ. Տեր-Վարդանյանը կազմել է բանահյուսական մի հավաքածու,[4] որում ընդգրկված են հեքիաթներ, առակներ, զրույցներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ, երգեր, ավանդություններ, զվարճախոսություններ. մի մասը գրառել է իր տատից՝ 1891թ.:

Բանահյուսական նյութերի հավաքման երկրորդ փուլի համար խթան էր Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադրումը (1959թ.): Ինստիտուտի բանագետների նախաձեռնությամբ (Ա. Նազինյան) սկսեց համալրվել արդեն գոյություն ունեցող արխիվը: Այդ տարիներին այն համալրվել է երկու ճանապարհով. ա) ինստիտուտի բանագետ-բանահավաքների հավաքչական գործունեությամբ և բ) սիրող բանահավաքների (հիմնականում թոշակառու մտավորականներ, ուսուցիչներ, դերասաններ, կուսակցական աշխատողներ, լրագրողներ և այլն) հավաքած բանահյուսական նյութերով:

Բանագետ Արուսյակ Սահակյանը 1967թ. շրջագայել է Ախուրյանի շրջանի գյուղերում և ծագումով Արևմտյան Հայաստանի Մուշ, Բուլանըխ, Ալաշկերտ գավառներից գաղթածներից և նրանց սերունդներից գրառել է վիպական, քնարական և բանաձևային բանահյուսական բազմաթիվ նմուշներ, որոնց բնագրերը պահվում են բանահյուսական արխիվի FFVI: 0001-1384 ֆոնդում: Իսկ 1969թ. բանագետ Սարգիս Հարությունյանի գլխավորած խմբարշավը (անդամներ՝ Ա. Սահակյան, Ժ. Խաչատրյան, Զ. Խալափյան) դարձյալ Ախուրյանի շրջանի գյուղերում ձայնագրել է բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնք վերծանվել և պահվում են

[1] ՀԱԻԲԱ FFI: 7537-7676:
[2] ՀԱԻԲԱ FFI: 7679-8201:
[3] ՀԱԻԲԱ FFI: 6637-7536:
[4] ՀԱԻԲԱ FFII: 8130-8359:

արխիվի FFVIII: 0483-3221 համարների տակ: Լենինականում նյութեր են հավաքել նաև Ա. Նազինյանը, Ս. Հարությունյանը և Ա. Կարապետյանը:[1]

60-ական թվականներից սկսած ինստիտուտը համագործակցել է սիրող բանահավաքներ Պ. Բարսեղյանի, Ա. Գևորգյանի, Հր. Օհանյանի, Ս. Խաչատրյանի, Աշ. Գևորգյանի, Հ. Հարթենյանի, Հր. Սկրտչյանի, Ե. Խաչատրյանի, Հ. Մովսիսյանի հետ, որոնց՝ 60-ից մինչև 90-ական թվականները գրառած վիպական, քնարական և բանաձևային բանահյուսության բազմաքանակ նյութերը տեղ են գտել ինստիտուտի արխիվում: Քանի որ Շիրակի տարածաշրջանում ազգաբնակչության կազմը խիստ բազմազան է, և բանահավաքներից ոմանք էլ ծագումով Արևմտյան Հայաստանից են, նյութերն էլ խիստ բազմազան են և ընդգրկում են ոչ միայն բուն Շիրակը, այլև Արևմտյան Հայաստանի՝ Մուշի, Ալաշկերտի, Կարսի և այլ գավառների ավանդական նյութը: Բանահավաք Անուշավան Գևորգյանի ծնողները 20-ական թթ. գաղթել են Կարսի գավառից: Բանահավաքը հիմնականում աշխատել է Կարսի գյուղերից գաղթածների հետ և իր հավաքածուն անվանել է «Կարսի բանահյուսություն»,[2] որում ընդգրկված են հեքիաթներ, առակներ, զվարճախոսություններ, մանիներ, երգեր, պարերգեր, սովորույթներ և ազգագրական նյութեր: Ա.Գևորգյանի հավաքածուում մեծ թիվ են կազմում նաև Հայաստանի մյուս շրջաններից հավաքված նյութերը: Բանահավաքի նախասիրած ժանրերը զրույցներն ու զվարճախոսություններն են (բամբասակ), որոնք մեծ թիվ են կազմում:

Շիրակի նյութերի ինքնատիպ հավաքածուներից մեկը Հերիք Հարթենյանի հավաքածուն է,[3] որը գրառվել է 20-30-ական թթ., բայց ինստիտուտի արխիվ է հանձնվել 70-ական թթ.՝ Ս. Լիսիցյանի նախաձեռնությամբ: Հերիք Հարթենյանը նյութեր է գրառել աշուղ Ծաղկալուց (Մելիքսեթ Հարթենյան) 1929թ.: Աշուղ Ծաղկալին ծնվել է 1870թ., մահացել է 1937թ.: Նա 1923 թ. Հոռոմ գյուղի բնակիչ Սոսի Շաբոյանից գրառել է «Աշուղ Ղարիբ և Շայսանամ» սիրավեպը, որը Հ. Հարթենյանը հանձնել է արխիվ իր հավաքածուի հետ, ուր կան հրաշապատում և իրապատում հեքիաթներ, աստվածաշնչյան ավանդություններ, Մոլլա Նասրեդինի զվարճախոսություններ, խաղիկներ, երգեր, եկեղեցական տոներ և «Հեքիմարան» վերնագրված ժողովրդական բժշկության նմուշներ:

Շիրակի բանահյուսական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում առած-ասացվածքներն ու զվարճախոսությունները: Գրեթե բոլոր բանահավաքների հավաքածուներում այս երկու ժանրերը մեծ թիվ են կազմում: Ինքնատիպությամբ առանձնանում են Հրաչյա Օհանյանի

[1] *ՀԱԻԲԱ FFX: 1205-1294, FFX: 1295-1658:*

[2] *ՀԱԻԲԱ FFVI: 4458-5229, FFVIII: 5109-5308, FFX: 4783-5156, FFXI: 4847-5346, FFXII: 3479-3672, FFXII: 8015-8232:*

[3] *ՀԱԻԲԱ FFVI: 1385-2355, FFVI: 3218-4093:*

«Շիրակի առածներ»[1] (1965թ.) և Ա. Գևորգյանի «Շիրակի առածներ»[2] ձեռագիր հավաքածուները (1971-1973թթ.): Բանահավաք Ա. Գևորգյանը, բարձր գնահատելով առած-ասացվածքների դերն ու նշանակությունը ժողովրդի կյանքում, կարևորում է դրանց հավաքումը. «Հազար երանի այն մարդկանց, ովքեր ունեն կյանքի դիտողականություն ու ճանաչողություն և չեն կարող անտարբեր անցնել այն մարդկանց սրամտությունների, ասույթների մոտից, որ մարդիկ իրենց մտքի երևակայությամբ, թանկարժեք գոհարների նման շաղ են տալիս ամենուր… բայց հավաքող է պետք»:[3] Նա նյութերը հավաքել է Լենինական քաղաքում: Հավաքածուում ավանդական առած-ասացվածքների կողքին տեղ են գտել նաև ժամանակակից լենինականյան ասացվածքներ ու սրամտություններ, ինչպես օրինակ, «Լացը ու խնդումը, պոյեզի գծերի պես միշտ իրար կողքե կերթան»[4], «Կնիկը պլաստինկա է, որ թարաֆը գուզես՝ դի ու չալե՞…»[5]: Իսկ բանահավաք Հր. Օհանյանը գրառել է ավանդական առած-ասացվածքներ, ինչպես օրինակ, «Արհեստը օսկե բիլազուկ է»[6], «Էման լավություն էրա, որ շաբիկդ չիմանա»[7], «Թամայ արեցին մալին, աղջկան տվին հայվանին»[8], «Աստվածածնան մտի բակը, Սուրբ խեչն էկավ՝ մտի ծակը»[9]: Օհանյանի հավաքածուն առանձնանում է նաև ինքնատիպ անեծք-օրհնանքներով՝ բնորոշ Շիրակի տարածաշրջանին, օրինակ, «Ակոռի դառնաս»[10] և «Յուվեդ բլի»[11] անեծքների հիմքում Ակոռի և Յուվա գյուղերի ավերվելու հանգամանքն է, իսկ «Սևանա տակն էրթաս»[12] անեծքը, ըստ բանահավաքի մեկնաբանության, արդյունք է այն բանի, որ Սևանա լիճը նախկինում բարձրացել և ողողել է ափամերձ գյուղերը:

Շիրակի բանարվեստը տվել է տեղական և համահայկական նշանակության մի շարք զվարճախոսներ, որոնց մասին գրառված նյութերը ստվարաթիվ են և կան գրեթե բոլոր բանահավաքների հավաքածուներում: Արհեստավորական, առևտրական, գավառական Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքը իր «լոթիներով», «ուրույն տրադիցիաներով, առանձնահատկություններով, կենցաղով և հոգեբանությամբ (այսինքն՝ բարբառով, հայրենասիրությամբ, կրոնասիրությամբ, լոպպազությամբ, կատակասիրությամբ, սրամտությամբ, հումորով, մարդուն ձեռ առ-

[1] ՀԱԻԲԱ FFIV: 1211-1372:
[2] ՀԱԻԲԱ FFIII: 4926-5125, FFXII: 0917-1304, FFXII: 9799-9999:
[3] ՀԱԻԲԱ FFIII: 4931,01-4932,00:
[4] ՀԱԻԲԱ FFIII: 4964,09:
[5] ՀԱԻԲԱ FFIII: 4996,04:
[6] ՀԱԻԲԱ FFIV: 1243,06:
[7] ՀԱԻԲԱ FFIV: 1271,11:
[8] ՀԱԻԲԱ FFIV: 1277,07:
[9] ՀԱԻԲԱ FFIV: 1241,09:
[10] ՀԱԻԲԱ FFIV: 1219,02:
[11] ՀԱԻԲԱ FFIV: 1219,01:
[12] ՀԱԻԲԱ FFIV: 1219,03:

նելու ունակությամբ, երգի ու նվագի հանդեպ սիրով, «լազաթին» քեֆերով, հակումով դեպի թևավոր խոսքերը, անլեգալ դարձվածքներով և հայհոյանքով»)[1] այն անփոխարինելի քաղաքային միջավայրն էր, որը ծնունդ և սնունդ է տալիս զվարճախոսություններին: Ամենանշանավոր գյումրեցին և զվարճախոսությունների համահայկական հերոսը՝ Պոլոզ Մուկուչը (Մկրտիչ Ղազարի Մելքոնյան), «որպես մագնիս քաշեց դեպի ինքը ժողովրդի ստեղծագործությունները, այլ կերպ ասած՝ նա դարձավ գյումրեցիների սրամտությունները, հումորը, թևավոր խոսքերն արտահայտող անձ, ինչպես Մոլլա Նասրեդինն արևելքի ժողովրդական առակների, Պըլը Պուդին՝ Ղարաբաղի սրամտությունների, Հոբոսը՝ Լոռվա որոշ գյուղերի տխմարության արտահայտողը»:[2]

Բանահավաք Պարույր Բարսեղյանի հարուստ ու բազմաժանր հավաքածուն[3] ավելի է արժեքավորվում նրա «Պոլոզ Մուկուչ» ուսումնասիրությամբ, որում նա հնօրյա Գյումրու շքեղ պատկերի վրա ներկայացրել է Պոլոզ Մուկուչի կյանքը ծնունդից մինչև մահ և սիրով ու ջերմությամբ գնահատել նրա դերը զվարճախոսությունների ձևավորման գործում, որի համար «հայ ժողովուրդը «անձեռակերտ արձան» է կանգնեցրել Պոլոզ Մուկուչին, որովհետև նա մտել է հայկական ֆոլկլորի մեջ»:[4] Ինչպես նշում է բանահավաքը, իր երկարավուն հասակի համար գյումրեցիները նրան «կպցրին «Պոլոզ» մականունը, և նա ընդմիշտ դառավ «Պոլոզ Մուկուչ»:[5] Բանահավաք Պ. Բարսեղյանի հավաքածուի կարևորագույն մասերից մեկը «Գյումրեցոց մականունները («լաղաբները»)[6] վերտառությամբ աշխատանքն է, որում նա ամբողջացրել է հին Ալեքսանդրապոլի և Լենինականի բնակիչների մականունները՝ թվով 1400 հատ: Պոլոզ Մուկուչի զվարճախոսությունների շարքը լրացնում են Ծիտրո Ալեքի, Վարդանիկի ու ընկեր Մարգոյի, Ջղերի ու Կուժիկի զվարճախոսությունները (բանահավաքներ՝ Աշ. Գևորգյան, Հր. Մկրտչյան, Ա. Գևորգյան, Ե. Խաչատրյան): Ա. Գևորգյանը, ներկայացնելով իր գրառած զվարճախոսությունների հերոսներին, գրել է. «Այս երկու լենինականցիները՝ Ջղերը և Կուժիկը, անչափ սրամիտ ու սրախոս մարդիկ են»[7]: Հատկանշական է, թե գյումրեցիներն ինչպես են իրենք իրենց գնահատում.

- Ջղեր, էտ ի՞նչ բան է ռոբոտը:
- Էրկթից շինած «մարդ», որը ինչքան խմէ, չի հարփի ու ամմեն դարդի ու ցավի էլ կըդիմանա…
- Հա՞յ է…

---

[1] ՀԱԻԲԱ FFVI: 6638: Պ. Բարսեղյան, Պոլոզ Մուկուչ, Եր., 1969:
[2] ՀԱԻԲԱ FFVI: 6644, Պ. Բարսեղյան, նշվ. աշխ.:
[3] ՀԱԻԲԱ FFIV: 2045-3572, FFVI: 6076-6911, FFVIII: 4479-4804:
[4] ՀԱԻԲԱ FFVI: 6784, Պ. Բարսեղյան, նշվ. աշխ.:
[5] Նույն տեղում, FFVI: 6658:
[6] ՀԱԻԲԱ FFIV: 2045-2248, FFVI: 6400-6435:
[7] ՀԱԻԲԱ FFIII: 5089,01:

- Չէ, գյումրեցի է....[1]

Այս զվարճախոսները Գյումրիի հմայքն ու համեմունքն են, նրա անբաժանելի մասը.

- Կուժիկ ջան, կրհավատա՞ս, ես հեչ մեռնելուց չեմ վախնա...

- Հը՞ը ինչի՞ց կրվախնաս:

- Կրվախնամ մեռնիմ՝ գյոզալըմ Գյումրին ֆասոնից ընկնի....[2]

ՀԱԻ բանահյուսության արխիվի խոշոր հավաքածուներից են նաև Ս. Խաչատրյանի, Հր. Մկրտչյանի, Ե.Խաչատրյանի, Հ.Մովսիսյանի գրառումները:[3] Հավաքածուներում ներկայացված են բազմաբնույթ ու բազմաժանր բանահյուսական նյութեր՝ հավաքված Լենինականում, Ախուրյանի, Արթիկի, Ղուկասյանի գյուղերում: Բանահավաքները պահպանել են բարբառային առանձնահատկությունները և իրենց հավաքածուներին կցել են բարբառային բառերի բառարաններ:

Շիրակի պատմազգագրական շրջանի բանահյուսական նյութերի դիտարկումը ցույց տվեց, որ նյութերն իրենց բնույթով և ժանրային պատկանելությամբ խիստ բազմազան են ու հարուստ, և պատկառելի տեղ են գրավում համահայկական բանահյուսական ժառանգության մեջ: Շիրակի բանահյուսական նյութերը կարիք ունեն լուրջ գիտական ուսումնասիրության և հրատարակման:

Սամվել ՍՈՒՐԱԴՅԱՆ (ԵՊՀ)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԸ ԵՎ ԳՅՈՒՄՐԻՆ

Որքան հին, նույնքան էլ նոր այն ճշմարտությունը, թե գրողն սկիզբ է առնում իր ծննդավայրից, և իր ծննդավայրն է բերում գրականություն, վերաբերում է նաև գյումրեցի Հովհաննես Շիրազին: Բոլոր իսկական մեծերի ճանապարհն է դա. նրանք նախապես հայտնի են դառնում իրենց ծննդավայրով և ապա հզոր արվեստով իրենք են ծննդավայրը ներկայացնում մեծ աշխարհին. Աբովյանն՝ իր Քանաքեռով, Թումանյանը՝ իր Լոռիով, Տերյանը՝ իր Ջավախքով, Չարենցն՝ իր Կարսով, Շիրազն՝ իր Գյումրիով: Թերևս այս իրողությունն է պատճառը, որ հարազատ ծննդավայրի նկատմամբ սերն ու զգացմունքը տարբեր գրողների ստեղծագործություններում դրսևորվում են աշխարհընկալման որոշակի ընդհանրություններով, բայց և պատկերավոր մտածողության անհատականությամբ ու ոճի որոշակի տարբերություններով:

---

[1] *ՀԱԻԲԱ FFIII: 5092,02:*

[2] *ՀԱԻԲԱ FFIII: 5102,02:*

[3] *ՀԱԻԲԱ FFIII: 4151-4807, Ս. Խաչատրյանի հավաքածու, 1959, FFVI: 4094-4833, FFXI: 0001-2048, FFXI: 7253-7830, Հր. Մկրտչյանի հավաքածու, FFX: 2741-3140, FFXI: 6443-6710, FFXII: 1567-1954, FFXII: 8483-8886, Ե. Խաչատրյան, Արթիկի հավաքածու, FFX: 1043-1204, Հ. Մովսիսյան, «Ախուրյանի բանահյուսություն» հավաքածու:*

Մեր նպատակն է կենտրոնանալ Հովհ. Շիրազ - Գյումրի հարաբերության վրա և սեղմ բնութագրել խնդրի հետևյալ էական կողմերը. ի՞նչ է տվել Գյումրին Հովհ.Շիրազ բանաստեղծին, և ինչպե՞ս է Հովհ.Շիրազը բանաստեղծականացրել Գյումրին:

Ծնվելով արհեստների ու արվեստների, երգի ու բանաստեղծության սիրահարների քաղաքում, անցնելով որբության դառնությունների միջով՝ նա վաղ մանկությունից աչքն ու ականջը վարժեցրել էր խոսքաշեն ու սրամիտ մարդկանց գունագեղ միջավայրին, դրսևորել իր բնական տարբեր ձիրքերը՝ ուժերը փորձելով տարատեսակ արհեստների, ապա և քանդակագործության ու նկարչության մեջ:Սակայն Հովհ. Շիրազը բանաստեղծ էր ծնվել ու որպես այդպիսին հենց Գյումրիում էր մկրտվել: Վաղ մանկության տարիների նրա առաջին բանաստեղծական թոթովանքները լսել ու քաջալերել են Աստղիկ մայրը և Թաղևոս հայրը, որոնց հանդեպ առասպելական սեր ուներ բանաստեղծը, Գոհար և Մանիկ քույրերը, որբանոցային խուժանացած ընկերները, շուկայի առևտրականներն ու արհեստավորները, Գյումրիում կենտրոնացած մտավորականները, դժվար ապրող վշտահար, բայց պարզ ու սրտաբաց մարդիկ:

Արդեն 1926-ի երկրաշարժի օրերին, երբ ընդամենը 11-12 տարեկան էր, Օնիկ Կարապետյանը հայտնի դարձավ իր «Ժաժքը եկավ գետնի տակից» բանաստեղծությամբ: Իսկ երբ ջուլհակի աշակերտ էր և «Տեքստիլագործ» թերթի ցրիչ, խմբագրից գաղտնի՝ տպագրվող համարում նյութերից մեկի փոխարեն չարաճճիորեն իր բանաստեղծությունն էր դրել և առաջին գրավոր խոսքով ներկայացել հանրությանը: Աչքի առջև էր գրական ուսուցչի՝ պաշտելի Վարպետ Ավ.Իսահակյանի օրինակը, գրեթե ամեն օր հանդիպել էր զվարճախոս Պոլոզ Մուկուչին ու Երկեն Ալեքին, խելոռած Ճերմակ Համոյին, անձամբ լսել նրանց սրամտությունները, ամենուր ունկնդրել Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի սրտահույզ երգերը, թափառիկ աշուղների՝ իրենց սեփական և այլ աշուղների երգերի կատարումները: Այս էր այն հոգևոր մթնոլորտն ու միջավայրը, որտեղ ձևավորվում էր Հովհ. Շիրազ բանաստեղծը: Պատահական չէր, որ նա աշուղների և առհասարակ աշուղական արվեստի նկատմամբ դրսևորեց ակնհայտ սեր, ինքն էլ հետագայում կիրառեց աշուղական բանաստեղծության տեսակներն ու չափերը, անգամ 1940թ. լույս տեսած «Երգ Հայաստանի» ժողովածուի մի ընդարձակ բաժին վերնագրել էր «Աշըղ Շիրազ»:

1930-ականների Գյումրիում էին կենտրոնացել Արևմտահայաստանից գաղթած կամ արտասահմանից եկած, խորհրդային երկրի համար «անհուսալի» գրական մտավորականներ՝ Ատրպետը, Գեղամ Սարյանը, Վահրամ Ալազանը, Խաչիկ Դաշտենցը, Սողոմոն Տարոնցին և ուրիշ մտավորականներ, որոնց՝ մայրաքաղաքում կուտակվելու մեջ քաղաքական վտանգ էր տեսնում ժամանակի բոլշևիկյան իշխանությունը:

Երբ արդեն կարծես գտել էր իրեն և ծննդավայրին համապատասխան լավագույն գրական անունը՝ *Հովհաննես Շիրակ*, բանաստեղծի բնատուր ձիրքը գնահատում է Ատրպետը: Նա էլ, պատանու բանաստեղծություններից Իրանի Շիրազ քաղաքի հռչակավոր վարդերի բույրն առնելով, իր ձեռքով *Շիրակ* անվան *կ*-ն *զ* է դարձնում՝ այդպես ձևավորելով հայ բանաստեղծի *Շիրազ* գրական անունը: Իսկ հետագայում Վահրամ Ալազանն իրավունք ուներ պարծենալու, թե «Հովհ. Շիրազին ես պեղեցի Լենինականից»: Ըստ վկայությունների՝ Ալ.Շիրվանզադեն, որը բանաստեղծի տաղանդի առաջին գնահատողներից էր, վճռաբար դեմ է եղել Հովհ. Շիրազի Երևան տեղափոխվելուն, որովհետև խելամտորեն գտնում էր, որ Գյումրին քնարերգու ստեղծագործողի համար ավելի նպաստավոր միջավայր է: Գրական նահապետը նկատել էր, որ պատանին 1930-ական թթ. «ընդհանուր աղմուկի մեջ ժողովրդական լիրիկա է բերում», պետք է նրան դաստիարակել, գուրգուրել, բայց երես չտալ. պետք չէ նրան բերել Երևան ու մյուսների պես փչացնել մեքենաների, անիվների, դազգահների, տրակտորների անհոգի ու անարվեստ երգերով: 1935թ. իրավամբ կարելի է համարել Շիրազի հայտնության տարի: Այդ տարում Ալազանի առաջաբանով ու խմբագրությամբ լույս տեսած «Գարնանամուտ»-ը և ապա «Սիամանթո և Խջեզարե» պոեմը ապշեցուցիչ ընդունելության արժանացան: Իր կյանքի մայրամուտին՝ 1968թ., Գուրգեն Մահարին պիտի խոստովաներ, թե «սկսնակի նախակրթարան չանցած» Շիրազը «հենց սկզբից իր մատը դրել էր իսկական քնարերգության զարկերակին»:

«Մտածումի նավով» աշխարհը շրջելով՝ Հովհ. Շիրազը միշտ վերադառնում էր նավահանգիստ՝ իր «անուշ ծննդավայր» հարազատ Գյումրի, որից ստացել էր ստեղծագործական առաջին ազդակներն ու ներշնչանքները, սիրո առաջին սարսուռները: Նրա սուր տեսողությունն ա՛յս աշխարհում էր հայտնաբերել իր համեմատությունների ու մետաֆոր-փոխաբերությունների համակարգը կամ նրա զգալի մասը:

Նորահայտ տաղանդն ունեցավ շռնդալից գրական մուտք: Նրան հենց սկզբից նկատեցին ու գնահատեցին գրական ճշմարիտ բարեկամները և քարկոծեցին անկամորդ ու հազարակնյա չարամիտ թշնամիները: Կարևորը քնարական ու էպիկական հզոր ձիրքերով օժտված, մեծ ապագա խոստացող բանաստեղծն էր, որի առջև ծառացել էր ամենից դժվար խնդիրը. նույն բնական ու մարդկային միջավայրը, նույն Արագածն ու Մանթաշը, նույն Արփաչայն ու Գյումրու խոսքաշեն մարդիկ, մեր ժողովրդին հոգու խորք տվող նույն ձորերն ու աստեղային թռիչք տվող լեռները, նույն «ցորենի ծփուն արտերը», նույն երկինքն ու աստղերը մինչ այդ եղել էին Ավ. Իսահակյանի ներշնչարանը: Չգիտես ինչու՝ իմաստուն Հովհ. Շիրազը մանկան միամտությամբ համոզված էր, թե Գյումրուց աստղերն ավելի խոշոր են երևում: Մեր զրույցներից մեկի ժամանակ բանաստեղծն անկեղծորեն ասաց.

Մի օր Իսահակյանին հարցրի.
-Վարպե՛տ, ինչի՞ց է որ Գյումրուց երկինք նայելիս աստղերն ավելի խոշոր կերևան:
Իսկ վարպետը բազմանշանակ պատասխանել էր.
-Որովհետև Գյումրին երկնքին ավելի մոտ է:

Սա սովորական մարդկանց հարց ու պատասխան չէ, անշուշտ: Հենց այդ անսովոր ու յուրահատուկ մտածողությունն է նրանց բանաստեղծ դարձրել, իսկ այդ մտածողությունը դարձյալ գյումրիական ծագում ունի: Իր գեղարվեստական մեծ աշխարհն այդպես էր ստեղծել Ավ. Իսահակյանը: Նրանից տարբերվելու, ինքնահաստատման դժվարությունները և նյութի պարտադրած նմանությունները հաղթահարելու համար ուժ էր պետք, ինչպես տանող հրթիռն է վիթխարի ուժով պոկվում Երկրի ձգողականությունից և տիեզերանավը ինքնուրույն թռիչքի դուրս բերում ուղեծիր:

Գյումրուց ու շրջակայքից ստացած ամեն տպավորություն, ամեն զգացական ազդակ Հովի. Շիրազի գրչով դառնում էր պատկեր ու բանաստեղծություն, իսկ պատկերները, որ հաճախ էին ստանում գեղանկարչական հագեցվածություն, ձեռք էին բերում ընդհանրացման մեծ ուժ, ծնվում էին փոքր ու մեծ գլուխգործոցներ, որոնք անկեղծ զգացմունքների բնական բխվածքներ էին՝ սրտամոտ ու հոգեհարազատ: Իր ստացածն այսպես էր վերադարձնում Հովի. Շիրազը, և ժողովուրդը բուռն ցնծությամբ էր ընդունում նրա իրարահաջորդ քնարական հրաշակերտությունները:

Հովի. Շիրազն այն եզակի բանաստեղծներից էր, որն ականատես էր ժողովրդական լայն զանգվածների վրա իր գեղարվեստական խոսքի թողած եզակի ներգործությանը: Մանկության ու որբության թեման մարմնավորող գլուխգործոցներ են «Գտա», «Հին մանկություն», «Իմ ընկեր Լորիկը» գործերը. սրանց գեղարվեստական պատկերներում իրողությունները, ճշմարտությունը ներկայացված են խոր հուզականությամբ և կենսական հավաստիության շնորհիվ դարձել են մի ողջ պատմաշրջանի «մանուկ ծերացած սերնդի» ընդհանրացված կենսագրությունը.

Մեկից մի հաց, մեկից մի սոխ գողանում,
Գնում էինք Արփաչայը լողանում: ...

Արագ հասունացած Հովի. Շիրազն առաջին իսկ գրքով՝ «Գարնանամուտ»-ով, ու առաջին՝ «Սիամանթո և Խջեզարե» վիպերգով, արդեն հանրաճանաչ բանաստեղծ էր: 1000 տողից կազմված այդ վիպերգին խիստ դժվարահաճ, իսկ արևելահայ ու խորհրդահայ բանաստեղծության հանդեպ նույնիսկ ծայրահեղ ու քմահաճ Հակոբ Օշականն արձագանքեց մի գրախոսությամբ, որը վերնագրել էր «Հազար տող, հազար վարդ, հազար գոհար»: Համբավավոր քննադատը կռահել էր նաև, որ եթե մի օր արևելահայ գեղջուկ պարզությունը (նկատի ուներ Ավ. Իսահակյանին) և արևմտահայ շքեղ պատկերավորությունը (Դանիել Վարուժանին նկատի ուներ) իրարու միանան, «իրականացնողը այս տղան պիտի ըլլա»: Թե՛

հայրենիքում, թե՛ Սփյուռքում այսպիսի արագ ճանաչման պատճառը պարզ մի ճշմարտություն էր. Շիրազն իր ապրած կյանքը, որբանոցային դառն ու սրտախոց հուշերը, իր մարդկային զգացմունքներն ու ապրումները, գեղեցկության իր ընկալումները, իր մորն ու հայրենիքը, իր Գյումրին ու Շիրակը, իր Արագածն ու Արփաչայն էր բանաստեղծականացնում և քանի որ շռայլորեն օժտված էր պատկերավոր մտածողության բացառիկ ձիրքով, անակնկալ գյուտերով հարուստ նրա բանաստեղծություններից շատերը ձեռք էին բերում ներգործուն մեծ ուժ, արտակարգ տպավորիչ էին և նվաճում էին հասարակական մեծ լսարան:

Գյումրու՝ որպես ծննդավայրի՝ Հովի. Շիրազի գեղարվեստական մտածողության վրա ունեցած էական ազդեցության մասին ճիշտ պատկերացում կազմելու համար պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք էլ. նա հավատարիմ մնաց դասական քնարերգության ոչ միայն ձևերին ու բանաստեղծական տեսակներին, այլև թեմաներին՝ սեր, հայրենիք, մայր, բնություն, անշուշտ, քնարերգության ավանդական թեմաների նոր իմաստավորումով: Այս թեմաների բոլոր վերարծարծումներում ծննդավայր Գյումրուց էր Հովի. Շիրազը գնում դեպի մեծ աշխարհ: Ահա ինչու շիրազյան բանաստեղծությունները, արտաքնապես ազգային ձև ու տարազ զգեցած, խորքում համամարդկային են:

Հովի. Շիրազի բնության ու գարնան երգերը, եթե նույնիսկ Երևանում են գրվել, ապա, անշուշտ, Գյումրու բնության ու գարնան ներշնչումներով: Շիրակ աշխարհին և Գյումրուն նվիրված ձոներգերը հեղինակի հասունության ու վարպետության աճին զուգընթաց ձեռք են բերել լայնք ու խորք, պարզ քնարական բնապատկերները և հայեցական տեսարանները վերաճել են կենսական թանձր խտացումների, գեղարվեստական ու փիլիսոփայական մեծ ընդհանրացումների:

Հովի. Շիրազի համար հայրենիքն սկսվում է իր ծննդավայր Գյումրուց և տարածվում Հայաստանի ներկա և անցյալի պատմական տարածքներում: Հայոց պատմության ողբերգական ու հերոսական դրվագների նպատակային պատկերումներով, հայրենիքի ոգին նոր սերունդների հոգում պատվաստելով՝ նա մշտարթուն է պահել մեր ժողովրդի պատմական հիշողությունը: Խորհրդային ժամանակներում՝ սուտ ինտերնացիոնալիզմի տիրապետության պայմաններում, Հովի. Շիրազն իսկապես կարողացավ իրագործել անկարելի հրաշք. իր հայրենասիրական հզոր բանաստեղծություններով ու պոեմներով նա արթնացրեց կոմունիզմի գաղափարախոսության թմբիրի մեջ նիրհող ժողովրդին, բացահայտեց պետականորեն թաքցվող ողջ ճշմարտությունը հայոց մեծ ողբերգության՝ եղեռնի ու կորուսյալ հայրենիքի մասին:

Մեր քննադատությունը Հովի. Շիրազի մայրական երգերին, թեկուզև կցկտուր, այնուամենայնիվ անդրադարձել է, սակայն փիլիսոփայական լռություն է պահպանել նրա հայրական երգերի հանդեպ: Առանց

մանրամասների մեջ խորանալու՝ ասենք, որ «Հուշարձան մայրիկիս» և «Հուշարձան հայրիկիս» պոեմները (հեղինակն ինքն է դրանք անվանել պոեմ՝ հյուսված բանաստեղծություններով) կազմող գործերը գեղարվեստական լուրջ արժեքներ են ու արժանի մասնագիտական լուրջ քննության: Նրանցում Հովի. Շիրազը կերտել է իր ծնողների կերպարները՝ կոնկրետի մեջ խտացնելով մեր ողջ ժողովրդին հատուկ բնավորության գծերը, ազգային հոգեբանությունն ու մտածողությունը, բարությունն ու այլասիրությունը: Այդ կերպարները բանաստեղծին հնարավորություն են տվել հայ մարդու նկարագրի վեհության հետ ցուցադրել նաև նրա ճակատագրի դառնությունը՝ ծանր կորուստներին ու դժվարին կյանքին հակադրելով ոգու արիությունն ու լավատեսությունը: Այդ երգերը, որ մեր ժողովրդի հոգու կենսագրությունն են, մեր ազգային մեծ երազանքների խտացված արտահայտությունները, նույնպես խարսխված են ծննդավայր Գյումրու, մանկության հիշատակների վրա:

Բանաստեղծություններից շատերի գրության շարժառիթ են դարձել մոր կամ հոր այս կամ այն իմաստալից խոսքը: Զարգացնելով Շահազիզի, Ջիվանու, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի մայրերգության լավագույն ավանդները՝ Հովի. Շիրազը մի կողմից հասավ մոր աստվածացման գաղափարին, մյուս կողմից՝ աղքատ հողագործ հոր կերպարում խտացրեց ազնիվ աշխատավորի նկարագրի վեհությունը՝ իր ռոմանտիկ խառնվածքի համաձայն նրան վերագրելով արքայական հատկանիշներ.

Անտեր արքա էր հայրս՝ գլխի թագն էր լոկ արփին ...

1920թ., երբ ապագա բանաստեղծը վեց տարեկան էր, Գյումրի ներխուժած թուրքերի ձեռքով սպանվում է հայրը՝ գյումրեցի բոստանչի Թաթոսը: Հոր կերպարը կերտելիս բանաստեղծն անձնական դժբախտության պատկերումով հասնում է համազգային ողբերգության խոր զգացողության ու նրա գեղարվեստական մարմնավորման.

Հայրս տեսավ ահավոր
Կոտորածներն հայկական ...

Մեծ աշխարհի խարդավանքներից ու անարդարություններից, կյանքի հոգսերից դառնացած բանաստեղծի համար Գյումրին մի տեսակ հոգևոր օազիս էր, փրկարար ափ: Շիրակ – Շիրազ հարաբերությունն ինքն է հանճարեղորեն բանաձևել.

Շիրազը շշուկն է Շիրակի դաշտերի,
Հանճարեղ իր երկրի գուսանն է, ասում են:

«Էլի պիտի Գյումրի երթամ. քեֆ անելու հավաս ունիմ», - ասաց մի օր ու գրեց նույն տողով սկսվող բանաստեղծությունը: Գրեց Գյումրու նշանավոր հիմներգը՝ կռահելով, որ ծննդավայրը շուտով կվերստանա իր պատմական - ավանդական անունը: Գյումրուն նվիրված ձոներգերը կենսական բովանդակությամբ հարուստ են. իր անցյալով, ներկայով ու գալիքով անբաժան է հայոց ճակատագրից: Ծննդավայրը, որին հազար թե-

լերով կապված էր բանաստեղծը, նրա երգերում արդեն բառ-պատկեր է, որ դարձել է համազգային մեծ խնդիրներ արծարծելու հնարավորություն:

Բանաստեղծը չտեսավ երկրաշարժն ու նրա աղետավոր հետևանքները, չտեսավ նաև խորհրդային պետության փլուզումն ու իր ծննդավայրի վերանվանումը, չիմացավ Արցախյան պատերազմում և մանավանդ Շուշիի գրավման ժամանակ «Շիրակ» ջոկատի տղաների անմահ սխրանքը, որոնցով բոլորիցս շատ պիտի հպարտանար, բայց իր վերջին ստեղծագործություններում, մանավանդ «Հուշարձան հայրիկիս» պոեմում, հաճախ էր գործածում Գյումրի անունը, իսկ բանաստեղծություններից մի քանիսն էլ կոչել է Գյումրինամե:

Կառուցվող ու բարգավաճող, շենացող Գյումրին էր բանաստեղծի հարատև երազանքը: «Արագածին բազմած փառավոր արծիվը», «Հայաստանի աղն» ու «ճշմարտության մաղը»,«անմահության օրորոց», տնարար աղջիկների ու «հանճարեղ քարագործ» վարպետների հայրենիք, «Հայաստանի երգարան» Գյումրին բանաստեղծի զգացողությամբ Հայաստանի հզորության խորհրդանիշներից է, ուստի սերտորեն շաղկապված է հայոց ազգային մեծ երազանքներին և դրանց իրականացման հիմքերից ու առհավատչյաներից մեկն է: Այսպես էր իմաստավորում Հովհ.Շիրազն իր Գյումրի ծննդավայրը, որի հանդեպ նրա նվիրյալ զավակի որդիական վերաբերմունքը նույնպես ունի համազգային խոր բովանդակություն: Ամեն գյումրեցի և ամեն հայ աղոթքի ու պատգամի պես կարող է կրկնել շիրազյան հանճարեղ ձոներգը.

Ծաղկի՛ր, իմ տո՛ւրբ ծննդավայր, այնքան, որ գամ՝ չճանաչեմ,
Գամ, դրախտում իբր ման գամ, բյուր աչք դառնամ՝ չճանաչեմ,
Ես ինձ համար խո չեմ ասում. ինձ քո մի բուռ հողն էլ է շատ,
Եվ ու ներս բեր Մասիսդ անգամ, որ հովդ անգամ չճանաչեմ...

Մենք միայն համառոտակի անդրադարձանք «Հովհ.Շիրազը և Գյումրին» խնդրի երկու կողմերին՝ առանց այն սպառելու հավակնության: Համոզված ենք, որ մեր վերլուծության ընթացքում ծագած շատ հարցեր պահանջում են ավելի խոր ու հանգամանալի քննարկում:

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ՀԳՄ)

ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ

Հայ բանաստեղծական աշխարհում կա մի կայուն անկյուն, որտեղ բանաստեղծությունը ոչ թե հորինվում կամ գրվում է, այլ ապրվում, որտեղ բանաստեղծական նյութը ոչ թե բառն է կամ խոսքը, այլ արյունը, հոգու զարկերով անընդհատ իր սկզբից հեռացող և անընդհատ դեպի իր սկիզբը վերադարձող ա՛յն արյունը, որը պահպանվում և թարմանում է սերնդեսերունդ, բանաստեղծից բանաստեղծ: Բանաստեղծական այս արյուն-

նյութն իր ազնվության ու ազնվականության հաշվին կարողանում է պահպանել իր կերպը, անգամ եթե հարկ է լինում հեռանալ սեփական անկյունից (այս անգամ աշխարհագրական առումով), խառնվել այլ արյունների ու հոսել ուրիշ երակներով:

Հոսել անգամ ուրիշ երակներով, բայց պահպանել արյան ի՛ր որակները. ահա սա է բնորոշ բանաստեղծության այն տեսակին, որ կոչվում է Շիրակ աշխարհի բանաստեղծություն:

Շիրակ աշխարհի բանաստեղծությունը մեկ ուրիշ առանձնահատկություն էլ ունի. մտածողությունը սերնդային է: Գալիս է մի սերունդ՝ նախորդից բացարձակապես տարբերվող, որոնում, գտնում է նախորդ սերնդի կողմից չտրորված տարածքները: Ինքնահաստատվում է: Ապրում է այդ տարածքներում Աստծո կանխորոշած ի՛ր ժամանակը: Որոնում... հայտնաբերում...գուրգուրում...ածեցնում է ա՛յն սերնդին, որը գալու է իրենից հետո, գալու է տարբերվելու իր կողմից չբացահայտված տարածքներում: Այսպես է եղել Շիրակ աշխարհի բանարվեստն իր զարգացման բոլոր հանգրվաններում: Այսպիսին է այն հիմա:

Թորոսյանական սերունդը (Շմավոն Թորոսյան, Քաջիկ Գրիգորյան, Լևոն Թորոսյան, Միհեր Թորոսյան, Ստեփան Միքայելյան, Շիրակ Մանուկյան, Վահան Սևան, Սամվել Մարգարյան. այս սերնդին պայմանականորեն անվանենք մեր հիշողության ժամանակների Շիրակ աշխարհի գրականության առաջին հանգրվան), ունենալով այնպիսի հզոր ժամանակակից, ինչպիսին Շիրազն է, մարտնչելով սոցռեալիզմի խրամատներում, ստեղծեց լիրիկական գողտրիկ բանաստեղծություններ: Գրական այս լեռնաշղթայից բնականաբար դուրս մնալով՝ բարձրանում է մի այնպիսի գագաթ, ինչպիսին Սլավիկ Չիլոյանն է, ընդհանրապես եզակի հայ բանաստեղծներից, որը մեն-միայնակ է, բոլոր սերունդներից դուրս:

Գրական մյուս՝ հետպատերազմյան սերնդի ներկայացուցիչներին (Հովհաննես Գրիգորյան, Աշոտ Ավդալյան, Տանյա Հովհաննիսյան) ի վերուստ տրված էր տաղանդի ու տոկունության այնպիսի մեծ չափաբաժիններ, որոնցով կարողանային նոր ճանապարհներ բացել մեր բազմադարյա գրականության մեջ: Մեծ ու հզոր:

Շիրակի գրականության մյուս հանգրվանը կարելի է անվանել փորձարարական (Գարուշ Հարյանց, Նորայր Բաղդասարյան, Սարո Գյոդակյան, Արա Արթյան, Գագիկ Հովհաննիսյան, Սերգեյ Վարոսյան, Լևոն Մուրադյան): Այս հեղինակներից շատերին բնորոշ են էքսպերիմենտը, մոդեռն մտածողությունը, երբեմն չափից ավելի զարմացնելու ձգտումը: Նրանք բանաստեղծություն կառուցելու համար անխնա ջարդուփշուր էին անում եղածը, ապա սոսնձում իրար բոլորովին անհամատեղելի բանաստեղծական դեկորներ: Ստեղծվում էր բանաստեղծության մի տեսակ, որը կարելի էր բնորոշել «զարմացնող» անվամբ:

Հետո եկավ մեկ ուրիշ հզոր սերունդ (Միքայել Ժամհարյան, Արարատ Սկրտումյան, Գագիկ Սարոյան, Սամվել Մարտիրոսյան, Ռոզա Հովհաննիսյան, Տիգրան Բալոյան, Անահիտ Հարությունյան, Մարիա Թաթիկյան) որի ներկայացուցիչները ոչ թե գրում էին բանաստեղծություններ, այլ իրենց կյանքն էին դարձրել բանաստեղծություն:Այս սերնդի բանաստեղծությունը կենսագրական է, ու երևի դա է պատճառը, որ նրանց մի մասը չդիմացավ իր իսկ կենսագրությանը: Ավելի ուշ եկած սերունդը (Վռամ Հովհաննիսյան, Ղևոնդ (Համլետ Մանուկյան), Արշակ Պարսամյան, Սոնա Անտոնյան, Վաչագան Պապոյան, Անդրանիկ Կարապետյան) կարողացավ տեղավորվել ու մնալ գրականության բարոյական դաշտի մեջ, քանի որ իրենց անմիջապես նախորդներն արդեն իսկ ականազերծել էին այդ դաշտը և դրել բարձր չափանիշների հստակ պահանջ: Այս սերնդի և այսօրվա երիտասարդ բանաստեղծների միջև կա ժամանակային բավական մեծ շերտ, ու եթե նայենք այս ժամանակահատվածի քարտեզին՝ չափազանց շատ սպիտակ կետեր կհայտնաբերենք: Փաստորեն Գևորգ Թումանյանի, Կարինե Խաչատրյանի և Հռիփսիմե Հարությունյանի կողքին մի մեծ դատարկ կա, որը պետք է լցված լիներ անուններով, որոնք այդպես էլ չմոտեցան մեծ գրականության դռներին: Այս ժամանակը գրականության համար անբարենպաստ և ամուլ հատվածն է, այլ կերպ կարելի է անվանել հետերկրաշարժյան:

Այսօրվա երիտասարդներն ուրախացնում են իրենց թարմությամբ, ինքնատիպությամբ և սերնդային մտածողության հատկանիշներով: Սմբատ Աղինյան, Մարինա Գևորգյան, Կարեն Սիրունյան, Լիլիթ Սկրտչյան, Անգին Մալխասյան, Հրաչյա Մելիք - Սարգսյան, Քրիստինե Սկրտչյան, Հեղինե Հաջյան, Անի Սարիբեկյան. ահա այն հեղինակները, որոնց մի մասը գնալու է վաղը, ավելանալու են նոր անուններ, և ճշգրտվելու է Շիրակի գրականության ա՛յս սերունդը:

Ինչո՞ւ է այսքան բազմազան Շիրակ աշխարհի գրականությունը և բազմազանությամբ հանդերձ ինչո՞ւ է այսքան տարբեր մյուսներից: Գուցե նրա՞ համար, որ Շիրակը հացի շտեմարան լինելու հետ մեկտեղ նաև ոգու շտեմարան է: Ու այստեղ ամբարվել են մասունքներ կորուսյալ հայրենիքի գրեթե բոլոր Աշխարհներից, լինի Մուշ, Սասուն, Կարին, Բասեն... և յուրաքանչյուր Աշխարհի ոգին, իր ինքնատիպությունից զատ, անշուշտ, նաև նոր դրսևորում է ունենում այս նոր տարածքում: Եվ ոգու պատվաստն իր բազմազանության մեջ ինքնատիպ է ու առինքնող:

Ի՞նչ ակունքներից է գալիս, ի՞նչ հանգրվանի է հասել և ո՞ւր է գնում Շիրակ աշխարհի բանաստեղծությունը: Այս տարածքի համար ժամանակային ներկա հանգրվանն ամենաներկայանալին ու ծանրակշիռն է: Տարածք, որի արգանդը բեղուն է հատկապես պոեզիայի չափումներում, պրկվում - պոկվում է իր սահմաններից, ժամանակի հետ դաշինքը խախտում և մնում է երես առ երես ոգու այս կամ այն կերպ դրսևորումների հետ:

Իր կարոտներով, երազներով ու նվիրումներով է ամբողջանում Հոգևոր Հայրենիքը, որի կրողն է շիրակցի ամեն մի բանաստեղծ:

Միտվածություն դեպի հոգի, դեպի ներաշխարհ. ահա այն առանձնահատկությունը, որը բնորոշ է Շիրակի բանաստեղծությանը: Եթե մարդ՝ ուրեմն հոգևոր մարդ, եթե հայրենիք՝ ուրեմն Հոգևոր Հայրենիք: Ահա այս ճանապարհն է, որ Շիրակի բանաստեղծությունը տարել, պահում է հայ բանաստեղծական աշխարհի մի անկյունում, որտեղ բանաստեղծությունը ոչ թե հորինվում է, այլ...

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՇՀՀԿ, ՀԳՄ)

ԼԵԶՎԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՍԻՔՈՅՆԵՐԸ ԱՇՈՏ ԱՎԴԱԼՅԱՆԻ ԲԱՆԱՐՎԵՍՏՈՒՄ

Շիրակ աշխարհի ոսկեընտրյալ բանաստեղծ Աշոտ Ավդալյանի պոեզիան յուրօրինակ ծիսական ճամփորդություն է դեպի անիմանալին և խորհրդավորը, դեպի տեսանելի աշխարհի անտեսանելի կողմերը: Արդի հայ բանաստեղծության այն տեսակն է, որ գալիս է ավանդական տոհմիկ երգասացությունից: Պահպանելով դասական բանարվեստի լավագույն ավանդույթները և բնավ չկորցնելով նորի զգացողությունը՝ Ավդալյանի բանաստեղծական խոսքը դառնում է ներքնատեսության հրաշալի հանդես, զվարթուն նվագարան, ուր բանաստեղծության այլակերպող ոսպնյակի միջոցով մեներգը վերածվում է խմբերգի, ապա համանվագի: «Հիշատակի փոքրիկ զարդատուփեր» հիշեցնող նրա բանաստեղծությունների մեջ, որոնք ամփոփված են չորս ժողովածուներում («Նավասարդ», «Արծաթե օր», «Երկրատես», «Կյանքից դեպի կյանք»), բացահայտվում է բառերի մոգության և կեցության խորհուրդը: Ժողովածուից ժողովածու Ավդալյանը խոսքի երփնագիր է թողնում՝ հստակելով իր գեղագիտական հայեցակարգը: Ի վերուստ արարչագործության սկիզբը Նորին մեծություն բանաստեղծությունն է՝ իբրև հիշողության դարձ, որից սկսվում և որին հանգում է նրա քնարական հերոսը՝ «գույնի հրաշք պատանին»:

Ավդալյանի լեզվի գեղագիտության համակարգում բառ-միավորները վերաճում են արտաշխարհի բանաստեղծական ընկալման: Բառերը, գույներն ու նրբերանգները, ձայներն ու մեղեդիները շնչավորվում են, իրերն ապրում են այլագոյությամբ, և նրանց վերլուծությունը դառնում է հոգեվերլուծություն, մետաֆորային վիճակ, ուր հերոսի ներաշխարհն ու առարկայի հուզականորեն խորհրդանշային էությունը հավասարվում են:

Ավդալյանի գեղարվեստական մտածողությունը բնորոշվում է բանաստեղծական ապրումի աստիճանական զարգացմամբ ու ամբողջացմամբ՝ հիշեցնելով «ոստային» համակարգ՝ ճյուղային զարգացում, որն առանձնահատուկ է ծառին:

Ես հեքիաթներ եմ պատկերազարդում
և հիշողության երգեցողությամբ
ձայնակցում, հետո թաքնվում եմ լուռ օրերի հանգույն:
Գտնում եմ աստղեր, որ չեն ճաշակել քաղցը ապրելու
ու ծրարում եմ երգեցողությամբ:
Հետո ինձանից ելած ճյուղերը
ծլարձակվելով, հարության երգեր են մտաբերում,
և ծառը իբրև կանաչող տեսիլք
բազմաձայնության մեջ է մոլորվում
*ու հայտնաբերվում երգեցողությամբ:**

Բանաստեղծի կիրառած պատկերավորության միջոցները համահունչ են քնարական հերոսի բարդ ու հակասական ներաշխարհի արտահայտմանը: Ամենից հաճախադեպն ու բնորոշը փոխաբերությունն է (մետաֆոր), որն իր պատկերային բանաստեղծականությամբ ազատում է հեղինակին զգացմունքային բանաստեղծականության սահմանափակությունից: Բանաստեղծությունների գեղագիտական կենտրոնը ոչ թե մեկ հիմնական պատկերն է կամ փոխաբերությունը, այլ փոխաբերությունների շքերթը: Հաճախ ամբողջ բանաստեղծությունը մետաֆոր է մետաֆորի մեջ: Խիստ տարողունակ է բառի գեղագիտության ավդալյանական ըմբռնումը. մետաֆորային իմաստի ցոլացումները բառերը դարձնում են անսահման գունագեղ ու մոգաթով: Այսպես՝ *արթնացման խմբերգ, ժողովողի հունձք, հիշողության դարձ, ներշնչանքի հատիկներ, ձայնի երանգ, խմբերգի զարդանկար, նվիրումի շագանակներ, ավետման ձայներ, իմաստության բլիթ, գույների ոգի* փոխաբերությունները, խոհերի հեռահար թևածումներ լինելով, ներքին կապ են ստեղծում իրականության հետ, միաժամանակ արտահայտում են պոետական եզակի, չկրկնված վիճակներ՝ պայմանավորելով նրա բանարվեստի հատկանիշները՝ երգայնություն, մեղմասություն, բանաստեղծական արտահայտման ազատություն, հոսանուտ տարերք: Սովորականի գեղագիտությունից անցում է կատարվում դեպի անսովորը, և փոխաբերությունները դառնում են աշխարհը գեղարվեստորեն յուրացնելու իմաստասիրական հիմք, ինչպես *ծաղկել է ցավի փոքրիկ օրորոց*, և *ժամանակը՝ ջրերի վրա վազող հրեշտակ, ես տուն եմ բերում դիմանկարը իմ նախնիների և փաթաթում եմ ստվերների մեջ, լույսը դարձել է ձայների պարան ինքնատիպ* օրինակներում են:

Բնության փոփոխություններն ու շարունակականությունը Ավդալյան բանաստեղծը տեսնում է ոչ միայն եղանակային անցումների ու այլափոխությունների մեջ, այլև գույների աշխարհում, որը մեղմ ջրաներկային հայտածումներով արտահայտվում է ոճական այնպիսի դարձույթի մեջ, ինչպիսին համեմատությունն է: Արտահայտման նրբությամբ բանաս-

* *Աշոտ Ավդալյան, Երկրատես, Եր., 1988, էջ 169 (այսուհետև՝ Երկր.):*

տեղծը «ներքին ազգակցություն» է տեսնում բնության երևույթների ու մարդու հոգեվիճակների միջև.

Ձայնեմ փոքրիկ շուշանի պես
Փոքրիկ երգով առնեմ թևեր: (Երկր.,15)
Ինձ հագցրեք ամպի նման, պարեգոտեք
Եվ դուռ բացեք, որ երկիրը տանեմ ինձ հետ: (Երկր.,56)

Թվում է՝ ինքնակա ստեղծված անձեռակերտ աշխարհ է նրա բանաստեղծությունը, մի աշխարհ, որ ձուլված է բնությանը և ներքին օրինաչափությունների մեջ կրում է բնության նախաստեղծ շունչը: Ամեն ինչ անձնավորվում է հոգու թևառնումի վայելքով: Համեմատությունների մեջ մտքի թռիչքը հաճախ անկասելի է ու անկռահելի, մշտապես առկա է բանաստեղծական գյուտը.

Ջրերն են լալու
մեղսական ու ծույլ հայացքների տակ
ու կրելու են զարդեր արծաթե,
ու կրելու են ծաղկունքի գոտին,
ու կրելու են օրն իբրև ափսե հրավառության: (Երկր.,13)

Բնորոշ է, որ պատկերավորման համակարգի և արտահայտչականության այլազան միջոցների ներդաշնակ համադրումով է զարգանում բանաստեղծի յուրաքանչյուր գեղարվեստական հղացք: Վերջին օրինակի մեջ առկա է ոճական տարբեր դարձույթների զուգադրում՝ և՛ փոխաբերություն, և՛ համեմատություն, և՛ հարակրկնություն (նույնասկիզբ):

Ավդալյանի բանարվեստին առանձնակի հուզական լիցքավորում և գունեղություն են հաղորդում խիստ ինքնօրինակ մակդիրները՝ անսպասելի, դիպուկ և սեղմ գեղարվեստական բնորոշումները՝ տեսանելի և պատկերավոր դարձնելով որևէ երևույթ կամ առարկա, այսպես օրինակ, *արծաթե օր, երանգափոխ լռություն, կանացի աստղեր, մեծարգո հետո, պագշոտ թևեր, հրե լռություն, քնաթաթախ փողոցներ, փետրազարդ գույժ, մեղրամոմ տղա, հին երեխա, խառնածին ամպ, ցորնագույն առավոտ, պաղ հարսանիք, մեղուշ երկինք* և այլն:

Արծաթե օր բառակապակցության մեջ առաջին հայացքից անհարիր կողմերի տարօրինակ միացություն է կատարում հեղինակը. օրը բնութագրում է գունային մակդիրով, սակայն այդ տարօրինակ զուգակցումը պատկերային մեծ իմաստ ունի. փոխաբերությունը մատնանշում է ոչ միայն օրը, այլև նրա հարափոփոխ ընթացքը, որը նման է հոսող արծաթի: Մակդիրի պատկերավորության աստիճանն անակնկալ կիրառության մեջ է, որը, անտարակույս, զուգորդության առումով ունի որոշակի հիմք, օրինակ, *թագավոր ձիեր* արտահայտության մեջ *թագավոր* մակդիրն ընդգծում է ձիու ազնիվ տեսակը, *ծեր մագաղաթ*-ի մեջ՝ *ծեր-ը՝* մագաղաթի հին լինելը, *կանացի աստղեր*-ի մեջ՝ *կանացի*-ն՝ աստղի թույլ, նվաղլուկ ու քնքուշ առկայծումը: Ինքնաբուխ լեզվական տարերքով են ստեղծվել բառակապակցությամբ արտահայտված մակդիրները՝ *ծիրանիներ հագած օր, հիշատակարան թերթող հրեշտակ, տաք, ինքնագրգիռ պոռթկումներ, հոգնած ու բութ ծառեր* և այլն: Հեղինակային մակդիր-նորաբանությունները բանաստեղծական ինքնատիպ վիճակների ու մտածողության արտահայտման բառային միջոցներ են՝ *ծիրանամեջք երկնակամար, տիեզե-*

բահունդ աչքեր, շուշանածամ աղջիկներ և այլն, որոնց ստեղծումը պայմանավորված է ոչ միայն համատեքստային ներքին իրադրությամբ, այլև բառային միջավայրով: Օքսիմորոնի կամ նրբաբանության դիպուկ կիրառություն են *քնքուշ, ապրեցնող խելագարություն, բարկ ակունք, ավետող գույժ* և այսօրինակ արտահայտությունները, որոնց մեջ զուգադրվել են իմաստով անհամատեղելի, նույնիսկ ներհակ բառեր: Դիմելով ոճական այս հնարանքին՝ բանաստեղծը երևույթների բնական կապերի խախտման ճանապարհով հասնում է հուզական բովանդակության ցայտունության: Հիրավի, ավդալյանական բանարվեստում պատկերավորման համակարգի, հատկապես բառի փոխաբերական իմաստաշրջումների ու մակդիրների հիանալի կիրառումը վկայում է հեղինակի բառազգացության և բառընտրության յուրահատկությունների մասին: Բառը վերաճում է իմաստային կենտրոնի՝ դառնալով նշան՝ նոր իմաստածավալումով: Լեզվարտահայտչական բոլոր միջոցները միտված են նշանների աստիճանական բացահայտմանն ու վերաիմաստավորմանը:

Խոսքի պատկերավորման համակարգի դրսևորման ուշագրավ օրինակ է չափազանցության (նաև համեմատության) հետևյալ նմուշը.

Աչքս բեռ է լեռների մեջ,
ու արևը երեխայի նման խաղում
ու քայլում է ծերունու պես հոտոտելով: (Երկր.,205)

Ոճական այս բանաղարձումը նաև դրսևորվել է հեղինակի կիրառած կայուն, բանաձևային արտահայտություններում և դարձվածքներում.

Ես սպառեցի ինձ տված լույսը,
ու հանգստության քառասուն ալիք
ինձ պարուրեցին: (Կյանքից...,141)

Կամ մեծ աղոթասացին՝ Նարեկացուն ուղղված տաղում՝

Ու հիմա, հիմա, հազար վանքերի զանգերը անգամ
չեն խլացնի քո ձայնը իմ մեջ,
և ես գնալով գետնատարած ընկնում եմ արդեն
քո զանգերի մեջ,
խնդրում, աղաչում: (Երկր.,222)

Չափազանցությունների մեջ տարածաժամանակային չափումների խախտումը իրականի ու տեսլայինի համադրումով է. ժամանակը և տարածությունը բանաստեղծության մեջ սահման չունեն: Միջաբերյալ վերջին հատվածում առկա են և՛ կրկնություն (*ու հիմա, հիմա*), և՛ չափազանցություն (*հազար վանքերի զանգերը անգամ չեն խլացնի քո ձայնը իմ մեջ*), և՛ աստիճանավորում (*խնդրում, աղաչում*): Այսպիսով՝ բանաստեղծական ոգու տարերքով և երևակայության *թևերով* են ստեղծված ավդալյանական լեզվի չափազանցությունները, որոնք՝ նպաստում են պատկերգաղափարի, զգացմունքի, կրքի առավել ցայտուն արտահայտմանը:

Իր գեղարվեստական կողմնորոշումներն ու սկզբունքները Ավդալյանն անուղղակիորեն արտահայտել է բազմաթիվ բանաստեղծություններում, որոնք, ըստ էության, մի ամբողջ քերթողական արվեստի ծրագիր են. *Ուզում եմ երգին մոտենալ այնպես, ինչպես որ արտին սիրտն է մոտենում* (Երկր.,30): Բանաստեղծի կոչման ու դերի մասին հոգու խոկումները, բանաստեղծական մաքուր տեսիլքի ու կատարյալ վիճակների որոնումն

արտահայտվում են ոճական այնպիսի բանադարձումներով, ինչպիսիք են ճարտասանական հարցը (*Օրվա բերած ցնորքի՞ն, թե՞ երկունքին հավատամ*), ճարտասանական բացականչությունը (*Օ՜, շնո՛ր հա արա, բաղձանքի ոգի, տա՛ր ինձանից երգ, հաղորդությո՛ւն տուր այսօրվա համար*), ինչպես և ճարտասանական դիմումը (*Բառերը ընտրի՛ր, ոչ թե վերցրո՛ւ. վավաշոտ, լալկան բառերի խուրձը ո՛չ հուր կտա քեզ, ո՛չ կարմիր զգեստ*): *Ընծաների թագաժառանգ* քնարական հերոսը՝ *երգով չափվող ժամանակի մեջ* իբրև *բառին ծառայող* տաղասաց, դիմելով այս դարձույթներին, խոսքն ուղղում է ներկա-բացականներին, բնությանը և նրա ուժերին: Ուշագրավ է, որ ճարտասանական դիմումի ոճական հնարանքը հաճախ դարձնում է իր քերթվածների սկիզբը. *Ո՜վ կենարար լույս՝ Բանաստեղծություն, հազար ու հազար կաթսաներով լի եռում ես իմ մեջ, որ դառնաս գինի՝ հաշիշն արկի:* (Երկը.,10)

Այսպիսով՝ տիեզերական աղոթքից հյուսված տաղ-հմայիլներ են Ավդալյանի քերթվածները. գեղարվեստական միջավայրն սկսվում է ներաշխարհի մեղեդային գույներից և գունային մեղեդիներից՝ ճգվելով մինչև անեզրություն: Հեղինակը բառամթերքի հզոր զինանոց ունի՝ պատկերային հյուսվածքի և արտահայտչամիջոցների հեղեղ-հորձանքով: Նրա լեզվամտածողությամբ է թելադրված նաև գրաբարի *հուռթի շտեմարաններից* օգտվելու անհրաժեշտությունը (*Ու երանելի աղեղը պրկյալ, տե՛ս, բաց է թողնում պահի հետևից..., Ու կարմիր դուռը նահանջեց մտոք..., ընծայված էր կարմիրը ձեռամբ*): Համարձակորեն քամում է լեզվի շտեմարանները՝ զարգացնելով շարական երգի և հոգևոր ճառերի, միջնադարյան տաղերգուների բանարվեստի լեզվական առանձնահատկությունները:

Աշոտ Ավդալյանը հոգու նուրբ շարժումների բանաստեղծ է, որի բանաստեղծական արվեստին բնորոշ են ներաշխարհի փլուզումներն ու հազվագյուտ ներքին ընդվզումները:

Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ (ՊՄՊԾ)

ԵՐԳԻԾԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻՑ

Բազմազան են ժողովրդական բանահյուսության տեսակները՝ հեքիաթ, հանելուկ, առասպել, ավանդություն, վիպերգ, լեգենդ, երգեր, խաղիկներ, առակներ, ասացվածքներ և այլն:

Մեր առջև խնդիր ենք դրել Վահրամաբերդ գյուղի բնակիչներից գրի առնել հումորային պատումներ ու առակներ, որոնք տեղացիները մասալներ են անվանում: Մասալներն առած-ասացվածքային, բարոյախրատական բանավոր ստեղծագործություններ են՝ համեմված հումորային երանգներով:Գրառված մասալները Վահրամաբերդ գյուղի խոսվածքով են: Գյուղի կատակասեր ու խոսքաշեն մարդկանցից էին Չախոյենց Մուկուչը,

Հայկան Ապերը, Ատեի Ժոժիկը և այլք: Գյուղացիները բազմաթիվ հետաքրքիր ու հումորային դեպքեր են պատմում նրանց կյանքից: Մահից տասնամյակներ անց էլ նրանց հետ կատարված դեպքերն ու նրանց սրամիտ խոսքերը դարձել են յուրօրինակ մասալներ, իսկ առանձին բառեր ու արտահայտություններ նույնիսկ վերածվել են թևավոր խոսքերի: Գյուղացիներն այսօր էլ հիշում են և իրենց խոսքում հաճախ մեջբերում. «Չի ըսե Չախոյենց Մուգուճը՝ ես՝ ես եմ, հ՝ըրը ե՞ս վով եմ», «Օղորմածիգ Չախոյան պաբը ըսըմ էր, դե հաց ուդելը մարամի վրա է, իշտա՞յըս որն է: Մարամ էնեմ՝ սաղ օրը կուդեմ: Օղուլ, մինճև ումուզներդ չտըկա՝ չես կշտածե»,կամ «Չի ըսե Ատեի Ժոժիգը՝ մահնա էրա ու տու» և այլն: Պատմում են, որ ցանկացած իրավիճակում, ցանկացած խնդրի ու թեմայի շուրջ զրուցելիս նրանք ասում էին. «Կեծի, ըդոր վրա մե մասալըմ ըսեմ»: Ասում էին մասալը, նրանից հանում եզրակացություն՝ տվյալ խնդիրը լուծելու համար: Եվ գրեթե միշտ նրանց հաջողվում էր մասալների քննվող հարցին տալ այն լուծումը, որն իրենք ճիշտ էին համարում:

Հումորային այս զրույցները նրանք ոչ թե վերցրել էին գրքերից, այլ լսել ու յուրացրել էին ուրիշներից, մտապահել, շատ հաճախ փոփոխությունների ենթարկել և հարկ եղած ժամանակ մեջբերել իրենց խոսքում կամ պարզապես պատմել դրանք: Օրինակ՝

1. Հ՝արդը վար էնելու վախտը ջուխտ եզներեն մեզը կաբը կըդրըմ, փախնըմ է: Տերը դառնըմ ու ծեծըմ է մեզել եզանը:Մե մարդըմ է անցնըմ, ըսըմ է.

- *Այ մարտ, ըդոր հ՝ընճե՞ս ծեծըմ, փախնողին ծեծե:*
- *Օղուլ, օր ըստոր բաց թողնիմ, մագյա՞ր ընդոր պես կփախնի.*[1]

2. Մե մարտըմ էրտըմ է բազար, մոդենըմ է ճուգ ծախողին ու ըսըմ է.

- *Ախպեր ջան, ընճի հինգ կիլո ճուգ տուր:*

Էս ծախողը շըշմած աշըմ է ըստոր ու ըսըմ է.

- *Թերմաշ, Մանտաշովն օր Մանտաշովն է, սաղ հ՝աշխըրքի տերն է, նոր էգավ մե կիլոմ ճուգ առավ ու գնած: Դու էդ ինճի՞ տեր ես, օր հինգ կիլո ես հ՝ուզըմ:*
- *Այ մարտ, քանի կա՝ ըսման կաբրինկ, օր չեղավ՝ Մանտաշովի պես կաբրինկ:*

3. Եպ օր հ՝աշունքը գալըմ է, մարտիկ հ՝իրանց գործերը պըրծընըմ են, հ՝ուզըմ են հ՝իրանց տըղին նշանեն: Հերը, մերը, ախպերը տղի հետ էրտըմ են մե տունըմ՝ ախճիկ տեսնելու:

- *Բարի օր:*
- *Այ աստըծու բարին: Խե՞ր է:*
- *Խեր է: Հ՝իմածել ենկ, օր ախճիկ ունիկ նշանելու: Էգել ենկ տեսնինկ:*

Էս մարտիկ շատ են ուրխընըմ, օր հ՝իրանց տուն պատկըմվոր է էգե: Ախճըգան հակծընըմ-կապծընըմ, հ՝առաճ են բերըմ: Պատկըմվորնե-

[1] *Ասացող՝ Լիդա Հովհաննիսյան, ծնվ. 1947թ., Վահրամաբերդի բնակիչ:*

ը ոդեն գլոխ աշրմ են ախծրգան, տեսնրմ են, օր ի՝աշքը շաշ է: Հերը տրղի ի՝անգրջեն գոդդուծ ըսրմ է.

- Տեղերեդ ելեկ էրտանկ, էս տան բուխերիգը ծուռ է:

Ախծրգա հերը ի՝իմանրմ է հոր ըսածն ու պադասխան է տալրմ.

- Ճիշտ է, ախպեր ջան, բուխերիգը ծուռ է, հրմը մուխը դուզ է քաշրմ:

4. Մարտ ու կրնիգ են էդնրմ: Ըստոնք սաղ օրը շուն ու կադվի պես ի՝իրար միս են ուդրմ: Մարտն օր շադ է համը հանրմ, կրնիգրն էլ շադ թավակյալի խասյատ է ունենրմ, մրդածրմ է. «Ես օր քու հախեդ չգամ՝ հեչ մարտ չի գա»:

Ըստոնկ մե հադրմ կով են ունենրմ: Կրնիգը մրդնրմ է մարտու տամարը, համոզրմ է, օր տանի ծախե, կարի մաշինա առնի: Էս մարտը կովն էնրմ է ի՝առածը, էրտրմ է: Մեգ է տեսնրմ է, օր ի՝իրան պես մեգրմ մոդիգ է գալրմ, կովը քըշրմ տանրմ է: Էս մարտը զարմանրմ, ըսրմ է.

- Հ՝ու՞ր ես տանրմ, ըսիգ իմ կովրս է:

- Այ մարտ, խո չխելրոա՞ր, ըսիգ իմ կովրս է: Կրնիգրս համոզեծ, օր բերեմ ծախեմ, ի՝իրան կարի մաշինա առնիմ:

Էս խեղջ մարտը շըշմած կայնրմ աշրմ է. հակը ի՝իրան շորերն են, կոշիկներն ի՝իրանն են, փափախն ի՝իրանն է: Աշրմ է ի՝իրան, աշրմ է հեռեծող մարտուն,ի՝իրան-ի՝իրան ըսրմ է.«Այ մարտ, ես՝ ես եմ, ի՝ըրը ե՞ս վով եմ»:

Էրտրմ է էդ մարտու եդևեն: Տեսնրմ է, օր ըսիգ ծախեծ կովը, գնած կարի մաշինեն առավ: Հասավ ի՝իրանծ տունը, կրնիգը դուս էգավ, էս մարտու հեդ մաշինեն նես տարավ.

- Ես ես եմ, ի՝ըրը ե՞ս վով եմ, ես՝ես ….:

Էս մարտը կայնել էր, ռիսկ չէր էնրմ նես մրդնի, մրտքի մեճը հա կրդրգնրմ էր. «Ըսիգ իմ կրնիգրս, ըսիգ՝ ես, տարա, կովը ծախի, մաշինա առա, բերի տրվի կրնգաս: Հա, ըդիգ ես էի, ի՝ըրը ես վո՞վ եմ…»:

Մուտը վրա է հասնրմ: Էս մարտը ռիսկ է էնրմ, ի՝իրան տան դուռը զարգրմ է, կնիգը դուս է գալրմ.

- Ի՞նճ ես ի՝ուզրմ, էս վոխտ ի՝ուրիշի դուռը ի՝ընճե՞ս ես զարգրմ, ըսա, քանի մարտրս չի ելե:

- Քուր ջան, տեղրմ կուդա՞ս գիշերը մրնամ,ես,ես…,չիդեմ ինչ եմ,վով եմ…

Կրնգա մեխկը տանրմ է, մարտուն նես է կանճրմ, ի՝օդի մե քյոշեն տեղ է տալրմ, օր քրնի: Գիշերը կրնիգը մարտու փափաղը փոխրմ, տեղը քրոդի փափախ է դրնրմ: Սաբախտան ելնրմ, քրոդի փափաղը դրնրմ, էրտրմ է: Ճամպեն նրստրմ է սուրուդ առնելու: Կրռանրմ է, օր ջուր խրմե, ջրի մեճը ի՝իրան է տեսնրմ: Եդ է դառնրմ, կրնիգը բանրմ է դուռը.

- Ի՞նճ է էղել, թարկյար դու՞ ես:

- Քուր ջան, մրդան էս էրե, իմ տեղրս քրոդին ես ձեն տրվե:

Կրնիգը վախենրմ է, օր մարտը ջիլիգ գրխելրոի, խրնդրմ է, մարտուն նես է կանճրմ, զարտնրծրնրմ է ախպորը, ի՝ում օր հակծրել էր մարտու

շորերը ու էս սաղ խաղը խախծե մարտու գլխուն: Կընիգը դառնըմ է մարտուն ու ըսըմ.

- Տեսա՞ր, օրտաղ, ուզեծա ու խելըռծըրի քեզի, չէիր ավդընըմ: Ըստորեն եղև քեզի մարտու գյորա պայե: Կընիգն օր մտկին դնե, մարտուն համ բակավոր կրշինե, համ՝ քուռդ:[1]

Բանահյուսական այս նյութերի գրառման ժամանակ պարզեցինք, որ հիմա, երբ արդեն չկան այդ սրախոս մարդիկ, նրանց սրամիտ խոսքերը ուրիշները ներկայացնում են որպես նոր մասալներ՝ դրանցում անպայմանորեն հիշատակելով նաև նրանց անունները: Դրանք անմիջական են, դիպուկ ու լակոնիկ: Օրինակ՝

1. *Չախոյենց Մուգուչը էրտըմ է մեզիմ տուն, փոխ փարա է ուզըմ: Էս մարտը հանըմ, փարեն տալըմ ու ըսըմ է.*

   - Մուգուճ եխպար, թեզըմ եդ կրերես:

   Մուգուճը դռան վրեծեն եդ է դառնըմ, փարեն դընըմ է ըստոլին ու ըսըմ է.

   - Ըստրեն թեզ չեմ կըռնա, առ քու փարեդ[2]*:*

2. *Հայկան Ապերը մալը տանըմ է ջուրը, հանդիբըմ է Չախոյենց Մուգուճին: Ըսիգ աշըմ է Հայկան Ապոր թազա կարգըդած շալվըրին ու ըսըմ է.*

   - Հայկան Ապեր, շալվարըդ տեղ-տեղ բարով մաշես:

   - Օր մեջ սաղ էղնիս, Մուգուճ ջան,- պադասխանըմ է Հայկան Ապերը:

3. *Հայկան Ապորը հարծընըմ են.*

   - Հայկան Ապեր, աշե ըսկան խոդը մեր մալին սաղ ճմեռը հերիկ կենե՞:

   Հայկան Ապերը աշըմ է էդ մարտուն, աշըմ է խոդին ու ըսըմ է.

   - Օր հեչ չտաս, բանըմ էլ գավելնա:[3]

Վահրամաբերդի դպրոցի ուսուցչուհի Լարիսա Չախոյանը մեզ տրամադրեց մի քանի զրույցներ, որոնք գրի էր առել իր պապից՝ Չախոյենց Մուկուչից: Դրանցում հստակորեն արտահայտվում են գյուղի ու քաղաքի կենցաղի, բարքերի ու սովորույթների տարբերությունները, աշխատասեր գյուղացու միամտությունը ու նրան հատուկ այլ հատկանիշներ:

1. Պատմում է Չախոյենց Մուկուչը.

- Ես ընձի հըմար կայնած էի: Մէ ավտոմ անծավ, ոդես գլոխ չամըրի մեծը կոծըրավ: Չեռըս տընգի, եռևեն ճրվածի.

- Այ քյոպագոլի, էս ի՞նճ էրիր, ես քու հորդ հոգին…

Ընճի մոդիկ էգավ գառաղավոյը, ըսավ.

- Քաղաքացի, դու տուգանված ես, կարգ էս խանգարել, քաղքի մեծը կայնել հայոյանկ կենես:

---

[1] *Ասացող՝ Լարիսա Չախոյան, ծնվ. 1953թ, Վահրամաբերդ: Պատմած երեք մասալներն էլ լսել է պապից՝ գյուղում հայտնի սրամիտ Մկրտիչ Չախոյանից:*

[2] *Ասացող՝Քնարիկ Մկրտչյան, ծնվ. 1943թ, Հայկավան: Երկար տարիներ եղել է Մկրտիչ Չախոյանի հարևանը:*

[3] *Ասացող՝ Սեյրան Դանիելյան՝ ծնվ., 1933թ., Վահրամաբերդ:*

- *Ընձի մի վիրավորե, ես քաղկծի չեմ, գեղածի եմ: Եղև էլ՝ իշկա՞ն է տուգանկը մե քիֆուրի հըմար:*
- *Էրգու մանետ,- ըսավ*
- *Առ քու էրգու մանետտ, էս էրգուսն էլ առ դաբավկա՝ քու էլ հորդ հոկին:*

2. Երևանից հյուրեր են գալիս Վահրամաբերդ, հյուրընկալվում են Չախոյենց Մուկուչի տանը: Մուկուչը ներս է մտնում, գերանդին իջեցնում է ուսից, բարևում հյուրերին և հրավիրում նստելու:

- *Արտդ էի՞ր քաղում, պապիկ,- հարցնում են հյուրերը:*
- *Իմը չէր, օղուլ: Տունը տղամարդ չկա, ի՝արդը կծդել էր, փչանըմ էր: Քաղի էգա:*
- *Քանիսո՞վ ես քաղում:*
- *Ամոտ է, տո, էսիգ խո քաղաք չէ, օր ի՝ամեն ինձը քանըսով էղնի: Էդ մըխլուն էլ օր դրդնըմ են, ամոտ եմ էնըմ, օր չուդեմ: Կըսեն ենդրը չի էնըմ:*
- *Մըխլուն ի՞նչ է, հայրիկ:*
- *Հմի էս կընգան կըսեմ, թող էնե, կտեսնիկ:*
- *Պապիկ, քո կինը չէ՞:*
- *Է, օղուլ, իմ կընիգըս: Թաբառուգ էղնի ըսիգ, ըսիգ խորտ կընիգըս է:*
- *Կնոջ խորթը ո՞րն է,- ծիծաղում են:*
- *Տղեկ ջան, ընիգ կակավ էր, կակավ: Կակավը գնաց՝ դառդառը էգավ: Կակավեն եղև դառդառն ի՞նձ կընիգ:*

3. Երևանից եկած հյուրերը ինչ հարցնում են, Չախոյան պապը սրախոսում է: Հյուրերի այն հարցին, թե ինչպե՞ս են նրա մոտ ծնվում այդ խոսքերը, Չախոյենց Մուկուչը պատասխանում է.

- *Հ՝ուզըմ եք ավդրցեկ, ուզըմ եք չէ, ի՝անգաջ էրեք մէ բ անըմ պաղմեմ: Հ՝իմածանք, օր Պոլոզ Մուգուճը մեռել է: Գեղի տըղեկով ելանկ, գնա-ծինկ թաղմանը: Ես կյանկիս մեջը ըդկան մարդ չէի տեսե: Ըսի՝ տղեկ, ա՜յ բախտավոր մեռել է: Հլը իշկան մարտ է եղևեն էրտըմ: Էդ վախտը Պոլոզի ձեռը դագաղեն կախ ի՝ընգավ ցած: Տրոնծեն մեգը ըսավ.*
- *Մուգուճ, ձեռը դիր գլխուդ, կռնա բանըմ էղնի՞:*

Ես էլ ոճ դրդի, ոճ վերծրդի, վազի, ձեռը քաշի ու դրի գլխուս: Մինձև հազրդի էգան՝ ես եդ քաշվա: Կրռնա ըդրդե՞ն է: Հիշըմ եմ,- շարունակում է պապը,- էդ վախտը մեգրմ հարծրդրավ, դե հրնձի՞ է Պոլոզի ձեռը դագաղեն կախ: Մեգրմ ըսավ, դե Պոլոզն է ըդման ուզե: Ըսել է.«Օսյաք եմ էնըմ. օր մեռա՝ ձեռըս դագաղեն դուս կ՚թողնիկ, օր դեմես էրթրծողներուն դեմես քրվեմ, եղևես էրտրծողներուն՝ եղևես: Ես եղևեն էի էրտրմ, տուն էգա».[1]

Այս մասալները յուրահատուկ մանրապատումներ են, որտեղ գործող անձինք կա՛մ հենց իրենք են՝ ասացողները, կա՛մ իրական անձնավորություններ: Նրանց խոսքը, գործը, պատահած դեպքերն ու իրադարձությունները, բերնից բերան անցնելով, ենթարկվում են հավելումների՝ պահ-

[1] *Վերջին չորս պատումները գրավոր ձևով մեզ տրամադրեց Մկրտիչ Չախոյանի թոռնուհին՝ բանասեր, գյուղի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լարիսա Չախոյանը:*

պանելով հումորն ու սրամտությունը: Մասալների ուժը, ինչպես անեկդոտներում ու երգիծական այլ ստեղծագործություններում, ավարտի մեջ է, ուր հաճախ անակնկալ կերպով բացահայտվում է սրամիտ պատմության բուն իմաստը:

Հայկանուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ԼԻ)

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ «ՀԱՒԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ» ԵՐԿՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՇԵՂՈՒՄՆԵՐ ԳՐԱԲԱՐԻՑ

Տասներկուերորդ դարի հոգևոր և գրական գործիչ, պատմիչ Սամվել Անեցու կենսագրական հանգամանքներն ուսումնասիրելիս նրա վերոնշյալ գործում նկատել ենք որոշ շեղումներ դասական գրաբարից, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում բարբառային երևույթների, օտարամուտ բառերի, իր ժամանակի նորագույն փոխառությունների ներմուծման փաստագրման առումով: Սակայն դրանք ներկայացնելուց առաջ հարկ ենք համարում ընդգծել այն իրողությունը, որ նրա լեզուն և գրելաոճը համապատասխանում են մաքուր, կանոնիկ դասական գրաբարին՝ ենթարկված նրա բարդ կանոններին: Մանավանդ գրքի այն հատվածներում, երբ հեղինակը, ազատություն տալով իր գրչին ու մտքին, դուրս գալով ժամանակագրության պարտադրող սեղմ ոճի սահմաններից, դիմում է իր մեկենասին կամ նկարագրում է հայրենիքի համար ճակատագրական, բախտորոշ իրավիճակներ: Ասածը հիմնավորելու համար գրքից մեջբերենք նմանատիպ մի երկու հատված: Դիմելով իր մեկենասին՝ Սամվելը գրում է. «Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն և զանուսումնութիւն իմ ի թախանձելոյ քո՝ սրբազգեացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, զոր կամեցար, և այժմ օժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ, ժողովեցից կարճ ի կարճոյ զախորժակս ձեր ի բանից հանդէս, միայն ճշմարտութեան գնալով զհետ, ի յոլովից առաւել զերկոքումբքս թևակոխեսցուք ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբի ասեմ և զՄովսէս Խորենացի: Եւ նախ յԱդամայ սկսեալ՝ կատարեսցուք ի Նոյ, և անտի մինչև ցԱբրահամ և անտի մինչև ցծնունդն Քրիստոսի և ապա ըստ քրոնիկոնին գաւազանաւք գրաւեսցուք ի ներկայս, զաւելորդն թողլով, և զկարևորսն ի ներքս մուծանելով, թերևս հասանիցես փափագելոյն»:[1] Եվ կամ՝ «Արդ ով սրբազգեաց տէր իմ Գրիգոր հարկեցայ ի թախանձելոյ ձեր զեղկելի անձն իմ, ետու զանարհեստ անձն իմ ի մշակութիւն այս գործոյ, մոռանալով զբաջաղմունս կենցաղականիս որ հարաժամ զզուէի գործել զառաքինութիւն: Ջանացի Եւսեբեայ պատմութիւնս կրկին գրելով, որպէս զցայտումն արևու՝ որ ի մթին տեղիս ծագէ և լուսաւորէ, և այսպէս գանձ աստուածա-

[1] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Էջմիածին, 1893, էջ 3-4:*

յին որ զխաւարեալ միտս մարդոյ զարթուցանէ ի գիտութիւն ժամանակաց անցաւորիս, և դարձեալ հմտանալով այս կենցաղոյս ծանօթանայ վերին գիտութեանն որ անճառն է և անբաւելին և ծնանի զաստուածպաշտութիւն, որպէս Եւագր երանելի ասէ, գիտնական և արդիւնական»:[1] Բավարարվենք այսքանով: Կարծում ենք, մեկնաբանություններն ավելորդ են: Այս հատվածները լեզվառճական առումով կարող են իրավամբ դասական նմուշներ համարվել՝ հիշեցնելով Ագաթանգեղյան կամ Եզնիկյան գրաբարի անաղարտ ոճը:

Այսուհանդերձ Սամվել Անեցու գործում տեղ են գտել գրաբարից որոշ շեղումներ, որոնց մի մասը կարելի է վերագրել հենց իրեն՝ հեղինակին, իսկ որոշ մասը, այսպես ասած, արտաքին բնույթ են կրում, այսինքն նրա խոսքին են անցել միջնադարյան այն հեղինակներից, որոնց գործերից օգտվել է նա իր ժամանակագրությունը կազմելիս: Այսպես ենք կարծում, քանի որ նրա երկերում ի հայտ եկած ոչ գրաբարյան, բառերի կարելի է հանդիպել նաև նրան ժամանակակից պատմիչներից մեկի՝ Մատթէոս Ուռհայեցու մոտ, որի անունը, սակայն, նա չի հիշատակում իրենից առաջ եղած մատենագիրների շարքում:

Այս ուսումնասիրության համար հիմք է ծառայել «Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» խորագրով գրքի 1893թվի Էջմիածնի հրատարակությունը՝ Արշակ Տեր-Միքայելյանի առաջաբանով և գիտապատմական ծանոթագրություններով:

Շեղումները գրաբարից Անեցու այս գործում կարելի է խմբավորել ըստ՝ բայի ժամանակի և եղանակային ձևերի կազմության, գոյականի հոլովածևի և հոգնակի թվի կազմության, բարբառային բառերի և օտարամուտ փոխառությունների առկայության, բաղաձայնական բարբառային փոխակերպումների, *զի-թէ* շաղկապների փոխակերպման դրսևորումների, խոսքի ոճական կազմությունների:

Այս հաջորդականությամբ էլ կներկայացնենք գործում մեր կողմից նկատված շեղումները գրաբարից, որոնք թեև իշխող, տարածուն բնույթ չեն կրում, բայց առկա են: Այդ պատճառով էլ հարկ ենք համարել նկատված բոլոր շեղումները ներկայացնել նախադասությունների մեջ: Հաճախակի չնշելու համար մեջբերված հատվածի տեղն ու հրատարակության թիվը՝ դրանով իսկ խուսափելու համար նյութի ավելորդ ծավալումից, օրինակների կողքին տրվել է միայն գրքի էջը:

1. Բայական կառույցի շեղումներ, որոնք արտահայտված են.

ա. *<u>կ-</u>*, *<u>կու</u>* մասնիկներով բայի ներկա ժամանակաձևի կազմությամբ, որի դեպքում ներկա ժամանակը կազմվում է բայի ներկա ժամանակաձևից՝ *<u>կ-</u>*, *<u>կու</u>* մասնիկների հարադրությամբ: Այսպես՝ «Ու՞ր է հիւսան որդին, և նա ասէ թէ՝ զիւր հիւսնութիւն կուսուցանէ, ի Պարսիկս քեզ թաւուք *<u>կու</u>* շինէ»/66/: Միայն այս նախադասության մեջ բազմակի շեղումներ կան,

[1] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 51-52:*

որոնք կտրվեն իրենց համապատասխան տեղերում: Այս նյութը քաղված է այլ աղբյուրից, բայց ճշգրտորեն հնարավոր չէ ասել, թե որտեղից, քանի որ Սամվելն իրեն անմիջապես նախորդող պատմիչներից նշում է Հովհաննես Սարկավագին, որից շատ է օգտվել ու շեշտել է այդ մասին. բայց Սարկավագի գործն էլ դեռ չկա ասպարեզում, ուստի և չենք կարող վստահորեն ասել, թե նրանից է անցել: Թեև նրա ժամանակակից Միխայել Ասորու մոտ կա, բայց Սամվելը չէր կարող օգտվել նրա հայերեն թարգմանված գործից, քանի որ թարգմանությունը Վարդան Արևելցու կողմից կատարվել է Անեցուց հետո՝ 1248 թվին, և այնտեղ եղածն էլ պետք է վերագրել Վարդանին և ոչ Ասորուն:

բ. Բայի հարակատար դերբայի և նրանից կազմված դիմավոր ձևի ժամանակակից կազմությամբ՝ *-ած* դերբայական մասնիկով: «Ի յԱղթամար Տէր Թէոդորոս թաղած է յԱստուածածնի ժամտուն»/99/: «Եւ է թաղած ի Բերդաձոր»/99/: Այս երկու դեպքերում էլ բայի հարակատար ժամանակաձևը կազմված է արդի հարակատար դերբայաձևով և *եմ* օժանդակ բայի հարադրությամբ, այն էլ՝ բարբառային՝ «թաղած է», և ոչ թեկուզ «թաղուած» ձևով: Պետք է լիներ՝ թաղեալ: «Եւ յորժամ զկենացն զասացուած՝ զմահուանէ այսպէս է գրեալ»/118/. ասված իմաստով է գործածվել: Կան նաև որոշիչի դեր կատարող, ինչպես նաև արդեն գոյականի վերածված նույն դերբայաձևեր: «Արդ՝ ընդ այս խափանած գաւազանիս հարկ եղև զմեր տարակուսանքս գծագրել»/110/: Մինչդեռ պետք է լիներ՝ խափանեալ, կամ գոնե՝ խափանուած:Այս օրինակում հարակատար դերբայը որոշիչի դեր է կատարում: «Աստանօր զխոստացեալ պարտսն հատուցից զմնացուածս բանից/115/»: «Եւ ոչինչ խախտեցաւ շինուածն»/86/: «Այսպիսի յաջողուածք և բարեբաղդութիւնք զկնի ամաց օր ըստօրէ յաւելեալ/123/»: Վերջին երեք օրինակներում արդեն գոյականացած դերբայաձևեր են: Սրանք հեղինակի կողմից կատարված շեղումներ են, քանի որ ի հայտ են գալիս իր խոսքում:

գ. Բայի հրամայական եղանակի արդի կազմություն. «Սուրբ Կարապետ հասի՛ր մեզ յօգնութիւն»/111/: Պետք է լիներ՝ «հաս»: Սա այլ աղբյուրից է անցել նույնությամբ:[1]

դ. Բայի պայմանական եղանակաձևի ներկա կառույցով.

«Թէ հանդիպիմք ի մատենին և մեք շարադրեսցուք, և եթէ ոչ՝ լքցուք»/99/: Սա իր՝ հեղինակի խոսքն է, հետևաբար և իր կառույցը: «Թէ լինի այդ՝ տացէ այս որդին իմ ի քեզ»/136/, իսկ սա վերցված է ուրիշից:

2. Գոյականի հոլովական շեղումներ, երբ բուն հոլովաձևին փոխարինել է այլ՝ ժողովրդական, բարբառային հոլովաձև: «Նալի կտոր մի ի գրպանս էր»/79/: Պետք է լիներ՝ «ի գրպանիս»՝ տրական-ներգոյական հոլով: Սա ևս ուրիշից է վերցված, և ասողն էլ արաբ զինվոր է: «Ի ՇՀ թվին վարդապետն Կիրակոս կանոնադիրն Դրազարկուն հանգեաւ ի Քրիս-

[1] *Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ,Երուսաղէմ, 1869, էջ 156:*

տոս»/28/: Ճիշտը՝ «Դրազարկի»: (Այս Կիրակոսին չպետք է շփոթել Կիրակոս Գանձակեցու հետ, որն ավելի ուշ շրջանում՝ XIII դարում է ապրել): «Սուլտանին որդին էառ զԱնի»/112/: Պետք է լիներ՝ «որդին Սուլտանայ»: «Մեռաւ Սուլտանն Խորասնայ Մասուտն՝ և իւրոյ տղային եդ Աթապակ»/113/:Ճիշտը՝ «զիւրոյ տղայն», ստացել է այժմեական հնչեղություն՝ «իր տղային»: «Ի յԱղթամար Տէր Թէոդորոս թաղած է ի յԱստուածածնի ժամտուն»/99/: Պետք է լիներ ի ժամտանն Աստուածածնայ: Խախտված է ոչ միայն հոլովակազմությունը, այլև շարադասությունը: Իսկ «ժամտուն» բառն էլ նորակազմություն է՝ մինչ այդ չհանդիպած: «Տարակուսեալ տառապեալ բնակիչք Անւոյ և Շիրակ գաւառի՝ խորհեցան ելս իրացն գտանել մրրկին ձեռն տալով յարքայն Վրաց ի Դաւիթ»/125/: Ճիշտը՝ «գաւառին Շիրակայ», այստեղ ևս փոխված է նաև շարադասությունը, և բառակապակցությունն ունի արդի հնչեղություն՝ «Շիրակ գավառ»: Սրանք ևս հեղինակի կողմից են գալիս:

Գոյականի հոլովական շեղումներից բացի՝ կան նաև հոգնակի թվի -*եր* մասնիկով կազմության փաստեր: «Կործանեցան բազում բերդեր» /122/: «շինելով բերդերս պղնձիս և երկաթիս»/132/: Միավանկ «բերդ» գոյականն ստացել է -*եր* հոգնակակերտ մասնիկը *ք*-ի փոխարեն:

3.Բարբառային բառեր.

Սամվել Անեցու «Հաւաքմունք»-ում տեղ են գտել նաև մի քանի բարբառային բառեր, որոնց մի մասը, վստահաբար կարող ենք ասել, որ փոխանցվել է այլ աղբյուրներից և հեղինակինը չէ, և որոնք հիմնականում հանդիպում են ժողովրդական, ավանդապատում զրույցներում, և կան նաև, ինչպես նշվեց վերևում, իր ժամանակի այլ հեղինակների մոտ ևս: Ահա դրանք. «Նալի կտոր մի ի գրպանս էր»/79/: «Եւ արար Ջաֆարն ժողով գիտնոց՝ և եհարց, թէ իսկի լեալ է երբէք այնպիսի ոք, և ասեն ոչ»/28/: «Փախուցեալ ի տունս և ի փողանս մտանէին»/111/: Մ. Ուռհայեցու մոտ բառը «փողոց» ձևով է գործածված:[1] «Յուսահատեցան մարդիկ և ասէին՝ չդորդի արեգակն յաւիտեան»/78/: «զՀամտուն խանգրեցին»/100/: «զԼևոնն խանգրեաց տէրն Մարաշայ Պաղտինն»/128/: Այս բառը հաճախ է գործածված: «Ի ՆԺՁ թուին շինեցաւ Հաղբատ և Սանահին Ժ. ամս առաջ քան զՀաղբատ.» /100/: Պետք է լիներ՝ «յառաջ»: «Եւ հետ մահուան իւրոյ՝ ետ զքուեր որդիս իւր զԳրիգոր և զՆերսէս ի տէր Բարսեղ»/117/: Գրվել է այնպես, ինչպես հնչել է ժողովրդի մեջ՝ բարբառում: Բառն այս տեսքով կա արձանագրված նաև IXդ. պատմիչ Շապուհ Բագրատունու «Պատմութեան» մեջ: Ճիշտը պետք է լիներ՝ «քեռորդի»: «Ի ՈԺ թուին թագաւորն Գօրգի՝ էառ զԱնի»/137/: Ճիշտը՝ «Գեորգի»: Վերջին չորս օրինակներում ընդգծված բառերը հեղինակինն են:

4.Օտարալեզու փոխառություններ.

[1] *Մ. Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 158:*

Այն երևույթները, որոնք առաջացել էին տարբեր երկրների, ազգերի փոխհարաբերություններում այդ բուռն ժամանակաշրջանում, երբ գրվում էր «Հաւաքմունք»-ը, և որոնց բնութագրող բառերը, բնական է, որ չլինեին հայկազյան լեզվի կազմում, իրենց դրսևորումն են գտել Մ. Անեցու գործում՝ որպես փոխառություններ այլ լեզուներից: Դրանք հիմնականում անցել են ուրիշ աղբյուրներից, որոնցից օգտվել է հեղինակն իր ժամանակագրությունը կազմելիս, կամ ժողովրդի մեջ տարածում գտած ձևերից: Այդ կարծիքն ենք հայտնում, քանի որ նրա մոտ նկատված մեզ հետաքրքրող բառերը կան իր քիչ ավագ ժամանակակից Մ. Ուռհայեցու գործում, թեև Սամվելը ո՛չ Ուռհայեցու և ո՛չ իսկ իր համաժամանակյա հոգևոր և գրական գործիչ Մ.Ասորու մասին ոչինչ չի նշել: Դա կարելի է բացատրել նրանով, որ նրանք՝ Ասորու հետ իրենց գործերը գրել են համարյա նույն ժամանակներում՝ 1170-ական թվերի վերջերից, իրարից անկախ, մեկը՝ ասորերեն, մյուսը՝ հայերեն: Չնայած որ Ասորին նամակագրական և անմիջական կապի մեջ է եղել Հայոց կաթողիկոսներ Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի հետ և այդ մասին փաստել է իր Ժամանակագրության մեջ:[1] Ինչևէ: Ներկայացնենք այդ օտարամուտ փոխառությունները. «Ի Պարսիկս քեզ թաւուք կու շինէ»: «Եղաւ ի թաւուք» /66/: «Սա կոտորեաց զդպրատունն յըՍտամբօլ»/72/: «Նստաւ թագաւոր յըՍտամբօլ» /101/: «Ելեալ յըՍտամբօլայ ի դուրս»/102/: Ինչպես երևում է, Ստամբուլ հատուկ անունն արդեն կիրառության մեջ էր մտել XI-XII դարերում՝ Կոստանդնուպոլսի փոխարեն՝ նրա աղավաղված, հարմարեցված ձևով: Սամվելի մոտ այն ներկայացված է ժողովրդական արտասանության ձևով՝ «ըՍտամբօլ»: «Եւ ի սոյն ամի/ՃԿԴ./ ի շարժէ գիւղ մի յոտն լերինն թաբօրի ի յիւր տեղւոյն ոստեալ ի բաց վազեաց Բ. միլ»/86/: (Գրքում Թաբօր անունը գրված է փոքրատառով, մենք թողել ենք նույնությամբ): «Տէր Բարսեղ… գնացեալ առ մեծ սուլտանն Մելիքշահ որ ի Խորասան բազում համարձակութեամբ ընդ քաղաքամէջսն Պարսից ձիով և խաչալամով, որ առաջի ամբարձեալ էին ի ձողի»/118/: Ալամ՝ «դրոշ», խաչալամ՝ «խաչադրոշ»՝ քրիստոնեության խորհրդանիշը: Այս «խաչալամ» բարդ բառի երկրորդ բաղադրիչը՝ *ալամ*, գործածված է Մխիթար Անեցու «Պատմութեան» մեջ, որում ասվում է. «…առաքէ ընծայս և ալամ»:[2] «Մելիքշահ սուլտանն…կոխեալ երիւարաւն ի ծովն՝ և ետ շուքր Աստուծոյ»/118/: Այս հատվածները վստահաբար կարելի է ասել, որ վերցված են Հովհաննես Սարկավագի գործից, քանի որ Սամվելն այդ մասին հատուկ նշում է: «Որում անուն էր Հասան: Իսկ ըստ պատուոյ աստիճանին Վըզրուկ-խոճայ»/119/: «և պատմեաց զերազն ջիտի միոյ»/136/5 «և եկեալ առ նա ջիուտն և եբեր զգիրն»/137/: «և Ուսուֆ որ անուանեցաւ Սալահատին՝ էր ջանդար առաջի Նուրադնին»/137/: «Վասն որոյ ֆռանցեզքն աղաչեցին

[1] *Մ. Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 472:*
[2] *Մ. Անեցւոյ, Պատմութիւն, Ս.Պետերբուրգ,1879, էջ 50:*

զԱլամանսն գալ և թափել զնոսա… և վասն այնորիկ շահեցան Ալամանքն ի ֆռանցեզացն զօմբրուրութիւն»/132/: «Ի ՇՂԵ. թուին եղև երկրորդ Բասայճն ֆռանկաց, յորս եկն Քուռաթ Ըմբրուրն Ալամանաց, և *Լօիզռեսէ-ֆռանսն*»/132-133/: Այս մի նախադասության մեջ հինգ փոխառյալ բառ կա. համապատասխանաբար՝ զորաժողով, կառավարիչ, իմպերատոր, Գերմանիայի, և մեկ նորամուծություն՝ ֆռանկաց. Իսկ *Լօիզռեսէ-ֆռանս* բառը ներառել է Լուի /u-q/ և Ֆռանս հատուկ և *ռե* /roi/ հասարակ անունները ու ֆրանսերենի սեռական հոլովի *դը* /de/ հատկացական մասնիկը: Այդ շարակցությունը կարելի է թարգմանել Լուի՝ թագավոր ֆրանսիայի: Իսկ *զ* տառը անվան վերջին *ս* /s/ տառն է, որը թեև սովորաբար չի կարդացվում, բայց միացության մեջ դեր է ստանձնել՝ *ռ* ձայնորդից առաջ հնչելով որպես *զ*: «Ի ՇՂԶ. թուին Ըմբրուրն և Ռէտէ ֆռանսն պաշարեցին զԴամասկոս, որ է Դրմշխ»: Քանի որ այս նախադասություններում պատմվում է ֆրանս-գերմանական միացյալ խաչակրաց արշավանքի մասին, բառերի մեծ մասը հենց նույնությամբ փոխառյալ էլ կիրառվել է, և արձանագրվել է այնպիսի տառադարձությամբ, ինչպես ժողովրդի մեջ դրանք հնչել են այդ ժամանակ: «Մեռաւ սուլտանն Խորասանայ Մասուտն՝ և իւրոյ տղային եդ Աթապակ»/113/: «…և ի նմանէ կոչեցան Աթաբակեանք, որոյ անունն է և դեկան Աթաբակի»/133/: «Աթապակ», որի ճիշտ հնչեղությունն է «Աթաբեգ», նշանակում է «հայր բեգ», այսինքն բեգերի բեգ, բեգլարբեգ, ինչպես արձանագրում է Ֆրիկը. «Բեգլարբեգի իր մասասիս»:[1] Իսկ «դեկան» նշանակում է «տասնապետ»: «Եւ տուկն Գոնդոփրի տիրեաց Երուսաղէմի»/120/: Տուկ՝ «դուքս» բառն է:

3.Բաղաձայնական բարբառային փոխարկումներ.

Սամվել Անեցու այս գործում հատ ու կենտ հանդիպում են նաև Կարնո բարբառի Շիրակի խոսվածքին հատուկ բաղաձայնական փոխատեղումներ՝ խուլի կամ շնչեղ խուլի ձայնեղացման ընթացքով: Այսպես. «Նիկիա բոլոր բլաւ»/86/. *կի* շնչեղ խուլը ձեռք է բերել ձայնեղի որակ և դարձել է *բ*: Հիմնականում այս բառը գործածված է «փլաւ» ճիշտ ձևով, և դրանից ելնելով, կարելի է ասել, որ սա գուցե և գրիչի սխալ է և ոչ Սամվելինը: Բայց քանի որ հնարավոր չէ ճշգրտորեն հաստատել, չպետք է անտեսել: «Նա (Կոստանդիանոս-Կաւալիանոս-Թրքաժողովը.-Հ.Հ.) հրամայեաց թրիք ժողովել և արգանել ի գետն»/87/: *Կ* խուլ պայթականը ձայնեղացել է՝ դառնալով գ. արկանել-արգանել: «Ի ՆԺԶ թուին շինեցաւ Հաղբատ և Սանահին Ժ. ամս առաջ քան զՀաղբատ շինեցաւ»/100/: «Հաղպատ» բառում էլ առաջին գործածության մեջ *պ* և *տ* խուլ պայթականները ձայնեղացել են՝ դառնալով համապատասխանաբար *բ* և *դ*, իսկ երկրորդ կիրառության մեջ միայն *պ-* ն է փոխել որակը՝ *պ-բ*:

Դրազարկ բառը, որ անվամբ եկեղեցին հիմնել է Ռուբինյան Թորոս իշխանը՝ Ռուբենի թոռը, նույն ճակատագիրն է ունեցել, ինչ որ Շապուհ

[1] *Ֆրիկ, Բանաստեղծությունների ժողովածու, Եր., 1940:*

Բագրատունու մոտ արձանագրված Դերէն անձնանունը, որի ճիշտ գրությունը պետք է լիներ «Տէրէն», բայց անմահացել է ըստ Շիրակյան արտասանության՝ Դերէն: Նույնն է և «Դրազարկի» հարցում: Թորոսն այն հիմնելով որպես իր հաղթանակների արդյունք, անվանել է Թրազարկ, որ «թուր-դուր»,«Թրազարկ-Դրազարկ» զուգահեռով էլ հնչեղությունն է ստացել: Չէ՞ որ նա միայն իր թրի զարկի շնորհիվ կարողացավ իրեն ենթարկել Կիլիկիան՝ հիմք դնելով ապագա Կիլիկյան Հայկական թագավորության: Այստեղ շնչեղ խուլ պայթական *թ*-ն դարձել է ձայնեղ *դ*: Բառը «Թրազարկ» գրությամբ արձանագրված կա գրքի հավելվածում:

4.*Զի – թէ* շաղկապների փոխարկում.

«Հաւաքմունք»-ում հանդիպել են նաև գրաբարյան *զի* ստորադասական շաղկապի -*թէ*-ի փոխարինման գործածության երկու դեպք, որոնք նման կիրառությամբ ստանում են թեական, երկբայական իմաստ, արտահայտելով, սակայն, հաստատական միտք: Մի դեպքում *զի-թէ*-ի փոխարկում, մյուս դեպքում աշխարհաբարյան *որ-թե*-ի զուգահեռի կիրառում: Ահա դրանք. «Գրեցաք զիր ողջունի առ Աշոտ, թէ ի յաղթութեան մերում շահեցաք զազատութիւն Երուսաղէմի/102/»՝ *զի-թէ*, թեև հաստատական է միտքը: «Եվ նա ասէ, թէ՝ զիւր հիւսնութիւն կուսուցանէ»/66/:

Ինչպես գիտենք, *թէ* շաղկապը գրաբարում միայն պայմանականություն է արտահայտում *եթէ-ին* զուգահեռ՝ *թէ-եթէ*: Բայց այս երկու դեպքերում աշխարհաբարյան երանգ է ստացել՝ *թե-որ*:

5.Ոճական ոչ կանոնիկ կազմություններ.

Գրքի այն հատվածներում, որտեղ օգտագործված են ավանդապատում զրույցներ, խոսքի պատմելաոճն էլ համապատասխանում է պատմվող նյութի գեղջկական ոճին՝ պարզ, հասարակ, առանց գրաբարյան պեսպիտությունների, և հենց այդ հատվածներում են հիմնականում, ինչպես նշվեց վերը, հանդես գալիս շեղումները գրաբարից: Ներկայացնենք դրանք ևս. «Ու՞ր է հիւսան որդին, և նա ասէ թէ զիւր հիւսնութիւն կուսուցանէ, ի Պարսիկս քեզ թաւութ կու շինէ»/66/: Այստեղ նույնիսկ «Պարսք» տեղանունը նույնացվել է պարսիկ ազգ անվան հետ՝ ժողովրդական մտածելակերպով: «Ի յԱղթամար Տէր Թէոդորոս թաղած է ի յԱստուածածնի ժամտուն»/99/: «Եւ է թաղած ի Բերդաձոր»/99/: «Սուրբ Կարապետ հասիր մեզ յօգնութիւն»/111/: «Նալի կտոր մի ի գրպանս էր» /79/: «Նիկիա բոլոր բլաւ»/86/:

Սրանց շարքին կարելի է դնել նաև ֆրանկո-գերմանական խաչակրաց արշավանքի մասին պատմող վերը մեջբերված հատվածները:

Քննված հարցը թեև կրում է մասնակի բնույթ, այնուամենայնիվ այն առկա է, և մենք փորձել ենք այն վեր հանել և ներկայացնել բանասերների ուշադրությանը:

Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ԳՊՄԻ)

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Ինչքան էլ ժողովուրդը՝ որպես էթնիկ միավոր, միասնական է, այնուամենայնիվ, առանձին տարածաշրջանների բնակիչներն ունեն որոշակի յուրօրինակություններ, որոնք արտահայտվում են ինչպես կենցաղավարության, մշակույթի, այնպես էլ աշխարհընկալման և լեզվամտածողության ոլորտում: Այս իրողությունը նկատի ունենալով՝ անդրադարձել ենք Ալեքսանդրապոլի հեքիաթներում առկա դարձվածաբանական միավորների քննությանը՝ օգտվելով «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի գիտական հրատարակության չորրորդ հատորում[1] ընդգրկած նյութից: Նշված հատորում տեղ են գտել Շիրակի դաշտավայրի՝ Ալեքսանդրապոլի, Ախուրյանի, Աղինի, Արթիկի, Ապարանի, Ղուկասյանի շրջանների, ապա պատմական Հայաստանի՝ Բասենի, Կարնո ու Ջավախքի գավառների ժողովրդական հեքիաթները, որոնց համար բնագրային նյութ են եղել Երվանդ Լալայանի ղեկավարած բանահյուսական արշավախմբի և բանահավաք-ազգագրագետ Ալեքսանդր Մխիթարյանցի հավաքած նյութերը:

Վերոհիշյալ բնակավայրերի հեքիաթներից առանձնացրել ենք Ալեքսանդրապոլինը՝ դարձնելով մեր ուսումնասիրության նյութը՝ ելնելով այն իրողությունից, որ այս քաղաքն առանձնացել է կոլորիտային յուրահատկություններով,ինչպես նաև տարածաշրջանին հատուկ Կարնո մայր բարբառի առանձնահատկություններով, որոնք բավական լավ պահպանվել են Ալեքսանդրապոլի խոսվածքում: Պետք է ընդգծենք, սակայն, որ Ալեքսանդրապոլի բնակիչների մի մասը Հայաստանի զանազան վայրերից տարբեր ժամանակ եկած գաղթականներ էր, որոնց բարբառային տարրերը (մանավանդ հնչյունական) վկայվել են նաև հեքիաթներում, ինչպես՝ *ականջ-հ՚անգաջ, մենծ - վենձ, ուր - հ՚ուր* և այլն:

Հեքիաթը, լինելով ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված, բազմաբովանդակ և ամենասիրելի ժանրերից մեկը, բնութագրվում է այնպիսի հայտանիշներով, որոնք չեն կրկնվում բանահյուսական այլ ժանրերում: Դրանցում ժողովուրդն արտահայտել է իր երազանքները, ձգտումները, կենսափորձը:

Ըստ էության, հեքիաթներն ու դարձվածքներն ունեն մի շարք ընդհանրություններ. նախ՝ «ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունը»:[2] Ընդհանրություններն առավել ընդգծվում են՝ նկատի ունենալով

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. IV, Եր., 1963:*
[2] *Ա. Սուքիասյան,Ս.Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան,Եր.,1975,էջ3:*

այն իրողությունը, որ «Հայերենում դարձվածքների ճնշող մեծամասնությունը բարբառային ծագում ունի և իր մեծ մասով էլ պատկանում է լեզվի ժողովրդա-խոսակցական շերտին»:[1] «Դարձվածքների ուսումնասիրությունը լույս է սփռում նաև տվյալ լեզվի և ժողովրդի, նրա հոգևոր մշակույթի պատմության վրա: Հաճախ ժողովրդի կյանքի, կենցաղի, ըմբռնումների այս կամ այն կողմը յուրահատուկ ձևով դրսևորվում է դարձվածքների մեջ»:[2] Այսպես, հեքիաթներում սերմանվում են պատասխանատվություն, սեր, հարգանք ծնողների, բարի գործի և այլ դրական հատկանիշների նկատմամբ, որոնք հաճախ արտահայտվում են համապատասխան դարձվածքների օգնությամբ, օրինակ.

«- Ի՞նչ էնեմ, կը քցեմ քեզի ոտներուս տակը, կը տրորեմ, հրմը, հերդ ընձի *ամանաթ է տվե, գնա՛ հորդ դուրբան էղի*: Քսանհինգ տարի է *հորդ աղ ու հացը կերել եմ*, չեմ կրնա մոռանա» /ՀԺՀ,51/:

«Է՜հ, ի՞նչ էներ, հոր *սրտից հ՚արուն կէրթար*, հրմը *մեկ անգամ խոսք էր տվե, չէր կրնա խոսքեն ետ դառնա*» /ն.տ.,49/:

Նկատենք, որ հեքիաթները, առավել քան ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերը, ունեն դաստիարակչական ընդգծված նշանակություն: Բնական է, որ օրինակելի են համարվում ինչպես դրանցում առկա պատումները, այնպես և դրանց լեզվական որակը. միայն այն տարբերությամբ, որ առաջին պարագայում այն հիմնականում գիտակցական բնույթ է կրում, երկրորդում՝ ոչ:

Ի դեպ, մեր ձեռքի տակ եղած ժողովածուում գերակշռում են *կախարդական* կամ *հրաշապատում* հեքիաթը (22-ից 16-ը)՝ կենդանականի ընդգծված տարրերով: Հեքիաթների դիպաշարերն ընդհանուր գծերով նման են, նման է նաև լեզվական որակը: Լեզուն հատկորոշվում է անմիջականությամբ, զգացմունքային խորությամբ, ինչպես նաև պարզությամբ: Դարձվածքները, լինելով վերաիմաստավորված կայուն կապակցություններ, առավելագույնս արտահայտում են հուզաարտահայտչական մեծ երանգավորում՝ նպաստելով լեզվի կենդանի թրթիռներն ու լիցքերը հաղորդելուն: Այսպես, «Գել, աղվես ու արծիվ»/ՀԺՀ,177-180/ հեքիաթում հեղինակ-ասացողի, ինչպես նաև Աղվեսի խոսքն առավել անմիջական ու շոշափելի է դառնում խոսակցական դարձվածքների գործածմամբ, օրինակ, «Գելը տնքտնքալով, *հ՚արունլվիկ էղած* գուքա: Աղվեսը կը հասկնա օր *հերսը շատ է հ՚ելած*, հ՚առաջ կէրթա, կըսե.

- *Տնաշեն*, ընչի՞ ես *չայրեքդ կախե*, թագավորի հարս փախցնելը ղոլայ չէ, կեսրարը դու ես, դու օր *չքաշես էրոր նեղութենը, խո մենք քաշելու չենք*: *Հ՚եգուց մեկել օր* հարսը քու ձեռներուդ պըտի ջուր լցնե, ոտքերդ մաժե, մենք *հա՛ եղած, հա՛ չէղած*:

---

[1] *Նույն տեղում, էջ 7:*

[2] *Ս. Աբրահամյան, Հայոց լեզու բառ և խոսք, Եր., 1978, էջ137:*

Աղվեսն օր էդ խոսքը կըսե, Գելը *ինքն իրան կուռի, հերսը գիջնի*:… Է՞հ, *Գելը իշու պես բան էր*, Աղվեսն ինչ օր ըսեր՝ *խոսքեն դուս չէր գա*»:

Ինչպես ասացողի, այնպես էլ կերպարների խոսքը՝ համեմված հարազատ բարբառին բնորոշ դարձվածային միավորներով, առավել դինամիկ ու գրավիչ է դարձնում ասելիքը՝ արտացոլելով տվյալ տարածաշրջանի սովորույթներն ու լեզվամտածողությունը, որոնք ստեղծում են հեքիաթներում պատկերված անիրական երևույթների հավանականության պատրանք, ինչպես. «Ցորեկվա վախտ որ էղավ, շոքեց թե չէ՝ մեկ էլ ավճի Շաբուրի տղեն տեսավ որ՝ օղորդ, ինչպես հորոխպերն իրան ըսել էր, քառսուն հատ ֆիլ, *տոճիկ տալով*, սարերուց *պրծան էկան*, հավուզներու *վրա թափան*, որ ջուր խմեն: … Ցրվան ելան սարերը, հըմը քիչմ էլ որ անցավ, ծարավությունը շատ զոռեց, շոքն էլ մեկ թարֆից, էլի ետ դարձան, էկան ընկան հավուզներու վրա, էս անգամին է՛լ գինու-մինու չաշեցին, կուշտ խմեցին: Էհ, գինի ու անսովոր անասուն, *բիրաղի էն սհաթին հարբան ու խաշըլ խոտի պես վար թափան*» /ՀԺՀ.31-32/:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ դարձվածային միավորները խոսքին հաղորդում են այնպիսի նրբերանգներ, որոնք լեզվական այլ միջոցներով դժվար, երբեմն նույնիսկ անհնար է ներկայացնել, օրինակ.

Մարդիքը իրար հ՚երես կաշեն, կը խոճահարվին, կըսեն.

- Ախպեր ջան, էդ ձեր գեղն օր դու կսես, էդտեղ էնպես *դովտմ է իճաք էղել*, օր *սաղ գեղ, քաղաք, բիտտուն կերեր է*, մնացեր է ինքը: *Մեղք ես*, դու մի՛ էրթա, քեզի էլ կուտե: Մենք էլ եդ գեղից ենք, *փախեր ենք էդոր ձեռքեն*:

Տղեն էն սհաթին կը հասկնա, օր իրան քուրն է: Կըսե.- Ես էդպեսներու շատերի *հախեն եմ էկե*, էդոր հախեն էլ գուքամ» /ՀԺՀ,84/:

Կերպարների երկխոսության ժամանակ ևս նկատելի է ինքնատիպ մտածողության արտահայտությունը, օրինակ. «*Թագավորը ըսավ.*

-Դե, հըմի ըսա, ես ի՞նչ ածեմ:

Ըսավ. – Թագավորն ապրած կենա, ի՞նչ պիտի ածես, Քրիստոս օր Աստծու տղեն էր, եռեսուն արծաթի ծախին. դու շա՛տ, շա՛տ ածենաս, տասէրկու-տասնըհինգ արծաթ ածես» /ՀԺՀ,185/:

Նկատենք, որ հեքիաթների լեզուն բավական պարզ է, անպաճույճ, առանձին դեպքերում նույնիսկ պարզունակ, որը, իհարկե, պայմանավորված է լսարանի պահանջով, միաժամանակ այդ լեզուն բավական անմշակ է՝ չունենալով լեզվական միջոցների ընտրության սոցիալական, նույնիսկ սեռատարիքային տարբերակվածություն. միևնույն դարձվածքը կարող է բնորոշ լինել ինչպես արքայադստերը, այնպես էլ հովվին: Այսպես, հեքիաթներում վկայված նույն դարձվածքը՝ *«Այ, հողը ձեր գլխուն»*, գործածված է ինչպես՝ «Համբրմանի» /ՀԺՀ,15-26/ հեքիաթի արքայադստեր, այնպես էլ «Զանգի զրանգի» /ՀԺՀ,78-86/ հեքիաթի հովվի խոսքում: Նկատենք, որ հիշյալ հեքիաթների ասացողները տարբեր մարդիկ են, այսինքն՝ դարձվածքի գործածությունն ասացողի անհատական վերա-

բերմունքով պայմանավորված չէ: Նման իրողություն նկատելի է նաև մյուս հեքիաթներում, օրինակ, մեջբերենք հուրի-ջրահարսերի խոսակցությունից. *-Ջա՛նըմ, - ըսավ քուրջը,- հեչ բանազուկ չէրավ բիլա հետս խոսար, մարդ չիտե, թե ի՞նչ թավուր տղա է, լալ է, խուլ է, ի՞նչ է, ի՞նչ էրի չէրի հետս չը խոսաց:*

- Ա՛յ լաչառ,- ըսավ մենծ քուրը, - սիրուն տղա տեսար, հա՞, չը ղմշար որ հետդ բերեիր: Աղջի՛, - ետև ըսավ միջնեկ քուրջը,- հիմի դու գնա: Գնա՛ հըմը, չէղնի թե դու էլ էնպես էնես, բալքի թե, մեկ դաքութենովմ մախսուս խաբես բերես…

- Ո՛վվե, ի՞նչ մենծ մարդ ես էղել, - ըսավ աղջիկը, որ բանազուկ չես էնե մեզի պես աղջիկներու հետ խոսալու, քեզի մարդու տեղ դրին, դուն էլ շատ ուռար ջանիդ վրա /ՀԺՀ, 39-40/:

Ի դեպ, կենդանիների խոսքում ևս կան բազմաթիվ դարձվածային արտահայտություններ, օրինակ. *-Ղրռ-աթը (հրեղեն ձին) կըսե.- Սուչը քուկդ է, ես օր քեզի ըսի, էդ ճամփեն մի էրթա, ես քեզի դյուշմա՞ն էի, ի՞նչ էնեմ, ես քեզի սաղ չէի թողնի, հըմը հորդ խոսքը չեմ կրնա կոտրե: Լավ,- կըսե,- արի մե լավմ թիմարե ընձի* /ՀԺՀ,53/: Մեկ այլ օրինակ. *Աղվեսը կըսե.- Աստված գիտե, մարդ էլ գիտե, օր մենք ոչ դարդ ունինք, ոչ թալաշ, մեր դարդն ու թալաշը դու ես: Էսքան վախտ է քու աղ ու հացդ կուտենք, մենք էլ մեզի համար մարդ ենք, գուզենք օր էրթանք թագավորի հարսը փախցնենք, բերենք քեզի տանք, օր մեզի լավ աշե: Մերդ ի՛եգուց մեկել օր կը մեռնի, մեզի վո՞վ պըտի աշե* /ն.տ.,178/:

Ինչպես բառերը, դարձվածքները նույնպես օժտված են հուզաարտահայտչական գունավորմամբ և կիրառական-ոճական առանձնահատկություններով ու գործառույթներով: Թեև դարձվածքների ճնշող մեծամասնությունը երկանդամ է (*խելքը հասնել* /ՀԺՀ,28/, *նիաթը կախել* /ն.տ.,17/, *խելքն էրթալ, սիրտ էնել* /ն.տ.,80/, սիլիբիլի էնել /ն.տ.,59/) կամ եռանդամ (*ասատ կրակն ընկնել* /ն.տ.,33/, *գլուխն առնել, գնալ* /ն.տ.,79/, *ուշքը գլոխը գալ* /ն.տ.,97/, *խոսքը գետնին գցել* /ն.տ.,38/), սակայն հանդիպում են նաև բազմանդամ միավորներ, ինչպես՝ *մենծ կտորը ականջը թողնել* /ն.տ., 35/, *գլխու վրա տեղ ունենալ* /ն.տ.,44/, *քիթ ու մռութը կախած դուրս գալ* /ն.տ.,38/: Նկատենք, որ եռանդամ դարձվածային միավորներից առանձնանում են կրկնավոր բայական բարդությունները, օրինակ, *ծանտր-ազիզ նստել* /ՀԺՀ,15/, *հերսոտ-հերսոտ երթալ* /ն.տ.,24/, *երդում-պատառ եղնել* /ն.տ.,69/, *յավաշ-յավաշ մոտենալ* /ն.տ.,28/:

Հեքիաթներում առկա դարձվածքները կարելի է առանձնացնել ըստ իմաստային – շարահյուսական դասակարգման՝ *դարձվածաբանական սերտաճում,* ինչպես՝ *Աչքերու տերը գալ* /ՀԺՀ,96/, *աչքը լույս լինել* /ն.տ.,26/, *գլուխն աղալ* /ն.տ.,22/, *գլուխը ուտել* /ն.տ.,66/, *ինքն իրան ուտել* /ն.տ.,178/, *լեզու ելնել* /ն.տ.,27/, *կոտրած սրտով ետ դառնալ* /ն.տ.,37/, *կուռ*

երկաթ կտրել /Ն.տ.,43/, *ջիգրները կտրել* /Ն.տ.,96/, *սոլուղն ելնել* /Ն.տ.,98/, *սատանի ձիուն հեծնել* /Ն.տ.,18/, *քեֆը գալ* /Ն.տ.,64/:

Դարձվածաբանական միասնություն, օրինակ, *ականջ էնել* /ՀԺՀ,28/, *ամոթանք քաշել* /Ն.տ.,186/, *բարև բռնել* /Ն.տ.,17/, *գլուխը զարկել* (գլուխը կտրել) /Ն.տ.,16/, *դուս տալ* /Ն.տ.,179/, *երեսին հանել* /Ն.տ.,16/, *զրընկ ներս մտնել* /Ն.տ.,17/, *էրուցքի մեջ ընկնել* /Ն.տ.,22/, *խելքե դուս խակ դատողություններ* /Ն.տ.,71/, *խելքը թոցնել* /Ն.տ.,77/, *համբերությունը հատնել* /Ն.տ.,71/, *հերսն ելնել* /Ն.տ.,25/, *մեղքը մեկի վիզը* /Ն.տ.,65/, միևնույն *մտքի կայնել* /Ն.տ.,187/, *միտ ունենալ, ճամփա ընկնել* /Ն.տ.,24/, *նազ ծախել* /Ն.տ.,76/, *տերը չեղնել*/Ն.տ.,19/, *պռչը բռնել*/Ն.տ.,178/,*քոքը կտրել* /Ն.տ.,53/:

Դարձվածային կապակցություն, ինչպես՝ *աշխատանքը գցել ջուրը* /ՀԺՀ,65/, *իրար գլուխ ջարդել, իրար խոսք տալ* /Ն.տ.,70/, *խնդլուն վեր թռնել* /Ն.տ.,180/, *«հավատամ» բռնած կայնել* /Ն.տ.,181/, *ձեռք գցել* /Ն.տ.,29/, *ձեռը ծոցը գնալ* /Ն.տ.,36/, *ձեռը դարտակ* /Ն.տ.,186/, *ձեռքն ընկնել* /Ն.տ.,76/, *դոշուն քաշել* /Ն.տ.,96/, *չայրեքը կախած նստել* /Ն.տ.,177/, *սարերից պրծնել գալ* /Ն.տ.,31/, *տես ու ճանաչ չունենալ* /Ն.տ.,98/, *տուն բռնել* /Ն.տ.,186/, *փող ետ քցել* /Ն.տ.,187/, *քունը խրտնել* /Ն.տ.,96/: Նշենք, որ առավել գործածական են դարձվածային կապակցություններն ու միասնությունները, իսկ առանձին բառային միավորներից կիրառելի են *գլուխ, երես, ձեռք, միտ, խելք* բառերը:

Առանձնանում են ասացվածքային բնույթ կրող դարձվածային միավորները, ինչպես՝ *Ստված դսմաթը կը հասցնե* /ՀԺՀ,15/: *Անդունդի օխտը դաթը իջնել* /Ն.տ.,23/: *Աշխարհք շինենք, թե քանդենք* /Ն.տ.,85/: *Աստծու կրակ է* ինչ-որ մեկի *ջանին* /Ն.տ.,66/: *Արյունը մյուսի արյունից կարմիր է* /Ն.տ.,67/: *Առավոտը բարի լուսը բացվավ, բացվի բոլորիդ վրեն /օրորմի հորդ/* /Ն.տ.,59/: *Բալքի բարին էս է: Նանեն քեզի դուրբան էղնի: Ղոնախն ասումն է* /Ն.տ.,98/: *Գլոխը բուբրուի եղ քսել* /Ն.տ.,180/: *Եռման կրակը ջանը ընկնել* /Ն.տ.,22/: *Էնպես լեզու ունենալ, օր օձը ծովեն հանե* /Ն.տ.,179/: *Էրնեկ տեսնողի աչքերումն: Արևին կ՚ըսե՝ դու մի ելնի, իմ լուսեղեն երեսս աշխարհքին լուս կուտա: Չուտես չխմես, էնոր հուր ջամալին թամաշա էնես* /Ն.տ.,96/: *Խերն ու բարին ձեր վրեն բացվի* /Ն.տ.,96/: *Թայը աշխարհքի երեսին չի գտնվի* /Ն.տ.,32/: *Թե օտի պատերուց ձեն ելավ, տղի բերնից էլ խոսք ելավ* /Ն.տ.,39/: *Հարամը վրա չէ*/Ն.տ.,187/: *Մաքի կսես աշխարհքի մարդը կտրել էր…*/Ն.տ.,20/: Օձն իրան պորտով, դուշն իրա թևով… /Ն.տ.,35/:

Առկա են համեմատության վրա կառուցված դարձվածային միավորներ, օրինակ, *Չամչրախի պես չորս բոլորը լուս տալ* /Ն.տ.,30/: *Մասումի պես չոքել* /Ն.տ.,25/: *Խաշլ խոտի պես վար թափել* /Ն.տ.,32/: Ինչպես նկատելի է վերոբերյալ օրինակներից, դարձվածների մեծամասնությունը բայական հարադրություններ է, սակայն կան նաև անվանական հարադրու-

թյուններ, ինչպես՝ *զիլֆիխար թուր* /ՀԺՀ 35/, *զմրուխտ ռուշ* /ն.տ.,41/, *ոտաց ճամփա* /ն.տ.,187/:

Վկայվել են համարժեք-հոմանիշ մի շարք դարձվածքներ, ինչպես՝ *չայրեքը կախած* /ն.տ.,177/, *քիթ ու մռութը կախած* /ն.տ.,38/, *նիաթը կախած* /ն.տ.,17/, կամ *վենձ բրթուճը հ՚ականջը թողնել* /ն.տ.,100/, *մենձ կտորը ականջը թողնել* /ն.տ.,35/:

Հեքիաթներում հանդիպում են իրենց կազմում փոխառություններ ունեցող դարձվածքներ. դրանց գերակշիռ մասը պարսկական, թուրքական փոխառություններ է. *դիվադադար էղնել, գլխուն օյին խաղալ* /ՀԺՀ,35/, *տան քուջ ու պուջախը ընկնել* /ն.տ.,28/, *խաթրով խոսալ, թանազուկ չենել* /ն.տ.,39/, *ուռել ջանի վրա, տալղալամիշ էղնել* /ն.տ.,40/, *ռանգ մռանգ քցել* /ն.տ.,41/, *մարիֆաթ բանեցնել* /ն.տ.,42/, *դարադուլ քաշել* /ն.տ.,68/, *մուշտարիքին խրտնցնել* /ն.տ.,187/, *տոճիկ տալ* /ն.տ.,31/, *թլսումը բոզմիշ էնել* /ն.տ.,34/, *գլխից ռադ էղնել* /ն.տ.,25/, *հավաս առնել* /ն.տ.,26/, *հալաքեն ընկնել* /ն.տ.,179/, *սալուղն ելնել* /ն.տ.,100/:

Նկատենք, որ ռուսական փոխառություններն ընդհանրապես չափազանց քիչ են (*զանիաթ* բանեցնել /ՀԺՀ,28/, *պալ* (պարահանդես) սարքել /ն.տ.,103/), սակայն հեքիաթներից մեկում՝ «Ջրախառն կաթը» /ՀԺՀ,186-188/, ուր ներկայացվում է առևտրին ու վաճառականներին վերաբերող պատմություն, բավական շատ են ռուսական փոխառությունները. *վեշշի, պասաժիրներ, պրիկաշնիկ*, ինչպես նաև *սուդից «իսպոլնի լիստ» հանել, տոլկ էնել, սուդերնի պրիստավին գլխին կանգնեցնել, խոդ ընկնել*:

Բացի հեքիաթների համար կառուցվածքային համարվող *Կէղնի չի էղնի, Ժամանակով* կամ *ժամանակոց կէղնի չի էղնի…, Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին, Երկնքեն իրեք խնձոր իջավ* կամ *ընկավ, մեկն՝ ըստղին, մեկը՝ լստղին, մեկն էլ՝ սրտով ուզողին, լավ անկանջ դնողին*, կամ *էս հեքիաթը գրողին, ալամ աշխարքքին*, վկայվել են քարացած, ինչ որ առումով նաև կաղապարային այլ բառեր ու արտահայտություններ, ինչպես՝ *Աստված բեթարեն ազատե* /ն.տ.,178/, *բիրդան բիրա* /ՀԺՀ,15/, *ինչորիսա* /ն.տ.,16/, *զաթի* /ն.տ.,17/, *հազր եղավ, օղորթ որ* /ն.տ.,22/, *խելիմ օր* /ն.տ.,24/, *վազն գալ* /ն.տ.,25/, *այ օյինքազ, ջանըմ* /ն.տ.,27/, *հալ հեքիաթ* /ն.տ.,29/:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ Ալեքսանդրապոլի հեքիաթներում առկա ժողովրդախոսակցական դարձվածքներն ամբողջովին արտահայտում են քաղաքի բնակչության լեզվամտածողությունը, աշխարհընկալումն ու կենցաղի առանձնահատկությունները՝ յուրօրինակ համ ու հոտ հաղորդելով խոսքին:

Ջեմմա ԲԱՌՆԱՍՅԱՆ (ԼԻ)

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ՝ ՇԻՐԱԿՈՒՄ ԳՐԱՌՎԱԾ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԻ ՓՈՐՁ

Հայերենի կենդանի բարբառներից Կարնո բարբառը համարվում է ամենամեծերից մեկը: ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում լեզվաբան-բարբառագետների հավաքչական աշխատանքներով կուտակված 500 խոսվածքային միավորների մեջ քիչ չեն նաև Կարնո բարբառին առնչվող նյութերը՝ գրանցված Շիրակի *Ազատան, Գետք, Մարմաշեն, Ոսկեհասկ, Ախուրիկ, Հայկավան* գյուղերում:

Կարնո բարբառի տարբեր խոսվածքների գրանցումներից ընտրել ենք *ԱՌԱՎՈՏ* օրապահին վերաբերող բառանվանումները: Օրվա բավական ընդարձակ, անորոշ ժամանակահատվածն առավել կոնկրետացնելու, հնարավորինս ճանաչելի, ընկալելի դարձնելու միտումով օրվա այդ պահն անվանելիս մարդիկ ընտրել են տվյալ օրապահին բնորոշ որևէ հատկանիշ և դրել անվանման հիմքում, նայած ինչն է առավել կարևոր համարվել այդ ժամանակահատվածի համար: Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դրանք առավոտվա տարբեր պահերն են մատնանշում:

1) *Առավոտ* օրապահի անորոշությունը հաղթահարելու, ավելի ստույգ ժամանակահատված ցույց տալու, ասենք, վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծելու նպատակով են գործառել *հ'առավօղ կանուխ* բառակապակցությունը:

2) *Վաղ առավոտ* լինելու հանգամանքն ընդգծվել է *գիշեր* բառով կազմված բաղադրություններով, ինչպես, ասենք, *գիշեր* և *հան* արմատները իրար կապելով և դրանով գիշերավարտի գաղափարն արտահայտելով *գիշէրհանա* բառաբաղադրությամբ, իսկ *գիշեր* բառի քարացած հոլովաձևը՝ *գիշէրօվ,* կամ հաճախադեպ *հ'առավօղ - գիշէրօվ* հարադրությունը խոսքում ունեն լրացուցիչ գործառական բաշխում:

3) Ծագումնաբանական մի առանձին խմբում էլ կարելի է առանձնացնել բնիկ հայերեն *լույս* արմատով կազմված վերլուծական բաղադրությունները, շաղկապական, հարադրական բարդությունները: Այսպես՝ *մութ* և *լույս* արմատներով՝ *մուտուլուս,* իսկ *լույս* և *դեմ* արմատների բաղադրությամբ՝ *լուսուդէմ* բառաձևը և այլն:

Փոխառյալ *քարաֆ* (կողմ) բառով նկարագրական տիպի ժամանականիշներ են ստեղծվել, որոնք լայնորեն գործառում են Կարնո բարբառի խոսվածքներում, ինչպես՝ *լուսու քարաֆ, հ'առավօղվա քարաֆ* :

Բարբառախոսների հավաստմամբ՝ կիրառելի է նաև *ատամա մուտ* (աղամամութ) համապատասխանությունը բառակապակցության արժեքով (հատկացուցիչ-հատկացյալ կառույց), ինչպես՝ *Ատամա մուտ*, որը,

անշուշտ, կապվում է Ադամ նախահոր հետ՝ մատնանշելով աշխարհաստեղծման այն պահը, երբ իրարից անջատվել են խավարն ու լույսը:

4) Ծագումնաբանական առանձին խումբ են կազմում *առավոտ* հասկացության դիմաց փոխառյալ *սաբահ* ձևի հնչյունափոխված տարբերակները՝ բացառապես մակբայական կիրառությամբ:Թուրքերենի միջնորդությամբ պարսկերենից փոխառյալ *սաբահ, սաբախտան* ժամանականիշը «շուտ, կանուխ, վաղ» նրբիմաստներն ունի և խոսքի մեջ ժամանակի պարագա է ձևավորում: Վաղ առավոտ լինելու հանգամանքն է ընդգծում թուրքերենից փոխառյալ *թեզ* (շուտ) ձևի զուգորդությամբ սաստկական արժեք ձեռք բերած *սաբախտան թէզ* բառակապակցությունը:

5) *Առավոտ* հասկացության դիմաց առկա բառանվանումների հոմանիշային տարբերակներից մեկն էլ Կարսի Ղզըլչախչախ գյուղի խոսվածքում առկա *աղդամուղդ* համապատասխանությունն է, ինչը *աղջամուղջ* հնագույն ժամանվան մնացուկային ձևն ենք համարում:

6) *Առավոտ* հասկացության դիմաց ինքնատիպ մի ժամանականիշ էլ՝ *աղօթրան,* գործառում է Կարնո բարբառի մի շարք խոսվածքներում: Ծիսապաշտամունքային բնույթի այլ տարրերի հետ արևապաշտության շրջանից եկող այս բառը ժառանգորդաբար անցել է քրիստոնեությանը և բարբառներում գործառել է ժամանականիշի արժեքով:

7) Բասենի խոսվածքում առկա *խօրօզխօսումին* ժամանականիշ մակբայը կոպիտ մոտավորությամբ մատնանշվում է վաղ լուսաբացը՝ կապվելով հայերենում և այլ լեզուներում ընտանի կենդանիների և թռչունների վարքի միջոցով օրապահը որոշելու սովորության հետ:

Առավոտ հասկացության իմաստով Կարնո բարբառի Շիրակի խոսվածքներում գործառող բառային համապատասխանությունների քննությունը վկայում է, որ գիշերավարտից մինչև կեսօր ձգվող այդ օրապահի բառանվանումներին բնորոշ է հոմանիշային բազմազանությունը:

Թամար ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (ՌՀՊՀ)

ՏԵՔՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

(Գյումրու Հովհ. Թումանյանի անվան թիվ 3 դպրոցի փորձից)

Սովորողի լեզվաընկալումը և կապակցված խոսք կազմելու կարողությունների ձևավորումը պայմանավորված են տեքստի համակողմանի ուսումնասիրությամբ և մեկնաբանությամբ:

Կարելի է առանձնացնել տեքստի ուսումնասիրության հետևյալ սկզբունքները.

1. Լեզվառճական վերլուծության սկզբունք

ա) տեքստի բառապաշարի քննություն, բառագիտական, բառակազմական համակողմանի վերլուծություններ.

բ) տեքստում առկա քերականական կառույցների, խոսքի մասերի, դրանց քերականական հատկանիշների, նախադասությունների և դրանց անդամների կապակցման եղանակների համակողմանի վերլուծություն.

գ) նախադասությունների, պարբերությունների կապի տեսակների վերլուծություն. նախադասությունների տրամաբանական հաջորդականության, տեքստի սկզբի, ընթացքի և ավարտի ընկալում.

դ) ոճական-արտահայտչական վերլուծություն. պատկերավորման միջոցների (մակդիր, համեմատություն, փոխաբերություն), բառի ուղիղ և փոխաբերական կիրառությունների, խոսքի ոճերի բացահայտման ուղղությամբ կատարվող վերլուծություններ:

2. Բովանդակային վերլուծության սկզբունք

ա) դեպքերի, գործողությունների զարգացման ընթացքի, հերոսների արարքների վերլուծություն, դրանց իրականացման լեզվաոճական միջոցների մեկնաբանություն.

բ) դեպքերի, հերոսների արարքների դրդապատճառների, շարժառիթների բացահայտում և հոգեբանական մեկնաբանություն:

3. Տեքստի անհատական ընկալումը խթանող սկզբունք

ա) տեքստի ընկալման զգայական վերլուծություններ՝ տեսողական պատկերներ, լսողական զգայություններ,մարմնական զգացողություններ.

բ) տեքստում նկարագրվող դեպքերի կապը սովորողի անձի, նրա կյանքի փորձի և հետաքրքրությունների հետ: Տեքստի վերլուծության այս սկզբունքների ուղղությամբ ուսումնասիրություններ են կատարվել Գյումրու Հովի. Թումանյանի անվան թիվ 3 դպրոցում (տնօրեն՝ Գոհար Ալեքսանյան): Հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Նարինե Գևորգյանի, Մարինե Խաչատրյանի, Գոհար Բեգլարյանի, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Վարսենիկ Մնջոյանի, հատկապես դպրոցի տնօրենի՝ Գոհար Ալեքսանյանի վարած դասերը գրական երկի տեքստերի համակողմանի վերլուծության օրինակներ են:

Տեքստի վերլուծության լեզվաոճական սկզբունքն ուսուցիչներն իրականացնում են կա՛մ որպես մասերից դեպի ամբողջական միավորը ընթացող քննություն, այսինքն՝ բառի վերլուծությունից գնալով դեպի նախադասություն, ապա նաև պարբերություն, կա՛մ էլ ամբողջից դեպի առանձին մասերի քննություն, այսինքն՝ վերլուծությունն սկսում են պարբերությունից, նախադասությունից աստիճանաբար անցնելով դեպի նրա կազմի մեջ մտնող առանձին բառերը: Օրինակ՝ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի առաջին նախադասության քննությամբ ուսուցիչը (Գոհար Ալեքսանյան) սովորողներին ուղղորդեց այն եզրահանգմանը, թե սա բառերի սովորական համադրություն չէ: Այդ բառերից յուրաքանչյուրը տեքստից դուրս սովորական բառ է, բայց տվյալ տեքս-

տում ձեռք է բերել որոշակի հուզական-պատկերային լիցքավորում: «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում»- այս նախադասության քննությունն սկսեցին նախադասություն-պատկերի վերլուծությունից, ուր գործ ունենք փոխաբերության, իսկ ավելի ստույգ՝ անձնավորման հետ: Նախադասության մեխը կարելի է համարել «նստել» բայը, քանի որ նա ստեղծում է ոչ միայն պատկեր, այլև հուզական որոշակի լիցք է հաղորդում ընթերցողին: Շատ հետաքրքիր էր սովորողների գտած հոմանիշ նախադասությունների և հեղինակի գրածի համեմատական քննությունը: Սովորողներն սկսեցին առանձին բառերի փոփոխությունից՝ աստիճանաբար հասնելով ողջ նախադասության միտքը այլ բառերով հաղորդելուն:

Ըստ նշանավոր հոգեբան Վիգոդսկու՝ բառի նշանակության ընկալումն անընդհատ զարգանում է՝ երեխայի ընդհանուր զարգացմանը զուգահեռ: Դասերի ընթացքում իրականացվող համակողմանի աշխատանքը սովորողին հասու է դարձնում բառի իմաստային տարբեր դրսևորումներին, դրանց հուզական և պատկերային կողմին: Բառի իմաստի նրբերանգների այսօրինակ մեկնաբանությունն ապահովում է բառի և հասկացության կապի ընկալումը: Դասերից մեկի ժամանակ անծանոթ բառերի բացատրությունից, դրանց համապատասխան հոմանիշների և հականիշների շարքերը կազմելուց, բառի ուղիղ և փոխաբերական իմաստների քննությունից հետո առաջարկվեց առանձնացնել «ուրախ» և «տխուր» բառերը, ապա սովորողները մեկնաբանեցին իրենց ընտրությունը (7-րդ դաս., Հովի. Թումանյան, Ուրախ գիշեր, ուսուցիչ Գ. Ալեքսանյան):

Վիգոդսկին այս առիթով նշում է, որ բառի իմաստներն, ասես, համալրում են իրար, ներարկվում իրար մեջ և փոխազդում միմյանց վրա. այս երևույթը առավելապես նկատվում է գեղարվեստական գրականության մեջ: Ահա տեքստի բառապաշարի ուսումնասիրության մի կարևոր սկզբունք ևս, երբ բառը քննվում է ոչ թե տեքստից դուրս, այլ նույն տեքստի այլ բառերի հետ ունեցած փոխազդեցությունների շրջանակում:

Տեքստի վերլուծության կարևոր պահերից են նախադասությունների հաջորդական կապը, դրանց տրամաբանական զարգացումը հասկանալը և ըմբռնելը: 7-րդ դասարանում Հովի. Թումանյանի «Ուրախ գիշեր» պատմվածքի ուսումնասիրության ընթացքում ուսուցիչը սովորողներին առաջարկեց կարդալ առաջին նախադասությունը. «Ինչքա՜ն ծիծաղեցին էն գիշեր...»: Ապա նրանց ուշադրությունը հրավիրեց նախադասության վերջում դրված կախման կետերի վրա: Եղան շատ խելացի և տրամաբանված պատասխաններ, հետո ուսուցիչը խնդրեց կարդալ հաջորդ նախադասությունը. «Ամենքը գաղթականներ էին»: Սկսեցին քննել երկրորդ նախադասության կապն առաջինի հետ: Հեղինակն սկսել է նոր պարբերությունից. նա պատրաստվում է պատմել, թե ինչո՛ւ էին այդ գիշեր այդպես ուրախ, և ի՛նչ էր տեղի ունեցել: Այսպես նախադասություն առ նախադասություն քննելով, բացահայտելով դրանց ներքին կապերն ու տրամա-

բանական աղերսները՝ աշակերտներն առանձնացրին նաև տեքստի սկիզբը, ընթացքը և ավարտը:

Տեքստի բովանդակային վերլուծությունն սկսվում է կարդացածի կամ լսածի վերարտադրությամբ՝ համապատասխան մեղեդու, նկարազարդման, գունավորման, իսկ եթե ուսումնագիտական տեքստ է, ապա աղյուսակներ, գծապատկերներ կազմելով: Գրական հերոսների արարքների քննությունը մարդու կատարելագործման, նրա բարոյական նկարագրի կերտման միջոց է: Վ. Սարոյանի «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպից վերցված հատվածի քննության ժամանակ ուսուցչուհին սովորողներին առաջարկեց նորից կարդալ այն նախադասությունը, որտեղ խոսվում է պահակ զինվորի՝ գերի երաժշտին ծղոտե գլխարկ մատուցելու մասին (7-րդ դաս., «Մարդը՝ մարդուն» դասագիրք, ուսուցիչ Մ. Խաչատրյան):

Տեքստի անհատական ընկալման խթանումը տվյալ տեքստի թե՛ անհատական ընկալումն է, թե՛ բառային կառույցների կիրառությունը նորովի, սեփական կապակցված խոսքի շրջանակներում:

ԺԵՆՅԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ (ՌՀՊՀ)

ՄԿԻԶԲԸ՝ ԲՈՒՀՈՒՄ
(Ուսումնամեթոդական աշխատանքի փորձ)

Հայաստանի Հանրապետության լեզվական օրենսդրության մշակման և այն Գերագույն խորհուրդ ներկայացնելու ժամանակահատվածում (1990-1993թթ.) քննարկման առարկա էր, թե արդյոք կա՞ բարձրագույն ուսումնական հաստատությունում հայերենն անպայման ուսուցանելու անհրաժեշտությունը: Թեր և դեմ կողմերն ունեին իրենց հիմնավորումները: Սակայն կյանքը ցույց տվեց, որ օրենքում ընդունված կետը՝ հօգուտ բուհում հայերենի պարտադիր ուսուցման, արդարացի է:

Լեզվի մասին օրենքի ընդունումից անցել է մոտավորապես տասնհինգ տարի: Հիմնվել են մի շարք միջպետական բուհեր, որտեղ սովորում են ոչ միայն հայաստանցի, այլև արտերկրից եկած հայ ուսանողներ: Շատ հաճախ նրանց հայերենի իմացության մակարդակը զրոյական է, և բուհը ձեռնամուխ է լինում պետական լեզվի ուսուցմանը՝ նկատի ունենալով, որ շրջանավարտը պետք է հնարավորություն ունենա է իր մասնագիտական հմտություններն ի սպաս դնել Հայաստանում: Այդպիսի բուհ է Ռուս-հայկական համալսարանը, որտեղ սովորում են ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ ԱՊՀ երկրներից եկած ուսանողները:

Համալսարանում արտերկրի ուսանողների համար անցկացվում է հայերենի արագացված ուսուցման երկամյա դասընթաց, որի փորձի և արդյունքների մասին այս հաղորդումը կարևորում ենք այն առումով, որ այս

դասընթացի ուսանողների մի զգալի մասը *Շիրակի տարածաշրջանից* է: Ապրել է Հայաստանում, սովորել Գյումրու ռուսական, սահմանապահ զորքերին պատկանող դպրոցում և հայերենին չի տիրապետում: (Այսպիսի դպրոցներ կան նաև Երևանում, Հայաստանի հյուսիսային և հարավային սահմանամերձ շրջաններում, և քանի որ այս դպրոցները մտնում են ՌԴ կրթական համակարգի մեջ, այստեղ հայոց լեզու չի դասավանդվում): Ստացվում է, որ հայ երեխան, ապրելով Հայաստանում հայերենին չի տիրապետում: Ինչո՞ւ: Պատճառները բազմաթիվ են, բխում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ մարդկային սուբյեկտիվ գործոններից: (Մեր դիտարկումների հեղինակները հենց Գյումրու ռուսական կայազորի դպրոցների շրջանավարտներն են, Հայաստանի այսօրվա քաղաքացիները և վաղվա մասնագետները):

Նախ՝ օբյեկտիվ գործոնների մասին: 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով աղետի գոտում ամենից ավելի տուժեցին դպրոցներն ու նախակրթարանները: Վերակառուցված, նորառոճ ու գեղեցիկ շենքերում ժամանակակից լաբորատորիաներով հագեցած դպրոցներ այսօր արդեն մեծաթիվ են, մինչդեռ դրանց մեծամասնությունը երկար տարիներ ստիպված էր դասերն անցկացնել տնակներում: Ուշագրավ է այն, որ Գյումրիում ռուսական կրթություն ստացած մեր ուսանողները հատկապես կարևորում էին իրենց դպրոցի քարաշեն լինելը և կանոնավոր ջեռուցմամբ ապահովվածությունը, ինչը համարում էին տնակային դպրոցների համեմատությամբ մեծ և կարևորո առավելություն:

Այժմ սուբյեկտիվ գործոնների մասին: Այս քննարկումներին ուսանողները մասնակցել են անհատական ռեֆերատներով, որոնցում ներկայացրել են իրենց նկատառումները, արել փաստերի յուրովի վերլուծություններ: Գաղտնիք չէ, որ կրթության նկատմամբ հայ մարդու պաշտամունքը երբեմն չափազանցության է հասնում: Ավելին, հաճախ մարդը տուրք է տալիս տասնամյակներ շարունակ գոյություն ունեցած, այժմ արդեն շատ ընտանիքներում որպես մտածողության կարծրատիպ և ընտանեկան ավանդույթ դարձած այն մոտեցմանը, որ ռուսական դպրոցն ավելի հեղինակավոր է, քան հայկականը: Կա այսպիսի մոտեցում, որն իհարկե իրականությանը չի համապատասխանում: Մեջբերում ենք 2-րդ կուրսի գյումրեցի ուսանող Խ. Գոբալյանի դիտարկումը. «Սկզբից ես ընդունվեցի հայկական դպրոց, որտեղ սովորեցի մեկ տարի: Թեև իմ ծնողները ռուսական կրթություն ունեն, բայց ուզում էին, որ ես հայկական դպրոցում սովորեի: Մեկ տարի անց ես տեղափոխվեցի ռուսական դպրոց»: Իբրև տեղափոխման պատճառ, ուսանողը նշել էր *ռուսական դպրոցի մի շարք առավելություններ* (այսինքն՝ կարծրատիպը արդարացվում է…և գուցե հիմնավոր պատճառաբանությամբ). 1. «*Դպրոցն աչքի էր ընկնում կարգապահությամբ:* Ամեն առավոտ դպրոց մտնելիս ստուգվում էին օրագրերը, խիստ ուշադրություն էին դարձնում բացակայություններին և ուշացում-

ներին»: 2. «Դպրոցում աշխատում էին *կրթական բարձր մակարդակով,* իսկապես բազմակողմանի զարգացած մանկավարժներ» :

Ով գեթ մեկ երեխա է դպրոց ուղարկել, կհաստատի այն փաստը, որ ցավոք, այսօր հայերենի շատ բարեխիղճ ուսուցիչներ օտարված են դպրոցից: Արդյունքում զգալիորեն նվազել է հայոց լեզվի նկատմամբ աշակերտի հետաքրքրությունը:

Վերադառնանք ուսանողների փաստարկներին. 3. «*Անպայման* ունեինք *լաբորատոր դասեր*: Ուսուցիչները *ամեն կերպ աշխատում էին,* որ *դասերը լինեն հասկանալի ու հետաքրքիր*: Սա որակ էր, որի շնորհիվ *դպրոցում առաջադիմությունն իսկապես* բարձր էր» (Ա. Ավետիսյան, 2-րդ կուրս): 4. Դպրոցն ուներ *հարուստ գրադարան,* որից օգտվում էին *և՛ դասագրքերի, և՛ մասնագիտական այլ գրականության, և՛ գեղարվեստական գրքերի* անհրաժեշտության դեպքում»: (Կ.Պողոսյան, 2-րդ կուրս): 5. «Դպրոցում *ստեղծված էր աշակերտական կոմիտե,* որը տարին մեկ անգամ *ինքնավարության սկզբունքով կառավարում էր դպրոցը,* իսկ մնացած ժամանակ *հետևում և մասնակցում էր կազմակերպչական զանազան աշխատանքների*»:

Ուսանողների՝ հայոց լեզվի վերաբերյալ աշխատանքներում հայերենի նկատմամբ այնպիսի հիացական վերաբերմունք կա, որ դժվար է կասկածել դրա անկեղծությանը. *«…Հայոց լեզուն իմ մայրենի լեզուն է: Գեղեցիկ է հայոց լեզուն, հնչեղ, լուսավոր, խրոխտ, ճոխ:…Մայրենի լեզուն չիմացողը նման է ծառից ընկած տերևի, որին կարող է քշել ամեն մի պատահական քամի:…Լավ գիտենալ մայրենի լեզուն՝ նշանակում է ապրել ճիշտ և լիարժեք կյանքով»* (Խ. Գոբալյան):«…Հիմա ես ուսանող եմ: Ես միանգամայն գիտակցում եմ, որ Հայաստանում հայն իր մայրենին պետք է լավ իմանա: Ես արդեն երկու տարի է, որ հայերեն եմ սովորում, …հայերեն մասնագիտական գրականություն եմ ուսումնասիրում, …իսկ երբ մեկ-մեկ էլ իմ դասախոսի հանձնարարությամբ բանաստեղծություններ եմ կարդում, զգում եմ մեր լեզվի համն ու հոտը, գեղեցկությունը, մեղեդայնությունը…» (Կ. Պողոսյան): Սա կեղծավորություն չէ, դասախոսին դուր գալու համար ասված խոսքեր չեն: Այսպիսի գնահատականներ կան նաև այն հարցաթերթիկում, որ լրացրել էին ուսանողները հայերենի ավարտական քննությունից հետո: Բոլորը հատկապես նշել էին, որ գիտակցում են հայերենի իմացության կարևորությունը, որ իրենք թեև համալսարանում ավարտում են հայերենի դասընթացը, սակայն չեն դադարելու ինքնակրթությամբ զբաղվել:

Ամփոփենք. Հայերենի նկատմամբ իրական հոգածությունը հիրավի համապետական գործ է, բոլորիս սուրբ գործը, և այս ուղղությամբ վերջին շրջանում ճիշտ քայլեր արվում են, ինչպես, օրինակ, հայոց լեզվի պետական միասնական քննության իրականացումը, սակայն հայերենի ուսուցման բնագավառում դեռ անելիքներ շատ կան:

Աշոտ ՀԱՅԿԱԶՈՒՆ (ԾԱԹԻ)

ԱՆԻԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Անիի պաշտպանական կառույցները բազմաթիվ են և բազմանշանակ: Դրանք հիմնականում բաժանվում են 8 խմբի՝ Աղջկա բերդի և միջնաբերդի ամրություններ, Աշոտյան և Սմբատյան պարիսպներ, պաշտպանական խանդակ, Ծաղկոցաձորի, Գիձորի, և Ախուրյանի կիրճերի ուղղությամբ կառուցված լրացուցիչ պարիսպներ, արվարձանների պարիսպներ և մայրաքաղաքի մատույցների ամրացված կետեր:[1]

Դրանց մեջ առանձնանում են քաղաքի պարիսպներն իրենց բուրգերով, աշտարակներով, դռներով: Աշոտյանը և Սմբատյանը պարիսպները համապատասխանաբար անվանվել են ներքին կամ փոքր և մեծ կամ արտաքին: Սրանք ժամանակի ընթացքում կրել են բազմաթիվ փոփոխություններ, քանդվել են, վերակառուցվել, փոխել իրենց տեսքն ու գործառնականությունը: Ղ.Ալիշանը նշում է Անիի պարիսպների տարբեր հատվածների երկու-երեք նորագումների մասին,[2] իսկ Լեոն գրում է, որ Անիի պարիսպները շատ անգամ են վերանորոգվել, կարկատվել ..., այդ են վկայում պարիսպների վրա մնացած խաչերն ու արձանագրությունները:[3]

Անիի պաշտպանական համալիրի հեղինակները Բագրատունիներն են, սակայն քիչ գործ չեն արել նաև Զաքարյանները՝ կառուցվելով հսկա բուրգեր ու աշտարակներ: Զաքարյանների օրոք (1208թ.) Սմբատյան պարսպի Գայլեձոր – Իգաձոր հատվածը դարձվել է կրկնաշարք,[4] Թ.Հակոբյանի կարծիքով՝ այս փոփոխությունները տեղի են ունեցել 1206թ.:[5] Ինքը՝ Զաքարե սպասալարը աթոռանիստ Անիի պարիսպներում կառուցել է տվել մի քանի բուրգեր, իսկ մյուս՝ ստվարաթիվ բուրգերն ու աշտարակները կառուցվել են այլոց կողմից:[6] Փաստորեն, Զաքարյանների օրոք քաղաքի պարսպապատերն ունեցել են 80 աշտարակ, ըստ ոմանց՝ նույնիսկ 90, որոնցից 55-ը դասավորված են երկու շարքով, 11 դարպաս կամ դուռ և 3 դռնակ:[7]

---

[1] *Վ. Հարությունյան, Անի քաղաքը, Եր., 1964, էջ 39:*
[2] *Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 44:*
[3] *Լեո, Անի, Եր., 1963, էջ 189-190:*
[4] *Н. Марр, Ани, столица древней Армении, С. Петербург, стр. 214; А. Якобсон, Очерки истории зодчества Армении V-XVII веков, стр. 103-104.*
[5] *Թ. Հակոբյան, Անիի պատմությունը, Եր., 1982, էջ 209:*
[6] *Նույն տեղում, էջ 204:*
[7] *Ն. Մառ, նշվ. աշխ.:*

Ցավոք Անիի պարսպապատերը մեզ են հասել ավերված վիճակում: Սակայն այդպես էլ նրանք պահպանում են իրենց «զրահավոր», «ահարկու», «հզոր», «հաստահեղյուս», «ահավորատես», «քևեռապիկ», «անմերձենալի» երբեմնի տեսքն ու խորհուրդը: Այսօր բազմաթիվ այլ հարցերին զուգահեռ կարևոր է հասկանալ և պարզաբանել Անիի պարիսպների տարբեր հատվածների գործառնականությունն ու խորհուրդը:

Հասկանալի է, որ քաղաքային պարիսպների առաջնահերթ գործառնականությունը պետք է լիներ քաղաքը պաշտպանելը: Սակայն Անիի պարիսպների, հատկապես Սմբատյանի հորինվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս մտածել նրանց նաև այլ գործառույթների մասին: Այսպիսի դատողության համար հիմք են հանդիսանում ա) բուրգերի և աշտարակների (հատկապես դրանց վերին հարկերի) ներքին տարածքների սրբատաշ, կամարակապ, թաղակապ, գունազարդ լինելը, բ) բուրգերի, աշտարակների, պարիսպների (նույնիսկ առաջին և երկրորդ շարքերի արանքային միջանցքների և բակերի), ներքաղաքային և անկյունային հատվածների, (երբեմն անտեսանելի և «երկրորդական» թվացող) հարթությունների սրբատաշ և գեղարվեստորեն բարձրորակ լուծումները, գ) բուրգերի, աշտարակների, պարիսպների և դռների զարդարիկ և տեղեկատվական հորինվածքը և այլն:

Անիի պարիսպների հորինվածքային տարատեսակներն, ըստ գործառնական առանձնահատկությունների, կարելի է բաժանել պաշտպանական, տնտեսական,հաղորդակցական, սահմանային-անցումային, հասարակական և այլ խմբերի: Սրանցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է մի շարք ենթախմբերի (օրինակ, ռազմականը՝ զորանոց, զինամթերքի պահեստ, արհեստանոց, ախոռ, հրակնատ և այլն, կամ հասարակականը՝ զինվորական, սպայական և արքայական դասի աշխատանոց, խորհրդասենյակ, հանգստի գոտի, դիտանոց և այլն): Այն, որ քաղաքային պարիսպներն ունեցել են բազմագործառնականություն, բնորոշ է ոչ միայն Անիի, այլև Ախթամարի, Ամբերդի, Տիգնիսի, Կիլիկիայի և հայոց այլ բազմաթիվ ամրացված բնակավայրերի և ամրոցների պարիսպներին:

Անիի պարիսպները, բուրգերն ու աշտարակների վերնահարկերի սենյակներն իրենց սրբատաշ, կամարակապ հորինվածքով «կրկնում» են քաղաքի պաշտամունքային կառույցների ճարտարապետությունը՝ իրենց հարդարման նրբագեղությամբ և գունային լուծումով մոտենալով Անիի մաքսատան համակառույցի ճարտարապետությանը: Պարիսպների միջպատային գաղտնուղիները և անցումները, դրանք իրար կապող ուղիղ և բոլորաձև սրբատաշ աստիճանները, հարթ, թաղակապ, քարաշեն առաստաղներն ու հատակը նույնպես կառուցված են մեծ վարպետությամբ: Կարծես դրանք նախատեսված չեն զորքի արագ և գաղտնի տեղաշարժման համար, այլ՝ հանգիստ և հանդիսավոր ճեմելու: Այսինքն՝ ռազմական նշանակության կառուցապատման նկատմամբ նույնպես գեղագիտական

պահանջ է դրվել, ինչպես Անիի յուրաքանչյուր պաշտամունքային, բնակելի, պալատական, հասարակական շենքերի ճարտարապետաքաղաքաշինական հորինվածքների նկատմամբ: Սա Անիի ճարտարապետական դպրոցին բնորոշ կարևոր հանգամանք է: Ըստ Հ. Օրբելու, Անիի պարիսպները կառուցվել են «ընդհանուր նախագծի» հիման վրա և ոչ պատահական անվանվել նախագիծը գնահատող և շինարարությունը հովանավորող անեցիների՝ Սարգսի, Զաքարեի, Մխիթարիչի, Սիմեոնի, Շուշանի, Մամխաթունի, Եղբայրիկի, Մխիթարի և այլոց անուններով:

Պակաս հետաքրքիր չէ նաև այն հանգամանքը, որ Աշոտյան պարիսպների աշտարակների վրա մատուռներ են կառուցված եղել, և այս ավանդույթը անցել է նաև Սմբատյան պարիսպներին: Այսինքն՝ պարիսպների բազմաբնույթ գործառնականության ցանկը ավելանում է նաև պաշտամունքայինով: «...Զամենայն բուրգունս եկեղեցիս յօրինեաց», - արձանագրության հիման վրա Վ. Հարությունյանը եզրակացնում է, որ մատուռների հարմարեցումը պարիսպների բուրգերում՝ երբեմն ընդունված կարգ է եղել (հիշատակելով նաև Լոռե քաղաքի բերդապարսպի աշտարակի՝ մատուռներով պսակված լինելը):[1]

Այսպիսով՝ Անիի պարիսպների բուրգերն ու աշտարակները, ներպարիսպյան անցումներն ու գաղտնուղիներն ունեցել են բազմանշանակ գործառնականություն. շտեմարաններ, համբարանոցներ, սպայական և արքայական դասի սենյակներ, մատուռներ, դիտանոցներ, հրակնատներ, գաղտնուղիներ, անցումներ, միջանցքներ, շվաքներ և այլն: Այս տարածքներն ունեցել են ուղղանկյուն, քառակուսի, կիսաշրջան, հատակագծային լուծումներ, և տեղաբաշխված են եղել մեկ, երկու, երեք հարկանի ծավալներում: Ներքին հարդարանքում ունեցել են սրբատաշ, կամարաքաղակապ, խաչվող թաղապահ կամարագոտիներով հորինվածք, դեղին, կարմիր, սև և սպիտակ քարերով զարդարված պատեր, սրբատաշ աստիճաններ (այդ թվում՝ պատին մի մասով հենված և կախված, ինչպես Ախթալայի պարսպի աշտարակներում), կամարակապ դարպասներ, դռներ, մուտքեր, լուսամուտներ և այլն: Սմբատյան պարիսպներից հետաքրքիր լուծումներ ունեն Ավագ, Գրիգորի, Ծաղկոցաձորի, Կարուց (Կարսի) և Դվինի (կամ Երևանի) դռները: Ավագ (հյուսիսարևելյան) դուռը աջ և ձախ կողմերից եռահարկ աշտարակներ ունի, այսպիսին է նաև Կարսի (հյուսիսային) դուռը: Մեր կարծիքով առանձնահատուկ գործառույթ պետք է ունենար Կարուց դուռը՝ երկու կողմերի իր երկնասլաց բուրգերով, որ վերնամասում իրար են միանում հսկա կամարով: Այս կամարային բացվածքի ներքին հատվածում է գտնվում դիտահարթակ – շվաքը, որը բաց անցումով կապ ունի աջ և ձախ կիսաշրջանային աշտարակների ներքին հարդարված, հավանաբար դիտանոցի և սպայաարքայական (չի բացառվում նաև հոգևոր դասի) նշանակությամբ սենյակների հետ, որոնցից ներքին

[1] *Վ. Հարությունյան, նշվ., աշխ., էջ 40:*

աստիճանները տանում են դեպի աշտարակների վերնամասի մարտապաշտպանական անցումներն ու հրակետերը: Իր գործառույթով այս լուծումը նախատիպ չունի և հավանաբար օգտագործվել է ոչ միայն ռազմական գործողությունների ժամանակ, այլ նաև խաղաղ շրջանում տարբեր հոգևոր և պետական հանդիսությունների նշման նպատակով:

Անիի պարսպապատերի հորինվածքային առանձնահատկություններից է նրա զարդարիկ և խորհրդակիր բաղադրամասերի գոյությունը: Պարիսպների, բուրգերի, աշտարակների, դարպասների, դռների ներքին և արտաքին հարթությունները զարդարված են բազմաթիվ ճարտարապետական փոքր ձևերով, ատամնաշարերով, խճանկար, շախմատաձև շարվածքներով, բարձրաքանդակներով, խաչապատկերներով, կեռխաչերով, կենդանապատկեր ժապավենաձև քանդակներով ու գոտիներով: Պարսպի տարբեր հատվածներում իբրև զարդարանք, տեղադրվել են զանազան կենդանիների քարակերտ պատկերներ և տարբեր բարձրաքանդակներ:[1] Կենդանապատկերների մեջ առանձնանում են ցուլի, առյուծի, մարդու, արծվի, օձ-վիշապի, գառնուկի պատկերները: Հետաքրքիր է, որ առյուծի (ըստ որոշ հեղինակների՝ հովազի) պատկերներով զինանշան, հավանաբար երկու հատ է եղել: Մեկը խաչապսակ գնդակը բերանում (չի պահպանվել), մյուսը՝ գնդաձև (հավանաբար գունավոր ճենապակուց) հորինվածքը կոնակից վեր: Ըստ Օրբելու՝ «Քաղաքի գլխավոր դրան մոտ գտնուած վազող տիգրի ուռուցիկ քանդակը, խաչապսակ գնտակը բերանին, որը թերևս Անիի զինադրոշն էր (ԺԳ դարում)»:[2] Քաղաքի զինանշանը վերնամասում ավելի փոքր երկու ուղղանկյունների համադրված պատկեր շրջանակ է, որի մեջ քանդակված է վազող առյուծ (Առյուծ, Աստված, Արև, Թագավոր խորհրդանշային կապ): Այս շրջանակի տակով՝ պատի հարթության վրա ագուցված է Կենաց Ծառ խաչ պատկերը սև քարից, որը ներքևի մասում «հենված» է աստիճանաձև քառակուսիների վրա: Իսկ «Քարձր, մի ժամանակ ահարկու» քաղաքային պարիսպների վրա «պահպանուել են ուռուցիկ զարդեր, որ ներկայացնում են արծիւ, վիշապ, ցլի գլուխ և մինչև անգամ ապակեայ ու յաղճապակեայ կիսագնդերի մնացորդներ, որոնք հագցված են առանձին քարերի մէջ»:[3]

Դեռևս XIXդ. Անիի պարիսպների վրա տեսել են «մի մարդու, ենթադրաբար՝ Սմբատ II թագավորի քանդակը, ձեռքին ինչ-որ կառուցվածքի մոդել»:[4] Այս խորհրդակիր բաղադրիչների առատությունը չէր կարող միայն զարդարիկ նշանակություն ունենալ, մանավանդ, որ Անիի պաշտամունքային կառույցները «լեցուն» են խորհրդակիր պատկերներով:[5] Օրի-

---

[1] *Ն. Մառ, նշվ., աշխ.:*
[2] *Յ. Օրբելի, Անիոյ ավերակները, Վաղարշապատ, 1911, էջ 24-30:*
[3] *Նույնը:*
[4] *Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 43:*
[5] *Ա. Հայկազուն, Խորհրդանշային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Եր., 2005, էջ 178:*

նակ՝ պարիսպների կիսաշրջանաձև երկու աշտարակները դրսի կողմից ունեն վիշապագոտիներ: Դրանք երկուական իրար դիմաց «կանգնած» վիշապներ են, որոնց գլուխների արանքում ցլապատկերներ են, մեկի բերանում շրջանակ: Վիշապագոտիները կառուցված են սև քարից: Վիշապների և ցուլերի խորհուրդները հայտնի են՝ Վիշապ-Օձը խորհրդանշան է և «...վկայ ապաշխարութեան և հաւատոյ ժողովրդեան»: Ցուլը խորհրդանշում է երկրայինը, երկիր, հաստատություն, քաջություն, իշխանություն, երկրային ուժ, գիշեր-ցերեկ արթմնի հսկողություն, հաղթանակ հակամարտության մեջ (օձ-վիշապների պարագայում): Իսկ պարսպի ուրիշ հատվածներում հանդիպող արծիվը՝ երկնային իշխանություն, աստվածային հովանի, հզորություն, հաղթանակ, հավատ, քաջություն, առյուծը՝ թագավորության խորհուրդ, իշխանություն, արև, կրակ, դարպասները՝ հաղթանակով մուտք և ելք քաղաքից, որի ընթացքում պարիսպների վրա միշտ տեսանելի և ոգևորող են թագավորը, հոգևոր առաջնորդը, սպայակույտը, համաքաղաքացիների գոյության և ակնկալիքների, հավատքի և պետականության խորհուրդները հաստատող նշաններ և այլն:

Հետաքրքիր է նաև Ավագ դռան ձախ աշտարակի ներքաղաքային հարթ պատի վերնամասում պատկերված 64 քառակուսիներով (սև և դեղին) կեռխաչի պատկերը՝ հավերժի խորհրդով: Իսկ Կարուց դռան խաչը տասը սև քառակուսիներից ռոմբաձև դասավորված հորինվածք է, որոնց մեջ ագուցված են եղել հախճապակե գնդեր (գունդ-շրջանակ, քառակուսի, կենաց ծառ, խաչի խորհուրդ): Այսինքն՝ հզորատես պարիսպները պահպանում են այն երկիրը, որի ժողովուրդն ունի հաստատ հավատ, և իր քաղաքը պարսպապատել է զրահավոր հավատով և ապաշխարությամբ: Որպես հավատքի նշան՝ պարիսպները գոտևորում են հավասարաթև խաչերը, իսկ անկյունային բուրգերի վրա հսկա խաչ կենաց ծառերն են: Այստեղ ամփոփված են պաշտպանության, հզորության անառիկության, հավատքի, ամրության, կայունության և այլ խորհուրդները:

Անիի պարիսպները անեցիների համար զուտ պաշտպանական նշանակություն չեն ունեցել, նրանք շատ խորհուրդներ են պահում իրենց մեջ: Անեցիները գիտեին այդ և պարսպապատերին հպարտությամբ և հավատով արձանագրել են. «Տէր Աստուած տուր զքո խաղաղութիւնդ ամէնայն աշխարհի...»:

Օգտագործված հապավումներ

ԱԻ - ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

ԳԱԱ - ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ԳԱԹ - Եղ. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան-ինստիտուտ

ԳՊՍԻ (ГПИ) - Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

ԵԳԱԳՄ - Երևանի գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

ԵԿԳՄ (ГФЕГК) - Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

ԵԹԿՊԻ - Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

ԵՊԿ - Երևանի պետական կոնսերվատորիա

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ԼԻ - ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

ԿԱԹ - Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարան

ՀԱԻ (ИАЭ) - ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀԱՀ – Հր. Աճառյան Համալսարան

ՀԱՊԹ - Հայաստանի ազգագրության պետական թանգարան

ՀԳՄ - Հայաստանի գրողների միություն (Շիրակի բաժանմունք)

ՀՊՄՀ - Հայկական պետական մանկավարժական համալսարան

ՃԱԹԻ - Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

ՇԵԹ - Շիրակի երկրագիտական թանգարան

ՇՀԹԱ - Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարան

ԵՃՇԻ - Երևանի ճարտարապետա - շինարարական ինստիտուտ

ՇՀՀԿ (ШЦАИ) - ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՊԻ - ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ՊՄՊԾ - Պատմական միջավայրի պահպանության ծառայություն

ՊՄՀՊԳ - Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն

ՌՀՊՀ – Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարան

ВНИИТЭ - Всероссийский научно-исследовательский институт технической эстетики

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Շարունակվող երթ……..……..…3

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Շիրակի հնագիտական ուսումնասիրությունը երեկ և այսօր.....6

А. ХУДАВЕРДЯН
Одонтологическая и краниоскопическая
характеристика античного населения Вардбаха ……12

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բենիամինի անտիկ դաստակերտի հիմնադրման հարցի շուրջ……..……17

Ф. ТЕР-МАРТИРОСОВ
Планировка дворца-святилища Драсханакерта(Бениамин)……....20

Լ. ԵՂԱՆՅԱՆ
Պաշտամունքային նորահայտ կոթողներ Շիրակից ……..……..…...25

Ի. ԱՎԱԳՅԱՆ
Հակոբ Կարանյանի մի հավաքածուի մասին ……..……34

Կ. ԹՈՒԽԱԹՅԱՆ
Ժայռապատկերներ Հայաստանի հյուսիսում ……..……..40

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գյումրու ուրարտական գոտու բեկորի մեհենագրերը 43

Վ. ԵԱՏՐՅԱՆ
Պատմական Շիրակին վերաբերող հատուկ անուններ
Վանի թագավորության ժամանակաշրջանում 50

Ս. ՀՄԱՅԱԿՅԱՆ
Շիրակը սեպագիր աղբյուրներում 54

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Աս արմատով բառերի պաշտամունքային բնույթի մասին 60

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երվանդավանի ճակատամարտը և դրա հետևանքները 66

Լ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Հայաստանի վաղքրիստոնեական կոթողների
աշխարհագրությունը և պատմական նշանակությունը 73

Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Անիի թագավորության տարածքն ու սահմանները
Գագիկ Ա Բագրատունու և նրա հաջորդների օրոք.....78

Ք. ՍԱՐԳՍՅԱՆ
Կանանց շինարարական և նվիրատվական գործունեությունը
Շիրակում X-XIIIդդ. 83

Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Վիմագրական նորույթներ Մարմաշենի վանքից 88

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Արևելյան Շիրակի վարչաքաղաքական իրավիճակը XVI-XVIIIդդ. 91

Է. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Ալեքսանդրապոլի կապը «Արծուի Վասպուրական» ամսագրի և նրա խմբագիր Մկրտիչ Խրիմյանի հետ 97

Գ. ԱՅՎԱԶՅԱՆ
Ագրարային հարաբերությունները Ալեքսանդրապոլի գավառում XIXդ. վերջին 102

Կ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Արևմտահայ գաղթականությունն Ալեքսանդրապոլի գավառում 1918-20թթ. 108

Հ. ՍԱՀԱԿՅԱՆ
Զույգաղբյուր գյուղի հիմնադրման և նրա եկեղեցու անվան հարցի շուրջ 114

Կ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությունը 1915-18թթ. 118

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
1988թ. Արցախյան շարժման զարգացման փուլերը Լենինականում.....123

Ն. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Գյումրու ժողովրդագրական իրավիճակն ու հնարավոր զարգացումները կայուն զարգացման համատեքստում 130

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ
Շիրակի ավանդական զարդահամալիրը 134

Գ. ԱՂԱՆՅԱՆ
Համքարությունների տեղը հայոց սոցիոնորմատիվ մշակույթում (Ալեքսանդրապոլի օրինակով).....138

Կ. ԲԱՋԵՅԱՆ
Ալեքսանդրապոլի թաղային կռիվների մասին 142

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հ. ՍԱՐԳՍՅԱՆ
XIXդարի արևմտահայերի ներգաղթի դերը Գյումրի-Ալեքսանդրապոլի արհեստագործական ավանդույթների ձևավորման մեջ 146

Ն. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Լենինական-Երևան մրցակցության արտահայտությունները 1970-80-ականների զվարճախոսություններում և սրամտություններում.....151

Ս. աբ. ՊՈՂՈՍՅԱՆ
«Տան սրբերը» Շիրակում 157

Կ. ՍԱՄՎԵԼՅԱՆ
Ազգագրական հենքը Մարիամ Ասլամազյանի աշխատանքներում.....161

Ա. ԲՈՅԱՋՅԱՆ
Հայրենադարձությունը Լենինականում 1946-47թթ. (ըստ ՀՀ ԱԱ Շիրակի տարածքային բաժնի նյութերի).....165

Г. ШАГОЯН
Город как рай и рай как город
(о некоторых восприятиях Гюмри до и после землетрясения) 170

Մ. ՓԱԼՍՅԱՆ
Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացներն արդի շրջանում 174

К. СААКЯН, К. ГАЛОЯН
Новый брэнд Гюмри как форма преодоления комплекса Иова Блаженного 179

Е. ВАРДАНЯН
Гендерное равенство-восприятие и перспективы в Гюмри 184

Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ
Անիի քաղաքաշինությունը 189

Լ. ՄՈՒԹԱՖՅԱՆ
Թատերական կյանքի ձևավորումը Ալեքսանդրապոլ - Գյումրիում.....196

Լ. ՄՈՒԹԱՖՅԱՆ
Հովհաննես Զարիֆյանի արվեստի նորարարական միտումները.....200

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Անիի հանդեսներում կատարվող հագներգությունները.....208

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հայ աշուղական հայրենասիրական երգն Ալեքսանդրապոլում.....211

Խ. ԲԱԴԻԿՅԱՆ
Շիրակը՝ Կոմիտասի երգերի ու պարեղանակների շտեմարան.....215

Մ. ՀԱՐՈՅԱՆ
Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթները Կ. Կոստանյանի «Ինչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հուշագրությունում.....219

Լ. ԵՐՆՋԱԿՅԱՆ
Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթները Մերձավոր Արևելքի մշակութային փոխազդեցությունների համատեքստում.....225

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ
Դանիել Ղազարյանը և Լենինականը 227

Կ. ԱՎԴԱԼՅԱՆ
Գյումրու քաղաքային երաժշտության արդի խնդիրները 231

Հ. ԱՓԻՆՅԱՆ
Դիտարկումներ Շիրակի ժողովրդական երաժշտության ուսումնասիրման խնդրի շուրջ 234

Н. АЙРАПЕТЯН
Вокальный цикл Армена Арутюняна на слова Сиаманто 236

Լ. ԱԹԱՆԵՍՅԱՆ
Գյումրեցի նկարիչներ. Գևորգ Բրուտյան 238

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Մարիամ Ասլամազյանը և Լենինականը 245

Է. ԽԵՄՉՅԱՆ, Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Շիրակի բանահյուսական ժառանգությունը (ըստ ՀԱԻ-ի բանահյուսական արխիվի նյութերի) 248

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Հովհաննես Շիրազը և Գյումրին 254

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Շիրակի արդի բանաստեղծության համակարգման փորձ 260

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լեզվի պատկերավորման համակարգը և արտահայտչամիջոցները Աշոտ Ավդալյանի բանարվեստում 263

Հ. ԳԱԼՍՏՅԱՆ
Երգիծական բանահյուսության արդի գրառումներ Վահրամաբերդից 267

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկում տեղ գտած շեղումներ գրաբարից 272

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Դարձվածային միավորներն Ալեքսանդրապոլի հեքիաթներում.....279

Ջ. ԲԱՌՆԱՍՅԱՆ
Կարոն բարբառի Շիրակում գրառված խոսվածքներին անդրադառնալու մի փորձ 285

Թ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Տեքստի ուսումնասիրության սկզբունքները (Գյումրու Հովհ. Թումանյանի անվան թիվ 3 դպրոցի փորձից).....286

Ժ. ՌՈՍՏՈՄՅԱՆ
Սկիզբը բուհում (ուսումնամեթոդական աշխատանքի փորձ.....289

Ա. ՀԱՅԿԱԶՈՒՆ
Անիի պաշտպանական կառույցների հորինվածքային առանձնահատկությունները, գործառնականությունը և խորհուրդը 292

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....297

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....298